



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

*Л.Н.Толстой*

ВОЙНА  
и  
МИР

В ЧЕТЫРЕХ ТОМАХ



ТОМ  
ЧЕТВЕРТЫЙ

Перевод  
Симеона Зорбяна

*Լ.Ն. Թոլստոյ*

ՊԱՏԵՐԱԶՄ  
ԵՎ  
ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ  
ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ



ՀԱՏՈՐ  
ՉՈՐՐՈՐԴ

Յարգինությունը  
Կոմիտաս Զորյանի



## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

**P 1**  
**S 80**

8  **$\frac{70801(4028)}{701(01)76}$**  բա 76 «Տ»

1

Այդ ժամանակ՝ Պետերուրգում՝ բարձր շրջաններում մեծ եռանդով, քան երբեք, տեղի էր ունենում Ռումյանցի, Վրանսասերների, Մարիա Ֆեոդորովնայի, թագաժառանգի և այլոց պարտիաների բարդ պայքարը, մի պայքար, որը, ինչպես միշտ, խլացվում է պալատական բոոերի փողհարությամբ։ Բայց Պետերուրդի հանդիստ, փառահեղ կյանքը, որ մտահոգված էր միայն ուրվականներով, կյանքի անդրադարձումներով, ընթանում էր բատ հնույն, այդ կյանքում պետք է մեծ ճիգեր գործադրեին, որպեսզի գիտակցեին այն վտանգն ու դժվարին կացությունը, որի մեջ գտնվում էր ուսւա ժողովուրդը։ Նույն հյուրագնացություններն էին, պարահանդեսները, նույն ֆրանսական թատրոնը, նույն շահերը արքունիքների, ծառայությանց նույն շահագրգությունները և ինտրիգները։ Միայն ամենաբարձր շրջաններում էին ճիգեր գործադրվում նրա համար, որ հիշեցնեն ներկա կացության ժժվարությունը։ Շշուկով պատմում էին, թե այդպիսի ծանր հանգամանքներում ինչպես իրար հակաղիր են վարվել երկու կայսրուհիները։ Կայսրուհի

© «Հայաստան» հրատարակություն,  
թարգմանված է հայերեն, 1976

Սարիա Ֆեոդորովնան, մտահոգված էր գերատեսչությանը ենթակա աստվածահաճո և կրթական-դաստիարակչական հաստատությունների բարեկցությամբ, կարգադրություն էր արել բռնորդ ինստիտուտները Կազան տեղափոխելու և դրանց իրերն արդեն կապկալված էին: Խոկ կայսրուհի Ելիզավետա Ալեքսեևնան այն հարցին, թե ի՞նչ կարգադրություններ կհաճեր անել, նա՝ իրեն հատուկ ոռուական հայրենասիրությամբ բարեհաճել էր պատասխանել, թե պետական հիմնարկների մասին նա կարգադրություններ անել չի կարող, որովհետև այդ վերաբերում է կայսեր. խոկ այն մասին, ինչ անձնապես կախված է իրենից, նա հաճել էր ասել, թե ինքը վերջին դուրս եկողը կլինի Պետերբուրգից:

Օգոստոսի 26-ին, հենց Բորոդինոյի ճակատամարտի օրը, Աննա Պավլովնայի մոտ երեկույթ կար, որի ծաղիկը լինելու էր սրբազնի նամակի ընթերցումը, նամակ, որ գրել էր նա արդար սուրբ Սերգեյի պատկերը թագավորին ուղարկելիս: Այդ նամակը համարվում էր հայրենասիրական հոգեոր պերճախոսության օրինակ: Նամակը պիտի կարդար իշխան Վաչիլին ինքը, որ հոչակված էր կարդալու իր արվեստով: (Կայսրուհու մոտ էլ նա էր կարդացել): Կարդալու արվեստը համարվում էր այն, որպեսզի բարձր, երգեցիկ եղանակով, հուսահատողբասացության և մեղմ տրտունջին ընդմեջ բառերը գեղեղեղեր իրենց իմաստից բոլորովին անկախ, այնպես որ միանգամայն պատահաբար մի բառին ոզր էր վիճակվում, մյուսներին՝ տրտունչ: Այդ ընթերցումը, ինչպես և Աննա Պավլովնայի բոլոր երեկույթները, քաղաքական նշանակություն ուներ: Այդ երեկոյին պետք է լինեին մի քանի կարեռ անձնավորություններ, որոնց պետք էր ամաշեցնել Փրանսական թատրոնը գրանցու համար և ոգեստել հայրենասիրական տրամադրությամբ: Արդեն քավական ժողովուրդ էր հավաքվել, բայց Աննա Պավլովնան տակապին հյուրասարահում շէր տեսնում բոլոր նրանց, ովքեր հարիավոր էին, ուստի և դեռ ընթերցմանը շանցնելով, ակսել էր ընդհանուր խոսակցություններ:

Պետքը ուրագի այդ օրվա նորությունը կոմսուհի Բեղուխով-  
վայի հիվանդությունն էր։ Կոմսուհին մի քանի օր դրանից  
առաջ անսպասելի հիվանդացել էր, բաց էր թողել մի քանի  
%

Հավաքույթներ, որոնց զարդն էր ինքը, և խսում էին, թե նա ոչի մի ընդունում և Պետքը բուրգի նշանավոր բժիշկների (որ սովորաբար բուժում էին նրան) փոխարեն նա վստահել էր մի ինչ-որ իտալացի բժշկի, որը նրան բուժում էր ինչ-որ նոր ու անսովոր եղանակով:

Բոլորը շատ լավ գիտեին, որ Հմայիչ կոստուու դրվագու  
թյունն առաջացել էր միաժամանակ երկու մարդու հետ ամուս-  
նանալու անհարմարությունից և որ իտալացու բուժումը կա-  
յանում էր այդ անհարմարությունները վերացնելու մեջ, բայց  
Աննա Պավլովնայի ներկայությամբ ոչ միայն ոչ ոք չէր հա-  
մարձակվում մտածել այդ մասին, այլ կարծես թե ոչ ոք չզի-  
տեր էլ այդ:

— On dit que le pauvre comtesse est très mal. Le médecin dit que c'est l'angine pectorale.

— L'angine? Oh, c'est une maladie terrible!

— On dit que les rivaux se sont réconciliés grâce à l'agine...'

Angine բառը կրկնվում էր մեծ բավականությամբ:

— Le vieux comta est touchant à cequ'on dit. Il a pleuré comme un enfant, quand le médecin lui a dit que le cas était dangereux<sup>2</sup>.

— Oh, se serait une perte terrible. C'est une femme la vissante<sup>3</sup>.

— Vous parlez de la pauvre comtesse, — ասավ, սոսենալ, Աննա Պավլովնան; — J'ai envoyé savoir de ses nouvelles. On m'a dit qu'elle allait un peu mieux. Oh, sans doute, c'est la plus charmante femme du monde, — ասավ Աննա Պավլովնան, ժպտալով իր ոգկորության վրա: — Nous appartenons à des camps différents, mais cela ne m'empêche pas de faire tout ce que je veux pour l'aider.

1 Ասում են, որ խեղճ կոմառուէին շատ զատ է: Բժիշկն ասել է, թե այդ անդիքնա է:

— Անգի՞նա: 0, սարսափելի հիվանդություն է

— Ասում են, որ ախոյանները հաշտվել են այդ հիվանդության շնորհիք

2 Սեր Կոմիք շատ սրտառուց է, ասում են նա Երևանից պահ լաց է աւ-  
երը բժիշկ ասել է, թի Նիվազութիւնը գտանազար է:

3 0°, այդ շամ մեծ կորուստ կլիմայի այդականի հայցի ու

che pas de l'estimer, comme elle le mérite. Elle est bien malheureuse<sup>1</sup>, — ավելացրեց Աննա Պավլովնան:

Կարծելով, թե այդ խոսքերով Աննա Պավլովնան թեթևակի բարձրացնում է կոմսուհու հիվանդության գաղտնիքի բողը, մի անզգույշ երիտասարդ իրեն թույլ տվեց զարմանք հայտնել այն մասին, թե հայտնի բժիշկներ չեն կանչված, այլ կոմսուհուն բժիշկում է մի շառլատան, որը կարող է վտանգավոր դեպքեր տալ:

— Vos informations peuvent être meilleures que les miennes<sup>2</sup>, — Հանկարծ թունոտ վրա պրծակ Աննա Պավլովնան անփործ երիտասարդի վրա: — Mais je sais de bonne source que ce médecin est un homme très savant et très habile. C'est le médecin intime de la reine d'Espagne<sup>3</sup>.

Եվ այս ձեռվ երիտասարդին ոչնչացնելով՝ Աննա Պավլովնան դիմեց Բիլիբինին, որը ուրիշ խմբում, գեմքի մաշկը հավաքած և, ըստ երեսույթին, պատրաստվելով բաց թողնել այն, որպեսզի ասի ոտ-ը, խոսում էր ավստրիացիների մասին:

— Je trouve que c'est charmant<sup>4</sup>, — խոսում էր նա այն դիվանագիտական գրության մասին, որի շնորհիվ Վեննա էին ուղարկվել լեհերու հերություն (ինչպես անվանում էին նրան Փետերուրացում) Վիտգենշտեյնի կողմից առնված ավստրիական գրոշակները:

— Ինչպե՞ս, այդ ինչպե՞ս, — դիմեց նրան Աննա Պավլովնան, խախտելով տոտ-ը լսելու համար տիրած լուսությունը, մի տոտ, որ ինքը գիտեր արգեն:

Եվ Բիլիբինը կրկնեց իր կազմած դիվանագիտական ճեպարի հետեւյալ իսկական բառերը.

<sup>1</sup> Գուք իսեղմ կոմսուհու մասին եք ասու՞մ: Ես մարդ ուղարկեցի նրա առողջությունն իմանալու հնա ասին, որ նա փոքր-ինչ լավ է: Օ՛, անկանած, նա աշխարհում մի հատ է: Մենք պատկանում ենք տարբեր բանակների, բայց դա ինձ չի խանգարում հարգել նրան ըստ արժանվուն: Նա խիստ դժբախտ է:

<sup>2</sup> Չեր անդեկությունները կարող են իմ ունեցածից լավագույն լինել:

<sup>3</sup> Բայց ես լավատեղակ աղրուրներից գիտեմ, որ այդ բժիշկը շատ զիտուն մարդ է: Նա իսպանական թագուհու անձնական բժիշկն է:

<sup>4</sup> Ես գտնում եմ, որ դա հիմնալի է:

<sup>5</sup> Պետրոպոլի հերոս:

— L'Empereur renvoie les drapeaux autrichiens, — ասավ Բիլիբինը, — դրապատճեն ամսակամաց գիտությունները, գեմքի մաշկը թողելով:

— Charmant, charmant<sup>2</sup>, — ասավ իշխան Վասիլին:

— C'est la route de Varsovie peut-être<sup>3</sup>, — բարձրածայնու անսպասելի ասավ իշխան Իպառլիտը:

Բոլորը նայեցին նրան, Համականալով, թե ինչ է ուզում ասել դրանով: Իշխան Իպառլիտը նույնպես ուրախ զարմանած նայեց իր շուրջը: Նա էլ, ինչպես ուրիշները, չէր համարում, թե ի՞նչ են նշանակում իր ասած խոսքերը: Նա իր դիվանագիտական կարիերայի միջոցին մի անգամ չէ որ նկատել էր, որ այդպես հանկարծ ասված խոսքերը եղել էին շատ սրբամիտ, և համենայն դեպս նա ասավ լեզվին եկած առաջին այդ խոսքերը: «Գուցեց շատ լավ գուրս գա, — մտածեց նա, — իսկ եթե գուրս զա, նրանք կարող են այնտեղ այդ սարքել»: Իսկ եթե գուրս լուս, ներս մտավ այն ոչ բավարար-հայրենասեր անձնավորությունը, որին սպասում էր Աննա Պավլովնան՝ դիմելու, և նա, Իպառլիտին ժամանակով ու մատներով սպասնալով, իշխան Վասիլիին հրավիրեց սեղանի մոտ և, երկու մոմ ու ձեռագիրը նրան մատուցելով, խնդրեց սկսել: Ամեն ինչ լուց:

«Ամենաառողումածագույն թագավոր կայսր, — խստությամբ կարդաց իշխան Վասիլին ու նայեց հասարակության, կարծես հարցնելով, թե արդյոք մեկը որեւէ ասելիք շունի դրա դեմ: Բայց ոչ ոչ շնորհ շասաց: — Նախաթոռ Մոսկվա քաղաքը, նոր Երուսաղեմը, ընդունում է յուր Քրիստոնին, — Հանկարծ շեշտեց նա յուր բառը, — որպես մայրը իր գիրկը կառնի զաշշացություն իսկ գիտելու համար, — որպես մասնիչ իր գիրկը կառնի զաշշացություն իսկ գիտելու համար, և ծագող մասախուղին ընդմեջ, տեսանելով քո տերության փառքը պայծառ, երգում է խանդավառ՝ Օվսաննա՝, օրհնաւ՝ է եկողը»:

<sup>1</sup> Կալարն ուղարկում է ավստրիական գողուները, բարեկամական և կորած-մոլորած գողուները, որ գտել է նա զիսավոր ճանապարհից գուրս:

<sup>2</sup> Արանչելի է, սպանչելն:

<sup>3</sup> Դա, գուցե, Վասիլի ճանապարհն է:

Իշխան Վասիլիին այս վերջին բառերն արտասանեց լացող ձայնով:

Բիլիբինն ուշադիր դիտում էր իր եղունգները, և շատերն ըստ երևույթին վարանման մեջ էին, մի տեսակ կարծես հարցնելով, թե ո՞րն է իրենց մեղքը: Աննա Պավլովնան նախապես արդեն շնչալով կրկնում էր, ինչպես պառավը՝ հաղորդման աղոթքը: «Թող հանդուգն ու լափիր Գովիաթը...», — շշնչում էր Աննա Պավլովնան:

Իշխան Վասիլին շարունակեց.

«Թող հանդուգն ու լափիր Գովիաթը Ֆրանսիայի սահման-ներից Ռուսիո կողմերը տարածի մահաքեր սարսափներ. Հեզ հավատը, ոռւսական Դավիդի սույն պարսատիկը, հանկարծակի կիսորտակի նրա արնածարավ գոռողության գլուխը: Սույն պատկերը սրբույն Սերգեյի, վաղեմի նախանձախնդրին մեր հայրենիքի բարօրության, ընծայաբերվում է ձերդ կայսերական մեծության: Կցավիմ, որ տկարացող ուժերն իմ կարգելին ձեր սիրեցյալ դեմքը տեսնելու հաճույքն ունենալէ Ձերմ աղոթքներ եմ առաքում առ երկինք — թող Ամենակարողը զորացնի արդարների ցեղը և ձերդ մեծության ցանկություններն ի բարին կատարի»:

— Quelle force! Quel style! — լսվեցին գովասանքներ կարդացողի և հեղինակի հասցեին:

Ոգեսրված այս ճառով՝ Աննա Պավլովնայի հյուրերը գեռ երկար խոսում էին հայրենիքի դրության մասին և տարբեր ենթադրություններ անում ճակատամարտի ելքի նկատմամբ, ճակատամարտ, որը տրվելու էր այս օրերս:

— Vous venez? — ասավ Աննա Պավլովնան, — որ վաղը, թագավորի ծննդյան օրը, մենք տեղեկություն կստանանք ես լավ նախազգացում ունեմ:

## II

Աննա Պավլովնայի նախազգացումն իսկապես արդարացավէ Մյուս օրը, երբ թագավորի ծննդյան օրվա առթիվ մաղթանք

<sup>1</sup> Ի՞նչ ուժություն է հանդիպություն:

<sup>2</sup> Դուք կտեսնեք:

Էր կատարվում պալատում, իշխան Վոլկոնսկին դուրս կանչեց եկեղեցուց և մի ծրար ստացավ իշխան Կուտուզովից: Այդ կուտուզովի գեկուցն էր, որ գրել էր նա ճակատամարտի օրը՝ Տատարինովովից: Կուտուզովը գրում էր, թե ոռւսները ոչ մի քայլ չեն նահանջել, թե ֆրանսացիները մեզնից շատ ավելի քորուստ են ունեցել, թե նա զեկուցում է կովի դաշտից՝ հապճակ, դեռ շաբարողանալով հավաքել վերջին տեղեկությունները:

Հետևարար՝ դա հաղթություն է եղել: Ու անմիջապես, առանց տաճարից դուրս գալու, գոհություն հայանվեց Տիրոջ՝ նրա օգնության համար և հաղթության համար:

Աննա Պավլովնայի նախազգացումն արդարացավ, և քաղաքում ամբողջ առավոտը տիրում էր ուրախ-տոնական տրամադրություն: Բոլորը հաղթանակը համարում էին կատարյալ, և ոմանք էլ արդեն խոսում էին հենց իր նապուենի գերի ընկելու մասին, նրա գահընկեցության և Ֆրանսիայի համար նոր գլուխ ընտրելու մասին:

Կովից հեռու և պալատական կյանքի պայմաններում շատ դժվար է, որպեսզի գեպքերն անդրադառնան իրենց ամբողջությամբ ու զորությամբ: Ընդհանուր գեպքերն ակամա խմբվում են մի որևէ մասնավոր գեպքի շուրջը: Այսպես էլ, պալատականների զինավոր ուրախությունն այժմ կայանում էր որքան այն բանում, որ մենք հաղթել ենք, նույնքան և այն բանում, որ այդ հաղթանակի լուրն եկավ հենց թագավորի ծննդյան օրը: Դա մի հաջողված հաճելի անակնակալ էր: Կուտուզովի գեկուցն մեջ խօսք կար նաև ոռւսների կորուստների մասին, ու դրանց թվում արված էր Տուշկովի, Բագրատիոնի, Կուտայսովի անունները: Նմանապես և դեպքի ախուր կողմր ակամա այստեղի՝ Պետերբուրգյան միջավայրում խմբվեց մի գեպքի՝ Կուտայսովի մահվան շուրջը: Նրան բոլորը ճանաշում էին, թագավորը սիրում էր նրան. նա զահել էր և հետաքրքրական: Այդ օրը բոլորն իրար հանդիպում էին ասելով.

— Ի՞նչ զարմանալի զուգադիպություն: Հենց մաղթանքին: Բայց ի՞նչ կորուստ է Կուտայսովը: Ա՞խ, շա՞տ ափսոս:

— Ես ի՞նչ էի ասում ձեզ Կուտուզովի մասին, — ասում էր այժմ իշխան Վասիլիին մարգարեի հպարտությամբ: — Ես միշտ ասում էի, թե միայն նա՝ կարող է հաղթել նապուենին:

Բայց մյուս օրը բանակից տեղեկություն շտացվեց, և ընդհանուր ձայնը դարձավ տագնապալի։ Պալատականները տանջում էին անորոշության այն տանջանքի համար, որի մեջ գտնվում էր թագավորը։

— Ինչպիսի՞ն է թագավորի դրությունը, — ասում էին պալատականները և այլքս չէին մեծարում, ինչպես նախանցյալ օրը, այլ դատապարտում էին այժմ կուտուզովին, որ եղել էր թագավորի անհանգստության պատճառը։ Իշխան Վասիլին այդ օրն այլքս չէր պարծենում իր քրութեալ կուտուզովի, այլ լուսթյուն էր պահպանում, երբ խոսք էր բացվում զիխաւլոր հրամանատարի մասին։ Դրանից բացի այդ օրվա երեկոյին մոտ ամեն բան կարծես միացավ նրա համար, որ Պետերբուրգի բնակիչներին գցեր տագնապի և անհանգստության մեջ, ավելացավ ևս մի սարսափելի նորություն։ Կոմսուհի էլեն Բեզուխովան հանկարծամահ եղավ այն սարսափելի հիվանդությունից, որ այնպես հաճելի էր արտասանվում։ Պաշտոնապես մեծ հասարակության մեջ բոլորն ասում էին, թե կոմսուհի Բեզուխովան մեռել է *angine pectorale<sup>1</sup>* նոպայից, բայց ինտիմ շրջանակներում պատմում էին մանրամասնություններ, թե ինչպես լե *médecin intime de la reine d'Espagne<sup>2</sup>* էլենին տվել է ինչ-որ գեղի փոքրիկ գոզաներ՝ հայտնի ներզործություն առաջ բերելու համար։ բայց ինչպես էլենը, տանջվելով այն բանից, որ ծեր կոմսը կասկածում է իրեն, և այն բանից, որ ամուսինը, որին նա գրել էր (*այդ թըրքառ, անբարոյական Պիեռը*), չէր պատասխանել նրան, և նա հանկարծ ընդունել էր իր համար դուրս գրված դեղի ահազին դոզա և տանջանքների մեջ մեռել էր ավելի շուտ, քան կարող էին օգնություն հասցնել։ Պատմում էին, թե իշխան Վասիլին ու ծեր կոմսը կամեցել են պատասխանատվության կանշել իտալացուն, բայց իտալացին այնպիսի նամակներ է ցույց տվել իժբախտ հանգուցյալի կողմից գրված, որ նրան անմիջապես թողել են։

Ընդհանուր խոսակցությունը կենտրոնացած էր երեք տըխ-

րալի դեպքերի շուրջը։ դրանք էին թագավորի անտեղյակությունը, կուտուզովի կորուսար և էլենի մահը։

Երբորդ օրը, կուտուզովի զեկույցից հետո, Մոսկվայից Պետերբուրգ եկավ մի կալվածտեր, և ամբողջ բաղաքում լուս տարածվեց, թե Մոսկվան հանձնվել է Փրանսացիներին։ Եղանակությամբ էր ինչ էր թագավորի դրությունը։ Կուտուզովը սարսափելի՛ էր, ի՞նչ էր թագավորի դրությունը։ Կուտուզովը սարսափելի է եղել, և իշխան Վասիլին աղջկա մահվան առթիվ դավաճան է եղել, ու իշխան Վասիլին աղջկա մահվան առթիվ իրեն արվող *visites de condoléance<sup>3</sup>*-ի ժամանակ ասում էր առաջ իր կողմից գոված կուտուզովի մասին (նրան ներելի էր առաջ իր կողմից գոված կուտուզովի մասին (նրան ներելի էր վշտի մեջ մոռանալ այն, ինչ ասել էր առաջ), թե ուրիշ բան է չէր կարելի սպասել կույր և անբարությունուց։

— Ես զարմանում եմ միայն, թե ինչպես կարելի էր Ռուսաստանի ճակատագիրը հանձնել մի այդպիսի մարդու։

Քանի այդ լուրը պաշտոնական չէր՝ գեռ կարելի էր կասկածել, բայց հետեւյալ օրը կոմս Ռաստոպչինից եկավ հետեւյալ գեկույցը։

«Կուտուզովի աղյուսանտն ինձ նամակ բերեց, որի մեջ նա ինձնից պահանջում է ոստիկանական սպաներ՝ բանակը դեպ Ռյացիանի ճանապարհն ուղեկցելու համար։ Նա գրում է, թե ցավելով է թողնում Մոսկվան։ Թագավոր՝ Կուտուզովի քայլը վճռում է մայրաքալաքի և Զեր կայսրության բախտը։ Ռուսաստանը կցնցվի, իմանալով, որ թշնամուն է տրված այն բաղադրա, ուր կենտրոնանում է Ռուսաստանի մեծությունը, ուր գտնվում է Զեր նախնիների աճցունը։ Ես կզնամ բանակի հետ։ Ես ամեն ինչ դուրս եմ բերել բաղաքից, ինձ մնում է միայն ողբալ իմ հայրենիքի վիճակը։»

Այս զեկույցն ստանալով՝ թագավորը իշխան Վոլկոնսկու հետ կուտուզովին ուղարկեց հետեւյալ հրովարտակը։

«Իշխան Միխայիլ Ելարիխոնովիչ, օգոստոսի 29-ից ես ոչ մի տեղեկություն չունեմ ձեզնից։ Մինչդեռ սեպտեմբերի 1-ից Յարոսլավի վրայով Մոսկվայի գլխավոր հրամանատարից տիտուր տեղեկություն ստացա, որ դուք վճռել եք բանակի հետ միասին թողնել Մոսկվան։ Դուք ինքներդ կարող եք երևակայել, թե ի՞նչ տպակորություն կթողներ այդ լուրն ինձ վրա, իսկ

<sup>1</sup> Ցավակացական այլառողջություններ։

<sup>2</sup> Խսպանական թագաւոր անձնական բժիշկը։

ձեր լուսթյունը կրկնապատկում է իմ զարմանքը: Ես ուղարկում եմ սրա հետ գեներալ-ադյուտանտ իշխան Վոլկոնսկուն, որպեսզի իմանամ ձեզնից բանակի դրության մասին և այն պատճառների մասին, որոնք դրդեցին ձեզ այդքան ցավալի վճիռ ընդունելու:

111

*Մոսկվան թողնելուց ինն օր հետո Պետերովրդ եկավ Կուտուզովի սուրհանդակը, հետք բերելով պաշտօնական տեղեկություն՝ Մոսկվան թողնելու վերաբերյալ։ Մյջ սուրհանդակը քրանսացի Միշոն էր, որ ոռւսերեն շգիտեր, սակայն զօւ-  
que étranger, russe de coeur et d'âme<sup>1</sup>, ինչպես նա ինքն էր ասում իր մասին։*

Թեև պ-ն Միշոյի վշտի աղբյուրը պետք է որ լիներ այլ, քան  
այն բանը, որից բխում էր ոռւս մարդկանց վիշտը, բայց Մի-  
շոն այնպիսի տխուր գեմք ուներ թագավորի առանձնասենյա-  
կըն առաջնորդվելիս, որ թագավորն իսկույն և թ հարցրեց  
նրանից.

— M'apportez-vous de tristes nouvelles, colonel?

— Bien tristes, Sire,— պատասխանեց Միջոն, Հառաւ-  
չանքով աշբերը խոնարհելով.— L'abandon de Moscou<sup>5</sup>.

— Aurait-on livré mon ancienne capitale sans se battre?<sup>8</sup>, — Հանկարծ, բռնկվելով շտապ ասակ թագավորութիւնը

Միշոն հարդակիր հայտնեց այն, ինչ հրամայված էր նրան հայտնել Կուտուզովի կողմից, հենց այն, թե Մոսկվայի մոտ կռվելու հնարավորություն չկար և թե որովհետեւ մնում էր մի ելք՝ կորցնել բանակին ու Մոսկվան, թե միայն Մոսկվան, ուստի ֆելդմարշալն ստիպված էր ընտրել վերջինը:

Թագավորը լսում էր անխռու, առանց Միշոյին նայելու:

— L'ennemi est-il entré en ville? — *Հարցը ի՞նչ*

— Oui, Sire, et elle est en cendres à l'heure qu'il est.  
Je l'ai laissée toute en flammes<sup>1</sup>, — ყნოაყხო ասավ Սիբոն,  
բայց նայելով թագավորին, սարսափեց արածի համար:

Թագավորն սկսեց շնչել ծանր ու արագ, նրա ներքին շուրջը  
գողաց, և գեղեցիկ երկնագույն աշբերը մի ակնթարթում խո-  
նավացան արցունքներից:

Բայց դա տեսեց միայն մի վայրկյան։ Թագավորը հասկարծ հոնքերը կիտեց, կարծես ինքն իրեն դատապարտելով իր թուլության համար և, գլուխը բարձրացնելով, հաստատուն ձայնով բարձակ Միջոյին.

— Je vois, colonel, par tout ce qui nous arrive,— *uuuuu*, — que la Providence exige de grands sacrifices de nous... Je suis prêt à me soumettre à toutes ses volontés, mais dites *moi*. Michaud, comment avez-vous laissé l'armée en voyant ainsi, *sans coup férir*, abandonner mon ancienne capitale? N'avez-vous pas aperçu du découragement?...<sup>2</sup>.

Տեսնելով իր տքաղաքացիությունը՝ Միջոն նույնպես հանգստացավ, բայց թագավորի ուղղակի էական հարցին, որը պահանջում էր և ուղղակի պատասխան, նա դեռ չէր կարողացել պատասխան պատրաստել.

<sup>1</sup> Թշնամին մտա՞վ քաղաք:

— Այս, արքա, և հիմա արցեն Մոսկվան մոխիր է դարձել. Ես թողի նրան ամբողջովին բռցերի մեջ:

**Հ Այս բոլորից, ինչ կատարվում է, զնապահութեա և առաջարկութեա մեջ շատ գործութեա է պահանջութեա... Ես պատրաստ եմ ամեն քանութեա հետաքանդեա երաւ կամքին. բայց ասացեա, Միշո, ինչ զիմանակութեա թողիք դուք բանակիր, որն առանց կույի թողեց իմ հին մայրաքաղաքը: Զնկատեցի՞՞ արդյոք ընկնդիմած տրամադրությունն**

### **3 պարզածագույն թագավորի:**

— Sire, me permettrez-vous de vous parler franchement en loyal militaire<sup>1</sup>, — аսավ նա, որպեսզի ժամանակ շահի:

— Colonel, je l'exige toujours<sup>2</sup>, — ասավ թաղավորը: — Ne me cachez rien, je veux savoir absolument ce qu'il est<sup>3</sup>.

— Sire! — ասավ Միշոն մի նուրբ, հաղիկ նկատելի ժպիտ շուրթերին կարողանալով պատրաստել արդեն իր պատասխանը՝ թեթև ու հարգալիր յետ առաջ։ — Sire! j'ai laissé toute l'armée depuis les chefs jusqu'au dernier soldat, sans exception, dans une crainte épouvantable, affrayante...<sup>4</sup>

— Comment ça? — իսկա խոժողելով, բնդհատեց թագավորը, Mes russes se laisseront-ils abattre par le malheur... Jamais<sup>5</sup>.

Հենց դրան էլ սպասում էր Միշոն իր բառախաղն ասելու:

— Sire, — ասավ նա թեթև-զվարթ հարգանքի արտահայտությամբ, — ils craignent seulement que Votre Majesté par bonté de coeur ne se laisse persuader de faire la paix. Ils brûlent de combattre, — ասում էր ոռւս ժողովրդի լիազորը. — et de prouver à Votre Majesté par le sacrifice de leur vie, combien ils lui sont dévoués...<sup>6</sup>

— Ah! Հանգստացած և աչքերի սիրալիր փայլքով ասավ թագավորը, Միշոյի ուսին խփելով: — Vous me tranquillisez colonel?<sup>7</sup>.

<sup>1</sup> Արքա, թույլ կտա՞ք արդյոք խոսել պարզ, ինչպես վայել է ազնիվ գորականին:

<sup>2</sup> Գնդապետ, ես այդ պահանջում եմ միշտ:

<sup>3</sup> Ոչինչ մի թաքցնեք, ես ուզում եմ անպայման ամրող ճշմարտությունն իմանալու:

<sup>4</sup> Թագավոր, ամրոջ բանակը, զորապետներից սկսած մինչև վերջին զինվորը, առանց բազառության, ես թողի մեծ, հուսահատական երկուուղի մեջ:

<sup>5</sup> Ինչպես թե, Կարո՞ղ են արդյոք իմ ոռւսներն ընկճվել անհաջողություններից: Երբե՞ք...

<sup>6</sup> Թագավոր, նրանք վախենում են միայն այն բանից, որ ձերդ մեծությունը հանկարծ իր բարեհոգությամբ վլճով հաշտություն կնքել: Նրանք այրվում են կովելու ցանկությունից և իրենց կյանքի զոհաբերությամբ ապացուցելու ձերդ մեծության, թե որքան նվիրված են ձեզ...

<sup>7</sup> Դուք ինձ հանգստացնում եք, գնդապետ:

Թագավորը, զլուկան իշխնելով, լուր էր միառժամանակ:

— Eh bien, retournez à l'armée<sup>1</sup>, — ասավ նա, ուղղվելով ամրող հասակով մեկ ու վեհ շարժումով Միշոյին դիմելով, — et dites à nos braves, dites à tous mes bons sujets partout où vous passerez, que quand je n'aurais plus aucun soldat, je me mettrai, moi-même, à la tête de ma chère noblesse, de mes bons paysans et j'userai ainsi jusqu'à la dernière ressource de mon empire. Il m'en offre encore plus que mes ennemis ne pensent<sup>2</sup>, — ասում էր թագավորը, հետզիսեա ավելի ու ավելի ոգերվելով, — Mais si jamais il fut écrit dans les décrets de la divine Providence<sup>3</sup>, — ասավ նա իր գեղեցիկ, հեզ ու զզացմունքից փայլող աշբերը դեպ երկինք բարձրացնելով, — que ma dinastie dût cesser de régner sur le trône de mes ancêtres, alors, après avoir épuisé tous les moyens qui sont en mon pouvoir, je me laisserai croître la barbe jusqu'ici (թագավորը ձեռքով ցույց տվեց կրծքի կեսը), et j'irai manger des pommes de terre avec le dernier de mes paysans plutôt, que de signer la honte de ma patrie et de ma chère nation, dont je sais apprécier les sacrifices...<sup>4</sup>

Ասելով այս խոսքերը հուզված ձայնով՝ թագավորը հանկարծ շրջվեց, կարծես կամենալով Միշոյից թաքցնել աշբերում երկացած արցունքերը, և անցավ իր կարինեսի խորքը: Միքանի վայրկյան կանգնելով այստեղ՝ նա մեծ-մեծ բայցերով վերադարձավ Միշոյի մոտ և ուժեղ շարժումով սեղմեց նրա

<sup>1</sup> Է՛ս, վերադարձեք բանակ:

<sup>2</sup> Եվ ասացեք իմ բաշերին, ասացեք իմ բոլոր բարի հպատակներին, ամեն տեղ, որտեղից կանցնեք, որ երբ ես այլևս ոչ մի զինվոր չեմ ունենա, ես ինք կկանգնեմ իմ սիրեցյալ ազնվականների և բարի գյուղացիների գուլսը և այս պիսով կսպառեմ իմ պետության վերջին միջոցները: Դրանք ավելի շատ են, քան կարծում են իմ թշնամիները:

<sup>3</sup> Բայց եթե նախորշված լիներ աստվածային նախախնամությամբ:

<sup>4</sup> Որ մեր զինաստիքան զադարի թագավորել իմ նախնիների զահին, այն ժամանակ, սպառելով իմ իշխանության տակ եղած բոլոր միջոցները, ես մորուք կթողնեմ մինչ այստեղ, և ավելի շուտ կերթամ միայն գետնախնձոր ուտելու իմ վերջին գյուղացու հետ, քան կիմում ստորագրել խայտառակությունն իմ հայրենիքի և իմ թանկագին ժողովրդի, որի զոհաբերությունները են գիտեմ գնահատելու...

ձեռք, արմունկից դած: Թագավորի գեղեցիկ, հեզ դեմքը կարմը-  
րու էր, և աշքերը վասկրւմ էին վճռականության ու զայրութի  
փալով:

— Colonel Michaud, n'oubliez pas ce que je vous dis ici; peut être qu'un jour nous nous le rappellerons avec plaisir... Napoléon ou moi,— ասավ թագավորը, ձեռք կրծքին  
դիպանելով:— Nous ne pouvons plus ré gner ensemble. J'ai  
appris à le connaître, il ne me trompera plus<sup>1</sup>.

Եվ թագավորը, խոժողելով, լոեց: Լսելով այս խոսքերը,  
տեսնելով հաստատ վճռականության արտահայտություն թա-  
գավորի աշքերում, Միջոն զօօկու էլեանց, ուս ըստ առաջ առաջ ամենից, ինչ լսեց (ինչպես ասում էր նա հետազոտմ),  
և հետեւալ արտահայտություններով պատկերեց ինչպես իր  
զգացումները, այնպիս էլ զգացումները ուս ժողովրդի, որի  
լիազորն էր համարում նա իրեն:

— Sire!— ասավ նա:— Votre Majesté signe dans ce  
moment la gloire de sa nation et le salut de l'Europe<sup>2</sup>.

Թագավորը գլուխ թեքումով արձակեց Միջոյին:

## IV

Այն ժամանակ, երբ Ռուսաստանի համարյա կեսը նվաճ-  
ված էր, և Սոսկվայի բնակիները փախչում էին հետավոր նա-  
հանգները, և աշխարհազոր աշխարհագորի հետեւց բարձրա-  
նում էր հայրենիքը պաշտպանելու, մեզ, որ շենք ապրել այն  
ժամանակ, ակամա պատկերանում է, թե բոլոր ուս մարդիկ,  
փոքրից սկսած մինչև մեծը, զբաղված էին միայն նրանով, որ

<sup>1</sup> Գնդապետ Միջո, շմուանաք՝ ի՞նչ ասի ես ձեզ այստեղ, գուցե մենք  
երբեք այս մասին հիշենք հաճակրավ: Նապոլեոնը կամ ես... Մենք այլևս չենք  
կարող թագավորել միասին: Ես այժմ նրան ճանաչաւմ եմ, և նա այլևս գի  
խարի ինձ...

<sup>2</sup> Թեև առարկերկրացի, բայց հոգավարտով առաւ:

<sup>3</sup> Թագավոր: Ձերդ մեծությունն այս բարեկա ստորագ ում է իր ժողո-  
վրդի փառքը և նվազայի փրկությունը:

զոհաբերեն իրենց, հայրենիքը փրկեն կամ լան նրա կործանմ: Ի  
վրա: Այն ժամանակվա պատումները, նկարագրությունները,  
ամենը՝ առանց բացառության խոսում են ուս մարդկանց դեպ-  
հայրենիքն ունեցած անձնազնության, սիրո մասին, և նր-  
րանց հուսահատության, վշտի ու հերոսության մասին: Բայց  
իրականում այդ այդպես չի եղել: Մեզ այդպես է թվում միայն  
այն պատճառով, որ մենք այդ անցյալի մեջ տեսնում ենք այն  
ժամանակվա մի ընդհանուր պատմական շահագրգություն և  
շենք տեսնում բոլոր այն անձնական, մարդկային շահագրգը-  
ռությունները, որ ունեցել են մարդիկ: Մինչդեռ իրականում  
այն ներկայի անձնական շահագրգությունները ա'յն ասսի-  
ճան ավելի նշանակելի են ընդհանուր շահերից, որ նրանց  
պատճառով երբեք չի զգացվում (բնավ նկատելի չէ անդամ)  
պատճառով երբեք չի զգացվում (բնավ նկատելի չէ անդամ)՝  
ընդհանուր շահը: Այն ժամանակվա մարդկանց մեծ մասը ոչ  
մի ուշագրություն չէր դարձնում գործերի ընդհանուր ընթաց-  
քին, այլ զեկավարվում էր միայն ներկայի անձնական շահե-  
րով: Եվ հենց այդ մարդիկ էին այն ժամանակվա ամենաօգտա-  
կար գործիչները:

Իսկ նրանք, ովքեր փորձում էին հասկանալ իրերի ընդհա-  
նուր ընթացքը և անձնազնությամբ ու հերոսությամբ կամե-  
նում էին մասնակցել նրա մեջ, ամենաանօգուտ անդամներն էին  
հասարակության. նրանք ամեն ինչ շրջած էին տեսնում, և  
ամենը, ի՞նչ անում էին օգուտի համար, ստացմում էր անօգուտ  
գատարկ բան, ինչպես Պիեռի, Մամոնովի գնդերը, որ կողոպ-  
տում էին ուս գուղերը, ինչպես տիրուհիների պոկտած ծը-  
պում էին ուս գուղերը, ինչպես տիրավորներին և աւլու: Անզամ  
վատը, որ երբեք չէր հասնում վիրավորներին և աւլու: Անզամ  
նրանք, ովքեր, սիրելով իմաստակելն ու իրենց զգացումներն  
արտահայտելը, բարբառում էին Ռուսաստանի ներկա գրու-  
թյան մասին, իրենց խոսքի մեջ ակամա կրում էին կա'յ կեղ-  
ծիրի ու ստի կնիքը, կա'մ մարդկանց անտեղի գատապարտու-  
թյան ու մարդկանց վրա շարախոսելու կնիքը, մարդկանց,  
որոնք մեղադրվում են այն բանի համար, որի մեջ ոչ ոք չէր  
կարող մեղավոր լինել: Պատմական անցյալերի մեջ ամենից  
ավելի ակնհայտ է իմացության ծառի պատուղը ճաշակելն ար-  
գելելը: Միմիայն անգիտական գործունեությունն է պատու-  
ցելելը: Միմիայն անգիտական գործունեությունն է պատու-

Երբեք չի հասկանում նրա նշանակությունը: Եթե նա փորձում է այն հասկանալ, նա ապշում է, թե որքան անպտուղ է անցնում գործը:

Այն ժամանակ Ռուսաստանում կատարվող անցքի նշանակությունն այնքան ավելի աննկատելի էր, որքան ավելի շեմ էր մարդու մասնակցությունը նրա մեջ: Փետերուրում և Մոսկվայից հեռու ընկած նահանգներում կանայք և տղամարդիկ, աշխարհազորի մունդիրներ հագած, ողբում էին Ռուսաստանն ու մայրաքաղաքը և խոսում անձնագության մասին և այլն. բայց բանակում, որը նահանջում էր Մոսկվայի այս կողմը, գրեթե չէին խոսում և չէին մտածում Մոսկվայի մասին և, նայելով նրա ահագին հրդեհին, ոչ ոք չէր երդում՝ վրեժինդիր լինել ֆրանսացիներից, այլ մտածում էին ոռնիկի հետեւյալ հերթի, հետեւյալ կայանի մասին, նպարավաճառուհի Մատրյոշկայի մասին և նման բաներ:

Նիկոլայ Ռոստովը անձնագործության առանց որևէ նպատակի, այլ պատահաբար, որովհետև պատերազմն սկսվելիս պաշտոնի մեջ էր, մոտիկ և տևական մասնակցություն ունեցավ հայրենիքի պաշտպանության մեջ, և այդ պատճառով առանց հուսահատվելու ու մոռայլ եղրակացությունների էր նայում այն բանին, ինչ կատարվում էր այն ժամանակ Ռուսաստանում: Եթե նրան հարցնեին, թե նա ի՞նչ է մտածում Ռուսաստանի ներկա դրության մասին, նա կասեր, թե ինքը մտածելու բան չունի, թե դրա համար կա Կուտալով և ուրիշներ, և թե ինքը լսել է, որ գնդեր են կազմվում և թե, երեխ, դեռ երկար կիսվեն և թե ներկա հանգամանքներում ինքը երկու տարի հետո հազիվ թե գունդ ստանա:

Որովհետև նա այդպես էր նայում գործին, ուստի և իրեն՝ դիվիզիայի համար նոր ծիեր գնելու գործով Վորոնեժ գործուղելու լուրը լսեց ո՛չ միայն առանց վշտանալու, թե զրկվում է վերջին կովին մասնակցելուց, այլև մեծագույն բավականությամբ, որը նա չէր թաքցնում և որը նրա ընկերները շատ լավ էին հասկանում:

Բորոդինոյի կովից մի քանի օր առաջ Նիկոլայը դրամ ու գլություններ ստացավ և, հուսարներին առաջուց ուղարկելով, ինքը փոստի սայլակով մեկնեց Վորոնեժ:

Միայն նա, ով ապրել է այդ, այսինքն՝ մի քանի ամիս անընդատ եղել է ուղամական կովի մթնոլորտում, միայն նա կարող է հասկանալ այն հաճույքը, որ ապրեց Նիկոլայը, երբ դուրս եկավ այն շրջանից, որը բռնել էին զորքերն իրենց խարավորումներով, պարենի պաշարասայլերով, հիվանդանոցներով, երբ նա տեսավ առանց զինվորների, ուղմասայլերի, առանց համբարի ներկայության կեղտուու հետքեր ունեցող շիները՝ գյուղացիներով ու գեղջկութիներով, կալվածատիրական տները, գաշտերն՝ արածող տավարով, փոստակայանների կան տները, գաղտերն՝ արածող տավարով, նա այնպիսի ուրախություն տները՝ բնած վերակացուներով, նա այնպիսի ուրախություն: զգաց, կարծես այդ բոլորն առաջին անգամն էր տեսնում: Մանավանդ այն, ի՞նչ երկար զարմացնում և ուրախացնում էր նրան,— կանայք էին, զահել, առողջ կանայք, որոնց յուրաքանչյուրին չէին շրջապատում-սիրաբանում տասնյակ սպաներ, և կանայք, որ ուրախ ու շոյված էին այն բանի համար, որ ճանապարհորդ սպան հանագներ է անում իրենց հետ:

Ամենաուրախ տրամադրությամբ Նիկոլայը գիշերն եկավ հասավ Վորոնեժ՝ հյուրանոց, պատվիրեց այն բոլորը, ինչից երկար գուրկի էր բանակում, և մյուս օրը մաքուր ածիլվելով ու հագնելով վաղուց շագած տոնական նշանագիտատը, վնաց իշխանությանը ներկայանալու:

Աշխարհազորի պետը քաղաքացիական գեներալ էր, մի տարիքով մարդ, որը, հավանորեն, զվարճանում-ուրախանում էր իր ուղմական գիտությամբ ու աստիճանով: Նա բարկացած (կարծելով թե դրա մեջ է զինվորական առանձնահատկությունը) ընդունեց Նիկոլային և նշանակալիորեն, կարծես թե դրա իրավունքն ունենալով և կարծես թե գնահատելով իրերի ընդհանուր ընթացքը, հավանություն տալով ու շտալով, հարցուփորձ արագ նրան: Նիկոլայն այնքան ուրախ էր, որ նրան այս ամենը զվարճություն էր պատճառում:

Աշխարհազորի պետի մոտից Նիկոլայը գնաց նահանգապետի մոտ: Նահանգապետը փոքրահասակ, ժիր մարդ էր, բայտ ամենայնի սիրալիր ու պարզ: Նա Նիկոլային մատնացուց արագ այն ծիաբուժարանները, ուր նա կարող էր ծիեր գտնել, հանձնարարեց նրան մի առնող-ծախող քաղաքում և քաղաքից 20 վերստ հեռու ապրող մի կալվածատեր, որոնք լավագայի պատճառում:

գույն ձիեր ունեին, ու խոստացավ ամեն տեսակ աշակցություն:

— Դուք կոմս կլյա Անդրեսիչի որդի՞ն եք: Կինս շատ մոտ է եղել ձեր մայրիկին: Հինգաբթի օրերը հավաքվում են ինձ մոտ, այսօր հինգաբթի է. ինդրում եմ շնորհ բերել առանց քաշվելու, — ասավ նահանգապետը նրան արձակելով:

Նահանգապետի մոտից նիկոլայն ուղղակի գնաց փոխակառք վերցրեց և, վերակային կողքին նստեցնելով, քշեց քաղաքից 20 վերստի վրա գտնվող կալվածատիրոջ ձիաբուժարանը: Ամեն բան, վորոնեծ գտնվելու առաջին օրերը, նիկոլայի համար ուրախ և թեթև էր անցնում, և ամեն ինչ, ինչպես այդ լինում է, երբ մարդ լավ տրամադրության մեջ է գտնվում, հաջողվում էր և ձեռքից զալիս էր:

Կալվածատիրը՝ մի հին կավալերիստ, որի մոտ եկավ նիկոլայը, ամուրի էր, ձիագետ, որսորդ, ուներ գորգագործարան, հարյուր տարվա մեղրողի, հունգարական գինի և հիանալի ձիեր:

Նիկոլայը առանց երկար խոսելու վեց հազարով գնեց տասնը յոթ ործ ընտրովի ծի (ինչպես ինքն էր ասում), իր ձիերի նորոգմանը փայլ տալու համար: Ծաշելով և մի քիչ ավելի հունգարական խմելով՝ նոստովը, համբուրզելով կալվածատիրոջ հետ, որին արդեն սղուած էր ասում, զգվելի ճանապարհով, ամենաուրախ տրամադրությամբ ետ գարձավ, կառապանին շարունակ շտապեցնելով, որպեսզի կարողանան հասնել նահանգապետի երեկոյթին:

Հագուստները փոխելով, անուշահոտ յուղերով օծվելով ու գլուխը սառը ջրով թրջելով, նիկոլայը փոքր-ինչ ուշացած, բայց պատրաստի ֆրազով. vaut mieux tard que jamais<sup>1</sup>, գնաց նահանգապետի առնեն:

Այդ պարահանդես չէր, և ասված էլ չէր, թե ի՞նչ են պարելու. բայց բոլորը գիտեին, որ Կատերինա Պետրովնան դաշնամուրով նվազելու է վալսեր ու էքսեզներ և որ պարելու են, ու բոլորը, այդ հաջլով, եկել էին պարահանդիսային հագուստներով:

<sup>1</sup> Հակ է ուշ, քան երբեք:

Նահանգապական կյանքը 1812 թվին ճիշտ այնպիս էր, ինչպես միշտ, այն տարբերությամբ միայն, որ քաղաքում ավելի կենդանություն կար Մոսկվայից եկած քաղմաթիվ հարուստ ընտանիքների պատճառով, և որ ինչպես ամեն բանում, ի՞նչ կատարվում էր այն ժամանակ Ռուսաստանում, նկատելի էր մի ինչ-որ առանձնահատուկ մեծ թափ ու շոայլություն — ինչ ուզում է լինի, միենույն է կյանքում, նաև այն բանում, որ այն գուհիկ գրուցը, որն անհրաժեշտ է մարդկանց և որն առաջ լինում էր եղանակի ու ընդհանուր ծանոթների մասին, աժմ Սոսկվայի գորբի և նապուենի մասին էր:

Հասարակությունը, որ հավաքված էր նահանգապետի մոտ, Վորոնեժի լավագույն հասարակությունն էր:

Կանաւր շատ-շատ էին, դրանց մեջ էին նիկոլայի մի բանի ծանոթուհիները. բայց չկար մի այնպիսի տղամարդ, որ փոքրի-շատե մրցեր Գեորգիի ասպետի, նոր ձիեր գնող-հուսարի և, միաժամանակ բարեսիրտ ու բարեկիրթ կոմս Ռուսովի հետ: Տղամարդկանց թվում կար ֆրանսական բանակի մի զերի իտալացի սպա և նիկոլայն զգում էր, որ այդ զերու ներկայությունն ավելի ևս բարձրացնում էր իր՝ ուսւ հերոսի նշանակությունը: Դա կարծես մի հաղթանիշ լիներ: Նիկոլայն զգում էր թյումը: Դա պարհանակ էր այդպես են նայում իսաւացու վրա, և նիկոլայը փաղաքուշ վերաբերմունք ցույց տվեց այդ սպային արժանապատվությամբ ու զուու:

Հենց որ նիկոլայը ներս մտավ իր հուսարական համազգեստով, զուրցը օձանելիքների ու գինու բուրմունք տարածելով, և ինքն ասավ ու լսեց մի բանի անգամ իրեն ասված խոսքերը. vaut mieux tard que jamais, նրան շրջապատեցին, բոլոր հայացքները դարձան նրան, և նա մեկեն զգաց, որ մտել է նահանգում իրեն պատշաճող և միշտ հաճելի, բայց աժմ երկար զոկված լինելուց հետո նրան բավականությունից արբեցնող, ընդհանուրի սիրեցյալի զերի մեջ: Ոչ միայն փոստակայան-ներում, իշեաններում և կալվածատիրոջ գորգանոցում կային նրա ուշադրությունից շումած սպասուհիներ, այլև ալստեղ, նահանգապետի երեկութիւն կային (ինչպես թվաց նիկոլային) անսպառ թվով զահել կանայք ու լավիկ աղջիկներ, ոսոնք անհամբեր սպասում էին միայն այն բանին, որ նիկոլայն ուշա-

դրություն դարձնի իրենց վրա։ Կանայք և աղջիկները կոկետություն էին անում նրա հետ, և ծերունիներն առաջին իսկ օրից հոգ էին տանում այն մասին, թե ինչպես անեն ամուսնացնեն և խելոքացնեն այդ պճնամոլ ստահակ-հուսարին։ Վերջինների թվում էր նահանգապետի կինն ինքը, որը Ոստովին ընդունեց, որպես մոտ ազգականի, և նրան «Nicolas» ու «Պու» էր ասում։

Կատերինա Պետրովնան, իսկապես, սկսեց վալսեր ու էքոսեզներ նվագել, և սկսեցին պարերը, որոնց մեջ նիկոլայն իր ճկունությամբ ավելի ևս գերեց նահանգային հասարակությունը։ Նա մինչև իսկ բոլորին զարմացրեց պարերի մեջ ցուցաբերած իր առանձնահատուկ, սանձարձակ շարժուձեռով։ Նիկոլայն ինքը փոքր-ինչ զարմացած էր իր այդ երեկո պարելու ձևերի վրա։ Նա երբեք այդպես չէր պարել Մոսկվայում և նույն իսկ հՀամարեր անվայել ու տասնական գործ պարի մի այդպիսի շափազանց սանձարձակ ձեր. բայց այստեղ նա պահանջ էր զգում դրանց բոլորին զարմացնել մի որևէ անսովոր բանով, մի որևէ այնպիսի բանով, որ նրանք պետք է ընդունեին մայրաքաղաքների համար սովորական, բայց տակապին իրենց՝ զավառում անձանոթ։

Ամբողջ երեկոն նիկոլայն ամենից ավելի ուշադրություն էր դարձնում երկնագույն արքերով, լիցուն և գեղատեսիլ մի խարտյաշ կնոջ վրա, որը նահանգական աստիճանավորներից մեկի կինն էր։ Շատ ուրախացած երիտասարդների այն նայիվ համոզումով, թե ուրիշների կանայք ստեղծված են իրենց համար, Ծոստովը չէր հեռանում այդ կնոչից և բարեկամարար, փոքր-ինչ դավադրաբար էր վարդում նրա ամուսնու հետ, կարծե, թե նրանք թեեն չեն խոսել, բայց զիտեն, թե որքան փառավոր կերպով կարող են միանալ նրանք, այսինքն՝ նիկոլայն այդ մարդու կնոջ հետ։ Ամուսինը, սակայն, թվում էր չէր բաժանում նրա այդ համոզումը և աշխատում էր մոռայլ լինել Ռոստովի հետ։ Բայց նիկոլայի բարեսիրտ պարզությունն այնքան անսահման էր, որ ամուսինը երբեմն ակամա ենթարկվում էր նիկոլայի զվարթ տրամադրության։ Երեկոյի վերջում, սակայն, որքան կնոջ դեմքը ավելի շառագունում էր ու ավելի կենդանանում, ամուսնու դեմքը դառնում էր ավելի տխուր ու

ավելի լուրջ, կարծես իրկուսը աշխուրժի մի բաժին ունեին, ուստի և որքան ավելանում էր այն կնոջ մեջ, նույնքան նվազում էր ամուսնու մեջ։

## V

Նիկոլայը, շմարող ժպիտը դեմքին, բաղկաթողին փոքրին թեք նստած ու գեսի խարտյաշուհին կուցած, միփոլզիական կոմպլիմենտներ էր ասում նրան։

Սրագ փոխելով հեծելակի շալվարի մեջ ձգված ոտների դիրքը, անուշահու օծանելիքների բուրմունքներ տարածելով իրենից, հիանալով թե՛ իր դամայով, թե՛ իրենով, թե՛ իր սեղմած ոտների գեղեցիկ ձեռնով, նիկոլայը խարտյաշուհուն ասում էր, թե ինքը ցանկանում է այստեղ՝ Վորոնեժում մի կին փախցնել։

— Իսկ ինչպիսի՞ կին։

— Հրաշալի, աստվածային մի կին։ Նրա աշքերը (նիկոլայը նայեց խոսակցուհուն) երկնագույն են, բերանը՝ մարշան, ճերմակությունը... (նա նայում էր տիկնոջ ուսերին), հասակը՝ Դիանայի...։

Ամուսինը մոտեցավ նրանց և մոռայլ հարցրեց կնոչը, թե ի՞նչի մասին է խոսում նա։

— Ա, նիկիտա իվանիչ, — ասավ նիկոլայը, քաղաքակարությամբ ոտի կանգնելով։

Եվ, իրը ցանկանալով, որ նիկիտա իվանիչը մասնակցի իր հանաբներին, նա սկսեց նրան էլ հայտնել մի խարտյաշ։ Հիփախցնելու իր մտադրությունը։

Մարդը ժպտաց մոայլորեն, կինն՝ ուրախ։ Բարեսիրտ նահանգապետուհին հավանություն շտվող տեսքով մոտեցավ նրանց։

— Աննա Իգնատիևնան կամենում է քեզ տեսնել, Nicolas։ ասավ նա, այնպիսի ձայնով արտասանելով Աննա Իգնատիևնա բառերը, որ Ռոստովին հսկույն հասկանալի դարձավ. որ Աննա Իգնատիևնան մի շատ կարեսր տիկին է։ Գնանք, Nicolas. Գու թույլ տվիր քեզ այսպես անվանել, չէ՞։

- 0°, *ωjn*, ma tante<sup>1</sup>: 0°ψ ή ψ:

— Աննա իգնատենա Մալվինցեան։ Նա քո մասին լսել է իր ազգականուհուց, թե ինչպես դու փրկել ես նրան... Գուշակում ես։

— Ես այնտեղ ում ասես չեմ փրկել, — ասավ Նիկոլայը:

— Նրա ազգականուհուն, իշխանադուստր Բոլիբոնսկայացին: Նա այստեղ՝ Վորոնեժումն է՝ իր մորաքրոջ հետ միասին: Օհո՞, ինչպես կարմրեցիր: Հր, առ ու գե...»

— Զեմ էլ մտածել, հերիք է, ու տանե.

— Դեղ, լավ, լավ: Օ՛, ինչ տեսակ մարդ ես:

Նահանգապետի կինը նրան տարավ մի բարձրահասակ ու շատ գեր, կապույտ տոկ դրած պառափի մոտ, որը հենց նոր ավարտել էր իր թղթախաղի պարտիան քաղաքի ամենակարևոր անձնավորությունների հետ։ Դա Սալվինցեան էր, իշխանագուուստ Մարիայի մորաքույրը, մի հարուստ անզավակ այրի, որ մշտապես ապրում էր Վորոնեժում։ Նա կանգնած, թղթախաղի հաշիվը փուկում էր, երբ Ռոստովի մոտեցավ նրան։ Նա աշքերը կկոցեց խիստ ու մեծավայելուց, նայեց Նիկոլային և շարունակեց կշտամբել իրեն տանող գեներալին։

— Ծատ ուրախ եմ, սիրելիս,— ասավ նա, ձեռք մէկնելով Ռոստովին: — Ենորհ բերեք ինձ մոտ:

Խոսելով իշխանազուստը Մարիայի և նրա հանգուցյալ Հոռ  
մասին, որին, ըստ երևույթին, Մարկինցեան չէր սիրում,  
և հարցուփորձելով, թե ի՞նչ յիտի Նիկոլայը իշխան Անդրեյի  
մասին, որը նույնպես, ըստ երևույթին, չէր վայելում նրա  
ողորմածությունը, կարեոր պառավը արձակեց Նիկոլային,  
Կրկնելով իր տունը գայու հրամերու:

Նիկոլայը խոստացավ և նորից կարմրեց, երբ հրաժեշտ էր տալիս Մալվինցևային։ Էշխանազուստը Մարիայի անունը հիշելիս՝ Ռոստովին ապրեց իր համար էլ անհասկանալի ամոթ-խածության, անգամ սարսափի ռապորտ։

Մալվինցևայից հեռանալով՝ Խոստովն ուզեց վերադառնալ պարերին, բայց փոքրամարմին նահանգապետութին իր փափլիկ պստիկ ձեռք դրեց Նիկոլայի թևին և, ասելով, թե ինքը նրա

Հետ խոսելիք ունի, տարավ նրան բազմոցարան, ուր գտնվող ներն անմիջապես դուրս եկան, որ շխանգարեն նահանգապետի կնոջը<sup>4</sup>

— Գիտես, տոն շեր, — ասավ նահասգապօտուրս, զո՞րք  
բիկ, բարի գեմքի լուրջ արտահայտությամբ, — այ բեկ համար  
իսկական զույգ, կուզե՞ն՝ նշանեմ բեզ:

— Ո՞ւմ հետ, ուստի ուստի, — հարցրեց Նիկոլայը:

— Իշխանագոտեր հետւ Կատերինա Պետրովնան ասում է,  
թե կիլին, իսկ իմ կարծիքով՝ չէ — իշխանադուստրը։ Կուզբաս  
ես Հավատացած եմ՝ մայրիկդ շնորհակալ կինին իսկապես,  
ինչ աղջիկ է, հիանալի՞։ Եվ բնավ էլ այնքան տգեղ լի՞։

— Բոլորպվին ոչ, — կարծես նեղանալով ասավ Սրբոլայք: —  
Ես, ու տանտե, ինչպես վայել է զինվորին, ոչ մի տեղ անկոչ  
հյուր չեմ լինում և ոչ մի բանից չեմ հրաժարվում, — ասավ  
Ռուստովը, նախքան կարողացավ մտածել, թե ի՞նչ է ասում:

= Հիշիր ուրեմն. սա կատակ վի:

— Ի՞ն, կատակ:

— Այո, այո,— կարծես ինքն իբ հետ խոսելով՝ աւազ սահանգապետի կինը: — Այ ինչ, տոն cher, entre autre. Vous êtes trop assidu auprès de l'autre, la blonde<sup>1</sup>. Ամուսինն արգեն խոջանալի է, իսկապես...

— Ախ, ոչ, մենք նրա հետ բարեկամներ ենք, — պարզա-  
սըրտությամբ ասավ Նիկոլայը. Նրա մտքովն էլ չէր անցնում,  
թե իր համար ուրախ այդ ժամանցը կարող է որևէ մեկի համար  
տիսուր լինել:

«Ի՞նչ հիմարություն ասի, սակայն, նահանգապետի կողը, — հանկարծ ընթրիքին հիշեց Նիկոլայը: — Նա իսկապես նշանել սկսի, իսկ Սոնյա՞ն...» — Եվ, հանանգապետի կողը. Հրաժեշտ տալով, երբ նա ժպտալով մի անգամ էլ ասավ նրան. — Դե, հիշիր ուրեմն, — Նիկոլայը նրան մի կողմ տարավ:

— Բայց ա'յ ինչ, ճշմարիտն ասեմ ձեզ, ուստի...

— Ի՞նչ, ի՞նչ, բարեկամս! Գնանք, այստեղ նստենք!

Նիկոլայը հանկարծ ցանկություն և անհրաժեշտություն գցաց պատմել իր սրտի բոլոր խորհուրդները (այնպիսին երես

Սարագույր կամ Հորացույր:

որ չես պատմի անգամ մորդ, քրոջը, մտերմիդ) այդ գրեթե օտար կնոջը: Հետո նիկոլայը, երբ հիշեց այդ անառիթ, ոչ մի բանով շրագատրվող սրտարացության պոռթկումը, սրտարացություն, որը, սակայն, նրա համար ունեցավ շատ կարևոր հետեանքներ, թվում էր (ինչպես այդ միշտ էլ թվում է մարդկանց), թե այնպես, հիմար ցանկություն ունեցավ. մինչդեռ սրտարացության այդ պոռթկումը, մյուս մանր դեպքերի հետ միասին, նրա համար և նրա ողջ ընտանիքի համար ունեցավ մեծ հետեանքներ:

— Այ ինչ, ու tante. Մատու վաղուց ցանկանում է ինձ ամուսնացնել մի հարուստ աղջկա հետ. բայց ինձ համար այդ միտքն իսկ զգվելի է՝ ամուսնանալ փողի համար:

— Օ՛, այո, հասկանում եմ, — ասավ նահանգապատի կինը:

— Բայց իշխանադուստր Բալկոնսկայան՝ դա այլ բան է. նախ, ճիշտն ասեմ ձեզ, նա ինձ շատ է դուր գալիս. նա իմ սրտովն է. և ապա, այն բանից հետո, երբ ես նրան հանդիպեցի այնպիսի դրության մեջ, այնպես օտարութի, հաճախ մտածում եմ՝ սա ճակատագիր է: Մանավանդ մտածեցեք, ուստան վաղուց է այդ մասին մտածել, բայց առաջներում ես առիթ շեմ ունեցել նրան հանդիպելու, մի տեսակ այդպես է պատահել. շենք հանդիպել: Եվ այն ժամանակ, երբ բույրս՝ նատաշան, նրա եղբոր հարսնացուն էր, ես չէի կարող մտածել նրա հետ ամուսնանալու մասին: Ու պետք է որ նրան հանդիպեի հենց այն ժամանակ, երբ նատաշայի հարսնանիքը խանգարվել էր, և ահա բոլորը... Այսպես է: Ես այս ոչ ոքի շեմ ասել և շեմ ասելու: Այլ միայն ձեզ:

Նահանգապատի կինը շնորհակալությամբ սեղմեց նրա արմունկը:

— Դուք ճանաշո՞ւմ եք Սոֆիին, իմ քուղինին: Ես նրան սիրում եմ և խոստացել եմ ամուսնանալ հետը և կամուսնանամ... Ուստի և տեսնում եք, որ այդ մասին խոսք լինել ոի կուռող, — անհարթ ու կարմրելով ասավ նիկոլայը:

— Խոր շեր, ուստի շեր, դու այդ ինչպե՞ս ես դատում: Հէ որ Սոֆին ոշինչ շունի, իսկ դու ինքդ էիր ասում, թե հայրիկի դգուհերը շատ վաս են: Իսկ մայրի՞կդ: Այդ կսպանի նրան՝ մէկ: Հետո Սոֆին. եթե նա սրտով աղջկի է, — ի՞նչ կյանք է լինելու

նրա համար: Մայրդ հուսահատության մեջ, գործերը քայրաւուշ ված... Չէ, ուստի շեր, դու և Սոֆին պետք է հասկանաք աշուի:

Նիկոլայը լուս էր: Նրան հաճելի էր լսել այդ հետեւությունները:

— Այնուամենայնիվ, ու tante, այդ չի կարող լինել, — հոգոց քաշելով ասավ նա, փոքրին լուելով: — Բայց դեռ իշխանադուստրն ինձ կառնի՝ արդյոք, և այժմ նա նորից սուզի մեց է: Սի՞թե կարելի է մտածել այդ մասին:

— Բայց մի՞թե դու կարծում ես, թե անմիջապես եմ ամուսնացնում քեզ: Ու յ ա տանիեր՝, — ասավ նահանգապատի կինը:

— Ի՞նչ լավ խնամախոս եք դուք, ու tante, — ասավ Nicolas-ը, համբուրելով նրա փոքրիկ փափլիկ ձեռը:

## VI

Գալով Մոսկվա, Ռոստովին հանդիպելուց հետո, իշխանադուստր Մարիան այնտեղ գտավ եղբոր որդուն դաստիարակի հետ և մի նամակ իշխան Անդրեյից, որը հրահանգում էր նրանց մեկնել Վորոնեժ՝ մորաքուլը Մալվինցիայի մոտ: Տեղափոխվելու հոգսերը, եղբոր մասին ունեցած անհանգստությունը, նոր տան մեջ սարքավորվելը, նոր դեմքերը, եղբոր որդու դաստիարակությունը, — այդ ամենը իշխանադուստր Մարիայի սրտում խլացրին այն կարծես գայթակղության զգացումը, որը տանցում էր նրան հոր հիվանդության ժամանակ և ապա նրա մահից հետո և մանավանդ Ռոստովին հանդիպելուց հետո: Նա տիսուր էր: Հոր կորսուրան տպավորությունը նրա սրտում միանալով Ռուսաստանի կործանման հետ, այժմ, մի ամիս հետո, որ անցել էր գրանից հետո հանգիստ կյանքի պայմաններում, նա ավելի ու ավելի ուժգնապես էր զգում: Նա տագնապի մէջ էր. մտածելով այն վտանգների մասին, որոնց ենթարկվում էր եղբայրը, — նրա միակ հարազատ մարդը, որ մնացել էր, — նա տանջվում էր անդադար: Մտահոգված էր եղբոր որդու դաստիարակությամբ, որի համար իրեն զգում էր միշտ անրնդունակ: բայց սրտի խորքում համաձայնություն կար ինքն իր

<sup>1</sup> Ամեն բան իր ձևն ունի:

Հետ, համաձայնություն, որ բխում էր այն բանի գիտակցությունից, թե ինքն իր մեջ ճնշել է կարծես գլուխ բարձրացնող, Ռոստովի երևումի հետ կապված, անձնական երազանքներն ու հույսերը:

Երբ իր երեկույթի հետեւյալ օրը նահանգապետի կինը եկավ Մալվինցիայի մոտ և նրա հետ խռովեց իր ծրագրերի մասին (վերապահություն անելով, որ թեև ներկա հանգամանքներում չի էլ կարելի մտածել ձեական նշանադրության մասին, այնուամենայնիվ երիտասարդներին կարելի է հանդիպեցնել, հնարավորություն տալ իրար ճանալելու), և երբ, մորաքոզ հավանությունն առնելով, նահանգապետի կինը իշխանադուսար Մարիայի ներկայությամբ խռոք բացեց Ռոստովի մասին, գովելով նրան ու պատմելով, թե ինչպես էր նա կարմրել իշխանագատեր անունը տալիս, իշխանագուստոր Մարիան ոչ թե ուրախ, այլ հիվանդաղին մի զգացում ունեցավ, նրա ներքին համաձայնությունն այլևս չկար, և նորից գլուխ բարձրացրին ցանկությունները, կասկածները, կշտամբանքներն ու հուկաները:

Այն երկու օրը, որ անցել էին այդ լուրն ստանալուց հետո և մինչև Ռոստովի այցելությունը՝ իշխանադաւար Մարիան անդադար մտածում էր այն մասին, թե ինչպես պետք է պահի իրեն Ռոստովի նկատմամբ: Մերթ որոշում էր, թե երբ նա զա մորաքրոջ մոտ՝ ինքը չի զնա հյուրասրահ, թե իր համար, խորին սգի մեջ, անվայել է հյուրեր ընդունել: Մերթ մտածում էր, թե այդ կոպիտ բան կիխներ այն բանից հետո, ինչ ևս՝ Ռոստովն արել էր իր համար. Մերթ մտքով անցնում էր, թե իր մորաքրույն ու նահանգապետի կինն ինչ-որ նպատակներ ունեն իր և Ռոստովի նկատմամբ (Նրանց նայվածքներն ու խոսքերը երբեմն, թվում էր, հաստատում էին այդ ենթադրությունը). Մերթ նա ասում էր ինքն իրեն, թե միայն ինքն իր արատավորությամբ կարող էր մտածել այդ նրանց վերաբերմամբ. նրանք չեին կարող չհիշել, որ այն վիճակում, երբ նա տակալին սգո նշանները չի վերցրել, մի ալգիսի նշանադրություն վիրափորական կիխներ թե՛ իր համար, թե՛ հոր հիշատակի հանդեպ: Ենթադրելով թե ինքը գուրս կզա նրան տեսնելու՝ իշխանադուառը Մարիան խորհում էր այն խոսքերը, որ նա կասեր իրեն և հնքը նրան. և այդ բառերը մերթ թվում էին անիրավացի-  
30

սառը, մերթ շափազանց մեծ նշանակություն ունիցողի հսկ  
ամենից ավելի շատ վախենում էր տեսակցության միջոցին  
շփոթվել, մի բան, որն զգում էր, պետք է տիրի իրեն և մատնի  
իրեն հենց որ տեսնի նրան:

Բայց երբ կիրակի օրը պատրագից հետո լակերը ճայտ-նեց հյուրասահում, թէ եկել է կոմս Ռոստովը, իշխանադրուտ-րը շփոթություն շարտահայտեց. միայն մի թեթև կարմրու-թյուն երևաց նրա այտերին, և աչքերը փայլեցին նոր, շողար-ձակ լուսով:

— Գուք նրան տեսե՞լ եք, մորաքույր, — ասավ իշխանադր Մարիան Հանգիստ ձայնով, ինքն էլ շիմանալով. թե ինչպես կարող էր մնալ արտաքուստ այդպիս հանգիստ ու բնական:

Երբ Ռոստովը սենյակ մտավ, իշխանադրւարը գլուխն  
իշեցրեց մի վայրկյան, կարծես հյուրին ժամանակ տալով, որ  
բարեկի մորաքրոջը, և ապա, հենց այն ժամանակ, երբ Նիկո-  
լայը դարձավ նրա կողմը, իշխանադրւարը գլուխը բարձրաց-  
րեց և փայլում աշբեռով դիմավորեց նրա հայացքը: Արժանա-  
պատվությամբ ու նազանքով լի շարժումով վեր կացավ նա-  
ուրախ ժպիտով, մեկնեց իր բարակ, քնքուշ ձեռը և խօսեց մի  
ձայնով, որի մեջ առաջին անգամ հնչեցին նոր, կանացի, կըրծ-  
քային հնչուններ: Ա-Ա! Բուրիենը, որ հյուրասրահումն էր,  
տարակուած զարմանքով նայեց իշխանադրւարը Մարիային:  
Ամենահմուտ կոկետուհին՝ նա ինքը չէր կարող ավելի լավ  
մաներել հանդիպելով այն մարդուն, որին պետք էր գուր գալ:

«Կամ սև հազուստն է նրա դեմքը լավացնում, կամ թե իսկապես նա այնպես լավացել է, և ես չեմ նկատել: Եվ գլխավորը — այդ տակտն ու նազանքը», — մտածում էր ու-լլե Բուրիենը:

Եթե իշխանագուստը Մարիան ի վիճակի լիներ մտածել այդ բոպեին, նա ինքը ու-ի Բուրիենից ավելի շատ կզարմանար իր մեջ կատարված փոփոխության վրա: Այն բոպեից, երբ նա տեսավ այդ գուրեղան, սիրելի դեմքը, կենսական մի ինչ-որ նոր ուժ ամբող նրան և հարկադրեց, հակառակ նրա կամքի, խոսել ու գործել: Նրա գեմքն այն պահից երբ ներս մտավ Առատովէ, հասկարծ փօխակերպվեց: Ինչպես հանկարծ անսպա-

սելի ապշեցնող գեղեցիկությամբ նախշագարդ լավտերի պատերին երևում է այն բարդ, հմուտ գեղարվեստական աշխատանքը (որ առաջ թվացել էր կոպիտ, խավար ու անմիտ), երբ ներսը լույս է վառվում. այդպես հանկարծ կերպարանափոխվեց իշխանադրւստր Մարիայի դեմքը: Առաջին անգամ ամբողջ այն մաքուր հոգեկան, ներքին աշխատանքը, որով նա ապրում էր մինչ այժմ, երեաց և արտաքուստ: Նրա ամբողջ ներքին, ինքն իրենից դժգոհ աշխատանքը, նրա տանջանքները, ձգտումն առ բարին, հնազանդությունը, սերը, անձնազոհությունը—այդ ամենը փայլում էր այժմ նրա ճառագայթող աշքերում, նուրդ ժափտի մեջ, նրա բնուուշ դեմքի յուրաքանչյուր գծում:

Ռոստովն այդ ամենը տեսավ նույնքան պարզ, կարծես նա զիտեր նրա ամբողջ կյանքը: Նա զգաց, որ իր առջև կանգնած էակը բոլորովին այլ էր, ավելի լավ, բան բոլոր նրանք, ում հանդիպել էր մինչ այժմ և, զլխավորը, ավելի լավ, բան ինքը:

Նրանց խոսակցությունը շատ հասարակ էր և աննշան: Նրանք խոսեղին պատերազմի մասին, ակամա, ինչպես և ամեն բան, շափազանցնելով իրենց վիշտն այդ դեպքի նկատմամբ. խոսեցին վերջին հանդիպման մասին, և նիկոլայն աշխատեց զրուցը զարձնել ուրիշ նյութի. խոսեցին նահանգապետի բարեսիրու կնոջ մասին, նիկոլայի և իշխանադրւստր Մարիայի հարազատների մասին:

Իշխանադրւստր Մարիան շխոսեց եղրոր մասին, զրուցը փոխելով ուրիշ նյութի, հենց որ մորաքույրը խոսք բացեց Անդրեյի մասին: Երևում էր, որ Ռուսաստանի դժբախտությունների մասին նա կարող էր խոսել ձևացնելով, բայց եղրայրը շափազանց մոտ էր իր սրտին, և նա չէր ուզում ու չէր կարող թեթեակի խոսել նրա մասին: Նիկոլայն այդ նկատեց, ինչպես նա առասարակ իրեն ոչ հատուկ թափանցող դիտողականությամբ նկատում էր իշխանադրւստր Մարիայի բնափորության բոլոր երանգները, որոնք բոլորը միայն հաստատում էին նրա համազումը, թե նա մի բոլորովին առանձին ու անսովոր էակ է: Նիկոլայը ճիշտ նույնպես, ինչպես իշխանադրւստր Մարիան, կարմրում ու շփոթվում էր, երբ նրա մոտ խոսում էին իշխանադրւստր մասին և անգամ, երբ նա մոռածում էր նուա մասին բայց նրա ներկայությամբ իրեն զգում էր բոլորովին ազատ և

բոլորովին այն չէր ասում, ինչ նախապատրաստում էր, այլ այն, ինչ վարդկենաբար և միշտ ի դեպ զլուխն էր գալիս:

Նիկոլայի կարճատև այցելության միջոցին, ինչպես և միշտ, ուր կան երեխաներ, լուսթյան բոպեին, նիկոլայը դարձավ իշխան Անդրեյի փոքրիկ որդուն, փայփայեց նրան ու հարցրեց, թե նա ցանկանո՞ւմ է արդյոք դառնալ հուսար: Նա երեխային բարձրացրեց ձեռների վրա, սկսեց ուրախ-ուրախ դարձնել նրան և նայեց իշխանադրւստր Մարիային: Իշխանադրւստեր նել նրան և նայեց իշխանադրւստր Մարիային: Իշխանադրւստեր խանդաղատական, երջանիկ ու երկշուր հայացքը հետևում էր իր սիրած երեխային սիրած մարդու ձեռների վրա: Նիկոլայը նկատեց և այդ հայացքը ու, կարծես հասկանալով նրա նշանակությունը, կարմրեց բավականությունից, և բարեսիրությամբ սկսեց համբուրել փոքրիկ տղային:

Իշխանադրւստր Մարիան տնից գուրս չէր գալիս սգի պատճառով, իսկ նիկոլայը պատշաճ չէր համարում լինել նրանց մոտ. բայց նահանգապետի կինն այնուամենայնիվ շարունակում էր հարսնախոսության իր գործը և, հայտնելով նիկոլային այն նպաստավորը, որ ասել էր նրա մասին իշխանադրւստր Մարիան, և փոխադրձը, պնդում էր, որ Ռոստովը բացատրվի իշխանադրւստր Մարիայի հետ: Այդ բացատրության նպատակով նա երիտասարդների համար տեսակցություն սարքեց եպիսկոպոսի մոտ՝ պատարագից առաջ:

Թեև Ռոստովը նահանգապետի կնոշն ասել էր, թե ինքը ոչ մի բացատրություն չի ունենալու իշխանադրւստր Մարիայի հետ, բայց խոստացավ զալ:

Ինչպես Տիգիգիտում Ռոստովին իրեն թուլ շտվեց կասկածել, թե լավ է արդյոք այն, ինչ բոլորի կողմից ընդունված է լավ, ճիշտ այդպես էլ այժմ, կարճատև, բայց անկեղծ պայքարից հետո — իր կյանքը ըստ բանականության կարգավորել, թե հնազանդորեն հանգամանքներին ենթարկվել — նա ընտրեց վերջինը և անձնատուր եղավ այն իշխանության, որը նրան (այդ նա զգում էր) անհաղթահարելիորեն մղում էր ուր-որ: Նս գիտեր, որ, Սոնյային խոսք տալով, իր զգացումներն արտահայտել իշխանադրւստր Մարիային, կլիներ այն, ինչ ինքը կոչում էր ստորություն: Եվ նա գիտեր, որ երբեք ստորություն չի անի: Բայց նա գիտեր նույնպես (և ոչ միայն գիտեր, այլ

զգում էր սրտի խորքում), թե անձնատուր լինելով իրեն ղեկավարող հանգամանքների և մարդկանց իշխանությանը, նառ ոչ միայն ոչ մի վատ բան չի անում, այլ անում է մի ինչ-որ շատ, շատ կարևոր բան, մի այնպիսի կարևոր բան, որ դեռ երբեք չի արել կյանքում:

Իշխանադուստր Մարիայի հետ տեսակցելուց հետո նրա ապրելակերպը թեև արտաքուստ մնաց նույնը, բայց նախկին բոլոր բավականությունները կորցրին նրա համար իրենց հըրապույրը, և նա հաճախ մտածում էր իշխանադուստր Մարիայի մասին. բայց երբեք նրա մասին չէր մտածում այնպես, ինչպես առանց բացառության մտածում էր բարձր շրջաններում իրեն հանդիպած բոլոր օրիորդների մասին, ոչ էլ այնպես, ինչպես երկար և մի ժամանակ հիացմունքով մտածում էր Սոնյայի մասին: Բոլոր օրիորդների մասին, ինչպես և գրեթե ամեն մի ազնիվ երիտասարդ, նա մտածում էր, որպես ապագա կնոջ մասին, իր երկակայության մեջ շափում-ձևում էր նրանց վրա ամուսնական կյանքի բոլոր պայմանները՝ ճերմակ կապուտ, կինը հեշտաենի մոտ, կնոջ կառեթը, երեխան եր, տառապ-ն և քար-ն, նրանց վերաբերմունքը դեպի իր կինը, և այլն, և այլն. և ապագայի այս պատկերացումները նրան բավականություն էին պատճառում. բայց երբ նա մտածում էր իշխանադուստր Մարիայի մասին, որի հետ նշանում էին իրեն, երբեք չէր կարողանում որևէ բան պատկերացնել ապագա ամուսնական կյանքից: Իսկ եթե փորձում էր՝ ստացվում էր անհեթեթ ու կեղծ մի բան: Եվ նա սարսափում էր միայն:

## VII

Բորոդինոյի ճակատամարտի, սպանված ու վիրավոր մեր կորուստների սարսափելի լուրը և Մոսկվան կորցնելու էլ ավելի սարսափելի լուրը Վորոնեժում ստացվեց սեպտեմբերի կեսերին: Իշխանադուստր Մարիան, լրագիրներից իմանալով եղբոր վիրավորվելը և նրա մասին որոշակի ոչ մի լուր շունենալով՝ պատրաստվում էր գնալ եղբորը փնտրելու, ինչպես լսել էր նիկոլայը (նա ինքը իշխանադստեր չէր տեսել):

Բորոդինոյի ճակատամարտի և Մոսկվան թողնելու լուրն

առնելով՝ Ռոստովը ոչ թե հուսահատություն, կատաղություն կամ վրիժառություն և նման զգացումներ ունեցավ, այլ հանկարծ ամեն ինչ Վորոնեժում գարձավ ձանձրալի, վրդովին ամեն բան մի տեսակ ամոթալի ու անհարմար: Բոլոր զրոյցները, ինչ լսում էր, նրան թվում էին կեղծ. նա շգիտեր ինչպես դատի այդ բոլորի մասին, և գգում էր, որ այդ ամենը նրա համար պարզ կդառնա նորից գնդում: Նա շտապում էր վերջացնել ձիերի գնումը և հաճախ անարդար տաքանում էր իր սպասավորի և վերակայի վրա:

Դոստովի մեկնելուց մի քանի օր առաջ մայր տաճարում գոհարանական մաղթանք էր նշանակված ոուս զորքերի տարած հաղթության առթիվ, և նիկոլայը գնաց պատարագ: Նա կանչնել էր նահանգապետից փոքր-ինչ ետ և իր պաշտոնի ծանրաբարոյությամբ, մտածելով ամենատարբեր նյութերի շուրջը, մնաց ամբողջ ժամասացությանը: Երբ մաղթանքը վերջացավ, նահանգապետի կինը նրան իր մոտ կանչեց.

— Դու տեսա՞ր իշխանադստեր,— ասավ նա, զիմով ցուց տալով սկեր հագած մի կնոջ, որ կանգնել էր դասի հետև:

Նիկոլայն անմիջապես ճանաչեց իշխանադուստր Մարիային ոչ միայն նրա կիսադեմից, որ երևում էր զիմարկի տակից, որքան զգուշության, վախի ու խղճահարության այն զգացմունքից, որն իսկույն համակեց իրեն: Իշխանադուստր Մարիան, ակներն, իր մաքերի մեջ խորասուզված, վերցին խաչակնքումներն էր կատարում եկեղեցուց գուրս գալուց առաջ:

Նիկոլայը զարմացած նայում էր նրա դեմքին: Դա նույն դեմքն էր, ինչ տեսել էր առաջ, նույնն էր նրա ներքին նուրբ հոգեստ աշխատանքի ընդհանուր արտահայտությունը. բայց այժմ գեմքը բոլորովին այլ լույսով էր լուսավորված: Վշտի, աղերսի և հույսի հուզիչ արտահայտություն ուներ նա: Ինչպես առաջ էլ պատահել էր նիկոլային իշխանադստեր ներկայությամբ, նա, չսպասելով նահանգապետի կնոջ խորհըրդին նրան մոտենալու, իրեն էլ շնարցնելով՝ լավ կլինի՝ արդյոք, հարմա՞ր է թե ոչ նրան մոտենալ այստեղ եկեղեցում, մոտեցավ իշխանադստեր և ասավ, թե ինքը լսել է նրա վշտի մասին և ամբողջ սրտով ցավակցում է նրան: Նրա ձայնը հազիվ լրսած հանկարծ պայծառ մի լույս վառվեց իշխանադստեր գեմ-

քին, լուսավորելով միաժամանակ թե նրա վիշտը և թե ուրախությունը:

— Ես մի բան եմ ուզում ասել ձեզ, իշխանադուստր,—ասավ Ռոստովը,— այդ այն է, որ եթե իշխան Անդրեյ Նիկոլաևից ողջ պիտի էր, ուստի որպես գնդի հրամանատարի, այդ անմիջապես կհայտարարվեր լրագիրներում:

Իշխանադուստրը նայում էր նրան, չհասկանալով նրա խոսքերը, բայց ուրախանալով նրա դեմքին երևացող վշտակցության արտահայտությունից:

— Եվ ես որքան օրինակներ գիտեմ, որ ոմբակտորի (լրագիրներում գրված էր նոնակ) վերքը կա'մ մահացու է լինում անմիջապես կամ, ընդհակառակը, շատ թեթև, — ասում էր Նիկոլայը: — Պետք է լավի հույս ունենալ, և ես հավատացած եմ...

Իշխանադուստր Մարիան ընդհատեց նրան:

— Ո՞, դա այնպես սար... — սկսեց նա և, հուգումից խոսքը շվերջացնելով, նազանի շարժումով (ինչպես և ամեն բան, ինչ անում էր նա Ռոստովի ներկայությամբ) գլուխն իշեցնելով ու շնորհակալությամբ նրան նայելով, գնաց մորաքրոջ հետեւից:

Այդ օրը Նիկոլայը ոչ մի տեղ հյուր շփնաց և տանը մնաց նրա համար, որպեսզի մի բանի հաշիվներ վերջացնի ծի վաճառողների հետ: Իսկ երբ գործն ավարտեց՝ արդեն ուշ էր որևէ տեղ գնալու համար, բայց և վաղ էր, որպեսզի քներ, և Նիկոլայը երկար ժամանակ մենակ ետ ու առաջ էր բայլում սենյակում, կշուղատելով իր կյանքը, որ նրան հազվադեպ էր պատահում:

Իշխանադուստր Մարիան հաճելի տպավորություն էր արել նրա վրա Սմոլենսկի մոտ: Այն, որ ինքն իշխանադուստր այն ժամանակ հանդիպել էր այնպիսի առանձնահատուկ պայմաններում, և այն, որ մի ժամանակ մայրը մատնացուց էր անում հենց իշխանադուստր վրա՝ որպես հարուստ գույզի, արին ա'յն, որ նա առանձին ուշադրություն դարձրեց իշխանադուստր վրա: Վորոնեժում իր ացելության միջոցին այդ տպավորությունը ոչ միայն հաճելի էր, այլև ուժեղ: Նիկոլայն ապշած էր այն առանձնահատուկ, բարոյական գեղեցկությամբ, որ այս անգամ նրա վրա Սմոլենսկի մասին՝ իրենց մեջ ինչ-որ ուրախությունը, իսկազմակերպությունը, իսկազմակերպությունը կամ առանձնահատուկ պատճեն էր:

Մտքովը չէր էլ անցնում ափսոսալ, թե Վորոնեժից մեկնելով, նա զրկվում է իշխանադուստր տեսնելու առիթից: Բայց ներկա հանդիպումը իշխանադուստր Մարիայի հետ եկեղեցում (Նիկոլայն զգում էր այդ) ավելի խորը տպավորվեց սրտում, քան կարող էր նախատեսել, և ավելի խորունկ, քան կցանկար իր հանգստության համար: Այդ գունատ, նուրբ, վշտոտ դեմքը, այդ ճառագայթող հայացքը, այդ հանդարտ, նազանի շարժումները և, զլխավորը, այդ խորունկ ու մեղմ վիշտը, որ արտահայտված էր նրա բոլոր դիմագծերում, անհանգստացնում էին նըրան և պահանջում նրա վշտակցությունը: Տղամարդկանց մեջ Ռոստովում տեսնել բարձր հոգեկան կյանքի արտահայտություն (դրա համար էլ նա չէր սիրում իշխան Անդրեյին), նա այդ արհամարհանքով կոչում էր փիլիսոփայություն, ցնորամտություն: Բայց իշխանադուստր Մարիայի մեջ, հենց այդ վշտի մեջ, որն արտահայտում էր Նիկոլայի համար օտար այդ հոգերո աշխարհի ամբողջ խորությունը, նա անդիմադրելի գրավչություն զգաց:

«Հրաշալի աղջիկ է երեխ: Այ իսկական հրեշտակ»: — խոսւմ էր նա ինքն իրեն: «Ինչո՞ւ ես ազատ չեմ, ինչո՞ւ շտապեցի՝ խոսք տվի Սոնյային»: — Եվ ակամա երկուսի համեմատությունը ներկայացն նրան, մեկն աղքատ էր, մյուսը հարուստ այն հոգեկան շնորհներով, որ Նիկոլայը լուներ և որոնք այդ պատճառով նա այնպես բարձր էր գնահատում: Նա փորձեց պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե ինքն ազատ լիներ: Ի՞նչ ձևով ինքն առաջարկություն կաներ նրան, և նա կդառնա՞ր իր կինը: Ոչ, նա չէր կարող այդ պատկերացնել: Նա սարսափ գրաց, և ոչ մի պարզ պատկեր լներկայացավ նրան: Նա վաղուց արդեն Սոնյայի հետ կազմել էր ապագայի պատկերը, և այդ ամենը հասարակ էր ու պարզ, հենց այն պատճառով, որ այդ բոլոր մտացածին էր, ու նա գիտեր ամենը, ինչ կար Սոնյայի մեջ: Բայց դժվար էր ապագա կյանքը պատկերացնել իշխանադուստր Մարիայի հետ, որովհետև ինքը նրան չէր հասկանում, այլ միայն սիրում էր:

Իր երազանքները Սոնյայի մասին՝ իրենց մեջ ինչ-որ ուրախությունը, իսկազմակերպությունը, բան ունեին: Բայց մտածել իշխանա-

դուստր Մարիայի մասին միշտ դժվար էր և փոքր-ին, սարսափելի:

«Ի՞նչպես էր նա աղոթում, — հիշեց Նիկոլայը: — Երկում էր, որ սիրտն ու հոգին զրել էր աղոթքի մեջ: Այո, դա այն աղոթքն է, որ շարժում է սարերը, և ես համոզված եմ, որ նրա աղոթքը կկատարվի: Ինչո՞ւ ես չեմ աղոթում այն բանի մասին, ինչ հարկավոր է ինձ, — հիշեց նա: — Ի՞նչ է հարկավոր ինձ: Ազատություն, կտրել իմ կապը Սոնյայի հետ. նահանգապետի կինը ճիշտ էր ասում, — մտաքերեց Նիկոլայը նրա խոսքերը, — դժբախտությունից բացի ոչինչ չի լինելու, եթե ամուսնանամ նրա հետ: Խճճված բան է, վա՛յ տառապ-ին... գործերը, խճճվածություն, սարսափելի խճճվածություն: Ասենք ես նրան չեմ էլ սիրում: Այո, այնպես չեմ սիրում, ինչպես պետք է: Աստված իմ. ազատի ինձ այս սարսափելի, անել վիճակից. — սկսեց նա աղոթել հանկարծ: — Այո, աղոթքը սար կշարժի, բայց պետք է հավատալ և այնպես շաղոթել, ինչպես մենք երեխա ժամանակ աղոթում էինք նատաշայի հետ, որ ձյունը շաքար դառնա, ու դուրս էինք վազում բակը փորձելու՝ ձյունը շաքար է դառնում արդյոք: Ոչ, բայց ես հիմա զատարկ բաների մասին չեմ աղոթում, ասավ նա ծխամորճն անկյունը գնելով, և ձեռները խաշակնքելով, կանգնեց սրբապատկերի առաջ: Եվ, իշխանագուստը Մարիայի մասին ունեցած հիշողությամբ խանդաղատված, նա սկսեց աղոթել այնպես, ինչպես վաղուց չէր աղոթել: Արցունքներ կային նրա աշքերում ու կոկորդում, երբ ներս մտավ Լավրուշկան՝ ինչ-որ թղթեր ձեռին:

— Հիմա՞ր, ինչ ես խցկվում, երբ քեզ շեն կանչում, — ասավ Նիկոլայը, արագորեն դիրքը փոխելով:

— Նահանգապետից է, — քնար ձայնով ասավ Լավրուշկան, — սուրբանդակ է եկեղել, նամակ է բերել ձեզ:

— Դե, լավ, շնորհակալ եմ, գնա՞:

Նիկոլայն առավ նրանից երկու նամակ: Մեկը մորից էր, մյուսը՝ Սոնյայից: Նա դրանք ճանաչեց ձեռագրերից և նախքաց Սոնյայի նամակը: Հազիվ կարդաց մի երկու տող, նրա դեմքը գունատվեց, ու աշքերը վախեցած և ուրախ շովեցին:

— Ոչ, այդ չի կարող պատահել, — ասավ նա բարձրաձայն: Զկարողանալով տեղում նստել՝ նա նամակը ձեռին, կարդա-

լով սկսեց երթևեկել սենյակում: Նա աշքի անցրեց նամակը, հետո կարդաց մեկ, երկու անգամ, և, ուսերը բարձրացնելով ու ձեռները տարածելով, կանգ առավ սենյակի մեջտեղը՝ բերանը բաց ու աշքերն անշարժ: Այս, ինչի մասին հենց նոր աղոթում էր հավատացած, թե աստված կկատարի իր աղոթքը, կատարված էր բայց Նիկոլայը դրանից այնպես էր զարմացել, կարծես մի ինչ-որ անսովոր բան էր դա և կարծես հենց այն, որ այդ կատարվեց այդպես արագ, ապացուցում էր, որ դա չէր բխում աստծուց, որին խնդրել էր, այլ սովորական պատահականությունից:

Այն անլուծելի թվացող հանգույցը, որը կաշկանդում էր Ծոստովով ազատությունը, լուծվեց Սոնյայի այդ անսպասելի (ինչպես Նիկոլային էր թվում), անառիթ նամակով: Սոնյան գրում էր, թե վերջին դժբախտ հանգամանքները, Ծոստովների գրեթե ամբողջ գույքի կորուստը Մոսկվայում, և կոմսուհու շատ անգամ արտահայտած ցանկությունը, որ Նիկոլայն ամուսնանա իշխանագուստը Բալկոնսկայայի հետ, և նրա՝ Նիկոլայի լուսությունը, և վերջին ժամանակների սառնությունը, — այս ամենը հարկադրեց իրեն հրաժարվել նրա խոստումից և լիակատար ազատություն տալ նրան:

«Ինձ համար շատ ծանր էր մտածել, որ ես կարող եմ վշտի և պառակտման պատճառ զառնալ մի ընտանիքի մեջ, որը բարերարել է ինձ, — գրում էր նա, — և իմ սիրո նպատակներից մեկն է երջանկությունը նրանց, ում սիրում եմ. ուստի և աղացում եմ ձեզ, Nicolas, համարեցեք ձեզ ազատ և իմացեք, ինչ էլ լինի, ոչ ոք ավելի ուժգին չի կարող սիրել ձեզ, քան ձեր Սոնյան»:

Երկու նամակն էլ ուղարկված էին Տրոիցից: Մյուս նամակը գրել էր կոմսուհին: Այդ նամակում նկարագրվում էին վերջին օրերը Մոսկվայում, իրենց հեռանալը, հրդեհը և ամբողջ կարողության կորուստը: Այդ նամակում, ի միջի այլոց, կոմսուհին գրում էր, թե իշխան Անդրեյը վիրավորների թվում գնում էր իրենց հետ միասին: Նրա դրությունը շատ վտանգավոր էր, բայց հիմա բժիշկն ասում է, թե մեծ հույսեր կան: Սոնյան ու նախաշան, ինչպես հիմանդապահուհներ, խնամում են նրան:

Այս նամակը ձեռին մյուս օրը Նիկոլայը կառք նստեց, գնաց

իշխանադուստր Մարիալի մոտ։ Թե Նիկոլայը, թե իշխանադուստր Մարիան ոչ մի խոսք շասին այն մասին, թե ինչ կարող էին նշանակել «Նատաշա»ն խնամում է նրան» բառերը. բայց, այդ նամակի շնորհիվ, Նիկոլայը հանկարծ մոտեցավ իշխանադուստր՝ գրեթե հարազատության աստիճանի։

Հետևյալ օրը Ռոստովը իշխանադուստր Մարիալին ճանապարհեց Յարոսլավլ և մի քանի օր հետո ինքը մեկնեց գունդ։

### VIII

Սոնյայի նամակը Նիկոլային, սրա աղոթքի իրականացումը, գրված էր Տրոփիցից։ Ահավասիկ այդ նամակը գրելու պատճառը Նիկոլային հարուստ հարսնացուի հետ ամուսնացներու միտքը հետզհետե ավելի էր զբաղեցնում պառավ կոմսուհուն։ Նա զիտեր, որ այդ բանի գլխավոր խոշննդոտը Սոնյան էր։ Եվ Սոնյայի կյանքը վերջերս, մանավանդ Նիկոլայի նամակից հետո, որ նկարագրում էր իր հանդիպումն իշխանադուստր Մարիալի հետ Բոզուշարովովում, առավել ևս ծանր էր զարձել կոմսուհու տանը։ Կոմսուհին բաց չէր թողնում և ոչ մի առիթ Սոնյայի համար վիրավորական ու խստասիրտ ակնարկ անելու։

Բայց Մոսկվայից գուրս գալուց մի քանի օր առաջ զգացված ու հուզված այն բոլորով, ինչ կատարվում էր, կոմսուհին Սոնյային իր մոտ կանշելով, կշտամբանքների և պահանջների փոխարեն, արցունքն աշքերին դիմեց նրան ալղերսելով, որպեսզի Սոնյան, իրեն զոհաբերելով, հատուցանի այն ամենը, ինչ արշվել է իր համար. այսինքն՝ իր կապերը կտրի Նիկոլայի հետ։

— Ես հանգիստ շեմ կարող լինել այնքան ժամանակ, մինչև այդ խոստումը շտաս ինձ։

Սոնյան հիստերիկ հեծկլտաց, հեկեկանքների միջից պատասխանեց, թե ինքը ամեն բան կանի, թե ինքը պատրաստ է ամեն ինչի, բայց ուղղակի խոստում շարավ և սրտի խորդում վճռականություն լունեցավ անել այն, ինչ պահանջում էին իրենցից։ Նա պետք է իրեն զոհաբերեր ընտանիքի երջանկության համար, այն ընտանիքի, որ կերպերել ու դաստիարակել էր իրեն։ Իրեն ուրիշների երջանկության համար զոհաբերելը Սոնյայի սովորությունն էր։ Նրա վիճակը տան մեջ այնպիսին

էր, որ միայն զոհաբերության ճանապարհով կարող էր նա ցույց տալ իր արժանիքները, և նա սովորել էր ու սիրում էր զոհաբերել իրեն։ Բայց առաջ անձնազո՞նության բոլոր գործողությունների մեջ նա ուրախությամբ գիտակցում էր, որ ինքը, իրեն զոհաբերելով, հենց դրանով բարձրացնում է իր արժեքը իր և ուրիշների աշխում և դառնում է Նիկոլային ավելի արժանի, որին ամեն բանից ավելի էր սիրում կյանքում։ բայց այժմ նրա զոհաբերությունը պիտի լիներ այն, որպեսզի հրաժարվեր այն բանից, ինչ իր համար կազմում էր զոհաբերության պարզեցներ, կյանքի ամբողջ իմաստը։ Եվ կյանքում առաջին անգամ նա դառնություն զգաց այն մարդկանց հանդեպ, որոնք բարերարել էին իրեն նրա՝ համար, որպեսզի ավելի տանջեն, նախանձում էր նատաշային, որ երբեք նման բան չէր ապրել, երբեք կարիք չէր զգացել զոհաբերությունների և հարկադրել էր ուրիշներին զոհաբերել իր համար և այնուամենայնիվ սիրված էր բոլորից։ Եվ Սոնյան առաջին անգամ զգաց, թե ինչպես դեպ Նիկոլայն ունեցած իր մեղմ, մաքուր սիրուց հանկարծ սկսում է աճել մի բուռն զգացում, որ բարձր է թե կանոններից, թե առաքինությունից, թե կրոնից։ և այդ զգացումի ազդեցության տակ Սոնյան, իր կախում ունեցող կյանքի շնորհիվ ընտելացած ակամա ծածկամտության, կոմսուհուն պատասխանելով ընդհանուր, անորոշ խոսքերով, խուսափեց խոսակցություններ ունենալ նրա հետ և որոշեց սպասել, որ տեսակցություն ունենա Նիկոլայի հետ, այն նպատակով, որպեսզի այդ տեսակցությունը ոչ թե ազատի Նիկոլային, այլ, ընդհակառակը, իրեն առմիշտ կապի նրա հետ։

Ոստապներիկ՝ Մոսկվայում եղած վերջին օրերի հոգսերն ու սարսափը խլացրին Սոնյայի մեջ նրան ճնշող մուալլ մտքերը Եվ նա ուրախ էր, որ փրկություն է գտնում պրակտիկ գործունեության մեջ։ Բայց երբ իմացավ, որ իշխան Անդրեյը գտնվում է իրենց տանը, շնայծ իր ամբողջ անկեղծ խղճահարության, որը զգում էր նա դեպ իշխան Անդրեյն ու դեպ նատաշան, նըրաւան համակեց մի ուրախ և սնահավատ զգացում, թե աստված չի ցանկանում, որ ինքը բաժանվի Նիկոլայից։ Նա գիտեր, որ նատաշան սիրում էր միայն իշխան Անդրեյին և չէր զաղարում սիրել նրան։ Սոնյան գիտեր, որ այժմ, հանդիպելով այսպիսի

սարսափելի պայմաններում, նրանք նորից կսիրեն միմյանց, և որ նիկոլայն այն ժամանակ, նրանց միջև լինելիք ազգակցական կապի հետևանքով, չի կարող ամուսնանալ իշխանադուսը Մարիայի հետ։ Զնայած վերջին օրերը և ճանապարհորդության առաջին օրերում տեղի ունեցած դեպքերի ամբողջ սարսափին՝ այդ զգացումը, այդ գիտակցությունը, թե նախախնամությունը միշամտել է իր անձնական գործին, ուրախացնում էր Սոնցին։

Ռոստովներն իրենց ճանապարհորդության առաջին ցերեկը հանգստացան Տրոիցի մայրավանքում։

Վանքի հյուրանոցում Ռոստովներին հատկացրին երեք մեծ սենյակ, որոնցից մեկն զրադեցնում էր իշխան Անդրեյը։ Վիրավորն այդ օրն իրեն շատ ավելի լավ էր զգում։ Նատաշան նստած էր նրա մոտ։ Հարեւան սենյակում նստած էին կոմսն ու կոմսուհին։ Նրանք հարգալիք զրուցում էին վանահօր հետ, որ այցելել էր իր վաղեմի ժանոթներին ու նվիրատումներին։ Սոնցին նստած էր հենց այդտեղ, և հետաքրքրությունը տանջում էր նրան, թե ի՞նչի մասին էին խոսում իշխան Անդրեյն ու նատաշան։ Նա դուան հետևեց լսում էր նրանց ձայնի հնչումները։ Իշխան Անդրեյի սենյակի դուռը բացվեց։ Նատաշան այլայլ ված դեմքով դուրս եկավ այնտեղից, և, չնկատելով իր դեմքը կանգնող ու աշ ձեռի լայն թեքը բռնած վանականին, մոտեցավ Սոնյային և բռնեց նրա ձեռը։

— Նատաշա, շես տեսնո՞ւմ։ Արի այստեղ, — ասավ կոմսուհին։

Նատաշան մոտեցավ օրհնություն առնելու, և վանահայրը խորհուրդ տվեց նրան՝ դիմել աստծուն և նրա սրբի օգնության։

Վանահայր գնալուց հետո նատաշան անմիջապես բռնեց ընկերուհու ձեռը և նրա հետ անցավ դատարկ սենյակը։

— Սոնյա, այո՞ւ, նա կապրի՞, — ասավ նատաշան։ — Սոնյա, որքան երջանիկ եմ և որքան դժբախտ։ Սոնյա՞ն, սիրելիս, — ամեն ինչ պես է։ Միայն թե նա ապրի։ Նա չի կարող... որովհետեւ, որովհետեւ... — և նատաշան լաց եղավ։

— Այդպես ես այդ գիտեի։ Փառք աստծու, — ասավ Սոնյան։ — Նա կապրի՞։

Սոնյան հուզված էր ընկերուհուց ոչ պակաս։ Թե նրա վախով ու վշտով, թե իր անձնական, ոչ ոքի մոտ շարտահայտած մտքերով։ Նա հեկեկալով համբուրում, մխիթարում էր նատաշային։ «Միայն թե իշխան Անդրեյն ապրի», — մտածում էր Սոնյան։ Լաց լինելով, խոսելով ու արցունքները սրբելով՝ ընկերուհիները մոտեցան իշխան Անդրեյի դռանը։ Նատաշան, զգուշությամբ սենյակի դուռը բանալով, նայեց ներս։ Սոնյան նրա կողքին կանգնել էր կիսարաց դռան մոտ։

Իշխան Անդրեյը պառկած էր բարձր՝ երեք բարձի վրա։ Նրա գունատ դեմքը հանգիստ էր, աշքերը փակ էին, երկում էր, թե ինչպես է համաշափ շնչում։

— Ախ, նատաշա, — հանկարծ գրեթե ճշաց Սոնյան, բռնելով ընկերուհու թեր և դռնից ընկրկելով։

— Ի՞նչ է, ի՞նչ, — հարցրեց նատաշան։

— Այդ ա՞յն է, ա՞յն, ահա... — ասավ Սոնյան գունատ դեմքով ու դողացող շուրթերով։

Նատաշան հանդարտ դուռը ծածկեց և Սոնյայի հետ միասին հեռացավ գեպի լուսամուտը, դեռ շհասկանալով, թե ի՞նչ են ասել նրան։

— Դու հիշո՞ւմ ես, — վախեցած ու հանդիսավոր դեմքով ասավ Սոնյան, — հիշում ես, երբ ես քո փոխարեն հայելուն նայեցի... Օտրագնոյենում, Սննդյան տոներին... Հիշո՞ւմ ես, ես ի՞նչ տեսա...»

— Այո, այո, — աշքերը լայն բանալով ասավ նատաշան, մութ կերպով հիշելով, որ այն ժամանակ Սոնյան ինչ-որ բան ասավ իշխան Անդրեյի մասին, որին տեսել էր պառկած։

— Հիշո՞ւմ ես, — շարունակեց Սոնյան։ — Ես այն ժամանակ տեսա և բոլորին ասի, թե քեզ, թե Դունյաշային։ Ես տեսա, որ նա պառկած էր անկողնու վրա, — ասում էր Սոնյան, յուրաքանչյուր մանրամասնության հետ մատը բարձրացրած ձեռը շարժելով, — և որ նա աշքերը փակել էր, և ծածկված էր հենց վարդագույն վերմակով, ու ձեռները ծալել էր, — ասում էր Սոնյան, համոզվելով հետզհետեւ, այնքան, որքան նկարագրում էր իր տեսած մանրամասնություններն այժմ, թե հենց այդ մանրամասնությունները նա տեսել է այն ժամանակ։

Այն ժամանակ նա ոչինչ չէր տեսել, բայց պատմեց, թե տեսել էր այն, ինչ մտքովն անցել էր. բայց այն, ինչ նա մտածել էր այն ժամանակ, նրան թվում էր նույնքան իրական, որքան և ամեն մի այլ հիշողություն։ Այն, որ Սոնյան այն ժամանակ ասել էր, թե նա նայեց իրեն ու ժպտաց և ծածկված էր ինչոր կարմիր բանով, Սոնյան ոչ միայն հիշում էր, այլ հաստատ համոզված էր, որ դեռ այն ժամանակ ինքն ասել ու տեսել էր, թե նա ծածկված էր վարդագույն, հենց վարդագույն վերմակով, և որ նրա աշխերը փակ էին։

— Այո, այո, հենց վարդագույն, — ասավ Նատաշան, որը, թվում էր, նույնպես հիմա հիշեց, որ ասվել էր վարդագույն, որ հենց դրա մեջ էր տեսնում գուշակության գլխավոր, անսովոր լինելն ու խորհրդավորությունը։

— Բայց դա ի՞նչ է նշանակում, — մտածելու ասավ Նատաշան։

— Ախ, ես շգիտեմ, թե ո՛քան այդ բոլորն անսովոր է, — ասավ Սոնյան, գլուխը բռնելով։

Մի քանի րոպե անց իշխան Անդրեյը զանգեց, և Նատաշան գնաց նրա մոտ. իւկ Սոնյան, իր կողմից հազվադեպ ապրած հուզմունք ու խանդաղատանք զգալով, մնաց լուսամուտի մոտ, խորապես մտածելով կատարվածի բովանդակ անսովորության վրա։

Այդ օրը հնարավորություն կար բանակը նամակներ ուղարկելու, և կոմսուհին գրեց որդուն։

— Սոնյա, — ասավ կոմսուհին, գլուխը բարձրացնելով նամակից, երբ Սոնյան անցնում էր կողքով։ — Սոնյա, դու շե՞ս գրելու նիկոլինկային, — ասավ կոմսուհին հանդարտ, դու ացող ձայնով։

Եվ նրա, ակնոցների միջից նայող, հոգնած աշխերի հայացքում Սոնյան կարդաց ամենը, ինչ հասկանում էր կոմսուհին այդ բառերով։ Այդ հայացքի մեջ արտահայտվում էին աղերս և մերժման վախ, և ամոթ նրա համար, որ պետք էր խնդրել, և պատրաստակամություն անհաշտ ատելության՝ մերժման դեպքում։

44

Սոնյան մոտեցավ կոմսուհուն և ծունկի գալով, համբուրեց նրա ձեռք։

— Ես կգրեմ, տամառ, — ասավ նա։

Սոնյան մեղմացած, հուզված ու խանդաղատված այն բոլորից, ինչ կատարվել էր այդ օրը, մանավանդ գուշակության այն խորհրդավոր կատարումով, որ հիմա տեսավ նա։ Այժմ, երբ նա գիտեր, որ նատաշայի ու իշխան Անդրեյի հարաբերության նորոգման պատճառով նիկոլայը չի կարող ամուսնանալ իշխանադուար Մարիայի հետ, նա ուրախությամբ զգաց անձնագործության այն տրամադրության վերադարձը, որի մեջ սիրում էր և սովորել էր ապրել։ Եվ նա արցունքն աշխերին ու մեծահոգության քայլ անելու գիտակցության ուրախությամբ, մի քանի անգամ արցունքներն ընդհատելով, որ մշուշում էին նրա թափշա սև աշխերը, գրեց այն հուզի նամակը, որի ստացումն այնպես ապշեցրեց նիկոլային։

## IX

Պահանոցում, ուր փակեցին Պիեռին, նրան տանող սպան ու զնունքում էին թշնամաբար, բայց միաժամանակ հարգանքով։ Դեպի Պիեռն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ տակավին գգացվում էր և կասկած, թե ո՛վ է նա (մի շատ կարեռ մարդ չէ՝ արդյոք), և թշնամանք այն պատճառով, որ դեռ թարմ էր իրենց անձնական պայքարը նրա հետ։

Բայց երբ մյուս օրվա առավոտը եկավ փոխարինող պահականումքը՝ Պիեռն զգաց, որ նոր պահակների համար — սպաների ու զինվորների համար — ինքն այլևս այն իմաստը չուներ, ինչ ուներ նրանց համար, ովքե՛ր բռնել էին իրեն։ Եվ իսկապես, այդ մեծամարմին, գլուզացու կաֆտանով զեր մարդու մեջ մյուս օրվա պահակներն արդեն չէին տեսնում այն կենդանի մարդը, որ այնպես կատաղությամբ կովեց հինահարի (մարոդյորի) և ուղեկցող զինվորների հետ և հանդիսավոր խոսքեր ասավ երեխային՝ փրկելու մասին, այլ տեսնում էին, շգիտես ինչու, բարձր իշխանության կարգադրությամբ բռնված ու բանտարկված ուռւներից 17-րդին։ Եթե մի որիէ

առանձին բան կար Պիեռի մեջ, այդ միայն նրա ոչ երկշոտ, կենտրոնացած-խոհուն տեսքն էր և ֆրանսերենը, որով նա ֆրանսացիների համար զարմանալի լավ բացատրվում էր: Զնայած դրան, նույն օրը Պիեռին միացրին ուրիշ բռնված կասկածելիների հետ, որովհետև Պիեռի զբաղեցրած առանձին սենյակը հարկավոր եղավ սպային:

Բոլոր ոռւսները, որ բանտարկված էին Պիեռի հետ, ամենացած դասի մարդիկ էին: Եվ նրանք բոլորը, Պիեռի մեջ ճանաշելով աղա մարդու, իրենց հեռու էին պահում նրանից, մանավանդ որ նա խոսում էր ֆրանսերեն: Պիեռը տիրությամբ լըսեց, թե ինչպես ծաղրում են իրեն:

Մյուս օրը երեկոյան Պիեռն իմացավ, որ բոլոր այդ բռնված եւ, ը (եւ եկի, ինքն էլ նրանց թվում) պետք է դատվեին հրձիգության համար: Երրորդ օրը Պիեռին մյուսների հետ տարան ինչ-որ մի տուն, ուր նստած էին ֆրանսական մի գեներալ՝ ճերմակ բեղերով, երկու գնդապետ և ուրիշ ֆրանսացիներ՝ շարժերը ձեռներին: Պիեռին էլ, մյուսների հետ հավասար, տալիս էին մարդկային թուլությունները արվեստականորեն գերազանցող, այնպիսի ճշգրտությամբ ու որոշակիությամբ (որով սովորաբար դիմում են մեղադրյալներին) հարցեր, թե ո՞վ է նա, որտե՞ղ է եղել, ի՞նչ նպատակով և այլն:

Այդ հարցերը, կենսական գործի էությունը թողնելով մի կողմ և բացառելով այդ էությունը բանալու հնարավորությունը, ինչպես և գատարաններում տրվող բոլոր հարցերը, նպատակ ունեին միայն դնել այն խողովակը, որով զատողները ցանկանում էին, որ հոսեն մեղադրյալների պատասխանները և հասցնեն ցանկալի նպատակին, այսինքն՝ մեղադրանքի: Հենց որ նա սկսում էր ասել մի ինչ-որ այնպիսի բան, որ չէր բավարում մեղադրանքի նպատակը, խողովակը վերցնում էին, և չուրը կարող էր հոսել, ուրի իրեն հաճելի էր: Բացի դրանից, Պիեռն զգաց և այն, ինչ զգում է մեղադրյալը բոլոր գատարաններում. տարակուսանք, թե ինչո՞ւ համար են իրեն տրվում այդ բոլոր հարցերը: Նա զգում էր, որ միայն զիջողությունից կամ կարծես քաղաքավարությունից էր գործադրվում խողովակի այդ հնարքը: Նա գիտեր, որ գտնվում է այդ մարդկանց հշանանության տակ, որ միայն իշխանությունն է իրեն բերել

այստեղ, որ միայն իշխանությունն է նրանց իրավունք տվել՝ պատասխաներ պահանջել տրված հարցերին, որ այս ժողովի միակ նպատակն այն է, որ իրեն մեղադրեն: Եվ այդ պատճառով, որովհետև կար իշխանություն և կար մեղադրելու ցանկություն, ուստի կարիք չկար թե հարցեր տալու խորամանկության և թե դատի: Ակնհայտ էր, որ բոլոր պատասխաները պետք է հանգեին մեղադրության: Այն հարցին, թե ի՞նչ էր անում նա, երբ նրան ձերբակալեցին, Պիեռը պատասխանեց մի տեսակ ողբերգականությամբ, թե ինքը տանում էր ծնողներին հանձնելու այն երեխան, զի՞լ առաջ սառների — ինչի՞ համար էր նա կովում հինահարի հետ: Պիեռը պատասխանեց, թե ինքը պաշտպանում էր մի կնոշ, թե վիրավորանքի ենթակա կնոշը պաշտպանելը յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն է, թե... Նրան շթողին շարունակի: զա գործին չէր բռնում: — Նա ինչո՞ւ էր գտնվում այն վառվող տան բակում, ուր վկաները տեսել են նրան: Նա պատասխանեց, թե գնում էր տեսնելու ի՞նչ է կատարվում Մոսկվայում: Նրան նորից կանգնեցրին. Նրան շեն հարցնում ո՞ւր էր գնում, այլ ինչո՞ւ էր զրտնելով մրգեհի մոտ: — Ո՞վ է ինքը, — կրկնեցին նրան առաջին հարցը, որի համար նա ասավ, թե չի ուզում պատասխանել: Նա կրկին պատասխանեց, թե այդ չի կարող ասել:

— Գրեցեք, այդ լավ չէ: Բոլորովին լավ չէ, — խստությամբ ասավ նրան ճերմակ բեղերով և վառ կարմիր դեմքով գեներալը:

Չորրորդ օրը հրդեհներ սկսվեցին Զուրովսկի վալում:

Պիեռին ուրիշ 13 հոգու հետ տարան Կրիմսկի Բրոդ՝ մի վաճառկանի տան կառասրահը: Փողոցով անցնելիս՝ Պիեռը խեղդվում էր ծխից, որը, թվում էր, կանգնած է ամրող քաշարի զլինին: Ամեն կողմից հրդեհներ էին երեսւմ: Պիեռն այն ժամանակ տակավին չէր հասկանում հրդեհվող Մոսկվայի նշանակությունը, ու սարսափելով էր նայում այդ հրդեհներին:

Կրիմսկի Բրոդի մոտ գտնվող մի տան կառասրահում Պիեռը մնաց և շորս օր և այդ օրերին ֆրանսացի զինվորների խոսակցությունից իմացավ, որ այստեղի բոլոր բանտարկյալները յուրաքանչյուր օր սպասում են մարշալի վճռին: Թե որ մարշա-

<sup>1</sup> որին նա գրկել է բացերի միջից:

լի՝ Պիեռն այդ շկարողացավ իմանալ զինվորից Զինվորի համար մարշալը, հայտնապես, պատկերանում էր իշխանության բարձր և փոքր-ինչ խորհրդավոր օղակը:

Առաջին այդ օրերը մինչև սեպտեմբերի 8-ը, այն օրը, երբ գերիներին տարան երկրորդ անգամ հարցաքննության, ամենածանր օրերն էին Պիեռի համար:

## X

Սեպտեմբերի 8-ին գերիների մոտ՝ կառասրահը մտավ մի շատ կարևոր սպա, դատելով այն հարգանքից, որով դիմում էին նրան պահակները: Այդ սպան, հավանորեն շտարական, ցուցակը ձեռին, սկսեց անուն-անուն կանչել բոլոր ոռուսներին, Պիեռին կոչելով,— celui qui n'a voué pas son nom<sup>1</sup>. Եվ, անտարբեր ու ծուլորեն նայելով բոլոր գերիներին, պահակային սպային կարգադրեց՝ վայելուշ հագցնել ու կարգի բերել նըրանց, նախքան մարշալի մոտ տանելը: Մի ժամ հետո եկավ զինվորների մի վաշտ, և Պիեռին ուրիշ 13 հոգու հետ տարան Դեկիչ պոլե: Օրը պարզ էր, անձրեց հետո արեւոտ, և օդն անսովոր մաքուր: Ծովսը չէր տարածվում գետներն, ինչպես այն օրը, երբ Պիեռին դուրս բերին Զուրովսկի վայի պահանոցից. ծովսը սյուների նման բարձրանում էր մաքուր օդում: Ոչ մի տեղ հրդեհների կրակ չէր երևում, բայց ամեն կողմից ծխի սյուներ էին բարձրանում, և ամբող Մոսկվան, ամբողը, ինչ միայն կարող էր տեսնել Պիեռը, ծայրեծայր վիթխարի հրդեհ էր: Ամեն կողմ երևում էին դատարկ տարածություններ՝ վառարաններով ու ծխնելույզներով և երթեմն բարե տների ամեն կողմից այրված պատեր: Պիեռը նայում էր այդ ահազին հըրդեհներին և շէր ճանաչում քաղաքի ծանոթ թաղամասերը: Տեղ-տեղ երևում էին հրդեհից ազատ մնացած եկեղեցիներ: Կրեմլ, լքանդամ, սպիտակին էր տալիս հեռվից իր աշտարակներով ու իվան վելիկի զանգատնով: Մոտիկ ուրախ շողշողով էր նովոկիչ (կուսանաց) վանքի գմբեթը, և առանձնապես

այնտեղից պարզահնչում լսվում էր զանգահարությունը: Այդ զանգահարությունը Պիեռին հիշեցրեց, որ այսօր կիրակի է և Աստվածամոր ծննդյան տոնը: Բայց, թվում էր, մարդ չկար որ այդ տոնը կատարեր. ամենուրեք հրդեհի ավերածություններ էին, և ուստ ժողովրդից երբեմն հանդիպում էին միայն պատառոտուն զգեստներով վախեցած մարդիկ, որ թաքնվում էին ֆրանսացիներ տեսնելիս:

Ակներեարար ոռուսական բույն ավերված ու ոչնչացված էր. բայց, ոռուսական այդ հանրակարգի ավերման-ոչնչացման ետև Պիեռին զգում էր անգիտակցաբար, որ այդ ավերված բնի վրա հաստատվել է բոլորովին այլ, բայց ամուր ֆրանսական կարգը: Նա այդ զգում էր առույգ ու զվարիթ, կանոնավոր շարքերով բայլող այն զինվորների տեսքից, որոնք ուղեկցում էին իրեն մյուս հանցագործների հետ. Նա այդ զգաց, տեսնելով ֆրանսական մի ինչ-որ կարևոր պաշտոնյա, որ նստել էր զույգ ձի լծած կառքում, որը զախս էր դիմացից և որը վարում էր մի զինվոր: Նա այդ զգաց գնդի երաժշտախմբի ուրախ հնչուններից, որ գալիս էին դաշտի ձախ կողմից, և մանավանդ այդ զգում ու հասկանում էր այն ցուցակից, որը, գերիների անունները տալով, կարդաց այսօր առավոտյան եկած ֆրանսացի սպան: Պիեռին տարան միայն զինվորներով, տարան մեկ այս, մեկ մյուս տեղը տասնյակ մարդկանց հետ. թվում էր՝ նրանք կարող էին մոռանալ իրեն, շփոթել ուրիշների հետ: Բայց ոչ իր պատասխանները, որ տվել էր հարցաքննության ժամանակ, վերադառնում էին իրեն հետեւյալ ձեր անվանումով. celui qui n'a voué pas son nom: Եվ այդ անունով, որ սարսափելի էր Պիեռի համար, այժմ նրան տանում էին ինչ-որ տեղ մի անկասկածելի վստահությամբ, որը գրված էր տանողների դեմքերին, թե մնացած բոլոր գերիները և նա հենց նրանք են, որ հարկավոր են, և որ նրանց տանում են այնտեղ, ուր պետք է: Պիեռն իրեն զգում էր մի չնշին տաշեղ՝ ընկած իրեն անհայտ, բայց կանոնավոր գործող մեքենայի անհիվի մեջ:

Պիեռին մյուս հանցագործների հետ միասին բերին Դեկիչ պոլեի աջ կողմը, վանքից ոչ հեռու գտնվող մի մեծ սպիտակ տան մոտ, որը հսկայական պարտեզ ուներ: Այդ Շերբատովի տունն էր, ուր առաջները Պիեռը հաճախ լինում էր տանտիրոջ

<sup>1</sup> Նա, որ իր անունը մի առում:

մոտ և որի մեջ այժմ, ինչպես իմացավ նա զինվորների խոսակ, թությունից, ապրում էր մարշալը՝ նիմյուլի հերցոգը:

Նրանց մոտեցրին տան մուտքին և սկսեցին մեկ-մեկ տանել ներս: Վեցերորդը տարան Պիեռին: Պիեռին ծանոթ ապակիպատ սրահի և նախասենյակի միջով նրան տարան երկար ու ցածր առանձնասենյակը, որի դռան առջև կանգնած էր ադյուտանտը:

Դավուն նստած էր սենյակի ծայրում՝ սեղանի վրա կոտած, ակնոցը քթին: Պիեռը մոտեցավ նրան: Դավուն, աշբերը շրարձրացնելով, ըստ երևույթին ստուգում-կարդում էր առջևը գրված ինչ-որ մի թուղթ: Աշբերը շրարձրացնելով՝ նա կամաց հարցրեց: «Qui êtes-vous?»<sup>1</sup>.

Պիեռը լուսում էր, որովհետև չէր կարողանում խոսք ասել: Դավուն Պիեռի համար միայն ֆրանսական գեներալ չէր. Պիեռի համար նա հայտնի էր որպես դաժան մարդ: Նայելով Դավուի սառը դեմքին, Դավուի, որը ինչպես խիստ մի ուսուցիչ, համաձայնում էր առայժմ համբերություն ունենալ և պատասխանի սպասել, Պիեռն զգաց, որ հապաղելու ամեն մի վայրկյանը կարող է կյանք նստել իրեն. բայց չգիտեր ի՞նչ ասել: Ասել նույնը, ինչ ասել էր առաջին հարցաքննությանը, նա չէր համարձակվում. հայտնել իր կոչումն ու դիրքը՝ թե՛ վտանգավոր էր, թե՛ ամոթալի: Պիեռը լուս էր: Բայց նախքան Պիեռը կկարողանար որևէ բան որոշել, Դավուն գլուխը բարձրացրեց, բարձրացրեց և ակնոցները ճակատի վրա, աշբերը կկոցեց ու սկսուն նայեց Պիեռին:

— Ես ճանաշում եմ այս մարդուն,— ասավ նա հանդարտ, սառը ձայնով, որն ակներկ նպատակ ուներ վախեցնել Պիեռին:

Սարսուը, որ անցավ առաջ Պիեռի մեջքով, բռնեց նրա գլուխը, կարծես ամուր պրկելով:

— Mon général, vous ne pouvez pas me connaître, je ne vous ai jamais vu<sup>2</sup>...

— C'est un espion russe<sup>3</sup>, — ընդհատեց նրան Դավուն, դիմելով մի ուրիշ գեներալի, որ սենյակում էր, բայց որին Պիեռը չէր նկատել:

<sup>1</sup> Դուք ո՞վ եք:

<sup>2</sup> Գեներալ, դուք չե՞ք կարող ինձ ճանաշել: Ես ձեզ երրեք չեմ տեսել:

<sup>3</sup> Մաս ուսական լրտես է:

Եվ Դավուն երեսը շրջեց: Անսպասելի ճայթյունը ձայնի մեջ՝ հանկարծ Պիեռը խոսեց արագ-արագ:

— Non, Monseigneur,<sup>4</sup> ասավ նա անսպասելի հիշելով, որ Դավուն հերցոգ էր — Non, Monsieur, vous n'avez pas pu me connaître. Je suis un officier militionnaire et je n'ai pas quitté Moscou<sup>5</sup>.

— Votre nom? — Կրկնեց Դավուն:

— Besouhof<sup>6</sup>.

— Qu'est-ce qui me prouvera que vous ne mentez pas?<sup>7</sup>

— Monseigneur!<sup>8</sup> — Ճաց Պիեռը ոչ թե վիրավորված, այլ աղերսական ձայնով:

Դավուն աշբերը բարձրացրեց և սկսուն նաև Պիեռին: Մի քանի վայրկյան նրանք նայում էին իրար, և այդ նայվածքը փրկեց Պիեռին: Այդ հայացքում, բացի պատերազմի և դատի բոլոր պայմաններից, մարդկային հարաբերություններ հաստատվեցին այդ երկու մարդու միջև: Նրանք երկուսն էլ այդ մի բոպեում մութ կերպով վերզգացին անթիվ-անհամար օաներ և հասկացան, որ նրանք երկուսն էլ մարդկության զավակներ են, որ նրանք եղայրներ են:

Առաջին հայացքում Դավուի համար, որ միայն գլուխը բարձրացրեց իր առջևի ցուցակից, ուր մարդկային գործերը և կյանքն անվանում էին համարներով, Պիեռը միայն հանգամանք էր. և, խզճի համար մեղք համարելով՝ Դավուն կզնդակահարել նրան. բայց այժմ արդեն նա նրա մեջ տեսնում էր մարդ: Նա մի ակնթարթ մտածեց:

— Comment me prouverez-vous la vérité de ce que vous me dites<sup>9</sup>, — ասավ Դավուն սառնությամբ:

Պիեռը հիշեց Ռամբալին և տվեց նրա զնդի անունը և ազգանունն ու փողոցը, որի վրա գտնվում էր տունը:

<sup>1</sup> Ու, ձերդ բարձրություն, դուք չեիք կարող ինձ ճանաշել: Ես պահեստի սպա եմ և Մոսկվան չեմ թողել-հեռացել:

<sup>2</sup> Ձեր անունը: — Թեզություն:

<sup>3</sup> Ո՞վ կապացուցի ինձ, որ դուք չեք ստում:

<sup>4</sup> Ձերդ բարձրություն:

<sup>5</sup> Ի՞նչպես կապացուցեք ինձ, որ դուք ճիշտ եք ասում:

— Vous n'êtes pas ce que vous dites<sup>1</sup>, — նորից ասավ Դավուն:

Պիեռը գողացող, ընդհատվող ձայնով սկսեց ապացուց։ Ներ բերել իր ցուցմունքն արդարացնելու համար։

Բայց այդ ժամանակ ներս մտավ ադյուտանտը և ինչ-որ բան հայտնեց Դավունին։

Դավուն հանկարծ պայծառացավ ադյուտանտի բերած տեղեկությունից և սկսեց կոճկվել։ Նա, ըստ երեսութիւն, բոլորովին մոռացավ Պիեռին։

Երբ ադյուտանտը հիշեցրեց նրան գերու մասին, նա, հոնքերը կիտելով, գլխով արավ Պիեռի կողմը և ասավ, որ նրան տանեն։ Բայց ո՞ւր պետք է տանեին նրան, Պիեռը չգիտեր։ Նորից բարա՞քը թե մահապատժի համար պատրաստած տեղը, որը Դմիչե պոլեկվ անցնելիս, ընկերները ցուց էին տվել նրան։

Նա գլուխը շրջեց և տեսավ, որ ադյուտանտը նորից հարցնում է ինչ-որ։

— Oui, sans doute<sup>2</sup>! — ասավ Դավուն։ Թե ինչ «այո», Պիեռը շգիտեր։

Պիեռը չէր հիշում, ինչպե՞ս, երկա՞ր էր արդյոր քայլում և ո՞ւր էր գնում։ Նա, բոլորովին մտազուրկ ու բթացած վիճակում, շուրջը ոչինչ շտեսնելով, ոտները փոխեց մյուսների հետ այնքան ժամանակ, մինչև բոլորը կանգ առան, նա էլ կանգ առավ։ Այդ բոլոր ժամանակ միայն մի միտք կար Պիեռի գլխում։ Այդ միտք այն էր, թե ո՞վ, ո՞վ է, վերցապես, մահվան դատապարտել իրեն։ Դրանք այն մարդիկը շէին, որ հարցաքննում էին իրեն հանձնաժողովում։ Նրանցից և ոչ մեկը չէր ցանկանում և, ակներեաբար, չէր էլ կարող այդ անել։ Այդ ոչ է Դավուն էր, որ այնպես մարդկայնորեն նայեց իրեն։ Եվս մի բոպե՞և և Դավուն կհասկանար, որ իրենք վատ բան են անում, ույց այդ բոպեն խանգարեց ներս մտնող ադյուտանտը։ Եվ այդ ադյուտանտը, հայտնապես, ոչինչ վատ բան չէր ցանկանում, բայց նա կարող էր և ներս շմտնել։ Այդ ո՞վ ուրեմն մահապատժի ենթարկեց, սպանեց, կյանքից զրկեց իրեն՝ Պիեռին,

նրա բոլոր հիշողություններով, ձգտումներով, հույսերով, մտքերով։ Ո՞վ արավ այդ։ Եվ Պիեռն զգաց, որ դա ոչ ոք էր։

Այդ կարգն էր, հանգամանքների դասավորությունը։

Ինչ-որ կարգ սպանեց նրան՝ Պիեռին. զրկեց կյանքից, ամեն ինչից, ոչնչացրեց նրան։

## XI

Իշխան Շշերբատովի տնից գերիներին Դմիչե պոլեով տարան ուղիղ ցած, Կուսանաց վանքից գեափ ձախ, և մոտեցրին մի բանջարանոցի, որի մեջ մի սյուն էր տնկված։ Սյան հետաք մեծ փոս էր փորված՝ նոր քանդած հողով, և փոսի ու սյունի շուրջը կիսաշրջան կազմած կանգնած էր ժողովրդի մեծ բազմություն։ Բազմությունը բաղկացած էր փոքրաթիվ ոռւսներից և մեծ թվով նապոլեոնյան՝ շարքից զուրս գտնվող զորքերից։ տարբեր մունիքներով գերմանացիներից, իտալացիներից ու ֆրանսացիներից։ Սյան աջ և ձախ կողմը կանգնած էին ֆրանսական զորքեր՝ կարմիր ուսադիրներ ունեցող կապույտ մունիքներով, կիսակոշիկներով և կիվերներով։

Հանցագործներին կանգնեցրին որոշ կարգով, ինչպես ցուցակով էր (Պիեռը վեցերորդ տեղն էր բռնում) և մոտեցրին սյանը։ Հանկարծ մի քանի թմբուկներ զարկեցին երկու կողմից, և Պիեռն զգաց, որ այդ հնչյունի հետ կարծես պոկվեց իր հոգու մի մասը։ Նա կորցրեց կշաղատելու և ըմբռնելու ընդունակությունը։ Նա կարողանում էր միայն տեսնել ու լսել և նա միայն մի ցանկություն ուներ, ցանկություն, որպեսզի շուտով արվեր այն ինչ-որ սարսափելի բանը, ինչ արվելու էր։ Պիեռը նայում էր իր ընկերներին և քննում-զննում նրանց։

Մայրի երկու մարդը ածիլված բանտարկյալներ էին։ Մեկը բարձրահասակ, նիհար, մյուսը սեադեմ, մազմզոտ, զղուտ, տափակ քթով։ Երրորդը ճորտ ծառա էր, 45 տարեկան, ճերմակող մազերով և լեցուն, լավ սնված մարմնով։ Զորրորդը գյուղացի էր, մի շատ գեղեցիկ տղամարդ՝ լայն փոված մորուքով ու թուխ աշեքրով։ Հինգերորդը գործարանի բանվոր էր՝ դեղնադեմ, նիհար, 18 տարեկան մի տղա, խալաթ հագած։

Պիեռը լսեց, որ ֆրանսացիները խորհրդակցում են, թե ինչ-

<sup>1</sup> Դուք այն չեք, ինչ ասում եք ինձ։

<sup>2</sup> Այո, իհարկե։

պես կրակեն՝ մեկ-մե՞կ, թե երկ-երկու։ «Երկ-երկու» սառը հանգիստ պատասխանեց ավագ սպան։ Զինվորների շարքուն շարժում կատարվեց, և նկատելի էր, որ բոլորն շտապում են, ու շտապում էին ոչ թե այնպես, ինչպես շտապում են, որպեսզի անեն բոլորի համար հասկանալի մի գործ, այլ այնպես, ինչպես շտապում են, որպեսզի վերջացնեն անհրաժեշտ, բայց տհաճ ու անըմբռնելի մի գործ։

Ֆրանսացի պաշտոնյան՝ շարֆ կապած մոտեցավ հանցա գործների շարքի աջ կողմին և ոռւսերեն ու ֆրանսերեն կարդաց դատավճիռը:

Հետո երկու գույք ֆրանսացիներ մոտեցան հանցագործ. Ներին և, սպայի ցուցումով, վերցրին շարքի ծայրին կանգնած երկու բանտարկյալների: Բանտարկյալները, սյանը մոտենաալով, կանգ առան և, մինչ պարկերը կրերեին, լուր նայում էին իրենց շուրջը, ինչպես խփված գազանն է նայում մոտեցող որսորդին: Մեկը շարունակ խաշակնքում էր երեսը, մյուսը քորում էր մեչքը և շրթներով մի շարժում էր անում, որ նման էր ժահիտի: Զինվորները, ձեռներով շտապելով սկսեցին նրանց աշքերը կապել, պարկեր հագցնել և սյանը կապել:

12 Հոգի հրամակներ՝ հրացաններով, համաշափ, հաստա-  
տուն քայլվածքով դուրս եկան շարքերից և կանգ առան սյունից  
8 քայլ հեռու։ Պիեռը երեսը շրջեց, որ շտեսնի այն, ինչ լինելու  
էր։ Հանկարծ լսկեց ճայթյուն և որոտ, որ Պիեռին թվացին  
կայծակի ամենասարսափելի հարվածից ուժգին, և նա ետ նա-  
յեց։ Ռուխ էր կանգնած, և ֆրանսացիները գունատ ղեմքերով  
ու դողացող ձեռքներով ինչ-որ բան էին անում փոսի մոտ։ Բերին  
ուրիշ երկուսի; Նույնպես, նույնպիսի աշքերով, այդ երկուսն էլ  
նայում էին բոլորին, իզուր միայն աշքերով անխօս օգնու-  
թյուն խնդրելով և, երեսում էր, չէին հասկանում և չէին հա-  
վատում այն բանին, ինչ լինելու է։ Նրանք չէին կարող հավա-  
տալ, որովհետեւ մենակ իրենք գիտեին, թե ի՞նչ բան է եղել  
կյանքն իրենց համար, ուստի և չէին հասկանում և չէին հա-  
վատում, որ կարելի լիներ այդ կյանքը խել իրենցից։

Պիեռն ուզեց չնայել և նորից երեսը շրջեց. բայց գարձյալ կարծես մի սարսափելի պայթյուն շանթեց նրա լսողությունը, և այդ ձայների հետ միասին նա տեսավ ծուխ, ինչու մեկի  
54

արյունը և գունատ, վախեցած դեմքերը ֆրանսացիների, որ  
ինչ-որ բան էին անում սյան մոտ, դողացող ձեռներով մի-  
մյանց հրելով։ Պիեռը, ծանր շնչելով, շուրջն էր նայում, կարծես  
հարցնելով, թե այս ի՞նչ բան է։ Նույն հարցումը կար և այն  
բոլոր հայացքներում, որոնց հանդիպում էր Պիեռի նայվածքը։

Բոլոր սուսների գեմքերին, ֆրանսացի զինվորների, սպաների գեմքերին, առանց բացառության, Պիեռ Կարդում էր նույնպիսի վախ, սարսափ ու պայքար, ինչպիսիք կալին իր սրտում։ «Բայց այս ո՞վ է անում, վերջապես։ Նրանք բոլոր տանջվում են նույնպես, ինչպես և ես։ Ո՞վ է անում ուրեմն, ո՞վ»— մի վայրկյան փայլատակեց Պիեռի հոգում։

— Tirailleurs du 86<sup>e</sup> régiment, en avant ! — Կանչեց մեկը :

Տարան հինգերորդին, որ կանգնած էր Պիեռի կողքին, —  
տարան մենակ: Պիեռը հասկացավ այն բանը, որ ինքը փրկված  
է, որ ինքը և մյուս մնացյալները այստեղ թրված են միաւն  
մահապատժին ներկա լինելու: Նա հետզհետե աճող սարսափով,  
զգգալով ոչ ուրախություն, ոչ հանգստություն, նայում էր այն  
բանին, թե ի՞նչ է արվում: Հինգերորդը խալաթ հագած գոր-  
ծարանայինն էր: Հենց որ նրան ձեռ տվին՝ նա սարսափով  
ցատկեց տեղից և բռնեց Պիեռից: (Պիեռը ցնցվեց և պոկվեց նր-  
անից): Դործարանայինը չէր կարող քայլել: Նրան քարշ տվին  
թևատակերից բռնած, և նա ինչոր բան էր աղաղակում: Երբ  
նրան սյանը մոտեցրին՝ նա հանկարծ լոեց: Նա հանկարծ կար-  
ծես ինչոր բան հասկացավ: Հասկացա՞վ արդյոք, թե ճշակն  
իզուր էր, թե՝ մտածեց՝ անկարելի է, որ մարդիկ սպանեն իրեն,  
նա կանգնեց սյան մոտ, բոլորի հետ միասին սպասելով աշքերը  
կապելուն և ինչպես խփված գագան շուրջն էր նայում վառվող  
աշքերով:

Պիեռն այս անգամ չկարողացավ ետ նայել ու աշքերը փակել։ Նրա և ամբողջ բազմության հետաքրքրությունն ու հուզումը այս հինգերորդ սպանության ժամանակ հասավ իր բարձր աստիճանին։ Նույնպես, ինչպես մյուսները, այս հինգերորդը հանգիստ էր։ Նա խալաթն իրար էր բերում և բորիկ մի ոտով քրորում էր մյուսը։

<sup>1</sup> 86-րդ գնդի հրաձիգներ, առաջ:

Երբ սկսեցին նրա աշքերը կապել, նա հանգույցը, որ կը թում էր, ուղղեց ծոծրակի վրա. Հետո, երբ նրան դեմ արին ար յառատված սյանը, նա ետ ընկավ, և որովհետև այդ դիրքն ան հարմար էր, նա ուղղվեց և, ոտներն ուղղիղ դնելով, հանգիտ հնակեց սյանը: Պիռն աշքը չէր հեռացնում նրանից, աշքաթիշանելով ոչ մի փոքրիկ շարժում:

Հավանորեն հրաման լսվեց. Հավանորեն հրամանից հետո լսվեց 8 հրացանների կրակոցներ: Բայց Պիեռը, որքան է հետո աշխատում էր հիշել, լսեց կրակոցի ամենափոքր ձայն նա տեսավ միայն, թե ինչպես հանկարծ գործարանայինը թուլացած կախ ընկավ թոկերից, ինչպես արյուն երևաց երկու տեղ, և ինչպես թոկերն իրենք, կախ ընկած մարմնի ծանրությունից, բացվեցին և, գործարանայինը, գլուխն անբնականորեն կոացնելով և ոտք ծալելով, նստեց: Պիեռը վազեց դեպի սյունը Ոչ ոք նրան շըռնեց: Գործարանայինի շուրջը ինչոր բան էլ անում վախեցած, գունատ մարդիկ: Մի ժեր, մեծարեղ ֆրանսացուն ներքին ծնոտը դողում էր, երբ նա արձակում էր պարաները: Մարմինն ընկավ ցած: Զինվորներն անհարմար ու շտակաշեցին նրան սյան ետև և սկսեցին հրել-քշել փոսը:

Բոլորն, ակներև, անկասկած գիտեին, որ իրենք ոճրագործ ներ են, որոնց հարկավոր է շուտափութ ծածկել իրենց ոճրագործության հետքերը:

Պիեռը նայեց փոսին և տեսավ, որ գործարանայինը պառկած էր այնտեղ ծնկները վեր, զլխին մոտեցրած, ուսի մեկը մյուսի բարձր: Եվ այդ ուսը զղագործեն, համաշափ իշնում-բարձրանում էր: Բայց թիերի հողն արդեն թափվում էր ամբողջ մարմնի վրա: Զինվորներից մեկը բարկացած, շարացած և հրվանդագին ձայնով գոռաց Պիեռի վրա, որ նա ետ գնա: Բայց Պիեռը նրան հասկացավ և կանգնեց սյան մոտ, և ոչ ոք չվոնդոց նրան:

Երբ փոսն արդեն ամբողջովին լցվեց՝ նորից հրաման լսվեց: Պիեռին տարան իր տեղը, և ֆրանսական զորքը, որ ճակատած կանգնած էր սյան երկու կողմը, կիսաշրջան արավ և սկսեց համաշափ քայլով անցնել սյան կողքով: 24 հրացանաձիգները, որ լցված հրացաններով կանգնած էին շրջանի մեջտեղը, վագելով մոտեցան իրենց տեղերին այն միջոցին, երբ վաշտերն անցնում էին նրանց կողքով:

ԷՅ

Պիեռն այժմ անմիտ աշքերով նայում էր այդ հրացանաձիգներին, որ զույգ-զույգ գուրս էին վագում շրջագծից: Բոլորը, բացի մեկից, միացան վաշտերին: Մի երիտասարդ զինվոր, մեռելի գունատ դեմքով, ետ գնացած կիվերը զլխին, հրացանն իշեցրած, դեռ կանգնել էր փոսի դիմաց այն տեղում, որտեղից կրակել էր: Նա հարբածի պես օրորվում էր, անելով մի քանի քայլ մերթ առաջ, մերթ ետ, որ պահի իր ընկնող մարմինը: Մի հին, տարիքով զինվոր՝ ենթասպա, դուրս վագեց շարքից և, զահել զինվորի ուսից բռնելով, քաշեց նրան վաշտի մեջ: Ռուսների և ֆրանսացիների բազմությունն սկսեց ցըրվել: Բոլորը գնում էին լուս, գլուխները կախ:

— Ça leur apprendra à incendier! — ասավ ֆրանսացիներից մեկը:

Պիեռը նայեց խոսողին և տեսավ, որ դա մի զինվոր էր, որն ուզում էր միսիթարվել մի որևէ բանով նրանից, ինչ արվեց, բայց չէր կարողանում: Սկսած շավարտած՝ նա ձեռը թափ տըրվեց ու հեռացավ-գնաց:

## XII

Մահապատիժներից հետո Պիեռին առանձնացրին մյուս մեղադրալներից և թողին մենակ մի փոքրիկ կողոպտված ու ապականված եկեղեցում:

Երեկոյան դեմ պահակային ենթասպան երկու զինվորի հետ մտավ եկեղեցի և հայտնեց Պիեռին, թե նա ներված է և այժմ տարվելու է ուզմագերիների բարաքը: Զհասկանալով այն, ինչ ասին իրեն, Պիեռը վեր կացավ ու գնաց զինվորների հետ: Նրան բերին դաշտի վերեր այրված տախտակներով ու տաշած գերաններով շինված բարաքները և մտցրին գրանցից մեկի մեջ: Մթան մեջ բսան տարբեր մարդիկ շրջապատեցին Պիեռին: Պիեռը նայում էր նրանց, շհասկանալով, թե ովքե՞ր են այդ մարդիկ, ինչի՞ են աչստեղ և ի՞նչ են ուզում իրենից: Նա լուս էր իրեն ասվող խոսքերը, բայց դրանցից ոչ մի եղաւ-

<sup>1</sup> Սա նրանց հրդեհել կառվորեցնի:

Կացություն չէր անում և չէր անդրադառնում. նա չէր հաս. կանում դրանց նշանակությունը: Նա ինքը պատասխանուժ էր, ի՞նչ հարցնում էին, բայց նկատի չէր առնում թե ովքեր են լսում իրեն և ինչպես հասկանան իր պատասխանները: Նա նայում էր այդ մարդկանց դեմքերին ու կերպարանքներին, և նրանք բոլորը միատեսակ անմիտ էին թվում:

Այն բողեք, երբ Պիեռը տեսավ այդ սարսափելի սպանությունը, կատարված այն մարդկանց ձեռքով, որ չէին ցանկանում այդ անել, նրա հոգուց կարծես պոկեցին այն զսպանակը, որով պահպում էր ամենը և ներկայանում կենդանի, և ամեն ինչ վերածվեց անմիտ աղբի կույտի: Նրա մեջ, թեև նա իրեն հաշիվ չէր տալիս, որինչացավ հավատը թե՛ աշխարհի բարեկարգության, թե՛ մարդկանց, թե՛ իր հոգու, թե՛ աստծու նկատմամբ: Այս վիճակը Պիեռն ապրել էր առաջ, բայց երբեք սյնպէս ուժեղ, ինչպես հիմա: Առաջ, երբ Պիեռին տիրում էին նմանօրինակ կասկածներ, այդ կասկածների աղբյուրը սեփական մեղքերն էին: Եվ սրտի հեռու խորքում Պիեռն այն ժամանակ զգում էր, որ այդ հուսահատությունից և այդ կասկածներից նա փրկություն էր գտնում ինքն իր մեջ: Բայց հիմա զգում էր, որ իր մեղքը չէր պատճառն ա'յն բանի, որ աշխարհը վկից իր աշխում ու մնացին միայն անիմաստ ավերակներ: Նա զգում էր, որ կյանքին հավատալուն վերադառնալը իրենից շի կախված:

Նրա շուրջը մթան մեջ կանգնած էին մարդիկ. երեխ, իր մեզ ինչ-որ մի բան նրանց շա'տ էր զբաղեցնում: Նրան ինչ-որ բան էին պատմում, հարցնում էին ինչ-որ բանի մասին, հետո նրան տարան ինչ-որ տեղ, և նա, վերջապես, իրեն տեսավ բարաքի մի անկյունում, ինչ-որ մարդկանց շարքում, որ խոսում-ծիծաղում էին տարրեր կողմերից:

— Եվ ահա, եղբայրներս... հենց էն թագավորի տղեն, որը... (հատուկ շեշտելով «որը» բառը), — ասում էր ինչ-որ մեկի ձայնը բարաքի հակառակ անկյունում:

Անխոս ու անշարժ պատի մոտ ծղոտին նստած՝ Պիեռը աշքերը մերթ բանում, մերթ փակում էր: Բայց հենց որ աշքերը փակում էր՝ նա իր առցե տեսնում էր զործարանայինի նույն սարսափելի, մանավանդ իր պարզությամբ սարսափելի դեմքը

և ակամա մարդասպանների էլ ավելի, իրենց անհանգստությամբ սարսափելի դեմքերը: Եվ նա նորից բացեց աշքերն ու անիմաստ նայեց խավարի մեջ իր շուրջը:

Նրա կողքին կորացած նստած էր ինչ-որ փոքրիկ մարդ, որի ներկայությունը Պիեռը սկզբում նկատեց քրտինքի սուր հոտից, որ գալիս էր նրա ամեն մի շարժվելուց: Այդ մարդը մթան մեջ ինչ-որ բան էր անում իր ոտքերի հետ և, չնայած այն բանին, որ Պիեռը նրա դեմքը չէր տեսնում, բայց զգում էր, որ այդ մարդը շարունակ իրեն է նայում: Լավ նայելով մթան մեջ՝ Պիեռը հասկացավ, որ այդ մարդը ուսները հանում էր: Եվ այն, թե նա ինչպես էր անում այդ, հետաքրքրեց Պիեռին:

Քանդելով թելը, որով կապկապված էր մի ոտք, նա խնամքով ոլորեց թելը և անմիջապես սկսեց հանել մյուս ոտքը, Պիեռին նայելով: Մինչ մի ձեռը կախում էր թելը, մյուսն արդեն քանդում էր մյուս ոտի կապերը: Այսպիսով խնամքով, շտապ, առանց դանդաղելու, մեկը մյուսին հետեւող շարժումներով ոտները հանելով, մարդն իր ոտնամանները կախեց պատին, իր գլխավերն խփած փոքրիկ փայտերին, դանակը հանեց, ինչ-որ բան կտրեց, նորից ծալեց դանակը, դրեց գլխատակը և, ավելի լավ նստելով, երկու ձեռքով գրկեց բարձրացրած ծընկները և աշքերը հառեց Պիեռին: Պիեռն ինչ-որ հաճելի, հանգըստացնող և կատարյալ մի բան զգաց այդ կլորիկ շարժումների մեջ, նրա անկյունի բարեկարգ տնտեսության մեջ, անգամ այդ մարդու հոտի մեջ, և նա, աշքերը շենուացնելով, նայում էր նրան:

— Խսկ դուք շա'տ նեղություններ եք տեսել, պարոնս: Հը, — ասավ հանկարծ փոքրիկ մարդը:

Եվ քնքշանքի ու պարզության այնպիսի արտահայտություն կար այդ մարդու երգեցիկ ձայնի մեջ, որ Պիեռն ուզեց պատասխանել, բայց նրա ծնոտը գողաց և նա արցունքներ զգաց: Փոքրիկ մարդը նույն վայրկյանին, ժամանակ շտալով Պիեռին իր շփոթությունը արտահայտելու, խոսեց նույն դուրեկան ձայնով:

— Էյ, թառլանս, մի տիրորի, — ասավ նա մի այնպիսի քնքուշ-երգեցիկ փաղաքշանքով, որով խոսում են միայն պառավ ոտւս կանայք: — Մի՛ տիրորի բարեկամս. համբերու-

թյունը կյանք է: էղպես, սիրելիս: Իսկ մենք էստեղ տպրում ենք, փառք աստծո, շեն նեղացնում, Մարդիկ են էլի, լավն է կա վատն էլ,— ասավ նա և, դեռ խոսելով ճկուն շարժումով կողացավ, ծնկների վրա, վեր կացավ և, հազարով, գնաց ինչ-որ տեղ:

— Էյ դու, անզգա՞մ, եկա՞ր,— լսեց Պիեռը բարարի ծայրից նույն փաղաքշական ձայնը:— Եկավ անզգամ', հիշում է Դե, դե, հերի՞ք է:

Եվ զինվորը, դեպի ինքը վազող շանը հեռացնելով իրենից, վերադարձավ իր տեղը և նստեց: Նրա ձեռին ինչ-որ բան կար փալասի մեջ փաթաթած:

— Ահա, կերեք, աղաս, — ասավ նա, կրկին վերադառնաւով նախկին հարգալից տոնին և փալասը բանալով, Պիեռին տվեց մի քանի խորոված գետնախնձոր:— Ճաշը շրալի ապուր էր: Իսկ կարտոֆիլները շատ լավն էին:

Պիեռն ամբողջ օրը բան չէր կերել, և գետնախնձորի հոտը նրան շափազանց հաճելի թվաց: Նա շնորհակալություն հայտնեց զինվորին և սկսեց ուտել:

— Ինչո՞ւ էղպես, — ժպտալով ասավ զինվորը և վերցրեց գետնախնձորներից մեկը:— Ա՛յ ինչպես արա:

Նա նորից հանեց ծալովի դանակը, ափի վրա գետնախնձորը կտրեց, երկու հավասար մաս արավ, աղ ցանեց փալասի միջից և մատուցեց Պիեռին:

— Շատ լավ կարտոֆիլ է, — կրկնեց նա:— Ա՛յ էղպես կեր:

Պիեռին թվաց, որ ինքը երբեք դրանից ավելի համեղ բան չէր կերել:

— Ոչ, ես դեռ ոչինչ, — ասավ Պիեռը, — բայց ինչ բանի համար նրանք գնդակահարեցին այդ թշվառներին... Վերջինը քսան տարեկան էր:

— Ծը'... ծը'... — ասավ փոքրիկ մարդը:— Ի՞նչ մեղք, ի՞նչ մեղք... — արագորեն ավելացրեց նա, և կարծես նրա խոսքերը միշտ պատրաստ էին բերանում ու անսպասելի դուրս էին թռչում այնտեղից, նա ավելացրեց:— Էղ ինչո՞ւ, աղաս, դուք էղպես մնացել եք Մոսկվայում:

— Զէի կարծում, թե այսպես շուտ կդան: Ես պատահաբար մնացի, — ասավ Պիեռը:

— Բայց ինչպե՞ս քեզ բոնեցին, թառլանս, քո տա՞նը:

— Ոչ, ես գնացի հրդեհին նայելու, այնողեղ էլ բոնեցին ինձ դատեցին որպես հրդեհողի:

— Որտեղ դատ՝ էնտեղ անարդարություն, — հարեց փոքրիկ մարդը:

— Իսկ դու վազո՞ւց ես այստեղ, — հարցրեց Պիեռը, վերցին գետնախնձորը ծամելով:

— Ե՞ս: Էն կիրակի օրն ինձ վերցրին հիվանդանոցից, էսաեղ՝ Մոսկվայում:

— Իսկ դու ո՞վ ես, զինվո՞ր ես:

— Ապահովնակի գնդի զինվորներից եմ: Տեսդից մեռնում էի: Մեզ բան էլ շասին: Մենք քսան հոգով պառկած էինք: Ո՞վ կարող էր մտածել, իմանալ:

— Հը, այստեղ տիս ո՞ւր է քեզ համար, — հարցրեց Պիեռը:

— Բա ո՞նց, տիսուր չի, թառլանս: Անունս Պլատոն է, աղգանունս Կարատաև, — ավելացրեց նա, երկի նրա համար, որ հեշտացնի Պիեռի գործը՝ իրեն դիմելու:— Սառայության ժամանակ էլ թառլան էին անվանում: Ինչպե՞ս շտիրեմ, թառլանս: Մոսկվան՝ քաղաքների մայրն է: Ինչպես շտիրեմ էդ բաները տեսնելով: Թրթուրը քալամը կրծում է, բայց ինքը նրանից առաջ է փշանում. էղպես են ասել ծերերը, — ավելացրեց նա արագ:

— Ինչպե՞ս, դու այդ ինչպե՞ս ասիր, — հարցրեց Պիեռը:

— Ե՞ս, — հարցրեց Կարատաևը:— Ես ասում եմ՝ ոչ թե մեր խելքով, այլ աստծու զատաստանով, — ասավ նա, կարծելով թե կրկնում է ասածը: Եվ անմիջապես շարունակեց:— Ի՞նչպես է ուրեմն, աղաս, թե հայրական կալված ունեք և թե տո՞ւն: Ուրեմն, լիբը տուն եք: Տանտիկին էլ ունե՞ք: Իսկ ձեր պառավ ժողովները կենդանի՞ն են, — հարցնում էր նա:

Ու թեև Պիեռը նրան չէր տեսնում մթան մեջ, բայց զգում էր, որ զինվորի շրթները կուշ էին գալիս փաղաքշանքի գուսապ ժպիտով այն պահին, երբ նա հարցնում էր այդ: Նա, ըստ երեխութին, վշտացավ, որ Պիեռը ծնողներ չունի, մանավանդ մայրէ:

— Կինը խորհուրդ անելու համար է, զոքանը՝ պատիկ ստանալու, բայց հարազատ մորից ավելի սիրելի բան չկա, — ասավ նա: — Է՛ս, իսկ երեխաներ ունե՞ս, — շարունակեց հարց. նել նա:

Պիեռի բացասական պատասխանը նորից, ըստ երևութիւն, վշտացրեց նրան և նա շտապեց ավելացնել.

— Ոչինչ, չահել եք. դեռ աստված կտա, կունենաք: Միայն թե հաշտ ապրեք...

— Հիմա արդեն միենույն է, — ակամա ասավ Պիեռը: — Է՛ս, լավ մարդ, — ասավ Պլատոնը: — Աղքատությունն ու բանտը միշտ կան:

Նա նստեց ավելի հարմար դիրքով, հազար, ըստ երևութիւն պատրաստվելով երկար պատմության:

— Էդպես, սիրելի բարեկամս, ե՞ս գեռ տանն էի ապրում, — սկսեց նա: — Սեր կալվածը հարուստ է, հողը շատ, գեղացիք լավ են ապրում, մեր տունն էլ, փառք աստծու: Հերս դուրս էր գալիս մեկին լոթը հնձելու: Ապրում էինք լավ: Խսկական գեղացիներ էինք: Պատահում էր...

Եվ Պլատոն Կարատաեր մի երկար պատմություն արավ, թե ինչպես է ինքը գնացել անտառի այն կողմը գտնվող ուրիշ պուրակը ու ընկել պահակի ձեռքը, ինչպե՞ս են նրան ծեծել դատել ու գինվոր ուղարկել:

— Ու ոչինչ, թառլանս, — ասավ նա ժպիտից փոխված ձայնով, — կարծում էինք անբախտություն է, բայց լավ եղավ: Ախպերս պիտի գնար, եթե իմ էդ մեղքը լիներ: Իսկ փոքր ախպերս երեք երեխա ունի. ես ա՛յ մենակ կնկանս եմ թողել եկել: Մի աղջկկ ունեի, էն էլ մինչև զինվոր գալս աստված առավ: Մի քանի օրով գնացի տուն, ասեմքեզ: Տեսնեմ՝ առաջվանից ավելի լավ են ապրում: Բակը լիքը տավար է, կնանիքը տանն են, երկու եղբայրս գնացել են աշխատանքի: Մենակ Միխայլոն, փոքրը, տանն է: Ու հերս ասում էր. «Ինձ համար բոլոր երեխաներս հավասար են. ո՛ր մատոդ էլ կծես՝ կցավի: Եթե Պլատոնին շտանեին էն ժամանակ, Միխայլոն պիտի գնարա: Կանչեց մեզ բոլորիս, հավատում ես, կանգնեցրեց սորի պատկերի առաջ:

«Միխայլո, ասում է, ե՛կ էստեղ, գլուխ տուր սրան մինչև գետին, դու էլ, ա՛յ հարս, խոնարհություն արա. թոռնիկներս, դուք էլ գլուխ տվեք: Հասկացա՞ք», ասում է: — Էդպես, բարեկամ սիրելի: Ճակատագիր կա. իսկ մենք շարունակ գանգատվում ենք՝ էս լավ լի, էն վատ է: Մեր երջանկությունը, ախպերս, ինչպես ջուրը՝ թոռում. ճգում ես՝ ուղում է, դուքս ես բաշում՝ ոշինչ չկա: Էդպես:

Եվ Պլատոնը տեղը փոխեց ծղոտի վրա:

Միասմամ լուղով՝ նա վեր կացավ:

— Հը, գուցե, քննել ես ուզում, — ասավ նա և արագ-արագ սկսեց խաշակնքել, կրկնելով.

— Տեր Հիսուս Քրիստոս, սուրբ Նիկոլա, Ֆրոլա և Լավրա, տեր Հիսուս Քրիստոս, սուրբ Նիկոլա, Ֆրոլա և Լավրա, տեր Հիսուս Քրիստոս՝ ողորմա և փրկի մեզ, — վերջացրեց նա, գետին խոնարհեց, վեր կացավ, հոգոց քաշեց և նստեց իր ծղոտի վրա: — Այ էդպես: Խոր քնացրու, աստված, թեթև զարթեցրու, — ասավ նա ու պառկեց, շինելը վրան քաշելով:

— Դու այդ ի՞նչ աղոթք կարդացիր, — հարցրեց Պիեռը:

— Ի՞նչ, — խոսեց Պլատոնը (նա արդեն քնելու վրա էր): — Ի՞նչ կարդացի: Աստծուն աղոթեցի: Իսկ դու մի՞թե շես աղոթում:

— Ու, ես էլ եմ աղոթում, — ասավ Պիեռը: — Բայց դու ի՞նչ էիր ասում — Ֆրոլա ու Լավրա:

— Բա ո՞նց, — արագ պատասխանեց Պլատոնը. — Ճիռ տոն է: Անասունին էլ պեսք է խղճալ, — ասավ Կարատաելը: — Տես, անզգամը կծկվել է: Տաքացել է, շան քածը, — ասավ նա, շոշափելով ոտների մոտ պառկած շանը, և, նորից շրջվելով, անմիջապես քնեց:

Դուրսը, ինչ-որ հեռու տեղից լաց ու կանչ էր լսվում և բարաքի ճեղքից լույս էր երկում. բայց բարաքում լուսվյուն էր ու մութ: Պիեռը երկար շրնեց և բաց աշքերով մթան մեզ պառկել էր իր տեղը, լսելով կողքին պառկած Պլատոնի համաշափ խոմփոցը, և զգում էր, որ թիշ առաջ քանդված աշխարհն այժմ նոր գեղեցկությամբ, ինչ-որ նոր ու անսասան հիմունքների վրա, շարժվում էր իր հոգում:

Բարաքում, ուր բերին Պիեռին և ուր նա մնաց շորս շաբաթ կար 23 գերի զինվոր, երեք սպա և երկու աստիճանավոր:

Դրանք բոլորը հետո Պիեռին պատկերանում էին ինչպես մշուշում, բայց Պլատոն Կարատաևն ընդմիշտ մնաց Պիեռ հոգում ամենաուժեղ և թանկագին հիշողությունը և անձնավորում այն ամենի, ինչ ուսական է, բարի ու կատարյալ երբ մրուս օրը, լուսաբացին, Պիեռը տեսավ իր Հարեւանին առաջին տպավորությունը ինչ-որ կատարյալ բանի հաստատվեց միանգամայն. Պլատոնի ամբողջ կերպարանքը՝ պարանով գոտեանդված ֆրանսական շինելի մեջ, զիխարկով ու արքեմներով՝ կլոր էր: Գլուխը բոլորովին կլոր էր. մեջքը, կուրփը, ուսերը, անգամ ձեռները, որ նա պահում էր այնպես կառուծես պատրաստվում էր ինչ-որ բան գրկել, կլոր էին. դուրսկան ժպիտը և խոշոր շագանակագույն, քնքուշ աշքել կլոր էին:

Պլատոն Կարատաևը պետք է որ 50-ն անց լիներ, գատելով նրա պատմություններից՝ այն արշավանքների մասին, որոնց մասնակցել էր նա որպես վաղուցվա զինվոր: Նա զգիտեր և ու մի կերպ չէր կարող որոշել, թե ինքը քանի՞ տարեկան է: Բայց նրա ատամները, ճեպ-ճերմակ ու ամուր, որոնք բոլորը բացվում էին երկու կիսաշրջանով, երբ նա ծիծաղում էր (ինչ ու նա հաճախ էր անում), բոլորն էլ լավն էին ու առողջ: Նրա մորուքի մեջ ու զլսին ոչ մի ճերմակ մազ շկար, և ամբողջ մարմին ճկունության և մանավանդ պինդ ու դիմացկուն տեսք ուներ:

Նրա զեմքը, չնայած մանր կլորիկ կնճիռներին, անմեղության և պատանեկության արտահայտություն ուներ. ձայնի դուրեկան էր ու երգեցիկ: Բայց նրա խոսքի զիխավոր առանձնահատկությունն անմիջականությունն էր ու լեցունությունը նա, երեսում էր, երեք չէր մտածում, թե ի՞նչ ասավ և թե ի՞նչ պիտի ասի. և դրանից էլ նրա առողանության արագության ու ճշտության մեջ կար առանձին անվանելի համոզկերություն:

Նրա Փիդիկական ուժերն ու դյուրաշարժությունը գերության առաջին օրերն այնպիսին էին, որ, թվում էր, չի հասկանում, թե ի՞նչ է հոգնածությունն ու հիվանդությունը: Ցու

րաբանշուր օր՝ առավոտ ու երեկո նա, պառկելով, ասում էր. «Խոր քնացրու, աստված, թեթև զարթնեցրու». առավոտները վեր կենալիս, ուսերը միշտ միատեսակ թոթվելով, ասում էր. «պառկեցի՝ կծկվեցի, վեր կացա՝ բանի կացա»: Եվ իսկապես, բավական էր նա պառկեր, որպեսզի անմիջապես քներ բարի պես, և բավական էր արթնանար, որ իսկույն էլ, առանց մի վայրկյան դանդաղելու, շաներ մի բան, ինչպես երեխաները, զարթնելով, ձեռք են առնում խաղալիքները: Նա ամեն ինչ կարողանում էր անել ոչ շատ լավ, բայց ոչ էլ վատ: Նա թիում էր, եփում, կարում, ուսնդում, կոշիկներ կարում-կարկատում: Նա միշտ զբաղված էր և միայն գիշերներն իրեն թույլ էր տալիս զրուցներ, որ սիրում էր, և երգեր: Նա երգեր էր երգում ոչ այնպես, ինչպես երգասացներն են երգում. իմանալով, որ իրենց լսում են. այլ երգում էր, ինչպես թոշուններն են երգում, հայտնապես այն պատճառով, որ այդ հնչունները հանելը նրա համար նույնքան անհրաժեշտ էր, ինչպես անհրաժեշտ է լինում ձգվել կամ ցրվել. և այդ հնչունները միշտ լինում էին նուրբ, քնքուշ, գրեթե կանացի, թախծոտ և այդ միջոցին նրա գեմքը շատ լուրջ էր լինում:

«Երի ընկնելով և մորուք թողնելով՝ նա, ըստ երևութիւն, դեն շպրտեց իրենից ստացիկ խորթ, զինվորի կերպերը, և ակամա վերադարձավ նախկին գյուղացիական, ժողովրդական ոճին:

— Արձակուրդի մեջ եղած զինվորը նման է ոտաշորից կառած շապկի, — ասում էր նա:

Նա իր զինվորության ժամանակի մասին խոսում էր դրժկամ, թեև չէր գանգատվում և հաճախ կրկնում էր, թե ծառայության ամբողջ ժամանակը ոչ մի անգամ չի ծեծվել: Երբ պատմում էր, պատմում էր առավելապես իր հին և, ըստ երեսութիւն, իրեն համար թանկագին հիշողություններից՝ «գեղական» կենցաղից: Առածները, որոնցով լեցուն էր նրա զրուցը, այն մեծ ժամանք անպարկեշտ ու աշխույժ առածները չէին, որ ասում են զինվորները, այլ դրանք ժողովրդական այն ասացվածքներն էին, որոնք, առանձին վեցցրած, այնքան աննշան են թվում, բայց որոնք հանկարծ խորին իմաստության նշանակություն են ստանում, երբ ասվում են տեղին:

Հաճախ նա ասում էր միանգամայն հակառակն այն բանի ինչ ասել էր առաջ, բայց արդարացի էր թե՛ այս, թե՛ մյուսք նա խոսել սիրում էր և խոսում էր լավ, զրուցը զարդարելով փաղաքշանքներով ու առածներով, որոնք, Պիեռին թվում էր նա ինքն է հնարում. բայց նրա պատմությունների գլխավոր հմայքը կայանում էր նրանում, որ նրա զրուցի մեջ ամենահասարակ դեպքերը, երբեմն հենց այնպիսիները, որ չնկատելով դրանց, տեսնում էր Պիեռը, ստանում էին հանդիսավոր գեղեցկության բնույթ: Նա սիրում էր լսել հեքիաթներ, ու երեխները (միշտ միևնույնը) պատմում էր մի զինվոր, բայց ամենից ավելի սիրում էր լսել պատմություններ ներկա կյանքի մասին: Նա հրճվանքով ժամանում էր այդպիսի պատմություններ լսելիս, իրենից ավելացնում էր խոսքեր և հարցեր տալիս, որոնք նպատակ ունեին պարզել իրեն լսած պատմության գեղեցկությունը: Ոչ մի մտերմություն, բարեկամություն, սեր ինչպես Պիեռն էր հասկանում, Կարատակը շուներ բնավ. բայց նա սիրում էր և սիրով ապրում էր այն ամենի հետ, ինչ կյանքը հանդիպեցնում էր նրան, և մանավանդ մարդու հետ,— ոչ թիմի որևէ հայտնի մարդու, այլ այն մարդկանց, որոնք իր աշք սուզեն էին: Նա սիրում էր իր շնիկը, սիրում էր ընկերներին, քրանսացիներին, սիրում էր Պիեռին, որ նրա հարեանն էր բայց Պիեռն զգում էր, որ Կարատակը, շնայած իր ամբողջի բնբշանքին դեպի ինքը (որով նա ակամա արժանի հարկն էր տալիս Պիեռի հոգենոր կյանքին), ոչ մի րոպե չկը շշտանա նրանից անշատվելիս: Եվ Պիեռն սկսեց նույն զգացումն ունենալ դեպի Կարատակը:

Պլատոն Կարատակը մնացյալ մյուս գերիների համար ամենասովորական զինվոր էր: Նրան կանշում էին թաղուան կամ Պլատոշ, բարեհոգությամբ ծաղրում էին նրան, ուղարկուելուն առավելա կապցների: Բայց Պիեռի համար, ինչպես նա հերկայացավ առաջին գիշերը, պարզության ու ճշմարտության ոգու, անհասանելի կատարյալ ու մշտնջենական մարմնացում էր, այդպես էլ մնաց ընդմիշտ:

Պլատոն Կարատակն անգիր ոշինչ զգիտեր, բացի իր աղոթքից: Երբ նա իր զրուցներն էր անում, թվում էր, սկսելով շուտեր ինչով կվերջացնի:

Երբ Պիեռը, երբեմն նրա խոսքի իմաստից զարմացած, խնդրում էր ասածը կրկնել, Պլատոնը չէր կարողանում հիշել, թե ինչ էր ասել մի րոպե առաջ, այնպես, ինչպես ոչ մի կերպ բառերով չէր կարող Պիեռին ասել իր սիրած երգը: Երգի մեջ կար «րօդիմայ երեզանիկ մու», բայց բառերով ոչ մի իմաստ չէր ստացվում: Նա չէր հասկանում և չէր կարող հասկանալ զրուցից առանձին վերցրած բառերի նշանակությունը: Նրա յուրաքանչյուր խոսքն ու յուրաքանչյուր գործողությունը արտահայտությունն էր իրեն անհայտ գործներության, որը նրա կյանքն էր: Բայց նրա կյանքը, ինչպես ինքն էր նայում դրան, իմաստ շուներ, որպես առանձին կյանք: Նա իմաստ ուներ որպես մի ամրողի, որը շարունակ զգում էր նա: Նրա խոսքերն ու գործողությունները նրանից զուրուին թափվում նույնքան համաշափորեն, անհրաժեշտորեն ու անմիջականորեն, ինչպես բուրմունքն է բաժանվում ծաղկից: Նա չէր կարող հասկանալ առանձին վերցրած գործողության ու խոսքի ոչ արժեքը, ոչ նշանակությունը:

## XIV

Նիկոլայից տեղեկության առնելով, որ իր եղբայրը Ռոստով-ների հետ գանվում է Ցարոսլավլում, իշխանագուստը Մարիան, շնայած մորաքբոջ տարհամողելուն, անմիջապես պատրաստություն տեսավ մեկնելու, ու ոչ թե մենակ, այլ եղբոր որդու հետ: Դժվար էր արդյոք, թե ոչ, հնարավոր էր այդ, թե անհընար՝ նա չէր հարցնում և չէր ուզում իմանալ. Նրա պարտականությունն էր ոչ միայն լինել, թերևս, մենանող եղբոր կողքին, բայց և բոլոր հնարավորն անել նրա համար, որ որդուն բերի նրա մոտ, ու պատրաստվեց մեկնել: Եթե իշխան Անդրեյն ինքը չէր տեղեկացրել նրան՝ իշխանագուստը Մարիան, այդ բացատրում էր կա՛մ նրանով, որ եղբայրը շափաղանց թույլ է, որ գրի, կա՛մ նրանով, որ նա քրոջ համար և որդու համար այդ երկար ճանապարհորդությունը համարում է շափաղանց ծանր ու վտանգավոր:

Մի քանի օրվա մեջ իշխանադուստր Մարիան պատրաստ վեց ճանապարհ ընկնելու։ Նրա կառախումբը կազմում էին մի մեծ, իշխանական կառեթ, որով նա եկել էր Վորոնեժ, մի բրիչ կա (կիսակառք) և սայլեր։ Իշխանադստեր հետ մեկնում էին ուղարկենք, նիկոլուշկան դաստիարակի հետ, պառակայակը, երեք սպասուհի աղջիկներ, Տիխոնը, մի ջահել լակել և մի հայրուկ<sup>1</sup>, որին մորաքույրը դրեց իշխանադստեր հետ։

Սովորական ճանապարհով Մոսկվա գնալ՝ մտածել իսկ չել կարելի, և այդ պատճառով զարտուղին, որով պետք է գնալ իշխանադուստր Մարիան դեպի Լիպեցկ, Ռյազան, Վլադիմիր, Շուշ, շատ երկար էր, ամեն տեղ փոստային ձիեր վիճելու պատճառով շատ դժվար և Ռյազանի մոտերքը, ուր (ինչպես ասում էին) երևացել էին ֆրանսացիներ, վտանգավոր էր անգամ։

Այդ դժվարին ճանապարհորդության միջոցին ուղարկենք, Դեսալը և իշխանադուստր Մարիայի սպասավորները զարմացել էին նրա հաստատակամ ոգու և գործունակության վրա։ Նա պառկում էր բոլորից ուշ, վեր կենում բոլորից շուտ, և ոչ մի դժվարություն չէր կարող կանգնեցնել նրան։ Շնորհիլ նրա գործունեության ու եռանդի, որ եռանդ էր տալիս և նրա ուղեկիցներին, երկրորդ շաբաթի վերջում նրանք մոտենում էին Յարոսլավին։

Վորոնեժում գտնված վերջին ժամանակը իշխանադուստր Մարիան ապրեց լավագույն երջանկությունն իր կյանքում։ Դեպ Ռոստովն ունեցած սերն այլևս չէր տանջում, չէր հուզում նրան։ Այդ սերը լցնում էր նրա ամբողջ հոգին, դարձավ նրա անբաժան մասը, և նա այլևս չէր պայքարում դրա դեմ։ Վերջին ժամանակներս իշխանադուստր Մարիան համոզվեց, — թեև նա երեք այդ պարզ բառերով որոշակի չէր ասում իրեն, — համոզվեց, որ ինքը սիրված է և սիրում է։ Այդ բանում նա համոզվեց նիկոլայի հետ ունեցած վերջին տեսակցության միջոցին, երբ նա եկել էր իրեն հայտնելու, թե նրա եղբայրը Ռոստովների հետ է։ Նիկոլայը ոչ մի բառով շակնարկեց այն, թե հիմա (իշխան Անդրեյի ապաքինման դեպքում) նախկին հարաբերությունները կարող են վերսկսվել նրա և նատաշայի

միջեւ, բայց իշխանադուստր Մարիան նրա դեմքից իմւացավ, որ նա գիտեր այդ և մտածում էր այդ մասին։ Եվ, չնայած դրան, Նիկոլայի վերաբերմունքը գեպի նա, — զգույշ, քնքուց ու սիրացին, ոչ միայն չէր փոխվել, բայց նա, թվում էր, ուրախ էր այն բանի համար, որ հիմա իր և իշխանադուստր Մարիայի միջև եղած աղքակցությունը թուլ էր տալիս իրեն ազատ արտահայտել իր բարեկամությունը՝ սերը, ինչպես երբեմն մասում էր իշխանադուստր Մարիան։ Իշխանադուստր Մարիան դամար, որ ինքը սիրում է առաջին և վերջին անգամ կանչը։ Իմ, և զգում էր, որ ինքը սիրված է, և երջանիկ ու հանգիստ էր այդ կողմից։

Բայց հոգեկան մի կողմի այդ երջանկությունը ոչ մի չի չէր խաւարում ամբողջ ուժով վիշտ զգալ եղբոր համար, այլ, ընդհակառակը, այդ հոգեկան հանգստությունը, մի կողմէց, միւծ հնարավորություն էր տալիս նրան լիովին անձնաւ ուր լինել եղբոր նկատմամբ ունեցած այդ վշտին։ Այդ զգացումն այնքան ուժեղ էր Վորոնեժից դուրս գալու առաջին րոպեին, որ նրան ճանապարհ դնողները հավատացած էին, նայելով նրա տանջված, հուսահատ դեմքին, թե նա ճանապարհին կհիփանդանա անպատճառ։ Բայց հենց ճանապարհորդության դժվարություններն ու հոգսերը, որոնց մեջ մտավ իշխանադուստրն անպիսի եռանդով, առժամապես փրկեցին նրան իր վշտից և ուժ տվին նրան։

Ինչպես և միշտ այդ լինում է ճանապարհորդության միջոցին, իշխանադուստր Մարիան մտածում էր միայն ճանապարհորդության մասին, մոռանալով այն, թե ի՞նչ է իր նրապատակը։ Բայց, Յարոսլավին մոտենալով, երբ կրկին բացվեց այն, թե ի՞նչ կարող է ներկայանալ իրեն, և արդեն ոչ թե շատ օրեր հետո, այլ այսօր երեկոյան, իշխանադուստր Մարիայի հուզումը հասավ ծայրահեղ շափերի։

Երբ առաջ ուղարկված հայրուկը, որ գնացել էր Յարոսլավլում իմանալու, թե որտեղ են Ռոստովները և ի՞նչ գրության մեջ է գտնվում իշխան Անդրեյը, ուղեկալի մոտ հանդիպեց քաղաք մտնող մեծ կառեթին, նա սարսափեց, տեսնելով իշխանադստեր սաստիկ գունատ դեմքը, որ երևաց նրան կառեթի լուսամուտից։

<sup>1</sup> Ճորտական շրջանում «հայրուկ» ասում էին ուղեկցող լակերին Ս. Թ.

— Ամեն ինչ իմացա, ձերդ պայծառափայլություն. Բուտովները կենում են հրապարակի վրա, վաճառական թրոն. Նիկովի տանը: Հենց Վոլշայի ափին,— ասավ հայդուկը:

Իշխանադուստր Մարիան վախեցած-հարցական նայեց նրա դեմքին, հասկանալով, թե ինչո՞ւ նա շպատախանեց գլխավոր հարցին՝ ինչպե՞ս է եղբայրու Ա-Ալե Բուրիենը տվեց այդ հարցն իշխանադուստեր վոխարեն:

— Իշխանն ինչպե՞ս է, — հարցրեց նա:

— Նորին պայծառափայլությունը նույն տանն է գտնվում: «Ուրեմն ողջ է», մտածեց իշխանադուստրը և կաժաց հարց:

— Ինչպե՞ս է:

— Մարդիկ ասում են՝ Էլի նույն դրության մեջ է:

Թե ի՞նչ էր նշանակում Էլի նույն դրության մեջ՝ իշխանադուստրն Էլ Հարցրեց և, միայն թեթև, աննկատելի նայեց յոթ տարեկան Նիկոլուշկային, որ նստած էր նրա առաջ և ուրախանում էր քաղաքին նայելով, գլուխն իջեցրեց և Էլ լքարձրացրեց, մինչև որ ծանր կառեթը, զուալով, ցնցվելով ու օրորվելով, կանգ առավ ինչ-որ տեղ: Շրիկացին բացվող ոտնատեղերը:

Դոնէրը բացվեցին: Զախ կողմը ջուր էր՝ մեծ զետ, աջ կողմը՝ պատշգամբ. պատշգամբում կային մարդիկ, սպասավորներ և ինչ-որ մի կարմրադեմ, սև մեծ հյուսքով աղջիկ, որը անախորդ-կեղծ գտնում էր, ինչպես թվաց իշխանադուստր Մարիան (դա Սոնյան էր): Իշխանադուստրը սանդուղքով վեր վաշեց, կեղծ ժամանակ աղջիկն ասավ. «Այստեղ, այստեղ», և լշխանադուստրն իրեն տեսավ մի միջանցքում, արեկելան որիպի գեմքով պառավ կնոջ առաջ, որ հուզումնալից արտահայտությամբ գալիս էր իր դեմ: Դա պառավ կոմսուհին էր: Նա գրկեց իշխանադուստր Մարիային ու սկսեց նրան համբուրել:

— Mon enfant! — խոսեց նա, — je vous aime et vous connais depuis longtemps.

Զնայած իր ամբողջ հուզմունքին՝ իշխանադուստր Մարիան հասկացավ, որ դա կոմսուհին է և որ պեսք է նրան մի բան

ասել: Նա, ինքն էլ շիմանալով ինչպէս, ֆրանսական ինչ-որ քաղաքավարի խոսքեր ասավ նույն եղանակով, որով իրէն էին ասկել, ու հարցրեց. «Ինչպե՞ս է»:

— Բժիշկն ասում է՝ վտանգ չկա, — ասավ կոմսուհին, բայց այն ժամանակ, երբ նա ասում էր այդ, հոգոց քաշելով աշքերը բարձրացրեց վեր, ու նրա այդ շարժումի մեջ կար մի արտահայտություն, որ հակասում էր նրա ասածին:

— Նա որտե՞ղ է: Կարելի՞ է նրան տեսնել, կարելի՞ է, — հարցրեց իշխանադուստրը:

— Խելույն, իշխանադուստր, խմույն, բարեկամու: Աւ նուա որդի՞ն է, — ասավ կոմսուհին, դիմելով՝ Նիկոլուշկային, որ ներս էր մտնում Դեսալի հետ: — Մենք բոլորս կտեղավոր-վենք, տունը մեծ է: Ծ, ինչ հիանալի տղա է:

Կոմսուհին իշխանադուստր Մարիային տարավ Հյուրասրահ: Սոնյան խոսում էր ու-Ալե Բուրիենի հետ, կոմսուհին հայրիայում էր հրեխային: Սեր կոմսը մտնելով՝ ողջունեց իշխանադուստեր: Սեր կոմսը շահազանց փոխվել էր այն օրից. Երբ վերջին անգամ իշխանադուստրը տեսել էր նրան: Այն ժամանակ նա առույգ, ուրախ, ինքնավստահ ծերուկ էր. Հիմա թվում էր ողորմելի, կորած մարդ: Նա, իշխանադուստեր հետ խոսելիս, անդադար շուրջն էր նայում, կարծես ամենքին հարցնելով, թե ա'յն է անում արդյոք, ինչ հարկավոր է: Մոսկվայի և նրա կալվածի ավերումից հետո, սովորական հունից դուրս ընկած, նա, ըստ երեսութին, կորցրել էր իր նշանակության դիտակցությունը և գգում էր, որ ինքն այլև տեղ չունի կյանքը:

Զնայած իր միակ ցանկության՝ շուտափույթ տեսնել եղբորը և չնայած սրտնեղության, որ այդ րոպեին, երբ ինքը միայն մի բան էր ուզում՝ նրան տեսնել, իրեն զբաղեցնում են և կեղծ դովքարանում եղբոր որդուն, իշխանադուստրը նկատում էր ամենը, ինչ կատարվում էր շուրջը, և անհրաժեշտություն դաց առժամապես ենթարկվել այդ նոր կարգ ու կանոնին, որի մեջ մտել էր: Նա գիտեր, որ այդ ամենն անհրաժեշտ էր, և այդ իր համար ծանր էր, բայց չըր սրտնեղում նրանցից:

— Սա իմ ազգականուհին է, — ասավ կոմսը, Սոնյային

<sup>1</sup> Զավակս, ես ձեզ սիրում եմ և ճանաշում եմ զալուց:

ներկայացնելով,— դուք սրան չե՞ք ճանաշում, իշխանադուատը:

Իշխանադուատը դարձավ դեպի Սոնյան և, աշխատելով հանգնել սրտումը բարձրացող թշնամական զգացմունք դեպի այդ աղջիկը, համբուրեց նրան: Բայց նա իրեն ծանր զգաց տեսնելով, որ բոլոր շրջապատողների տրամադրությունն այնքան հեռու էր այն բանից, ինչ կար իր սրտում:

— Որտե՞ղ է նա,— հարցրեց իշխանադուատը մի անգամ էլ, գիմելով բոլորին:

— Նա ներքին հարկումն է: Նատաշան նրա հետ է,— պատասխանեց Սոնյան կարմրելով: — Գնացին իմանալու: Դուք, կարծում եմ, հոգնա՞ծ եք, իշխանադուատը:

Իշխանադուատը աշքերում վրդովմունքի արցունքներ երեսացին: Նա երեսը շրջեց և ուզում էր հարցնել կոմսուհուց, թե ինչպես գնա նրա մոտ, երբ դուն մոտ լսվեցին թեթև, արագքնթաց, կարծես ուրախ քայլեր: Իշխանադուատը ետ նայեց և տեսավ գրեթե ներս վազող նատաշային, այն նատաշային, որ վաղուց անցած տեսակցության ժամանակ Մոսկվայում այնպես դուր շեկավ իրեն:

Բայց իշխանադուատը հաղիվ էր նայել նատաշայի դեմքին, երբ հասկացավ, որ դա իր վշտի անկեղծ ընկերն է, ուստի և իր բարեկամը: Նա նետվեց դեպի նատաշան և, նրան գրկելով, լաց եղավ նրա ուսի վրա:

Հենց որ նատաշան, որ նստած էր իշխան Անդրեյի սնարի մոտ, իմացավ իշխանադուատը Մարիայի գալուստը, նա կամացուկ դուրս եկավ նրա սենյակից այն արագ, ինչպես իշխանադուատը Մարիային թվաց, կարծես ուրախ քայլերով և վազեց դեպի իշխանադուատը:

Նատաշայի հուզված դեմքին, երբ նա ներս վագեց, կար միայն մի արտահայտություն՝ սիրո արտահայտություն, անսահման սեր դեպի նա՝ իշխան Անդրեյը, դեպի իշխանադուատը, դեպի այն բոլորը, ինչ մուս էր սիրեցյալ մարդուն, խղճահարություն ու տվայտանք մյուսների համար և բուռն ցանկություն՝ իրեն ամրողովին նվիրել այն բանին, որպեսզի օգնի նրանց: Երբում էր, որ այդ բոպեին իր մասին և դեպի նա ունեցած իր

հարաբերությունների մասին ոչ մի միտք չկար նատաշայի սրտում:

Նրբազգաց իշխանադուատը Մարիան նատաշայի դեմքին ուղղած իր առաջին իսկ հայացքով հասկացավ այդ ամենը և տիսուր բավականությամբ լաց եղավ նրա ուսին:

— Գնա՞նք, գնա՞նք նրա մոտ, Մարի,— ասավ նատաշան, տանելով նրան մյուս սենյակը:

Իշխանադուատը Մարիան երեսը բարձրացրեց, աշքերը սրբեց և դիմեց նատաշային: Նա զգում էր, որ նատաշայից կարող է հասկանալ ու իմանալ ամեն ինչ:

— Ինչ...— սկսեց նա հարցը, բայց հանկարծ կանգ առավ:

Նա զգաց, որ բառերով շի կարելի ոչ հարցնել, ոչ պատասխանել: Նատաշայի դեմքն ու աշքերը ամեն ինչ պետք է ասեին ավելի պարզ ու ավելի խոր:

Նատաշան նայում էր նրան, բայց, թվում էր, սարսափի ու կասկածի մեջ, ասե՞լ, թե՞ շասել այն բոլորը, ինչ ինքը գիտեր. Նա կարծես թե զգում էր, որ այդ ճառագայթող աշքերի առէն, որոնք թափանցում էին նրա սրտի խորքը, շի կարելի ասել ամբողջ, ամբողջ ճշմարտությունը, ինչպես տեսել էր ինքը: Նատաշայի շուրթը հանկարծ ցնցվեց, այլանդակ կնճիռներ գոյացան բերանի շուրջը, և նա, հեկեկալով, երեսը ծածկեց ձեռներով:

Իշխանադուատը Մարիան ամեն ինչ հասկացավ:

Բայց նա այնուամենայնիվ հույս ուներ և հարցրեց բառերով, որոնց ինքը չէր հավատում.

— Բայց վերքն ինչպես է: Ընդհանրապես, նա ի՞նչ դրության մեջ է:

— Դուք, դուք... կտեսնեք,— միայն կարողացավ ասել նատաշան:

Նրանք միառժամանակ նստեցին ներքեւ՝ նրա սենյակի կողքին այն նպատակով, որ դադարին լաց լինելուց և հանգիստ դեմքերով մտնեն նրա սենյակը:

— Ինչպե՞ս էր ընթանում հիվանդությունը: Վաղո՞ւց է նա իրեն ավելի վատ զգում: Ե՞րբ է այդ պատահել. — հարցնում էր իշխանադուատը Մարիան:

Նատաշան պատմեց, որ առաջին օրերը վտանգ կար տես-

դային գրությունից ու տառապանքից, բայց ծրոիցի սուս ար անցավ, և թժիշկը վախենում էր մի բանից՝ փոտախտից: Բայց այդ վտանգն էլ անցավ: Երբ եկան Յարոսլավը, վերքն սկսել թարախակալել (Նատաշան գիտեր բոլորը, ինչ վերաբերում էր թարախակալելուն և այլն), և թժիշկն ասում էր, թե թարախա: Կալումը կարող է կանոնավոր ընթանալ: Ակսեց տենդը: Բժիշկն ասում էր, թե այդ տենդն այնքան վտանգավոր չէ:

— Բայց երկու օր սրանից առաջ, — սկսեց Նատաշան, — հանկարծ այդ եղավ... — Նատաշան զսպեց հեկեկանքը: — Ետիտեմ ինչից, բայց դուք կտեսնեք նա ինչ է դարձել:

— Թուլացե՞լ է, նիհարե՞լ... — Հարցրեց իշխանադուստրը

— Ու, այդ չէ. ավելի վատ: Կտեսնեք: Ախ, Մարի, նա շափազանց լավն է, նա չի կարող, չի կարող ապրել, որովհետեւ...

## ХV

Երբ Նատաշան սովոր շարժումով բացեց նրա սենյակի դուռը, թողնելով իշխանադուստր Մարիային առաջ անցնելու, իշխանադուստր Մարիան կոկորդում զգում էր արդեն պատրաստի հեկեկանքներ: Որքան էլ նա պատրաստվեց, աշխատեց հանգստանալ, նա գիտեր, որ չի կարող առանց արցունքի նրան տեսնել:

Իշխանադուստր Մարիան հասկանում էր այն, ինչ Նատաշան ըմբռնում էր ռայդ նրա հետ պատահեց երկու օր սրանից առաջ բառերն ասելով: Իշխանադուստրը հասկանում էր, թե այդ նշանակում էր այն, որ նա՝ իշխան Անդրեյը հանկարծ մեղմացել է, և որ մեղմացումը, խանդաղատանքը նշան են մահվան: Նա, դունը մտտենալով, իր երեակայության մեջ տեսնում էր արդեն Անդրյուշայի այն դեմքը, որը գիտեր մանկությունից, քնքուշ, հեզ, խանդաղատագին, որը շատ հազվագեց էր պատահում նրան և այդ պատճառով շատ ուժեղ ներգործություն էր ունենում իր վրա: Իշխանադուստրը գիտեր, որ եղբայրն իրեն կասի մեղմ, քնքուշ խոսքեր, ինչպես այն խոսքերը, որ հայրն ասավ մահից առաջ, և որ ինքը դրան չի կարող դիմանալ ու հեկեկալու է նրա վրա: Բայց վաղ թե ուշ այդ լինելու էր, և նա

մտավ սենյակ: Հեկեկանքները հետզհետե ավելի էին մոտենում կոկորդին այն միջոցին, երբ իշխանադուստրն իր կարմատես աշբերով ավելի պարզ տարրերում էր եղբոր մարմինը և որոնում նրա դիմացերը, և ահա նա տեսավ եղբոր դեմքը ու հայացքով հանդիպեց նրա հայացքին:

Նա պառկած էր բազմոցի վրա, բարձերով շրջապատված, մկյուսի մորթուց խալաթը հագին: Նա նիհար էր ու գունատ, նիհար, թափանցիկ-ճերմակ մի ձեռով բանել էր թաշկինակը, մյուսով, մատների հանդարտ շարժումով, շոշափում էր բեղերի ավելի աճած մասերը: Նրա աշբերը նայում էին ներս մտնողներին:

Տեսնելով եղբոր դեմքը և հայացքով հանդիպելով նրան՝ իշխանադուստր Մարիան հանկարծ շափափորեց իր քայլերի արագությունը և զգաց, որ արցունքները հանկարծ շորացան ու հեկեկանքը կանգ առավ: Եղբոր դեմքի ու հայացքի արտահայտությունը որսալով՝ նա հանկարծ վախեցավ և իրեն մեղապոր գգաց:

«Բայց ես ինչո՞ւմն եմ մեղավոր», — Հարցրեց իշխանադուստրն իրեն: — «Այն բանում, որ ապրում ես և մտածում ողջ մարդու մասին, իսկ հ'ս...», — պատասխանեց եղբոր սառը, խիստ նայվածքը:

Նրա խորունկ, ոչ թե իրենից դուրս, այլ իր ներսը նայող հայացքում գրեթե թշնամություն կար, երբ նա դանդաղորեն գիտեց քրոջն ու նատաշաշային:

Նա քրոջ հետ համբուրվեց ձեռք-ձեռքի տված, ըստ իրենց սովորության:

— Բարեւ, Մարի, դու այդ ինչպե՞ս հասար այստեղ, — ասավ նա նույնպիսի համաշափ ու խորթ ձայնով, ինչպիսին նրա հայացքն էր:

Եթե եղբայրն սկսեր հուսահատորեն ճշալ, այդ ճիշն ավելի քիչ կսարսափեցներ իշխանադուստր Մարիային, քան այդ ձայնի հնչյունը:

— Նիկուրշկային էլ ես բերել, — ասավ նա նույնպիս համաշափ ու դանդաղ, հշելու ակներեն ճիգով:

— Առողջությունդ ինչպե՞ս է հիմա, — խոսեց իշխանադուստր Մարիան, ինքն էլ զարմանալով, թե ի՞նչ է ասում,

— Այդ, բարեկամս, պետք է բժշկին հարցնել, — ասավ նա, և, ըստ երեսւթին, էլի ճիգ անելով, որ սիրալիր լինի, ասավ միայն բերանով (երեսւմ էր, որ նա բոլորովին չէր մը-տածում ան, ինչ առում էր)։

— Merci, chère amie, d'être venue<sup>1</sup>.

Իշխանադուստր Մարիան սեղմեց նրա ձեռք: Նա հազիվ նը-կատելի կնճռեց գեմքը բրոց ձեռի սեղմումից: Նա լուս էր, և քուրք շփտեր ի՞նչ ասի: Իշխանադուստրը հասկացավ այն, ինչ պատահէլ էր նրան երկու օր առաջ: Նրա խոսքերի, խոսելու եղանակի մեջ, մահավանդ այդ հայացքում, սատը, գրեթե թշնամական հայացքում, գուշլում էր ողջ մարդու համար սարսափելի խորթացում ամեն մի աշխարհայինից: Նա, երեսւմ էր, դժվարությամբ էր հասկանում ամեն մի կենդանի բան. բայց գրա հետ միասին զգացվում էր, որ նա կենդանի բանը չէր հասկանում ոչ այն պատճառով, որ զուրկ էր հասկանալու կարողությունից, այլ այն պատճառով, որ հասկանում էր ինչ-որ ուրիշ բան, այնպիսի մի բան, որ չէին հասկանում և չէին կարող հասկանալ կենդանի մարդիկ և որը նրան կլանել էր ամ-բողջովին։

— Սյո, ահա ի՞նչ տարօրինակ կերպով ճակատագիրը հանդիպեցրեց մեզ, — ասավ նա, լուրթյունը խզելով և նատաշային ցույց տալով: — Շարունակ խնամում է ինձ:

Իշխանադուստր Մարիան լսում և չէր հասկանում այն, ինչ ասում էր եղբայրը: Նա, զգայուն, քնքաշափրտ իշխան Անդրեյը, ինչպես կարող էր ասել այդ նրա ներկայությամբ, որին սիրում էր և որը սիրում էր նրան: Եթե նա մտածեր, որ ապրելու է, այդ դեպքում այդպիսի սառը-վիրավորական եղանակով չէր ասի այդ: Եթե նա շգիտեր, թե մեռնելու է, ինչպես ուրեմն չէր խցնում նրան, ինչպես կարող էր այդ ասել նրաներ-կայությամբ: Այդ կարող էր միայն մի բացատրություն ունենալ, այն, որ ամեն բան միևնույն էր նրա համար, և միևնույն էր այն պատճառով, որովհետև ուրիշ մի ինչ-որ, կարեւրագույն բան էր բացված նրա հանդիպեց:

Խոսակցությունը սառն էր, անկապ և ընդհատվում էր յուրաքանչյուր րոպե:

— Մարին եկել է Ոյազանի վրայով, — ասավ նատաշան: Իշխան Անդրեյը չնկատեց, որ նա իր քրոջը անվանելով, առաջին անգամ ինքը նկատեց այդ:

— Է, ի՞նչ կա որ, — ասավ իշխան Անդրեյը:

— Նրան պատմել են, որ Մոսկվան ամբողջ այրվել է, բոլորովին. որ իբր թե...

Նատաշան կանգ առավ. խոսել չէր կարելի: Իշխան Անդրեյն ակներեն ճիգ էր թափում, որ լսի, և այնուամենայնիվ չէր կարողանում:

— Այո, այրվել է, ասում են, — ասավ նա: — Այդ շատ ցավալի է, — և նա սկսեց նայել առջեր, մատներով ցրվածորեն բեղերն ուղղելով:

— Իսկ դու, Մարի, հանդիպեցի՞ր կոմս Նիկոլային, — հանկարծ ասավ իշխան Անդրեյը, ըստ երեսւթին, ցանկանալով նրանց հաճելի մի բան անել: — Նա գրել էր այստեղ, որ դու իրեն շատ ես դուր եկել, — շարունակեց նա պարզ, հանգիստ, ըստ երեսւթին, չկարողանալով հասկանալ այն բովանդակ բարդ նշանակությունը, որ ունեին իր խոսքերը կենդանի մարդկանց համար: — Եթե դու էլ նրան սիրեիր՝ շատ լավ կլիներ... որպեսզի դուք ամուսնայիք, — ավելացրեց նա փոքրինչ արագ, կարծես ուրախացած այն բառերից, որ երկար փնտրում էր և գտավ վերջապես:

Իշխանադուստր Մարիան լսում էր նրա խոսքերը, բայց դրանք նրա համար չունեին ոչ մի այլ նշանակություն, բան այն, որ դրանք ապացուցում էին, թե որքան սարսափելի հեռու էր նա այժմ ամեն մի կենդանի բանից:

— Ի՞նչ խոսենք իմ մասին, — ասավ իշխանադուստրը հանգիստ և նայեց նատաշային:

Նատաշան, իշխանադուստր հայացքն իր վրա զգալով, ընալից նրան: Բոլորը նորից լուցին:

— Առժ է, դու ուզ... — հանկարծ ասավ իշխանադուստր Մարիան դողդոցուն ձայնով, — դու ուզո՞ւմ ես Նիկոլուշկային տևանել: Նա շարունակ հիշում էր քեզ:

<sup>1</sup> Ծնորհակալ եմ, բարեկամս, որ պար:

Իշխան Անդրեյը հազիվ նկատելի ժամաց առաջին անգամ բայց իշխանադուստր Մարիան, որ այնպես գիտեր նրա գեմքը, սարսափելով հասկացավ, որ այդ ուրախության ժայիտ չէր, ու էլ դեպ որդին ունեցած քնքշության, այլ մի հանդարտ, հեղաղը էր այն բանի նկատմամբ, որ իշխանադուստր Մարիան գործադրում էր, իր կարծիքով, վերջին միջոցը նրան սթափեց, նելու համար:

— Այո, ես շատ ուրախ եմ Նիկոլուշկայի համար: Առո՞վ է նա:

Երբ իշխան Անդրեյի մոտ բերին Նիկոլուշկային, որ վախեցած նայում էր հորը, բայց չէր արտասվում, որովհետև ոչ ոք չէր արտասվում, իշխան Անդրեյը համբուրեց նրան և, հայտնապես, զգիտեր ի՞նչ խոսեր նրա հետ:

Երբ Նիկոլուշկային դուրս էին տանում, իշխանադուստր Մարիան նորից մոտեցավ եղբօրը, համբուրեց նրան և, այլ շկարողանալով իրեն պահել, լաց եղավ:

Իշխան Անդրեյը ուշադիր նայեց նրան:

— Դու Նիկոլուշկայի համա՞ր ես, — հարցրեց նա:

Իշխանադուստր Մարիան, արտասվելով, գլուխն իշեցրեց դրականորեն:

— Մարի, դու գիտես Ավետա... — բայց նա հանկարծ լոեց: — Ի՞նչ ես ասում:

— Ոչինչ: Այստեղ հարկավոր չի լաց լինել, — ասավ նա սույն հայացքով քրոջը նայելով:

Երբ իշխանադուստր Մարիան լաց եղավ, իշխան Անդրեյը հասկացավ, որ նա լաց է լինում այն բանի համար, թե Նիկոլուշկան կմնա առանց հայր: Մեծ ճիգ գործադրելով իր վրա՝ նա աշխատեց վերադառնալ ետք կյանք և անցավ նրանց տեսակետին:

«Այո, այդ նրանց պետք է խղճա՞լի թվա, — մտածեց նա: — Բայց որքա՞ն հասարակ է այդր:

«Երկնքի թուղուները չեն ցանում, չեն հնձում. բայց ձեր հայրը կերակրում է նրանց», ասավ նա ինքն իրեն և ուզեց նույն ասել իշխանադստեր: «Բայց ոչ, այդ նրանք կհասկանան

յուրովի, նրանք չեն հասկանա: Այդ նրանք չեն կարող հասկանալ, որ բոլոր այն զգացումները, ինչ թանկ են գնահատում, — բոլորը մերն են. բոլոր այդ մտքերը, որոնք մեզ թվում են այնքան կարենոր, որ դրանք — նարկավոր չեն: Մենք չենք կարող միմյանց հասկանալու, և նա լոեց:

Իշխան Անդրեյի փոքրիկ տղան յոթ տարեկան էր: Նա հազիվ էր կարողանում կարդալ, նա ոչինչ չգիտեր: Այդ օրից հետո նա շատ բան ապրեց, ձեռք բերելով գիտելիքներ, դիտողականություն, փորձառություն. բայց եթե նա այն ժամանակ ունենար բոլոր այդ հետո ստացած ընդունակությունները, նա չէր կարող ավելի լավ, ավելի խորունկ ըմբռնել ամրող նշանակությունն այն տեսարանի, ինչ տեսավ հոր, իշխանադուստր Մարիայի և նատաշայի միջև, քան նա այդ հասկացավ այժմ: Նա ամեն ինչ հասկացավ և, առանց լաց լինելու, դուրս եկավ սենյակից, անխօս մոտեցավ իր հետեւից դուրս եկող նատաշային, ամոթիսած նայեց նրան իր խոհուն գեղեցիկ աշխերով, նրա բարձրացած վերին շուրթը դողաց, նա գլխով հենվեց նատաշային ու լաց եղավ:

Այդ օրվանից նա խուսափում էր Դեսալից, խուսափում էր իրեն փայտայող կոմսունուց և կամ նստում էր մենակ, կամ ամաշկոտ մոտենում էր իշխանադուստր Մարիային ու նատաշային, որին նա, կարծես, ավելի սիրեց իր հորաքրոջից, և մեղմ ու բաշվելով գգվում էր նրանց:

Իշխանադուստր Մարիան, դուրս գալով իշխան Անդրեյի սենյակից, միանգամայն հասկացավ այն բոլորը, ինչ ասել էր նրան նատաշայի գեմքը: Նա այլև շխոսեց նատաշայի հետ եղբոր կյանքը փրկելու հույսերի մասին: Նա փոխարինում էր նատաշային բազմոցի մոտ և էլ չէր լալիս, այլ շարունակ աղոթում էր, հոգով-սրտով զիմելով այն մշտնչենական անհասանիլիին, որի ներկայությունն այնպես շոշափելի էր այժմ մեռնող մարդու մոտ:

## XVI

Իշխան Անդրեյը ոչ միայն գիտեր, թե մեռնելու է, այլև դզում էր, որ մեռնում է, որ արդեն կիսով շափ մեռել է: Նա

գոյում էր աշխարհային բաներից խորթանալու և գոյության ուրախ ու տարօրինակ թեթևության գիտակցությունը: Նա, առանց շտապելու և առանց հուզվելու, սպասում էր այն բանին, ինչ վիճակված էր իրեն: Այն ահավորը, հավիտենականը, անիմանալին, հեռավորը, որի ներկայությունը նա չէր դադարում զգալ իր ամրող կյանքի ընթացքում, այժմ նրա համար մոտ էր և — գոյության այն տարօրինակ թեթևությամբ, որ զգում էր նա — գրեթե հասկանալի էր և շոշափելի...

Առաջ նա վախենում էր վախճանից: Նա երկու անգամ ապրել էր մահվան երկուողի այդ սարսափելի տանջագին զգացումը, և այժմ արդեն չէր հասկանում այն:

Առաջին անգամ նա այդ զգացումն ապրեց այն ժամանակի երբ նոնակը հոլի պես պտտվում էր իր առաջ, և նա նայում էր հնած արտին, թիւրին, երկնքին և գիտեր, որ իր առջնը մահն էր: Երբ նա ուշքի եկավ վերքից հետո և նրա հոգում, վայրկենապես, կարծես, աղաւովելով իրեն պահող-կաշկանդող կյանքի ձնշումից, բացվեց մշտնշենական, ազատ, այս կյանքից կախում չունեցող սիրո ծաղիկը, նա այլևս չէր վախենում մահից և չէր մտածում նրա մասին:

Տառապալից առանձնության ու կիսազառանցանքի այն ժամերին (որ ունեցավ իր վերքից հետո) որքան շատ էր նա մտասուզում նոր, իր առջև բացված մշտնշենական սիրո սսկրզունքի մեջ, նա այնքան ավելի, ինքն էլ այդ զգալով, հրաժարվում էր երկնային կյանքից: Միրել ամենը, ամենքին, մըշտ զոհաբերել իր անձը սիրո համար՝ նշանակում էր ոչ ոքի չսիրել, նշանակում էր շապրել այս երկրային կյանքով: Եվ որքան շատ էր նա տոգորվում սիրո այդ սկզբունքով, այնքան ավելի էր հրաժեշտ տալիս կյանքին և այնքան ավելի կատարելապես էր խորտակում այն սարսափելի պատնեշը, որն առանց սիրո կանգնած է կյանքի և մահվան մեջ: Երբ նա, առաջին այդ օրերը, հիշում էր, թե պետք է մեռնի, նա ասում էր իրեն. Է՛հ, ինչ կա որ, ավելի լավ:

Բայց Միտիշչի այն զիշերից հետո, երբ կիսազառանցանքի մեջ նրա առջև երեաց նա, որին ցանկանում էր, և երբ ինքը, նրա ձեռն իր շուրթերին սեղմելով, լաց եղավ մեղմ, ուրախ

արցունքներով, գեպի մի կինն ունեցած սերն աննկատելի մտավ նրա սիրտը և նորից նրան կապեց կյանքի հետ: Նրա գլխում սկսեցին ծագել և՝ ուրախ, և՝ տագնապալից մտքեր: Հիշելով վիրակապային կայանի այն վայրկյանը, երբ տեսավ Կուրագինին, նա այժմ չէր կարող վերադառնալ այդ զգացմունքին, նրան տանջում էր այն հարցը, թե նա կենդանի՞ է արդյոք: Եվ նա չէր համարձակվում այդ հարցը տալ:

Հիվանդությունը գնում էր իր ֆիզիկական կարգով, բայց այն, ինչ նատաշան անվանեց՝ այդ երան պատահեց, տեղի ունեցավ իշխանագստեր գալուց երկու օր առաջ: Դա վերջին բարոյական պայքարն էր կյանքի և մահվան միջև, և այդ պայքարում մահը հաղթող հանդիսացավ: Դա անսպասելի գիտակցությունն էր այն բանի, որ նա տակավին թանկ էր գնահատում կյանքը, որը ներկայանում էր նրան դեպ նատաշան ունեցած սիրո մեջ, և անիմանալիի առջև զգացած սարսափի վերջին, նվաճված նոպան:

Երեկոյան էր այդ: Իշխան Անդրեյը, ինչպես սովորաբար ճաշից հետո, գտնվում էր թեթև տենդային վիճակում, և նրա մտքերը շափազանց պարզ էին: Սոնյան նստած էր սեղանի մոտ: Իշխան Անդրեյը նիրհում էր: Հանկարծ երջանկության զգացումը համակեց նրան:

«Ո՛, այդ նա ներս մտավ», — մտածեց իշխան Անդրեյը:

Իսկապես, Սոնյայի տեղը նստած էր հենց նոր անձայն քայլերով ներս եկած նատաշան:

Այն օրից, երբ նատաշան սկսել էր խնամել նրան, իշխան Անդրեյը միշտ ապրում էր նրա ֆիզիկական մոակիկության զգացումը: Նատաշան բագլաթոռին նստել էր կողքը նրան արած, իրմով սրողելով մոմի լույսը նրանից, և գուլպա էր գործում: (Նատաշան գույպա գործել սովորել էր այն օրից, երբ իշխան Անդրեյը նրան ասավ, թե ոչ ոք այնպես չի կարողանում խնամել հիվանդներին, ինչպես պառավ դայակները, որ գուլպա են գործում և որ գուլպա գործելու մեջ կա ինչ-որ հանգստացնող բան): Նրա բարակ-նուրբ մատներն արագորեն զատում էին երբեմն իրար հանդիպող ճաղերը, և նրա խոնարհած դեմքի խոհուն պրոֆիլը պարզ տեսանելի էր իշխան Անդրեյին: Նատաշան շարժում արավ և կծիկը նրա ծնկներից ընկավ ցած, նա-

տաշան ցնցվեց, նայեց նրան և, ձեռով մոմի լույսը սփողելով զդույշ, ճկուն ու ստույգ շարժումով կոացավ, կծիկը վերցրեց ու նստեց նախկին դիրքով։

Իշխան Անդրեյը նայում էր նրան, առանց շարժվելու, և տեսավ, որ նատաշան իր շարժումից հետո պետք է շնչեր ամբողջ կրծքովը մեկ, բայց նատաշան համարձակվեց այդ անել և զգուշությամբ շունչ քաշեց։

Տրոիցիկի վանքում նրանք խոսում էին անցյալի մասին, և իշխան Անդրեյն ասավ նատաշային, որ եթե ինքն ապրեր հավիտյան շնորհակալ կլիներ աստծուց իր վերքի համար, որն իրեն կրկին հանդիպեցրեց նրան. բայց այդ օրվանից նրանք երբեք շնուսեցին ապագայի մասին։

«Կարո՞ղ էր թե՝ շէր կարող պատահել այդ,— մտածում էր այժմ իշխան Անդրեյը, նայելով նատաշային ու ականջ դնելով ճաղերի թեթև պողպատյա ծնգոցներին։— Մի՞թե բախտը այսպես տարօրինակորեն հանդիպեցրեց միայն նրա համար, որ ես մեռնեմ... Մի՞թե կյանքի ճշմարտությունն ինձ բացահայտվեց միայն նրա համար, որպեսզի ես ապրեմ կեղծիքի մեջ։ Ես աշխարհում ամեն բանից ավելի եմ սիրում նրան։ Բայց ես ի՞նչ անեմ, եթե սիրում եմ նրան»,— ասավ իշխան Անդրեյը, և հանկարծ ակամա տնքաց ըստ սովորության, որ յուրացրել էր նա իր տառապանքի օրերին։

Այդ հառաջանքը լսելով, նատաշան գուլպան ցած դրեց, թեքվեց դեպի նա և հանկարծ, նրա փայլող աշքերը նկատելով, թեթև քայլերով մոտեցավ նրան ու կոացավ։

— Դուք քնած չե՞ք։

— Ու, ես վաղուց եմ նայում ձեզ. ես զգացի, երբ դուք ներս մտաք: Զեղնից բացի՝ ոչ ոք չի տալիս ինձ այն մեղմ անդորրը... այն պայծառությունը, ես հենց ուզում եմ արտասկել ուրախությունից։

Նատաշան ավելի մոտեցավ նրան, նրա գեմքը փայլում էր խանդակառ ուրախությունից։

— Նատաշա, ես անշափ եմ սիրում ձեզ։ Աշխարհում ամեն բանից ավելի։

— Իսկ ե՞ս:— Նատաշան երեսը շրջեց մի ակնթարթ, — ինչո՞ւ անշափ, — ասավ նա։

— Ինչո՞ւ անշափ... է, ի՞նչ եք կարծում դուք, ի՞նչ եք զգում ձեր սրտում, ձեր ամբողջ սրտում. կապրե՞մ ես: Ի՞նչ եք կարծում։

— Ես հավատացած եմ, հավատացած եմ,— գրեթե աղաղակեց նատաշան, բուն շարժումով նրա երկու ձեռք բռնելով։

Իշխան Անդրեյը լոեց։

— Ի՞նչ լավ կլիներ:— Եվ, նատաշայի ձեռը բռնելով, համբուրեց։

Նատաշան երջանիկ էր և հուզված. բայց անմիջապես հիշեց, որ այդ չի կարելի, որ նրան հանգստություն է հարկավոր։

— Սակայն դուք չեք բնել, — ասավ նատաշան, ուրախությունը զսպելով:— Աշխատեցեք քնել... խնդրում եմ։

Իշխան Անդրեյը, նրա ձեռը սեղմելով, թողեց, և նա զնաց դեպի մոմը ու նորից նստեց նախկին դիրքով: Երկու անգամ նատաշան նայեց նրան, նրա աշքերը փայլեցին նատաշային ի պատասխան։ Նա որոշեց գուլպան գործել որոշ շափ ու ասավ իրեն՝ ետ չնայել այնքան ժամանակ, մինչև վերցացնի այդ շափը։

Իսկապես, շուտով, դրանից հետո, իշխան Անդրեյը աշքերը փակեց ու քննեց։ Նա երկար շքնեց և հանկարծ սառը քրտինքի մեջ զարթնեց տագնապած։

Քնելով՝ նա շարունակ մտածում էր այն, ինչի մասին մտածում էր բոլոր այդ ժամանակ՝ կյանքի և մահվան մասին։ Եվ ամենից շատ մահվան մասին։ Նա իրեն ավելի մոտ էր զգում մահին։

«Մե՞ր: Ի՞նչ բան է սերը, — մտածում էր նա:— Սերը խանգարում է մահվան։ Սերը կյանք է։ Ամենը, ամենը, ինչ հասկանում եմ, հասկանում եմ միայն այն պատճառով, որ սիրում եմ։ Ամեն ինչ կա, ամեն ինչ գոյություն ունի, միմիայն այն պատճառով, որ ես սիրում եմ։ Ամեն ինչ կապողը միայն նա է։ Սերը աստված է, և մեռնել՝ նշանակում է ես՝ սիրո մասնիկս, վերադառնում եմ ընդհանուր ու հավիտենական ակունքին։ Այդ մտքերը նրան միխթարական թվացին։ Բայց գրանք միայն մտքեր էին, նրանց պակասում էր ինչ-որ բան, նրանց մեզ կար ինչ-որ միակողմանի-անձնական, մտավոր բան, չկար ակներւ։

վություն։ Եվ կար նույնպես անհանգստություն ու անորոշություն։ Նա քննեց։

Երազում տեսնում էր, որ ինքը պառկած է նույն այն սենյակում, որի մեջ պառկած էր իրապես, բայց թե՝ վիրավոր չէ այլ առողջ։ Շատ տարրեր մարդկի՝ աննշան, անտարրեր, երեսում են իշխան Անդրեյին։ Նա խոսում, վիճում է նրանց հետ ինչոր անհարկավոր բանի մասին։ Նրանք հավաքվում են ինչ որ տեղ գնալու։ Իշխան Անդրեյին աղոտ մտաբերում է, որ այլ ամենը չնշին, ոչինչ բան է և որ ինքն ուրիշ կարեորագով հոգսեր ունի, բայց շարունակում է ասել, նրանց զարմացնելով, ինչոր դատարկ, սրամիտ բառեր։ Կամաց-կամաց բոլոր այդ մարդիկ աննկատելի սկսում են շքանալ և ամեն ինչի տեղ բռնում է մի հարց՝ փակ դուռն մասին։ Նա վեր է կենում և գնում դեպի դուռը, որպեսզի փակը քաշի և փակի այն։ Ու ամեն ին կախված է այն բանից՝ կարողանա, թե՝ չի կարողանա դուռ փակել։ Նա գնում է, շտապում, նրա ոտները չեն շարժվում, և նա գիտի, որ դուռը փակել չի կարող, բայց և այնպես հիվանդագին լարում է իր բոլոր ուժերը։ Եվ տանջալից սարսափը համակում է նրան։ Եվ այդ սարսափը մահվան սարսափն է, և ա կանգնած է դուռն հետև։ Բայց նույն այդ ժամանակ, երբ նա անզոր-անհարմար սողում է դեպի դուռը, այդ ինչոր սարսափելին մյուս կողմից արդեն, դուռը սեղմելով ներս է խուժում։ Ինչոր ոչ մարդկային բան՝ մահը զոռով խուժում է ներս, և նրան պետք է պահել։ Նա դռնից բռնում է, լարում է վերջին ճիգերը — փակել այլևս չի կարելի — գոնես պահի։ Բայց նրա ուժերը թույլ են, անհամարձակ, և սարսափելիի կողմից հուզ տրվող դուռը բացվում է ու կրկին փակվում։

Նա նորից սեղմեց դրսից։ Վերջին գերբնական ճիգերն իզուր են, և դուռն երկու փեղկերը բացվեցին անձայն։ Նա ներս մղուակ, և դա մահն էր։ Եվ իշխան Անդրեյը մեռավ։

Բայց նույն այդ վայրկյանին, երբ նա մեռավ, իշխան Անդրեյը հիշեց, որ ինքը քնած է, և նույն այդ վայրկյանին, երբ նա մեռավ, նա, ճիգ գործ գնելով իր վրա, արթնացավ։

«Այո, այդ մահն էր։ Ես մեռա — ես արթնացաւ։ Այո, մահը — արթնացնում է», հանկարծ լուսավորվեց նրա հոգին, և վարագույրը, որ մինչ այժմ ժամկում էր անհայտը, վեր բարձրացավ։

Նրա հոգու հայացքի առաջ, նա կարծես զգաց առաջներում իր մեջ կաշկանդված ուժի ազատություն և այն օտարութիւն թեթևությունը, որ այդ պահից չէր հեռանում նրանից։

Երբ նա, սառը քրտինքի մեջ արթնանալով, շարժվեց բազմոցի վրա, նատաշան մոտեցավ և հարցրեց, թե նրան ինչ է եղել։ Իշխան Անդրեյը շպատասխանեց նատաշային և, նրան շասկանալով, նայեց տարօրինակ հայացքով։

Այդ հենց այն էր, որ պատահեց նրան իշխանագուստը Մարիայի գալուց երկու օր առաջ։ Եվ այդ օրից, ինչպես բժիշկն էր ասում, հյուծող տենդը վատ ընթացք ընդունեց, բայց նատաշան չէր հետաքրքրվում նրանով, թե ի՞նչ էր ասում բժիշկը։ Նա տեսնում էր այդ սարսափելի, իր համար ավելի ևս անկասածելի բարոյական նշանները։

Այդ օրվանից իշխան Անդրեյի համար քնից արթնանալու հետ միասին սկսվեց արթնացումը կյանքից։ Եվ կյանքի տևողականության վերաբերմամբ զա այլևս դանդաղ չէր թվում, քան քնից արթնանալը երազի տեղականության համեմատ։

Սարսափելի ու խիստ ոչինչ չկար այդ հարաբերաբար-դանդաղ արթնացման մեջ։

Նրա վերջին օրերն ու ժամերն ընթացան սովորական ու պարզ։ Թե իշխանագուստը Մարիան, թե նատաշան, որ չէին հեռանում նրանից, զգում էին այդ։ Նրանք չէին արտասվում, չէին ցնցվում և վերջին օրերս, իրենք այդ զգալով, այլևս ոչ թե նրան էին հետեւում (նա էլ չկար, նա հեռացել էր իրենցից), այլ նրա մասին եղած ամենամոտիկ հիշողությանը՝ նրա մարմնին, եղուսի զգացմունքներն էլ այնքան ուժեղ էին, որ նրանց վրա չէր ազդում մահվան արտաքին, սարսափելի կողմը, և նրանք ավելորդ էին համարում բորբոքել իրենց վիշտը։ Նրանք չէին լալիս ոչ նրա ներկայությամբ, ոչ նրանից հեռու, բայց և երբեք նրա մասին չէին խոսում իրար հետ։ Զգում էին, որ բառերով չէին կարող արտահայտել այն, ինչ հասկանում էին։

Նրանք երկուսն էլ տեսնում էին, թե ինչպես նա ավելի ու ավելի խոր, դանդաղ ու հանգիստ իշնում-հեռանում էր իրենցից ուր-որ դենք, և երկուսն էլ գիտեին, որ այդպես էլ պիտի մինի և որ այդ լավ է։

Նրան խոստովանեցրին, հաղորդություն տվին. բոլորն եկածից շեշտ տալու: Երբ որդուն բերին նրա մոտ, նա շուրթեր կպցրեց նրա գեմքին ու երեսը շրջեց ոչ թե այն պատճառով, ո ծանր էր այդ նրան ու ցավալի (իշխանադրուստր Մարիան և Նատաշան հասկանում էին այդ), այլ միայն այն պատճառով որ նա կարծում էր, թե ա'յդ էր բոլորը, ինչ պահանջում էր իրենից. բայց երբ նրան ասին, որ որդուն օրհնի, նա կատարել պահանջվածը և շուրջը նայեց, կարծես հարցնելով, թե արդու էլ որևէ բան հարկավոր չէ՝ անել:

Երբ տեղի էին ունենում վերջին ցնցումները մարմնի, որի Ռողնում էր հոգին, իշխանադրուստր Մարիան ու Նատաշան մոտն էին:

— Վերցացա՞վ, — ասավ իշխանադրուստր Մարիան նրանի հետո, երբ եղբոր մարմինն արդեն մի քանի րոպե անշարժ սառչելով, պառկած էր իրենց առջև: Նատաշան մոտեցավ նայեց մեռած աշբերին և շտապեց փակել դրանք: Նա փակի նրա աշբերը, բայց չհամրութեց դրանք, այլ շուրթերը կպցրեց այն բանին, որն ամենամոտիկ հիշողությունն էր նրա մասին: Ամուր գնաց նա: Որտե՞ղ է հիմա...

Երբ նրա լվացլած, հագցրած մարմինը պառկած էր դագաղում՝ սեղանի վրա, բոլորը մոտենում էին նրան հրաժեշտ տալու և բոլորն արտասպում էին:

Նիկոլուշկան լաց էր լինում տանջալից տարակուսանքից, որ կտոր-կտոր էր անում նրա սիրտը: Կոմսուհին ու Սոնյան լաց էին լինում խղճալով Նատաշային և նրա համար, որ նա այլև շկա: Ծեր կոմսը լալիս էր այն մասին, որ շուտով, նա զգում էր, ինքն էլ պիտի անի նույն սարսափելի քայլը:

Նատաշան ու իշխանադրուստր Մարիան նույնպես լալիս էին հիմա, բայց նրանք իրենց անձնական վշտից չէին լալիս, նրանք լալիս էին շերմեռանդ խանդաղատանքից, որ համակել էր նրանց հոգիները՝ իրենց աշքի առաջ կատարված մահի դրագ ու հանդիսավոր խորհուրդի գիտակցության հանդեպ:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### I

Մարդկային մտքի համար անմատչելի է երևույթների պատճառների միակցությունը: Բայց պատճառները որոնելու պահանջը դրված է մարդու հոգում: Եվ մարդկային միտքը, լթափանցելով երևույթների անթիվ ու բարդ պայմանների մեջ, որոնցից յուրաքանչյուրն առանձին կարող է ներկայանալ պատճառ, բռնում է առաջին, ամենահսկանալի մոտավորը և ասում: ահա պատճառը: Պատմական անցերի մեջ (ուր դիտողության առարկան մարդկանց գործի էռությունն է) ամենանախնական մոտավորը ներկայանում է աստվածների կամքը, ապա այն մարդկանց կամքը, որոնք կանգնած են ամենաաշքի ընկնող պատմական տեղում՝ պատմական հերոսներինը: Բայց բավական է միայն թափանցել յուրաքանչյուր պատմական անցքի էռությունը, այսինքն՝ անցքին մասնակցող մարդկանց ամբողջ զանգվածի գործունեության մեջ, որպեսզի համոզվենք, որ պատմական հերոսի կամքը և ոչ միայն շի զեկավարում մասսաների գործողությունները, այլ ինքը մշտապես զեկավարելի է: Թվում է թե պատմական անցքի նշանակությունը այսպես կամ այնպես հասկանալը միենույն է: Բայց այն մարդը, որ ասում է, թե արևմուտքի ժողովուրդները արևելք գնացին այն պատճառով, որ նապուենը ցանկացավ այդ, և այն մարդը, որն ասում է, թե այդ կատարվեց այն պատճառով, որ պետք է

Կատարվեր, այդ երկու մարդու միջև գոյություն ունի այն տաք բերությունը, ինչ գոյություն է ունեցել այն մարդկանց միջև որոնք պնդում էին, թե երկրագունդը կանգնած է հաստատով և մոլորակները պտտվում են նրա շուրջը, և նրանց միջև, որու ասում էին, թե իրենք չփոխեն, թե ինչի վրա է կանգնած երկրագունդը, բայց գիտեն, որ կան օրենքներ, որոնք կառավարու են թե՛ նրա, թե՛ մյուս մոլորակների շարժումը: Պատմականցքի պատմաներ չկան և չեն կարող լինել, բացի բոլոր պատմաների միակ պատմառից: Բայց կան անցքերը կառավարու օրենքներ՝ մասսամբ անհայտ, մասսամբ մեր կողմից շոշափելի: Եյդ օրենքների հայտարերումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ մենք բոլորովին կհրաժարվենք պատմաններ որունել մի մարդու կամքի մեջ, ճիշտ այնպես, ինչպես մոլորափերի շարժման օրենքների գոյուտը հնարավոր դարձավ միայն ժամանակ, երբ մարդիկ հրաժարվեցին երկրագոնդի հաստատում լինելու պատկերացումից:

Թորոգինոյի ճակատամարտից, թշնամու կողմից Մոսկվան գրավելուց և նրա հրդեհումից հետո՝ պատմագիրները 1812 թվի պատերազմի կարևոր էպիզոդն ընդունում են ոուսական բանակի շարժումը՝ Ծյազանի ճանապարհից դեպի Կալուգափ Շանապարհը և դեպի Տարուտինո ճամբարը — այսպես անշանված թևային երթը կրասնայա Պախրայից այն կողմությամբ մարդկան այդ հանճարեղ սխրագործության փառք վերագրում են տարբեր մարդկանց և վիճում են, թե իսկապէս ում է պատկանում այդ փառքը: Անզամ օտարերկրյա, անզան ֆրանսացի պատմագիրներն ընդունում են ուսւ զորավարների հանճարեղությունը, խոսելով այդ թևային երթի մասին: Բայց թե ինչու են ուզմական գրողները, իսկ նրանց հետեւ և բոլորը, կարծում, որ այդ թևային երթը եղել է մի որեէ անձնավորության խորիմաստ գոյուտը, որը փրկել է Ընուսատանը և կործանել նապոլեոնին, — շատ դժվար է հասկանալ: Առաջինը՝ դժվար է հասկանալ, թե ինչո՞ւմն է կայանում այդ շարժման խորիմաստությունն ու հանճարեղությունը, որովհետ նրա համար, որպեսզի ըստրոնենք, թե բանակի ամենալավագույն դիրքը (երբ նրա վրա չեն հարձակվում) գտնվում է այն-

տեղ, ուր շատ պարեն կա, դրա համար հարկավոր չէ մտքի մեծ լարում: Եվ յուրաքանչյուր, անգամ տասերեք տարեկան հիմար տղան, առանց դժվարության կարող է հասկանալ, որ 1812 թվին բանակի համար ամենաշահավետ դիրքը, Մոսկվայի նահանջից հետո, Կալուգայի ճանապարհի վրա էր: Այսպէս ուրեմն, չի կարելի հասկանալ, նախ, թե ի՞նչ հետևություններով պատմագիրները հասնում են այն բանին, որպեսզի այդ մանելիքի մեջ տեսնեն ինչ-որ խորիմաստություն: Երկրորդ, ավելի դժվար է հասկանալ, թե պատմագիրները ի՞նչի մեջ են տեսնում իսկապես այդ մաների փրկարար լինելը ոուսների համար և նրա կործանարար լինելը Փրանսացիների համար, որովհետեւ թևային այս երթը ուրիշ նախ որդող, ուղեկցող և հաջորդող հնազամաններում կարող էր կործանարար լինել ոուսների համար և փրկարար՝ Փրանսական զորքի համար: Եթե այդ ժամանակից, երբ տեղի ունեցավ այդ շարժումը, ոուսական զորքի դրությունն սկսեց լավանալ, դրանից բնավ չի հետևում, թե դրա պատմապան այդ շարժումն էր:

Թևային այդ երթը ոչ միայն չի կարող որեէ օգուտ բերել, այլ կարող էր կործանել ոուսական բանակը, եթե վիներ ուրիշ պայմանների գուգադիպությունը: Ի՞նչ կլիներ, եթե Մոսկվան լհրէնկերը, եթե Մյուրասը շկորցներ ոուսների հետքը: Եթե նապոլեոնը շգտնվեր անզործության մեջ, եթե Կրասնա, Պախրայի մոտ ոուս բանակը, Բենիկսենի և Բարկլայի խորհրդով, ճակատամարտ տար: Ի՞նչ կլիներ, եթե ֆրանսացիք հարձակվեն ոուսների վրա, երբ նրանք անցնում էին Պախրայի այն կողմից: Ի՞նչ կլիներ, եթե հետազում նապոլեոնը, մոտենալով Տարուտինոյին, գրոհ տար ոուսների վրա գեթ տասներող մասովն այն էներգիայի, որով նա գրուեց Սմոլենսկի վրա: Ի՞նչ կլիներ, եթե ֆրանսացիները գնային Պետերբուրգի վրա... Այս բոլոր ենթագրությունների դեպքում թևային երթի փրկարարությունը կարող էր գառնալ կործանարարություն:

Երրորդ, և ամենաանհասկանալին այն է, որ պատմությունն ուսումնասիրող մարդիկ դիտավորյալ չեն ցանկանում տեսնել այն, որ թևային երթը չի կարելի վերագրել մի որեէ անհատի: Որ ոչ ոք այդ երթեք չի նախատեսել, որ այդ մաները ճշշտ ոույնպես, ինչպես և նահանջը Ֆիլիում, ինչպես հարկն է երբեք ոչ

որի շի պատկերացել իր ամբողջությամբ, այլ քայլ առ բար դեպք առ դ'աք, ակնթարթ առ ակնթարթ բխել է անթիվ-անհամար ամենաբազմազան պայմաններից, և միայն այն ժամանակ է ննոկայացել իր բովանդակ ամբողջությամբ, երբ կատարվել է և դարձել անցյալ:

Ֆիրի խորհրդակցությանը ոռուս զորավարների գերակրտող միաբը ինքնին հասկանալի նահանջն էր ուղիղ զծով ետ, այսինքն՝ ն սհանջը Նիժնի-Նովգորոդի ճանապարհով: Դրան ապացուց ծառայում է այն, որ ձայների մեծամասնությունը խորհրդակցությանը արտահայտվեց այդ իմաստով, և, զիշավորը, զլխավոր հրամանատառի հաւատնի գրուցը խորհրդակցությունն էր հնոր, պարհնի բաժնի վարիչ Լանսկուի հետ կանակոյր զիշավոր հրամանատարին զեկուցեց, ին բանակի համար պարենամթերք հավաքված է առավելապես Ծկա գետի ուղղությամբ, Տուլայի և Կալուգայի նահանգներում, և թե Նիժնի նահանչելու դեպքում պարենի պաշարները կանչափեն-կհեռանան բանակից Ծկա մեծ գեասով, որով ապրանք փոխադրելը ձմեռվա առաջին շրջանում դառնում է անհնարի առաջին նշանն էր, որ անհրաժեշտ էր զարձնում շեղվել առաջ ամենաբնական համարլած՝ դեպ նիժնի տանող ուղիղ գծից: Բանակը մնաց ավելի հարավ, մյազանի ճանապարհությունում, և պարենի պաշարներին ավելի մոտ: Հետագայում ֆրանսացիների անգործունելությունը, որոնք կորցրին անգամ ոռուս բանակի հետքը, Տուլայի գործարանը պաշտպանելու հոգսը և, զլխավորը, պաշարին մոտ լինելու շահավետությունը բանակին հարկադրեցին թեքվել էլ ավելի հարավ, Տուլայի ճանապարհը: Հուսահատ շարժումով Պախրայի այն կողմից անցնելով Տուլայի ճանապարհը, ոռուս բանակի զորակետները մտածում էին մնալ Պողոսկում, և խոսք անզամ չկար Տարուտինոյի գիրքի մասին, բայց անթիվ-անհամար հանգամանքները և ֆրանսական զորքի նորից երեսալը, որ առաջ կորցրել էին ոռուներին, և ճակատամարտի ծրագիրները և, չլիավորը, պարենի առատությունը Կալուգայում՝ մեր բանակին հարկադրեցին ավելի ևս թեքվել դեպի հարավ և անցնել իր պարենավորման ճանապարհների մեջտեղը, Տուլայից Կալուգայի ճանապարհը, դեպի Տարուտինու: Ճիշտ այնպես, ինչ-

պես չի կարելի պատասխանել այն հարցին, թե երբ թաղնվեց Մոսկվան, չի կարելի պատասխանել և այն բանին, թե ե՛րբ իսկապես և ո՛վ որոշեց անցնել դեպի Տարուտինու: Միայն այն ժամանակ, երբ անթիվ դիմերենցիալ ուժերի հետեւանքով, զորքերն արդեն եկան դեպի Տարուտինու, այդ ժամանակ միայն մարդիկ սկսեցին հակատացնել իրենց, թե իրենք այդ էին ցանկանում և վակուց նախատեսել էին:

## 11

Նշանալոր թեային երթը կայանում էր միայն նրանում, որ ոռուս զորքը նահանջելով շարունակ ուղիղ ետ հարձակման հակառակ ճանապարհով, այն բանից հետո, երբ ֆրանսացիների հարձակումը կանգ առավ, թերվեց առաջուց բռնած ուղղությունն է, հետապնդում շտեսնելով իր հետեւ, բնականարար գնաց այն կողմը, ուր հրապուրում էր նրան պատրենի առատությունը:

Եթե մեզ պատկերացնենք ոչ թե հանճարեղ զորավարներ ոռուս բանակի զլխավոր, այլ պարզապես մի բանակ առանց զորապետների, այդ բանակն էլ ոչինչ այլ բան չէր կարող անել, բացի այն, որ պիտի շարժվեր ետ դեպի Մոսկվա, գծելով աղեղնաձեւ գիծ այն կողմից, ուր ավելի շատ պարեն կար և երկիրն ավելի առատ էր:

Այդ շարժումը Նիժնի-Նովգորոդի ճանապարհից դեպի Ռյազանի, Տուլայի և Կալուգայի ճանապարհները այն աստիճան բնական էր, որ այդ ուղղությամբ էին փախչում ոռուս բանակի հինահարները (մարողյորները) և որ Պետերբուրգից պահանջվում էր, որպեսզի Կուտուզովը հենց այդ ուղղությամբ տանի իր բանակը: Տարուտինոյում Կուտուզովը գրեթե հանդիմանություն ստացավ թագավորից այն բանի համար, որ նա բանակը ատարել էր Ռյազանի ճանապարհը և նրան մատնաքույց էր արվում հենց այն գիրքը Կալուգայի դեմաց, ուր նա գտնվում էր արքին այն ժամանակ, երբ թագավորի նամակն ստացավ: Հարվածի ուղղությամբ ետ մկված, հարված, որ ստացավ

ամբողջ կովի ժամանակ և Բորոդինոյի ճակատամարտում՝  
ուստի զորքի գնդակը, հարվածի ուժի ոչնչացումով և նոր հար-  
վածներ շատանալով, ընդունեց այն դիրքը, ինչ նրա համար  
ընական էր:

Կուտուզովի ժառայությունը չէր կայանում մի որևէ հան-  
ձաւեղ, ինչպես անվանում են այդ, ուղղմավարական մանկրի  
մեջ, այլ այն բանում, որ միայն նա' էր հասկանում կատարված  
գելքի նշանակությունը. այն ժամանակ արդեն մենակ նա էր  
հասկանում ֆրանսական բանակի անգործության նշանակու-  
թյունը. մենակ նա' էր շարունակում պնդել, թե Բորոդինոյի  
ճակատամարտը հաղթանակ է եղել. նա մենակ — նա', որը,  
թյունը էր, գլխավոր հրամանատարի իր դիրքով, պետք է որ  
կոչվեր հարձակման — նա մենակ իր ամբողջ եռանդը գործա-  
դրում էր այն բանի վրա, որ ուստի բանակը ետ պահի անօգուտ  
կոփներից:

Բորոդինոյի մոտ զարկված գազանն ընկած էր այնտեղ՝  
ինչոր մը տեղ, ուր թողել էր նրան փախած որսորդը. բայց  
արդյոք ո՞չ էր նա, ուժե՞ղ էր արդյոք, թե՞ միայն թաքնվել  
էր, որսորդն այդ շգիտերի Հանկարծ լսվեց այդ գազանի տըն-  
քոցը:

Ֆրանսական բանակի, վիրավոր այդ գազանի տնքոցը, նրա  
կործանումը երեան հանողը լորիստոնի առաքումն էր, որը  
էկել էր Կուտուզովի ճամբարը՝ հաշտություն խնդրելու:

Նապոլեոնն իր այն վստահությամբ, թե լավն այն չէ,  
ինչ լավ է, այլ այն, ինչ ծագել էր իր գլխում, Կուտուզովին  
գրեց այն խոսքերը, որ առաջինը եկան նրա գլուխը. և որոնք  
ոչ մի իմաստ չունեին.

«Monsieur le prince Koutouzov,— զրում էր նա, —  
j'envoie près de vous un de mes aides de camp généraux  
pour vous entretenir de plusieurs objets intéressants. Je  
désire que votre Altesse ajoute foi à ce qu'il lui dira, *surtout*  
*lorsqu'il exprimera les sentiments d'estime et de parti-  
culière considération que j'ai depuis longtemps pour sa  
personne. Cette lettre n'étant à autre fin, je prie dieu,*  
92

Monsieur le prince Koutouzov, qu'il vous ait en sa sainte  
et digne garde.

Moscou, le 30 Octobre, 1812, Signé:  
Napoléon»<sup>1</sup>

«Je serais maudit par la postérité si l'on me regardait  
comme le premier moteur d'un accommodement quelcon-  
que. Tel est l'esprit actuel de ma nation», — պատասխանեց  
Կուտուզովը և շարունակեց գործադրել իր ուժերը, որ զորքը  
ետ պահի հարձակում գործելուց:

Այն մի ամսում, երբ ֆրանսական զորքը կողոպտում էր  
Մոսկվան և ոռուական զորքը հանգնած էր Տարուտի-  
նոյի մոտ, երկու բանակի ուժերի հարաբերության մեջ տեղի  
ունեցան փոփոխություններ (ոգու և քանակի), որի հետեան-  
քով ուժի առավելությունը մնաց ոռուների կողմը: Զնայած  
այն բանին, որ ֆրանսական զորքի դիրքը և քանակը անհայտ  
էր ոռուներին, հենց որ ուժերի հարաբերությունը փոխվեց,  
հարձակման անհրաժեշտությունն իսկույն արտահայտվեց  
անթիվ-անհամար նշաններով: Այդ նշաններն էին՝ «թե լորիս-  
տոնի առաքումը. թե պարենամթերքի առատությունը Տա-  
րուտինոյում. թե այն տեղեկությունները, որ գալիս էին ամեն  
կողմից՝ ֆրանսացիների անգործության և անկարգության  
մասին. թե մեր գնդերի համալրումը նորակոշիկներով, թե լավ  
եղանակը, թե ոսու զինվորների տևական հանգիստը. թե սո-  
վորաբար հանգստի հետեանքով զորքերի մեջ առաջացող ան-  
համբերությունը՝ կատարել այն զործը, որի համար բոլորը

<sup>1</sup> Պարոն իշխան Կուտուզովը, ձեզ մոտ ուղարկում եմ իմ գեներալ-ադյու-  
տանուներից մեկին՝ բանակցելու ձեզ հետ շատ կարենոր խնդիրների մասին։  
Խնդրում եմ ձերդ բարձրության հավատալ այն ամենին, ինչ նա ձեզ կասի.  
մանավանդ, երբ արտահայտի ձեզ հարցանի և հատուկ մեծարանի զցա-  
ցումներ, որ տածում եմ դեպի ձեզ վաղուց ի վեր։ Էնդ սմին աղորում եմ  
աստծուն՝ ձեզ, պ. Կուտուզով, իր սրբազն հովանու ներք պահպանելու  
համար։

Մոսկվա, Հոկտեմբեր 30, 1812 թ.։

Ն ա պ ո լ ե ն ն ։

<sup>2</sup> Հետարդիները կանիծեին ինձ, եթե ես համարեի որևէ հաշտության  
առաջին շարժիւմ։ Այսպիս է իմ ժողովրդի կամքը։

Հավաքիւած են. թե այն հետաքրքրությունը՝ իմանալ ի՞նչ արվել ֆրանսական բանակում, որին վաղուց կորցրել էին արքից. թե այն համարձակությունը, որով այժմ ուստական առաջապստերը շրջում էին Տարուտինոյում կանդնած ֆրանսացիների մոտերքը. թե ոուս զյուղացիների ու պարտիզանների ֆրանսացիների նկատմամբ տարած թեթև հաղթանակներ լուրերը. թե դրա հարուցած նախանձը. թե վրեմինդրության զգացմունքը, որ կար յուրաքանչյուր մարդու հոգում, քանի ու ֆրանսացիները Մոսկվայումն էին. և (զիսավորը) այն անորոշաց յուրաքանչյուր զինվորի սրտում ծագող գիտակցությունն այն բանի, թե ուժերի հարաբերությունը փոխվել է հիմա և առավելությունը գտնվում է մեր կողմբ: Ուժերի էտկան հարաբերությունը փոխվել էր և հարձակումը բարձել էր անհրաժեշտություն էլ, ճիշտ այնպես, ինչպես ժամացույցի մեջ սկսում են խփել ու նվագել կուրանտները, երբ սլաքը լրիվ շրջան է կատարում, բարձր շրջաններում, ուժերի էտկան փոփոխության համեմատ, անդրադարձավ կուրանտների ուժացած շարժումը, շաշունն ու նվազը:

### III

Ուստական բանակը ղեկավարում էր Կուտուզովն իր շտաբով, և թագավորը՝ Պետերբուրգից: Պետերբուրգում, զեռմինչկ Մոսկվան թողնելու լուրն առնելը, կազմված էր ամբողջ պատերազմի մանրամասն ծրագիր և ուղարկված Կուտուզովին ի ղեկավարություն: Զնայած այն բանին, որ այդ պլանը կազմված էր այն ենթագրությամբ, թե Մոսկվան տակավին մեր ծերին է, այդ ծրագիրը հավանություն գտավ շտաբի կողմից և ընդունվեց ի գործադրություն: Կուտուզովը գրեց միայն, թե հեռավոր մանկրային շարժումները դժվար իրագործելի են: Եվ պատահած դժվարությունները լուծելու համար ուղարկվում էին նոր հրահանգներ և անձնավորություններ, որ պետք է հետևին նրա գործողություններին և տեղեկացնեին դրանց մասին:

Բացի դրանից, հիմա վերակազմվել էր ոուս բանակի ամ-

բողջ շտաբը: Սպանված թագրատիոնի և նեղացած, հեռացած թարկայի տեղը նոր մարդիկ էին նշանակված: Շատ լուրջ մտածում էին, թե ավելի լավ կլիներ, եթե Ա-ին դնեն Բ-ի տեղը, իսկ Բ-ին՝ Դ-ի, կամ ընդհակառակը, Դ-ին նշանակեն Ա-ի տեղը և այլն. կարծես բացի Ա-ի ու Բ-ի բավականությունից, որնէ բան էր կախված դրանից:

Բանակի շտաբում (Կուտուզովի՝ իր շտաբի պետի՝ Բենիդունի հետ թշնամացած լինելու առթիվ, և թագավորի լիազոր անձանց ներկայության և այդ տեղափոխությունների աւատածառով) տեղի էր ունենում կուսակցությունների ավելի քան ստորագիւն, բարդ խաղ. Ա-ն քանդո.մ է Բ-ի ոտի տակը. Դ-ն՝ Ս-ի և այլն, բոլոր հարավոր փոփոխո.թյուններով և զուգակցություններով: Այդ՝ իրար ոտի տակ քանդելու բոլոր դեպքերում բանսարկությունների ւուարկա լինում էր մեծ մասամբ ուղամական այն գործը, որին մտածում էին ղեկավարել բոլոր այդ մարդիկ, բայց առաջմական այդ գործն ընթանում էր նրանցից անկախ, հենց այնպես, ինչպես պետք է ընթանար այսինքն՝ երբեք զուգագիպելով այն բանին, ինչ հորինում մտածում էին մարդիկ, այլ բխելով մասսաների հարաբերության էությունից: Բոլոր այդ հորինումները, խաչածելով, խճճվելով, բարձր շրջաններում ներկայացնում էին միայն ճիշտ անդրագարձումն այն բանի, ինչ պետք է կատարվեր:

«Հիսան Միխայիլ Լարիսոնովիչ, — գրում էր թագավորը հոկտեմբերի 2-ի նամակում, որ սա:ացվեց Տարուտինոյի ճակատամարտից հետո: — Սեպտեմբերի 2-ից Մոսկվան թշնամու ծեսին է. ձեր վերջին զեկույցները 20-ից են. և ամբողջ այս ժամանակի ընթացքում ոչ միայն ոչինչ չի ձեռնարկված թըշնամու զեմ գործելու և նախաթոռ մայրաքաղաքը ազատելու համար, այլ անգամ, ձեր վերջին զեկույցների համաձայն, գութ գետ նահանջել եք ետ: Սերպուխովն արդեն գրավել է թշնամու ջոկատը, և Տուլան, իր նշանակոր ու բանակի համար այնքան անհրաժեշտ գործարանով, վասնզի մեջ է: Ըստ գեներալ Վինչենչերոգեի զեկույցների՝ ես տեսնում եմ, որ թշնամու 10 000-անոց կորպուսը շարժվում է դեպի Պետերբուրգի ճանապարհը: Մի ուրիշը, մի բանի հազարանոց, նույնպես տարվում է դեպի Դիմիտրով: Երրորդն առաջ է շարժվել Վլադիմիրի ճանապար-

Հովկ: Զորբորդը, բավական նշանակալին, կանգնած է Ռուզափ և Մոժայսկի միջև: Իսկ նապոլեոնն ինքը մինչև 25-ը եղել է Սոսկվայում: Հստ բոլոր այս տեղեկությունների, երբ թշնամին ուժեղ ջոկատներով՝ մասնաւել է իր ուժերը, երբ նապոլեոնն ինքը դեռ Մոսկվայում է իր գվարդիայով, հնարավո՞ր է արդյոր, որ ձեր առջեն գտնվող թշնամու ուժերն այնքան զգալի լինեն և թույլ շտան ձեզ հարձակողական գործողություն: Հավանաբար, ընդհակառակը, պեսք է կարծել, որ նա ձեզ հետապնդում է ջոկատներով, կամ գոնե կորպուսով, որը շատ ավելի թույլ է ձեզ վստահած բանակից: Թվում էր, թե սույն հանգամանքներից օգտվելով, դուք կարող էիք հայողությամբ հարձակում գործել ձեզնից թույլ թշնամու վրա և ոչնչացնել նրան կամ առնվազն, ստիպելով նրան նահանջել, մեր ձեռին բարձենք այն նահանգների զգալի մասը, որ այժմ բռնում է թշնամին, և այդպիսուն հետացնենք վտանգը Տուլայից և այլ ներքին մեր քաղաքներից: Ձեր պատասխանաւումությանը կրման, եթե թշնամին ի վիճակի լինի մի զգալի կորպուս ուղարկուի գեպի Պետերբուրգ՝ սպառնալու համար սույն մայրաքաղաքին, ուր շատ զորք էր կառող մնալ, որովհետև ձեզ վստահած բանակով, գործելով վճռականորեն ու եռանդով, դուք բոլոր միջոցներն ունեք խափանելու սույն նոր դժբախտությունը: Հիշեցնեք, որ դուք վիրավորված հայրենիքին պարտական եք պատասխան տալու Մոսկվան կորցնելու համար: Ձեզ վարձատրելու իմ պատրաստակամության փորձեր դուք ունեցել եք: Սույն պատրաստակամությունը չի թուլանա իմ մեջ, բայց ես և Ռուսաստանն իրավունք ունենք սպասելու ձեզնից ամեն մի զանք, հաստատակամություն և հաջողություններ, որոնք գուշակել են տալիս մեզ ձեր խելքը, ձեր ուազմական տաղանդները և ձեր առաջնորդած զոքերի քաջությունը:

Բայց այն ժամանակ, երբ այս նամակը (որն ապացուցում է այն, թե ուժերի էական հարաբերությունն արդեն անդրադաել էր և Պետերբուրգում) ճանապարհին էր, Կուտուզովն այլևս չէր կարող իր հարամանատարության տակ գտնվող բանակը ետ պահել հարձակումից, և ճակատամարտն արդեն տրվել էր:

Հոկտեմբերի 2-ին կազակ Շապովալովը, հեծելագետքի մեջ եղած ժամանակ, հրացանով սպանեց մի նապաստակ և վիրավորեց երկրորդին: Վագելով վիրավորված նապաստակի հետեւից՝ Շապովալովը բավական խորացավ անտառի մեջ և հանդիպեց Մյուրատի բանակի ձախ թերին, որ բանակել էր առանց որևէ նախազգուշական միջոցների: Կազակը, ծիծաղելով, ընկերներին պատմեց, թե ի՞նչպես քիչ էր մնացել, որ ֆրանսացիների ձեռն ընկներ: Խորունիքն, այս պատմությունը լսելով, հայտնեց հրամանատարին:

Կազակին կանչեցին, հարցուփորձ արին, կազակ հրամանատարներն ուզեցին օգտվել այդ դեպքից, որ ձիեր խլեն, բայց գորապետներից մեկը, որ ծանոթություն ուներ բանակի բարձր պաշտոնատարների հետ, այս փաստը հաղորդեց շտարի գեներալին: Վերջինը բանակի շտարում կացությունը ծայր աստիճան լարված էր: Երմոլովը մի քանի օր գրանից առաջ, Բենիգսենի մոտ գալով, աղերսում էր նրան՝ իր ազգեցությունը գործ դնել զիսավոր հրամանատարի վրա, որ հարձակում սկսեն:

— Եթե ես ձեզ շնանաշեի, կարող էի կարծել, թե դուք շեք ցանկանում այն, ինչ խնդրում եք: Բավական է, որ ես նրան խորհուրդ տամ մի բան, որպեսզի գերապայծառը հավանորեն անի հակառակը, — պատասխանեց Բենիգսենը:

Կազակների տեղեկությունը, որ հաստատվեց ուղարկված չէծլաղետքերի կողմից, վերջնականապես ապացուցեց, որ գեպերը հասունացել են: Գգված լարը ցատկեց, և ժամացուցը ֆլագ ու կուրանտները նվագեցին: Չնայած իր ամրող կարծեցյալ իշխանությանը, իր ինքը ին, փորձառությանը, մարդ ճանաշելուն, Կուտուզովը, — նկատի առնելով Բենիգսենի գըրությունը, Բենիգսենի, որ անձամբ թագավորին ուղարկել էր գեկուցյ, որն արտահայտում էր բոլոր գեներալների միկնույն ցանկությունը, թագավորի՝ իր ենթադրյալ ցանկությունը և կազակների տեղեկությունը, — այլևս չկարողացավ զսպել անխուսափելի շարժումը, հրաման տվեց անել այն, ինչ ինքը համարում էր անօգուտ ու վնասակար, — և օրհնեց կատարված փաստը:

Բննիգսենի գրությունը և կազակների տեղեկությունը՝ քրանսական ձախ թևի բաց լինելու մասին՝ վերջին նշաններն էին, որ անհրաժեշտ դարձրին հարձակման հրաման տալու, և հարձակումը նշանակվեց հոկտեմբերի 5-ին:

Հոկտեմբերի 4-ի առավոտյան Կուտուզովն ստորագրեց դիսպոզիցիան: Տուն այն կարդաց Երմոլովին, առաջարկելով գրալվել հետագա կարգադրություններով:

— Լավ, լավ, ես հիմա ժամանակ չունեմ, — ասավ Երմոլովը և գուրս եկավ խրճիթից:

Դիսպոզիցիան, որ կազմել էր Տոլլը, շատ լավն էր: Նույն պես, ինչպես Առևտերլիցյան դիսպոզիցիայում, գրված էր թեև ոչ գերմաններն:

Die erste Colonne marschierte<sup>1</sup> այսինչ և այսինչ տեղը, die zweite Colonne marschierte<sup>2</sup> այսինչ և այնինչ տեղը և այն: Ու բոլոր այդ զորայունները թղթի վրա նշված ժամանակին հասնում էին իրենց տեղը և շարդում թշնամուն: Ամեն ինչ ինչպես և բոլոր դիսպոզիցիաններում, հիանալի էր մտածված ու, ինչպես և բոլոր դիսպոզիցիաններում, ոչ մի զորայատն աշխավ իր ժամանակին և իր տեղը:

Երբ դիսպոզիցիան պատրաստ էր անհրաժեշտ օրինակների քանակով, կանչվեց մի սպա և ուղարկվեց Երմոլովի մոտ, որպեսզի թղթերը հանձնի նրան ի գործադրություն: Կավալերդարդյան շահել սպան, Կուտուզովի պատվիրակը, գոհ իրեն արված հանձնարարության կարևորությամբ, ձին քշեց գնաց Երմոլովի բնակարանը:

— Գնացին, — պատասխանեց Երմոլովի սպասյակը: Կավալերդարդյան սպան գնաց այն գեներալի մոտ, ուր Երմոլովը հաճախ էր լինում:

— Զկա, գեներալն էլ այստեղ չի: Կավալերդարդյան սպան սպան ձին նոտած գնաց մի ուրիշի մոտ: — Զկա, մէկնեցին:

«Ինչպես անեմ, որ պատասխանատու չհամարեն ուշանալու համար: Այ քեզ անսախորժություն», — մտածում էր սպան: Նա ձիով շրջեց ամբողջ ճամբարը: Մեկն ասում էր, որ տեսել են, թե ինչպես երմոլովը ուրիշ զեներալների հետ գնաց ինչոր տեղ. ումանք ասում էին, թե հավանորեն նորից տուն է գնացել: Սպան, առանց ճաշելու, նրան փնտրեց մինչև երեկոյան ժամը 6-ը: Երմոլովը շկար ոչ մի տեղ և ոչ ոք չփառեր, թե նա որտեղ է: Սպան շտապ-շտապ մի բան կերավ ընկերոց մոտ և նորից ձի նստեց գնաց ավանդաբորդ՝ Միլորադովիչի մոտ: Միլորադովիչը նույնպես տանը չէր, բայց այստեղ նրան սպան, թե Միլորադովիչը գտնվում է պարահանդեսում՝ գեներալ կիկինի տանը, թե երեկի Երմոլովն էլ այնտեղ է:

— Բայց այդ որտե՞ղ է:

— Հըկինում, — ասավ կազակ սպան, ցույց տալով հեռվում գտնվող կալվածատիրական տունը:

— Բայց ինչպես այնտեղ, զորաշղթայի այն կողմը:

— Մերոնցից երկու գունդ ուղարկեցին շղթա կազմելու. այնտեղ հիմա մի այնպիսի կերուխում է, սարսափելի: Երկու երածշտախումբը:

Սպան քշեց գնաց զորաշղթայի այն կողմը՝ դեպի Եշկին: Դեռ հեռվից, տանը մոտենալով, նա լսեց զինվորական պարեղանակի ուրախ, ներդաշնակ հնչումներ:

— «Յօ-օլոյձհԽ... Յօ-օլոյձհԽ...», — լսվում էր սուլոցի ուրամբի հետ միասին, որ երբեմն խլանում էին ձախների ազագակից: Սպան և՛ ուրախացավ այդ հնչումներից, բայց միաժամանակ և՛ սարսափելի վատ զգաց, որ մեղավոր է՝ այսքան երկար ժամանակ տեղ չի հասցրել իրեն հանձնարարված կարենոր հրամանը: Արդեն 9-րդ ժամն էր երեկոյան: Նա ձիուց իշավ և մտավ մեծ, անվնաս մնացած կալվածատիրական տան պատըշգամբը: Այդ տունը գտնվում էր ոռուսների և ֆրանսացիների բանակների մեջտեղը: Բուժետում և նախասենյակում լակեյները իրար էին անցել գինիներով, ուտելիքներով: Լուսամուտների տակ կանգնած էին երգիչները: Սպային տարան ներս, և դուս միշտ նա տեսավ հանկարծ բանակի բոլոր կարեսրագունդ գեներալներին, դրանց թվում է Երմոլովի իշոր, աշքի ընթառդ կերպարանքը: Բոլոր գեներալներն իրենց սյուլթուկ-

<sup>1</sup> Առաջին զորայատնը քայլում է...

<sup>2</sup> Երկրորդ զորայատնը քայլում է...

Ների կոճակներն արձակած, կարմրած, աշխույժ դեմքերով կիսաշրջան կազմած՝ ծիծաղում էին բարձր: Դահլիճի մերտեղը մի գեղեցիկ, ոչ բարձրահասակ, կարմիր գեմքով զեներալ աշխուժորեն ու ճարպիկ դոփապար էր պարում:

— Հա՛ հա՛ հա՛: Էյ, նիկոլայ Իվանովիչ, Հա՛ հա՛ հա՛...

Սպան զգաց, որ իր կարևոր հրամանով ներս մանելով այդ րոպեին, ինքը զառնում է կրկնակի մեղավոր, և նա ուզեց սպասել. բայց գեներալներից մեկը տեսավ նրան և, իմանալով ինչի է եկել, հայտնեց երմոլովին: Երմոլովը խոժոռած դեմքով դուրս եկավ սպայի մոտ և, նրան լսելով, թուղթն առաջ ձեռից, ոչ մի բան շասելով նրան:

— Դու կարծում ես նա պատահաբա՞ր է գնացել,— ասավ այդ երեկո կավալերզարդան սպայի շտարական ընկերը երմոլովի մասին: — Դրանք խաղեր են, այդ բոլորը դիտմամբ է արված: Կոնովնիցինը կստանա. Տես վաղն ի՞նչ աղմուկ է լի. նելու:

## V

Մյուս օրը վաղ առավոտ զառամյալ կուտուզովը արթնացվ, վեր կացավ, աղոթեց աստծուն, հագնվեց և այն տհան գիտակցությամբ, թե ինքը պետք է զեկավարի կորվը, որին ինքը հավանություն չէր տվել, կառք նստեց և Տարուտինոյից հինգ վերստ ներս գտնված լետաշովկայից դուրս եկավ գնաց դեպ այն տեղը, ուր հավաքվելու էին ճարձակման գնացող գրասյուները: Կուտուզովը գնում էր քնելով ու զարթնելով, և ականջ էր զնում, թե աչ կողմից կրակոցներ չկա՞ն արդյոք և արդյոք կոփվը չի՝ սկսվել: Բայց ամեն ինչ տակավին լուր էր: Սկսվում էր միայն աշնանային խոնավ ու մառախլապատ օրվա լուսաբացը: Տարուտինոյին մոտենալով՝ կուտուզովը նկատեց հեծելակներ, որոնք ծիերը տանում էին ջրելու այն ճանապարհով, որով գնում էր նրա կառքը: Կուտուզովը լավ նայեց նըրանց, կառքը կանգնեցրեց և ճարցրեց, թե ո՞ր գնդից են: Ճեծելակներն այն զորայունից էին, որը պետք է արդեն շատ առաջ գնացած՝ հեռու դարձանում լիներ: «Ախալմունք է, երկի», —

մտածեց ծերունի գլխավոր հրամանատարը: Բայց, ավելի առաջ գնալով, կուտուզովը տեսավ հետեւակ գնդեր, հրացանները խալմերուկ դրած. տեսավ զինվորներ, որ շիլա էին ուտում, փայտ էին տանում, անդրավարտիքով էին: Կանչեց մի սպայի: Սպան հայտնեց, թե ո՞ր մի հրաման չի եղել կովի դուրս գալու մասին:

— Խնչպես թե շի...— սկսեց կուտուզովը, բայց իսկույն էլ լրեց և հրամայեց իր մոտ կանչել ավագ սպային: Կառքից ինչելով, գլուխը կախած ու ծանր շնչելով, անխոս սպասելով՝ նա ետ ու առաջ էր անում: Երբ ներկայացավ պահանջված՝ գլխավոր շտարի սպա էյխենը, կուտուզովը կարմրեց ոչ թե այն պատճառով, որ սիւլի մեղքն սպայինն էր, այլ նրա համար, որ նա արժանի օրյեկտ էր իր զայրույթը թափելու համար: Եվ, դողալով, շնչահեղձ լինելով, ծերունին, հասնելով այնպիսի կատաղության, որին ի վիճակի էր հասնելու, երբ նա կատաղությունից գետին էր թափալվում, նա ճարձակվեց էյխենի վրա, ձեռներով սպանալով. գոռալով ու փողոցային խոսքերով հայոյելով: Այդտեղ պատահած մեկ ուրիշը՝ կապիտան Բրոգինը, բոլորովին անմեղ մի մարդ, ենթարկվեց նույն վիճակին:

— Խսկ սա ի՞նչ սրիկա է: Գնդակահարե՛լ: Սրիկանե՛ր, — խոպոտ գոռում էր նա, ձեռները թափահարելով ու երերովելով:

Նա ֆիզիկական տանշանք էր զգում: Նա՝ գլխավոր հրամանատարը, գերապայծառը, որին բոլորը հավատացնում են, թե ոչ ոք երբեք Ռուսաստանում այդպիսի իշխանություն չի ունեցել, ինչպես ինքը, նա դրված է այս կացության մեջ՝ ծիծաղելի է դարձած ամբողջ բանակի առաջ: «Իզո՞ւ շարշարվեցի աղոթել այսօրվա համար, իզո՞ւ զիշերը շքնեցի և ամեն կշռադատեցի, — մտածում էր նա ինքն իր մասին: — Երբ փոքր տղա-սպա էի, ոչ ոք չէր համարձակվի այսպես ծաղըել ինձ... Խսկ հիմա՞»: Նա ֆիզիկական տանշանք էր զգում, ինչպես մարմնական պատժից, և չէր կարող շարտահայտել այն զայրալից ու տանշագին ծիչերով. բայց շուտով նրա ուժերը թուլցան, և նա, շուրջը նայելով, զգալով, որ շատ վատ բաներ ասավ, կառք նստեց ու ետ գնաց անխոս:

Արտահայտված զայրույթն այլևս շվերադարձավ, և կուտուզունի 101

գովզ, աշքերը թույլ թարթելով, լսում էր թենիզսենի, կոնովնիցինի և Տոլի (Երմոլովն ինքը չերկայացավ նրան մինչեւ մյուս օրը) արդարացումը և պաշտպանության խոսքերն անմասին, որպեսզի նույն անհաջող շարժումը կատարեն մյուս օրը: Եվ կոտուզովն ստիպված էր նորից համաձայնել:

## VI

Մյուս օրը զորքերը երեկոյից հավաքվեցին նշանակված տեղերում և գիշերն առաջ շարժվեցին: Աշնանային գիշեր էր՝ սև-մանիշակագույն ամպերով, բայց առանց անձրեւ: Հողը խոնավ էր, բայց ցեխ չկար, և զորքերը գնում էին անաղմուկ, միայն երբեմն թույլ կերպով լսվում էր հրետանու գրնչոցը: Արգելված էր բարձր խոսել, ծխամորճ ծխել, կայծքարից կրակ հանել: Ճիշտին թույլ չէին տալիս վրնջալ: Ձենարկության խորհրդակորությունն ավելացնում էր նրա գրավությունը: Մարդիկ քայլում էին ուրախ: Մի քանի զորայուներ, կանգ առնելով, հրացանները դրին խաշմերուկ և պառկեցին սար հողին, կարծելով, թե եկել են այնտեղ, ուր պետք էր. մի քանի (մեծամասնությունը) զորայուներ քայլեցին ամբողջ գիշերը և, ակներև, մտան ոչ այնտեղ, ուր պետք էր:

Կոմս Օոլով-Դենիսովը կազակների հետ (ամենաաննշան զորամասը մյուս բոլորի մեջ) միայն հասավ իր տեղը և ժամանակին: Այդ զորամասը կանգ առավ անտառի ծայրին՝ Ստրոմի լովայա գյուղից գետի Դմիտրովսկոյի տանող շավզի վրա:

Լուսադեմին ննջած կոմս Օոլովին արթնացրին: Բերել էին Փրանսական ճամբարից փախած մեկին: Դա լեհացի ենթասպա էր՝ Պոնյատովսկու կորպուսից: Այդ ենթասպան լեհերեն բացատրեց, թե ինքը փախել է այն պատճառով, որովհետեւ իրեն վիրավորել են ծառարության գծով, թե ինքը վաղուց պետք է սպա լիներ, թե ինքը բոլորից քաշ է և այդ պատճառով նրանց լողել է հեռացել և ուզում է նրանց պատմել: Նա ասում էր, թե Երկրատը դիշերում է նրանցից մի վերստ հեռու և թե, եթե իրեն հայուր մարդ տան ուղեկցուրդ, ինքը նրան ողջ կրոնի, գերի էլիւցնի: Կոմս Օոլով-Դենիսովը խորհրդակցեց իր ընկերների

հետ: Առաջարկը շատ էր հրապուրիչ, որ կարելի լիներ հրաժարվել: Բոլորն առաջարկում էին գնալ, բոլորը խորհուրդ էին տալիս փորձել: Երկար վեճերից ու խորհրդածելուց հետո գեներալ-մայոր Գրեկովը որոշեց գնալ երկու կազակային գնդով, հետը վերցնելով ենթասպային:

— Դե, հիշիր ուրեմն,— ասավ կոմս Օոլով-Դենիսովը ենթասպային, նրան արձակելով,— եթե խաբեցիր՝ հրամայեմ շան պես կախել քեզ, իսկ եթե ճիշտ եղավ՝ հարյուր շերվոնեց:

Ենթասպան վճռական գեմքով չէր պատասխանում այդ խոսքերին, ծի հեծավ և գնաց արագորեն ճանապարհ ընկած Գրեկովի հետ: Նրանք աներեսութացան անտառում: Կոմս Օոլովը, կուշ գալով բացվող առավոտի զովությունից, հուզված, որ ինքը գործ է ձեռնարկում իր պատասխանատվությամբ, Գրեկովին ճանապարհելով, զուրս եկավ անտառից և ակսեց գիտել թշնամու ճամբարը, որ խարուսիկորեն այժմ երևում էր բացվող առավոտի և հանգող խարույների լույսերի մեջ: Կոմս Օոլով-Դենիսովից գետի այց, բաց լանջի վրա պետք է երկային մեր զորայուները: Կոմս Օոլովը նայում էր այն կողմը, բայց չնայած այն բանին, որ հեռվից նրանք պետք է նկատվեին, այդ զորայուները չէին երեսում: Ֆրանսական ճամբարում, ինչպես թվաց կոմս Օոլով-Դենիսովին, և մանաւանդ իր շատ սրատես աղյուտանտի ասելով, սկսում էին շարժվել:

— Ախ, իսկապես որ ուշ է,— ասավ կոմս Օոլովը, նայելով ճամբարին:

Նրան հանկարծ, ինչպես այդ հաճախ է պատահում, երբ մարդը, որին հավատացել ենք, այլս մեր աշքի առաջ չէ, նրան հանկարծ միանգամայն պարզ և ակներև դարձավ, որ այդ ենթասպան խարեբա է, որ նա ստել է և հիմա փշացնելու է հարձակման գործը՝ այդ երկու գնդի բացակայությամբ, որոնց նա աստված գիտի ո՛ւր է տանելու: Կարելի՝ է արդյոք զորքերի մի այդպիսի զանգվածի մեջ զլիավոր հրամանատար բռնել:

— Իսկապես, նա ստում է, այդ ստահակը,— ասավ կոմւր:

— Կարելի է ետ գարձնել, — ասավ շքախմբի անդամներից մեկը, որը նույնպես, ինչպես և կոմս Օոլով-Դենիսովը, անվտահության զգացում ունեցավ ձեռնարկության նկատմամբ, երբ ճամբարին նայեց:

— Հը՞, հսկապե՞ս... ի՞նչ եք կարծում: Թե՞ թողնենք թե՞ ոչ:

— Կհրամայե՞ք ետ դարձնել:

— Ե՞տ, ե՛տ դարձնել, — հանկարծ վճռաբար ասավ կոմս Օռլովը, ժամացույցին նայելով: — Ուշ կլինի, բոլորովին չուսացել է:

Եվ ադրստանտը ձի նստած անտառով սլացավ Գրեկովի հետեւց: Երբ Գրեկովը վերադարձավ, կոմս Օռլով-Դենիսովը, հուզված թե այդ լավ դասից, թե հետևակ զորայուներին իդուր սպասելուց, որ դեռևս չէին երեւմ, թե թշնամու մոտիկությունից (նրա զորամասի բոլոր մարդիկ գգում էին նույնը), վճռեց հարձակվել:

Նա շնչալով հրաման տվեց. «Հեծնել»: Դասավորվեցին, երեսնին խաչակնքեցին... «Աստված օգնական»:

— Ուռաաա՝, — թնդաց անտառում, և հարյուրյակ հարյուրյակի հետեւց, ինչպես տոպրակից դուրս թափվեն, կազակներն ուրախ, տեգերը հորիզոնակի բռնած, դետով վագեցին դեպի ճամբարը:

Լսվեց կազակներին տեսնող առաջին ֆրանսացու հուսահատ, վախեցած ճիշը — և ամենքը, ովքեր կային ճամբարում, շնագնված, քնաթաթախ, թողին թնդանոթներ, հրացաններ, ձիեր և փախան ո՛ւր կարող էին:

Թթե կազակները հետապնդեին ֆրանսացիներին, ուշ լրդարձնելով, թե ինչ կա իրենց հետեւ ու իրենց շուրջը, նրանք կիրցներին թե՛ Սյուրատին, թե՛ ամենը, ինչ կար այդտեղ: Զորապետներն այդ էլ ուզում էին: Բայց անկարելի էր տեղից շարժել կազակներին, երբ նրանք հասել էին ավարի և գերիների: Ոչ ոք կարգադրություն չէր լսում: Հենց այդտեղ վերցրին 1500 գերի, 38 թնդանոթ, գրոշակներ և, որ ամենից կարևոր էր կազակների համար, ձիեր, թամբեր, վերմակներ և զանազան իրեր: Սյս բոլորը պետք էր կառավարել. հավաքել գերիներին, թնդանոթները, բաժանել ավարը, գոռալ, անգամ կովել միմյանց հետ. կազակներն զբաղվեցին այս ամենով:

Ֆրանսացիները, այլևս շնետապնդվելով, սկսեցին սթափել, զորախմբեր կազմեցին ու սկսեցին կրակել: Օռլով-Դենիսովը շարունակ սպասում էր զորայուներին և էլ առաջ չէր գնում:

Մինչդեռ դիսպորդիցիայով, die erste Colonne marschirt և այլն. ուշացած զորայուների հետևակ զորքերը, որոնց ղեկավարում էր Բենիգսենը և կառավարում Տոլը, առաջ շարժվեցին ինչպես հարկն է, և ինչպես միշտ լինում է, գնացին ինչոր տեղ, բայց ոչ այնտեղ, ուր նշանակված էր գնալ: Ինչպես և միշտ լինում է, մարդիկ, ուրախ գուրս գալով, սկսեցին կանգ առնել. լսվեցին դժգոհություններ, շփոթության խոսքովանություն ու շարժվեցին ետ՝ ինչոր կողմի վրա: Սրարշավ եկած աղուտանտներն ու գեներալները գոռում էին, բարկանում, կովշտում, ասում էին, թե բոլորովին այնտեղ շեն եկել և ուշացել են, հայոցում էին ինչոր մեկին և այլն, ու վերջապես բոլորը ձեռ թափ տվին ու գնացին միայն նրա համար, որպեսզի գնան որեւէ տեղ: — «Մի տեղ, երեխ, համանենք»: Եվ, իսկապես, եկան-հասան, բայց ոչ այնտեղ, իսկ որոշ մասեր էլ հասան անտեղ, բայց այնպես էին ուշացել, որ բոլորովին անօգուտ, միայն նրա համար, որ իրենց վրա կրակեն: Տոլը, որ այս կովում կատարում էր այն գերը, ինչ Վեյրուտերը՝ Առևտերլիցի կովում, հոգածույթ և մթ սլանում էր տեղից տեղ և ամենուրեք տեսնում էր հակառակը: Այդպես նա սրարշավ եկավ գեմ առավ Բագովուախի կորպուսին անտառում, երբ արդէն բոլորովին լուսացել էր, իսկ այդ կորպուսը վաղուց արդեն պետք է լիներ այնտեղ, Օռլով-Դենիսովի հետ: Հուզված ու անհաջողությունից վշտացած և կարծելով, թե որեւէ մեկը մեղավոր պիտի լինի այս բանում, Տոլը սրընթաց գնաց կորպուսի հրամանատարի մոտ և խստորեն սկսեց կշտամբել նրան, ասելով, թե դրա համար գնդակհարել է պետք: Բագովուախը, ծեր, ուազմիկ ու հանգիստ մի գեներալ, նույնպես տանչված այդ բոլոր կանգառումներից, շփոթից, հակասություններից, ի զարմանս բոլորի, իր բնավորությանը միանգամայն հակառակ, կատաղեց և շատ անախորդ բաներ ասավ Տոլին:

— Ես ոչ ոքից դասեր առնել շեմ ուզում, բայց իմ զինվորներով կարող եմ մեռնել ուրիշներից ոչ պակաս, — ասավ նա և, մի դիվիզիա վերցնելով, առաջ անցավ:

Դուրս գալով դաշտը՝ ֆրանսական կրակոցների տակ, բորբոքված ու քաջ Բագովուախը, էլ շմտածելով, թե մի դիվիզիայով իր կովի մեջ մտնելը օգտակար է թե անօգուտ, գնաց ուղիղ

և զորքը տարավ կրակոցների տակ: Վտանգը, ոռւմբը, գնդակները հենց այն էին, ինչ հարկավոր էին նրան իր ցասումնալից տրամադրության մեջ: Առաջին գնդակներից մեկն սպանեց նրան, հետևյալ գնդակներն սպանեցին շատ զինվորների: Եզ նրա դիվիզիան միառժամանակ անօգուտ կանգնեց կրակի տակ:

## VII

Մինչդեռ ճակատից մի ուրիշ զորասրւն պետք է հարձակվեր ֆրանսացիների վրա, բայց այդ զորասրւնի հետ էր Կուտուզովը: Նա լավ գիտեր, որ խառնաշփոթությունից բացի, ոչինչ չի դուրս գալու այդ, իր կամքի հակառակ սկսած, ճակատամարտից, և, որքան որ այդ կախված էր իրենից, զորքերը պահում էր: Նա չէր շարժվում:

Կուտուզովն անխոս անցնում էր իր մոխրագույն ձիուն նստած, ծուլորեն պատասխանելով հարձակում գործելու առաջարկներին:

— Չեր բոլորիդ լեզվի վրա հարձակվելն է, բայց չեք տեսնում, որ չենք կարող բարդ մաներներ կատարել, — ասավ նա Միլորադովիչին, որ խնդրում էր առաջ շարժվել:

— Առավոտը շկարողացաք Մյուլրատին ողջ գերի վերցնել և ժամանակին տեղ հասնել: Հիմա էլ անելու բան չկա, — պատասխանեց նա մյուսին:

Երբ Կուտուզովին զեկուցեցին, թե ֆրանսացիների թիկունքում, ուր կազակների տեղեկություններով, առաջ ոչ ոք չկար, հիմա լեհական երկու գումարտակ կար, նա խեթ նայեց ետ՝ նրմալովին (նա երեկվանից գեռ չէր խոսում նրա հետ):

— Ահավասիկ, խնդրում են հարձակվել, առաջարկում են զանազան ծրագիրներ, բայց հենց որ սկսում ես գործի անցնել, ոչինչ պատրաստ չէ, և նախազգուշացված թշնամին ձեռք է առնում իր միջոցները:

Երմոլովն աշքերը կկոցեց և թեթևակի ժապաց, այդ խոսքերը լսելով: Նա հասկացավ, որ իր համար փաթթրիկն անցել է որ Կուտուզովը կսահմանափակվի այդ ակնարկով:

— Այդ ինձ է հեգնում նա, — կամացուկ ասավ երմոլովը, ծնկով հրելով կողքին կանգնած Ռաևսկուն:

Ծուտով դրանից հետո երմոլովը գնաց կանգնեց Կուտուզովի առաջ և ասավ հարգալիր.

— Ժամանակը բաց չինք թողել, ձերդ վսեմություն, թըշնամին չի գնացել: Եթե կհամարակայե՞ք հարձակում գործել: Թե չէ զվարդիան ծուփ էլ չի տեսնի:

Կուտուզովը ովհնչ շասավ, բայց երբ հայտնեցին, թե Մյարատի գորքերը նահանջում են, նա հարձակում հրամայեց, բայց յուրաքանչյուր հարցուր բայցի վրա կանգ էր առնում երեք քառորդ ժամ:

Ամբողջ կոփվը եղավ միայն այն, ինչ արին Օոլով-Դենիսովի կազակները. մնացած զորամասերը իզուր տեղը միայն կորցրին մի քանի հարյուր մարդ:

Այդ ճակատամարտի հետևանքով Կուտուզովն ստացավ ալմաստյա շքանշան, Բենիգսենը նույնպես՝ ալմաստներ և հարյուր հազար ոուրի, մյուսներն աստիճանի համեմատ ստացան նույնպես շատ հաճելի բաներ, և այդ ճակատամարտից հետո դարձյալ նոր փոփոխություններ կատարվեցին շտարում:

«Ելի ինչպես է մեզ մոտ միշտ լինում, ամեն ինչ հակառակ», — ասում էին Տարուտինոյի ճակատամարտից հետո ոուս սպաներն ու գեներալները, ճիշտ այնպես, ինչպես ասում են հիմա, զգացնել տալով, թե հիմարի մեկն է այնտեղ այդպես թարսակառակ բաներ անում, բայց մենք այդպես չէինք անի: Սակայն այդպես խոսող մարդիկ կա՝ մ շփուեն գործը, որի մասին խոսում են, կամ դիտմամբ խարում են իրենց: Ամեն տեսակ ճակատամարտ — Տարուտինոյինը, Բորոդինոյինը, Ալլուցինը — այնպես չի կատարվաւ, ինչպես ենթադրում են կարգադրիչները: Սա էական պայման է:

Անթիվ-անքանակ ազատ ուժեր (որովհետեւ ոչ մի տեղ մարդ ավելի ազատ չի լինում, քան ճակատամարտի ժամանակ, ուր կյանքի և մահի խնդիր է լինում) ազդում են ճակատամարտի ուղղության վրա, և այդ ուղղությունը երբեք չի կարող հայտնի լինել առաջուց և երբեք չի զուգադիպում մեկ ուժի ուղղության հետ:

## VIII

Եթե շատ միաժամանակ և տարբեր ուղղությամբ գործող ուժերը ներգործում են որևէ մարմնի վրա, ուստի այդ մարմնի շարժման ուղղությունը չի կարող զուգադիպել ուժերից ոչ մեկին; այլ կլինի միշտ միջինը, ամենակարճ ուղղությունը, — այն, ինչ մեխանիկայում արտահայտվում է ուժերի զուգահեռագծի անկյունագծով:

Եթե պատմագիրների, մանավանդ ֆրանսացիների, նկարագրության մեջ մենք գտնում ենք, որ նրանց մոտ պատերազմներն ու ճակատամարտերը կատարվում են առաջուց որոշած ծրագրով, ապա միակ եզրակացությունը, որ մենք կարող ենք անել դրանից, այն է, որ այդ նկարագրությունները ճշշտ չեն:

Տարրութինոյի ճակատամարտը, հայտնապես, շհասավ այն նպատակին, ինչ նկատի ուներ Տոլը. կարողվ, ըստ գիսապողից իայի, կովի մեջ քաշել զորքերը. և այն, որ կարող էր անել կոմս Օոլովը՝ գերել Մյուրատին. կամ մի ակնթարթում ամբողջ կորպուսը ոչնչացնելու նպատակը, որ կարող էին ունենալ թենիգսենն ու մյուսները. կամ սպայի նպատակը, որ ցանկանում էր մասնակցել կովի և աշրի ընկնել. կամ կագակի նըպատակը, որ ցանկանում էր ավելի ավար ձեռք ռերել, քան ձեռք էր բերել և այլն: Բայց եթե նպատակն այն է եղել, ինչ իսկապես կատարվեց, և այն, որ բոլոր ոռու մարդկանց համար այն ժամանակ ընդհանուր ցանկություն էր (ֆրանսացիներին առտաքսելն Ռուսաստանից և նրանց բանակը ոչնչացնելը), ապա միանգամայն պարզ կլինի, որ Տարրութինոյի ճակատամարտը, հենց նրա անհամապատասխանությունների հետևանքով, հենց անհարին է մտածել որևէ ելք այդ ճակատամարտից ավելի նպատակահարմար, քան այն, ինչ նա ունեցավ: Ամենաքիշ լարումով, մեծագույն խառնաշփոթության մեջ և ամենաշնչին կորուսով ստացվեցին ամենամեծ հետևանքները ամբողջ պատերազմի ընթացքում, նահանջից անցան հարձակման, պարզեց ֆրանսացիների թուլությունը և տրվեց այն հարվածը, որին հենց սպասում էր նապոլեոնյան զորքը՝ փախուստները:

Նապոլեոնը Մոսկա է մտնում de լա Մօսկօվա փայլուն հալթանակից հետո. հաղթանակի նկատմամբ կասկած չի կարող լինել, որովհետև ճակատամարտի դաշտը մնում է ֆրանսացիներին: Ռուսները նահանջում են և մայրաքաղաքը հանձնում: Մոսկվան, լիբր պարենամթերքով, զենքով, ուումբերով ու անհամար հարսությամբ, նապոլեոնի ձեռին է: Ռուսական զորքը, ֆրանսականից կրկնակի թույլ, մի ամսվա ընթացքում հարձակման ոչ մի փորձ չի անում: Նապոլեոնի դրությունն ամենափայլունն է: Նրա համար, որպեսզի կրկնակի ուժերով ընկնի ռուսական բանակի մնացորդների վրա և ջարդի. Նրա համար, որպեսզի ձեռք բերի շահավետ հաշտություն կամ, մերժման զեպքում, սպառնալից շարժում կատարի զեպի Պետերբուրգ. Նրա համար, որպեսզի անգամ անաջողության դեպքում, վերադառնա Սմոլենսկ կամ Վիլնո, կամ մնա Մոսկայում. Նրա համար, մի խոսքով, որպեսզի պահեր այդ կալուն դիրքը, որի մեջ գտնվում էր այն ժամանակ ֆրանսական զորքը. Թվում էր թե հարկավոր չէր առանձին հանճարեղություն: Դրա համար հարկավոր էր անել ամենապարզ և հեշտ բանը. Թույլ շտալ, որ զորքերը կողոպտեն, պատրաստել ձմեռային հագուստներ, որ Մոսկվայում կփոնվեր ամբողջ բանակի համար, և կանոնավոր հավաքել Մոսկվայում գտնված ավելի բան կես տարվա (ֆրանսական պատմագիրների ասելով) պարենամթերքը՝ ամբողջ զորքի համար: Նապոլեոնը, այդ հանճարեղությունը հանճարեղից և բանակը զեկավարելու իշխանություն ունեցողը, ինչպես պնդում են պատմագիրները, «վնչ շառավ գրա համար»:

Նա ոչ միան ոյինչ շարավ, այլ, ընդհակառակը, իր ամբողջ իշխանությունը զործագրեց, որպեսզի իր առջև եղած գործունեության բոլոր ուղիներից ընտրի այն, որն ամենից ավելի տիմար էր և կործանարար: Այն ամենից, ինչ կարող էր անել նապոլեոնը. Ճմեռել Մոսկվայում, գնալ Պետերբուրգ, գնալ զեպի նիժնի-Նովգորոդ, գնալ ետ, ավելի հյուսիս կամ ավելի հարավ այն ճանապարհով, որով հետո գնաց Կուտուզովը, ու ինչ մտածեր ավելի հիմար ու կործանարար այն բանից, ինչ

արավ նապոլեոնը, այսինքն՝ մինչև հոկտեմբերը մնալ Սոսկ վայում, թույլ տալով զորքին կողոպտել քաղաքը. հետո, առ տանվելով թողնել կայազոր, դուրս գալ Մոսկվայից, մոտենալ Կուտուզովին, կորիկ չակսել, գնալ դեպի աջ, հասնել մինչև Մալի Յարոսլավեց, կրկին շփորձել դուրս գալու պատահականությունը, գնալ ոչ այն ճանապարհով, որով գնաց Կուտուզովը, այլ գնալ ետ՝ դեպի Մոժայսկ՝ Մոլենսկի քայլայիշած ճանապարհով, — դրանից ավելի տխմար, ավելի կործանարար բան զորքի համար չէր էլ կարելի մտածել, ինչպես և ցույց տվին հետևանքները: Թող ամենահմուտ ստրատեգիկները մրտածեն, — երեկակյելով թե նապոլեոնի նպատակն այն էր, որ կործանի իր բանակը, — թող մտածեն գործողությունների այլ շարք, որը նույնպես անկասկածելիորեն ու անկախ այն բոլորից, ինչ էլ ձեռնարկեին ուսւ զորքերը, այդպես կարողանար ամբողջովին կործանել ֆրանսական բանակը, ինչպես այն, որ արավ նապոլեոնը:

Հանճարեղ նապոլեոնն այդ արավ: Բայց ասել, թե նապոլեոնն իր բանակը կործանեց այն պատճառով, որ նա ցանկանում էր այդ, կամ այն պատճառով, որ նա շատ հիմար էր, ճիշտ նույնպես անարդարացի կլիներ, ինչպես ասենք, թե նապոլեոնն իր զորքերը Մոսկվա հաօցրեց այն պատճառով, որ ինքը ցանկանում էր այդ, և նրա համար, որ նա շատ խելոք էր և հանճարեղ:

Այս և մյուս դեպքում նրա անձնական գործունեությունը, որ չուներ ավելի զորություն, քան յուրաքանչյուր զինվորի անձնական գործունեությունը, զուգադիպեց միայն այն օրենքներին, որոնց համաձայն կատարվեց անցքը:

Պատմագիրները միանգամայն սխալ են (միայն նրա համար, որ հետևանքները շարդարացրին նապոլեոնի գործունեությունը) ներկայացնում մեզ, որ նապոլեոնի ուժերը Մոսկվայում թուլացած էին: Նա ճիշտ նույնպես, ինչպես և առաջ, ինչպես և հետո, 13 թվին, իր ամբողջ կարողությունն ու ուժը գործադրում էր, որպեսզի լավագույնն անի իր համար և իր բանակի համար: Նապոլեոնի գործունեությունն այդ ժամանակամիջոցում ոչ պակաս զարմանալի է, քան Եգիպտոսում, Իտալիայում, Ավստրիայում և Պրուսիայում: Մենք ճիշտը լ-

գիտենք հաստատու, թե ո՞ր աստիճան իրական էր նապոլեոնի հանճարեղությունը նգիտոսում, ուր 40 դարեր նայում էին նրա վեհության, որովհետեւ բոլոր այդ մեծ քաջագործությունները նկարագրում են մեզ միայն ֆրանսացիները: Մենք ճիշտ չենք կարող գատել այն մասին, թե որքան հանճարեղ է եղել նա Ավստրիայում ու Պրուսիայում, որովհետեւ նրա այնտեղի զործունեության տեղեկությունները պետք է քաղենք ֆրանսական և գերմանական ազբյուրներից: իսկ կորպուսներն առանց կովի գերի տալը և բերդերն սոսանց պաշարումի անըմբնեղի հանճարեղությունը որպես միակ բացատրությունն այն պատերազմի, որը մղվել էր Գերմանիայում: Բայց որ մենք ընդունենք նրա հանճարեղությունը, որպեսզի ծածկենք մեր ամոթը, փառք աստծու, պատճառ շունենք: Մենք վճարել ենք այն բանի համար, որպեսզի իրավունք ունենանք գործին նայել պարզ ու շիտակ և մենք այդ իրավունքը չենք զիշի:

Նրա գործունեությունը Մոսկվայում նույնպես զարմանալի է ու հանճարեղ, ինչպես և ամեն տեղ: Նա Մոսկվա մտնելու օրից և մինչև այնտեղից դուրս գալը արտադրում է հրամաններ հրամանների հետեւց և ծրագիրներ ծրագրերի հետեւց: Բնակիչների և պատգամավորության բացակայությունը և հենց Մոսկվայի հրդեհը նրան չեն շփոթում: Նա աչքաթող մի անումուշի բանակի բարիքը, ոչ թշնամու գործողությունները, ոչ Ռուսաստանի ժողովուրդների բարիքը, ոչ Փարիզի գործերի կառավարումը, ոչ դիվանագիտական նկատառումները՝ հաշարակայացումը առաջիկա պայմանների մասին:

## IX

Ուազմական գծով՝ Մոսկվա մտնելուն պես՝ նապոլեոնը խստիվ հրամայում է գեներալ Սեբաստիանիին՝ հետևել ուսւական բանակի շարժումներին, իր կորպուսներն ուղարկում է զանազան ճանապարհներով և Մյուրատին հրամայում է զըտնել Կուտառուզին: Ապա հոգածու կարգադրություն է անում Կոբեմբ ամրացնելու մասին: հետո ապագա պատերազմի հանճարեղ պլան է գծում Ռուսաստանի ամբողջ քարտեզովը մեկ:

Դիվանագիտական գծով՝ Նապոլեոնն իր մոտ է կանցում կողոպտված ու ցնցոտիազգեստ կապիտան Յակովլեկին, որը շփտեր ինչպես դուրս գա Մոսկվայից, մանրամասն բացատրում է նրան իր ամռողջ բաղաքականությունն ու իր մեծահոգությունը և, գրելով Վլեքսանդր Կայսեր մի նամակ, որի մեջ իր պարտքն է համարում հաղորդել իր բարեկամին ու եղբորը, թե Ռաստոպչինը վատ է տնօրինել Մոսկվայում, նա Յակովլեկին ուղարկում է Պետերբուրգ: Նույնպես մանրամասն բացատրելով իր դիտավորություններն ու մեծահոգությունը Տուտոլմինի առջե, նա այդ ծերուկին էլ է ուղարկում Պետերբուրգ՝ բանակցությունների համար:

Իրավական գծով՝ անմիջապես Մոսկվայի հրդեհներից հետո կարգադրվում է գտնել մեղավորներին և պատժել: Եվ շարադր Ռաստոպչինը պատժված է նրանով, որ կարգադրված է նրա տները վառել:

Վարչական գծով՝ Մոսկվային շնորհվում է սահմանադրություն: Քաղաքային ինքնավարություն է հաստատվում և հրապարակում է հետևյալը.

### «Մոսկվայի բնակիչներ»

Զեր դժբախտությունները դաժան են, բայց նորին մեծություն կայսրը և թագավորն ուզում է վերջ դնել դրանց: Սարսափելի օրինակները ձեզ սովորեցրել են, թե ինչպես է նա պատժում անհնազանդությունը և ոճրագործությունը: Խիստ միջոցներ են ձեռք առնված՝ դադարեցնելու անկարգությունը և վերահաստատելու ընդհանուր անվտանգությունը: Հայրախնամ վարչությունը, որ ընտրված է հենց ձեզնից, կազմելու է ձեր մունիցիալիտետը, կամ բաղաքային վարչությունը: Դա պիտի հոգ տանի ձեր մասին, ձեր կարիքների և ձեր օգուտի մասին: Այդ վարչության անդամները տարբերվում են կարմիր ժապավեններով, որ կրելու են ուսով գցած, իսկ բաղաքագլուխը բացի դրանից ունենալու է սպիտակ գոտի: Բայց, պաշտոնավարության ժամանակից գուրս, նրանք ունենալու են միայն կարմիր ժապավեն՝ ձախ թերին կապած:

Քաղաքային ոստիկանությունը կազմակերպված է նախկին ձեռվ, իսկ նրա գործունեության միջնցով արդեն գոյություն ունի լավագույն կարգը: Կառավարությունը նշանակել է երկու գլխավոր կոմիսար կամ ոստիկանապետներ, և 20 կոմիսարներ, կամ մասնավոր պրիստավներ, որ նշանակված են քաղաքի բոլոր մասերում: Դուք նրանց կճանաշեք ճերմակ ժապավենից, որ նրանք պիտի կրեն ձախ թերի շուրջը: Տարբեր դավագիններում մի քանի եկեղեցիներ բացված են, և նրանցում անարգել կատարվում է աստվածային պաշտամունք: Զեր համարագացինները յուրաքանչյուր օր վերադառնում են իրենց բնակարանները, և հրամաններ են տրված, որ նրանք այնտեղ ստանան օգնություն և հովանավորություն, ինչ պետք է դժբախտությանը: Կառավարության գործադրած սույն էական միջոցները նրա համար են, որպեսզի վերահաստատի կարգը և թեթևացնի ձեր դրությունը. բայց որպեսզի հասնենք այդ բանին, պետք է որ դուք դրան միացնեք ձեր ջանքերը. որպեսզի մոռանաք, եթե կարելի է, ձեր կրած դժբախտությունները. անձնատուր լինեք ոչ այնքան դաժան բախտի հույսին. Հավատացած լինեք, որ անխուսափելի և ամոթալի մաս է սպասում նրան, ով կհանդինի ձեր կյանքի և ձեր մնացած գույքի դեմ, իսկ վերջում կասկած չունենաք, որ դրանք կպահպանվեն, որովհետև այդպես է բոլոր միապետներից մեծագույնի և արդարագույնի կամքը: Ձինվորներ՝ բնակիչներ՝, ինչ ազգության էլ պատկանեք, — վերականգնեցնեք հասարակական վրատահությունը — պետության երջանկության աղբյուրը: Ապրեցեք, ինչպես եղացյաներ. միմյանց օգնեցնեք փոխադարձաբար և հովանավորեցնեք. միացնեք, որ խորտակեք շարամիտների դիտավորությունները. ենթարկեցնեք զինվորական և քաղաքացիական իշխանություններին. և շուտով կդադարեն հոսել ձեր արցումքները»:

Զորքի պարենավորման գծով՝ Նապոլեոնը հրահանգեց բոլոր զորքերին հերթով գնալ Մոսկվա ա լա մարաude<sup>1</sup> իրենց համար պարեն պատրաստելու, այնպես, որպեսզի այդպիսով բանակն ապահովված լինի առաջիկայում:

<sup>1</sup> Մարողություն՝ հինահարություն անել:

Կրոնական գծով Նապոլեոնը հրամայեց բառությունը՝  
Կիբակսել ժամերգությունը եկեղեցինեում:

Առևտրական գծով և բանակի պարենավորման համար՝  
ամենուրեք փակցված էր հետեւյալը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅԱՆ

«Դուք, Մոսկվայի խաղաղ բնակիչներ, արհեստավոր և  
բանվոր մարդիկ, որոնց գժամատությունը հեռացրել է քաղա-  
քից, և դուք, ցրված երկրագործներ, որոնց անհրմն երկուովք  
դեռ պահում է դաշտերում, լսեցե՛ք: Անգորբությունը վերա-  
դառնում է սույն մայրաքաղաքը, և կարգը վերահաստատվում  
է այստեղ: Զեր հայրենակիցները համարձակորեն գուրս են  
գալիս իրենց ապաստարաններից, տեսնելով, որ իրենց հարգում  
են: Նրանց դեմ և նրանց սեփականության դեմ եղած ամեն մի  
բռնություն պատճեն է անհապազ: Ն. մ. Կայսրը և թագավորը  
հովանավորում է նրանց և ձեզնից ոչ մեկին իր թշնամին չի  
համարում, բացի նրանցից, ովքեր չեն հնազանդի իր հրաման-  
ներին: Նա ուղղում է վերջ տալ ձեր գժամատություններին և ձեզ  
վերագրածնել ձեր տներն ու ձեր ընտանիքները: Համեմատայի  
եղեք ուրեմն նրա բարեգործական գիտավորություններին և  
եկեք մեզ մոտ առանց որևէ երկյուղի: Բնակիչնե՛ր: Վստահու-  
թյամբ վերադարձեք ձեր բնակարանները. շուտով գուրք միջոց-  
ներ կգտնեք ձեր կարիքները բավարարելու Սրհեստագործներ  
և աշխատասեր արհեստագործնե՛ր: Վերադարձեք ձեր ձեսա-  
գործ աշխատանքներին. տները, խանութները, պաշտպան  
պահակները սպասում են ձեզ, իսկ ձեր աշխատանքների հա-  
մար գուրք կստանաք ձեր արժանի վարձը: Եվ, վերջապես, գուրք,  
գյուղացիներ, զուրս եկեք անտառներից, ուր թաքնվել եք սար-  
սափից, աներկյուղ վերադարձեք ձեր իրավիթները, այն հաս-  
տատ հավատով, որ պաշտպանություն կգտնեք: Քաղաքում  
բացված են ալրապահեստներ, ուր գյուղացիները կարօգ են  
բերել իրենց պաշարի ավելցուկները և բանապահենու: Կառա-

վարությունը ձեռք է առել հետեւյալ միջոցները, որ ապահովի նրանց ազատ առևտուրը: 1) Այս ամսաթվից սկսած՝ գյուղացիները, հողադրությունները և Մոսկվայի շրջակայրում ապրողները կարող են քաղաք բերել իրենց մթերքները, ինչ տեսակ էլ լինեն դրանք, նշանակված երկու պահեստները, այսինքն՝ Մոխովոյ կողոյ և Օխոտնի ոյագ: 2) Այդ պարենամթերքները նրանցից կզնվեն այն գնով, որով կհամաձայնեն միմյանց հետ զընդունողն ու վաճառողը. բայց եթե վաճառողը չի ստանա իր պահանջած արդար գինը, այդ դեպքում վաճառողն ազատ է իր մթերքը տանել ետ՝ իր գյուղը, որը ոչ ոք ոչ մի կերպ արգելել չի կարող: 3) Շաբաթվայուրաքանչյուր կիրակին ու շորերշաբթին նշանակված են որպես մեծ առևտրական օրեր. դրա համար երկուշաբթի և շաբաթ օրերը բավականաշափ զորք է դրվելու բոլոր մեծ ճանապարհների վրա, քաղաքից այնպիսի մի տարածության վրա, որ պաշտպանի այդ սայլախմբերը: 4) Նույնպիսի միջոցներ ձեռք կառնվեն, որ վերադարձի ճանապարհին գյուղացիներն իրենց սալերի ու ձիերի հետ՝ չեն թարկվեն արգելքների: 5) Անմիջապես միջոցներ են գործադրվելու սովորական առևտուրը վերականգնելու համար: Քաղաքի և գյուղերի բնակիչներ և դուք, գործավորներ ու արհեստավորներ, ինչ ազգության էլ լինեք: Զեք կոչ է արվում կատարել ն. մ. կայսեր և թագավորի հայրական դիտավորությունները և նրա հետ նըպաստել ընդհանուր բարեկեցության: Առ ոտու նորա տարեք հարգանք և վատահություն և մի հապաղեք միանալ մեզ հետու:

Զորքի և ժողովրդի ոգին բարձրացնելու կողմից՝ անդադար զորատեսեր էին կատարվում, պարգևներ էին բաժանվում Կայսրը ձիով շրջում էր փողոցներում և միաթարում բնակիչներին. և, չնայած պետական գործերի ամբողջ հոգացողությանը, ինքն այցելում էր իր հրամանով հրմնված թատրոնները:

Բարեկործության տեսակետից, — բարեգործություն, որը համարվում է թագակիրների լավագույն առաքինությունը, — Նապոլեոնն անում էր նույնպես ամենը, ինչ իրենից կախված էր: Նա հրամայեց աստվածահաճո Հիմնարկների ճակատ ին գրել: Maison de ma mère<sup>1</sup>, այդ ակտով որդիական քննուշ

<sup>1</sup> Օս բնիկ անդամութեանն

զգացմունքը միացնելով միապետի առաքինության վեհության հետ։ Նա այցելեց դաստիարակչական սունը և, թույլ տալով իր փրկած որբերին համբուրել իր սպիտակ ձեռները, ողորմածաւ, բար զրուցեց Տուտումինի հետ։ Հետո, ըստ Թիեզոի պերճախոս շարադրանքի, նա հրամայեց ոռճիկ բաժանել զորքերին սուսական, իր պատրաստած, կեղծ դրամներով։ «Relevant l'emploi de ces moyens par un acte digne de lui et de l'armée française, il fit distribuer des secours aux incendiés. Mais les vivres étant trop précieux pour être donnés à des étrangers, la plupart ennemis, Napoléon aimait mieux leur fournir de l'argent à fin qu'ils se fournissent au dehors, et il leur fit distribuer des roubles papiers»<sup>1</sup>.

Բանակի դիսցիպլինայի գծով շարունակ հրամաններ էին տրվում՝ ծառայական պարտականությունները շկառարելու համար խիստ տույժերի և կողոպուտները դադարեցնելու մասին։

## X

Բայց, տարօրինակ բան, այդ բոլոր կարգադրությունները հոգսերն ու ծրագիրները, որոնք բնավ ավելի վատ շէին հենց նման դեպքերում հրատարակվող մյուսներից, շէին շոշափում գործի էությունը, այլ, ինչպես ժամացուցի սլաքներ, մեխանիկմից բաժանված, պատվում էին կամայաբար ու աննպատակ, անիվներին շրոնելով։

Ինգմանական գծով պատերազմի հանճարեղ ծրագիրը, որի մասին խոսում է Թիեզը. «que son génie n'avait jamais rien imaginé de plus profond, de plus habile et de plus admirable»<sup>2</sup>, և որի նկատմամբ Թիեզը, բանավեճի մտնելով պ. Ֆենի

<sup>1</sup> Այդ միջոցների կիրառումը բարձրացնելով գործողությամբ, արժանի իրեն և ֆրանսական բանակին, նա կարգադրեց նպաստ բաժանել հրկիզար ներին։ Բայց որովհետեւ ուսեստի մթերքները շափազան թանկ էին, որպեսզի դրանք տար օտար երկրի և մեծ մասամբ թշնամաբար տրամադրված մարդկանց, նապոլեոնը լավագույն համարեց դրամ տալ նրանց, որ նրանք իրենք պարեն ճարեն։ և հրամայեց թղթադրամներ բաժանել նրանց։

<sup>2</sup> Նույն հանճարը երբեք չեր հնարել դրանից ավելի խոր, ավելի ճարպիկ ու զարմանակի բան։

հետ, ապացուցում է, թե այդ հանճարեղ ծրագիրը պետք է վերագրել ոչ թե հոկտեմբերի 4-ին, այլ 15-ին, այդ ծրագիրը երբեք չի գործադրվել և չէր կարող գործադրվել, որովհետև իրականությանը մոտիկ ոչինչ չուներ իր մեջ, կրեմլի ամրացումը, որի համար պետք էր քանդել և Mosquée<sup>1</sup> (այդպես էր անվանում նապոլեոնը Վասիլի Բլաժեննու եկեղեցին), բոլորովին անօգուտ եղավ։ Կրեմլի տակ ականներ դնելը նպաստում էր միայն կայսեր ցանկության իրագործմանը՝ Մոսկվայից դուրս գալու գեպօւմ, որպեսզի Կրեմլը պայթեցվեր, այսինքն՝ խինն այն հատակին, որին դիպչելով վիրավորվել-շարդվել էր երիխան։ Խուսական բանակի հետապնդումը, որ այնպէս մըտահոգում էր նապոլեոնին, անլուր մի երկույթ էր ներկայացնում։ Ֆրանսական զորապետները կորցրին ոուսական 60 հազարանոց բանակը, և միայն, Թիեզի ասելով, Մյուլդատի հըմտությունը և, կարծես նույնպես, հանճարեղությունը, հաջողեց գտնել, ինչպես մի ասեղ, այդ 60-հազարանոց ոուսական բանակը։

Դիվանագիտական կողմից՝ նապոլեոնի բոլոր պատճառաբանությունները թե՛ Տուտումինի, թե՛ Յակովլեի առաջ, որոնք մտահոգված էին առավելապես շինել ու կառք գտնելու խնդրով, անօգուտ եղան։ Ալեքսանդրը լինդունեց այդ դեսպաններին և շաբատախանեց նրանց առաքելությանը։

Իրավական գծով՝ կարծեցյալ հրձիգներին պատժելուց հետո վառվեց Մոսկվայի մյուս մասը։

Վարչական գծով՝ քաղաքային վարչության կազմակերպումը շտագարեցրեց կողոպուտները և օգուտ տվեց միայն մի քանի անձանց, որոնք մասնակցություն ունեին այդ վարչությանը և, կարգ պահպանելու պատրվակով, կողոպուտմ էին Մոսկվան կամ իրենցը պահպանում կողոպուտից։

Կրոնական գծով՝ այն, ինչ հեշտ սարքվեց եղիպտոսում՝ մզկիթ այցելելու միջոցով, այստեղ ոչ մի արդյունք շտվեց։ Մեկ թե երկու քահանա, որոնց գտել էին Մոսկվայում, փորձեցին կատարել նապոլեոնի կամքը, բայց նրանցից մեկի երեսին ֆրանսական զինվորը խփեց կարգ կատարելիս, իսկ մյուսի

<sup>1</sup> Մզկիթ։

մասին ֆրանսական աստիճանավորը գրել է իր զեկուցման մեջ. «Le prêtre, que j'avais découvert et invité à recommencer à dire la messe, a nettoyé et fermé l'église. Cette fois on est venu de nouveau enfoncer les portes, casser les cadenas, déchirer les livres et commettre d'autres désordres»<sup>1</sup>.

Առևտրական գծով՝ աշխատասեր արհեստավորներին և բոլոր գյուղացիներին արված հայտարարությունը մնաց ապատասխան։ Աշխատասեր արհեստավորներ շիալին, իսկ գյուղացիները բռնում էին այն կոմիսարներին, որոնք չափազանց հեռու էին գեռում այդ հայտարարությամբ, և սպանում էին նրանց։

Ժողովրդին և զորքին թատրոններով զվարճություն պատճելու ուղղությամբ՝ բանը նույնպես չհաջողվեց։ Կրեմում և Պողոյակովի տանը հիմնված թատրոնները փակվեցին անմիջապես, որովհետեւ դերասանութիւններին և դերասաններին կողոպտեցին։

Բարեգործությունը՝ դա էլ ցանկալի արդյունքներ շտվեց։ Կեղծ և ոչ կեղծ թղթաղրամները հեղեղել էին Մոսկվան և արժեք շունեին։ Ֆրանսացիների համար, որ ավար էին հավաքում, հարկավոր էր միայն ոսկի։ Ոչ միայն կեղծ թղթաղրամները, որ նապոլեոնն այնպես ողորմածաբար բաժանում էր դժբախաններին, արժեք շուներ, այլև արծաթն իր արժեքից պակաս էր տրվում ոսկու փոխարեն։

Բայց բարձրագույն կարգադրությունների անիրական թնելու ամենազարմանալի երեսութիւն այն ժամանակ նապոլեոնի շանքն էր՝ դադարեցնել կողոպտատները և վերականգնել կարգապահությունը։

Ահավասիկ ինչ էին գրում բանակի պաշտոնյաները։

«Կողոպուտները շարունակում են քաղաքում, չնայած դրանց զադարեցնելու հրամանին։ Կարդը ղեռ չի վերահաստատված, և շկա մի վաճառական, որ առետուր անի օրինական

<sup>1</sup> Թահանան, որին ես հայտնաբերեցի և հրավիրեցի պատարագ անելա եկեղեցին մաքրեց-կողոպտեց և փակցի։ Նույն զիշերը նորից եկան դուռ խորտակելու և փակերը չարդելու, գրեթե պատռելու և ուրիշ անկարգություններ անելու։

կերպով։ Միայն նպարավաճառներն են իրենց թուղ տարիս բան ծախել, այն էլ կողոպտած իրեր»։

«La partie de mon arrondissement continue à être en proie au pillage des soldats du 3 corps, qui, non contents d'arracher aux malheureux réfugiés dans des souterrains le peu qui leur reste, ont même la férocité de les blesser à coups de sabre, comme j'en ai vu plusieurs exemples»<sup>1</sup>.

«Rien de nouveau outre que les soldats se permettent de voler et de piller, le 9 octobre»<sup>2</sup>.

«Le vol et le pillage continuent. Il y a une bande de voleurs dans notre district qu'il faudra faire arrêter par de fortes gardes. Le 11 octobre»<sup>3</sup>.

«Կայսրը չափազանց դժողում է, որ չնայած խիստ հրամաններին՝ դադարեցնել կողոպուտները, տեսնվում են միայն զարդիական հինահարների (մարողյորների) խմբեր, որ վերադառնում են Կրեմլ։ Հին զվարդիայում անկարգություններն ու կողոպուտները սաստկորեն, ավելի քան երբեմ, վերսկսկվեցին երեկ, վերցին գիշերը և այսօր։ Կայսրը ցավելով տեսնում է, որ իր անձը պահպանելու նշանակված ընտիր զինվորները, որոնք պետք է օրինակ տային հնագանդության, այն ասահինանի են հասցեր անհնազանդությունը, որ ջարդում են բանակի համար պատրաստված պահանջաներն ու խանութնորու։ Մյուսներն ստորացել են այնքան, որ չեն լսել պահանջներին և պահակային սպաներին, հայույթ են նրանց և ծեծելու։

«Le grand maréchal du palais se plaint vivement», — գրում էր նահանգապետը, — «que malgré les défenses réitérées

<sup>1</sup> Ի հմ շրջանի մի մասը շարունակվում է ենթարկվել Յ-րդ կորպուսի զինվարների կողոպուտնին, որոնք զբավականանալով նրանով, որ խլում են դժբախտ բնակիչների աղքատիկ, նկուզներում պահված ունեցվածքը, այլև զաժանորեն խփում են նրանց թրերով, ինչպես ես ինքս եմ տեսել շատ անգամ։

<sup>2</sup> Նոր բան շկա, միայն զինվորները թուղ են տալիս իրենց՝ կողոպտել և գողանալը Թ հոկտեմբերի։

<sup>3</sup> Գողությունն ու կողոպուտը շարունակվում են Անդր գավառում գործություն ունի գողերի մի խումբ, որին պետք է վերջ տալ ուժեղ միջացներով։ Հոկտեմբերի։

rées, les soldats continuent à faire leurs besoins dans toutes les cours et même jusque sous les fenêtres de l'Empereur<sup>1</sup>.

Այդ զորքը, ինչպես բաց թողնված հոտ, ոտների տակ առ դելով այն կերը, որը կարող էր փրկել նրան սովամահությունից, քայլայի՛ւմ ու կործանվում էր՝ Մոսկվայում ավելորդ մահացած յուրաքանչյուր օրվա հետ:

Բայց այդ զորքը չէր շարժվում:

Նա փախակ միայն այն ժամանակ, երբ հանկարծ նրան համակեց խուճապային սարսափ, որ առաջացրին գումակի գոյավումը Սմոլենսկի ճանապարհի վրա և Տարուտինոյի ճակատամարտը: Նույն այդ տեղեկությունը Տարուտինոյի ճակատամարտի մասին, որ անսպասելի սուացավ նապոլեոնը դորատեսի ժամանակ, նրա մեջ ցանկություն առաջացրեց պատժել ուսւսներին, ինչպես Թիեռն է ասում, և նա հրաման սկեց դուրս գալու, ինչ որ պահանջում էր ամբողջ զորքը:

Մոսկվայից փախչելով, այդ զորքի մարդիկ վերցրին իրենց հետ այն բոլորը, ինչ կողոպտել էին: Նապոլեոնը նույնպես տարակ իր հետ իր սեփական *tresor*-ը<sup>2</sup>: Տեսնելով գումակը, որ խճողել էր բանակը, Նապոլեոնը սարսափեց (ինչպես ասում է Թիեռը): Բայց նա, պատերազմի իր փորձառությամբ հանդիր, շկարգադրեց վառել բոլոր ավելորդ սայլերը, ինչպես նա այդ արակ մարշալի սայլերի նկատմամբ, Մոսկվային մոտենալիս նա նայեց այդ կառքերին ու կառեթներին, որոնցով գնում էին զինվորները, և ասակ, որ այդ շատ լավ է, որ այդ կառքերը կօգտագործվեն պարենամթերքի, հիվանդների և փիրավորների համար:

Ամբողջ զորքի գրությունը նման էր այն վիրավոր կենդանու դրության, որն զգում է իր կործանումը և շգիտի, թե ի՞նչ է անում: Ուսումնասիրել Նապոլեոնի և նրա զորքի հմուտ մանելվորները և նպատակները Մոսկվա մտնելու օրից և մինչև այդ զորքի ոչնչացումը, նույնն է թե՝ ուսումնասիրել մահացու

<sup>1</sup> Պալատի պավագ-արարողապետը շատ է գանգատվում, որ չնայած ամեն տեսակ արգելքին, զինվորները շարունակում են իրենց հարիքը կատարել բակեռում և անգամ կայսեր լուսամուտների տակ:

<sup>2</sup> Գանձարանը:

Փիրավորված կենդանու մահից առաջ կատարած ոստյումների ու ցնցումների նշանակությունը: Վիրավոր գազանը շատ հաճախ, խշխոց լսելով, հարձակվում է կրակոցի գեմ՝ որսորդի վրա, վազում է առաջ, ետ և ինքն արագացնում իր վախճաննը: Նույնն անում էր նապոլեոնը իր ամբողջ զորքի ճնշման տակ: Տարուտինոյի ճակատամարտի խշխոցը խրտնեցրեց գազանին, և նա նետվեց առաջ՝ կրակոցի գեմ, վազեց հասավ որսորդին, նորից ետ գարձակ և, վերջապես, ինչպես ամեն մի գազան, ետ վազեց, ամենաանհարմար, վտանգավոր ճանապարհով, բայց ծանոթ, չին հետքով:

Նապոլեոնը, որ պատկերանում է մեզ այդ ամբողջ շարժման զեկավար (ինչպես վայրենիներին՝ նավի քթին փորացած կերպարանքը ներկայանում էր նավը զեկավարող ուժ), նապոլեոնն իր գործունեության այդ ամբողջ ժամանակամիջուցում նման էր երեխայի, որ կառեթի ներսը կապված թեւերից բռնած՝ երեակայում է, թե կառքն ինքն է վարում:

## XI

Հոկտեմբերի 6-ին վաղ առավոտյան Պիեռը դուրս եկավ բարաքից և, ետ վերադառնալով, կանգ առավ գուան մոտ, խաղալով երկար, կարճ, ծուռ ոտներով, կարմրակապույտ մի շնիկի հետ, որ պտտվում էր նրա շուրջը: Այդ շնիկն ապրում էր նրանց մոտ՝ բարաքում, գիշերում էր Կարատակի հետ, բայց երբեմն գնում էր քաղաք ուրուր և նորից վերադառնում: Նա, հավանորեն, երբեք ոչ մեկին չէր պատկանել, և այժմ էլ ոչ մեկինը չէր և ոչ մի անուն չուներ: Ֆրանսացիները նրան Ազոր էին կոչում: Հեքիաթասաց զինվորը նրան ֆեմդալկա էր անվանում, Կարատակն ու մյուսները նրան կոչում էին Սեսի, երբեմն Վիսլի: Ոչ ոքին շպատկանելը, անուն և անգամ ցեղ, անգամ որոշ գույն շռնենալը, թվում էր բնավ չէր անհանգրատացնում կարմրակապույտ շնիկին: Բրդոտ պոշը պինդ ու կեռ տնկված էր զեպի վեր. ծուռ ոտները նրան այնպես լավ էին ծառայում, որ նա հաճախ, կարծես բանի տեղ շղնելով բոլոր շրս ոտները գործ ածելը, ետի ոտի մեկը բարձրացնում էր շնորհքով և շատ ճարպիկ ու արագորեն վազում երեք ոտով:

Ամեն ինչ բավականության առարկա էր նրա համար։ Մերթ, ուրախությունից կլանչելով, թափալվում էր մեջքի վրա, մերթ խոհուն ու նշանակալի տեսքով տաքանում էր արկի տակ, մերթ խայտում էր տաշեղի կամ ծղոտի հետ խաղալով։

Պիեռի հագուստն այժմ բազկացած էր մի կեղտոտ պատառուն շապկից, միակ մնացորդը նրա նախկին հանդերձներից, զինվորական ոտաշորից, որ տաքության համար թելերով կապկպել էր կոճերին՝ Կարատակի խորհրդով, կաֆտանից և գյուղացիական գդակից։ Պիեռը Փիդիկապես շատ էր փոխվել այդ ժամանակի նաև այս գեր չեր երեսում, թեև խոշորության և ուժի նույն կերպարանքն ուներ, որ ժառանգական էր նրանց ցեղի մեջ։ Մորուքն ու բեղերը ծածկել էին դեմքի ներքին մասը. երկարած, խճճած մազերը գլխին, ոչինչերով լցված, գանգրացել էին այժմ՝ դարձել փափախ։ Աշքերի սրտահայտությունը հաստատուն էր, հանգիստ և աշխուժապարագաների մեջ այսպիսին, որի նմանը սուազ երբեք չը ունեցել Պիեռի հայացքը։ Նրա նախկին ցոփությունը, որ արտահայտվում էր և աշքերի հայացքում, այժմ փոխարինվել էր եռահոգուն, գործելու և դիմադրելու պարագաներությամբ։ Նա բորբիկ էր։

Պիեռը նայում էր մերթ դաշտն ի վար, որով այս առավոտ գուացել էին սայլեր ու ծիավորներ, մերթ գետի այն կողմի ուկարուցյամբ, մերթ շնիկին, որ ձևացնում էր, թե ինքը հանաբով չէ որ ուզում է կծել նրան, մերթ էր սորիկ ուսներին, որոնց նա բավականությամբ զանազան դիրք էր տալիս, շարժելով կեղտոտ հսկա մեծ մատները։ Եվ ամէն անգամ, երբ նա նայում էր իր բորբիկ ուսներին, նրա գեմքով աշխույժի, ինքնազնության ժամանում, Այդ բորք ուսների տեսքը նրան հիշեցնում էին այն բոլորը, ինչ նա ապրել ու հսկացել էր այդ ժամանակամիջոցում, ու այդ հիշողությունը նրան հաճելի էր։

Նղանակն արդեն քանի օր էր հանդարտ էր, պայծառ, առավոտները թեթև ցրտերով, այսպես կոշված պառավագարուն։

Օդում, արկի տակ, տաք էր, և ալու սաքությունը գեռնեա օդում գդացմող առավոտան ցրտի կազդութիւն թարմությամբ տանձնապես հաճելի էր։

Ամեն մի՛ թե հեռավոր, թե մոտիկ իրերի վրա ընկած էր այն կախարդական-բյուրեղյա փայլը, որը լինում էր միայն աշնան այդ պահին։ Հեռվում երեսում էին Վորոբյովի սարերը՝ գուլգով, եկեղեցով և մի մեծ սպատակ տնով հանդերձ։ Թե մերկացած ժառերը, թե ավազը, թե քարերը, թե տների տանիքները, եկեղեցու կանաչ սայրը և հեռավոր սպիտակ տան անկույները, — այդ ամենը անքնականորեն-որոշ, նրբագույն գերեզվ նկարվում էր թափանցիկ օգում։ Մոտիկ երեսում էին հարուստ տան ծանոթ կիսով շափ այրված ավերակները։ Մի տուն, ուր ապրում էին ֆրանսացիք, ցանկապատի վրա բռւսած հասմիկի դեռևս մութ-կանաչ թփերը։ Եվ անգամ այդ ավերակ ու ապականված տունը, որն իր այլանդակությամբ վանող տպավորություն էր անում մռայլ եղանակին, այժմ, պայծառ, անշարժ փայլի մեջ մի տեսակ հանգստացուցիչ-գեղեցիկ էր թվում։

Ֆրանսացի կապրալը, տնավարի կոճակներն արձակ, թասկը գլխին, կարճ ծխամորճն ատամների արանքում, դուրս եկալ բարաքի անկյան կողմից և, մտերմաբար աշբով անելով, մոտեցավ Պիեռին։

— Quel soleil, hein? Monsieur Kiril (այդպես էին կոչում Պիեռին բոլոր ֆրանսացիները)։ On dirait le printemps<sup>1</sup>.

Եվ կապրալը դունը հենվեց և Պիեռին ծխամորճ առաջարկեց, չնայած այն բանին, որ ինքը միշտ առաջարկում էր և Պիեռը միշտ հրաժարվում էր։

— Si l'on marchait par un temps comme celui-là...<sup>2</sup> — սկսեց նա։

Պիեռը հարցուփորձեց, թե ի՞նչ են խոսում կովի մասին, և կապրալը պատմեց, որ գրեթե ամբողջ զորքը դուրս է գալիս, ու թե հիմա հրաման է լինելու և գերիների մասին։ Բարաթաւմ, ուր Պիեռն էր, զինվորներից մեկը՝ Սոկոլովը մահամերձ հիվանդ էր, և Պիեռը կապրալին ասավ, թե պետք է կարգադրություն անել այդ զինվորի մասին։ Կապրալն ասավ, թե Պիեռը կարող է հանգիստ լինել, թե դրա համար կան շարժական և

<sup>1</sup> Ի՞նչ, արե է, հը, պարուն Կիրիլ, Կարծես զարուն լինի։

<sup>2</sup> Այսպիսի եղանակին արժե զնալ կորվ։

մշտական հիվանդանոցներ, և թե հիվանդների մասին կարգադրություն կլինի, և թե ընդհանրապես ամեն բան, ինչ կարող է պատահել, բոլորը նախատեսված է իշխանության կողմից:

— Et puis, m-r Kiril, vous n'avez qu'à dire un mot au capitaine, vous savez... Oh, c'est un... qui n'oublie jamais rien. Dites au capitaine quand il fera sa tournée, il fera tout pour vous...!

Կապիտանը, որի մասին խոսում էր կապրալը, հաճախ և երկար զրուցել էր Պիեռի հետ և ամեն տեսակ զիջողամտություններ էր արել նրան:

— Vois-tu, St.-Thomas, qu'il me disait l'autre jour: Kiril c'est un homme qui a de l'instruction, qui parle français c'est un seigneur russe, qui a eu des malheurs, mais c'est un homme. Et il s'y entend le..... S'il demande quelque chose, qu'il me dise, il n'y a pas de refus. Quand on a fait ses études, voyez-vous, on aime l'instruction et les gens comme il faut. C'est pour vous que je dis cela, m-r Kiril. Dans l'affaire de l'autre jour, si ce n'était grâce à vous, ça aurait fini mal<sup>2</sup>.

Եվ, մի փոքր շաղակրատելով, կապրալը գնաց: (Բանը, որ պատահել էր մի քանի օր առաջ և որի մասին հիշեց կապրալը, գերիների և ֆրանսացիների միջն տեղի ունեցած ժեծն էր, որի ժամանակ Պիեռին հաջողվել էր զսպել իր ընկերներին): Գերիներից մի քանիսը լսեցին Պիեռի խոսակցությունը կապրալի հետ և անմիջապես սկսեցին հարցուվորձել, թե նա ի՞նչ առավ: Այն ժամանակ, երբ Պիեռն ընկերներին պատմում էր

<sup>1</sup> Եվ հետո, պարոն Կիրիլ, բավական է դուք մի խոսք ասեք կապիտանին. դուք գիտեք... Նա այնպիսի... ոչինչ չի մոռանում: Ասացեք կապիտանին, երբ նա ստուգման համար անցնելիս կլինի. նա ձեզ համար ամեն ինչ կանի:

<sup>2</sup> Գիտես, St. Thomas, ասսով նա վերջերս, Կիրիլը կրթված մարդ է, խոսում է ֆրանսերեն. դա ուսւածներ կան պահանջան է, որին դժբախտություն է պատահել, բայց այսպիսի է նա լավ է հասկանում... Եթե մի բան նրան հարկադրությունի, և նա ինձ ինքորի, մերժում չի լինի: Գիտես, երբ որոշ բան սույնելի են, սիրում ես լուսավորությունը և բարեկիրթ մարդկանց: Ես այս ձեր մասին եմ ասում, պարոն Կիրիլ: Այս բանի օրը, եթե դուք չկինսիք, բանը վատ կը վերջանար:

կապրալի ասածը՝ զորքի գուրս գալու մասին, բարաքի զոանը մոտեցավ մի նիհար, դեղնած և պատառոտուն հագուստով ֆրանսացի զինվոր: Արագ ու երկշուր շարժումով մատները գեպի ճակատը տանելով որպես ողջույնի նշան, նա դիմեց Պիեռին և հարցրեց, թե այս բարաքումն է արդյոք զինվոր platoche<sup>1</sup>, որին տվել է իր շապիկը կարելու:

Մոտ մի շաբաթ առաջ ֆրանսացիները կոշկեղենի ապրանքու բաթան ստացան և կոշիկ ու շապիկ կարելու համար բաժանեցին գերի զինվորներին:

— Պատրաստ է, պատրաստ է, թառլանս,— ասավ Կապտակը, դուրս գալով խնամքով ծալած շապիկը ձեռին:

Կարաւակը, տաքության պատճառով և աշխատանքի հարմարության համար, ոտաշորով էր և, հողի պես սկ, ճոթումված շապիկով: Նրա մազերը, ինչպես այդ անում են արհեստավորները, կապված էին ճիլոպով, և նրա կլորիկ դեմքը թվում էր ավելի կլոր ու սիրունատես:

— Պայմանը՝ գործի հարազատ եղբայրն է: Ինչպես ասի՝ ուրբաթ, էղպես էլ արի,— ասավ Պլատոնը, ժպտալով ու իր կարած շապիկը բացելով:

Ֆրանսացին անհանգիստ ետ նայեց և, կարծես կասկածը հաղթահարելով, մունդիրը արագորեն հանեց և շապիկը հագավ: Ֆրանսացին մունդիրի տակ շապիկ չուներ, իսկ մերկ, դեղնավուն, նիհար մարմնի վրա հազել էր երկար յուղոտած մետաքսյա ծաղկազարդ ժիւետ: Ֆրանսացին, ըստ երկույթին վախենում էր, որ իրեն նայող գերիները ծիծաղեն, ու շտապ գլուխը կոխեց շապիկ մեջ: Գերիներից ոչ մեկը իսոսք շասավ:

— Տես, իսկականն է,— ասավ Պլատոնը, շապիկը ձգելով:

Ֆրանսացին, գլուխն ու ձեռները կոխելով, աշքերն առանց բարձրացնելու, դիտում էր շապիկը և նայում կարը:

— Ի՞նչ է, թառլանս, սա հո կարի արհեստանոց չի, իսկական մի գործիք էլ չկա. ասած է՝ առանց սարքի ոչիլ էլ չէս սպանի, — ասում էր Պլատոնը, կլորիկ ժպտալով և, ըստ երեւույթին ինքն ուրախանալով իր աշխատանքի վրա:

<sup>1</sup> Պլատոնը:

— C'est bien, c'est bien, merci; mais vous devez avoir de la toile de reste<sup>1</sup>, — *ասավ ֆրանսացին*,

— Նա ավելի լավ կլինի, երբ մարմնիդ հանդնես, — *ասում էր Կարատակը, շարունակելով ուրախանալ իր արած գործի վրա:* — Այ հիմա քեզ համար թե՛ լավ կլինի, թե՛ դուրեկան...

— Merci, merci mon vieux, le reste?... — *կրկնեց ֆրանսացին ժպտալով և, մի թղթադրամ հանելով, տվեց Կարատակին:* — Mais le reste...<sup>2</sup>

Պիեռ տեսնում էր, որ *Պլատոնը չէր ուզում հասկանալ այն, ինչ ասում էր ֆրանսացին և, առանց միշամտելու, նայում էր նրանց: Կարատակը շնորհակալություն հայտնեց փողի համար և շարունակեց հիանալ իր աշխատանքով: Ֆրանսացին պնդեց ավելցուկների վրա, և Պիեռին ինդրեց թարգմանել իր ասածք:*

— Ավելցուկները նրա ինչի՞ն են պետք, — *ասավ Կարատակը:* — Մեզ համար լավ փաթաթաներ կլինեն: Է՛, աստված իրա հետ:

Եվ Կարատակը հանկարծ փոխված, տխուր դեմքով թևատակից հանեց քաթանի ավելցուկների փաթեթը և, առանց նրան նայելու, տվեց ֆրանսացուն: — Է՛՛, ախակը ջան, — *ասավ Կարատակն ու ետ գնաց:* Ֆրանսացին նայեց քաթանին, մրտածեց, հարցական նայեց Պիեռին, և Պիեռի հայացքը կարծես ինչ-որ բան ասավ նրան:

— Platuche, dites donc, Platoche, — *հանկարծ կարմւրդով՝ կանչեց ֆրանսացին ճշում ձայնով:* — Gardez pour nous<sup>2</sup>, — *ասավ նա, ավելացուեկ կտորները տալով, շուր եկալ ու գնաց:*

— Դե արի ու տես, — *ասավ Կարատակը, գլուխն օրորելով:* — Ասում են՝ անհավատ, բայց էլի հոգի ունի: — Դրա համար են ծերերն ասել՝ քրտնող ձեռք ողորմած է, չորը՝ ժլատ: Ինքը մերկ է, բայց, այ, տվեց:

Կարատակը, մտածելու ժպտալով և կտորներին նայելով, լրեց միառժամանակ:

— Բայց սրանցից, ախակերս, լավ փաթաթաներ դուրս կգն, — *ասավ նա և վերադարձավ բարաքը:*

## XII

Չարս շարաթ էր անցել այն օրից, ինչ Պիեռը գերության մեջ էր: Չնայած այն բանին, որ ֆրանսացիք ասաջարկում էին փոխադրել նրան զինվորական բարաքից սպայականը, նա մնաց այն բարաքում, ուր մտել էր ասաշին իսկ օրը:

Ավերգած ու այրված Մոսկվայում Պի՛ռն ապրեց գրեթե ամենածայրահեղ զրկանքներ, ինչ կարող է կրել մարդը, բայց, շնորհիվ իր ուժեղ կազմվածքի և առողջության, որ նա մինչ այժմ չէր գիտակցում, և մանավանդ շնորհիվ այն բանի, որ այդ զրկանքներն անցնում էին այնպես աննկատելի, որ չէր կարելի ասել, թե ե՛ր դրանք ակսվեցին, նա իր վիճակը կրում էր ոչ միայն թեթևությամբ, այլև ուրախությամբ: Եվ հենց այդ ժամանակ ձեռք բերեց այն հանգստությունն ու ինքն իրումով գոյն լինելը, որին իզուր ձգտում էր առաջ: Նա իր կյանքում երկար փնտրում էր ամեն կողմից այդ հանգստությունը, համաձայնություն ինքն իր հետ, այն, ինչ այնպես զարմացրեց նրան զինվորների մեջ Բորոդինոյի ճակատամարտում, նա այդ փնտրում էր մարդասիրության մեջ, մասոնության մեջ, աշխարհիկ կյանքի ցրված ապրելու մեջ, գինու մեջ, անձնազօնության, հերոսական սիրազործության մեջ, դեպ նատաշան ունեցած ոռմանտիկ սիրո մեջ: Նա այդ փնտրում էր մտքի միշտով, — և այդ բոլոր որոնումներն ու փորձերը, ամենը խարբեցին նրան: Եվ նա, ինքն էլ շմտածելով այն մասին, ձեռք բերեց այդ հանգստությունը և համաձայնությունն ինքն իր հետ միայն մահվան սարսափի միշտով, զրկանքների և այն բանի միշտով, ինչ նա ըմբռնեց Կարատակի մեջ:

Այն սարսափելի վայրկյանները, որ ապրեց նա մահապատժի պահին, կարծես նրա երեակայությունից ու հիշողությունից ընդմիշտ սրբեցին: տարան այն անհանդիստ մտքերն ու զգացումները, որ առաջ նրան թվում էին կարենոր: Նրա զլիհում էլ մտքեր չին ծագում ոչ մոռաստուանի մասին, ոչ պատերազմի մասին,

<sup>1</sup> Լավ է, լավ, շնորհակալ եմ. բայց քաթանի ավելցուկը ձեզ մոտ է, երկի!

<sup>2</sup> Շնորհակալ եմ, շնորհակալ, սիրելիս: Ավելցածը... ավելցածը:

<sup>3</sup> Պլատոշ, է՛յ Պլատոշ. Պահեք ձեզ:

ոչ քաղաքականության մասին, ոչ նապոլեոնի մասին։ Նրա համար ակներե էր, որ այդ ամենն իրեն չի վերաբերում, որ ինքը կոշված չէր, ուստի և չէր կարող դատել այդ ամենի մասին։ «Շուստատանի ու ամառվա՝ նմանը չկա», — կրկնում էր նա Կարտակի խոսքերը և այդ բառերը տարօրինակ կերպով հանգստացնում էին նրան։ Այժմ նրան անհասկանալի և ծիծաղելի էր բոլով նապոլեոնին սպանելու իր մտադրությունը և իր հաշիվը կարախստական թվի և հայտնության գագանի մասին։ Նրա կատաղությունը կնոջ դեմ և անհանգստությունը, որ իր անուերշմայտակվի, այժմ նրան ոչ միայն չնշին էին թվում, այլև զվարճալի։ Ինքն ի՞նչ գործ ուներ, թե այդ կինն այնտեղ վարում է ինչ-որ կյանք, որ դուր է գալիս իրեն։ Ում, մանավանդ իր ի՞նչ գործն էր, թե կճանաշեն կամ չեն ճանաշի, որ իրենց գերու անունը կոմս Բեզովիով է։

Այժմ նա հաճախ էր հիշում իր զրուցն իշխան Անդրեյի հետ և լիովին համաձայնում էր նրա հետ, միայն փոքր-ինչ այլ կերպ հասկանալով իշխան Անդրեյի միտքը։ Իշխան Անդրեյը կարծում և ասում էր, թե երգանկությունը լինում է միայն բացասական, բայց նա այդ ասում էր վշտի և իրոնիայի երանգավորումով։ Այդ ասելով՝ նա կարծես արտահայտում էր ուրիշ միտք՝ այն մասին, թե մեր մեջ դրված ձգտումները դեպի զրական երցանկությունը՝ դրված են միայն նրա համար, որպեսզի, շբավարարելով, տանջեն մեզ։ Բայց Պիեռն առանց որևէ հետին մոռքի ընկունում էր զրա արդարացիոն թյունու։ Տանշանքների բացակայությունը, կարիքների բավարարումը և, զրա հետեանքով, զբաղմունք ընտրելու ազատությունը, այսինքն՝ ապրելաձեկի ընտրությունը — Պիեռին ներկայանում էին այժմ մարդու անկասկածելի և բարձրագույն երջանկությունը։ Այս- տեղ, այժմ միան, առաջին անգամ Պիեռը լիովին գնահատեց ուտելու բավականությունը, երբ ուզում էր ուտել, խմելով՝ երբ ուզում էր խմել, բնի՝ երբ ուզում էր բնել, տաքութան՝ երբ ցուրտ էր, մարդու հետ խոսելով՝ երբ ցանկանում էր խոսել և մարդկային ձայն լսել։ Կարիքների բավարարումը՝ լավ մնունքը, մաքրությունը, ազատությունը՝ այժմ, նրա նազուրկ էր այդ բոլորից, Պիեռին կատարյալ սրբանկություն էր թյում, իսկ զբաղմունքի ընտրությունը, այսինքն՝ կյանքը,

այժմ, երբ այդ ընտրությունն այնպես սահմանափակված էր, նրան այնպես հեշտ բան էր թվում, որ նա մոռանում էր այն, որ կյանքի հարմարությունների առատությունը ոչնչացնում է կարիքների բավարարման ողջ երջանկությունը, իսկ զբաղմունքի ընտրության մեծ ազատությունը, այն ազատությունը, որ նրան իր կյանքում տալիս էին կրթությունը, հարստությունը, հասարակության մեջ ունեցած դիրքը, որ այդ իսկ զբաղմունքի ընտրությունն էլ զբաղմունքի ընտրությունը դարձնում է անլուծելիորեն դժվարին և ոչնչացնում է զբաղումի հենց պահանջն ու հնարավորությունը։

Պիեռն այժմ երազում էր այն ժամանակը, երբ ազատ կլինի Բայց մինչդեռ հետագայում և իր ամբողջ կյանքում Պիեռը հիացումով մտածում ու խոսում էր գերության այդ ամսի մասին, այն անդառնալի ուժեղ և ուրախ զգացումների մասին և, զիսավորը, հոգեկան այն լիակատար անդրբության մասին, այն ներքին կատարյալ ազատության մասին, որ նա զգացել էր միայն այդ ժամանակ։

Երբ նա առաջին օրը, առավոտ վաղ վեր կենալով, լուսաբացին դուրս եկավ բարաքից և տեսավ նախ նովոգևիշի (կուսանց) վանքի մթամած գմբեթները, խաչերը, տեսավ սառը ցողը փոշոտ խոտերի վրա, տեսավ Վորոբյովի սարարլուրները և գետի վերև գալարգով և մանիշակագույն հեռվում աներենութացող անտառոտ ափը. Երբ զգաց թարմ օդի հպումը և լսեց Սովոկվայից եկող, դաշտի վրայով թոշող գորշագուազների ձայնը, և երբ հետո հանկարծ ցայտեց լույսն արևելքից և հանդիսավորապես արևի ծայրը դուրս եկավ ամսի տակից, և՝ գրմբեթները, և՝ խաչերը, և՝ ցողը, և՝ հեռուն, և՝ գետը՝ ամեն ինչ սկսեց խաղալ ուրախ լույսի մեջ, Պիեռն զգաց կյանքի ուրախ և անսասան լինելու մի նոր, շապրված զգացմունք։

Եվ այդ զգացումը ոչ միայն չէր հեռանում նրանից գերության ամբողջ ժամանակը, այլ, ընդհակառակը, աճում էր այն չսփով, որչափ ավելանում էին նրա կացության դժվարությունները։

Այդ զգացումը՝ ամեն ինչի պատրաստ, բարոյական հավաքածության զգացումը, ավելի ևս ամրապնդվում էր Պիեռի մեջ. այն բարձր կարծիքով, որը շուտով նրա բարաք մտնելու

օրից հաստատվեց նրա մասին՝ նրա ընկերների միջև։ Պիեռ լեզուների իր գիտությամբ, այն հարգանքով, որ ցուց էին տալիս նրան ֆրանսացիք, իր պարզությամբ, այն, որ տալիս էր ամենը, ինչ խնդրում էին (նա ստանում էր սպայական երեք ուուրլի շաբաթը), իր ուժով, որ նա ցուց էր տալիս զինվորներին, մեխը խրելով բարաքի պատի մեջ, հեղությամբ, որով վարվում էր ընկերների հետ, իր՝ նրանց համար անհասկանալի անշարժ նստելու, և ոչինչ շանելով՝ մտածելու ընդունակությամբ — զինվորներին թվում էր որոշ շափով խորհրդավորու բարձր էակ։ Նրա հենց այն հատկությունները, որոնք այն կյանքում-աշխարհում, ուր առաջ ապրում էր, նրա համար եթե վնասակար չէին, ապա ճնշող էին, — նրա ուժը, կյանքի հարմարությունների նկատմամբ ունեցած արհամարհները, ցրվածությունը, պարզությունը, — այստեղ, այս մարդկանց շրջանում գրեթե հերոսի դիրք էին տալիս նրան։ Եվ Պիեռն զգում էր, որ այդ կարծիքը պարտավորեցնում է իրեն։

## ХІІІ

Հոկտեմբերի 6-ի լույս 7-ի գիշերն սկսվեց ելուստ կատարող ֆրանսացիների շարժումը. քանդվում էին խոհանոցները, բարաքները, բարձվում էին սալերը և շարժվում զորքն ու գումակը։

Առավոտվա ժամը յոթին ֆրանսացիների ուղեկցուրդը, արշավանքի զգեստներով, կիվեր դրած, հրացաններով, պայուսակներով և հսկայական պարկերով, կանգնած էր բարաքների առաջ, և ֆրանսական աշխույժ խոսակցությունը, հայնուանքներով համեմատված, ծավալվում էր ամրող զծովը մեկ։

Բարագում բոլորը պատրաստ էին, հագնված, գոտեավելված և սպասում էին միայն դուրս գալու հրամանի։ Հիվանդ զինվոր Սոկոլովը՝ գունատ, նիշար, ալբերի շուրջը կապուտ երիզ, միակ գերին, որ չէր հագնված, նստել էր իր տեղը և նիշարությունից դուրս ընկած աշքերով հարցական նայում էր իր վրա ուշ շդարձնող ընկերներին և կամաց ու միօրինակ տրեքում։ Երեսում էր՝ ոչ այնքան տանշանքները — նա հիվանդ էր

արյունալուծությամբ — որքան մենակ մնալու երկյուղն ու վիշտը հարկադրում էին նրան նվազ։

Պիեռը, ոտներին կոշիկներ հագած, որ նրա համար Կարատակը կարել էր այն կապչից, որը բերել էր ֆրանսացին իր կոշիկների տակը շինելու, պարանով գոտեավնդված, մոտեցավ հիվանդին և կկղեց նրա առաջ։

— Ինչ է, Սոկոլով, նրանք չեն որ ոչ բոլորովին են հեռանում։ Նրանք այսաեղ հիվանդանոց ունեն։ Գուցեն, ոու մեզանից ավելի լավ էլ լինես, — ասավ Պիեռը։

— Ոչ, տեր աստված։ Մասն եկել է։ Ոչ, տեր աստված, — ավելի բարձր հեծծաց զինվորը։

— Ես հիմա այժմ ևեթ նորից կհարցնեմ նրանց, — ասավ Պիեռը և, տեղից վեր կենալով, գնաց դեպի բարաքի դռուը։

Այն պահին, երբ Պիեռը մոտենում էր դուռնը, դրսից երկու զինվորի հետ մոտեցավ նույն այն կապրալը, որն երեկ Պիեռին հրուրասիրեց ծխամորճով։ Թե կապրալը, թե զինվորները արշավանքի հագուստներով էին, պայտւակներով և կիվերներով՝ կապերն ամրացրած, որոնք փոխում էին նրանց ծանոթ դեմքերը։

Կապրալը դեպի դռուն էր գալիս նրա համար, որպեսզի իշխանության հրամանով փակի այն։ Բաց թողնելուց առաջ պետք էր հաշվել գերիներին։

— Caporal, que fera-t-on du malade? — սկսեց Պիեռը։

Բայց այդ րոպեին, երբ նա ասում էր այդ, Պիեռը կասկածեց, թե արդյոք դա իր ծանոթ կապրալն է թե ուրիշ անհայտ մարդ։ այնքան կապրալն իր նման չէր այդ րոպեին։ Բացի զրանից այն րոպեին, երբ Պիեռն ասում էր այդ, երկու կողմից հանկարծ լսվեցին թմբուկների թնդյուններ։ Կապրալը դեմքը խոռոչեց Պիեռի խոսքերի վրա և, անմիտ հայրոյանք ասելով, դռու շրիկոցով ծածկեց։ Բարագում կիսամութ տիրեց։ Երկու կողմից զիւ դռնշում էին թմբուկները, խլացնելով հիվանդի տնքոցները։

«Ահա նա... նորից նա», — ասավ Պիեռն ինքն իրեն, և նրա մեջքով ակամա սարսուռ անցավ։ Կապրալի փոխված դեմքին,

<sup>1</sup> Կապրալ, ի՞նչ են անելու հիվանդին։

նրա ձայնի հնչունի մեջ, թմբուկների գրգռող ու խլացնող դռնշոցի մեջ Պիեռը ճանաչեց այն խորհրդավոր, անկարեկից ուժը, որն ստիպում է մարդկանց հակառակ իրենց կամքի մեղքնել իրենց նմաններին, այն ուժը, որի գործողությունը նա տեսավ մահապատժի միջոցին։ Վախենալ, աշխատել խուսափել այդ ուժից, խնդրանքով կամ հորդորանքով դիմել մարդկանց, որ նրա գործիքներն էին, անօգուտ էր։ Պիեռն այդ գիտեր այժմ։ Պետք է սպասել և համբերել։ Պիեռն այլևս չմոտեցավ հավանդին և չնայեց նրան։ Նա անխու, հոնքերը կիսու ծ կանգնել էր բարաքի դուռ մոտ։

Երբ բարաքի դուռը բացվեց և գերիներն, ինչպես ոչխարի հոտ, միմյանց սեղմվելով, կիտվեցին մուտքի մեջ, Պիեռն անցավ բոլորից առաջ և մոտեցավ հենց այն կապիտանին, որը կապրալի հավաստիացումով, պատրաստ էր ամեն ինչ անել Պիեռի համար։ Կապիտանն էլ, ուզմաքերթի գգեստով էր, և նրա սառը դեմքից նույնպես նայում էր «նա», որին Պիեռ ճանաչեց կապրալի խոսքերից և թմբուկների դռնշոցի մեջ։

— Filez, filez<sup>1</sup>, — խոսեց կապիտանը, դեմքը խստությամբ խոժողով և նայելով իր շուրջը խմբված գերիներին,

Պիեռը գիտեր, որ իր փորձն իզուր է անցնելու, բայց մոտեցավ նրան։

— Eh bien, qu'est-ce qu'il y a? — սառնությամբ շուրջ նայելով, կարծես շճանաշելով, ասավ սպան։

Պիեռը խոսեց հիվանդի մասին։

— Il pourra marcher, que diable! — ասավ կապիտանը։ — Filez, filez<sup>2</sup>, — շարունակեց խոսել նա, առանց նայելու Պիեռին։

— Mais non, il est à l'agonie<sup>3</sup>... — սկսեց Պիեռը։

— Voulez-vous bien! — դեմքը շարությամբ խոժողով նշաց կապիտանը։

Դրում-դա-դա-դում, դամ-դամ — դռնշում էին թմբուկ։

Ները։ Եվ Պիեռը հասկացավ, որ խորհրդավոր ուժն արդեն լիովին տիրել է այդ մարդկանց, և որ հիմա նորից որևէ բան ասելն անօգուտ էր։

Գերի սպաներին բաժանեցին զինվորներից և նրանց հրամայեցին՝ գնալ առջևից։ Սպաները, որոնց թվումն էր Պիեռը, 30 հոգի էին, զինվորները՝ 300։

Գերի սպաները, որոնց թողին մյուս բարաքներից, բոլորն էլ անծանոթ էին, շատ ավելի լավ հագնված, քան Պիեռը, և նրան, որ այդպիսի ոտնամաններ ուներ, նայում էին անվըստահությամբ ու խորթ աշքով։ Պիեռից ոչ հեռու քայլում էր, ըստ երեւլյթին, իր գերի ընկերների հարգանքը վայելող, մի գեր մայոր՝ Կազանի խալաթ հագած, գոտու տեղ սրբիչ կապած, ուռած, գեղնած ու բարկացած գեմքով։ Նա ձեռի մեկը ծխախոտի պարկի հետ գրել էր ծոցը, մյուսով հենվում էր մի բարակ ձեռնափայտի։ Մայորը, փնչացնելով ու շունչ առնելով, քրթմնջում էր և բարկանում բոլորի վրա այն բանի համար, որ նրան թվում էր, թե իրեն հրում են, թե բոլորն էլ շտապում են, երբ շտապելու բան չկար, բոլորը զարմանում են ինչ-որ բանի վրա, երբ ոչ մի բանում զարմանալի ոշինչ չկա։ Մի ուրիշ փոքրամարմին, նիհար սպա խոսում էր բոլորի հետ, ենթադրություններ անելով, թե այժմ ուր են տանում իրենց և որքան հեռու կարող են գնալ այդ օրը։ Թաղիքե կոշիկներով և կոմիսարական նշանազգեստով մի աստիճանավոր վազում էր ամեն կողմ և նայում վառված Սոսկվային, բարձրածայն հաղորդելով իր գիտողություններն այն մասին, թե ի՞նչ է վառվել և ինչպես էր Սոսկվայի այս կամ այն երկացող մասը։ Երրորդ սպան, ըստ առողանության լեհական ծագում ունեցող, վիճում էր կոմիսարական աստիճանավորի հետ, ապացուցելով, թե նա սիսալվում է Սոսկվայի թաղերը որոշելու մեջ։

— Ինչ՝ մասին եք վիճում, — բարկացած խոսեց մայորը։ — Նիկոլան է թե Վլասօ՛ միևնույն է։ տեսնում եք ամեն ինչ վառվել է, ուրեմն վերջ... Ի՞նչ եք իրար հրհրում, մը՝ թե ճամփան նեղ է, — բարկացած դիմեց նա հետևից եկողին, որ բնավ չէր հրել նրան։

— Այ, այ, այ, ի՞նչ են արել, — լսվում էին, սակայն, մերժայս, մերթ մյուս կողմից հրդեհներին նայող գերիների ձայ-

<sup>1</sup> Անցեք, գնացեք։

<sup>2</sup> Հը, ի՞նչ կա։ Նա կարող է գնալ, գրադա տանի Անցեք, գնացեք։

<sup>3</sup> Բայց չէ, նա հոգեվարքի մեջ է։

<sup>4</sup> Դե գնացեք էլի։

ները: — Զամոսկվորեշն էլ, Զուբրվն էլ, Կրեմլում էլ... Տեսք, կեսը չկա: Ես ծեզ ասում էի, որ ամբողջ Զամոսկվորեշն, այ այդպիս էլ կա:

— Դե, գիտեք, թե ի՞նչ է վառվել. դե էլ ի՞նչի մասին եք խոսում, — ասում էր մայորը:

Խամովնիկից (մեկը Մոսկվայի շվառված բաղամասերից) եկաղեցու մոտով անցնելիս, գերիների ամբողջ խոսմբը հանկարծ սեղմվեց մի կողմի վրա, և լսվեցին սարսափի ու նողկանքի բացականշություններ:

— Տես, սրիկաները... Խսկական անօրեններ: Մեռած է, մեռած մարդ է... ինչոր բան են քսել:

Պիեռը նույնպես առաջացավ գեպի եկեղեցին, որի մոտն էր այն, ինչ բացականշություններ հարուցեց, և աղոտ կերպով տեսավ ինչ-որ մի բան, որ հենել էին եկեղեցու պարսպին: Ընկերների ասելով, որ իրենից ավելի լավ էին տեսնում, նա ճանաշեց որ այդ ինչ-որ բանը մարդու դիմակ էր՝ ոտի վրա պարիսպն ի վեր կանգնեցրած և դեմքը մուր քսած:

— Margchez, sacré nom... Filez... trente mille diabes...! — լսվեցին ուղեկցուրդների հայՀոյանքները, և ֆրանսական զինվորները նոր կատաղությամբ կարճ թրերով քշեցին մեռած մարդուն նայող գերիների բազմությունը:

## XIV

Գերիները Խամովնիկի նրբափողոցներով գնում էին մենակիրենց ուղեկցորդի և ուղեկցորդներին պատկանող սայլակառքերի ու սայլերի հետ, որ գալիս էին հետեւից: Բայց, դուրս գալով պարենամթերքի պահեստների առաջ՝ նրանք ընկան մի հսկայական, իրար սեղմելով առաջ շարժվող հրետանային գումակի մեջ, որին խառնված էին մասնավոր սայլակառքեր:

Հենց կամուրջի մոտ բոլորը կանգ առան, սպասելով, որ առջևից գնացողները շարժվեն: Կամուրջից գերիները տեսան հետեւից և առջևից անվերջ շարքերով շարժվող գումակներ:

<sup>1</sup> Քայլեցիք, գուղց տանի... Անցեք, զնացեք:

Դեպի աջ, այստեղ, ուր Կալուգայի ճանապարհը ծովում է նեսկուչնի այգու մոտով, կորչելով հեռվում, ձգվում էին զորքերի և գումակների՝ անվերջ շարքեր: Դրանք բոլոր զորքերից առաջ գուղջ՝ Կած Բոգարնեի կորպուսներն էին. հետեւից՝ նաբերեծնի փողոցով և Քարե կամուրջով ձգվում էին նեյի զորքերն ու գումակը:

Դավուի զորքերը, որոնց պատկանում էին և գերիները, անցնում էին Կրիմսկի բրոդով և մասամբ արդեն մտել էին Կալուժմակի փողոցը: Բայց գումակներն այնպես էին ձգվել, տարածվել, որ Բոգարնեի վերջին գումակները դեռ Մոսկվայից դուրս չեին եկել ու հասել Կալուժմակի փողոցը, իսկ նեյի զորքի գլուխն՝ արդեն դուրս էր եկել Բոլշայա Օրդինկայից:

Կրիմսկի բրոդն անցնելով՝ գերիները շարժվեցին մի քանի քայլ և կանգ առան, ու նորից շարժվեցին, և ամեն կողմից կառքերն ու մարդիկ հետզհետե ավելի ու ավելի էին նեղում իրաբ: Մի ժամանից ավելի անցնելով այն մի քանի հարյուր քայլը, որոնք կամուրջը բաժանում են Կալուժմակի փողոցից ու համանելով, հրապարակը, ուր Զամոսկվորեցկի փողոցները հանդիպում են Կալուժմակի փողոցի հետ, գերիները, իրար սեղմած խմբված կանգ առան և մի քանի ժամ մնացին այդ խաչփողանում կանգնած: Ամեն կողմից լսվում էին ծովի աղմուկի նման անլոելի՝ անիվների փողոց ու ոտների գոփյուններ և անլոելի բարկացկոտ կանքեր ու հայՀոյանքներ: Պիեռը կանգնել էր մի այրված տան պատին սեղմված, լսում էր այդ ձայները, որոնք նրա երևակայության մեջ միաձուլվում էին թմրուկի ձայնին:

Մի քանի գերի սպաներ, լավ տեսնելու համար, բարձրացան այրված պատը, որի մոտ կանգնած էր Պիեռը:

— Ինչքան ժողովուրդ կա... Ինչքան ժողովուրդ... Թընդանոթներն էլ են բարձել: Տես, մորթիները... — ասում էին նրանք: — Տես, անզգամները, կողոպտել են... Այ նրա մոտ, հետեւ, սայլի վրա... Դա սրբապատկերից է, աստված վկա... Դրանք գերմանացիներն են, երևի: Եվ մեր գյուղացին էլ, աստված վկա... Ա'խ, սրիկաներ... Տե՛ս, բարձել է իրեն, զոռով է քայլում: Մի տես, եռանդակն ինչ է — այն էլ են վերցրել... Տես, ինչպես է նստել արկղերի վրա: Տե՛ր իմ աստված... Կովեցին...

— Ալդպես՝ տուր ոեխին, տուր ոեխին! Ալդպես մինչև երեկո շես կարող դուրս գալ: Տես, տեսեքք... իսկ սա երեկ, նապոլեոնին իրենն է: Տեսում ես, ձիերն ինչպես են, վենգելներով, թագով: Սա ծալովի տուն է: Պարկը գցեած չի տեսնի: Նորից կովեցին... Մի կին՝ երեխայի հետ, և տգեղ էլ չի: Հա, ինչպես չի. այդպես էլ քեզ կթողնեն... Նայեցեք՝ վերջ չկատ Աղջիկները ոռւս են, աստված վկա. աղջիկները: Ինչպես էլ հանգիստ նստել են կառքերում:

Նորից ընդհանուր հետաքրքրության ալիքը, ինչպես ինամովնիկի եկեղեցու մոտ, բոլոր գերիներին սեղմեց գեպի ճանապարհը, և Պիեռը, շնորհիվ իր հասակի, մյուսների գլխի վրայով տեսավ այն, ինչ այնպես գրավել էր գերիների հետաքրքրությունը: Երեք կառքի մեջ, որ խառնվել էին ոմբակիր սայլակներին, գնում էին, սեղմորեն իրար վրա նստած, վառ գույնի հագուստներով զարդարված, կարմիր ներկված, ծվծվան ձայներով ինչ-որ ճշացող կանայք:

Այն վայրկյանից, երբ Պիեռը գիտակցեց խորհրդավոր ուժի երեսմը, նրան ոչինչ տարօրինակ ու սարսափելի չէր թվում. ոչ դիակը, որի երեսին զվարճության համար մուր էին քսել, ոչ այս կանայք, որ շտապում էին ինչ-որ տեղ, ոչ էլ Մոսկվայի ահապին հրդեհները: Բոլորը, ինչ հիմա տեսնում էր Պիեռը, գրեթե ոչ մի տպավորություն չէին թողնում նրա վրա,— կարծես նրա հոգին, պատրաստվելով ծանր պայքարի, հրաժարվում էր ընդունել տպավորություններ, որոնք կարող էին նրան թուլացնել:

Կանանց կտորախումբն անցավ: Դրանց հետեւ ձգվեցին նորից սայլեր, զինվորներ, մեծ սայլեր. զինվորներ, ծածկույթավոր կառքեր, կառեթներ. զինվորներ, արկեր, զինվորներ. երեմն կանայք:

Պիեռը մարդկանց առանձին առանձին շէր տեսնում, այլ տեսնում էր նրանց շարժումը:

Բոլոր այդ մարդկանց, ձիերին քշում էր կարծես ինչ-որ մի անտես ուժ: Նրանք բոլորը, մի ժամ շարունակ, որի ընթացքում Պիեռը դիտում էր, տարբեր փողոցներից դուրս էին թափվում միւնույն ցանկությամբ՝ շուտով անցնել. Նրանք բոլորը միատեսակ, մյուսներին դիպչելով, սկսում էին բարկանալ, կոպել.

Ճերմակ ատամներ էին կրծտում, հոնքեր կիտում իրար վրա. միմյանց ատում էին միւնույն հայրոյանքները, և բոլոր գեմքերն ունեին միւնույն քաջարի-վճռական և դաժանորեն-սառն արտահայտությունը, մի արտահայտություն, որն առավոտը, թմրուկների գոնչոցի ձայնակցությամբ, զարմացրեց Պիեռին կապրալի դեմքի վրա:

Երեկոյան գեմ արդեն ուղեկցուրդի պետք հավաքեց իր զորախումբը և աղաղակելով ու վիճելով, մտավ սայլախմբերի արանքը, և գերիները, ամեն կողմից շրջապատված, գուրս եկան կալուգայի ճանապարհը:

Քայլում էին շատ արագ, առանց հանգիստ առնելու, և կանգ առան միայն, երբ արևն արդեն մայր էր մտնում: Սայլախմբերը գեմ առան մեկը մյուսին, և մարդիկ սկսեցին գիշերելու պատրաստություն տեսնել: Բոլորը երևում էին բարկացած ու դժգոհ: Ամեն կողմից երկար լսվում էին հայրոյանքներ, շարացած ճիշեր ու կովշտոցներ: Ուղեկցորդների հետեւ եկող կառեթը գեմ առավ ուղեկցորդներին պատկանող կառքին և առեղով ծակեց այն: Մի քանի զինվորներ տարբեր կողմերից վագեցին դեպի կառքը. ոմանք խփում էին կառեթին լծված ձիերի գլխին, թեքելով նրանց, մյուսները վիճում էին իրար հետ, և Պիեռը տեսավ, որ կարճ թրով ծանր վիրավորեցին մի գերմանացու գլուխը:

Թվում էր, բոլոր այդ մարդիկ այժմ, երբ աշնան երեկոյի ցուրտ մթնաշաղին կանգ էին առել դաշտեղ, ապրում էին բոլորին համակած շտապաղականությունից և արագորեն ուր-որ ընթացող շարժումից առաջացած անախորժ արթնացման միւնույն զգացումը: Կանգ առնելով, բալորը կարծես հասկացն, որ զեռ հայտնի չէ ո՛ւր են գնում, և որ այդ շարժումը շատ ծանր ու դժվար է լինելու:

Գերիների հետ այդ դադարքին ուղեկցուրդները վարվում էին ավելի վատ, քան քաղաքից դուրս գալիս: Այդ դադարքին առաջին անգամ գերիների մաս կերակուրը տվին ձիու մսից:

Ոպայից սկսած մինչև վերջին զինվորը՝ յուրաքանչյուրի մեջ նկատելի էր կարծես անձնական կատաղություն յուրա-

քանչյուր գերու դեմ, այնպես անսպասելի փոխվել էր նրանց առաջակա սիրալիր վերաբերմունքը:

Այդ կատաղությունն էլ ավելի սաստկացավ, երբ գերի ներին համրելու ժամանակ պարզվեց, որ Մոսկվայից դրա գալու իրարանցումի պահին, մի ոռւս զինվոր, փորացավ ձեւ վացնելով փախել էր: Պիեռը տեսավ, թե ինչպես ֆրանսացին ծեծեց ոռւս զինվորին նրա համար, որ զինվորը հեռացել էր ճանապարհից, և լսեց, թե ինչպես կապիտանը, իր բարեկամը, հանդիմանում էր ենթասպային՝ ոռւս զինվորի փախչելու համար և սպառնում էր նրան զատարանով: Ենթասպայի պատճառանքին, թե զինվորը հիվանդ էր և չէր կարող քայլել, սպանավ, թե հրամայված է՝ գնդակահարել նրանց, ովքեր ետ կրմնան: Պիեռն զգաց, որ այն ճակատագրական ուժը, որը զարգախեց նրան մահապատժի պահին և որն աննկատելի էր գերության ժամանակ, հիմա նորից տիրեց նրա էությանը: Նա սպասափում էր. բայց զգում էր, թե ինչպես այն ճիգերի հետ, որ անում էր ճակատագրական ուժը՝ իրեն զախշախելու, նրա հոգում աճում և ամրանում էր կյանքի դրանից անկախ ուժը:

Պիեռն ընթրեց հաճարի ալյուրով ու ձիու մսով պատրաստած ապուրը, և խոսակցեց ընկերների հետ:

Ոչ Պիեռը, ոչ էլ նրա լնկերներից մեկնումեկը շխոսեցին այն մասին, թե ինչ տեսան Մոսկվայում, ոչ ֆրանսացիների կոպիտ վերաբերմունքի մասին, ոչ գնդակահարելու կարգադրության մասին, որ հայտարարվեց իրենց. բոլորը, կարծես վատթարացած դրությանը հակառակ, առանձնապես աշխույժ էին և ուրախ: Խոսում էին անձնական հիշողություններից, ծիծաղելի տեսարանների մասին, որ տեսել էին արշավանքի ժամանակ, և կոծկում զրուցները ներկա կացության մասին:

Արևոք վաղուց մայր էր մտել: Պայծառ աստղերը վառվում էին մի քանի տեղ երկնքում. ելնող լիալուսնի կարմիր, հրդեհի նման ցոլքը տարածվել էր երկնքի մայրին, և հսկայական կարմիր գունդը զարմանալիորեն տատանվում էր գորշ մառախուղում: Լուսավորվեց: Երեկոն արդեն վերջանում էր, բայց գիշերը դեռ չէր սկսվել: Պիեռը վեր կացավ իր նոր ընկերների

մոտից և խարույկների արանքով գնաց ճանապարհի մյուս կողմը, ուր ասում էին, գտնվում էին գերի զինվորները: Նա ուզում էր խոսել նրանց հետ: Ճանապարհին ֆրանսացի պահակը կանգնեցրեց նրան և հրամայեց ետ դառնալ:

Պիեռը վերադարձավ, ոչ թե գեպի խարույկը, գեպի ընկերները, այլ գեպի մի լծարձակ սայլ, որի մոտ ոչ ոք չկար: Նա, ոտները ծալելով ու գլուխն իշեցնելով, նստեց սառը գետնին՝ սալի անիվի մոտ և երկար մնաց անշարժ նստած, մտածելով: Անցավ ժամից ավելի: Ոչ ոք չէր անհանդստացնում Պիեռին: Հանկարծ նա բրբաց իր թափ, բարեհոգի ծիծաղով այնպես բարձր, որ ամեն կողմից մարդիկ զարմացած նայեցին արդ տարօրինակ, հայտնապես մենավոր ծիծաղի վկա:

— Հա-հա-հա... — ծիծաղեց Պիեռը: Ու բարձրածայն ասավ ինքն իրեն: — Զինվորը շթողեց ինձ: Բնուեցին ինձ, փակեցին: Գերության մեջ են պահում ինձ: Ո՞ւմ, ինձ: Ինձ — իմ անմահ հոգին: Հա-հա-հա... Հա-հա-հա... — ծիծաղում էր նա արցունքն աշբերին:

Ինչ-որ մի մարդ վեր կացավ և մոտեցավ նայելու, թե ինչու է մենակ ծիծաղում այդ տարօրինակ, մեծամարմին մարդք: Պիեռը ծիծաղը զադարեցրեց, վեր կացավ, հեռացավ հետաքրքրվողից և շուրջը նայեց:

Առաջ՝ խարույկների ճարճատյունից և մարդկանց խոսուցից բարձր աղմկող վիթխարի, անծայր բացօթյագը լոռում էր: Խարույկների կարմիր կրակները հանգչում էին և աղոտանում: Բարձր պայծառ երկնքում կանգնած էր լիալուսնը: Անտառներն ու դաշտերը, որ առաջ ճամբարի բռնած տեղից դենը շէին երեխում, հիմա բացվել էին հեռվում: Եվ դեռ այդ գաշտերից ու անտառներից դենը երևում էր պայծառ, երերում, դեպի իրեն կանչող անսահման հեռուն: Պիեռը նայեց երկնքին նրա խորը գնացող, շողերով խաղաղով աստղերին: «Եվ այս բոլորն իմն է, և այս բոլորն իմ մեջ է, և այս բոլորը ես եմ, — մտածում էր Պիեռը: — Եվ այս բոլորին ձերբակալել ու նստեցրել են բարաքում, տախտակներով պարսպած բարաքում: Նա ժբադաց և գնաց իր ընկերների մոտ՝ պատրաստվելով քնելու:

Հոկտեմբերի առաջին օրերին Կուտուզովի մոտ եկալ մը նոր բանագնաց՝ Նապոլեոնի նամակով և հաշտության առաջարկով, խարուսիկ կերպով նշված Սոսկվայից, այնինչ Նապոլեոնն արդեն ոչ այնքան հեռու Կուտուզովի առջևն էր՝ Կալուգայի հին ճանապարհի վրա: Կուտուզովն այդ նամակին պատասխանեց այնպես, ինչպես առաջին նամակին, որ բերել էր Լորիստոնը. Նա ասավ, թե հաշտության մասին խոսք լինել չկարող:

Շուտով գրանից հետո Դորոխովի պարտիզանական ջոկատից, որը գործում էր Տարուտինոյից դեպի ձախ, զեկուց ստացվեց, թե Ֆոմինսկոյեում զորքեր են երևացել, թե այդ զորքերը կազմված են Բրուսյեի դիվիզիայից, և թե այդ դիվիզիան, մյուս զորքերից բաժանված, հեշտությամբ կարող է ոչնչացվել: Զինվորներն ու սպաները նորից պահանջեցին գործունեություն: Շտարի գեներալները, Տարուտինոյի մոտ տարած թեթև հաղթանակի հիշողությունից քաջալերված, Կուտուզովի առաջ պնդում էին՝ Դորոխովի առաջարկն իրագործելու վրա: Կուտուզովը ոչ մի հարձակում հարկավոր չէր համարում: Եղավ միջին մի բան, այն, ինչ պետք է կատարվեր. Ֆոմինսկոյե ուղարկվեց ոչ մեծ մի ջոկատ, որը պետք է գրուի Բրուսյեի վրա:

Տարօրինակ պատահականությամբ այդ նշանակումը, — ամենադժվարինն ու ամենակարևորը, ինչպես պարզվեց հետո, — ստացավ Դոխտուրովը, հենց այն համեստ, փոքրամարդին Դոխտուրովը, որին ոչ ոք չի նկարագրել մեզ որպես ճակատամարտերի ծրագրեր կազմող, գնդերի առջեցից թողող, մարտկոցների վրա խաչեր նետող և այլն, որին համարում և անվանում էին անվճական ու ոչ թափանցամիտ, բայց այդ իսկ Դոխտուրովը, որին ուղաների՝ ֆրանսացիների հետ ունեցած բոլոր պատերազմների ժամանակ, Առւատերլիցից սկսած մինչև 13 թիվը, մենք տեսնում ենք հրամանատարում է ամեն տեղ, ուր միայն դրությունը ծանր է: Առւատերլիցում նա մնում է վերջինը Առւգեստի ամբարտակի մոտ, գնդեր է հավաքում, փրկելով ինչ կարելի է, երբ ամեն ինչ փախչում ու կործանվում

է, և ոչ մի գեներալ չկա վերջապահում: Նա, տեսդով հիվանդ, 20 հազարանոց զորքով գնում է Սմոլենսկ քաղաքը պաշտպանելու նապոլեոնյան ամբողջ բանակի դեմ: Սմոլենսկում՝ Մալախովյան դռների մոտ, նա հազիվ նիրհում է տեսնդի պարուսիզմի մեջ, նրան արթնացնում է Սմոլենսկի հրետակոծությունը, և Սմոլենսկը դիմանում է ամբողջ օրը: Բորոդինոյի ճակատամարտում, երբ Բագրատիոնն սպանված է և մեր ձախ թերի զորքերը զարդված են 9-ը 1-ի համեմատությամբ և Գրանսական հրետանու ամբողջ ուժն ուղղված է այն կողմը, ուղարկվում է ոչ այլ ոք, այլ հենց անվճական ու ոչ թափանցամիտ Դոխտուրովը, և Կուտուզովն շտապում է ուղղել իր սխալը, երբ նա այնտեղ քիչ էր մնում ուղարկելու մի ուրիշին: Եվ փոքրամարդին, լուակյաց Դոխտուրովը գնում է այնտեղ, և Բորոդինոն՝ ուս զորքի լավագույն փառքն է: Եվ շատ հերոսներ են նկարագրել մեզ՝ ոտանավորներով ու արձակ, բայց Դոխտուրովի մասին գոեթե ոչ մի խոսք:

Նորից Դոխտուրովին ուղարկում են այնտեղ՝ Ֆոմինսկոյե, և այնտեղից Մալի Յարուլավեց, այն վայրը, ուր տեղի ունեցավ վերջին ճակատամարտը ֆրանսացիների հետ, այն վայրը, որտեղից ակներևաբար արդեն սկսվում է ֆրանսացիների կործանումը, և դարձյալ շատ հանճարներ ու հերոսներ են նկարագրում մեզ կովի այդ շրջանում, բայց Դոխտուրովի մասին ոչ մի խոսք կամ շատ քիչ բան, կամ կասկածու: Այս իսկ լուսնը Դոխտուրովի մասին ամեն բանից ակներևաբար ապացում է նրա արժանիքները:

Բնական է, որ այն մարդը, որը մեքենայի շարժումը չի հասկանում նրա գործելու միջոցին, բնական է, որ նրան թըվա, թե այդ մեքենայի կարենոր մասը այն տաշեղն է, որ պատահաբար ընկել է նրա մեջ և, խանգարելով նրա բանելուն, թըվարտում է նրա մեջ: Մեքենայի կազմությունը շամակացող մարդը չի կարող հասկանալ այն, որ մեքենայի ամենաչական մասերից մեկը, գործին վնասող ու խանդարող այդ տաշեղը չէ, այլ այն փոքրիկ փոխանցող անիվը, որ պատվում է անաղմուկ:

Հոկտեմբերի 10-ին, այն իսկ օրը, երբ Դոխտուրովն անցավ դեպ Ֆոմինսկոյե տանող ճանապարհի կեսը և կանգ առաջ

Արիստովով գյուղում՝ պատրաստվելով ճշտությամբ կատարել տրված հրամանը, ֆրանսական ամբողջ գորքը, իր զղաձգական շարժումով համար կա Մյուրատի դիրքերը, ինչպես թվում էր, նրա համար, որ ճակատամարտ տա, հանկարծ առանց պատճառի թեքվեց ձախ՝ Կալուգայի ճանապարհը և սկսեց մտնել Ֆոմինսկոյե, ուր առաջ գտնվում էր Բրուսելն, Դոխտուրովի հրամանատարության տակ այդ ժամանակ կային, բայց Դորոխովից, Ֆիգների և Սեսլավինի երկու փոքրիկ չոկասները:

Հոկտեմբերի 11-ի երեկոյան Սեսլավինը եկավ Արիստովով՝ իշխանության մոտ, բերելով գերի բանված ֆրանսական մի գվարդիական: Գերին ասում էր, թե քիչ առաջ Ֆոմինսկոյե մտած զորքերը առաջապահն են ամբողջ մեծ բանակի, որ Նապոլեոնն էլ այդտեղ է, որ ամբողջ բանակն արդեն 5-րդ օրն է դուրս է եկել Մոսկվայից: Նույն այդ երեկո մի ճորտ սպասավոր, գալով Բորովսկից, պատմել էր, թե ինչպես է տեսել Հրակայական զորքի քաղաք մտնելը: Դորոխովի ջոկատի կազակները հայտնեցին, թե նրանք տեսել են, թե ինչպես ֆրանսական գվարդիան գնում էր դեպ Բորովսկ տանող ճանապարհով: Այդ բոլոր տեղեկություններից պարզվեց, որ այնտեղ, ուր կարծում էին գտնել մի դիվիզիա, այժմ ֆրանսական ամբողջ բանակն էր, որ գալիս էր Մոսկվայից անսպասելի ուղղությամբ՝ Կալուգայի հին ճանապարհով: Դոխտուրովը ոչինչ չէր ուզում ձեռնարկել, որպէս հիմա նրա համար պարզ չէր, թե ինչո՞ւմն է կայանում իր պարտականությունը: Նրան հրամայված էր հարձակվել Ֆոմինսկոյեի վրա: Բայց Ֆոմինսկոյեում առաջ միայն Բրուսելն էր, այժմ ամբողջ ֆրանսական բանակն էր: Երմոլովին ուզում էր վարվել ըստ իր հայեցողության, բայց Դոխտուրովը պնդում էր, թե ինքը պետք է ունենա գերապահի հրամանը: Որոշվեց զեկույց ուղարկել շտաբը:

Դրա համար ընտրվեց բանիմաց սպա Բոլխովիտինովը, որը բայց գրավոր զեկույցից, խոսքերով պիտի պատմեր ամբողջ գործը: Գիշերվա ժամը 12-ին Բոլխովիտինովը, ծրար և բանակոր կարգադրություն ստանալով, պահստի-օգնական ձիերով կազակի ուղեկցությամբ, սլացավ դեպի գլխավոր շտաբը:

## XVI

Գիշերը մութ էր, տաք էր, աշնանային: Զորրորդ օրն էր արդեն անձրև էր գալիս: Երկու անգամ ձիերը փոխելով և ժամ ու կեսում 30 վերստ գնալով ցեխոտ, կպչուն ճանապարհով, Բոլխովիտինովը գիշերվա ժամը 2-ին Լետաշևկայում էր: Ինչելով մի խրճիթի մոտ, որի բարակ ձողերից հյուսված ցանկապատի վրա կար գուցանակ՝ «Գլխավոր շտաբ», և ձին թողնելով, նա մտավ մութ հաշտը:

— Շուտով տարեք ինձ հերթապահ գեներալի մոտ: Շատ կարենոր գործ է, — ասավ նա ինչ-որ մեկին, որ վեր կենալով, ծանր ֆաֆսացնում էր մութ հաշտում:

— Իրիկվանից շատ տկար էին, երեք գիշեր է շնչ քնել, — միշնորդելու ձեռվ շնչաց սպասյակի ձայնը: — Դուք առաջ մի կապիտանին արթնացրեք:

— Շատ կարենոր է, գեներալ Դոխտուրովից, — ասավ Բոլխովիտինովը, ներս մտնելով իր շոշափած բաց դռնից:

Սպասյակը նրանից առաջ անցավ և սկսեց ինչ-որ մեկին արթնացնել:

— Ձերդ բարեծնություն, ձերդ բարեծնություն, սուրհանդակ:

— Ի՞նչ, ի՞նչ. ո՞ւմ կողմից, — ասավ մեկի քնաթաթախ ձայնը:

— Դոխտուրովի, Ալեքսեյ Պետրովիչի: Նապոլեոնը Ֆոմինսկոյեում է, — ասավ Բոլխովիտինովը, մութի մեջ շտեսնելով նրան, ով հարց տվեց իրեն, բայց ձայնի ճնշումից ենթադրելով, որ զա Կոնովնիցինը չէր:

Արթնացրած մարդը հորանջում էր և ճմլկոտում:

— Նրան արթնացնել չեմ ուզում, — ասավ նա, շոշափումով ինչ-որ բան որոնելով: — Տկար է: Գուցե, այնպես, լուրեր են:

— Ահավասիկ զեկույցը, — ասավ Բոլխովիտինովը, — հըրամայված է անմիջապես հանձնել հերթապահ գեներալին:

— Սպասեք, լույս վառեմ: Ո՞ւր ես դու, անիծած, միշտ գնում է, — սպասյակին դիմելով՝ ասավ ճլմկոտող մարդը: Դա Շշերբինին էր, Կոնովնիցինի ադյուտանտը: — Գտա, գտա, — ավելացրեց նա:

Սպասյակը կայծքարից կրակ էր հանում, Շշերբինինը շոշափում էր մոմակալը:

— Ախ, դարշելիներ,— զգվանքով ասավ նա:

Լույսի կայծերով Բոլխովիտինովը տեսավ մոմը ձեռին բըռնած Շշերբինինի երիտասարդ դեմքը և առաջին անկյունում դարձալ մի քնած մարդ: Դա Կոնովնիցինն էր:

Երբ սկզբում կապույտ և ապա կարմիր բոցով կայծքարը վառեց արեթը, Շշերբինինը վառեց ճարպամոմը, որի մոմակալից փախան նրան կրծող մթնապապուկները, և նայեց սուրճանդակին: Բոլխովիտինովն ամբողջովին ցեխուտ էր և, թեքով սրբվելով, երեսը սվաղում էր:

— Բայց ո՞վ է հայտնում,— ասավ Շշերբինինը, ծրարը վերցնելով:

— Տեղեկությունը ճիշտ է,— ասավ Բոլխովիտինովը: — Թե գերիները, թե կազակները, թե լրտեսները՝ բոլորը միաձայն ասում են նույնը:

— Ինչ արած, պետք է արթնացնել,— ասավ Շշերբինինը, վեր կենալով ու մոտենալով գիշերային թասակով մարդուն, որ ծածկված էր շինելով: — Պյոտր Պետրովի՛չ, — ասավ նա: — Կոնովնիցինը շշարժվեց: — Գլխավոր շտաբը, — ասավ նա, ժըպտալով, իմանալով, որ այդ խոսքերը հավանորեն կարթացնեն նրան:

Եվ իսկապես, գիշերային թասակով գլուխը բարձրացավ անմիջապես: Կոնովնիցինի սիրուն, ամրապինդ, հիվանդագին-բորբոքած այտերով դեմքին մի ակնթարթ մնաց դեռևս իրական դրությունից հետու քնի երազանքների արտահայտությունը, բայց հետո նա հանկարծ ցնցվեց, նրա դեմքը ընդունեց սովորական-հանգիստ և հաստատակամ արտահայտությունը:

— Հը, ի՞նչ կա: Ո՞ւմ կողմից է, — անշտապ, բայց անմիջապես հարցրեց նա, լուսից աշքերը թարթելով:

Լսելով սպայի տեղեկությունը, Կոնովնիցինը բաց արավ ծրարը և կարդաց: Հազիվ կարդացած՝ նա բրդե գուլպաներով ոտներն իջեցրեց հողե հատակին և սկսեց ոտնամանները հագնել: Սպա թասակը վերցրեց և, քունքերի մազերը սանրելով, գլխարկը դրեց:

— Դու շուտ տեղ հասա՞ր: Գնանք գերապայծառի մոտ: Կոնովնիցինն անմիջապես հասկացավ, որ բերված տեղեկությունը մեծ կարևորություն ուներ, և որ դանդաղել չի կարելի: Լա՞վ էր դա, թե վատ՝ նա չէր մտածում և իրեն հարց չեր տալիս այդ մասին: Նրան այդ չէր հետաքրքրում: Պատերազմի ամբողջ գործին նա չէր նայում ոչ մտքով, ոչ դատողությամբ, այլ ինչ-որ ուրիշ բանով: Նրա հոգում կար խոր, շարտահայտված համոզում, թե ամեն ինչ լավ կլինի, բայց հարկավոր է դրան հավատալ, և մանավանդ հարկավոր չէ ասել այդ, այլ պետք է միայն անես քո գործը: Եվ իր այդ գործը նա անում էր, նվիրելով դրան իր բոլոր ուժերը:

Պյոտր Պետրովիշ Կոնովնիցինը նույնպես, ինչպես և Դոխտուրովը, որ կարծես միայն քաղաքավարության համար են մտցված 12 թվի այսպես անվանված հերոսների ցուցակը — Քարկաների, Ռակոսկիների, Երմոլովների, Պլատովների, Միլրադովիների ցուցակը — նույնպես, ինչպես և Դոխտուրովը, վայելում էր ըստ ամենայնի սահմանափակ ընդունակություններով և գիտելիքներով մարդու համբավ, և նույնպես, ինչպես Դոխտուրովը, Կոնովնիցինը երթեք ճակատամարտի ծրագիրներ չէր կազմում, բայց միշտ գտնվում էր այնտեղ, ուր ամենից գժվարն էր. քնում էր միշտ դուրը բաց այն օրից, երբ նշանակվեց հերթապահ գեներալ, հրամայելով յուրաքանչյուր սուլուկանդակի արթնացնել իրեն. Կովի ժամանակ միշտ կրակի տակ էր լինում, այնպես որ Կուտուզովը հանդիմանում էր նրան դրա համար և վախենում էր ուղարկել. և նա էլ Դոխտուրովի պես մեկն էր այն աննկատելի ատամնավոր անիվներից, որոնք առանց ճոհնչի ու աղմուկի, կազմում են մեքենայի ամենաէսական մասը:

Խոճիթից դուրս գալով խոնավ, մութ գիշերը, Կոնովնիցինը դեմքը խոժոռեց՝ մասամբ սաստկացող գլխացավից, մասամբ զինում ծագած այն անհաճո մտքից, թե հիմա, այս տեղեկությունն ստանալով, ինչպես կուռզի շտաբի ազդեցիկ մարդկանց ամբողջ այս բունը, մանավանդ թենիգսենը, որ Տարուտինոյից հետո ոխերիմ թշնամի էր Կուտուզովին. ինչպես են առաջարկներ անելու, վիճելու, հրամայելու, փոխելու. և այդ նախա-

զգուշացումն անախորժ էր նրա համար, թեև նա գիտեր, որ առանց դրան չի կարելի:

Իսկապես, Տոլլը, որի մոտ գնաց նա նոր տեղեկությունը հաղորդելու, անմիջապես սկսեց պարզել-բացատրել իր նկատառումները հետո ապրող գեներալին, և Կոնովնիցինը, անիսու հոգնած լսելով, հիշեցրեց նրան, թե պետք է գնալ գերապայծառի մոտ:

## XVII

Կուտուզովը, ինչպես և բոլոր ծեր մարդիկ, քիչ էր քնում գիշերները: Նա ցերեկը հաճախ նիրհում էր անսպասելի: Բայց գիշերը, առանց հանվելու իր անկողնու վրա պառկած, մեծ մասամբ շէր քնում և մտածում էր:

Այդպես նա պառկած էր և այժմ իր մահճակալին, ծանր, մեծ այլանդակված գլուխը փափիկ ձեռին հենած, ու մտածում էր, բաց մի աշբովը մթությանը նայելով:

Այն օրից, երբ Բենիկսինը, նամակագրություն ունենալով թագավորի հետ և բոլորից ավելի ուժեղ լինելով շտարում, խուսափում էր նրանից, Կուտուզովն ավելի հանգիստ էր այն կողմից, որ իրեն զորքերի հետ շեն հարկադրի նորից մասնակցել անօգուտ հարձակողական գործողությունների: Տարուտինոյի ճակատամարտի և նրա նախօրեի դասը (որ ցավագնորեն հիշում էր Կուտուզովը) նույնպես պետք է ազդեր, մտածում էր նա:

Նրանք պետք է համանան, որ մենք կարող ենք տարվել, հարձակողաբար գործելով: Համբերություն և ժամանակ, ահա իմ ուզմիկ հսկանները», — մտածում էր Կուտուզովը: Նա գիտեր, որ խնձորը շպետք է քաղել, քանի դեռ խակ է: Նա ինքը կընկնի, երբ հասնի. իսկ եթե խակ քաղես, կփշացնես թե՛ խնձորը, թե՛ ծառը և ատամներդ կառնվեն: Նա, ինչպես փորձված որսորդ, գիտեր, որ գազանը վիրավորված է, վիրավորված է այնպես, ինչպես կարող էր վիրավորել միայն ոռւսական բովանդակ ուժը, բայց մահացո՞ւ էր թե ոչ, դա տակավին շաբարված խնդիր էր: Այժմ կորիստոնին և Բերտելեմին ուղարկելու և պարտիզա-

ների տեղեկությանց համաձայն Կուտուզովը գրեթե գիտեր, որ նա մահացու է վիրավորված: Բայց տակավին ապացուցներ էին հարկավոր, պետք էր սպասել:

Նրանք ուզում են վազել տեսնել ինչպես են նրան սպանել: Սպասեցեք՝ կտեսնեք: Շարունակ զորաշարժեր, շարունակ հարձակումներ, — մտածում էր նա: — Ինչի՞ համար են: Մի գլուխ աշքի ընկնել: Կարծես մի ինչ-որ ուրախ բան կա կովելու մեջ: Դրանք կարծես երեխաններ են, որոնցից չես կարող հասկանալ, թե բանն ինչպես է եղել, այն պատճառով, որ բոլորն ուզում են ապացուցել, թե ինչպես նրանք կարողանում են կրովել: Բայց բանը հիմա այդ չէ:

Եվ ի՞նչ հմուտ զորաշարժեր են առաջարկում դրանք բոլորը: Նրանց թվում է, որ երբ իրենք մի երկու պատահականություն են հնարել (նա հիշեց Պետերբուրգից եկած լողանուր ծրագրի մասին), ուրեմն գտել են բոլորը: Բայց դրանց բոլորին թիվ չկա»:

Այն շլուժված խնդիրը՝ Բորոդինոյում հասցված վերքը մահացո՞ւ էր թե ոչ, արդեն մի ամիս էր կախված էր Կուտուզովի գիխավերնը: Մի կողմէց ֆրանսացինները գրավել էին Մոսկվան: Մյուս կողմից, Կուտուզովն անկասկած իր ամբողջ էությամբ զգում էր, թե այն արսափելի հարվածը, որի մեջ նա ամբողջ ուսւամբանց հետ միասին լարել-դրել էր իր ամբողջ ուժերը, պետք է որ մահացու լիներ: Բայց համեստայն դեպս՝ ապացուցներ էին հարկավոր, և նա դրանց սպասում էր արգելն մի ամիս, և որքան ժամանակն առաջ էր անցնում, նա այնքան ավելի անհամբեր էր դառնում: Անքուն զիշերները անկողնու վրա պառկած՝ նա անում էր նույնը, ինչ անում էին այդ շահել դեներաները, նույնը, որի համար ինքը հանդիմանում էր նրանց: Ինքը մտածում-գտնում էր բոլոր հնարավոր պատահականությունները նույնպես, ինչպես և շահելները, բայց այն տարբերությամբ միայն, որ ինքը ուժին չէր հիմնում այդ ենթադրությունների վրա և ինքը այդպիսի պատահականություն տեսնում էր ոչ թե երկու, երեք, այլ հազարավորներ: Որքան շատ էր նա մտածում՝ այնքան շատ էին ներկայանում այդ պատահականությունները: Նա մտածում էր նատալեռնան բանակի, ամբողջի կամ նրա մասերի ամեն տեսակի շար-

ժում դեպի Պետերբուրգ, իր վրա, անցնել իր թիկունքը, մատածում էր (որից նա ավելի շատ էր վախենում) և այն պատահականությունը, որ Նապոլեոնը կսկսի իր դեմ պայքարել իր իրակ զենքով, որ կմնա Մոսկվայում, սպասելով իրեն։ Կուտուզովը մտածում էր, թե նապոլեոնյան բանակը կարող է շարժվել անգամ ետք Մեդին և Յուինով։ Բայց մի բան, ինչ նա չի կարող նախատեսել, այդ այն է, ինչ կատարվեց, — Նապոլեոնի զորքի այն խելացնոր, զղաձգաբար դեսուդեն նետվելը Մոսկվայից դուրս գալու առաջին 11 օրվա ընթացքում, — դեսուդեն նետվելը, որը Հնարավոր դարձրեց այն, որի մասին այնուամենայիվ դեռ այն ժամանակ չէր համարձակվում մտածել Կուտուզովը։ — Փրանսացիների իսպատ ոչնչացումը; Դորոխովի տեղեկությունները Բրուսյերի դիվիզիայի մասին, պարտիզանների տեղեկությունները Նապոլեոնի բանակի աղետափ գրության մասին, լուրերը Մոսկվայից դուրս գալու պատրաստության մասին, — այս ամենը հաստատում էին այն ենթադրությունը, թե Փրանսական բանակը ջարդված է և պատրաստվում է փախչել։ Բայց դրանք միայն ենթադրություններ էին, որ կարեւոր էին թվում շահեների համար, սակայն ոչ Կուտուզովի համար։ Նա իր 60-ամյա փորձառությամբ գիտեր, թե ինչ արժեք պետք է տալ լուրերին, գիտեր, թե որևէ բան կամեցդ մարդկի ինչպես ընդունակ են բոլոր տեղեկությունները խմբավորել այնպես, որ նրանք կարծեն հաստատում են ցանկալին, և գիտեր, թե ինչպես այդպիսի դեպքում սիրով զանց են առնում բոլոր հակասական բաները, եվ որքան այդ շատ էր ցանկանում Կուտուզովը, այնքան ավելի քիչ էր թույլ տալիս իրեն դրան հավատալ։ Այդ խնդիրն զբաղեցնում էր նրա հոգեկան ամրությունը, մնացածը նրա համար կյանքի սովորական գործ էր կյանքի այդպիսի սովորական գործ ու ենթակայություն էին նրա խոսակցությունները շտաբականների հետ, ու-ու Տաէլին ուղղված նամակները, որոնք գրեց նա Տարուտինոյից, վեպերի ընթերցումը, պարզեների բաշխումը, գրագրությունը Պետերբուրգի հետ և այլն։ Բայց Փրանսացիների կործանումը, որ նախատեսել էր միայն ինքը, նրա հողու միակ ցանկությունն էր։

Հոկտեմբերի 11-ի գիշերը նա պառկել էր ձեռին կոթնած և մտածում էր այդ մասին։

Հարեան սենյակում շարժվեցին, և լսվեցին Տոլի, Կոնովնիցինի և Բոլխովիտինովի քայլերը։

— Էյ, ո՞վ է այդտեղ։ Մտեք, ներս արի։ Նոր ի՞նչ կա, — ձայն տվեց ֆելդմարշալը նրանց։

Մինչ լակելը կվառեր մոմը՝ Տոլի պատմեց հաղորդագրության բովանդակությունը։

— Ո՞վ է բերել, — Հարցրեց Կուտուզովը մի այնպիսի դեմքով, որը, երբ մոմը վառվեց, զարմացրեց Տոլին իր սառը խըստությամբ։

— Կասկած չի կարող լինել, ձերդ պայծառություն։

— Կանչիր, կանչիր նրան այստեղ։

Կուտուզովը նստել էր՝ մի ոտք մահճակալից իշեցրած և իր մեծ փորով մյուս ծալած ոտի վրա ընկած։ Նա իր տեսնող աշքը կկոցեց, որ սուրհանդակին ավելի լավ դիտի, կարծես նրա դիմագծերում ուզում էր կարդալ այն, ինչ զբաղեցնում էր իրեն։

— Ասա, ասա, բարեկամս, — ասավ նա Բոլխովիտինովին իր հանդարտ, ծերունական ձայնով, ծածկելով կրծքի վրա ուռած շապիկը։ — Մոտեցիր, ավելի մոտեցիր։ Ի՞նչ լուրեր ես բերել ինձ։ Հը։ Նապոլեոնը հեռացե՞լ է Մոսկվայից։ Ճշմարտապես այդպես է։ Հը։

Բոլխովիտինովը մանրամասն զեկուցեց նախ այն բոլորը, ինչ կարգադրված էր իրեն։

— Ասա, ասա, շուտով, սիրտս մի մաշի, — ընդհատեց նրան Կուտուզովը։

Բոլխովիտինովը պատմեց ամեն ինչ և լոեց, սպասելով հրամանի։ Տոլին ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Կուտուզովը ընդհատեց նրան։ Նա ինչ-որ բան էր ուզում ասել, բայց հանկարծ նրա գեմքը կուշ եկավ, կնճոտվեց։ Նա, ձեռը Տոլի կողմը շարժելով, շրջվեց հակառակ կողմը, դեպ խրճիթի կարմիր անկյունը, որ սեխն էր տալիս սրբապատկերներից։

— Տեր իմ, ստեղծող, Դու լսեցիր մեր աղոթքը։ — Դողդոջ ձայնով ասավ նա, ծեռները խաչելով։ — Ռուսաստանը փրկված է։ Շնորհակալ եմ քեզնից, տեր։ — Եվ նա արտասվեց։

## XVIII

Այդ լուրն ստանալու պահից և մինչև պատերազմի վերջը Կուտուզովի գործունեությունը կայանում է միայն այն բանում, որպեսզի իշխանությամբ, խորամանկությամբ, խրնդանքներով պահի իր գործերը անօգուտ հարձակումներից, մաներներից և կործանվող թշնամու հետ ընդհարվելուց: Դոխտուրովը գնում է դեպի Մալոյարոսլավեց, բայց Կուտուզովը դանդաղում է իր բանակով և հրաման է տալիս մաքրել Կալուգան, որի այն կողմը նահանջելը նրան պատկերանում է շատ հնարավոր:

Կուտուզովն ամենուրեք նահանջում է, բայց թշնամին, շսպասելով նրա նահանջին, ետք է փախչում հակառակ կողմը:

Նապոլեոնի պատմագիրները նկարագրում են մեզ նրա հրմուտ զորաշարժերը գեպի Տարուտինո և Մալոյարոսլավեց և ենթադրություններ են անում, թե ի՞նչ կլիներ, եթե նապոլեոնը կարողանար մտնել հարուստ հարավային նահանգները:

Բայց, շխոսելով այն մասին, թե ոչինչ չէր խանգարում նապոլեոնին այդ հարավային նահանգները գնալու (որովհետեւ ոռուսական բանակը նրան ճանապարհ էր տվել), պատմագիրները մոռանում են, որ նապոլեոնի բանակը չէր կարող ոչ մի բանով փրկվել, որովհետև նա ինքն իր մեջ արդեն այն ժամանակ կրում էր անխուսափելի կործանման պայմանները: Ինչո՞ւ այդ բանակը, որ առատ պարենամթերք գտավ Սոսկվայում և շկարողացավ այն պահել, այլ տրորեց ոտների տակ, այդ բանակը, գալով Սմոլենսկ, պարենամթերքը չի հավաքում, այլ կողոպտում է, ինչո՞ւ այդ բանակը կարող էր կազդուրվել Կալուգայի նահանջում, որը բնակված էր նույն ոռուսներով, ինչպես և Սոսկվան, և կրակի նույն հատկությամբ՝ վառել այն, ինչ վառում են:

Բանակը ոչ մի տեղ չէր կարող կազդուրվել: Նա Բորոդինոյի ճակատամարտից և Մոսկվայի կողոպուտից սկսած իր մեջ արդեն կրում էր կարծես քայլայման քիմիական պայմանները:

Այդ նախկին բանակի մարդիկ իրենց առաջնորդների հետ փախչում էին, իրենք էլ շիմանալով ուր, ցանկանալով (նապո-

լեռնը և յուրաքանչյուր զինվոր) միայն մի բան. որքան կարելի է շուտ անհատապես դուրս պրծնել այն անել գրությունից, որը, թեև անորոշ, նրանք բոլորը գիտակցում էին:

Միայն դրա համար Մալոյարոսլավեցում տեղի ունեցած խորհրդակցությանը, երբ ձևացնելով, թե իրենք՝ գեներալները, խորհրդակցում են, հայտնելով տարրեր կարծիքներ, վերջին կարծիքը պարզամիտ զինվոր Մուտոնի, որն ասավ այն, ինչ մտածում էին բոլորը, թե պետք է միայն հեռանալ որքան կարելի է շուտ, փակեց բոլոր բերանները, և ոչ ոք, անգամ նապոլեոնը, ոչինչ չկարողացավ ասել այդ բոլորի կողմից գիտակցվող ճշմարտության դեմ:

Բայց թեև բոլորը գիտեին, որ պետք էր հեռանալ, մնում էր առակալին այն բանի ամոթի գիտակցությունը, թե պետք է փախչեն: Եվ պետք էր արտաքին մի հարված, որ հաղթահարեր այդ ամոթը: Եվ այդ հարվածը ներկայացավ հարկավոր պահին: Դա էր Գրանսացիների կողմից այսես կոչված լե Խուրրա դե լ'Էմպերեւ<sup>1</sup>.

Խորհրդակցության մյուս օրը նապոլեոնը, վաղ առավոտ, ձևացնելով, թե ցանկանում է դիտել զորքերը և անցած ու ապագա ճակատամարտի դաշտը, մարզաների շքախմբով և ուղեկցորդով անցավ զորքերի բռնած գծի մեջտեղով: Կազակները, որ վիստում-դառնում էին ավարի մոտերքը, հանդիպեցին իրեն կայսեր և քիչ մնաց որ նրան բռնեին: Եթե կազակները լրոնեցին այս անգամ նապոլեոնին, նրան փրկեց նույն բանը, ինչ կործանեց Գրանսացիներին. ավարը, որի վրա թե՛ Տարուտինոյում, թե՛ այստեղ, մարդկանց թողնելով, հարձակվեցին կազակները: Նրանք, ուշ շդարձնելով նապոլեոնի վրա, հարձակվեցին ավարի վրա, և նապոլեոնը կարողացավ հեռանալ:

Երբ ահա ուր որ է լes enfants du Don (Դոնի զավակները) կարող էին բռնել թագավորին իրեն իր բանակի մեջտեղը, պարզ էր, որ այլևս ոչինչ չէր մնում անելու, եթե ոչ միայն փախչել, որքան կարելի է շուտ՝ ամենամոտիկ ծանոթ ճանապարհով: Նապոլեոնն իր 40-ամյա փորով, շզգալով իր մեջ այլևս նախկին ճկունությունն ու համարձակությունը, հասկա-

<sup>1</sup> Կայսեր ուռուան:

ցավ այդ ակնարկը: Եվ կազակներից առած ահի ազդեցության տակ անմիջապես համաձայնեց Մուտոնի հետ և, ինչպես պատմագիրներն են ասում, հրաման տվեց՝ նահանջել ետ՝ Մոլենսկի ճանապարհ:

Այն, որ Նապոլեոնը համաձայնեց Մուտոնի հետ, և զորքերը ետ գնացին, չի ապացուցում այն, թե նա կարգադրեց այդ, այլ՝ որ ամբողջ բանակի վրա ներփործող ուժերը, նրան՝ բանակին, Մոժայսկի ճանապարհով ուղղելու իմաստով, միաժամանակ ներգործեցին և Նապոլեոնի վրա:

## XIX

Երբ մարդ շարժման մեջ է գտնվում, նա միշտ մտածելով, իր համար գտնում է այդ շարժմանը մի նպատակ: Նրա համար, որպեսզի մարդ գնա հազար վերստ՝ անհրաժեշտ է, որ մտածի, թե ինչ-որ լավ բան կա այդ 1000 վերստից դենք: Նրա համար, որպեսզի ուժ ունենա շարժվելու՝ պետք է պատկերացում ունենա ավետյաց երկրի մասին:

Ավետյաց երկիրը ֆրանսացիների հարձակման պահին Մովկան էր, նահանջի ժամանակ՝ իրենց հայրենիքը: Բայց հայրենիքը շափազանց հեռու էր, և հազար վերստ գնացող մարդը պետք է անպայման իրեն ասի, վերջնական նպատակը մոռանալով, թե հիմա, 40 վերստ անցնելով, ես կհասնեմ հանգըստի և գիշերելու վայրը: և առաջին անցումին հանգստի այդ վայրը ծածկում-սքռողում է վերջնական նպատակը և իր վրա է կենտրոնացնում բոլոր ցանկություններն ու հույսերը: Այն ձգտումները, որոնք արտահայտվում են առանձին մարդու մեջ, միշտ մեծանում են բազմության մեջ:

Ֆրանսացիների համար, որ ետ էին գնում Մոլենսկի հին ճանապարհով, վերջնական նպատակ — հայրենիքը շափազանց հեռու էր, և մերձավոր նպատակը, այն, դեպի որը, ահագին պրոպորցիայով բազմության մեջ ուժեղանալով, ձգտում էին բոլոր ցանկություններն ու հույսերը — Մոլենսկին էր: Ոչ թե այն պատճառով, որ մարդիկ գիտեին, թե Մոլենսկում շատ պարեն ու թարմ զորքեր կան, ոչ էլ այն պատճառով, որ նրանց ասել էին այդ (ընդհակառակի, բանակի բարձրագույն

աստիճանավորները և ինքը նապոլեոնը գիտեին, որ այնտեղ պարեն քիչ կա), այլ նրա համար, որ մենակ այդ կարող էր նրանց ուժ տալ շարժվելու և իսկական զրկանքներ կրելու, նրանք, և նոքա, որոնք գիտեին, և նոքա, որոնք շգիտեին, միասնական իրենց խարելով, որպես դեպի ավետյաց երկիր՝ ձգտում էին դեպի Մոլենսկ:

Դուրս գալով մեծ ճանապարհ՝ ֆրանսացիները զարմանալի եռանդով, լսված արագությամբ վազեցին դեպի իրենց հարած նպատակը: Բացի ընդհանուր ձգտման այդ պատճառից, որ ֆրանսացիների բազմությունը միացնում էր իրենց մի ամբողջություն և որոշ եռանդ տալիս նրան, կար նրանց միացնող ևս մի ուրիշ պատճառու Այդ պատճառը նրանց քանակն էր: Հենց նրանց հսկայական զանգվածն իսկ, ինչպես ձգողության փիզիկական օրենքի մեջ, դեպի իրեն էր ձգում առանձին առոմները՝ մարդկանց: Նրանք շարժվում էին իրենց հարյուր-հազարանոց զանգվածով, ինչպես ամբողջ պետությամբ:

Նրանցից յուրաքանչյուրը միայն մի բան էր ցանկանում՝ գերի ընկնել, ազատվել բոլոր սարսափներից ու դժբախտություններից: բայց, մի կողմից՝ ընդհանուր ձգտման ուժը դեպի Մոլենսկ — նպատակը քաշում-տանում էր յուրաքանչյուրին մենակը՝ ուղղությամբ: Սյուս կողմից կորպուսը չէր կարող գերության հանձնվել վաշտին, և շնայած ֆրանսացիներն օդտվում էին: մենք մի հարմար առթից, որպեսզի իրարից բաժանվեն և ամենաանշան պատրվակով գերի ընկնեն, այդ պատրվակները միշտ չէին պատահում: Հենց նրանց թիվը և սեղմ, արագ շարժումը նրանց զրկում էր այդ հնարավորությունից և ուսւների համար ոչ միայն դժվարին, այլև անհնար էր դարձնում կանգնեցնել այդ շարժումը, դեպի որն ուղղված էր ֆրանսացիների զանգվածների ամբողջ եռանդը: Մարմինը մեխանիկորեն պատառ-պատառ անելը չէր կարող որոշ սահմանից դենք արագացնել քայլքայման կատարված պրոցեսը:

Զյունակույտն անհնար է հալեցնել մի ակնթարթում: Գյուրեթյուն ունի ժամանակի որոշ սահման, որից շուտ՝ շերմության որեւէ զանգեր չեն կարող հալեցնել ձյունը: Ընդհակառակի, որքան շատ է զերմությունը, այնքան ավելի է ամրանում մնացած ձյունը:

Ոուս զորապետներից ոչ ոք, բացի Կուտուզովից, չէր հասկանում այս: Երբ որոշվեց ֆրանսական բանակի փախուսի ուղղությունը Սմոլենսկի ճանապարհով, այդ ժամանակ առաջն ինչ նախատեսեց Կոնյովնիցինը հոկտեմբերի 11-ի գիշերը, սկսեց իրականանալ: Բանակի բոլոր բարձրագույն առտիճանավորներն ուղում էին աշքի ընկնել, կտրել, բռնտել գերել, կործանել ֆրանսացիներին, և բոլորը պահանջում էին հարձակում:

Կուտուզովը մենակ իր բոլոր ուժերը (այդ ուժերը շատ մեծ չեն յուրաքանչյուր գլխավոր հրամանատարի մոտ) գործադրում էր, որպեսզի հակագդի հարձակման պահանջներին:

Նա չէր կարող նրանց ասել այն, ինչ հիմա ասում ենք մենք ինչի համար ճակատամարտ տալ և ճանապարհ կտրել, կորցնել մեր մարդկանց, անգթորեն խփել-սպանել դժբախտներին. ինչի՝ համար է այդ բոլորը, երբ Մոսկվայից մինչև Վյաժմա առանց ճակատամարտի հալվել է այդ զորքի մի երրորդը. բայց նա ասում էր նրանց, եզրակացնելով իր ծերունակն իմաստությունից այն, ինչ նրանք կարող էին հասկանալ, նաև ասում էր նրանց ուսի կամրջի մասին. և նրանք ծիծագում էին նրա վրա, զրպարտում նրան և նետվում ու մեծախոսում իրաված գազանի հանդեպ:

Վյազմայի մոտ երմոլովը, Միլորադովիչը, Պլատովը և ուրիշները, ֆրանսացիներին մոտիկ գտնվելով, շիառողացան զսպել ֆրանսացիների երկու կորպուս կտրելու և կործանելու իրենց ցանկությունը: Կուտուզովին, հայտնելով նրան իրենց մտադրության մասին, զեկուցի փոխարեն նրանք ծրարի մի ուղարկեցին ճերմակ թղթի մի թերթ:

Եվ որքան էլ կուտուզովն աշխատում էր զսպել զորքերին, մեր զորքերը հարձակվում էին, աշխատելով ճանապարհ կտրել: Հետևակ գնդերը, ինչպես պատմում են, եթաժշտախմբով ու թմրկահարությամբ էին գնում հարձակման և սպանցին ու կորցրին հազարավոր մարդիկ:

Բայց կտրել — ոչ ոքի շկտրեցին և շկործանեցին: Եվ ֆրանսական զորքը, վտանգից ավելի ամուր ձգված-պրկված, շարունակում էր համաշխափորեն հալվելով, իր էլ նույն կործանարար ճանապարհը դեպի Սմոլենսկ:

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

### I

Բորոդինոյի ճակատամարտը՝ նրան հետևող Մոսկվայի զրավումն ու ֆրանսացիների փախուստով առանց նոր ճակատամարտերի, պատմության ամենաուսանելի երկություներից մեկն է:

Բոլոր սկատմագիրները համաձայն են այն բանում, որ պետք յունների և ժողովուրդների արտաքին գործունեությունը՝ նրանց միմյանց հետ ընդհարվելու մեջ՝ արտահայտվում է պատերազմներով. որ անմիջականորեն, ուազմական խոշոր կամ փոքր հաշողությունների հետևանքով, ավելանում կամ պակասում է պետությունների և ժողովուրդների քաղաքական ուժը:

Որքան էլ տարօրինակ են պատմական նկարագիրներն այն բանի, թե ինչպես մի որևէ թագավոր կամ կայսր, գժտվելով ուրիշ կայսեր կամ թագավորի հետ, զորք է հավաքել, կովել թշնամու զորքի հետ, հաղթել է, սպանել երեք, հինգ, տասը հազար մարդ և դրա հետևանքով, պետություն և մի քանի միլիոնանց ամբողջ ժողովուրդ է նվաճել. որքան էլ անհասկանակի է, թե ինչո՞ւ պարտությունը միայն բանակի, ժողովրդի բովանդակ ուժի միայն հարյուրեւորդականի պարտությունն ստիպեց հպատակվել ժողովրդին, — պատմության բոլոր փաստերը (որքան այդ պատմությունը հայտնի է մեզ) հաստատում են այն բանի արդարացիությունը, որ մի ժողովրդի զորքի

իոշոր կամ փոքր հաջողությունները ուրիշ ժողովրդի գորք գեմ պատճառներ են, կամ, առնվազն, էական նշանները ժողովրդների ուժի ավելանալու կամ նվազելու: Զորքը հաղթեց, և անմիջապես ավելացան հաղթող ժողովրդի իրավունքները ի վնաս հաղթվածի: Զորքը պարտվեց, և անմիջապես, պարտության աստիճանի համաձայն, ժողովրդը զրկվում է իրավունքներից, իսկ իր զորքի բոլորովին պարտվելու դեպում՝ հպատակում է բոլորովին:

Այդպես է եղել (ըստ պատմության) հնագույն ժամանակներից մինչև ներկա ժամանակս էլ: Նապոլեոնի բոլոր պատրազմները հաստատում են այս կանոնը: Ավստրիական զորքերի պարտության աստիճանի համաձայն Ավստրիան զրկվում է իր իրավունքներից, և ավելանում են Ֆրանսիայի իրավունքներն ու ուժերը: Ֆրանսացիների հաղթանակը ենայի և Ալեքսանդրի մոտ ոչնչացնում է Պրուսիայի ինքնուրույն գործությունը:

Բայց հանկարծ 1812 թվին ֆրանսացիները հաղթում են Մոսկվայի մոտ, Մոսկվան գրավված է, և դրանից հետո, առանց նոր ճակատամարտերի, ոչ թե Ռուսաստանն է դադարում գոյություն ունենալուց, այլ դադարում է գոյություն ունենալ 600 հազարանոց բանակը, ապա՝ Նապոլեոնյան Ֆրանսիան: Փատերը ձգել-հարմարեցնել պատմության կանոններին, ասել, թե Բորոդինոյի Կովկի դաշտը մնաց ոռւսներին, թե Մոսկվից հետո եղան ճակատամարտեր, որ ոչնչացրին Նապոլեոնի բանակը՝ անկարելի է:

Ֆրանսացիների՝ Բորոդինոյի հաղթությունից հետո յեղավ ոչ մի՝ ո՛չ միայն գլխավոր, այլ փոքրիշատե աշքի ընկնող ճակատամարտ, և ֆրանսական բանակը դադարեց գոյություն ունենալ: Սա ի՞նչ է նշանակում: Եթե սա լիներ մի օրինակ շինական պատմությունից, մենք կարող էինք ասել, թե այդ երեսութը պատմական չէ (պատմագիրների ելքը, երբ մի բան չի հարմարում իրենց շափին): Եթե բանը վերաբերեր ոչ տեղական բնդարումի, որին մասնակցած լինեին փոքրաքանակ զորքեր, մենք կարող էինք այդ երեսութիւնը ընդունել իրեն բացառություն: Բայց այդ դեպքը կատարվեց մեր հայրերի աշքի առաջ, որոնց համար հայրենիքի, կյանքի և մահու խնդիրն էր

վճռվում, և այդ պատերազմը մեծագույնն էր բոլոր հայտնի պատերազմներից...

1812 թվի կովկի շրջանը՝ Բորոդինոյի ճակատամարտից միսած մինչև ֆրանսացիներին արտաքսելը ապացուցեց, որ շահած ճակատամարտը ոչ միայն նվաճումի պատճառ չէ, այլ նույնիսկ նվաճման մշտական նշան չէ, — ապացուցեց, որ ժողովուրդների բախտը որոշող ուժը նվաճողների մեջ չէ, անգամ բանակների և ճակատամարտերի մեջ չէ, այլ ինչ-որ ուրիշ բանում:

Ֆրանսացի պատմագիրները, նկարագրելով ֆրանսական զորքի վիճակը Մոսկվայից դուրս գալուց առաջ, պնդում են, թե ամեն ինչ մեծ բանակում կարգին էր, բացառությամբ հեծելազորի, հրետանու և գումակների, մեկ էլ, շկար նաև կեր ծիելազորի և եղջյուրավոր անասունների համար: Այս գժրախտություններին ոչինչ չէր կարող օգնել, որովհետև շրջակա գյուղացիները վառում էին իրենց խոտը և ֆրանսացիներին չին տալիս:

Չահած ճակատամարտը շտվեց սովորական արդյունքները, որովհետև գյուղացի Կարպն ու Վլասը, որոնք ֆրանսացիների՝ Մոսկվայից դուրս գալուց հետո սայլերով եկել էին Մոսկվա՝ քաղաքը կողոպտելու և բնդարապես հերոսական զացումներ չին ցուցաբերում, և բոլոր անթիվ-անհամար նման գյուղացիներ իրենց առաջարկված լավ գներով էլ խոտ չին բերում Մոսկվա, այլ վառում էին:

Պատկերացնենք մեզ երկու մարդ, որ դուրս են եկել մենամարտելու՝ սրերով, սրամարտի արվեստի բոլոր կանոններով. սրամարտը շարունակվեց բավական երկար. հանկարծ հակառակորդներից մեկը, իրեն վիրավոր զգալով, — հասկանալով, որ դա հանաք բան չէ, այլ վերաբերում է իր կյանքին, սուսերը նետեց և, վերցնելով պատահած առաջին մահակը, սկսեց տանել-բերել: Բայց մեզ պատկերացնենք, թե հակառակորդը այդպիս խելացիորեն գործադրելով լավագույն ու պարզագույն միջոցը նպատակին համար, միաժամանակ ոգևորված ասպետական ավանդություններով, ցանկանար գործի էությունը թաքցնել և անդեր, թե ինքը արվեստի բոլոր կանոններով է հաղթել սրով: Կարելի է պատկերացնել, թե ինչ շր-

փոթություն ու անպարզություն կառաջանար կատարված մենամարտի այդպիսի նկարագրությունից:

Սուսերամարտիկը, որ պահանջում էր պայքար արվեստի կանոններով, — ֆրանսացիք էին. նրա հակառակորդը, որ սուրբ նետեց և մահակը բարձրացրեց, — ուսւաներն էին. իսկ այն մարդիկ, որոնք աշխատում են ամեն ինչ բացատրել սրամարտի կանոններով, — պատմագիրներն են, որոնք գրել են այդ անցքի մասին:

Մյուլենսկը Հրդեհելու օրից սկսվեց պատերազմը, որը չի հարմարում պատերազմների առաջվա որևէ ավանդության: Քաղաքների ու գյուղերի հրդեհում, նահանջ ճակատամարտից հետո, Բորոդինոյի հարվածը և նորից նահանջ, Մուկվայի Հըրդեհը, հինահարների ձերբակալում, տրանսպորտների խլում, պարտիզանական կոիվ, — այս ամենը շեղումներ էին կանոններից:

Նապոլեոնն այդ զգաց հենց այն օրից, երբ սրամարտության կանոնավոր դիրք ընդունած կանգ առավ Մոսկվայում և հակառակորդի սուսերի փոխարեն տեսավ իր գլխավերեւ բարձրացրած մահակը, բայց չէր դադարում գանգատվել Կուտուզովին ու Ալեքսանդր Կայսեր, թե պատերազմը տարվում է հակառակ բոլոր կանոնների (կարծես գոյություն ունեն ինչ-որ կանոններ նրա համար, որպեսզի մարդկանց սպանեն): Չնայած ֆրանսացիների գանգատներին՝ կանոնները չկատարելու մասին, չնայած այն բանին, որ բարձր դիրք ունեցող ուսմարդկանց, զգիտես ինչու մահակով կովելը թվում էր ամոթալի, այլ ուզում էին բոլոր կանոններով բռնել ու quarte կամ ու tierce<sup>1</sup> դիրքը, անել հմուտ հարձակում առաջին դիրքով և այլն, — ժողովրդական պատերազմի մահակը բարձրացավ իր ամբողջ ահարկու և վեհ ուժով և, շարցնելով ոչ ոքի ճաշակներն ու կանոնները, հիմար պարզությամբ, բայց նպատակահարմարությամբ, ոչինչ շողկելով, բարձրացավ, իշավ և ֆրանսացիներին բնեղոց այնքան ժամանակ, մինչև որ չկործանվեց ամբողջ արշավանքը:

<sup>1</sup> Զորորդ, երրորդ դիրք:

Եվ երանի այն ժողովրդին, որը, ոչ թե ֆրանսացիների պիս 1813 թվին արվեստի բոլոր կանոններով ողջունելով և սուրբ, երախակալը դարձրած, շնորհալիորեն ու քաղաքավարի հանձնում է այն մեծահոգի հաղթողին, այլ երանի՝ այն ժողովրդին, որը փորձության ժամին, էլ շարցնելով, թե ի՞նչ-պիս ըստ կանոնի են վարվել ուրիշները նման դեպքերում, պարզորեն ու թեթևությամբ բարձրացնում է առաջին պատահած մահակը և նրանով խփում, թեսում այնքան ժամանակ, մինչև որ իր սրտի վիրավորանքի ու վրեժի զգացմունքը չի փոխարինվում արհամարհանքով ու խղճահարությամբ:

## II

Ամենաշոշափելի և շահավետ շեղումներից մեկը այսպես անվանված պատերազմի կանոններից — ցրիվ մարդկանց գործողությունն է բազմությամբ հարձակվող մարդկանց դեմ: Նման գործողություններ միշտ երևան են գալիս ժողովրդական բնույթ ընդունող պատերազմի մեջ: Այդ գործողությունները նրանք են, որ փոխանակ բազմությամբ կանգնելու ընդեմ բազմության, մարդկիկ ցրվում են, հարձակվում են մւնակ՝ մեկ առ մեկ և անմիջապես փախչում, երբ նրանց վրա հարձակվում են մեծ ուժերով, իսկ հետո նորից են հարձակվում, երբ առիթ է ներկայանում: Այդ անում էին գվերիլյաները Խապանիայում. այդ անում էին լեռնականները Կովկասում. այդ արին ուսւաները 1812 թվին:

Այս տեսակ պատերազմն անվանեցին պարտիզանական և կարծում էին, որ, այդպես անվանելով, բացատրում են նրա նշանակությունը: Մինչդեռ այդ տեսակ պատերազմը ոչ միայն շիտնում որևէ կանոնի տակ, այլ ուղղակի հակադիր է հայտնի և անսխալական համարված տակտիկական կանոնին: Այդ կանոնն ասում է, թե գրոհողն իր ուժերը պետք է կենտրոնացնի այն հաշվով, որ կովի վայրկյանին հակառակորդից ուժեղ լինի:

Պարտիզանական պատերազմը (որ միշտ հաջող է լինում, ինչպես ցույց է տալիս պատմությունը) ուղղակի հակադիր է այդ կանոնին:

Այս հակասությունն առաջ է գալիս այն բանից, որ ռազմական գիտությունը զորքի ուժը նույնացնում է նրա քանակին: Ռազմական գիտությունն ասում է, թե որքան շատ զորք, այնքան ավելի ուժ: Les gros bataillons ont toujours raison<sup>1</sup>.

Այս ասելով՝ ռազմական գիտությունը նման է այն մեխանիկային, որը, ուժերը միայն դեպ իրենց զանգվածներն ունեցած հարաբերության քննելու վրա հիմնվելով, ասեր թե ուժերը հավասար են կամ հավասար շեն միմյանց այն պատճառով, որ հավասար կամ հավասար շեն նրանց զանգվածները:

Ուժը (շարժման քանակը) արտադրյալ է՝ զանգվածը բազապատկած արագությանը:

Ռազմական գործում զորքերի ուժը մասսայի մի նույնպիսի արտադրյալ է բազմապատկած ինչ-որ բանի, մի որևէ անհայտ չ-ի:

Ռազմական գիտությունը, տեսնելով պատմության մեջ անթիվ-անհամար օրինակներ այն բանի, որ զորքերի մասսան չի զուգադիպում ուժին, որ փոքր զոկատները հաղթում են մեծերին, մութ կերպով ընդունում է գոյությունն այդ անհայտ բազմապատկիշի և շանումն է գտնել ան մերթ երկրաշափական կառուցման, մերթ սպառագինության, մերթ, ամենասովորականը, զորքարների հանճարեղության մեջ: Բայց բազմապատկիշի բոլոր առաջադրած այս նշանակությունների փոխատեղումը շեն տալիս այնպիսի հետևանքներ, որ համաձայն լինեն պատմական փաստերի հետ:

Իսկ մինչեռ բավական է միայն հրաժարվենք ի հաճույք հերուների, սահմանված այն կեղծ հայացքից, որ գոյություն ունի պատերազմի ժամանակ բարձր իշխանությունների կարգադրությունների իրական լինելու նկատմամբ, որպեսզի զրտնենք այդ անհայտ չ-ը:

Այդ չ-ը զորքի ոգին է, այսինքն՝ կովելու և զորքը կազմող բոլոր մարդկանց կողմից եղած վտանգներն իրեն ենթարկելու ավելի մեծ կամ նվազ ցանկություն, բոլորովին անկախ այն բանից, կովում են արդյոք այդ մարդիկ հանճարի թե ոչ հանճարի հրամանատարությամբ, երեք թե երկու զորագծում,

մահակներով, թե րոպեի մեջ 30 անգամ կրակող հրացաններով: Կովելու ամենամեծ ցանկությունն ունեցող մարդիկ իրենց միշտ կդնեն կովի համար հենց ամենաշահավետ պայմաններում: Զորքի ոգին՝ բազմապատկիշն է զանգվածի վրա, որ տալիս է ուժի արտադրյալը: Որոշել և արտահայտել զորքի (այդ անհայտ բազմապատկիշի) ոգու նշանակությունը, գիտության ինդիբն է:

Այս խնդիրը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ մենք դադարինք այդ ամբողջ անհայտ չ-ի նշանակության փոխարեն կամայականորեն փոխատեղել այն պայմանները, որոնցում հանդես է զալիս ուժը, ան է՝ զորքարի կարգադրությունները, զինումը և այլն, բնգունելով գրանք բազմապատկիշի նշանակության տեղ, իսկ այդ անհայտն ընդունում ենք իր բովանդակ ամրողությամբ, այսինքն՝ առավել կամ նվազ ցանկություն՝ կովելու և իր անձը վտանգի ենթարկելու: Այդ ժամանակ միայն, հայտնի պատմական փաստերն արտահայտվում է հավասարեցումներով, այդ անհայտի հարաբերական նշանակության համեմատությունից, կարելի է հույս դնել այդ իսկ անհայտը որոշելու վրա:

Տասը մարդ, գումարտակ թե դիվիզիա, կովելով տասնը հինգ մարդու, գումարտակի թե դիվիզիայի դեմ, հազթեցին տասնհինգին, այսինքն՝ սպանեցին ու կերեցին մինչև վերջին մարդը և իրենք կորցրին չորս հոգի: Նշանակում է՝ ոչնչացան մի կողմից չորս, մյուս կողմից՝ տասնուհինգ հոգի: Հետեարար՝ չորսը հավասար էին տասնուհինգի, և, հետեարար՝  $4x = 15y$ : Հետեարար՝  $x:y = 15:4$ : Այս հավասարեցումը լի տալիս անհայտի նշանակությունը, բայց նա տալիս է երկու անհայտի միջև եղած հարաբերությունը: Եվ պատմական տարբեր վեցրած միավորները (ճակատամարտեր, պատերազմներ, պատերազմներ, պատերազմների շրջաններ) վերածելով այսպիսի հավասարեցումների՝ կստացվեն թվերի այնպիսի շարքեր, որոնց մեջ պետք է գոյություն ունենան և կարող են հայտնաբերվել օրենքներ:

Տակտիկական այն կանոնը, թե հարձակվելիս պետք է գործել մասսաներով և ցրված՝ նահանջելիս, անզիտակցարար հաստատում է միայն այն ճշմարտությունը, թե զորքի ուժը

<sup>1</sup> Մեծ զորախորեւ միշտ իրավացի են:

կախված է նրա ոգուց։ Մարդկանց ոռւմբերի տակ տանելու համար հարկավոր է ավելի դիսցիպլինա, որն ստացվում է միայն մասսաների մեջ եղած շարժումով, քան հարձակվող ներից պաշտպանվելու համար։ Բայց այս կանոնը, որի մեջ աշքաթող է արփում զորքի ոգին, շարունակ դուրս է գալիս անճշտ և մանավանդ զարմանալի հակառակ է իրականությանն այնտեղ, ուր երևում է զորքի ոգու ուժեղ վերելք կամ անկում՝ բոլոր ժողովրդական պատերազմներում։

Ֆրանսացիք, 1812 թվին նահանջելով, թեև պետք է որ պաշտպանվեին առանձին-առանձին ըստ տակտիկայի, սեղմք վում են իրար գլխի, որովհետև զորքի ոգին այնպես է ընկել, որ միայն մասսան է զորքին պահում միասին։ Ռուսներն, ընդհակառակը, տակտիկայի համաձայն պետք է հարձակվեին մասսայով, բայց իրականում բաժան-բաժան են լինում, որովհետև ոգին այնպես է բարձրացել, որ առանձին անհատներ առանց հրամանի խփում են ֆրանսացիներին և կարիք չունեն հարկադրանքի, որպեսզի իրենց ենթարկեն դժվարությունների և վտանգների։

### III

Այսպես անվանված պարտիզանական պատերազմն սկսվեց թշնամու՝ Սմոլենսկ մտնելու հետ միաժամանակ։

Նախքան պարտիզանական պատերազմը պաշտոնապես կընդունվեր մեր կառավարության կողմից, արդեն հազարավոր մարդիկ թշնամու բանակից — ետ մնացածները, մարոդյորները, խարապանները — ոչնչացվեցին կազակների և գյուղացիների կողմից, որոնք այդ մարդկանց զարկում-սպանում էին նույնքան անգիտակցարար, որքան անգիտակցարար շները գզում են դրսից վազելով եկած կատաղած շանը։ Դենիս Դավիդովն իր ոռուական հոտառությամբ առաջինն զգաց նշանակությունն այն սարսափելի մահակի, որը, ուազմական արվեստի կանոն չհարցնելով, ոչնչացնում էր ֆրանսացիներին, և նրան է պատկանում պատերազմի այդ եղանակն օրինականացնելու առաջին բալի փառքը։

Օգոստոսի 24-ին հաստատվեց Դավիդովի առաջին պար-

տիզանական ջոկատը, և նրա ջոկատի հետևից հաստատվեցին ուրիշները։ Որքան պատերազմն առաջ էր գնում՝ այնքան ավելանում էր այդ ջոկատների թիվը։

Պարտիզանները մաս-մաս ոչնչացնում էին մեծ բանակը, նրանք հավաքում էին այն ընկած տերևները, որոնք իրենք իրենց թափվում էին շորացած ծառից՝ ֆրանսական չորքից, և երբեմն թափահարում էին այդ ծառը։ Հոկտեմբերին, այն ժամանակ, երբ ֆրանսիացիները վազում էին բերդի Սմոլենսկ, տարբեր մեծության ու բն չյթի այդ խմբերը հարյուրավոր էին։ Կային խմբեր, որ ընդորինակել էին բանակի բոլոր գործելաձեռները, ունեին հետևակ, հրետանի, շուրբնիր, կյանքի հարմարություններ։ Կային սոսկ կազակային՝ հեծելակային հարմարություններ։ Կային մանր խմբեր՝ հետևակ ու ծիավորներ։ Խմբեր, կային մանր խմբեր՝ հարյուր գյուղական և կալվածատիրական խմբեր, որ հայտնի ոչին ոչ ոքի։ Կար խմբի պետ մի տիրացու, որ մի ամսվա մեջ վերցրել էր մի քանի հարյուր գերի, կար գյուղապետի կին վասիլիսան, որ հարյուրավոր ֆրանսացիներ էր սպանել։

Հոկտեմբերի վերջին օրերը պարտիզանական պատերազմի ամենաեռուն ժամանակն էր։ Անցել էր արդեն այդ պատերազմի առաջին այն շրջանը, երբ պարտիզաններն իրենք զարմանում էին իրենց հանդգնության վրա, ամեն րոպե վախենում էին բոնվել ու շրջապատվել ֆրանսացիների կողմից և, ծիերի թամբը շվերցնելով ու գրեթե շիզնելով ծիերից, թաքնվում էին անտառներում յուրաքանչյուր րոպե հետապնդում սպասելով։ Հիմա արդեն այդ պատերազմը որոշվել էր։ բոլորի համար պարզ էր, թե ի՞նչ կարելի է ձեռնարկել ֆրանսացիների դեմ, և ինչ վ կարելի ձեռնարկել։ Այժմ արդեն միայն այն շոկատների պետերը, որոնք շտաբներով, ըստ կանոնների, գընում էին ֆրանսացիներից հեռու, շատ բան դեռ անկարելի էին համարում։ Իսկ մանր պարտիզանական խմբերը, որ վազուց արդեն սկսել էին իրենց գործը և մոտից դիտելով ֆրանսացիներին, հնարավոր էին համարում այն, ինչի մասին մտածել իսկ չին համարձակվում մեծ ջոկատների պետերը։ Իսկ կազակներն ու գյուղացիները, որ սողոսկում էին, մտնում կազակներին ու գյուղացիներին, գտնում էին, որ հիմա արդեն ինչ կարելի է։

Հոկտեմբերի 22-ին Դենիսովը, որ պարտիզաններից մեկն էր, իր խմբի հետ գտնվում էր պարտիզանական կովի եռուզենի մեջ։ Առավոտից նա իր խմբով ոտի վրա էր։ Նա ամբողջ օրը անտառներով, որ կից էին մեծ ճանապարհին, հետեւում էր ֆրանսական մի մեծ տրանսպորտի, որ տանում էր հեծելազորային իրեր և ոռու գերիներ, որ բաժանված էր մյուս զորքերից և գտնվում էր ուժեղ պահպանության տակ, ինչպես այդ հայտնի էր լրտեսների և Սմոլենսկ ուղղված գերիների պատմածներից։ Այդ տրանսպորտի մասին հայտնի էր «լ միայն Դենիսովին ու Դոլիխովին (որ նույնպես պարտիզան էր մի փոքր խմբով), որ գործում էր Դենիսովից ոչ հեռու, այլև մեծ շտաբներ ունեցող ջոկատների պետերին։ բոլորը գիտեին այդ տրանսպորտի մասին և, ինչպես Դենիսովն էր ասում, ատամ էին սրում նրա վրա։ Այդ մեծ ջոկատային պետերից երկուսը — մեկը լեհ, մյուսը գերմանացի — գրեթե միևնույն ժամանակ հրավեր ուղարկեցին Դենիսովին՝ միանալ, յուրաքանչյուրն իր ջոկատին, այն հաշվով, որ հարձակվեն տրանսպորտի վրա։

— Զէ, ախպերս, ես ձեզնից պակաս չեմ, — ասավ Դենիսովը, կարգալով այդ թղթերը, և գրեց գերմանացուն, թե չնայած իր սրտագին ցանկության՝ ծառացել այդքան քաշարի ու նշանավոր գեներալի իշխանության տակ, նա պետք է իրեն զրկի այդ երջանկությունից, որովհետև մտել է արդեն լեհ զեներալի իշխանության տակ։ Իսկ լեհ գեներալին գրեց նույնը, հայտնելով, թե արդեն մտել է գերմանացու իշխանության տակ։

Այսպես տնօրինելով՝ Դենիսովը մտազիր էր, առանց բարձրագույն իշխանությանն այդ մասին հայտնելու, Դոլիխովի հետ միասին հարձակվել և վերցնել այդ տրանսպորտը իր փոքրաթիվ ուժերով։ Տրանսպորտը հոկտեմբերի 22-ին Միկուլինա գյուղից գնում էր գեպի Շամշեն գյուղը։ Ճանապարհի ձախ կողմր՝ Միկուլինայից դեպի Շամշեն ընկած էին մեծ անտառներ, տեղ-տեղ մոտենում էին հենց ճանապարհին, տեղ-տեղ մի վերստ և ավելի հեռանում նրանից։ Այդ իսկ անտառներով ամբողջ օրը, մերթ խորանալով նրանց մեջ, մերթ ծայրը գնալով, անցնում էր Դենիսովն իր խմբով, աշքաթող շանելով շարժվող ֆրանսացիներին։ Առավոտից Միկուլինայից

ոչ հեռու, այնտեղ, ուր անտառը շատ ճոտենում էր ճանապարհին, Դենիսովի խմբի կազմակերպ բոնեցին ցեսի մեջ կանգնած ֆրանսական երկու սալլ՝ հեծելակալին թամբերով բարձած, և տարան անտառու Այդ պահից մինչև երեկո խումբը, առանց հարձակվելու, հետեւում էր ֆրանսացիների շարժմանը։ Պետք էր, նրանց վախսեցնելով, թույլ տալ հանգիստ հասնել մինչև Շամշեն, և այն ժամանակ, Դոլիխովի հետ միացած, որը պետք է երեկոյան դեմ գար անտառում՝ պահականոցի մոտ խորհրդակցելու (Շամշենից մի վերստ հեռու), լուսաբացին հանկարծակի հարձակվել երկու կողմից, խփել և բռլուին միանգամբ գերի վերցնել։

Հետեւում, Միկուլինայից երկու վերստ հեռու, այնտեղ, ուր անտառը մոտենում էր հենց ճանապարհին, նա թողել էր վեց կազմակ, որոնք պետք է անմիջապես տեղեկացնեին, հենց որ ֆրանսական նոր զորացուներ երևալին։

Շամշենից գենը ճիշտ նույնպես Դոլիխովը պետք է հետախուզեր ճանապարհը, որ իմանար, թե ի՞նչ տարածության վրա գեռ ֆրանսական ուրիշ զորքեր կան։ Տրանսպորտի մոտ վրա գեռ կարող էր լինել նույնքան։ Բայց քանակի գերազանցությունը չէր կանգնեցնում Դենիսովին։ Մի լան, որ պետք է իմանար նա՝ այն էր, թե դրանք իսկապես ի՞նչ զորքեր էին։ և այդ նպատակի համար Դենիսովին հարկավոր էր մի լեզու վերցնել (աւինքն՝ թշնամու զորքից մի մարդ)։ Առաջուսոր՝ սայլերի վրա հարձակվելիս՝ բանը կատարվեց արագիսի արագությամբ, որ սայլերի մոտ եղած բոլոր ֆրանսացիներին կոտորեցին և ողջ բռնեցին միայն մի թմբկահարտղայի, որը ետ էր մնացել և ուղղակի ոչինչ չկարողացավ ասել, թե ի՞նչ զորքեր են զորացունի մեջ։

Երկրորդ անգամ հարձակվելը Դենիսովը համարում էր վտանգավոր, որպեսզի շանհանգստացնի ամբողջ զորացունը, և դրա համար նա առաջուց Շամշեն ուղարկեց իր խմբի մեջ գտնվող գյուղացի Տիխոն Շշերբատովին՝ բռնել, եթե կարելի է, այնտեղ եղած ֆրանսացի առաջազնաց բնակարանորդներից գեթ մեկին։

Աշնան տաք, անծրւային օր էր: Երկինքն ու հորիզոնը միևնույն պղտոր զրի գույնն ունեին: Մերթ իշնում էր կարծես մշուշ, մերթ հանկարծ թափվում էր յեղակի, խոշոռ անձու:

Ցեղական, նիհար, կողերը պրկած ձիու վրա նստած, գնում  
էր Դենիսովը՝ յափունջով ու փափախով, որոնցից ջուր էր թափ-  
վում: Նա նույնպես, ինչպես և ձին, վլուխը թեքած և ականջ-  
ները սեղմած դեմքը խոժոռում էր շեղակի անձրկից և մտա-  
հոգ նայում առաջ: Նրա նիհարած և մազակալած խիտ, կարճ,  
և մորուքով դեմքը թվում էր բարկացած:

Դենիսովի կողքին, նույնպես յափունջով ու փափախով, կուշտ, խոշոր դռնեցի ձի նստած՝ գնում էր կազակացին մի եսաուլ, Դենիսովի գործակիցը:

Եսաուլ Հովհաննին՝ երրորդը, նույնպես յափունչով ու փափախով, երկար, տախտակի պես տափակ, սպիտակագեմ, խարտյաշ մարդ էր՝ նեղ, պայծառ աշքերով և հանգիստ, ինքնագոհ արտահայտությունը թե զեմքին, թե նստվածքի մեջ: Թեև չէր կարելի ասել, թե ինչումն է ձիու և հեծվորի առանձնահատկությունը, բայց առաջին հայացքից, նայելով եսաուլին ու Դենիսովին՝ երևում էր, որ Դենիսովը թե թաց է, թե անհարմար է զգում, որ Դենիսովը՝ մարդ է, որը ձի է նստել: Մինչդեռ, եսաուլին նայելով, երևում էր, որ նրա համար նույնպես հարմար ու հանգիստ է, ինչպես միշտ, և որ նա ոչ թե մարդ է, որ ձի է նստել, այլ, որ մարդը ձիու հետ միասին մի, որինակի ուժով մեծացած էակ է:

Նրանցից փոքր-ինչ առաջ գնում էր ամբողջապես թրջված յուղացի առաջնորդը՝ գորշ կաֆտան հագած և ճերմակ թաւակ դրած:

Փոքր-ինչ հետեւից՝ նստած մի նիհար, կիրգիզական ահա-  
ին պոշով ու բաշով ձի (որի շուրթերը ճութվել էին, արյու-  
սուլել), գնում էր Գրաննական կապույտ շինել հագած մի  
ահել սպա:

Նրա կողքին գնում էր մի հուսար, իր հետեւ՝ ձիու գավա-  
ին մի տղա նստեցրած, որը ֆրանսական պատառութիւն  
ունդիր ուներ և կապույտ թասակ: Տղան ցրտից կարմրած  
66

ձեռներով բռնել էր հուսարից, շարժելով աշխատում էր տաքածուներիկ ոտները, հոնքերը բարձրացրած, զարմացած էր իր բորբիկ ոտները, հոնքերը բարձրացրած, զարմացած էր իր շուրջը: Դա առավոտը գերի վերցված ֆրանսական թմրկահարն էր:

Դենիսովի ձին, ճանապարհի վրա եղած անձնաշրի լճակի շուրջն անցնելիս, ձգվեց մի կողմ և Դենիսովի ծումկը դիպցրեց ծառին:

— է, ստանա,— շարացած գոռաց նա և, ատամները  
կրցտելով, մտրակով մի երեք անգամ խփեց ձիուն, ցեխ շաղ  
տալով իր և ընկերների վրա:

Դենիսովի տրամադրությունը վատ էր. թե անձրկից, թե քաղցից (առավտոից ոչ ոք ոշինչ չէր կերել), և գլխավորն այն բանից, որ մինչև հիմա Դոլոխովից լուր չկար և թշնամուց գերի վերցնելու ուղարկվածը չէր վերադարձել:

«Տրանսպորտի վրա հարձակվելու համար հազիվ թե ուրիշ այսպիսի գեղք լինի, ինչպես հիմա։ Մեն-մենակ հարձակվելը շատ վտանգալից է, հետաձգել մյուս օրվան — մեծ պարտիզաններից որևէ մեկը քթիս տակից կիլի որսը», — մտա-

ծում էր Դենիսովը, շարունակ նայելով առաջ, մտածելով՝ որ կտեսնի Դոլիխովի՝ սպասվող սուրհանդակին:

Դուրս գալով բացատը, որից երևում էր բավական հեռու դեպ աշ, Դենիսովը ձին կանգնեցրեց.

— Ինչոր մեկը գալիս է,— ասավ նա:

Եսառուը նայեց Դենիսովի ցույց տված ուղղությամբ:

— Գալիս են երկուսը՝ մի սպա և մի կազակ: Միայն ենք բարեիլ շի, որ ինքը զնդապետը լինի, — ասավ եսառուը, որ սիրում էր գործածել կազակներին անհայտ բառեր:

Եկողները, սարից ցած իշնելով, ծածկվեցին աշքից և մի քանի րոպե հետո նորից երևացին: Առցելից հոգնած արշավաքայլ, ձիուն մտրակելով, գալիս էր մի սպա, զգգզված, մինչև ոսկորները թրչված և ծնկներից վեր հարված պանտալոնով: Նրա հետեւ ասպանդակների վրա կանգնած, վարգում էր կազակը: Այդ սպան, մի շատ երիտասարդ տղա՝ լայն կարմր գլուխով և արագաշարժ, խնդուն աշքերով, սրարշավ եկավ Դենիսովի մոտ և թրչված ծրարը տվալ նրան:

— Գեներալից է,— ասավ սպան, — ներեցեք, որ այնքան էլ շոր չի...

Դենիսովը, գեմքը խոժոռելով, ծրարը վերցրեց և բացեց:

— Այ ասում էին, թե վտանգավոր է, վտանգավոր, — ասավ սպան, դիմելով եսառուին այն միջոցին, երբ Դենիսովը կարդում էր իրեն տրված ծրարը: — Ասենք, ես ու Կոմարովը, — նա ցույց տվավ կազակին, — պատրաստվեցինք: Մենք երկուական ատր... իսկ սա ի՞նչ է, — հարցրեց նա, ֆրանսական թըմբ-կահարին տեսնելով, — գերի՞ է: Դուք արդեն կովի՞ մեջ եք եղել: Կարելի՞ է նրա հետ խոսել:

— Ղ'ոստո՞վ: Պետյա՛, — բացականչեց Դենիսովը, իրեն տրված ծրարն աշքի անցնելով: — Բայց ինչո՞ւ դու շասիր, թե ո՞վ ես, — և Դենիսովը ժպիտը գեմքին, դառնալով, ձեռը մեկ-նեց սպային:

Այդ սպան Պետյա Ռոստովին էր:

Ամբողջ ճանապարհին Պետյան պատրաստվում էր այն բանին, թե ինչպես ինքը, որպես վայել է հասակավորին ու սպային, շակնարկելով նախկին ծանոթությունը, կապահի իրեն Դենիսովի հետ: Բայց հենց որ Դենիսովը ժպտաց նրան, Պետյան

անմիջապես փայլեց, կարմրեց ուրախությունից և մոռացավ նախապատրաստած պաշտոնականությունը, սկսեց պատմել, թե ինչպես էր անցել ֆրանսացիների մոտով և որքան ուրախ է, որ իրեն այսպիսի հանձնարարություն է տրված, և որ նա արդէն եղել է կովում՝ վյազմայի մոտ, և որ այնտեղ հերոսությամբ աշքի է ընկել մի հուսար:

— Է, ես ուղարկեմ քեզ տեսնելուս, — ըսդհատեց նրան Դենիսովը, և նրա գեմքը նորից ընդունեց մտահոգ արտահայտություն:

— Միխայիլ Ֆեոլիլիտիչ, — դիմեց նա եսառուին: — Սա նույնից գեղմանացու կողմից է եկել: Սա նղամություն է ծաղայում:

Եվ Դենիսովը եսառուին պատմեց, որ այժմ բերված գրության բովանդակությունն այն է, որ գերմանացի գեներալը կրկնում է իր պահանջը՝ միանալ տրանսպորտի վրա հարձակելու համար:

— Եթե գաղը մենք տղամասպորտը շվեյշնենք, նա կիրի մեր քթի տակից, — եղրակացրեց նա:

Այն ժամանակ, երբ Դենիսովը խոսում էր եսառուի հետ, Պետյան, Դենիսովի սառը տոնից շփոթված և կարծելով, թե այդ տոնի պատճառն իր պանտալոնի վիճակն է, այնպես, որ ոչ այդ շնկատի, շինելի տակից ուղղեց հարված-ճմոթված պանտալոնը, աշխատելով որքան կարելի է ուղամական տեսք ունենալ:

— Ի՞նչ հրաման է լինելու ձերդ բարեծնության կողմից, — ասավ նա Դենիսովին, ձեռը պահպանակի մոտ բռնելով և նորից վերադառնալով աղյուսանտի ու գեներալի խաղին, որի համար պատրաստվել էր, — թե՞ պետք է մնամ ձերդ բարեծնության մոտ:

— Հղ'ամա՞ն... — ասավ Դենիսովը մտախոհ: — Բայց դու կաղող՝ ես մինչև վաղը մնալ:

— Ախ, խնդրեմ... Կարո՞ղ եմ մնալ ձեզ մոտ, — բացականչեց Պետյան:

— Բայց քեզ ի՞նչ է հղ'ամայել խսկապես գենեղալը — անմիջապես վել աղաղակին, — հարցրեց Դենիսովը:

Պետյան կարմրեց:

— Նա ոչինչ էլ չի հրամայել, ես կարծում եմ՝ կարելի՞ է, —  
ասավ նա Հարցականողներ:

— *է, լավ,— ասավ Դենիսովը*

Եվ դառնալով իր ստորագրյալներին, նա կարգադրեց, որ  
խումբը գնա անտառի պահականոցի մոտ նշանակված հանգու-  
տի վայրը և որպեսզի կիրգիզական ծի նստած սպան (այդ սպան  
ադյուտանտի պաշտոն էր կատարում) գնա Դոլոխովին փնտի,  
իմանա՝ որտեղ է նա և երեկոյան կգա՝ արդյոք: Իսկ ինքը Դ.  
Նիսովը՝ եսառւի ու Պետյայի հետ մտադիր էր գնալ անտառի  
պռումներ, որ գուստ էր գալիս գեպի Շամշեռ, այն հաշվով, որ  
նայի ֆրանսացիների այն դիրքը, որի վրա պետք է ուղղվեր  
վաղվան հարձակումը:

— կու, միղուուք, — դիմեց նա առաջնորդ գյուղացուն, —  
տաղ դեպի Շամշեն:

Դենիսովը, Պետյան ու Խառուլը, ուղեկցությամբ մի քանի կազակների և հուսարի, որը տանում էր գերի ֆրանսացի տղային, գնացին դեպի ձախ, ձորամիջոց դեպի անտառի պողուու

V

Անձրկը կտրեց, միայն մշուշ էր իշնում և անձրևաջրի կա-  
թիւներն էին ընկնում ծառերի ճյուղերից։ Դենիսովը, եսաուն  
ու Պետյան անխոս գնում էին թասակով գյուղացու հետեւց,  
որը, տրեխների մեջ ծոված ոտներով թեթև ու անձայն քայլե-  
լով արմատների ու թաց տերևների վրայով՝ տանում էր նրանց  
դեպ անտառի պոռւնկրու։

Դուրս գալով թումբը, զյուղացին կանգ առավ, նայեց այս  
ու այն կողմ և զնաց դեպի ծառերի նոսրացող պատը: Մէ մէծ,  
կաղնու մոտ, որի տերևները դեռ չէին թափվել, նա կանգնեց և  
հորհրդավոր դեպ իրեն կանքեց ձեռողի:

Դենիսովն ու Պետյան մոտեցան նրան։ Այս տեղից, ուր կանգ էր առել գյուղացին, երևում էին քրանսացիները։ Անտառից դենն անմիջապես կիսաբլուր կազմած ներքեւ էր գնում գարնանցացնի դաշտը։ Դեպ աշ, զառիթափ ձորի այն կոզմը երևում էր մի փոքրիկ գյուղ և քանդված տանիքներով կալվածատիւական մի տուն։ Այդ գյուղում և կալվածատիրական տանը, և

ամբողջ բլուրի վրա, այգում, զբհորների ու ճշակի մոտ, և ամբողջ ճանապարհին դեպի սարը՝ կամրջից մինչև գյուղը ոչ ավելի քան 200 սահման տարածությամբ օրորփող մշուցի մեջ երեսում էին մարդկանց բազմություններ։ Պարզ լսվում էին նրանց ոչ ոռւսական բացական շուրջումները՝ սարը բարձրացող, սալիքներին լծված ձիերի վրա և իրար կանչելը։  
— Գեղ՛ուն բեղ՛եք այստեղ, — կամաց ասակ Դենիսով՝  
— Հետաքանիւով Ֆրանսացիներից։

Պետյան, արագ շարժումներով զլուխը դարձածնով, սայնու էր մերթ թմրկահարին, մերթ Դենիսովին, մերթ եսապուլին, մերթ զյուղում և ճանապարհին գտնվող Փրանսացիներին, աշխատիով աշխատող շանել որևէ կարևոր բան:

— Կգա Դոլոխովը, թե չի գա, պետք է վեղցնել... Հը՝ —  
ասավ Դնինխովը, աշքերի ուրախ փայլով։

- Տեղը հարմար է, — ասավ եսառւը:

— Հետևակը նեղ՝քեից կուզաղ՝կենք, ճահճաստղ ոլ,— շարումակեց Դենիսովը.— Նղ՝անք սողալով կմոտենան այգունդուք կազակնեղ՝ի հետ կգաք այնտեղից;— Դենիսովը ցուցակով այն կողմի անտառը,— իսկ ես այստեղից իմ հոռադինեղ՝ի հետ: Եվ կո՞պոցի ձայնից...

— Զորով չի կարելի, ճահիճ է, — ասավ եսառութեա: Չի երկնական է այս գործը, պատճենը է անցնել ավելի ճախի...

Այս ժամանակ, երբ նրանք կիսաձայն խոսում էին այսպես  
ներքեց, լճակից ցած՝ հովտից տրափեց մի կրակոց, սպիտա-  
կին տվեց մի փոքրիկ ծուխ, երկրորդ կրակոցը, և լսվեց միա-  
համուռ, կարծես թլուրի վրա գտնվող Գրանսացիների հարյու-  
րավոր ձայների ուրախ կանչ: Առաջին ռոպեին թե Դենիսով

թե եսաուլը ետ ընկրկեցին։ Նրանք այնքան մոտ էին, որ նրանց թվաց, թե այդ կրակոցների և կանչերի պատճառու իրենք են, Բայց կրակոցներն ու կանչերը նրանց չէին վերաբերում։ Ցածով, ճահիճներով վազում էր ինչ-որ կարմիր հագած մի մարդ Ակներև է, ֆրանսացիները կրակում էին նրա վրա և գոռում։

— Դա մեր Տիխոնն է, — ասավ եսաուլը։

— Նա՝ է, նա՝ է որ կա։

— Տես անդգամին, — ասավ Դենիսովը։

— Կփախշի-կերթա, — աշբերը կողելով, ասավ եսաուլը։ Մարդը, որին նրանք Տիխոն էին անվանում, վագելով դեպի գետը, նետվեց նրա մեջ այնպես, որ ցրի ցալումքները թրուան վեր և, մի ակնթարթ ցրի մեջ աներեսութանալով, ցրկ ամբողջովին սևացած, դուրս եկավ չորեքթաթ և վագեց առաջ ֆրանսացիները, որ վազում էին նրա հետևկից, կանգ առան։

— Այ, ճարպիկ է, — ասավ եսաուլը։

— Ինչ անասունն է, — դժգոհության նույն արտահայտությամբ խոսեց Դենիսովը։ Եվ ի՞նչ էր անում մինչև հիմա։

— Դա ո՞վ է, — հարցրեց Պետյան։

— Դա մեր պլաստունն է։ Ես նդ՛ան ուղաղ՝կել եմ գեղ՚ի քեղ՚ելու։

— Ախ, հա, — ասավ Պետյան Դենիսովի առաջին խոսքից, գլխով անելով, կարծես ամեն ինչ հասկացավ, թեն բացարձակապես ոչ մի բառ էլ չէր հասկացել։

Տիխոն Շշերբատին ամենահարկավոր մարդկանցից մեկն էր խմբում։ Նա Գժատի մոտ գտնվող Պոկրովսկոյե գյուղից էր երբ իր գործողությունների առաջին օրերը Դենիսովն եկավ Պոկրովսկոյե և, ինչպես միշտ, տանուտերին կանչելով, հարցրեց, թե ի՞նչ է հայտնի իրենց ֆրանսացիների մասին, տանուտերը պատասխանեց, ինչպես պատասխանում էին բոլոր առնուտերերը, կարծես պաշտպանվելով, թե իրենք բոլորին բան չդիտեն, ամենկին տեղեկություն շունեն։ Բայց երբ Դենիսովը բացարձեց նրանց, թե իր նպատակն է խիել ֆրանսացիներին, և երբ նա հարցրեց, թե արդյոք նրանց մոտ ճանապարհը կորցրած, թափառող ֆրանսացիներ չեն եղել, տանուտերն ասավ, որ միրողերներ եղել են իսկապես, բայց իրենց

մոտ գյուղում միայն Տիշկա Շշերբատին է գրալվել այդ գործերով։ Դենիսովը հրամայեց իր մոտ կանչել Տիխոնին և, զուգով նրան իր գործունեության համար, տանուտերի ներկայությամբ մի քանի խոսք ասավ թագավորին և հայրենիքին հավատարիմ լինելու և ֆրանսացիներին ատելու մասին, որ պետք է ունենան հայրենիքի զավակները։

— Մենք ֆրանցուցներին վատ բան չենք անում, — ասավ Տիխոնը, երեսում էր, այդ խոսքերով վհատեցնելով Դենիսովին։ Մենք մենակ էնպես, այսինքն՝ տղաների հետ շարություն էինք անում քեփի համար։ Մի երկու տասը միրողերներ խեցինք, թե չէ վատ բան չենք արել…

Մյուս օրը, երբ Դենիսովը, բոլորովին մոռանալով այդ գյուղացու մասին, գուրս եկավ Պոկրովսկոյեից, նրան հայտնեցին, թե Տիխոնը կպել խնդրում է, որ իրեն թողնեն խմբի մեջ, Դենիսովը կարգադրեց թողնել։

Տիխոնը, որ սկզբում սև աշխատանք էր կատարում՝ փայտ էր պատրաստում խարույկների համար, զուր էր ճարում բերում, ձիերն էր քերթում և այլն, շուտով մեծ սեր և ընդունակություն ցույց տվեց գեպի պարտիզանական պատերազմը։ Նա գիշերները զնում էր որսի և ամեն անգամ հետը բերում էր ֆրանսական զգեստ ու զենք, իսկ երբ նրան հրամայում էին՝ բերում էր և գերիներ։ Դենիսովն ազատեց նրան աշխատանքներից, սկսեց հետը տանել հեծելադեսության և դարձրեց կազակ։

Տիխոնը ձի նստել շէր սիրում և տեղ էր գնում միշտ ոտքով, երբեք ետ շմանալով ձիավորներից։ Նրա զենքը մուշկետոնն էր, որ նա կրում էր ավելի զգարճության համար, տեղը և կացինը, որոնք նրա համար նույնն էին, ինչ որ ատամները՝ գալիք համար, որը դրանցով միատեսակ հեշտությամբ և լվեր էր հանում իր բրդի միջից, և կծոտում էր հաստ ոսկորները։ Տիխոնը միատեսակ հաշողությամբ ամբողջ թափով կացնով ճղում էր գերանը և, կացինը բութ կողմից բռնելով, բարակ սեպեր էր տաշում և գդալներ շինում։ Դենիսովի խմբում Տիխոնը գրավում էր առանձին, բացառիկ տեղ, երբ հարկավոր էր լինում որևէ առանձին դժվար ու վատ, զգվելի բան անել՝ ուսով ցեխում երգած սայլը շուր տալով հանել, պոլից ձգելով ճահճից հանել

ձին, քերթել, փրանսացիների ուղիղ մեղքուելը խցկվել, օրա. Կան կտրել անցնել 50 վերատ,— բոլորը, ծիծաղելով, մատնացուց էին անում Տիխոնին:

— Ի՞նչ պիտի լինի սատանին. կոտած ձիու պես առողջ է, —  
ասում էին նրա մասին:

Մի անգամ ֆրանսացին, որին գերել էր Տիխոնը, ատրճա-  
նակից կրակել էր նրա վրա և խփել մեզքի փափկամասին; Այդ  
վերքը, որը Տիխոնը բուժեց միայն օլիով՝ թե ներսից, թե զր-  
սից, ամենաուշախ կատակների առարկան էր ամբողջ զոկա-  
տում, կատակներ, որոնց սիրով են թարկվում էր Տիխոնը:

— Հը, ախպերս, էլ շես անի՞։ Թե՞ կուշ ածավ, — ծիծա-  
ղում էին կազակները նրա վրա։ Եվ Տիխոնը, դիտմամբ կու-  
գալով ու դեմքը ժամանուիով, ձեացնելով, թե բարկանում է,  
ամենածիծաղաշարժ հիշոցներով Հայոցում էր Գրանսացի-  
ներին։ Այդ գեպքը Տիխոնի վրա այն ազդեցությունն ունեցավ  
միայն, որ իր վերքից հետո նա հազմառեա եռ սեփանիո ու ուսում-

Տիխոնն ամենաօգտակար և քաջ մարդն էր խմբում: Ոչ ոք նրանից ավելի հարձակման առիթներ չեր գտնում, ոչ ոք նրանից ավելի գերի չեր վերցնում և սպանում ֆրանսացիներին: և դրա հետևանքով նա բոլոր կազակների, հուսարների ծաղրածուն էր և ինքը սիրով ենթարկվում էր այդ պաշտոնին: Այժմ Տիխոնը, դեռ գիշերը, Դենիսովի կողմից ուղարկված էր Շամշոն՝ գերի բերելու: Բայց կա' մ այն պատճառով, որ նա չեր բավարարվել մեկ ֆրանսացիով, կամ այն պատճառով, որ գիշերը քնով էր անցել, ցերեկով մտել թիերը, ֆրանսացիների Հենց մեջտեղը և, ինչպես Դենիսովը տեսավ սարից, նկատվել էր նրանց կողմից:

VI

Միաժամանակ էլ եսառւլի հետ խոսելով վաղվա հարձակման մասին, որն այժմ, նայելով ֆրանսացիների մոտիկության, Դենիսովը, թվում էր, վերջնականապես վճռեց, նա ծփուգով թեքեց և ետ գնաց:

— Դե ախպեղ՝ս, գնանք հիմա շող՝անանք, — ասավ նա  
Պետրային:

Մոտենալով անտառային պահականոցին, Դենիսովը կանգ պուավ, աշքերն անտառին հառած: Անսառով, ծառերի արանք, երկար ոտների մէծ-մեծ, թեթև քայլերով, երկար ձեռները թափահարելով զալիս էր մի մարդ՝ կուրտկայով, տրեխներով և Կազանի գլխարկ դրած, հրացանն ուսովը զցած և կացինը դոտին խրած: Դենիսովին տեսնելով, այդ մարդը համեմատ ինչոր բան զցեց թփի մեջ և, եզրերն իշած, թրցված շլյապան վերցնելով, մոտեցավ պետին: Դա Տիխոնն էր: Մաղկից և կնճիռներից ակոսված նրա փոքրիկ աշքերով դեմքը փայլում էր ինքնագոհ ուրախությամբ: Նա գլուխը բարձր պահած և, կարծես ծիծաղը զսպելով, աշքերը հառեց Դենիսովի երեսին:

— Հիմա ուղարկելու համար առաջ է գալիք:

— Ո՞ւր էի կորել: Գնացել էի ֆրանցուզների, — Համարձակությունը խոպոտ, բայց երգեցիկ ձայնով:

— իսկ ինչո՞ւ ցեղ՝ եկով գնացիղ։ Անասուն։ ՀԵ, ուղ սա  
յբեղ՝ ի՞դ։

— Բերելը՝ բերի, — ասակ Տիխոնը:

— Հապալ ուղիւն:

— Ես դեռ առաջ ու առաջ լուսաբացին բռնեցի դրամ,—  
շարունակեց Տիխոնը, տրիխ հագած տափակ ոտները լայն  
դնելով,—ու տարա անտառու Տեսա հարմար չի. Մտածում եմ  
արի գնամ մի ուրիշ ավելի մաքուրը բերեմ:

— Տես, անզգամ, այդպես էլ կա, — ասավ Դենիսովը և նառեւին: — Դու ինչու նղ'ան շրեղ'իր:

— Նրան ինչի՝ բերեի որ,— բարկացած ու հապճեպ ընդհատեց Տիգրանը, — պետքական չէր: Մի՛թե զգիտեմ ձեզ ի՞նչ տեսակն է հարկավոր:

— *Илья, уважаю тебя...*

— Գնացի մի ուրիշի հետևից, — շարունակեց Տիխոնը, — էսպես սողացի անտառ ու պառկեցի: — Տիխոնն անսպասելի ու ճկում պառկեց փորի վրա, ներկայացնելով, թե այդ ինչպես է արել: — Հենց մեկը պատահեց, — շարունակեց նա: — Ես ներան էս ձեռով քարշ տվի: — Տիխոնն արագ ու թեքն վեր թռավ, — Գնանք, ասում եմ, զնդապետի մոտ: Էնպես գոռզուաց: Դրանք չորս հոգի էին. թրերով հարձակվեցին վրես: Ես

կացինը տարա ու վրա բերի էսպիս. ինչ է դուք, ասում եմ, Քրիստոսը ձեզ հետ,— բացականչեց Տիխոնը, ձեռները թափահարելով և, դեմքն ահարկու խոժողած, կուրծքը դուրս ցցեց:

— Մենք սարից տեսանք, թե դու ինչպես էիր թոշում ջրերի վրայից, — ասավ հսառութ, իր փայլուն աշքերը կուշ ածելով:

Պետյան շատ էր ուզում ծիծաղել, բայց տեսավ, որ բոլոր զսպում ներենց ծիծաղը: Նա աշքերն արագորեն ցցում էր Տիխոնի երեսից եսառուի ու Դենիսովի երեսը, շհասկանալով այն, թե ի՞նչ է նշանակում այդ ամենը:

— Դու հիմադ՝ մի ձեանաւ: — ասավ Դենիսովը, բարկացած հագալով: — Ինչո՞ւ աղաջինին չբեղիղ:

Տիխոնն սկսեց մի ձեռով մեջքը բորել, մյուսով գլուխը, և հանկարծ նրա ամբողջ զեմքը ճպվեց դարձավ մի փայլուն հիմար ժպիտ, որը երևան հանեց ատամի պակասը (որի համար և նա կոշում էր Շշերբատի՝ ատամնապակաս): Դենիսովը ժըտաց, և Պետյան ծիծաղեց ուրախ, որին միացավ և ինքը Տիխոնը:

— Բայց ախր բոլորովին կարգին չէր, — ասավ Տիխոնը: — Եորերը վատ էին, էլ ինչի՞ բերեի: Հետո կոպիտ էր, ձերդ բարեծություն: Ինչպես թե, ասում է, ես երանալի տղա եմ. շեմ դա, ասում է:

— Այ բեկ անասուն, — ասավ Դենիսովը: — Ես պետք է հաղցուի փող՝ ձեր...

— Ես նրան հարցրի, — ասավ Տիխոնը: — Ասում է՝ վատ գիտեմ: Մերոնք, ասում է, շատ են, բայց բոլորը վատ են, մենակ, ասում է, անուններն էին Մի լավ հայ' անեք, ասում է, բոլորին կվերջնեք, — եղրակացրեց Տիխոնը, ուրախ ու վճռական նայելով Դենիսովի աշքերին:

— Այ ես բեկ մի հաղ' յուղ՝ անդամ դաշեմ, այն ժամանակ դու հիմադ՝ ձեացիղ, — ասավ Դենիսովը խստորեն:

— Բարկանալու ինչ կա, — ասավ Տիխոնը, — ի՞նչ է, ես ձեր քրանցուզներին չեմ տեսե՞լ: Այ թող մթնի, ես քեզ համար, ինչ տեսակ կուզես, թեկուզ երեքը կրերեմ:

— Դե գնանք, — ասավ Դենիսովը, և մինչկ պահականոցը գնաց անխոս, բարկացած ու խոժողած:

Տիխոնը քայլում էր հետեւից, և Պետյան լսում էր, թե ինչ-

պես էին կազակները ծիծաղում նրա հետ ու նրա վրա ինչ-որ կողիների պատճառով, որ նա զցել էր թփի մեջ:

Երբ անցավ նրանց՝ Տիխոնի խոսքերի ու ժպիտի հարուցած ծիծաղը, և Պետյան մի ակնթարթում հասկացավ, որ այդ Տիխոնը մարդ է սպանել, նա իրեն անհարմար զգաց: Նա նայեց գերի թմրկահարին, և ինչ-որ մի բան ծակեց նրա սիրտը: Բայց գրաժեշտությունը տևեց միայն մի ակնթարթ: Նա անայտ անհարմարությունը տևեց միայն մի ակնթարթ: Նա անայտ անհարմարությունը զգաց գլուխը բարձր բռնել, ոգեպնդվել և լուրջ դեմքով Հարցուփորձել եսառուին վաղվան ձեռնարկելու մասին այն հաշվով, որ անարժան շլինի այն շրջանին, որի մեջ գտնվում էր:

Ուղարկված սպան Դենիսովին հանդիպեց ճանապարհին, հայտնելով, թե Դոլյոսովն ինքը հիմա կա, և թե նրա մոտ ամեն ինչ բարեհաջող է:

Դենիսովը հանկարծ ուրախացավ և Պետյային կանչեց իր մոտ:

— Դե, պատմիդ՝ ինձ քո մասին, — ասավ նա:

## VII

Պետյան Մոսկվայից դուրս գալիս, ծնողներին թողնելով, միացավ իր գնդին և շուտով դրանից հետո նրան որպես սուրբ միացավ իր գնդին և շուտով դրանից հետո նրան որպես մանղանդ գործոց գեներալը, որը մի մեծ զոկատի հրամանատար էր: Սպա դառնալու օրից և մանղանդ գործող բանակը մտնելու օրից, ուր նա մասնակցեց Վլազմալի ճակատամարտին, Պետյան գտնվում էր ուրախության մշտական երջանիկ-հուզակած վիճակում, որ ինքը մեծ է, և մշտապես խանդավառ շտագության մեջ՝ բաց շթողնել իսկական հերոսության որևէ առիթ: Նա շատ երջանիկ էր նրանով, ինչ տեսել ու ապրել էր բանակում, բայց գետ մեկտեղ նրան թվում էր, թե այնտեղ, ուր ինքը չկա, հենց այնտեղ է այժմ կատարվում իսկականը, հերոսականը: Եվ նա շտապում էր գնալ այնտեղ, ուր ինքը չկար այժմ:

Երբ հոկտեմբերի 21-ին նրա գեներալը ցանկություն հայտնեց որևէ մեկին ուղարկել Դենիսովի ջոկատը, Պետյան այնպես

աղերսագին խնդրեց իրեն ուղարկել, որ գեներալը շկարողացավ մերժել: Բայց, նրան ուղարկելով, գեներալը, հիշելով Պետյայի խենթ վարմունքը Վյազմայի ճակատամարտում, որ Պետյան փոխանակ ճանապարհով գնալու այնտեղ, ուր ուղարկված էր, սրարշավ գնաց ուազմաշղթան՝ ֆրանսացիների կրակի տակ և երկու անգամ կրակեց այնտեղ իր ատրճանակից, — ուղարկելով նրան, գեներալը հատկապես արգելեց Պետյային մասնակցել Դենիսովի որևէ գործողությանը: Դրանից էր, որ Պետյան կարմրեց ու շփոթվեց, երբ Դենիսովը հարցրեց, թե նա կարող է արդյոք մնալ: Մինչև անտառի փեշը գնալը Պետյան գտնում էր, որ ինքը պետք է, իր պարտքը խստորեն կատարելով, անմիջապես վերադառնա: Բայց երբ տեսավ ֆրանսացիներին, տեսավ Տիխոնին, իմացավ, որ գիշերն անպատճառ հարձակվելու են, նա, զահեներին հատուկ մի հայացքից մյուսին անցնելու արագությամբ, ինքն իրեն որոշեց, որ իր գեներալը, որին շատ հարգում էր մինչև այժմ, — անպետք մարդ էր, գերմանացի, որ Դենիսովը հերոս էր, եսաւուն էլ հերոս էր, Տիխոնն էլ, և որ ամոթ կլիներ իր համար հեռանալ նրանցից դժվարին րոպեին:

Արդեն մթնում էր, երբ Դենիսովը, Պետյայի ու եսաւուի հետ մոտեցավ պահականոցին: Կիսամութի մեջ երեսում էին թամրած ձիեր, կազակներ, հուսարներ, որ հովհեն էին սարքում բացատում և (որպեսզի ֆրանսացիք ծովար շտեսնեն) թեժ կրակ էին արել անտառի ձորակում: Փոքրիկ խրճիթի հաշտում կազակը, թեքերը քշտած, ոչխարի միս էր կտրտում: Եսկ հենց խրճիթում Դենիսովի խմբից երեք սպա դուռը հարմարեցնում էին սեղանի: Պետյան, իր թաց զգեստները հանելով, տվեց շորացնելու և անմիջապես սկսեց օգնել սպաներին ճաշի սեղանը սարքելու:

Տասը րոպե հետո սեղանը պատրաստ էր՝ անձեռոցիկով ծածկված: Սեղանի վրա կար օղի, տափաշով ոռմ, սպիտակ հաց և տապակած ոչխարի միս աղի հետ:

Սպաների հետ միասին սեղան նստած, ձեռներով, որոնցից ճարպ էր կաթում, ոչխարի յուղոտ, անուշաբույր միսը կտրելով՝ Պետյան գտնվում էր դեպ բոլոր մարդիկ ունեցած քնքուշ միրո մանկական խանդավառ վիճակում և գրա հետևանքով

զուտուհ էր, որ նույնպիսի սեր տածում են դեպ ինքը ուրիշ սեր:

— Իսկ դուք ի՞նչ եք կարծում, Վասիլի Ֆեոդորովիչ — դիմաց նա Դենիսովին, — ովհնչ, որ իս ձեզ հետ մնամ մի օր: — Եվ պատասխանի շապասելով, նա ինքը պատասխանեց իրեն: — Զէ որ ինձ կարգադրված է իմանալ, ես էլ ահա կիմանամ... Միայն թե դուք ինձ թողեք ամենա... գլխավոր... ինձ պարգևներ հարկավոր չեն... Բայց ես ուզում եմ...

Պետյան ատամները սեղմեց և շուրջը նայեց, բարձրացրած զլուկով դեպ վեր ցնցելով ու ձեռը թափահարելով:

— Ամենագլխավոր՝ տեղը... — կրկնեց Դենիսովը ժպտալով:

— Միայն խնդրում եմ, ինձ մի խումբ տվեք, որ հրամանատարություն անեմ, — շարունակեց Պետյան, — Հը, մի՛ ին դժվար է ձեզ համար:

— Ախ, դուք դանա՞կ եք ուզում, — դիմեց նա սպային, որ ուզում էր միս կտրել:

Եվ տվեց նրան իր ծալովի դանակը:

Սպան գովեց դանակը:

— Վերցրեք, խնդրեմ, ձեզ: Ես այդպիսի դանակ շատ ունեմ... — կարմրելով ասավ Պետյան: — Վա՛յ, ես բոլորովին մոռացա, — հանկարծ բացականչեց նա: — Ես հիանալի շամիչ ունեմ, զիտեք, այնպես, առանց կորիզի: Աենք նոր նպարաւունեմ, և այնպիսի լավ, հիանալի ապրանքներ: Տասը վաճառ ունենք, և այնպիսի լավ, հիանալի ապրանքներ: Տասը ֆունտ գնել եմ: Ես սովորել եմ մի որևէ քաղցր բանի: Ուզո՞ւմ եք: — Եվ Պետյան վազեց հաշտը՝ իր կազակի մոտ, բերեց առպակը, որի մեջ կար հինգ ֆունտ շամիչ: — Կերեք, պարուաւք, կերեք:

— Իսկ ձեզ սրճաման հարկավոր չի՝ արդյոք, — դիմեց նա եսաւուին: — Ես մեր նպարավաճառից գնել եմ, հիանալի է: Նա սքանչելի բաներ ունի: Եվ նա շատ ազնիվ մարդ է: Այդ գլխավորն է: Ես անպատճառ կուղարկեմ ձեզ: Բայց գուցե ձեր կայծաքարը մաշվել, վերջացել է, չէ որ այդ պատահաւմ է: Ես հետո վերցրել եմ, այ այստեղ է... — նա ցույց տվեց տոպորակը — հարյուր կայծաքար: Ես շատ էժան եմ գնել: Վերցրեք, պարուաւք, որքան հարկավոր է, թեկուղն բոլորը...

Եվ հանկարծ վախենալով, թե արդյոք շատ ստեր չի ասում, Պետյան կանգ առավ ու կարմրեց:

Նա սկսեց հիշել, թե արդյոք էլի որիէ հիմարություն չի արել: Եվ մի առ մի մտաբերելով այսօրվա հիշողությունները, նրան ներկայացավ թմրկահար ֆրանսացու մասին ունեցած հիշողությունը: — «Մեզ համար հիանալի է, իսկ նա ինչպես է տեսնես: Ո՞ւր աշարան նրան: Կերակրեցի՞ն արդյոք: Զե՞ն նեղացրել արդյոք», — մտածեց նա: Բայց, նկատելով, որ ինքը ստել է կայծքարի մասին, նա հիմա վախենում էր:

«Կարելի՞ է հարցնել, — մտածեց նա, — բայց կասեն՝ ինքը տղա է, տղային էլ ափսոսում է: Ես վաղը նրանց ցույց կատամ, թե ինչ տղա եմ: Ամոթ կլինի, եթե հարցնեմ, — մտածեց Պետյան: — Է՛ս, բոլորը միենան լին է» — և անմիջապես, կարմրելով ու սպաներին վախեցած նայելով, թե նրանց դեմքին հեղնանք կա արդյոք, նա ասավ.

— Իսկ կարելի՞ է կանչել այն տղային, որին գերի եք վերցրել. մի բան տանք ուտելու... գուցե...

— Սյո, խղճուկ տղա է, — ասավ Դենիսովը, ըստ երեւյթին, ամոթալի ոչինչ լուսական արդ հիշեցման մեջ: — Կանչեցեք նղ'ան այստեղ: Vincent Bosse<sup>1</sup> են ասում նրան: Կանչեցեք:

— Ես կկանչեմ, — ասավ Պետյան:

— Կանչիղ՝, կանչիղ՝: Խեղճ տղա, — կրկնեց Դենիսովը:

Պետյան կանգնած էր դուան մոտ, երբ Դենիսովն ասավ այդ: Պետյան անցավ սպաների արանքով և մոտեցավ Դենիսովին:

— Թույլ տվեք համբուրել ձեզ, սիրելիս, — ասավ նա: — Ա՛խ, որքան լավ է, հիսնալի:

Եվ, Դենիսովին համբուրելով, նա վագեց բակը:

— Bosse! Vincent! — կանչեց Պետյան, դուան մոտ կանգնելով:

— Դուք ո՞ւմ եք ուզում, պարոն, — ասավ մի ձայն մթան միշից:

Պետյան պատասխանեց, որ այն ֆրանսացի տղային, որին գերի են վերցրել:

— Ա՛յ, Վինսեննո՞ւն, — ասավ կազակը:

Նրա Vincent անունը կազակներն արդեն փոխել դարձրել էին Վինսեննի, իսկ գյուղացիներն ու զինվորները՝ Վինսենյա: Երկու փոփոխության մեջ այդ հիշեցումը գարնան մասին՝ միանում էր ջահել տղայի մասին ունեցած պատկերացման հետ:

— Նա այնտեղ խարույկի մոտ տաքանում էր: Է՛յ, Վինսենյա՝ Վինսենյա: Վինսեննի, — մութի մեջ լսվեցին կանչող ձայնը: Վինսեննի ու ծիծաղ: — Բայց ժիր տղա է, — ասավ Պետյանի կողքին կանգնած հուսարը: Մենք նրան քիչ առաջ կերակրեցինք: Սարսափելի բաղցած էր:

Մութի մեջ բալեր լսվեցին և, բորիկ ոտները ցեխում լրպացնելով, թմրկահարը մոտեցավ դռանը:

— Ah, c'est vous! — ասավ Պետյան: — Voulez-vous ուզե՞ցը? N'ayez pas peur, on ne vous fera pas de mal, — ավելացրեց նա, երկշուս ու փաղաքշալի ձեռը նրա ձեռին դիպը-նելով: — Entrez, entrez!

— Merci, monsieur<sup>2</sup>, — պատասխանեց թմրկահարը դողողուն, գրեթե մանկական ձայնով և սկսեց ցեխուս ոտները քսել շեմափայտին:

Պետյան շատ բան էր ուզում ասել թմրկահարին, բայց չէր համարձակվում: Նա, շփոթված, հաշտում կանգնել էր նրա կողքին: Հետո մթության մեջ բռնեց նրա ձեռը և սեղմեց:

— Entrer, entrez, — կրկնեց նա միայն քնքուշ շնորհու:

— Ա՛խ, ինչ անեմ ես սրա համար, — ասում էր Պետյան ինքն իրեն և, գրւը բանալով, տղային ներս թողեց իր կողքու:

Երբ թմրկահարը մտավ խրճիթ, Պետյան նստեց նրանից հեռու, իր համար ստորացուցիլ համարելով ուշադրություն հրավիրել նրա վրա: Նա գրանցում շոշափում էր միայն փողերը և կասկածի մեջ էր՝ ամոթ չի՝ լինի արդյոք տալ դրանք թըմբ կահարին:

<sup>1</sup> Ախ, այդ դուք եք, ուզո՞ւմ եք ուտել: Մի վախենաք, ձեզ ոչ մի վատ գանցենք անի: Մտեք, մտեք ներս:

<sup>2</sup> Շնորհակալ եմ, պարոն:

Թմրկահարից հետո, որին Դենիսովի կարգադրությամբ, տվին օդի, միս և որին Դենիսովը հրամայեց ոռւսական կաֆտան հազցնել այն հաշվով, որ նրան գերիների հետ շուղարկելով՝ թողնի իր մոտ խմբում, Պետյայի ուշադրությունը գրավեց Դոլոխովը: Պետյան բանակում շատ պատմություններ էր լսել Դոլոխովի՝ ֆրանսացիների նկատմամբ ցուցաբերած անսովոր քաջության ու դաժանության մասին, և այդ պատճառով այն բոպեից, երբ Դոլոխովը մտավ խրճիթ, Պետյան, աչք չհեռացնելով, նայում էր նրան, հետզհետե ավելի սրտապնդվում էր, բարձրացրած գլուխը ցնցելով, այն հաշվով, որ ինքն անարժան չլինի և անգամ այդպիսի ընկերության, ինչպիսին Դոլոխովն է:

Դոլոխովի արտաքինը տարօրինակորեն ապշեցրեց Պետյային իր պարզությամբ:

Դենիսովը շեքմեն էր հագել, մորուք ուներ և կրծքին նիկուայ հրաշագործի սրբապատկերը. նա իր թե խոսելու ձևով թե վարվեցողության բոլոր եղանակներով արտահայտում էր իր դիրքի առանձնահատկությունը: Իսկ Դոլոխովն, ընդհակառակը, որ առաջ, Մոսկվայում, պարսկական հագուստ էր հագնում, հիմա գվարդիական սպայի ամենասեթեռթ տեսքն ուներ: Նրա գեմքը մաքուր ածիլված էր, հագել էր գվարդիականի բամբակե սյուրթով՝ Դեռքին կոճակատեղը ամրացրած, և դրել էր պարզ ֆուրաժկա: Նա անկյունում հանեց թաց յափունչին և, Դենիսովին մոտենալով, շրաբնելով ոչ ոքի, անմիջապես սկսեց հարցուփորձել գործի մասին: Դենիսովը պատմեց այն դիտավորությունների մասին, որ տրանսպորտի նըկատմամբ ունեին մեծ զոկատները, թե Պետյայի ուղարկելու մասին և թե այն մասին, թե ի՞նչ է պատասխանել ինքը երկու գեներալներին: Ապա Դենիսովը պատմեց ամենը, ինչ գիտեր ֆրանսական զոկատի դրության մասին:

— Այդ այդպիս է: Բայց պետք է իմանալ ի՞նչ զորքեր են և բրան են, — ասավ Դոլոխովը, — պետք է գնալ իմանալ: Հասաւ շիմանալով, թե որքան են նրանք, չի կարելի գործ սկսել: Ես սիրում եմ ակուրատ գործ տեսնել: Ահավասիկ, պարոն-

ներից մեկը չի ցանկանա արդյոք գալ ինձ հետ նրանց լազերը: Ես հետս մունդիր էլ ունեմ:

— Ես, ես... ես կղամ ձեզ հետ, — բացականչեց Պետյան:

— Բնավ հաղ՝կավող՝ չի, ող՝ դու գնաս, — ասավ Դենիսովը, դիմելով Դոլոխովին, — իսկ նդ՝ան աղ՝դեն ինչ էլ լինի, չեմ թողնի:

— Այ հիանալի է, — բացականչեց Պետյան, — ես ինչո՞ւ շնամ որ...

— Նդ՝ա համաղ՝, ող՝ կաղ՝իթ շկա:

— Այդ արդեն ներեցեք ինձ, որովհետեւ... որովհետև ես կերթամ, ահա բոլորը: Դուք ինձ կտանե՞ք, — դիմեց նա Դոլոխովին:

— Ինչո՞ւ չէ... — ցրկած պատասխանեց Դոլոխովը, ուշադիր նայելով ֆրանսացի թմրկահարի դեմքին: — Այս կտրիճը վաղո՞ւց է քեզ մոտ, — հարցրեց նա Դենիսովին:

— Նող՝ ենք վեղ՝ցղ՝ել, բայց ոշինչ շգիտի, թողի՝ մնա ինձ մոտ:

— Է, իսկ մնացյալներին ի՞նչ ես անում, — ասավ Դոլոխովը:

— Ինչպես թե ի՞նչ: Ստացականով ուղաղ՝կում եմ, — հանկարծ կարմրելով բացականչեց Դենիսովը: — Եվ համաղ՝ձակ կասեմ, ող՝ խղճիս վղ՝ա ող՝մի մաղ՝դ շկա: Միթե քեզ համաղ՝ դժվաղ՝ է 30 թե 300 մաղ՝դ ուղեկցուլ՝դով ուղաղ՝կել քաղաք, քան աղ՝ատավող՝ել, ես ուղիղ կասեմ, զինվող՝ի պատիվը:

— Այ երիտասարդ 16 տարեկան կոմսիկին պատշաճում են այդպիսի քնքություններ, — սառը ժպիտով ասավ Դոլոխովը, — իսկ դու արդեն՝ ժամանակ է թողնես այդ:

— Ինչ կա որ, ես ոշինչ շեմ ասում. ես միայն ասում եմ, թե անպատճառ գալու եմ ձեզ հետ, — երկշոտությամբ ասավ Պետյան:

— Իսկ ես ու դու, ախպերս, ժամանակն է, որ թողնենք այդ քնքությունները, — շարումակեց Դոլոխովը, կարծես նա առանձին հաճույք էր գտնում խոսել այդ նյութի մասին, որը զղաւնացնում էր Դենիսովին: — Է, սրան դու ինչո՞ւ ես վերցրել քու, — ասավ նա, գլուխն օրորելով, — նրա՝ համար, որ խղճու-

ես: Մենք գիտենք քո այդ ստացականները: Դու կուղարկես հարյուր մարդ, տեղ կհասնի 30: Կմեռնեն քաղցից կամ կսպանեն: Ուրեմն միննույն շի՛ վերցնել, թե չվերցնել:

Եսուլը, պայծառ աշբերը կկոցելով, գլխի շարժումով հավանություն տվեց:

— Այդ միննույն է, դատողություննեղ՝ն ավելող՝դ են: Ես շեմ ուզում վեղ՝ցնել իմ խղճի վղ՝ա: Դու ասում ես՝ կմեղ՝նեն: է, լավ: Սիայն թե ոչ իմ ձեղ՝ով:

Դուլուսովը ծիծաղեց:

— Ո՞վ է որ նրանց մի հրամայել քսան անգամ բռնել ինձ: Բայց չէ որ կրնեն՝ ինձ և քեզ, քո ասպետությամբ, միննույն է, կկախեն-կխեղդեն.— Նա լոեց:— Սակայն պետք է գործ անել: Ուղարկել իմ կազակին բեռովք: Ես ֆրանսական երկու մունիքը ունեմ: Ինչ կա, գնա՞նք միասին,— Հարցրեց նա Պետյային:

— Ե՞ս: Այո, այո, անպատճառ, — կարմրելով գրեթե մինչև արցունքը գալը, բացականչեց Պետյան, Դենիսովին նայելով:

Նորից, այն ժամանակ, երբ Դուլուսովը վիճում էր Դենիսովի հետ, թե ինչ պիտի անել գերիներին, Պետյան զգաց անհարմարություն և շտապողականություն. Նա նորից շկարողացավ լավ հասկանալ, թե նրանք ինչի՛ մասին էին խոսում: «Եթե այդպես են մտածում մեծերը, հայտնիները, նշանակում է՝ այդպես է հարկավոր, նշանակում է՝ դա լավ է, — մտածում էր նա: — Իսկ գլխավորն այն է, որ Դենիսովը համարձակվի մըտածել, թե ես իրեն կլսեմ, թե նա կարող է հրամաններ տալ ինձ: Ես անպայման Դուլուսովի հետ կերթամ ֆրանսական լագերը: Նա կարող է, ես էլ կարող եմ:

Դենիսովի բոլոր հորդորներին՝ շգնալ, Պետյան պատասխանում էր, թե նա ինքը նույնպես սովոր է ամեն ինչ անել ակուրատ կերպով, ու ոչ թե առանց մտածելու, և թե իր վտանգվելու մասին երբեք շի մտածում:

— Որովհետև, ընդունեցեք ինքներդ, եթե ճիշտը շիմանք որքան են այնտեղ, զրանից է կախված գուցեց հարյուրավորների կյանքը, իսկ մենք այստեղ մենակ ենք. և հետո ես այդ շատ եմ ուզում, և անպայման, անպայման կերթամ. դուք էլ հնձ մի պահեք, — ասում էր նա, — ավելի վատ կլինի միայն:

184

## IX

Ֆրանսական շինելներ հագած ու կիվերներ դրած՝ Պետյան ու Դուլուսովը ձիով գնացին անտառի այն բաց ճանապարհը, որտեղից Դենիսովը նայում էր ճամբարը և, անտառից դուրս գալով՝ բոլորովին մթության մեջ, իշան հովիտը: Զիով իշնելով ցած՝ Դուլուսովը կարգադրեց իրեն ուղեկցող կազակներին սպասել այստեղ և խոշոր վարգով ճանապարհով գնաց դեպի կամուրջը: Պետյան, հուզումից մարելով, ձին քշում էր նրա կողքից:

— Եթե ձեռներն ընկնենք՝ ես կենդանի անձնատուր չեմ լինի, ես ատրճանակ ունեմ, — շշնչաց Պետյան:

— Ռուսերեն մի խոսի, — արագ շշուկով ասավ Դուլուսովը, և նույն վայրկյանին մթության մեջ լսվեց մի կանչ. «Qui vi vîne?» և հրացանի զնդոց:

Արյունը Պետյայի երեսը տվեց, և նա ձեռը տարավ ատրճանակին:

— Lanciers du 6-me<sup>2</sup>, — խոսեց Դուլուսովը, շարագացնելով և նվազեցնելով ձիու բայլը:

Պահակի և կերպարանքը կանգնած էր կամուրջի վրա:

— Mot d'ordre<sup>3</sup>.

Դուլուսովը ձիու զլումը պահեց և գնաց բայլով:

— Dites donc, le colonel Géraïd est ici?<sup>4</sup> — ասավ նա:

— Mot d'ordre, — շպատասխանելով՝ ասավ պահակը, ճանապարհը կարելով:

— Quand un officier fait sa ronde, les sentinelles ne demandent pas le mot d'ordre... — գոռաց Դուլուսովը, հանկարծ բռնկվելով, ձին քշելով պահակի վրա: — Je vous demande si le colonel est ici?<sup>5</sup>.

Իվ, շպատասխան մի կողմ քաշված պահակի պատասխանին, Դուլուսովը բայլով բարձրացավ սարը:

<sup>1</sup> Ո՞վ է:

<sup>2</sup> 6-րդ գնդի նիզակակիրներ:

<sup>3</sup> Նշանաբանը:

<sup>4</sup> Անցեք, այստեղ՝ է արդյոք գնդապետ Ժերարը:

<sup>5</sup> Երբ սպան անցնում է զորաշղթան, պահակները նշանաբան շեն հարցնում: Ես հարցնում եմ, այստեղ՝ է արդյոք գնդապետը:

Նկատելով մարդու մի սկ ստվեր, մարդու, որ անցնում է ճանապարհը, Դոլխովը կանգնեցրեց այդ մարդուն և հարց. րեց, թե ո՞ւր են հրամանատարը և սպաները։ Այդ մարդը, որ պարկն ուսին զինվոր էր, կանգ առավ, մոտեցավ Դոլխովի ձիուն, ձեռք նրան դիպցնելով, և պարզ ու մտերմաքար պատ. մեց, թե հրամանատարն ու սպաները գտնվում են վերև՝ սարի վրա, աչ կողմը, ֆերմայի բակում (նա այդպես էր անվանուել կալվածատիրական ազարակը):

Անցնելով ճանապարհով, որի երկու կողմը խարույկների մոտից հնշում էր ֆրանսական խոսոց, Դոլոխովը ձիու գլուխը թեքեց դեպի կալվածատիրական տան բակը։ Մտնելով դարպասից ներս՝ նա ձիուց իշավ և մոտեցավ մի մեծ բոցավախարույկի, որի շուրջը, բարձրածայն խոսելով, նստած էին մի քանի մարդ։ Խարույկի մի կողմը փոքրիկ կաթսայում ինչոր բան էր եփվում, և թասակ դրած ու կապույտ շինել հազած մի զինվոր, շոքած, կրակով պայծառ լուսավորված, հրացանի շամփուրով խառնում էր այն։

— Oh, c'est un dur à cuire<sup>1</sup>, — a soupiré Émile appuyant le bras sur la table.  
Il regarda son père avec une expression de tristesse et de dépit.

— Il les fera marcher les lapins<sup>2</sup>, — ბիծաղելով ասակ  
մյուսը:

Երկուան էլ լրեցին, նայելով դեպի մութը, Դոլոխովի և Պետյայի քայլերի ձայնի կողմը, որ իրենց ծիերով մոտենու էին խարուցին:

— Bonjour, messieurs<sup>s</sup>, — բարձր, որոշ արտասանեց Դու-  
լսիսվուր:

Սպաները շարժվեցին խարույկի ստվերում, և մի բարձրահասակ երկարավիղ սպա, կրակի կողքով պտտվելով, մատեցակողությունով:

— C'est vous, Clement? — ասավ նա: — D'où, diabolique...<sup>4</sup> բայց նա խոսր չափարտեց, իմանալով իր սիստեմ:

բեթակի խոժոռելով, ինչպես անծանոթի հետ, բարեկց Դու-  
մավովին, հարցնելով նրան, թե ինչով կարող է ծառայել:

Դոլոխովք պատմեց, որ ինքը ընկերող հետ ուզում է հասնել  
իր գնդին, և Հարցրեց, դիմելով բոլորին ընդհանրապես, թե  
սպաները որևէ բան չգիտեն Ե-րդ գնդի մասին։ Ոչ ոք ոչնչ  
չփառ, և Պետյային թվաց, թե սպաներն սկսեցին թշնամա-  
քար ու կամփածով նայել իրեն ու Դոլոխովին։ Մի քանի վայր-  
կան բռնորդ լուս էին։

— Si vous comptez sur la soupe du soir, vous venez trop tard! — ասավ զսպված ծիծաղով մի ձայն խարուցի այն կողմէց:

Դոլովովք պատասխանեց, որ իրենք կուշտ են, և որ գիշերը  
աետը է շարունակեն ճանապարհը:

Նա ձիերը տվեց կաթսայի կերակուրը խառնող զինվորին, և  
ծալապատիկ նստեց խարուցի մոտ, երկարավիք սպայի կող-  
քին: Այդ սպան, աշքը չհեռացնելով, նայում էր Դոլոխովին և  
հարցրեց մի անգամ էլ, թե նա ի՞նչ գնդից է: Դոլոխովը շապ-  
տափանեց, կարծես հարցը շւտեց, և ծխելով ֆրանսական կարճ  
ծխամորճը, որը հանել էր գրապանից, սպաներին հարցրեց, թե  
իրենց առջև ընկած ճանապարհը ո՞ր աստիճան անվտանգ է  
կազմակերպ:

— Les brigands sont partout<sup>2</sup>, — պատասխանեց սպանիացին այն կողմէից:

Դոլիսովն ասավ, թե կազակները սարսափելի են այնպիսի  
և մնացածների համար, ինչպես ինքն ու ընկերն են, բայց որ  
մեծ խմբերի վրա կազակները, հավանորեն, չեն համարձակվել  
հարձակվել, ավելացրեց նա հարցականորեն, Ոչ ոք ոչինչ չը-  
պատասխանեց:

«Էհ, Հիմա ճանապարհ կը նկնի», — ամեն բոցի մտածում էր  
Պետան, խառնւմի առջև կանգնած ու նրանց զրուցը լսելով:

Բայց Դուդիսովը նորից սկսեց ընդհատված խոսակցությունը և ուղղակի սկսեց հարցուփորձել, թե քանի մարդ կա նրանց գումարտակում, քանի գումարտակ ունեն, որքան գերիներ

<sup>1</sup> ՕՇ, դա եփվելիք բան չի:

<sup>2</sup> Նա ճագարներին կստիպի քայլելու

### 3. Բարեկամությունը:

Այդ դուք եք, կիևման: Որտեղից, սատանան...

Հարցնելով ոռւս գերիների մասին, որ կային նրանց ջոկատի հետ, Դոլոխովն ասավ.

— La vilaine affaire de trainer ces cadavres après soi. Vaudrait mieux fusiller cette canaille<sup>1</sup>, — և բարձրածախ ծիծաղեց մի այնպիսի տարօրինակ ծիծաղով, որ Պետյային թվաց. թե ֆրանսացիք հիմա կիմանան խարեռությունը, և ինքն ակամա մի բայլ ետ ընկրեկց խարույկից:

Ոչ ոք մի խոսքով անզամ չպատասխանեց Դոլոխովի ծիծաղին, և ֆրանսական մի սպա, որ չէր երկում (նա պառկած էր շնելում փաթաթված) վեր կացավ և ինչ-որ փսխոսց ընկերոցը: Դոլոխովը վեր կացավ և ձայն տվեց ձին պահող զինվորին:

«Չիերը կրերեն կտա՞ն թե ոչ», — մտածեց Պետյան, ակամա մոտենալով Դոլոխովին:

Չիերը բերին:

— Bonjour, messieurs, — ասավ Դոլոխովը:

Պետյան ուզեց ասել եօնօր և չկարողացավ խոսքը վեր չայնել:

Սպաներն ինչ-որ փսխում էին իրար մեջ: Դոլոխովը երկար ուզում էր հեծնել՝ ձին չէր կանգնում. հետո նատեց ու քայլով դուրս եկավ դարբասից: Պետյան ձին քշում էր նրա կողքից, կամենալով և շամարձակվելով ետ նայել, որ տեսնի ֆրանսացիք վագում են, թե՝ չեն վագում իրենց հետեւից:

Դուրս գալով ճանապարհը՝ Դոլոխովը գնաց ոչ թե ետ դաշտը, այլ գյուղի երկարությամբ: Մի տեղ նա կանգ առավ, ականջ դրեց: «Ասո՞ւմ ես», — ասավ նա: Պետյան ճանայեց ուսասական ձայների հնչումները, տեսավ իսրույիների մոռուս գերիների մութ կերպարանքները: Իշնելով ցած, դեպի կամուրջը, Պետյան ու Դոլոխովը անցան պահակի մոտով, որը ոչ մի խոսք չասելով, մոռայլ զնում գալիս էր կամուրջի վրա, ու դուրս եկան ձորակը, ուր սպասում էին կազակները:

— Դե, հիմա մնաս բարեւ Դենիսովին ասա, որ լուսարցին, առաջին կրակոցին, — ասավ Դոլոխովը և ուզում էր գնալ բայց Պետյան բռնեց նրա թերից:

— Ոչ, — գոշեց նա, — դուք այնպիսի հերոս եք: Ա՛խ, որքան լավ է. ի՞նչ հիանալի է: Որքան ես սիրում եմ ձեզ:

— Լա՛վ, լա՛վ, — ասավ Դոլոխովը:

Բայց Պետյան բաց չէր թողնում նրան, և մթան մեջ Դոլոխովը տեսավ, որ Պետյան կունում էր իր կողմը: Նա ուզում էր համբուրզել: Դոլոխովը համբուրեց նրան, ծիծաղեց և, ձիու գլուխով թեքելով, աներևութացավ խավարի մեջ:

## X

Պահականոց վերադառնալով՝ Պետյան Դենիսովին գտավ հաշտում: Դենիսովը հուզված, անհանգիստ և ինքն իր վրա բարձրացած, որ թողեց Պետյային, սպասում էր նրան:

— Փաղ՝ք աստծու, — բացականշեց նա: — Է՛ս, փաղ՝ք աստծու, — կրկնեց նա, լսելով Պետյայի խանդավառ պատմությունը: — Գղողը տանի քեզ, բո պատճաղ՝ով շքնեցի, — ասավ Դենիսովը: — Է՛ս, փաղ՝ք աստծու, հիմա պաղ՝կիր, քնիլ՝ նեղ՝ մինչև աղ՝պոտ կաղ՝ող ենք ննջել:

— Այո... Ոչ, — ասավ Պետյան: — Դեռ քունս չի տանում: Մեկ էլ, ես ինձ գիտեմ. եթե քնեմ՝ արդեն վերջացավ: Եվ հետո, ես սովոր շեմ կովից առաջ քնել:

Պետյան միաժամանակ նստեց խճիթում, ուրախությամբ հրշելով իր ճամփորդթյան մանրամասնությունները և կենդանի պատկերացնելով այն, թե ի՞նչ է լինելու վաղը: Ապա, նկատելով, որ Դենիսովը քնեց, նա վեր կացավ ու գնաց բակը:

Դուրսը դեռ բոլորովին մութն էր: Անձրեւ կարել էր, բայց կաթիլները թափվում էին ծառերից: Պահականոցին մոտիկ երկում էին կազակների հոլիկների և միասին կապված ձիերի սկ կերպարանքները: Խիճիթի ետև սկին էին տալիս երկու կերպարանք, որոնց մոտ ձիեր էին կանգնած, և ձորում կարմրին էր տալիս այրվող-հանգչող կրակը: Կազակներն ու հուսարները ամենքը չէին քնած, տեղ-տեղ, ընկնող կաթիլների ձայնի և մոտիկ ձիերի ծամելու ձայնի հետ լսվում էին կարծես ոչ բարձր փսխոսող ձայները:

<sup>1</sup> Վատ բան է հետեւից բարշ տաւ այդ դիակները: Ավելի լավ է զնդակարել այդ սրիկաներին:

Պետյան դուրս եկավ հաշտից, նայեց մթության մեջ և մոտեցավ սայլերին: Մեկը խոմփում էր սայլերի տակ, և նրաց շուրջը, վարսակը խոնդացնելով, կանգնած էին թամրած ձիեր: Մթան մեջ Պետյան ճանաշեց իր ձին, որին նա անվանում էր Ղարաբաղ, թեև դա մալոռուսական ձի էր, և մոտեցավ նրան:

— Է, Ղարաբաղ, վաղը ծառայություն ցույց կտանք, — ասավ նա, հոտ քաշելով ձիու քթածակերից ու համրուրելով նրան:

— Ինչ է, աղա, արթո՞ւն եք, — ասավ սայլի տակ նստած կազակը:

— Ոչ. ա... կարծեմ քեզ կիխաշով են կանչում: Չէ՞ որ ես հենց նոր եկա: Մենք գնացել էինք Փրանսացիների մոտ:

Եվ Պետյան մանրամասն պատմեց կազակին ոչ միայն իր ճամփորդությունը, այլև այն, թե ինչու գնաց և ինչո՞ւ նա գտնում է, որ ավելի լավ է կյանքը ուսկի ենթարկել, քան գործել առանց մտածելու:

— Բայց քնեիք, — ասավ կազակը:

— Չէ, ես սովոր եմ, — պատասխանեց Պետյան: — Ինչ է, ձեր ատրճանակի կայծքարերը շե՞ն մաշվել: Ես հետս բերել եմ: Հարկավոր շի՞ւ Դու վերցրու:

Կազակը գլուխը հանեց սայլի տակից, որ ավելի մոտից տեսնի Պետյայի դեմքը:

— Նրանից է, որ ես սովոր եմ ամեն ինչ անել ակուրատ կերպով, — ասավ Պետյան: — Աւրիշներն այնպես, մի կերպ, շեն պատրաստվում, հետո ափսոսում են: Ես այդպես շեմ սիրում:

— Դա ճիշտ է, — ասավ կազակը:

— Մեկ էլ ա՛յ ինչ. խնդրում եմ, սիրելիս, թուրս սրես, թացե... (բայց Պետյան վախեցավ ստել) այն գեռ երբեք մի սրվել: Այդ կարելի՞ է:

— Ինչո՞ւ չէ, կարելի է:

Կիխաշովը վեր կացավ, բեռների մեջ փնտրեց, և շուտով Պետյան լսեց պողպատի ու սրոցի ուղմական ձայնը: Նա բարձրացավ սայլը և նստեց մի ծայրին: Կազակը սայլի տակ սրում էր թուրը:

— Ի՞նչ է, տղաները քնա՞ծ են, — ասավ Պետյան:

— Կա որ քնած է, կա որ էնպես:

— Է, իսկ տղան ինչպե՞ս:

— Վեսեննի՞ն: Նա էնաեղ թափալվել է հաշտում: Վախից մարդ բնում է: Շատ ուրախ էր, հա՞:

Դրանից հետո Պետյան երկար ժամանակ անխօս ականչ էր դնում ձայներին: Մթան մեջ լսվեց քայլերի ձայն և երեաց մի սկ կերպարանք:

— Ի՞նչ ես սրում, — հարցրեց մի մարդ, սայլին մոտենալով:

— Աղայի թուրն եմ սրում:

— Լավ ես անում, — ասավ մարդը, որը Պետյային հուսար թվաց: — Ձրի բաժակը ձե՞զ մոտ է մնացել:

— Հրեն անիվի մոտ:

Հուսարը բաժակը վերցրեց:

— Կարծես, շուտով լուսանալու է, — ասավ նա հորանցելով և գնաց ինչ-որ կողմէ:

Պետյան պիտի իմանար, որ ինքը գտնվում է անտառում, Դենիսովի խմբում, ճանապարհից մի վերստ հեռու, որ ինքը նստած է Փրանսացիներից խլված սայլի վրա, որի մոտ ձիերն են կազակ. որի տակ նստած է կազակ կիխաշովը և սրում է իր թուրը, որ աշ կողմը երեացող մեծ սկ բիծը պահականցն է, և կարմիր, պայծառ բիծը ներքեւում, դեպի ձախ, հանգողով խարումն է. որ բաժակի եկողը՝ հուսար էր, որը ջուր խմել էր ուզում: Բայց Պետյան ոչինչ չգիտեր և այդ իմանալ չեր ուզում: Նա կախարդական թագավորության մեջ էր, ուր ոչ մի բան նման չէր իրականության: Մեծ, սկ բիծը, գուցե իսկապես պահականցն է, բայց գուցե և քարանձավ էր, որ տանում էր երկրի ամենախոր տեղը: Կարմիր բիծը, թերես կրակ էր, բայց գուցե և մի անգին հրեշի աշը: Գուցե ինքն իրոք նստած էր այժմ սայլի վրա, բայց շատ կարելի է, որ նստած է ոչ թե սայլի վրա, այլ մի սարսափելի բարձր աշտարակի գլխի, որտեղից եթե ընկնի՝ երկրին հասնելու համար թոշելու է ամրոց օր, ամբողջ ամիս, շարունակ թոշելու է և երբեք չի համեստու: Գուցե սայլի տակ նստած է պարզապես կազակ կիխաշովը, բայց շատ կարելի է, որ դա ամենաքարի, ամենաքարազ, ամենաքարանշելի, ամենագերազանց մարդն է աշխարհում, որին ոչ ոք չի ճանարկում: Գուցե այդ իրոք հուսարն էր, որ եկավ շրի և գնաց ձորը,

բայց, թերեւս, նա հենց նոր աներևութացավ աշքից, բոլորովին շրացավ և նա չկար էր:

Ինչ էլ հիմա տեսներ Պետյան, նրան ոչինչ չէր զարմացնի նա կախարդական թագավորության մեջ էր, ուր ամեն ինչ հնարավոր էր:

Նա նայեց երկնքին: Երկինքն էլ նույնպես կախարդական էր, ինչպես և երկիրը: Երկինքը մաքրվում էր, ծառերի կատարներով արագ ամպեր էին վագում, կարծես աստղերը բանալով: Երբեմն թվում էր, թե երկինքը մաքրվում է, և երեսում էր սև, մաքուր երկինքը: Երբեմն թվում էր, թե այդ սև բծերը փոքրիկ ամպեր են: Երբեմն թվում էր, թե երկինքը բարձր, բարձր վերանում է գլխավերեսում, երբեմն էլ երկինքը բոլորովին իշնում էր, այնպես որ ձեռքով կարելի էր հասնել նրան:

Պետյան սկսեց աշքերը փակել և օրորվել:

Կաթիները կաթում էին: Կամացուկ խոսոց էր տեղի ունենում: Զիերը վրնջացին ու կովեցին: Մեկը խոմֆացնում էր:

— Ժը՛րժ, ժը՛րժ, ժը... — սուլում էր սրվող թուրը, և հանկարծ Պետյան լսեց մի ներդաշնակ երգչախմբի երաժշտություն, որը երգում էր մի ինչ-որ անծանոթ, հանդիսավորքացը հիմն: Պետյան երաժշտական էր նույնպես, ինչպես նատաշան, և ավելի, քան նիկոլայը. բայց նա երբեք երաժշտություն չէր սովորել, չէր մտածում երաժշտության մասին, ուստի և անսպասելիորեն նրա միտն եկած մոտիվները նրա համար առանձնապես նոր էին և հրապուրիչ: Երաժշտությունը դառնում էր հետպհետեւ ավելի ու ավելի լսելի: Երգն աճում էր, մի գործիքից անցնում էր մյուսին: Տեղի էր ունենում այն, ինչ կոշվում է ֆուզա, թեև Պետյան ամենանվագ հասկացողությունն իսկ չուներ, թե ինչ բան է ֆուզան: Յուրաքանչյուր գործիք մերթ նման չութակի, մերթ փողի, — բայց ավելի լավ ու ավելի մաքուր, քան ջութակներն ու փողերը — յուրաքանչյուր գործիք նվագում էր իրենը և մի եղանակ դեռ շվերջացրած՝ միախառնվում էր մի ուրիշի հետ, որ սկսում էր գրեթե նույնը, և երրորդի հետ, և չորրորդի հետ, և նրանք բոլորը միաձուլվում էին ի մի ու կրկին բաժանվում, և նորից միախառնվում մերթ հանդիսավորեկեղեցական, մերթ վառ-փայլուն ու հաղթական:

«Ախ, այո. ես չէ՞ որ քնի մեջ եմ, — դեպ առաջ օրորվելով՝ անավ Պետյան ինքն իրեն: — Սա իմ ականջներումն է: Բայց ասավ Պետյան ինքն իրեն: — Սա իմ ականջներումն է, դեհ, նորից: Նվագիր, իմ գուցե, սա իմ երաժշտությունն է, դեհ, նորից: Դեհ' հայ:

Նա աշքերը փակեց: Եվ ամեն կողմից, կարծես հեռվից, թրթուցին հնչունները, սկսեցին կազմվել-գոյանալ, բաժան-բաժան լինել, միախառնվել-ձուլվել, և նորից բոլորը միացավ նույն քաղցր ու հանդիսավոր հիմնի մեջ: «Ախ, սա ինչ հիանալի բան է: Որքան ուզեմ և ինչպես ուզեմ», — ասավ Պետյան իրեն: Նա փորձեց ղեկավարել գործիքների այդ հսկայական իրեն: Նա փորձեց ղեկավարել գործիքների այդ հսկայական խորը:

«Դե, կամաց, կամաց, լոեցեք հիմա: — Եվ հնչունները լսում էին նրան: — Դե, հիմա լիահոնչ, ավելի ուրախ: Էլ լսում էին նրան: — Դե, հիմա լիահոնչ, ավելի ուրախ: — Եվ անհայտ խորքերից բարձրանում էին ուժեավելի ուրախ: — Եվ սկսում էնչովից լսեցին ցեղք», — հրամայեց Պետյան: Եվ սկզբում հեռվից լսեցին տղամարդկային ձայներ, ապա կանացի: Զայներն աճում էին տղամարդկային ձայներ, ապա հանդիսավոր ճիգով: Պետյան սարսափով և ուրահամաշափ հանդիսավոր ճիգով: Պետյան սարսափով և ուրահամաշափ հանդիսավոր ճիգով:

Հանդիսավոր հաղթական քայլերգով էր միաձուլվում երգը, ու կաթիները կաթում էին, և ժը՛րժ, ժը՛րժ, ժը... սուլում էր սուլը, և նորից կովեցին ու վրնջացին ձիերը, շնանգարելով իրորին, այլ նրան միանալով:

Պետյան շգիտեր, թե որքան երկար տևեց այդ. նա վայելում էր, շարունակ զարմանում էր այդ վայելքի վրա ու ցավում, որ չկա մեկը, որին հաղորդի: Նրան արթնացրեց լիինաշովի սիրալիր ձայնը:

— Պատրաստ է, ձերդ ազնվություն. Խրանցուզին երկու կես կանի:

Պետյան արթնացավ:

— Արդեն լուսանում է, իսկապես, լուսանում է, — բացականչեց նա:

Առաջ անտեսանելի ձիերը երևացին մինչև պոչները, և մերկացած ճղների միջով երեսում էր ջրագույն լուսը: Պետյան թափահարվեց, վեր ցատկեց, գրապնից մի արծաթ սուբլանոց հանեց և ալեց լիինաշովին. թափահարելով՝ փորձեց սուրը

և դրեց պատյանի մեջ։ Կազմակները ձիերն արձակում էին և փորձաշները ձգում։

— Հրեն, հրամանատարն էլ եկավ, — ասավ Կիխաչով:

Պահականոցից դուրս եկավ Դեմքառվը և, Պետյալին ձայն տալով, Կարգադրեց պատրաստվելու:

XI

Կիսամութի մեջ ծիերը շոկցիաւմ էին, փարբաշները պնդաց.  
Նում և բաժանվում ըստ խմբերի: Դենիսովը պահականացի  
մոտ կանգնած՝ աալիս էր վերջին հրամանները: Խմբի հետեւա-  
կը, հարյուրավոր ստներով քստքստացնելով, ճանապարհով  
դնաց առաջ և շուտով աներեւութացավ ժառերի մեջ ցայդաբացի  
մշուշում: Եսաուլն ինչ-որ հրամայում էր կազակներին: Պետ-  
յան բանել էր իր ծիու ասնձը, անհամբեր սպասելով նստերս  
կարգադրության: Սաոր զրով լվացված նրա գեմքը, մանավանդ  
աշքերը վառվում էին կրակով, մեջքով սարսուր էր անցնում,  
և ամբողջ մարմնում արագ ու համաշափ դողում էր ինչ-որ:  
— Է, ծեղ՝ ամեն ինչը պատղ՝ ա՞ստ է, — ասավ Դենիսովը:—  
Զիեղ՝ լ բեղ՝ եք:

Զերը բերին: Դենիսովը բարկացավ կազակի վրա, որ ծխու փորքաշները թույլ էին և, նրան հայհոյելով, նստեց: Պետյան առաջանդակը բռնեց: Զին, ըստ սովորության, ուզեց կծել նրա տուր, բայց Պետյան, իր ծանրությունը զգալով, արագօքն թռավ թամբի վրա և, նայելով ետևը մթության մեջ շարժվող հուսարներին, մոտեցավ Դենիսովին:

— Վասիլի Ֆեոդորովիչ, գուք ինձ կհանձնաբարե՞ք որևէ բան: Խնդրում եմ... ի սեր աստծո... — ասամ նա: —

— Քեզնից միայն մի բան եմ խնդրում, — ասավ նա խստորեն, — լսել ինձ և ո՛չ մի բանի խաղո՞նմեջ:

Ամբողջ ճանապարհին Դեմիսովն այլև ոչ մի խոսք չասակ Պետյալին և զնում էր լուռ Երր մոտեցան անտառի փեշին՝ դաշտում արդեն սկսեց նկատելիորեն լուսանալ։ Դեմիսովը  
194

փսփռուկով ինչ-որ բան խոսեց եսառուի հետ, և կազմակներն  
պակախին անցնել Պետյալի ու Դենիսովի կողքով։ Երբ նրանք  
թարգման անցան, Դենիսովը շարժեց իր ձին և սարից իջավ ցած։  
Հետուակների վրա նստելով ու սահելով՝ ձիերն իրենց հեծվոր-  
ներով իջնում էին ձորահովիտը։ Պետյան ձին քշում էր Դենի-  
սովի կողքից։ Քանի զնում դողը սաստկանում էր նրա ամբողջ  
մարմնում։ Հետզհետե ավելի ու ավելի էր լուսանում, միայն  
մշտակ ծածկում էր հեռավոր առարկաները։ Ցած իջնելով և  
ետ նայելով՝ Դենիսովը գլխով արակ մոտը կանգնած կազա-  
կին։

— Ազգանշա՞ն, — ասավ նա:

Կազմակը ձեռք բարձրացրեց, լսվեց կրակոց: Եվ նույն վայր-  
կյանին լսվեց առջևում արշավող ծիերի ոտնատրոփը, կանչեր  
ամեն կողմից և դարձյալ կրակոցներ:

Նույն այդ վայրկյանին, երբ լսվեցին ոտնատրոփի առաջին հայունները և կանչերը, Պետյան, իր ձիուն մտրակելով և սահծը թողնելով, շսելով Դենիսովին, որ գոռում էր նրա վրա, արշավեց առաջ: Պետյային թվաց, թե հանկարծ բոլորովին, ցերեկվա պես, պայծառորեն լուսացավ այն րոպեին, երբ լսվեց կրակոցը: Նա սրարշավ մոտեցավ կամրջին: Առջեռում ճանապարհով սլանում էին կազակները: Կամուրջի վրա նա դիպավետ մնացած կազակին և արշավեց առաջ: Առջեռում ինչ-որ մարդիկ, — հավանորեն ֆրանսացիք, — ճանապարհի աջ կողմից փախչում էին դեպի ձախ: Մեկն ընկավ ցեսի մեջ՝ Պետյայի ձիու ոտնների տակ:

Մի խրճիթի մոտ կազակները խմբված՝ ինչոր բան էին անում։ Բազմության միջից լսվում էր մի սարսափելի ճիշ։ Պետյան ձին քշեց մոտեցավ այդ բազմությանը, և առաջին բանը, որ նա տեսավ՝ դա գունատ, ներքին ծնոտը դողացող գեմֆն էր մի ֆրանսացու, որը բռնել էր դեպ իրեն ուզդված տեղի կոթը։

— Ուստա՞... Տղերք... մերոնք... — գոչեց Պիտյան և, տաքաթած ձիու սանձը թողնելով, փողոցով արշավեց առաջ:

Առջեւում լսվում էին կրակոցներ։ Կազակները, հուսարները  
և պատառութեած հագուստներով ոռու գերիները, որ վագում էին  
ճանապարհի երկու կողմից, բոլորը բարձրածայն ու անկախ

Ճշում էին ինչ-որ: Մի քաջարի, անգլիարկ, կարմիր խոժոռած դեմքով ֆրանսացի՝ կապույտ շինելը հագին՝ սվինով պաշտամանվում էր Գուարներից: Երբ Պետյան սրարշավ մոտեցավ ֆրանսացին ընկավ արդեն: «Դարձյալ ուշացա», անցավ Պետյաի մտքով, և նա ձին քշեց այստեղ, որտեղից հաճախակի կրակոցներ էին լսվում: Կրակոցները գալիս էին այն կալվածատիրական տան բակից, ուր նա եղել էր երեկ Դոլոխովի հետ Ֆրանսացիք դիրք էին մտել այստեղ՝ խիտ, թփակալած այլուց անկապատի ետքը և կրակում էին բակում խմբված կազակների վրա: Դարբասի գոներին մոտենալով, Պետյան վասողի ծիսի մեջ տեսավ Դոլոխովին, որ գունատ, կանաչավուն դեմքով ինչ-որ ճշում էր մարդկանց վրա: «Երշանցել: Սպասել հետեակին», — գոռում էր նա այն պահին, երբ Պետյան մոտեցավ նրան:

— Սպասել... Ուռաաա... — գոշեց Պետյան և, րոպե իսկ չկորցնելով, սլացավ դեպի այն տեղը, որտեղից լսվում էին կրակոցները և ուր վասողի ծուխն ավելի թանձր էր:

Լսվեց համազարկ, տժացին դատարկ և ինչ-որ բարի դիպշող գնդակներ: Կազակներն ու Դոլոխովը ձիերը քշեցին... Պետյաի հետեւից դեպի տան դարբասը: Ֆրանսացիք, օրորվողով թանձր ծիսի մեջ, ոմանք զենքերը գցում էին ու վագում: Կազակներին ընդառաջ, մյուսները փախչում էին սարից ցած, դեպի լեճ: Պետյան սլանում էր իր ձիու վրա կալվածատիրական տան կողքով և, փոխանակ ձիու սանձր բռնելու, նա տարօրինակ ու արագ թափահարում էր երկու ձեռն էլ և հետզհետե ավելի ու ավելի թամբից թեքվում էր մի կողմ: Զին, վագելով ու ելնելով առավոտյան լուսի մեջ մարմրող խարույկի վրա, դեմ առավ, և Պետյան ծանրորեն ընկավ թաց գետնի վրա: Կազակները տեսան, թե ինչպես արագորեն ցնցվեցին նրա ձեռներն ու ոտները, չնայած այն բանին, որ գլուխը յէր շարժվում: Գնդակը ծակել-անցել էր նրա գլուխը:

Խոսելով ֆրանսական ավագ սպայի հետ, որը տան հետեւց՝ թաշկինակը թրի ծայրը կապած՝ դուրս եկավ նրա դեմ և հայտնեց, որ իրենք անձնատուր են լինում, Դոլոխովը ձիուց իշավ և մոտեցավ անշարժ, ձեռները տարածած պառկած Պետյային:

— Պրծավ, — ասավ նա խոժոռելով և գնաց դեպի դարբասը իր մոտն եկող Դենիսովին ընդառաջ:

— Սպանված է, — բացականշեց Դենիսովը, հեռվից տեսնելով իրեն ծանոթ, անկասկած անկենդան դիրքը, որով պահած էր Պետյայի մարմինը:

— Պրծած է, — կրկնեց Դոլոխովը, կարծես այդ բառի արտասանումը հաճույք էր պատճառում նրան, և արագ գնաց դեպի գերիները, որոնց շրջապատել էին ձիերից իշած կազակները: Զե՞նք վերցնելու, — ձայն տվեց նա Դենիսովին:

Դենիսովը լսատասխանեց. նա մոտեցավ Պետյային, ձիուց իշավ և դողացող ձեռներով դեպի իրեն դարձրեց Պետյայի արյունով ու ցեխով կեղտոտված, արդեն գունատված դեմքը:

«Ես սովոր եմ մի որևէ քաղցր բանի: Հիանալի շամիչ է. բոլորը վերցրեք», — հիշեց Դենիսովը: Եվ կազակները զարմանալու վերցին շան հաշոցի նմանող ձայնի կողմը, որից Դենիսովն արագ երեսը շրջեց, մոտեցավ ցանկապատին և բռնեց նրանից:

Դենիսովի և Դոլոխովի խլած ոռւս գերիների թվումն էր Փիեռ Բեզուխովը:

## XII

Գերիների այն խմբի մասին, որի մեջ էր Պիեռը, իր ամբողջ շարժման ընթացքում՝ սկսած Մոսկվայից, ֆրանսական իշխանության կողմից ոչ մի նոր կարգադրություն չէր եղել: Այդ խումբը հոկտեմբերի 22-ին էլ արդեն չէր գտնվում այն զորքերի ու գումակի մեջ, որոնց հետ դուրս էր եկել Մոսկվայից: Գումակի կեսը՝ պաքսիմատով բարձած, որ առաջին անցումներն գալիս էր իրենց հետեւից, կազակները խլեցին, մյուս կեսը գնաց առաջ. Հետիոտն կավալերիստները, որ գնում էին առջևից, նրանցից ոչ մեկն այլևս չկար. Նրանք բոլորը շքացել էին: Հրետանին, որ առաջին անցումներին երեսում էր առջեսում, այժմ փոխարինվել էր մարշալ Ժյունոյի հսկայական գումակը, որին ուղեկցում էին վեստֆալցիները: Գերիների հետեւից գնում էր հեծելակային իրերով բարձված մի գումակ:

Վյազմայից սկած ֆրանսական գորքերը, որ առաջ գնում էին երեք զորայունով, այժմ քայլում էին իրար խառնված: Անկարգության այն նշանները, որ նկատեց Պիեռը Մոսկվայից դուրս գալու առաջին դադարքին, այժմ հասել էին ծայր առտիճանին:

Ճանապարհը, որով գնում էին նրանք, երկու կողմից ծածկված էր սատկած ձիերով. պատառուաված հագուստներով մարդիկ, որ ետ էին մնացել զանազան զորախմբերից, անդադար փոխվելով, մերթ միանում էին, մերթ ետ էին մնում գնացողքայլող զորայունոցից:

Ճանապարհին մի քանի անգամ եղան կեղծ տագնապներ, և ուղեկցորդի զինվորները հրացանեերը բարձրացնում էին, կրակում ու գլխապատճեն փախչում, միմյանց տրորելով, բայց նորից կրկին հավաքվում էին և հայհոյում իրար անտեղի փախի համար:

Այս երեք համախմբությունները որ, գնում էին միասին – հեծգնդի պահեստամթերքը, գերիների խումբը և Ժյունոի գումակը – տակավին կազմում էին մի ինչ-որ առանձին ու ամրող քան, թեև թե' մեկը, թե' մյուսը, թե' երրորդը հալվում էր արագորեն:

Գումակը, որ սկզբում ուներ 120 սայլ, հիմա մնացել էր 60-ից ոչ ավելի. մնացյալները խլվել էին կամ գցվել-թողնվել ճանապարհին: Ժյունոի գումակից նույնպես թողնվել ու խլվել էր մի քանի սայլ: Երեք սայլը կողոպտեցին Դավու կորպուսից ետ մնացած զինվորները: Գերմանացիների գրուցներից Պիեռը լսեց, որ այդ գումակի վրա դրված էին ավելի շատ պահաներ, քան գերիների վրա, և որ նրանց ընկերներից մեկը, մի գերմանացի զինվոր, գնդակահարվել էր հենց իր մարշալի հրամանով նրա՝ համար, որ զինվորի մոտ գտել էին մարշալին պատկանող արծաթի գդալը:

Այդ երեք համախմբություններից ամենից շատ հալվում էր գերիների խումբը: Մոսկվայից դուրս եկած 330 մարդոց այժմ մնացել էր հարյուրից պակաս: Գերիներն ավելի շատ էին ծանրություն պատճառում ուղեկցող զինվորներին, քան հեծեկավային պահեստամթերքի ուայլախումբը, քան Ժյունոի գումակը: Թամբերն ու Ժյունոյի գդալները, նրանք հասկա-

նում էին, որ կարող էին մի որեէ բանի պետք գալ, բայց քաղցած և մրսած զինվորների ինչի՞ն էր աւետք պահակ կանգնել և պահպանել նույնպիսի մրսած ու քաղցած ուսւների, որ սպառում և մնում էին ճանապարհին, որոնց կարգադրված էր զընգակահարել, — որ ոչ միայն անհասկանալի էր, այլև զգկելի: Եվ ուղեկցորդները, կարծես վախենալով, որ իրենց տիսուր կացության մեջ չեն թարկվեն դեպ գերիներն ունեցած իրենց խղճահարության զգացմունքին, և այդպիսով վատթարացնեն իրենց զրությունը, առանձնապես զաժան ու խիստ էին վիրաբերվում նրանց:

Դորոգորութում, այն ժամանակ, երբ, գերիներին գոմում փակելով, ուղեկցող զինվորները գնացին իրենց խսկ մազագինները կողոպտելու, մի քանի գերի զինվորներ պատի տակը քանդեցին ու փախան, բայց ֆրանսացիք բռնեցին նրանց ու գնդակահարեցին:

Նախկին, Մոսկվայից դուրս գալիս հաստատված կարզը, ուղեսգի գերի սպաները քայլեն զինվորներից առանձին, վաղուց ոչ շացված էր արդեն. բռլոր նրանք, ովքեր կարողանում էին քայլել, գնում էին միասին, և Պիեռը երրորդ անցումից արդեն միացավ Կարատակին և բաց մանիշակագույն ծոառտ շանը, որը Կարատակին իրեն տեր էր ընտրել:

Մոսկվայից դուրս գալու երրորդ օրը Կարատակին բռնեց այն անդր, որով նա պառկել էր Մոսկվայի զինվորական հիվանդանոցում, և որքան Կարատակը թուլանում էր, Պիեռը հեռանում էր նրանից: Պիեռը զգիտեր ինչու, բայց այն պահից, երբ Կարատակն սկսեց թուլանալ, Պիեռը պետք է մեծ ջանք գործ դներ իր վրա, որպեսզի մոտենար նրան: Եվ մոտենալով նրան ու լսերով այն հանդարտ հեծծանքները, որոնցով Կարատակը սովորաբար պատկում էր դադարներին, և զգալով այժմ Կարատակից եկաղ սաստկացող հոտը, Պիեռը հեռու էր քաշվում նրանից և շէր մտածում նրա մասին:

Գերության մեջ, բարաքում, Պիեռը ոչ թե մտքով, այլ իր ամրող չությամբ, կյանքով իմացավ, որ մարդն ստեղծված է երջանկության համար, որ երջանկությունը մարդու իր մեջ է, մարդկային բնական պահանջները բավարարելու մեջ, և որ ամրող դժբախտությունն առաջանում է ոչ թե պակասությու-

նից, այլ առատությունից. բայց այժմ, ուազմերթի վերջին այս երեք շաբաթվա մեջ, նա իմացավ դարձյալ մի նոր, միսիթարական ճշմարտություն՝ նա իմացավ, որ աշխարհում սարսափելի ովնչ չկա: Նա իմացավ, որ այնպես, ինչպես աշխարհում չկա մի վիճակ, որի մեջ մարդ լինի երջանիկ և միանգամյան ազատ, այնպես էլ չկա մի կացություն, որի մեջ նա լիներ դժբախտ և անազատ: Նա իմացավ, թե տառապանքներն ու ազատությունը սահման ունեն և թե այդ սահմանը շատ մոտ է: Թե այն մարդը, որը տանջվել է վարդե անկողնու մեջ ընկած մի տերեկից, ճիշտ նույնպես է տանջվել, ինչպես տանջվում է ինքը այժմ, քննելով մերկ, խոնավ գետնին, սառեցնելով մարմի մի կողմը, տաքացնելով մյուսը. թե, երբ նա, պատահում էր, հագնում էր իր պարահանդեսային նեղ կոշիկները, նա ճիշտ այնպես էր տանջվում, ինչպես և այժմ, երբ քայլում էր արդեն բոլորովին բորիկ (նրա ոտնամանները վալուց էին քրքրվել) ոտներով, որ ծածկված էին վերքերով: Նա իմացավ, որ երբ նա, ինչպես թվում էր իրեն, իր սեփական կամքով, ամուսնացավ իր կնոջ հետ, ինքն ավելի ազատ չէր, քան այժմ, երբ գիշերն երեն փակում էին գոմում: Այն բոլորից, ինչ հետո նա էլ անվանում էր տանջանք, բայց որը այն ժամանակ նա գրեթե չէր գտում, զիսավորը բորիկ, հարված-քերլած, քերքեշոտ ոտներն էին: (Զիու միսը համեղ էր և սննդարար. աղբորակը, որ գործ էին ածում աղի տեղ, մինչեսկ գուրեկան էր. սաստիկ ցուրտ չկար, և ցերեկը քայլելիս միշտ շոգ էր լինում, իսկ գիշերները խարույկներ կային, ոչիլները, որ ուսում էին նրան, տաքացնում էին նրա մարմինը): Մի բան դժվար էր առաջին օրերը — այդ ոտքերն էին:

Երկրորդ օրը, խարույկի մոտ նայելով իր վերքը, Պիեռը մտածեց, որ գրանցով քայլել անհարին է. բայց երբ բոլորը վեր կացան, նա էլ գնաց կաղալով, և հետո երբ տաքացավ, քայլեց առանց ցավի, թեն երեկոյան գեմ ավելի սարսափելի էր նայել ոտքերին, բայց նա չէր նայում դրանց և մտածում էր ուրիշ բանի մասին:

Այժմ միայն Պիեռը հասկացավ մարդու կենսականության ամբողջ ուժը և ուշադրությունը փոխադրելու փրկարար ուժը, որը դրված էր մարդու մեջ, նման շոգեկաթսայի այն փրկարար

կլապանին, որը գուրս է թողնում ավելորդ շոգին, հենց որ նրա խտությունն անցնում է որոշակ նորմայից:

Նա չէր տեսել և չէր լսել ինչպես էին գնդականարում ետ մնացող գերիներին, թեև նրանցից հարյուրից ավելին արդեն կորել էին այդպես: Նա չէր մտածում Կարատակի մասին, որը թուլանում էր օրեցօր և, ակներև է, շուտով ենթարկվելու էր նույն վիճակին: Ավելի ևս քիչ էր մտածում Պիեռն իր մասին: Որքան ավելի դժվարանում էր իր կացությունը, որքան ավելի սարսափելի էր ապագան, այնքան ավելի անկախ այն դրությունից, որի մեջ գտնվում էր, նրա գլխում ծագում էին ուրախ և հանգստացուցիչ մտքեր, հիշողություններ ու պատկերացումներ:

### XIII

Հոկտեմբերի 22-ի կեսօրին Պիեռը քայլում էր սարնիվեր՝ ցեխոտ, լպրծուն ճանապարհով, նայելով իր ոտներին ու ճանապարհի անհարժության: Երբեմն նայում էր իրեն շրջապատող, ծանոթ բազմության և նորից՝ իր ոտքերին: Թե մեկը, թե մյուսը միատեսակ իրենն էր և ծանոթ: Բայց մանիշակագույն ծուառ Սեոին ուրախ վագում էր ճանապարհի կողքով, երբեմն, ապացույց իր ճարպկության և գոհության, ետին ոտք ծալած ու թոշկոտելով երեք ոտով և ապա նորից բոլոր շորս ոտովք, հարձակվում էր ազուազների վրա, որ նստած էին լեշերին: Սեոին ավելի ուրախ և ավելի գեր էր, քան Սոսկվայում: Ամեն կողմ ընկած էին տարբեր կենդանիների մսեր — ըսկասած մարդկային մսից մինչև ծիու միսը — քայլայման տարբեր աստիճանի, և գայլերին էլ մոտ չէին թողնում անցնող մարդիկ, այնպես որ Սեոին կարող էր ուտել ինչպան ուզում էր:

Առավոտից անձրես էր գալիս, և թվում էր, թե ահա ո՛ւր որ է կկտրի և երկինքը կրացվի, բայց կարճատև դադարից հետո անձրեն ավելի էր վարարում: Անձրեով հագեցած ճանապարհն արդեն էլ չուր չէր ընդունում, և առուներ էին հոսում անվահետքերով:

Պիեռը քայլում էր, շուրջը նայելով, երեքական քայլ հաշ-

վլուկ՝ և մասնիրը ծալելով։ Դառնալով անձրեն՝ նա ներքուստ ասում էր՝ դե, էլի՛, էլի՛ արի։

Նրան թվում էր, թե ինքը ոչ մի բանի մասին չի մտածում. բայց հեռու և խոր մի տեղ նրա հոգին մտածում էր ինչ-որ կարեր ու մխիթարական մի բան։ Այդ ինչ-որը մի նուրբ հոգեկան հատված էր Կարատաւեի հետ ունեցած նրա երեկվան զրուցից։

Երեկ գիշերային դադարքին, հանգած կրակի մոտ մրսելով, Պիեռ վեր կացալ և գնաց մոտիկ, ավելի լավ վառվող խարույկի մոտ։ Այդ խարույկի մոտ նստած էր Պլատոնը գլխից հետ, ինչպես շուրջառով, շինելով ժածկված, ու իր հյութեղ, դուրեկան, բայց թուլ, հիվանդոտ ձայնով զինվորներին պատմում էր Պիեռին ծանոթ մի պատմություն։ Կեսգիշերն անց էր արդեն։ Դա այն պահն էր, երբ Կարատաւել սովորաբար կենդանանում էր տենդի նոպայից և առանձնապես աշխատանում։ Խարույկին մոտենալով և լսելով Պլատոնի թուլ, հիվանդագին ձայնը ու տեսնելով կրակից լուսավորված նրա խղճալի գեմքը, ինչ-որ անդուրեկան մի բան ճմլեց Պիեռի սիրտը։ Նա վախեցավ այդ մարդու հանդեպ ունեցած իր խղճահարությունից և ուղեց հեռանալ, բայց ուրիշ խարույկ չկար, և Պիեռն, աշխատելով Պլատոնին չնայել, նստեց խարույկի մոտ։

— Հը, ինչպե՞ս է առողջությունդ, — հարցրեց նա։

— Առողջությունն ի՞նչ։ Հիվանդության վրա լացողին՝ աստված մահ չի տա, — ասավ Կարատաւել և անմիջապես զերադարձավ սկսած պատմությանը։

— Էսպես ուղեմն, ախաբեր որ դու ես, — շարունակեց Պլատոնը ժպիտը նիհար, գունատ գեմքին և առանձնահատուկ ուրախ մի փայլ աշքերում։ — Էսպես, ախաբեր շան…

Պիեռն այդ պատմությունը գիտեր վաղուց։ Կարատաւել միայն իրեն մի վեց անգամ արել էր այդ պատմությունը և միշտ էլ առանձին ուրախ զգացումով։ Բայց որքան էլ Պիեռը լա՛վ գիտեր այդ պատմությունը, նա հիմա լսում էր այն, ինչպես նոր մի բան, և այն հանդարտ հիացումը, որը, պատմելով, ապրում էր, երկի, Կարատաւել, անցավ և Պիեռին։ Այդ պատմությունը մի ծեր վաճառականի մասին էր, որ բարեսեր ու աստվածավախ ապրում է իր ընտանիքի հետ և մի անգամ հարուստ ընկեր վաճառականի հետ գնում է Մակարիա։

Իշեանում կանգ առնելով՝ երկու վաճառականն էլ քնում են, և մյուս օրը վաճառականի ընկերոջը գտնում են վիզը կտրած և կողոպտված։ Արյունութված դանակը գտնում են ծեր վաճառականի բարձի տակ։ Վաճառականին դատում են, մտրակով պատժում և, քթածակերը հանելով, — ինչպես կարգն է, ասում էր Կարատաւել, — ուղարկում են տաժանակիր աշխատանքի։

— Ու ահա, ախաբերս որ դու ես (Պիեռը վրա հասավ Կարատաւելի պատմության այս տեղաւմ), էղ բանից անցնում է տասնու ավելի տարի։ Սերունին ապրում է տաժանակիր աշխատանքի բանտում։ Ինչպես հարկն է՝ հնազանդում է, վաս բան չ' անում։ Մենակ աստծուց մահ է խնդրում։ Լավ։ Մի անգամ էլ գիշերը էղ տաժանակիրները հավաքվում են, էնպես, ինչպես մենք, ու ծերունին էլ նրանց հետ։ Խոսք է բացվում, թե ո՞վ ինչի համար է տուժում, ի՞նչով է մեղավոր աստծու առաջ։ Սկսում են պատմել. սա մի հոգի է կործանել, նա երկուսը, սա տուն է վառել, նա փախստական է, էղպես։ Հարցնում են ծերունուն էլ, թե ասա դե տեսնենք, պապի, դու ինչի՞ համար ես տանջվում։ — Ես, սիրելի ախաբերտինքս, ասում է, իմ ու մարդկանց մեղքերի համար եմ տանջվում։ Խսկ ես ոչ հոգի եմ կործանել, ոչ ուրիշի ապրանք եմ վերցրել, մենակ շքավորներին օգնել եմ։ Ես, սիրելի ախաբերտինքս, վաճառական եմ, ու մեծ հարստություն ունեի։ Էսպես, էսպես, ասում է։ Այս տեղին պատմում է նրանց, ուրեմն, ամբողջ գործը, թե ինչպես է եղել։ Ես, ասում է, իմ մասին չեմ մտածում։ Ինձ, ուրեմն, աստված է գտել։ Մենակ, ասում է, պառավիսու երեխաներիս եմ ափսոսում-խղճում։ Ու էնպե՞ս լաց է լինում ծերունին։ Դու մի ասա հենց էղ խմբի մեջ է էն մարդը, որ սպանել է վաճառականին։ Էղ որտե՞ղ է եղել, ասում է, պապի։ Ե՞րբ, ո՞ր ամսին։ Հարցուփորձում է ամեն բան։ Ու սիրտը ցավվում է շատ։ Մեկ էլ մոտենում է ու ծերունու ոտներն ընկնում։ Դու, ասում է, ծերուկ իմ պատճառով ես կորչում։ Խսկական ճշմարտությունն է, ասում է, տղերք։ Էս մարդը անմեղ, զուր տեղն է տանջվում։ Ես, ասում է, ինքս եմ արել հենց էղ գործը և դանակը դրել քնածի գլխի տակ։ Ներիր, ասում է, պապի, ի սեր Քրիստոսի։

Կարատանը լոեց, ուրախ ժպտալով, կրակին նայելով և փայտերն ուղղեց:

— Եվ ծերունին էլ ասում է. դե, աստված թող ների քեզ, իսկ մենք բոլորս, ասում է, մեղավոր ենք աստծու առաջ: Ես իմ մեղքի համար եմ տանջում, ինք շատ եմ լաց եղել: Ինչ ես կարծում, թառլանս, — հետզետե ավելի ու ավելի պայծառ փայլելով իր հիացագին ժպիտից, խոսում էր Կարատանը, կարծես նրա մեջ էր, ինչ հիմա պիտի պատմեր, նրա մեջ էր զըտնը պատմության գլխավոր հմայքն ու նշանակությունը, — ինչ ես կարծում, թառլանս, էդ մարդասպանն ինքը գնաց իշխանության մոտ: Ես, ասում է, վեց հոգի եմ կործանել (մեծ շարագործ էր), բայց ամենից ավելի խղճում եմ է՛ս ծերունուն: Թող նա ինձնից գանգատավոր շմնա: Ասում է. թղթեր են գրում, ուղարկում, ինչպես կարգն է: Տեղը հեռու է, մինչեւ դատրան, մինչև բոլոր թղթերը գրում են, ինչպես կարգն է, էս-էն իշխանության, ուրեմն, բանը հասնում է թագավորին: Մինչև թագավորի հրամանը գալիս է, թե վաճառականին ազատել, պարգև տալ, ինչքան որոշել են: Թուղթ է գալիս, սկսում են ծերուկին փնտրել: Ո՞ւր է է՛ն ծերունին, որ անմեղ տեղը տանջվել է: Թագավորից թուղթ եկավ, Սկսեցին փնտրել: — Կարատանի ներքին ծնոտը դողաց: — Իսկ նրան արդեն աստված էր ներել՝ մեռել էր: Էդպես, թառլանս, — վերջացրեց Կարատանը և երկար, անխոս ժպտալով, նայեց իր առշեր:

Ոչ թե այդ պատմությունը, այլ նրա խորհրդավոր իմաստը, այն հիացագին ուրախությունը, որ փայլում էր Կարատանի դեմքին այդ պատմությունն անելիս, այդ ուրախության խորհրդավոր նշանակությունը, այդ էր հենց, որ մութ կերպով ուրախությամբ լցրել էր այժմ Պիեռի սիրտը:

## XIV

— A vos places!<sup>1</sup> — Հանկարծ ճշաց մի ձայն: Գերիների և ուղեկցող զինվորների մեջ առաջացավ ուրախ շփոթություն և

ինչոր երջանիկ ու հանդիսավոր բանի սպասում: Ամեն կողմից լսվեցին հրամաններ, և ձախ կողմից վարգելով, գերիների շուրջն անցնելով, երեացին լավ հագնված հեծելակներ՝ լավ ձիերի վրա: Բոլոր դեմքերին կար մի լարվածության արտահայտություն, որ ունենում են մարդիկ՝ բարձր իշխանության մոտիկ լինելու դեպքում: Գերիները հավաքվեցին իրար գլխի. նրանց հրեցին-քշեցին ճանապարհից. ուղեկցող զինվորները շարք կազմեցին:

— L'Empereur! L'Empereur! Le maréchal! Le duc!<sup>2</sup>

Եվ հենց որ անցան կուշտ ուղեկցուրդները, դղրդաց մոխրագույն ձիերով երկշարք լծված մի կառեթ: Պիեռն անցողակի տեսավ եռանկյունի գլխարկով մարդու հանգիստ, սիրուն, լեցուն ու սպիտակ դեմքը: Դա մարշալներից մեկն էր: Մարշալի հայացքը դարձավ Պիեռի խոշոր, նկատելի կերպարանքի վրա, և այն արտահայտության մեջ, որով մարշալը խոժուեց ու շրջեց երեսը, Պիեռին թվաց կարեկցություն կար և այն թաքցնելու ցանկություն:

Գեներալը, որ վարում էր պահեստամթերքի գումակը, զեղեցիկ վախեցած դեմքով, նիհար ձին քշելով, արշավեց կառեթի հետեւից: Մի քանի պահներ մոտեցան իրար, զինվորները շրջապատեցին նրանց: Բոլորը հոգված-լարված դեմք ունեին:

«Qu'est-ce qu'il a dit? Qu'est ce qu'il a dit?...»<sup>2</sup> — լսում էր Պիեռը:

Մարշալի անցնելու ժամանակ գերիները խմբվեցին, և Պիեռը տեսավ Կարատանին, որին այս առավոտ գեռ շեմ սել: Կարատանը նստել էր շինելը հագին, կեշի ծառին հենված: Նրա դեմքին, բացի երեկվա ուրախ խանդաղատանքի արտահայտությունից, որ ուներ անմեղ վաճառականի տանջանքների մասին պատմելիս, փայլում էր նաև խաղաղ հանդիսավորության արտահայտություն:

Կարատանը նայեց Պիեռին իր բարի կլորիկ աշքերով, որ այժմ ծածկված էին արցունքով և, երեւում էր, կանչեց նրան իր

<sup>1</sup> Տեղներ.

<sup>2</sup> Նա ի՞նչ ասակ. ի՞նչ ասակ:

մոտ, ուզեց ինչ-որ բան ասել: Բայց Պիեռը շափաղանց սարսափեց իր համար: Նա այնպես արավ, կարծես շտեսավ նրա հայացքը, և հաղթեպ հեռացավ:

Երբ գերիները նորից շարժվեցին, Պիեռը ետ նայեց: Կարատաեր նստած էր ճանապարհի եզրին, կեշու մոտ. և երկու ֆրանսացի ինչ-որ բան էին խոսում նրա դլիսավերերը: Պիեռն այլևս ետ չնայեց: Նա, կաղալով, բարձրանում էր սարը:

Հետեւից, այն տեղից, ուր նստած էր Կարատաերը, կրակոց լսվեց: Պիեռը պարզորեն լսեց այդ կրակոցը, բայց նույն ակնթարթին, երբ նա լսեց այդ, Պիեռը հիշեց, որ ինքը դեռ չէր վերջացրել մարշալի անցնելուց առաջ սկսած հաշվարկումը, թե քանի անցում է մնացել մինչև Սմոլենսկ: Եվ նա սկսեց հաշվել: Երկու ֆրանսացի գինվորները, որոնցից մեկը ձեռին բրոնել էր ծխացող հրացանը, վազեցին Պիեռի կողքով: Նրանք երկուսն էլ գումատ էին, և նրանց դեմքերի արտահայտության մեջ — մեկը նրանցից երկշոտ նայեց Պիեռին — կար ինչ-որ նման այն բանին, ինչ նա տեսել էր երիտասարդ գինվորի դեմքին՝ մահապատճի պահին: Պիեռը նայեց գինվորին և հիշեց, թե ինչպես այդ գինվորը նախանցյալ օրը շապիկը վառեց խարույկի վրա չորացնելիս, և թե ինչպես ծիծաղում էին նրա վրա:

Շունը ոռնաց հետեւից, այն տեղից, ուր նստած էր Կարատաերը: «Այ քեզ հիմար, ինչո՞ւ համար է ոռնում», — մտածեց Պիեռը:

Զինվոր-ընկերները, որ քայլում էին Պիեռի կողքին, նույնպես, ինչպես Պիեռը, չնայեցին ետ՝ այն տեղին, որտեղից լսվեց կրակոցը և ապա շան ոռնոցը. բայց խիստ արտահայտություն կար բոլորի դեմքերին:

## ХV

Հեծելակային իրերով բեռնաբարձ սալլախումը, գերիները և մարշալի գումակը կանգ առան Շամշեռ գյուղում: Բայց իմբվեցին խարույկների շուրջը: Պիեռը մոռեցավ խառույկին, կերավ ձիու խորոված միս, պառկեց մեջքը կրակին

արած և անմիջապես քնեց: Նա նորից քնեց այն քնով, որով քնեց Մոժայսկում՝ Բորոդինոյից հետո:

Նորից իրականության դեպքերը միացան երազներին, և նորից ինչ-որ մեկը, ինքն արդյոք թե ուրիշ մեկը, նրան ասում էր մտքեր և անգամ նույն մտքերը, որ ասում էին նրան Մոժայսկում:

«Կյանքն ամեն ինչ է: Կյանքը աստված է: Ամեն ինչ տեղափոխվում է, շարժվում, և այդ շարժումն աստված է: Եվ քանի գեղ կա կյանք՝ կա աստվածային ինքնագիտակցության վայելքը: Միրել կյանք, սիրել աստծուն: Ամենից զգվարը և ամենից երանավետը՝ սիրել այս կյանքը իր տանջանքներով, տանջանքների անմեղությամբ»:

— «Կարատառական, — հիշեց Պիեռը:

Եվ հանկարծ Պիեռին, ինչպես կենդանի, ներկայացավ, վաղուց մոռացված հեզ ծերունի ուսուցիչը, որը Ըկեցարիայում Պիեռին ավանդում էր շաշմարհագրություն: «Կաց», — ասավ ծերունին, և նա Պիեռին ցույց տվեց գլորուսը: Այդ գլորուսը մի կենդանի, օրորվող գունդ էր, որ շափեր շուներ: Գնդի ամբողջ մակերեսը կազմված էր կաթիներից, որ խիտ սեղմված էին միմյանց: Եվ բոլոր այդ կաթիները շարժվում էին, տեղափոխվում և մերթ միաձուլվում. մի քանիսը դառնում էին մեկ, մերթ մեկից բաժանվում էին շատերի: Ցույցաբանշուր կաթի ձգտում էր տարածվել, բռնել ավելի մեծ տարածություն, բայց մյուսները, ձգտելով նույն բանին, սեղմում էին նրան, երբեմն ոչնչացնում, երբեմն ձուլվում նրան:

— Ահավասիկ կյանքը, — ասավ ծերունի ուսուցիչը:

«Որքան այդ հասարակ է ու պարզ, — մտածեց Պիեռը: — Ինչպես կարող էի ես այդ շիմանալ առաջ»:

— Մեջտեղն աստված է, և յուրաքանչյուր կաթիլ ձգտում է ավելի տարածվել, որպեսզի ամենամեծ շափերով անդրդարձնի նրան: Եվ աճում է, միաձուլվում, թե սեղմվում, թե ոչնչանում է մակերևութիւնի վրա, անցնում է խորքը և նորից դուրս լողում: Ահա նա՝ կարատառը, ահա տարածվեց ու լքացավ: — Vous avez compris, mon enfant<sup>1</sup>, — ասավ ուսուցիչը:

<sup>1</sup> Դուք հասկացա՞ք, զավական:

— Vous avez compris, sacré nom!<sup>1</sup> — **Ճշաց ձայնը, և Պիեռը զարթնեց:**

Նա վեր կացավ և նստեց: Խարույկի մոտ, ծալապատիկ նըստած էր մի ֆրանսացի զինվոր, որ հենց նոր հրեց ոռւս զինվորին, և խորովում էր շամփուրին անցրած միսր: Ձղուտ, քշտած, մազակալած, կարճ մատներ ունեցող կարմիր ձեռներով նա ճարպկորեն դարձնում էր շամփուրը: Կինեմոնագույն մոայլ դեմքը՝ կիտած հոնքերով պարզ երեսում էր կրակի լույսով:

— Ça lui est bien égal<sup>2</sup>, — փնթփնթաց նա, արագորեն դիմելով հետեւ կանգնած զինվորին, — brigand. Va!<sup>3</sup>.

Եվ զինվորը, շամփուրը դարձնելով, մոայլ նայեց Պիեռին: Պիեռը երեսը շրջեց, նայելով ստվերներին: Մի գերի ոռւս զինվոր, նա, որին հրեց ֆրանսացին, նստել էր խարույկի մոտ և ձեռով թակում էր ինչ-որ բան: Նայելով ավելի մոտիկ՝ Պիեռը ճանաչեց բաց մանշշակագույն շանը, որը, պոշը շարժելով, նստել էր զինվորի կողքին:

— Ա, եկե՞լ է, — ասավ Պիեռը: — Իսկ Պլա... — սկսեց նա և խոսքը շավարտեց:

Հանկարծ նրա երևակայության մեջ, միաժամանակ միշտանց կապվելով, ծագեց հիշողությունն այն հայացքի, որով Պլատոնը նայում էր իրեն՝ ծառի տակ նստած, հիշեց կրակոցը, շան ունոցը, երկու ֆրանսացիների հանցավոր դեմքերը, որ վաղեցին իր կողքով, ծխացող հրացանը, Կարատակի բացակալությունն այս դադարքին, և նա պատրաստ էր արդեն հասկանալու, որ Կարատակն սպանված է. բայց նույն այդ ակնթարթին նրա հոգում, աստված գիտի որտեղից, ծագեց մի հիշողություն այն երեկոյի մասին, որ ինքն անցրել էր մի գեղեցկուհի լեհուհու հետ ամառը՝ Կիեվի իր տան պատշամբում: Եվ, այնուամենայնիվ, այսօրվա հիշողությունները շկապակցելով իրար հետ և եղրակացություն շանելով, Պիեռն աշքերը փակեց և ամառային բնության պատկերը խառնվեց լողանալու:

օրորվող հեղուկ գնդի հիշողության հետ, և նա իջավ ինչ-որ ցորեց մեջ ալնպես, որ զուրը ծածկեց նրա գլուխը:

Արևածագից առաջ նրան արթնացրին բարձր, հաճախակի կրակոցներ ու կանչեր: Պիեռի կողքով վագեցին ֆրանսացիներ:

— Les cosaques<sup>1</sup>, — կանչեց նրանցից մեկը, և մի բոպե հետո ոռւս դեմքերի բազմությունը շրջապատեց Պիեռին:

Երկար ժամանակ Պիեռը շէր հասկանում, թե ի՞նչ է կատարվում իր հետ: Այնն կողմից նա լսում էր ընկերների ուրախության աղաղակները:

— Եղրայիններ: Հարազատներ, սիրելիներ, — լաց լինելով՝ բացականշում էին զինվորները, գրկելով կազակներին ու հուսարներին:

Հուսարներն ու կազակները շրջապատեցին գերիներին և շտապ-շտապ ո՛րը հագուստ էր առաջարկում, ո՛րը կողիկ, ո՛րը հաց: Պիեռը հեկեկում էր, նրանց մեջտեղ նստած, և շէր կարողանում մի խոսք ասել. նա գրկեց իրեն մոտեցող առաջին զինվորին և լաց լինելով համբուրում էր նրան:

Դոլոխովը կանգնել էր փուլ եկած տան դարբասի մոտ, թողնելով որ մոտովն անցնի զինաթափ արված ֆրանսացիների բազմությունը: Ֆրանսացիները, կատարվածից հուզված, բարձրածայն խոսում էին միմյանց հետ. բայց անցնելով Դոլոխովի մոտով, որը մտրակով թեթևակի խփում էր կոշիկներին և նայում նրանց իր սառը, ապակյա, ոչ մի լավ բան շխոսացող հայացքով, նրանց խոսոցը դադարում էր: Մյուս կողմը կանգնած էր Դոլոխովի կազակը և համրում էր գերիներին, հարյուրները կավիճի մի գծով նշանակելով դարպասի վրա:

— Քանի՞ս է, — հարցրեց Դոլոխովը գերիներին հաշվող կազակին:

— Երկու հարյուրի վրա է, — պատասխանեց կազակը:  
— Filez<sup>2</sup>, — ասում էր Դոլոխովը, որ այդ արտա-

<sup>1</sup> Գուր հասկացաք, գուրը տանի:

<sup>2</sup> Նրա համար միենույն է:

<sup>3</sup> Ավագակ: Խակակես:

Հայտությունը սովորել էր Փրանսացիներից, և, աշքերով պամափորելով անցնող գերիներին, նրա հայացքը բռնկում էր զածան փայլով:

Դենիսովը մոայլ դեմքով, փափախը վերցրած, գնում էր կազակների հետևից, որոնք Պետայա Մոստովի դիակը տանում էին դեպ այգում փորած փոսը:

## XVI

Հոկտեմբերի 28-ից, երբ սկսվեցին սառնամանիքները, Փրանսացիների փախուստն ընդունեց միայն ավելի ողբերգական բնույթ, փախուստը սառչող և խարույկների մոտ մահացու աստիճանի տապակվող մարդկանց, և մուշտակներով ու կողոպտած բարիքով կառթերով գնացող կայսեր, թագավորների և հերցոգների. բայց էապես Փրանսական բանակի փախուստի և բայքայման պրոցեսը բնակ լիփոխվեց:

Մոսկվայից մինչև Վյազմա 73-հազարանոց Փրանսական բանակից, չաշշած գվարդիան (որն ամրող պատերազմին ովինչ շարավ, բացի կողոպուտից), 73-հազարանոց բանակից մնաց 36 հազար (այս թվից հինգ հազարից ոչ ավելին ընկավ կոիվներում): Ահա պրոգրեսիայի առաջին անդամը, որով մաթեմատիկորեն ճիշտ որոշվում են հաշորդները: Ֆրանսական բանակը նույն պրոպրօցիայով հալվում էր և ոչնչանում Մոսկվայից մինչև Վյազմա, Վյազմայից մինչև Սմոլենսկ, Սմոլենսկից մինչև Բերեզինա, Բերեզինայից մինչև Վիլնո, անկախ ցրտի բարձր կամ ցածր աստիճանից, հետապնդումից: ճանապարհ կտրելուց և բոլոր մյուս պայմաններից, առանձին վերցրած: Վյազմայից հետո Փրանսական զորքերը, երեք զորքայունի փոխարեն խմբվեցին կազմեցին մի խառնախումը ու այդպես գնացին մինչև վերջը: Բերտյեն գրել է իր թագավորին (Հայտնի է, թե որքան զորապետները թույլ են տալիս իրենց ճշմարտությունից հեռու նկարագրել բանակի դրությունը), նա գրել է:

«Je crois devoir faire connaître à Votre Majesté l'état de ses troupes dans les différents corps d'armée que j'ai

été à même d'observer depuis deux ou trois jours dans différents passages. Elles sont presque débandées. Le nombre des soldats qui suivent les drapeaux est en proportion du quart au plus dans presque tous les régiments, les autres marchent isolément dans différentes directions et pour leur compte, dans l'espérance de trouver des subsistances et pour se débarrasser de la discipline. En général ils regardent Smolensk comme le point, où ils doivent se re-faire. Ces derniers jours on a remarqué que beaucoup de soldats jettent leurs cartouches et leurs armes. Dans cet état de choses, l'intérêt du service de Votre Majesté exige, quelles que soient ses vues ultérieures, qu'on rallie l'armée, à Smolensk en commençant à la débarrasser des non combattants, tels que hommes démontés et des bagages inutiles et du matériel de l'artillerie qui n'est plus en proportion avec les forces actuelles. En outre les jours de repos, des subsistances sont nécessaires aux soldats qui sont exténués par la faim et la fatigue, beaucoup sont morts ces derniers jours sur la route et dans les bivacs. Cet état de choses va toujours en augmentant et donne lieu de craindre, que si l'on n'y prête un prompt remède, on ne soit plus maître des troupes dans un combat. Le 9 Novembre, à 30 verstes de Smolensk».

1 ռՊարտիզ եմ համարում հայտնել ձերդ մեծության սյն տարրեր Կորպուսներ գիհաւիք ժաման, որ ես գուտեցի տարրեկ անցամեներում առ վերջին երեք օրց նրանց գրեթե լրաց են: Զինվորների հազար մի քառորդ մասն է մասն զինք դոշչակների ներքո, Տուուները գնում են անշատ-անշատ, ինքան գլուխ, տարրեր ուղղութաներոց, հուապակ սեռներ գտնել և արատվել ծառայություններ: Ընդհանրապես նրանք մատանում են միայն Սմոլենսկի մասին, ուր հույս ունեն հանգստանալ: Վերջին որերը նկատվել է, որ շատ զինվորներ նետել են իրենց փամփուշտները ու հրացանները: Իրերի այս կացության մեջ, ինչ էլ ինեն ներ հետագ մատադրությունները, ձերդ մեծությանը հաղող ժառանակությունը է հավաքի բանակը Սմոլենսկում թյանը հաղող ժառանակությունը շահը պահանջում է հավաքի բանակը Կորպուսները և սկսելով զատել նրանից շարքերի համար ոչ պիտանիներին, այն է՝ ձերը հեծելակներին, անզեններին, ավելորդ զումակները և հրետանու կորցրած հեծելակներին, անզեններին, ավելորդ զումակները և հրետանու զի մասը, որովհետեւ նա այժմ չի համապատասխանում ջուրի թվին: Բացի մի մասը, որովհետեւ նա այժմ չի համապատասխանում ջուրի թվին: Բացի մի բանի օրվա հանգիստ, զինվորներից, անհրաժեշտ է պարենամթերք և մի բանի օրվա հանգիստ:

Թափվելով Սմոլէնսկ, որը նրանց պատկերանում էր ավելացած երկիր, ֆրանսացիները մթերքի համար սպանում էին իրար, կողոպտում էին իրենց իսկ պահեստները և, երբ ամեն ինչ կողոպտաված էր արդեն, շարունակեցին փախչել:

Գնում էին շարունակ, իրենք էլ շիմանալով ո՛ւր և ինչ՛ու են գնում: Մյոււներից ավելի ևս քիչ էր իմանում այդ նապուլինի հանճարը, որովհետև ոչ ոք նրան չէր հրամայում: Բայց և այնպես նաև իրեն շրջապատողները պահպանում էին իրենց վաղեմի սովորութիւնները. գրվում էին հրամաններ, նամակներ, գեկույցներ, ordre du jour<sup>1</sup>. իրար կոչում էին. «Siege Mon Cousin, Prince d'Ècoust, roi de Nâples»<sup>2</sup> և այլն: Բայց հրամաններն ու գեկույցները միայն թղթի վրա էին. դրանցով ոչինչ չէր կատարվում, որովհետև կատարվել չէր կարող. և շնայած միմյանց կոչում էին մեծություններ, բարձրություններ և զարմիկ եղբայրներ, նրանք բոլորն էլ զգում էին, որ իրենք ողորմելի և զարդելի մարդիկ են, որ շատ շարիք են դործել, որի համար այժմ պարտավոր են հատուցել: Եվ, լուսայած այն բանին, որ նրանք ձևացնում էին, թե հոգ են տանում բանակի մասին, նրանք մտածում էին միայն յուրաքանչյուրն իր մասին և այն մասին, թե ինչպես՝ շուտով հեռանան ու փրկվեն:

## XVII

Ըուսաց և ֆրանսացոց զորքերի զործողությունները վերադի կովի ժամանակ՝ Մոսկվայից մինչև Նեման՝ նման էր աշխակապուկ խաղի, երբ երկու խաղացողի աշխերը կապում են

Ները հյուծված են քաղցից ու հոգնությունից. զերշին օրերը շատեքը մեռել են ճանապարհին և բացօթյակներում: Այսպիսի աղետայի կացությունը շարունակ սաստկանում է և ստիպում է երկուող կրել, որ եթե ձեռք չառվել շուտափութ միջոցներ՝ մենք շուտով ի վիճակի շնչը լինի հառավարել զորքը կովի ժամանակ. 9-ը նոյեմբերի, Սմոլենսկից 30 կերստի վրան:

<sup>1</sup> Օրացուցակ:

<sup>2</sup> Զերդ մեծություն, քուգեն, եկմուլի իշխան, նեապոլի թագավոր և այլն:

և մեկը երբեմն զնգնգացնում է բոժոժը, որ իր մասին իմացնի բռնողին: Սկզբում նա, որին որսում են, զնգնգացնում է, հարապակորդից շվախենալով, բայց, երբ դրությունը վատանում է, նա, աշխատելով անձայն քայլել, փախչում է իր թշնամուց և հաճախ, մտադրվելով փախչել, գնում է ուղղակի դեպի նրա գիրկը:

Նապոլեոնյան զորքերն սկզբում դեռ իմաց էին տալիս իրենց մասին,—այդ Կալուգայի ճանապարհով շարժվելու առաջին շրջանումն էր,—բայց հետո, դրւս գալով Սմոլենսկի ճանապարհը, նրանք վազեցին, զանգակի լեզվակը սեղմելով, և հաճախ, մտածելով, թե հեռանում են, զազում էին ուղիղ դեպի ուսւաները:

Ֆրանսացիների և նրանց հետեւղ ոսւների արագ վազքի և դրա հետևանքով ձիերի հյուծվելու պատճառով, թշնամու դրությունը մոտավորապես իմանալու գլխավոր միջոցը — հեծելագետքերը — գոյություն չուներ: Բացի դրանից, երկու բանակի էլ դիրքի հաճախակի և արագ փոփոխման հետևանքանակի էլ դիրքի հաճախակի և արագ փոփոխման հետևանքը, այն տեղեկություններն էլ, որ կային, չեին կարող ժամանակին տեղ հասնել: Եթե ամսի շին տեղեկություն էր գալիս, թե թշնամու բանակն այսինչ տեղն էր ամսի մեկին, ամսի երեքին, երբ կարելի էր մի բան ձեռնարկել, այդ բանակն արդեն երկու անցում էր կատարած լինում և գտնվում էր բուրովին այլ դիրքում:

Մի բանակը փախչում էր, մյուսը կրնկակոխ հետևում էր նրան: Սմոլենսկից ֆրանսացիների առաջ բացվում էին շատ տարրեր ճանապարհներ, և թվում էր թե, շորս օր այդտեղ կանգ առնելով, ֆրանսացիք կարող էին իմանալ ո՛ւր է թշնամին, մտածել որևէ շահավետ բան և ձեռնարկել որևէ նոր բան: Բայց շրոօրյա դադարից հետո նրանց բազմությունները նորից փախան ոչ դեպի աշ, ոչ դեպի ձախ, այլ առանց որևէ մաների և կշուղատության, զնացին հին, վատթարագույն ճանապարհով՝ դեպի կրասնոյե և Օրշա — տրորված հետքով:

Սպասելով թշնամուն հետեւցի և ոչ թե առջևից, ֆրանսացիք փախչում էին ցրված և միմյանցից բաժանված՝ 24 ժամվատարածության վրա: Բոլորի առջևում փախչում էր կայսրը, հետո թագավորները, ապա հերցոգները: Որևէ մտածական բանակը,

կարծելով, որ նապուենը Դնեպրի այն կողմը կթեքվի գեպի աջ, ինչ որ միայն բանական էր, նույնպես թեքվեց գեպի աջ և գուրս եկավ գեպի Կրասնոյե տանօղ մեծ ճանապարհը, նզ այստեղ, ինչպես աշքակապուկ խաղում, ֆրանսացիք հանդիպեցին մեր ավանգարդին: Անսպասելիորեն տեսնելով թշնամում, ֆրանսացիք խառնվեցին իրար, կանգ առան անսպասելի վախից, բայց հետո նորից փախան, թողնելով իրենց հետեղ եկող ընկերներին: Այստեղ, ինչպես ոռու զորքերի շարքերի միջով, երեք օր, մեկը մյուսի հետեւից, անցնում էին ֆրանսական առանձին զօրամասերը — սկզբում փոխարքայի, հետո Դավուի, ապա Նեյի: Նրանք բոլորը թողնում գնում էին միմյանց, թողնում էին իրենց ծանրությունները, հրետանին, ժողովրդի կեսը և փախչում, միայն գիշերները կիսաշրջան կազմելով, աշից շրջանցում էին ոռուներին:

Նելը, որ գնում էր բոլորի հետեւից (որովհետև, չնայած իրենց դժբախտ կացության կամ հենց գրա հետևանքով), նրանք ուզում էին թակել այն հատակը, որը ջարդել էր նրանց), զրադվեց Սմոլենսկի ոչ ոքի շահանգարող պատերը պայթեցնելով, — բոլորի հետեւից, վերջինը, իր տասը հազարանոց կորպուաով գնացող Նեյը, վազելազ հասավ Օրշա՝ Նապլեոնի մոտ միայն հազար մարդով, թողնելով և բարոր մարդկանց, և բոլոր թնդանուները ու գիշերը, գաղտագողի, անտառով անցավ Դնեպրը:

Օրշայից փախան առաջ՝ դեպ Վիլնո առանող ճանապարհով, ճիշտ նույնպիսի աշքակապուկ խաղալով հետապնդող բանակի հետ: Բերեգինայի վրա նորից խառնվեցին իրար, շատերը խեղովեցին, շատերն անձնատրւ եղան, բայց նրանք, ովքեր անցան գետը, շարունակեցին փախչել: Նրանց գլխավոր պետը մուշտակ հագավ և, սահնակ նստելով, սլացավ մենակ, իր ընկերներին թողնելով: Ով կարող էր՝ նույնպես գնաց հետացավ, ով չէր կարող՝ անձնատրւ եղավ կամ մեռավ:

## XVIII

Թվում էր, թե ֆրանսացիների փախուստի հենց այդ կամանիայի մեջ, երբ նրանք առում էին ամենը, ինչ միայն կարելի էր իրենց կործանելու համար, երբ այդ բազմության ոչ մի

շարժման մեջ, սկսած Կալուգայի ճանապարհը թեքվելուց մինչև զորապետի փախչելը բանակից, չկար աննշան իսկ իմաստ, — թվում էր թե կովի այդ շրջանում անկարելի է արդեն պատմագիրների համար, որոնք մասսաների գործողությունները վերագրում են մի մարդու կամքին, նկարագրել այդ նահանջը իրենց իմաստով: Բայց ոչ, Պատմագիրները զրբերի լեներ են գրել այդ կովի մասին, և ամենուրեք նկարագրված նապուենի կարգադրությունները և նրա՝ զորքը ղեկավարող խորիմաստ ծրագիրները — մաներները և նրա մարշալների հանճարեղ կարգադրությունները:

Նահանջը Մալոյարոսլավեցից այն ժամանակ, երբ նրան ճանապարհ են տալիս դեպի լիսուատ նահանգները և նրա առաջարցած է այն զուգահեռ ճանապարհը, որով հետո հետապնդեց նրան Կուտուզովը, — այդ անհարկավոր նահանջը քայբայած ճանապարհով բացատրում են մեզ տարբեր խորիմաստ նկատառումներով: Նույնպիսի խորիմաստ նկատառումներով նկարագրվում է նրա նահանջը Սմոլենսկից՝ Օրշա: Ապա նըկարագրվում է նրա հերոսությունը Կրասնոյեի մոտ, երբ նա իրը թե պատրաստվում է ճակատամարտն ընդունել և ինքը հրամանատարություն անել, և բայցում է կեշու ձեռնափայտը ձեռին ու ասում:

«J'ai assez fait l'Empereur, il est temps de faire le général», — և, չնայած դրան, անմիշապես դրանից հետո փախում է առաջ, ճակատագրի բամահանույթին թողնելով բանակի ցրված մասերը, որ գտնվում էին հետեւում:

Ապա նկարագրում են մեզ մարշաների հոգու վեհությունը, մանավանդ Նեյի, — հոգու վեհություն, որ կայանում է նրանում, թե ինչպես նա գիշերը անտառով գնալով, հեռանում է թշնամուց, անցնում Դնեպրը և առանց դրոշակի ու հրետանու և առանց զորքի ինը տասներորդականի՝ փախած գալիս է Օրշա:

Եվ, վերջապես, մեծ կայսեր մեկնումը հերոսական բանակից պատմագիրները մեզ ներկայացնում են որպես մի ինչոր մեծ ու հանճարեղ բան: Անգամ այս վերջին քայլը փախուստի,

<sup>1</sup> Բավական է այլևս կայսր եղա, հիմա ժամանակ է գեներալ լինելու 215

որ մարդկային լեզվով կոչվում է ստորության վերջին աստիճանը, որով սովորում է ամաշել յուրաքանչյուր երեխա, — այդ բայցն էլ պատմագիրների լեզվով արդարացում է ստանում:

Այն ժամանակ, երբ արդեն անկարելի է այլևս ձգել պատմական դատովությունների այնքան էլաստիկ թելերը, երբ գործն արդեն հակառակ է այն բանին, ինչ ամրող մարդկությունը կոչում է բարություն և անգամ արդարություն, պատմագիրների մոտ հանդես է գալիս մի փրկարար հասկացողություն մեծության մասին: Մեծությունը կարծես բացասում է լավի և վատի շափի հնարավորությունը: Մեծի համար — չկա վատ բան: Չկա մի սարսափ, որ իբրև մեղադրանք առաջադրվի նրան, ով մեծ է:

«C'est grand!»<sup>1</sup> — ասում են պատմագիրները, ու այն ժամանակ այլևս չկա ոչ լավ, ոչ վատ, այլ կա «grand» և «ոչ grand». Grand — լավ է, ոչ grand — վատ: Նրանց հասկացողությամբ՝ grand-ը հատկությունն է ինչ-որ առանձնահատուկ կենդանիների, որոնց նրանք հերոսներ են կոչում: Եվ նապոլեոնը, տաք մուշտակով հեռանալով տուն՝ կործանվող ոչ միայն ընկերներից, այլ (նրա կարծիքով) մարդկանցից, որոնց բերել էր այստեղ, զգում է զե c'est grand, և նրա սիրտը հանգիստ է:

«Du sublime (նա ինչ-որ sublime<sup>2</sup> է տեսնում իր մեջ) առ ridicule il n'y a qu'un pas»<sup>3</sup>, — ասում է նա: Եվ ամրող աշխարհը 50 տարի կրկնում է «Sublime! Grand! Napoléon le grand! Du sublime au ridicule il n'y a qu'un pas!»<sup>4</sup>.

Եվ ոչ ոքի մտքում չի ծագում, թե մեծության ընդունումը, մեծություն, որը չի շափում լավ ու վատի շափով, դա իր ընշության և անշափելի փոքրության ընդունումն է միայն:

Մեզ համար, որ ունենք Քրիստոսի մեզ տված լավի ու վատի շափը, չկա անշափելի բան: Եվ մեծություն չկա այստեղ, ուր չկա պարզություն, բարություն ու ճշմարտություն:

## XIX

Ո՞ր ոուս մարդը, կարդալով 1812 թվի կովի վերջին շրջանի նկարագրությունները չի ապրել զայրույթի, անբավարավածության և անորոշության ծանր զգացում: Ո՞վ իրեն ի տվել այս հարցերը ինչպես չեն գերել, չե՞ն ոչնչացրել բոլոր ֆրանսացիներին, երբ բոլոր երեք բանակները շրջապատել էին նրանց գերակշոռող թվով. երբ կազմալուծված ֆրանսացիները, քաղցած ու սառած, անձնատուր էին լինում խմբերով՝ բազմություններով, և երբ (ինչպես ասում է մեզ պատմությունը) ոուսների նպատակը հենց ա'յն էր, որ կանգնեցնեն, կտրեն և գերի վերցնեն բոլոր ֆրանսացիներին:

Ինչպես է որ ոուսական այն զորքը, որը, իր քանակով ավելի թույլ լինելով ֆրանսացիներից, տվեց Բորոդինոյի ճակատամարտը, ինչպես է որ այդ զորքը, երեք կողմից շրջապատած լինելով ֆրանսացիներին և նպատակ ունենալով գերել նրանց, չհասավ իր նպատակին: Մի՛թե ֆրանսացիներն այնքան մեծ առավելություն ունեն մեր հանդեպ, որ մենք գերազանց ուժիրով, շրջապատելով, չկարողացանք զարդել նրանց: Այդ ինչպես կարող էր պատահել:

Պատմությունը (այն, որը կոչվում է այդ անունով), պատասխանելով այդ հարցերին, ասում է, որ այդ պատահէց այն պատճառով, որ Կուտուզովը և Տիշագովը, և սա ու նա շարին այս ու այն մաներները:

Բայց ինչո՞ւ նրանք շարին այդ բոլոր մաներները: Ինչո՞ւ, եթե նրանք հանգավոր էին, որ չեն հասել նշած նպատակին, — ինչո՞ւ նրանց չգատեցին և չպատժեցին: Բայց անգամ եթե թույլ տանք, որ ոուսների անհաջողության հանցանքը կուտուզովին ու Զիշագովին է և ալլ, այնուամենայնիվ անկատելի է հասկանալ, թե ինչո՞ւ և այն պայմաններում, որի մէջ գտնվում էին ոուս զորքերը Կրասնոյերի մոտ և Բերեզինայի մոտ (երկու գեպքում էլ ոուսները գերակշոռում էին իրենց ուժերով), ինչո՞ւ գերի վերցվեց ֆրանսական զորքն իր մարդագալությունը, թագավորներով ու կայսրներով, երբ հենց այդ էր ոուսների նպատակը:

Այս տարօրինակ երևույթը բացատրել նրանով (ինչպես

<sup>1</sup> Դա վեճ է:

<sup>2</sup> Վեհություն:

<sup>3</sup> Մեծությունից մինչև ծիծաղելին միայն մի բայլ է:

<sup>4</sup> Վեճ: Վաեմ, նապուեսն Մեծը: Մեծությունից մինչև ծիծաղելին միայն մի բայլ է:

այդ անում են ոռւս զինվորական պատմագիրները), թե Կուտուզովը խանգարում էր հարձակումը, անհիմն է ա'յն պատճառով, որ մենք գտնենք, թե Կուտուզովի կամքը չկարողացավ զսպել զորքի հարձակումը Վլազմայի մոտ և Տարուտինոյի մոտ:

Ինչո՞ւ ոռւս զորքը, որ իր շատ թույլ ուժերով հաղթանակ տարավ Բորոդինոյի մոտ թշնամու վրա՝ նրա ուժեղությամբ հանդերձ,— Կրասնոյի և Բերեզինայի մոտ, իր գերազանց ուժերով, հաղթվեց ֆրանսացիների քայլայված բազմության կողմից:

Եթե ոռւսների նպատակը կայանում էր այն բանում, որ կտրեն և գերի վերցնեն նապոլեոնին ու մարշալներին, և այդ նպատակին ոչ միայն շասան, այլ այդ նպատակին հասնելու բոլոր փորձերը ամեն անգամ խորտակվում էին ամենամոթալի կերպով, ուստի կովի վերջին շրջանը միանգամայն արդարացիորեն ֆրանսացիները ներկայացնում են մի շարք հաղթանակներով և միանգամայն անարդարացիորեն ոռւս պատմագիրները ներկայացնում են հաղթական:

Ոռւս զինվորական պատմագիրները այն շափով, որշափ նրանց համար պարտադիր է տրամաբանությունը, ակամագալիս են այդ եղակացության և, չնայած արիության ու անձնվության մասին արած լիրիկական կոչերին և այլն, ստիպած են ակամա խոստովանել, որ ֆրանսացիների նահանջը Մոսկվայից՝ նապոլեոնի մի շարք հաղթանակներն են և Կուտուզովի պարտությունները:

Բայց, բոլորովին մի կողմը թողած ժողովրդական ինքնամիրությունը, զզացվում է, որ այդ եղակացությունն իր մեջ հակասություն է բովանդակում, որովհետև ֆրանսացիների մի շարք հաղթանակները նրանց հասցրին միանգամայն ոչնչացման, իսկ ոռւսների մի շարք պարտությունները հասցրին նրանց թշնամուն լիովին ոչնչացնելուն և ամբողջ հայրենիքը մաքրելուն:

Այս հակասության աղբյուրն այն է, որ պատմագիրները, որոնք գեպքերն ուսումնասիրում են ըստ թագավորների ու գեներալների նամակների, ըստ ուազմագիրների, զեկույցների, ծրագիրների և այլն, ենթադրել են մի կեղծ, 1812 թ.

պատերազմի վերջին շրջանի երրեք գոյություն շունեցած մի նպատակ, որն իբր թե կայանում էր նրանում, որպեսզի ճանապարհը կտրեն և բռնեն նապոլեոնին իր մարշալներով ու բանակով:

Եյդ նպատակը երրեք չի եղել և չէր կարող լինել, որովհետեւ նա իմաստ շուներ և դրան հասնելը բոլորովին անվարելի էր:

Այդ նպատակը որևէ իմաստ շուներ, նախ, այն պատճառով, որովհետեւ նապոլեոնի քայլայված բանակը հնարավոր եղած ամբողջ արագությամբ փախչում էր Ռուսաստանից, այսինքն՝ կատարում էր հենց այն, ինչ կարող էր ցանկալ ամեն մի ոռւս: Էլ ինչո՞ւ համար պետք էր կատարել զանագան գործողությունների ֆրանսացիների նկատմամբ, որոնք փախչում էին այնքան արագ, որքան միայն կարող էին:

Երկրորդ, անմիաստ կլիներ կանգնել այն մարդկանց ճանապարհին, որոնք իրենց ամբողջ եռանդը դրել էին փախուստի մեջ:

Երրորդ, անմիաստ կլիներ ոռւս զորքերը կորցնել ֆրանսական բանակները ոչնչացնելու համար, որոնք ոչնչանում առանց արտաքին պատճառների այնպիսի պրոդեսիալին առանց ճանապարհը կտրելու էլ նրանք չէին կարող լուսավորությունը, որ առանց ճանապարհը կտրելու էլ նրանք չէին կարող առանց անցկացնել նրանից ավելին, ինչ անցկացրին գեկտեմբեր ամսին, այսինքն՝ ամբողջ զորքի մեկ հարյուրերորդականը:

Չորրորդ, անմիաստ կլիներ կայսեր, թագավորներին, հերցոգներին, — գերի վերցնելու ցանկությունը մարդկանց, որոնց գերումը ծայր աստիճան կդժվարացներ ուսաների զործողությունները, ինչպես այդ ընդունել են այն ժամանակի ամենամուտ դիվանագետները (J. Maistre և ուրիշները): Առավել անիմաստ կլիներ ֆրանսացիների կորպուսները գերի վերցնելու ցանկությունը, երբ ոռւս զորքերը կիսով շափ հալվեցին մինչև Կրասնոյե, իսկ գերի կորպուսներին պետք էր հատկացնել մի դիվիզիա ուղեկցորդ, և երբ ոռւս զինվորները ոչ միշտ էին ստանում լրիվ պարեն, և գերի վերցվածներն արդեն կոտորվում էին սովոր:

Նապոլեոնի ճանապարհը կտրելու և նրան բանակի հետ բռնելու ամբողջ խորիմաստ ծրագիրը նման կլիներ այն ծրանելու

բարին բանջարանոցատիրոջ, որը, իր ածուները տրորող անասունին բանջարանոցից դուրս անելիս, վազեր դարբասի դուռը և սկսեր խփել այդ անասունի գլխին։ Սիակ բանը, որ կարելի էր ասել բանջարանոցատիրոջը արդարացնելու համար, այն կլիներ, թե նա շատ էր զայրացած։ Բայց այդ անգամ չէր կարելի ասել ծրագիրը կազմողների մասին, որովհետև նրանք չէին տուժել ածուները տրորելուց։

Բայց, գրանից բացի, որ Նապոլեոնին բանակի հետ կտրելը անիմաստ էր, դա և անհնարին էր։

Դա անհնարին էր, նախ և առաջ, այն պատճառով, որովհետև փորձից հայտնի է, որ զորասյուների շարժումը հինգ վերսափի վրա միենույն կովում երթեք շեն զուգադիպում ծրագիրներին, ուստի հավանականությունը այն բանի, թե Զիշտովը, Կուտուզովն ու Վիտգենշտեյնը ժամանակին միանալին նշանակված վայրում, այնքան շնչին էր, որ հավասար էր անկարելիության։ այդպես էլ կարծում էր Կուտուզովը, որը դեռ ծրագիրն ստանալիս ասել էր, թե մաներները մեծ տարածության վրա ցանկալի արդունքը շեն տալիս։

Երկրորդ, անհնարին էր այն պատճառով, որ նրա՝ համար, որպեսզի թուլացվեր իներցիայի այն ուժը, որով ետ էր շարժվում Նապոլեոնի զորքը, պետք էր ունենալ անհամեմատ ավելի շատ զորք, քան այն, ինչ ունեին ուռսները։

Երրորդ, այդ անհնարին էր այն պատճառով, որ ուզմական կարել բառը ոչ մի իմաստ չունի։ Հացը կարելի է կտրել, բայց ոչ բանակը։ Բանակը կտրել-բռնել նրա ճանապարհը՝ ոչ մի կերպ չի կարելի, որովհետեւ շուրջը միշտ տեղեր շատ կան, ուր կարելի է շրջանցում կատարել, և կա գիշեր, երբ ոչինչ չի տեսնում, որի մեջ կարող էին համոզվել զինվորական գիտնականները զոնե Կրասնոյեի կամ Բերեզինայի օրինակներից։ Իսկ գերի վերցնելը ոչ մի կերպ չի կարելի առանց այն բանի, որպեսզի նա, ում գերի են վերցնում, դրան շնամածայնի, ինչպես չի կարելի բռնել ծիծեռնակին, թեպես և կարելի է վերցնել նրան, երբ նա իշխն նսափ մարդու ձեռի վրա։ Գերի վերցնել կարելի է նրան, ով անձնատուր է լինում, ինչպես գերմանացիները, ըստ ստրատեգիայի ու տակտիկայի կանոնների։ Բայց ֆրանսական զորքերը միանգամայն իրավացի կերպով

այդ գտնում էին անհարմար, որովհետև միատեսակ սովամահություն ու ցրտահարություն էր սպասում նրանց թե փախուստի ճանապարհին, թե գերության մեջ։

Իսկ չորրորդ և զիսավորը, դա անհնարին էր այն պատճառով, որ երբեք, այն ժամանակից, ինչ գոյություն ունի աշխարհը, չի եղել մի պատերազմ այնպիսի սարսափելի պայմաններում, ինչպիսի պայմաններում տեղի ունեցավ այն 1812 թվին, և ուսական զորքերը ֆրանսացիներին հետապնդելով՝ լարեցին իրենց ամբողջ ուժերը և չկարողացան անել ավելին, չուշանալով իրենք։

Ուսական բանակի շարժման միջոցին՝ Տարուտինոյից մինչև Կրասնոյից՝ շարքերից դուրս ընկան հիսուն հազար հրավանդներ ու ետ մնացածներ՝ այսինքն՝ մի թիվ, որ հավասար է նահանգական մեծ քաղաքի բնակչության։ Մարդկանց կեւը բանակից դուրս ընկավ առանց կովի։

Եվ կովի այդ իսկ շրջանի մասին, երբ զորքերն առանց կոշիկ ու մուշտակ, ոչ լրիվ պարենով, առանց օղու, ամիսներով գիշերում են ձյունի մեջ և 15 աստիճանի սառնամանիքում։ Երբ ցերեկը միայն 7 և 8 ժամ է, իսկ մնացյալը գիշեր, որի ժամանակ չի կարեղ լինել դիսցիպլինայի ազգեցություն։ Երբ ոչ այնպիսն, ինչպես ճակատամարտի մեջ, մարդիկ մի քանի ժամով մտցիլում են մահիան շրջանակը, ուր այլևս չկա դիսցիպլինա, այլ երբ մարդիկ ամիսներով ապրում են, ամեն րոպե կովում են սովամահության ու ցրտամահության դեմ։ Երբ մի ամսում կործանվում է բանակի կեսը, — կովի հենց այդ շրջանի մասին է, որ պատմագիրները մեզ պատմում են, թե Միլորադովիչն ինչպես պետք է թեային երթ կտտարեր այսին կողմ, իսկ Տորմասովը այնին կողմ, և թե ինչպես Զիշագովը պետք է շրթվեր այսին կողմը (շարժվեր ծնկից վեր ձյունի մեջ), և ինչպես այսին շապալեց ու կտրեց և այլն, և այլն։

Ուսաները, կիսով շափ մեռնելով, արին ամենը, ինչ կարելի էր անել և պետք էր անել ժողովրդին արժանի նպատակի հասնելու համար, և մեղավոր շեն այն բանում, որ ուրիշ ուսումնարդիկ, տաք սենյակում նստած, ենթագրում էին անել այն, ինչ անկարելի էր։

Փաստերի և պատմության նկարագրության միջև եղած

բոլոր այս տարօլինակ, աչքմ անհաւի անարի հռկառութեանք անաց է գալիս միայն նրանից, որ այդ գեղքի մասին գրող պատմադիրները գրել են զանազան գեղերալների գեղեցիկ զգացմունքների ու խոսքերի պատմությունը, այլ ոչ թե անցքերի պատմությունը:

Նրանց համար շատ գրավիչ են թվում Սիլորադովիչի խոսքերը, պարզեները, որ սուացել է այս կամ այն գեներալը, և նրանց ենթադրությունները. իսկ այն 50 000-ի հարցը, որոնք մնացին հիվանդանոցներում ու գերեզմաններում, անգամ յի հետաքրքրում նրանց, որովհետեւ ենթակա չէ նրանց ուսումնասիրությանը:

Իսկ մինչդեռ բավական է միայն երես դարձնել զեկույցներն ու զիխավոր պլաններն ուսումնասիրելուց և թափանցել այն հարցուր հազարավոր մարդկանց շարժման մեջ, որոնք ուղղակի, անմիջական մասնակցություն ունեցան անցքին, և բոլոր, սկզբում անլուծելի թվացող խնդիրները հանկարծանառնով հեշտությամբ ու պարզությամբ ստանում են անկառեածելի լուծում:

Նապոլեոնին իր բանակի հետ կտրելու նպատակը երրեք գոյություն չի ունեցել, բացի տասնյակ մարդկանց երեսերայութան մեջ: Նա չէր կարող գոյություն ունենալ, որովհետեւ անհմաստ էր այն և նրան հասնելու անկարելի:

Ժողովուրդը մի նպատակ ուներ. մաքրել իր երկիրը արշավողներից: Այդ նպատակն իրավործվում էր, նախ, ինքնին, որովհետեւ ֆրանսացիք փախչում էին, ուստի և մնում էր միայն շկանզնեցնել այդ շարժումը: Երկրորդ, այդ նպատակն իրագործվում էր ժողովրդական պատերազմի գործողություններով, մի պատերազմ, որ ունշացնում էր ֆրանսացիներին, և, երրորդ, նրանով, որ ուսական մեծ բանակը գնում էր ֆրանսացիների շարժումը կանգ առնելու գեպքում:

Ռուս բանակը պետք է գործեր, ինչպես մտրակը փախչող կենդանու վրա: Եղ փորձված հետապնդողը գիտեր, որ ամենից ձեռնտու է մտրակը բարձրացրած պահել, սպառնալ նրանով, այլ ոչ թե խփել փախչող կենդանու գլխին:

## ԶՈՐՈՐԴԻ ՄԱՍ

### I

Եզր մարդ մեռնող կենդանի է տեսնում, սարսափը համակռու է նրան. այն, ինչ նա ինքն է, — նրա էությունը նրա աշխատ ակներևորեն ոչնշանում է, — զադարում գոյսւթյուն ունենալ: Բայց երբ մեռնազը մարդ է և սիրելի մարդ, որին մենք զգում ենք, այն ժամանակ, բացի կյանքի ոչնշացման հանդեպ եղած սարսափից, զգացվում է սպառվածք և հոգեկան վերբք, որք նույնպես, ինչպես և ֆիզիկական վերքը, երբեմն սպանում է, երբեմն բռնման բայց միշտ ցավում է և վախենում արտաքին գրգոիչ հպումներից:

Իշխան Անդրեյի մահից հետո նատաշան ու իշխանադուստը Մարիան միատեսակ զգում էին այդ: Նրանք բարոյապես կրած ու աշքները կուշ ածած ահարկու, իրենց զիխավերեւ կախված մահվան ամպից, չէին համարձակվում նայել կյանքի երեսին: Նրանք զգուշաբար պահպանում էին իրենց բաց վերքերը վիրավորական, հիվանդագին հպումներից: Ամենը՝ փողոցով արագ անցնող կառքը, ճաշի մասին հիշեցնելը, ըսպասավոր աղջկա հարցումը պատրաստելիք զգեստի մասին, ավելի վատաթարը — ոչ անկեզծ, թույլ կարեկցության խոսքը — ցավագնորեն գրգում էր նրանց վերքը, թվում էր վիխավորանք և խախտում էր այն անհրաժեշտ անդորրը, որի մեջ նրանք երկուսն էլ աշխատում էին ունկնդրել տակագին իրենց երեսակայության մեջ լրած սարսափելի, խստագույն խմբերգը, և

խանդարաւմ էր լավ նաև այն խորհրդավոր անսահման հետուներին, որոնք մի ակնթարթ բացվել էին նրանց առջև:

Միայն երկուսով մնալով նրանք վիրավորանք ու ցավ չեն զգում: Նրանք բիշ էին խոսում իրար հետ: Եթե խոսում էին՝ այն էլ ամենաաննշան նյութերի մասին: Թե մեկը, թե մյուսը միատեսակ խուսափում էին հիշեցնել որևէ բան, որ առնչություն կունենար ապագայի հետ:

Ընդունել ապագայի հնարավորությունը՝ նրանց թվում էր վիրավորել նրա հիշատակը: Իրենց խոսակցության մեջ ավելի ևս զգուշաբար էին անցնում այն ամենի վրայով, ինչ կարող էր վերսբերել մեռյալին: Նրանց թվում էր, թե այն, ինչ իրենք ապրել ու վերապրել էին, չեր կարող բառերով արտահայտվել: Նրանց թվում էր, թե նրա կյանքի մանրամասնությունների ամեն մի հիշատակումը բառերով՝ խախտում էր իրենց աշխերի առց կատարված խորհրդի վեհությունն ու սրբությունը:

Խոսելու անրնդհատ ժուժկալությունը, մշտական ջանագիր մոռացությունը այն բոլորի, ինչ կարող էր խոսք բանալ տալ նրա մասին, — այդ կանգառումները զանազան կողմերից այն բանի սահմանում, ինչ չեր կարելի ասել, էլ ավելի պարզ ու պայծառ էին ցուցադրում նրանց երևակայության առաջ այն, ինչ նրանք զբում էին:

Բայց զուտ, լիակատար վիշտը նույնքան անհնարին է, որքան և զուտ, լիակատար ուրախությունը: Իշխանադուստր Մարիան՝ իր ճակատագրի միակ անկախ տիրուհու, իր եղբորորդու խնամակալուհու և զաստիարակշուհու իր կացությամբ՝ առաջինը լիյանքի կոշվեց վշտի այն աշխարհից, որի մեջ ապրում էր առաջին երկու շաբաթը: Նա հարազատներից ստանում էր նամակներ, որոնց պետք էր պատասխանել. սենյակը, ուր տեղավորել էին նիկոլուշկային, խոնավ էր, և նա սկսել էր հազար. Ալպատիշը եկավ Յարոսլավի՝ գործերի հաշիվներով և առաջարկներով ու խորհուրդներով՝ տեղափոխվել Սոսկվա՝ Վզդվիժենկայի վրա գտնվող տունը, որ մնացել էր անվնաս և պահանջում էր միայն փոքրիկ նորոգումներ: Կյանքը կանգ չէր առնում, և պետք էր ապրել: Որքան էլ ծանր էր իշխանադուստր Մարիայի համար դուրս գալ մեկուսացած հայեցության այն աշխարհից, ուր նա ապրում էր մինչև

որքան էլ ցավում ու խղճում էր նատաշային մենակ թողնել, — կյանքի հոգսերը պահանջում էին նրա մասնակցությունը, և կանաչ անձնատուր եղավ դրանց: Նա Ալպատիշի հետ ստուգեց հաշիվները, Դեսալի հետ խորհրդակցեց եղբօր որդու մասին և կարգադրություններ արավ ու պատրաստություններ տեսավ Մոսկվա տեղափոխվելու:

Նատաշան մնաց մենակ, և այն օրից, երբ իշխանադուստր Մարիան սկսեց զբաղվել մեկնելու պատրաստություններով, խուսափում էր և նրանից:

Իշխանադուստր Մարիան կոմսուհուն առաջարկեց՝ թողնել նատաշային իր հետ Սոսկվա գնալու, և թե մայրը, թե հայրը ուրախությամբ համաձայնեցին այդ առաջարկին, յուրաքանչյուր օր նկատելով գստեր ֆիզիկական ուժերի անկումը, և նրա համար օգտակար կարծելով թե՛ աեղի փոփոխությունը, թե՛ Սոսկվայի բժիշկների օգնությունը:

— Ես ոչ մի տեղ, եմ գնա, — պատասխանեց նատաշան, երբ նրան արին այդ առաջարկությունը, — միայն, խնդրում եմ թողեք ինձ, — ասավ նա և դուրս վագեց սենյակից, դժվարությամբ պահելով ոչ այնքան վշտի, որքան բարկության ու կատարդության արցունքները:

Նրանից հետո, երբ նա զգաց, որ իշխանադուստր Մարիան թողել է իրեն և ինքը մենակ է իր վշտի մեջ, նատաշան ժամանակի մէծ մասը իր սենյակում մենակ, ոտները հավաքած նստում էր բազմեցի մի անկունում և ինչ-որ մի բան պատուիվ, կամ իր բարակ, լարված մատներով տրուելով՝ համառ, սեեռուն հայացքով նայում էր այն բանին, ինչի՞ վրա կանգ էր առել աշքը: Այդ առանձնությունը հրուծում, տանջում էր նըրան: Բայց դա նրա համար անհրաժեշտ էր: Հենց որ ո՛ւեէ մեկը մտնում էր նրա սենյակը, նա արագ վեր էր կենում, փոխում դիրքն ու հայացքի արտահայտությունը և վերցնում գիրքը կամ կարը, ակնհայտ անհամբերությամբ սպասելով այն մարդու հետանլուն, որ խանգարեց իրեն:

Նրան շարունակ թվում էր, թե այժմ ահա կհասկանա, խորամուխ կինի այն բանի մեջ, ինչի վրա սարսափելի, նրա ուժից վեր հարցով սեեռել էր իր հոգու հայացքը:

Կեկտեմբերի վերջին, սև բրդի զգեստով, մազերի փունջն

անփույթ կապած, նիհար ու գումատ, նատաշան՝ ոտները ծալած նստել էր բազմոցի անկյունում, լարված զնզում ու բաց էր թողնում գոտու ծայրերը, և նայում էր դռան անկյունին:

Նատաշան նայում էր այնտեղ, ուր զնաց նա՝ կյանքից ան կողմ։ Եվ կյանքի այն կողմը, որի մասին նա երբեք չէր մտածել, որն առաջ նրան թվում էր այնքան հեռու, աներեկավայելի, այժմ նրան ավելի մոտ էր և հարազատ, ավելի հասկանալի, քան կյանքի այս կողմը, որի մեջ ամեն ինչ կա՛մ դատարկություն էր ու ավեր, կա՛մ տանջանք էր ու վիրավորանք։

Նատաշան նայում էր այնտեղ, ուր նա գիտեր, որ նա էր, բայց նատաշան չէր կարող նրան տեսնել այլ կերպ, քան այնպիսին, ինչպես նա այստեղ էր։ Նատաշան նրան տեսնում էր նորից այնպես, ինչպես եղել էր նա Միտիշչում, Տրոիցի մոտ, Յարոսլավլում։

Նատաշան տեսնում էր նրա գեմքը, լսում էր նրա ձայնը և կրկնում էր նրա խոսքերը և իր խոսքերը, որ ասել էր նրան, և երբեմն իր ու նրա համար հնարում էր նոր խոսքեր, որ այն ժամանակ կարող էին ասվել։

Ահա նա իր թավշյա մուշտակով պառկած է բազկաթոռում, գլուխը նիհար, գունատ ձեռին հենած։ Կուրծքը սարսափելի ընկած է ցած և ուսերը բարձրացած են։ Շուրթերը պիստ սեղմակած են, աշքերը փայլում են և գումատ ճակատին հանկարծ երեսում ու շքանում է մի կնճիռ։ Նրա մի ոտք հազիվ նկատելի դողում է։ Նատաշան գիտի, որ նա պայքարում է տանջալից ցավի դեմ։ «Ի՞նչ բան է այդ ցավը։ Ի՞նչի համար է։ Ի՞նչ է զգում նա։ Ինչպե՞ս է ցավում»։ — մտածում է նատաշան։ Նա նկատեց նատաշայի ուշադրությունը, աշքերը բարձրացրեց և, առանց ժամտալու, սկսեց խոսել։

«Մի բան սարսափելի է, — ասավ նա, — կապվել հավիաման տանշվող մարդու հետ։ Դա հավիտենական տանշանք է։ Եվ նա զննող հայացքով նայեց նատաշային։ Նատաշան, ինչպես և միշտ, այն ժամանակ պատասխանեց ավելի առաջ քան կարողացավ մտածել, թե ի՞նչ է պատասխանում։ Նա ասավ. «Այդ չի կարող այդպես շարումակվել, այդ չի լինի, զուր կառողջանաք — բոլորավին»։

Նատաշան այժմ սկզբից տեսնում էր նրան և հիմա ապրում

այն բոլորը, ի՞նչ զգացել էր այն ժամանակ։ Նա հիշում էր նրա երկարատև, վշտու, խիստ հայացքը իր խոսքերն ասելու միջոցին և հասկանում էր այդ երկարատև հայացքի կշտամբանքի ու հուսահատության նշանակությունը։

«Ես համաձայնեցի, — ասում էր այժմ նատաշան իրեն, — որ սարսափելի կլիներ, եթե նա մշտապես մնար տանշվող։ Ես այդ այն ժամանակ ասի այնպես միայն, որովհետեւ այդ նրա համար սարսափելի կլիներ, իսկ նա այդ հասկացավ այլ կերպ։ Նա մտածեց, որ դա ինձ համար սարսափելի կլիներ։ Նա այն ժամանակ գեռ ցանկանում էր ապրել, վախենում էր մահից։ Եվ ես այնպես կոպտորեն, հիմարաբար պատասխանեցի նրան։ Ես այդ չէի մտածում։ Ես բոլորովին ուրիշ բան էի մտածում։ Եթե ես ասեի այն, ի՞նչ մտածում էի, ես պետք է ասեի՝ — թող նա մեռներ, շարունակ մեռներ իմ աշքերի առաջ, ես երջանիկ կլիների համեմատած իմ այժմյան վիճակի հետ։ Այժմ... ոչինչ, ոչ ոք չկա։ Արդյոք նա գիտե՞ր այդ։ Ոչ Չէր իմանում և երբեք չի իմանա։ Եվ հիմա արդեն երբեք, երբեք չի կարելի ուղղել այդ։ Եվ նորից նա նատաշային ասում էր նույն խոսքերը, բայց հիմա նատաշան իր երեսակայության մեջ նրան պատասխանում էր այլ կերպ։ Նա ընդհատում էր նրան և ասում. «Սարսափելի է ձեզ համար, բայց ոչ ինձ համար։ Դուք գիտցեք, որ առանց ձեզ ինձ համար ոչինչ չկանգում, և ձեզ հետ տանշվելն ինձ համար լավագույն երջանկությունն է։» Եվ նա բոնում էր նատաշայի ձեռքը ու սեղմում այնպես, ինչպես սեղմել էր ասած սարսափելի երեկոյին, մահից չորս օր առաջ։ Եվ իր երեակայության մեջ նատաշան նրան ասում էր դարձյալ ուրիշ քնքուշ, սիրային խոսքեր, որոնք ինքը կարող էր ասել այն ժամանակ, որոնք ասում էր հիմա։ «Ես սիրում եմ քե՛զ... քեզ... սիրում եմ, սիրում եմ...» — ասում էր նատաշան, զղաձորեն ձեռները կծկելով, գաժան ճիգով ատամները սեղմելով։

Եվ քազցր վիշտը համակց նրան, և արցունքներն արդեն գալիս էին աշքերը, բայց հանկարծ նա հարցրեց իրեն, թե ինքն ո՞ւմ է ասում այդ։ Ո՞ւր է նա, և ո՞վ է նա այժմ։ Եվ նորից ամեն ինչ ծածկվեց չոր, զածան տարակուսանքով, և նորից, հնաքերը լարվածորեն վրա բերելով, նա նայեց այնտեղ, ուր նա էր։ Եվ ահա քիչ էր մնում, նրան թվում էր, կթափանցի

գաղտինքը... Բայց այն բոպեին, երբ նրան արդեն, թվում էր, բացվում է անիմանալին, դռան փակի բոնակի բարձրածախ շրմկոցը ցավագնորեն ծակեց նրա լսովությունը: Արագորեն և անզգույշ, վախեցած, իրենով շմտահողված դեմքի արտահայտությամբ, սենյակ մտավ սպասուհի Գունյաշան:

— Համեցեք հայրիկի մոտ, շուտ,— ասավ Դունյաշան մի առանձին ու եռանդուն արտահայտությամբ: — Դրժախտություն, Պյոտր Իլյիչ մասին... նամակ, — հեկեկալով ասավ նա:

## II

Բայցի բոլոր մարդկանցից հեռու մնալու ընդհանուր զգացումից՝ նատաշան այդ ժամանակ ապրում էր իր ընտանիքի անդամներից հեռու մնալու առանձնահատուկ մի զգացում: Բոլոր յուրայինները՝ հայրը, մայրը, Սոնյան, այնքան մոտ էին իրեն, այնքան սովորական, այնպես առօրյա, որ նրանց բոլոր լուսերը, զգացումները թվում էին վիրավորական այն աշխարհի համար, որի մեջ ապրում էր ինքը վերջին ժամանակներս, և նա ոչ միայն անտարերեր, այլ թշնամաբար էր նայում նրանց: Նա լսեց Դունյաշայի խոսքերը Պյոտր Իլյիչ մասին, դժբախտության մասին, բայց շհասկացավ դրանք:

«Ինչ դժբախտություն ունեն դրանք, ինչ դժբախտություն կարող է լինել, նրանց ամեն ինչը է, սովորական ու հանգիստ», — ասավ նատաշան մտքում:

Երբ նա ներս մտավ դահլիճ, հայրը հապճեալ դուրս էր զալիս կոմսուհու սենյակից: Նրա դեմքը կծկված էր և արցոնքներից թրչված: Հայրը, ըստ երկութին, դուրս վազեց սենյակից, որ ազատություն տա իրեն խեղդող հեկեկանքներին: Նատաշային տեսնելով՝ նա ձեռները թափահարեց հուսահատորեն և սկսեց ցավագին-ջղածպական մի հեծկլտանք, որ աղավղեց նրա կլոր, փափլիկ դեմքը:

— Պե... Պետյան... Գնա, գնա, մայրդ... կանչում է... — Ենա, հեկեկալով ինչպես երեխա, թուլացած ոտներն արագ

փոխելով, մոտեցավ աթոռին և գրեթե ընկալվ նրա վրա, երեսը ձեռներով ծածկելով:

Հանկարծ կարծես էլեկտրական հոսանք անցավ նատաշայի ամբողջ էլեկտրամբ: Ինչոր սարսափելիորեն ցավագին մի բան զարկեց նրա սրտին: Նա սոսկալի ցավ զգաց, նրան թվաց, թե ինչոր մի բան է կտրվում իր մեջ և ինքը մեռնում է: Բայց ինչոր մի բան է կտրվում իր մեջ և ինքը մեռնում է: Բայց ցավից անմիջապես հետո նա վայրկենական ազատություն ցավից անմիջապես հետո նա վայրկենական ազատություն ցավից իր վրա ծանրացած կյանքի արգելքից: Տեսնելով հորը զգաց իր վրա ծանրացած կյանքի արգելքից: Կոպեր հիշեց իր վրա ծանրացած կյանքի արգելքից:

Նա վազեց գեպի հայրը, բայց հայրը, թուլությամբ ձեռը թափ տալով, ցուց տվեց մոր սենյակի դուռը: Եշխանադուարը Մարիան, գունատ, զողացող ներքին ծնոտով, դուրս եկավ գոնից և նատաշայի ձեռը բռնեց, նրան ինչոր բան ասելով: Նատաշան չէր տեսնում, չէր լսում նրան: Նա արագ բացերով մտավ դոնից ներս, կանգ առավ մի ակնթարթ, կարծես ինքն իր դեմ պայքարելով, և վազեց մոտեցավ մորը:

Կոմսուհին պառկած էր բազկաթոռում, տարեբեն-անհարմար ձգված, ու գլուխը զարկում էր պատին: Սոնյան ու աղջիկները բռնել էին նրա ձեռները:

— Նատաշայի՞ն, նատաշայի՞ն... — զոռում էր կոմսուհին: — Ճիշտ չէ, ճիշտ չէ... նա ստուժ է... Նատաշայի՞ն, — զոռում էր նա, շրջապատողներին հրելով իրենից: — Բոլորդ հեռացեք, ճիշտ չէ: Սպանել են... հա՛-հա՛-հա՛... ճիշտ չէ:

Նատաշան ծունկը գրեց բազկաթոռին, կոացավ մոր վրա, գրկեց նրան, անսպասելի մի ուժով բարձրացրեց, նրա երեսը շրջեց գեպ իրեն և իր դեմքով սեղմվեց նրան:

— Մայրիկ...սիրելին... Ես այստեղ եմ, բարեկամս: Մայրիկ... — շշնջում է նա մորը, մի վայրկան իսկ լուերվ:

Նա մորը չէր թողնում իր գրկից, մեղմ քնքանքով պայքարում էր նրա հետ, պահանջում էր բարձեր, չուր, արձակում էր մոր կոճակները կամ պատում զգեստը:

— Բարեկամս, սիրելիս... Մայրիկ, հոգիս, — անդադրում շշնջում էր նա, համբուրելով մոր գլուխը, ձեռները, երեսը և զգում, թե ինչպես անզուսպ, առատորեն, քիթն ու այտերը խտղտելով, թափվում են իր արցունքները:

Կոմսուհին սեղմեց աղջկա ձեռք, աշբերը փակեց և լոեց մի վայրկյան։ Հանկարծ նա անսովոր արագությամբ բարձրանաւով, անիմաստ հայացքով շուրջը նայեց և, նատաշային տեսնելով, սկսեց ամբողջ ուժով սեղմել նրա գլուխը։ Ապա աղջկա՝ ցավից կնճռած դեմքը դարձրեց դեպ իրեն և երկար նայում էր նրան։

— Նատաշա, դու ինձ սիրում ես, — ասավ նա հանդարտ, վստահող շշուկով։ — Նատաշա, դու ինձ չե՞ս խարի։ Դու ինձ կասե՞ս ամբողջ ճշմարտությունը։

Նատաշան նայեց մորը՝ աշբերն արցունքով լիքը, և նրա դեմքին կար միայն աղերսանք՝ ներելու և սիրելու մասին։

— Բարեկամս, մայրիկս, — կրինում էր նատաշան, լարելով իր սիրո բովանդակ ուժը, որպեսզի որևէ կերպ մորից իր վրա առնի նրան ճնշող վշտի ավելցուկը։

Եվ նորից, անզոր պայքարելով իրականության դեմ, մայրը հրաժարվում էր հավատալ, որ ինքը կարող է ապրել, երբ սպանված է կյանքով ծաղկող իր սիրելի տղան, իրականությունից փրկություն էր փնտրում խելազարության աշխարհում։

Նատաշան չէր հիշում ինչպես անցավ այդ օրը, գիշերը, հետեւյալ օրը և հետեւյալ գիշերը։ Նա չէր քնում և չէր հեռանում մորից։ Նատաշայի սերը, համառ, համբերատար, ոչ որպես բացատրություն, ոչ որպես միաթարանք, այլ որպես կոչ դեպի կյանքը՝ ամեն մի վայրկյան կարծես ամեն կողմից պարուղում էր կոմսուհուն։

Երրորդ գիշերը կոմսուհին հանդարտվեց մի քանի րոպե և նատաշան աշքերը փակեց, գլուխը հենելով բազկաթոռի թեփն։ Մահճակալը ճոնչաց, նատաշան աշքերը բաց արավ։ Կոմսուհին նստել էր մահճակալի վրա և կամացուկ խոսում էր։

— Որքան ուրախ եմ, որ դու եկար։ Դու հոգնած ես, թե՞լ ուզում ես։ — Նատաշան մոտեցավ մորը։ — Դու լավացել ես և այրացել, — շարունակում էր կոմսուհին աղջկա ձեռք բռնելով։

— Մայրիկ, այդ ի՞նչ ես ասում....

— Նատաշա, նա չկա, չկա այլև։

Եվ, աղջկան գրկելով, կոմսուհին առաջին անգամ սկսեց լաց լինել։

### III

Իշխանադուստր Մարիան իր մեկնումը հետաձգեց։ Սոնյան, կոմսը աշխատում էին փոխարինել նատաշային, բայց չէին կարողանում։ Նրանք տեսնում էին, որ միայն նա՝ է կարողանում մորը պահել խելազար հուսահատությունից։ Երեք շաբաթ նատաշան շարունակ առանց մորից հեռանալու ապրում էր մոր մոտ, քնում էր բազկաթոռում՝ նրա սենյակում, ուտեցնում էր նրան և, անդադար խոսում էր նրա հետ, խոսում էր, որովհետև միայն նրա քնքուշ, շոյող ձայնն էր հանգստացնում կոմսուհուն։

Մոր սրտի վերքը չէր կարող բռուժել։ Պետյայի մահը խըլց նրա կյանքի կեսը։ Մի ամիս հետո Պետյայի մահվան լուրն ստանալուց (երբ նա թարմ ու առույգ 50 տարեկան կին էր), նա իր սենյակից դուրս եկավ կիսամեռ և կյանքին շմասնակցող մի պառավ։ Բայց նույն այդ վերքը, որ կիսով շափ սպանեց կոմսուհուն, այդ նոր վերքը կյանքի կոչեց նատաշային։

Հոգու վերքը, որ առաջանում է հոգեսոր մարմնի պատովածքից, ճիշտ այնպես, ինչպես և ֆիզիկական վերքը, որքան էլ դա տարօրինակ է թվում, այն բանից հետո, երբ խոր վերքն առաջցել է և թվում է պոռնկները վրա եկած, հոգեսոր վերքը, ինչպես և ֆիզիկականը, ապաքինվում է միայն ներսից և կող կյանքի ուժով։

Իշխան Անդրեյի վերջին օրերը նատաշային մոտեցրին կապեցին իշխանադուստր Մարիայի հետ։ Նոր գժբախտությունն ավելի ևս մոտեցրեց նրանց։ Իշխանադուստր Մարիան հետաձգեց իր մեկնումը և վերցին երեք շաբաթը, ինչպես հիվանդ երեխայի, ինսամում էր նատաշային։ Վերջին շաբաթները, որ նատաշան անցրել էր մոր սենյակում, զլատեցին նրա ֆիքիկական ուժերը։

Մի անգամ իշխանադուստր Մարիան օրվա կեսին, նկատելով, որ նատաշան դողում է տենդային սարսունի մեջ, տարավ նրան իր մոտ և պառկեցրեց իր անկողնի վրա։ Նատաշան պառկեց, բայց երբ իշխանադուստր Մարիան, վարագույրներն իշեցնելով, ուզում էր դուրս գալ, նատաշան նրան կանչեց իր մոտ։

- Քունս չի տանում: Մարի, նստիր ինձ մոտ:
  - Դու հոգնած ես՝ աշխատիր քնւլ:
  - Ոչ, ոչ: Դու ինչի՞ ինձ դուրս բերիր: Մայրս կհարցնի  
ինձ:
  - Մայրդ հիմա ավելի լավ է: Նա քիչ առաջ այնպէս լավ  
էր խոսում,— ասավ իշխանադուստր Մարիան:  
Նատաշան պառկած էր անկողնում և սենյակի կիսախավարի  
մեջ դիտում էր իշխանադուստր Մարիայի գեմքը:
  - «Նմա՞ն է սա նրան,— մտածում էր Նատաշան: — Այս,  
նման է և նման չէ: Բայց սա առանձնահատուկ է, օտար, խորթ,  
բոլորովին նոր, անհայտ: Եվ սա սիրում է ինձ: Ի՞նչ կա սրա  
սրտում: Ամեն բարի բան: Բայց ինչպե՞ս է. ինչպե՞ս է նա մը-  
տածում: Ինչպե՞ս է նայում ինձ: Այս, նա սքանչելի է»:
  - Մաշա, — ասավ երկշոտ, նրա ձեռը ճգելով դեպ իրեն, —  
Մաշա, դու մի կարծիր, թե ես վասն եմ: Ո՞չ, Մաշա, սիրելիս:  
Ինչպես եմ սիրում ես քեզ: Ընդմիշտ, ընդմիշտ կլինենք  
բարեկամներ:

Եվ նատաշան, գրկելով, սկսեց համբուրել իշխանադուստը Մարիայի ձեռներն ու երեսը: Իշխանադուստը Մարիան ամաշում և ուրախանում էր նատաշայի զգացմունքների այդ արտահայտությունից:

Այդ օրվանից իշխանադուստը Մարիայի և նատաշայի միջն հաստատվեց այն րուսն ու քննուշ բարեկամությունը, որ լինում է միայն կահսնց միջն: Նրանք անդադար համբուրվում էին, քննուշ խոսքեր ասում միմյանց և ժամանակի մեծ մասն անցնում էին միասին: Եթե մեկը դուրս էր գալիս, մյուսն անհանգուստանում էր և աշխատում միանալ նրան: Նրանք երկուսը միասին ավելի մեծ համամտություն էին զգում միմյանց մոտ, քան չոկ-չոկ, յուրաքանչյուրն ինքնին: Նրանց միջև գրյացել էր ավելի ուժեղ մի զգացմունք, քան մտերմությունը. զա մի բացառիկ զգացմունք էր, թե կյանքը հնարավոր է՝ միայն միմյանց ներկայությամբ:

Երբեմն նրանք լուսմ էին ամբողջ ժամերով. Երբեմն, արդէւ անկողնում պառկած, նրանք սկսում էին խոսել ու խոսում էին մինչև առավոտ: Նրանք խոսում էին մեծ մասամբ հեռու անգյալի մասին: Իշխանադուստր Մարիան պատմում էր իր շաբաթը:

մանկության մասին, իր մոր մասին, հոր մասին, իր երազանք-ների մասին. և Նատաշան, որ առաջ հանգիստ անըմբոնողությամբ երեսը ցրում էր անձնագոհության, հեզության այդ կյանքից, քրիստոնեական ինքնազոհության պոեզիայից, ալժմ, իրեն սիրով կապված գգալով իշխանագուստը Մարիայի հետ, սիրեց իշխանագուստը Մարիայի թե անցյալը, թե հա-կացավ կյանքի՝ առաջ իրեն անհասկանալի կողմը: Նա մտա-գիր չէր հնազանդությունն ու անձնագոհությունը գործադրել իր կյանքում, որովհետև սովոր էր փնտրել այլ ուրախություն-ներ, բայց հասկացավ և ուրիշի մեջ սիրեց առաջ իրեն անհաս-կանալի այդ առաքինությունը: Իշխանագուստը Մարիայի համար, որ լսում էր Նատաշայի մանկության ու առաջին ջա-հելության պատմությունները, նույնաես բացվում էր կյանքի՝ առաջ անհասկանալի կողմը, կյանքի հավատը, կյանքի վայելք-ների հավատը:

Նրանք ճիշտ նույնպես էլ երբեք չէին խոսում նրա մասին այն  
նպատակով, որպեսզի խոսքերով շխանգարեն, ինչպես իրենց  
էր թվում, զգացմունքի այն բարձրությունը, որ կար իրենց  
մեջ, իսկ այդ լուրջունը նրա մասին ասում էր այն, որ նրանք  
կամաց-կամաց, դրան չհավատալով, մոռանում էին նրան:

Նատաշան նիհարեց, գունատվեց և փիզիկապես այնպէս թուլացավ, որ բոլորը շարունակ խռոսում էին նրա առողջության մասին, և այդ նրան հածելի էր: Բայց երբեմն անսպասելիորեն նրան տիրում էր ոչ միայն մահվան երկյուղը, այլ հիվանդանալու, թուլանալու, տկարանալու, գեղեցկությունը կորցնելու երկյուղը, և երբեմն ակամա ուշադիր դիտում էր նա իր մերկ ձեռը, զարմանալով նիհարության վրա կամ առավտները հայելու մեջ նայում էր իր երկարած, խղճալի, ինչպես իրեն էր թվում, գեմքին: Նրան թվում էր, թե այդ այդպես պետք է լինի, և միաժամանակ սարսափում էր ու տիրում:

Սի անգամ նա հապճեպ վեր բարձրացավ և ծանր հնաց: Եկ անմիջապես ակամա մի գործ հնարեց իր համար ներքեւում և այստեղից նորից վազեց վեր, ուժերը փորձելով ու իրեն հետեւ վելով:

Սի ուրիշ անգամ նա կանչեց Դուռյաշային, և նրա ձայնը դողդողաց: Նա նորից կանչեց սպասուհուն, շնայած այն բանին,

որ լսեց նրա քայլերը, — կանչեց այն կրծքային ձայնով, որով երգում էր, ու ականջ դրեց դրան:

Նա այդ զփտեր, չէր էլ հավատա, բայց նրա սիրտը ծածկող, նրան անթափանցելի թվացող տիղմի շերտի տակից արդեն դուրս էին գալիս կանաչն նուրոք, քնքուշ ասեղներ, որոնք պետք է արմատավորվեին և իրենց կենսաթրթիո ընձյուղներով այնպես սրողեին նրան ճնշող վիշտը, որը շուտով չէր տեսնվելու և չէր նկատվելու: Վերքը բուժվում էր ներսից:

Հունվարի վերջին իշխանադուստր Մարիան մեկնեց Մոսկվա, և կոմսը պնդեց, որ նատաշան գնա հետը, նրա համար, որ խորհրդակցի բժիշկների հետ:

#### IV

Վյազմայի մոտ տեղի ունեցած ընդհարումից հետո (Վյազմայի մոտ, ուր Կուտուզովը շկարողացավ զսպել իր զորքերի ցանկությունը՝ կործանել, կտրել և այլն) փախչող ֆրանսացիների և նրանց հետեւից վազող ոռւսների հետագա շարժումը մինչև Կրասնոյե՝ կատարվեց առանց կովի: Փախուստն այնքան արագընթաց էր, որ ֆրանսացիների հետեւից վազող ոռւսական բանակը չէր կարողանում հասնել նրանց հետեւից, որ հեծելազորի և հրետանու ձիերը հոգնած կանգ էին առնում և որ լուրերը ֆրանսացիների շարժման մասին միշտ էլ սխալ էին:

Իուս զորքի մարդիկ այնպես էին տանչվել այդ անընդհատ շարժումից, 24 ժամվա մեջ 40 վերստ, որ ավելի արագ չէին կարող շարժվել:

Իուս բանակի ուժասպառության աստիճանը համարական համար պետք է միայն պարզ ըմբռնել նշանակությունն այն փաստի, որ, Տարուտինոյից շարժվելու ամբողջ ժամանակաշնթացքում կորցնելով վիրավոր ու սպանված հինգ հազարից ու ավելի մարդ, շտալով հարյուրավոր գերիներ, ուսւ բանակը, որ Տարուտինոյից դուրս եկավ թվով հարյուր հազար, Կրասնոյե հասավ հիսուն հազար մարդով:

Իուսների արագընթաց շարժումը ֆրանսացիների հետեւից նույնպիսի քայքայիչ կերպով էր ներգործում ուսւ բանակի

վրա, ինչպես և ֆրանսացիների փախուստը: Տարբերությունն այն էր միայն, որ ուսւ բանակը շարժվում էր ինքնակամ, առանց կործանվելու սպաննալիքի, որը կախված էր ֆրանսապանց կանակի գլխին, և այն, որ ֆրանսացիների հետ մնացած կան բանակի մնում էին թշնամու ձեռին, իսկ ետ մնացած ուսւները մնում էին իրենց տանը: Նապոլեոնի բանակի նվազելու գիւղավոր պատճառը շարժման արագությունն էր, և դրան անկասկածելի ապացուց է ծառայում ուսւ զորքերի համապատասխան նվազումը:

Կուտուզովի ամբողջ գործունեությունը, ինչպես Տարուտինոյի մոտ և Վյազմայի մոտ, ուղղված էր միայն այն բանին, որպեսզի — որքան այդ կախված էր իր իշխանությունից — լիանգնեցնել ֆրանսացիների համար այդ կործանարար շարժումը (ինչպես ցանկանում էին Պետերբուրգում և բանակում ուսւ գեներալները), այլ աշակեցել դրան և թեթևացնել ուսւ զորքերի շարժումը:

Բայց, դրանից բացի, երբ զորքերի մեջ նկատվեց հոգնածություն և մեծ նվազում, որն առաջանում էր արագ շարժումից, կուտուզովը ուսւ զորքի շարժման զանդագության և սպասումի ուրիշ պատճառ էլ նկատեց: Խուս զորքերի նպատակն էր՝ հետապնդել ֆրանսացիներին: Ֆրանսացիների ճանապարհը հայտնի չէր, ուստի և որքան մեր զորքերը կրնկակոխ էին հետեւում ֆրանսացիներին, նրանք այնքան ավելի տարածություն էին անցնում: Միայն որոշ տարածության վրա հետեւելով՝ կարելի էր ամենակարճ ճանապարհով կտրել այն կեռմանները, որ անում էին ֆրանսացիները: Բոլոր հմուտ մանկրները, որ առաջարկում էին գեներալները, արտահայտվում էին զորքերի տեղաշարժումների մեջ, անցումներն ավելացնելու մեջ, իսկ միակ բանական նպատակն էր, որպեսզի պակասեցնենք այդ անցումները: Ու ամբողջ կամպանիայի ընթացքում՝ Մոսկվայից մինչև Վիլնո՝ զեպ այդ նպատակին էր ուղղված կուտուզովի գործունեությունը. ու թե դիպվածով, ու ժամանակավոր, այլ այնպիս հետեւղականորեն, որ նա ու մի անգամ շղավաճանեց այդ նպատակին:

Կուտուզովը գիտեր ո՞ւ թե խելքով կամ գիտությամբ, այլ իր ամբողջ ուսւական էությամբ, գիտեր և զգում էր այն, ինչ

զգում էր յուրաքանչյուր ոռւս զինվոր, որ ֆրանսացիք հաղթված են, որ թշնամիները փախչում են, և պետք է նրանց արտաքսել. բայց դրա հետ միաժամանակ նա, զինվորների հետ միասին, զգում էր այդ իր արագությամբ և ըստ տարվա եղանակի շաված արշավանքի բովանդակ ծանրությունը:

Բայց գեներալներին, մանավանդ ոչ ոռւս գեներալներին, որ ցանկանում էին աշքի ընկնել, զարմացնել ում-որ, զիտեսինցի համար գերի վերցնել ինչ-որ հերցոգի կամ թագավորի, — այդ գեներալներին թվում էր այժմ, երբ ամեն մի կոիկ և զարդելի է, և անհմաստ, նրանց թվում էր, թե հենց հիմա է, որ եկել է ժամանակը ճակատամարտ տալու և ում-որ հաղթելու: Կուտուզովը միայն ուսերն էր թոթվում, երբ նրան, մեկը մյուսի հետևից, ներկայացնում էին մաներների ծրագիրներ, մաներներ առանց լավ ոտնամանի, առանց կիսամուշտակի կիսաքաղց զինվորներով, որոնք մի ամավա մեջ, առանց կրովիների հարվեցին կիսով շափ և որոնց հետ շարունակվող փախուստի ամենալավ պայմաններում, մինչև սահմանը պիտի անցնեին ավելի տարածություն, քան անցել էին:

Աշքի ընկնելու և մաներներ կատարելու, խորտակելու և կտրելու այդ ձգտումն արտահայտվում էր մանավանդ այն ժամանակ, երբ ոռւս զորքերը հանդիպում էին ֆրանսական զորքերին:

Այդպես պատահեց Կրասնոյեի մոտ, ուր կարծում էին կրպտնեն ֆրանսական երեք զորասյուներից մեկին և հանդիպեցին իրեն նապուտնին՝<sup>1</sup> 16 հազարանոց զորքով: Զնայած բոլոր միջոցներին, որ Կուտուզովը գործադրեց նրա համար, որ խուսափի այդ կործանարար ընդհարումից և որպեսզի պահի-պահի իր զորքերը, երեք օր Կրասնոյեի մոտ շարունակվեց ֆրանսացիների ծեծված խառնախմբերի ջարդը՝ ոռւս բանակի ուժասպառ մարդկանց կողմից:

Տուր գրեց դիսպոզիցիա. die erste Colonne marschiert<sup>1</sup> և այն: Եվ, ինչպես միշտ, ամեն ինչ եղավ ոչ ըստ դիսպոզիցիայի: Վիրտեմբերգի իշխան եվգենին սարից գնդակահարում էր մոտից փախչող ֆրանսական խմբերը և օգնություն էր պահան-

չում, որը չեկավ: Ֆրանսացիք, գիշերները անցնում էին ոռւների կողքով, ցրվում, թափնվում էին անտառներում և, ո՛վ ինչպիս կարող էր, անցնում էր առաջ:

Միլորադովիչը, որ ասում էր, թե ոչինչ իմանալ չի ուզում յոկատի տնտեսական գործերից, որին երբեք չեր կարելի գրտնել, երբ հարկավոր էր. «chevalier sans peur et sans reproche», ինչպես նա ինքն էր անվանում իրեն, և սիրահար ֆրանսացիների հետ խոսելու, բանագնացներ ուզարկեց նրանց մոտ, պահանջելով անձնատուր լինել, ժամանակ էր կորցնում և անում էր ոչ այն, ինչ իրեն հրամայել էին:

— Տղերք, այս զորասյունը նվիրում եմ ձեզ, — ասավ նա, ձիով մոտենալով զորքերին և հեծելազորին ցույց տալով ֆրանսացիների վրա:

Եվ հեծելակները հազիկ շարժվող ձիերի վրա, խթանակներով ու թրերով նրանց քշելով, վագելով, ուժեղ լարումներից հետո, մոտեցան նվիրաբերված զորասյունին, այսինքն՝ սառած, փայտացած և քաղցած ֆրանսացիների բազմության. և նվիրաբերված զորասյունը դենքը նետեց ու անձնատուր եղավ, ինչ վաշին արդեն ցանկանում էր նա:

Կրասնոյեի մոտ վերցնելով 26 հազար գերի, հարյուրավոր թնդանոթներ, ինչ-որ ձեռնափայտ, որը կոչում էին մարշալի գավազան, և վիճում էին, թե ո՛վ աշքի ընկավ այնտեղ, և գոյն էին դրանով. բայց շատ ափսոսացին, որ շգերեցին նապոլեոնին կամ գոնե հերոսի, մարշալի, և այդ բանի համար հանդիմանում էին միջանց և մանավանդ Կուտուզովին:

Այդ մարդիկ, տարված իրենց կրքերով, կույր կատարողներն էին միայն անհրաժեշտության ամենասխուր օրենքի. բայց նրանք իրենց համարում էին հերոսներ և երեակայում էին, թե այն, ինչ իրենք արել են, ամենաարժանավոր և պահիվ զործն է: Նրանք մեղադրում էին Կուտուզովին և ասում էին, թե նա հենց կովի սկզբից խանգարեց իրենց՝ հաղթել նապոլեոնին. որ նա մտածում է միայն իր կրքերը բավարարելու մասին և չէր ուզում դուրս գալ Քաթանեղենի Գործարաններից, որովհետեւ այնտեղ հանգիստ էր նրա համար. որ նա Կրասնոյեի մոտ շարժումը

<sup>1</sup> Առաջին զորասյունը կերթա ալսին տեղը...

կանգնեցրեց այն բանի համար, որ, Նապոլեոնի ներկայության մասին իմանալով, իրեն կորցրեց քորորովին, որ կարելի է ենթադրել, թե նա Նապոլեոնի հետ զավադրության մեջ է, որ կաշառված է նրա կողմից և այլն, և այլն:

Բավական չէ, որ ժամանակակիցները, կրքերով տարված, խոսում էին այդպիս, — հետնորդները և պատմությունը Նապոլեոնին ընդունեցին grand<sup>1</sup>, իսկ Կուտուզովին օտարերկրացիները՝ խորամանկ, անբարոյական, թույլ պայատական ծերունի, ոռւսները՝ մի տեսակ անորոշ, ինչ-որ տիկնիկ, որ օգտակար էր միայն իր ոռւս անունով....

## V

12 և 13 թվերին Կուտուզովին ուղղակի մեղադրում էին սիամների համար: Թագավորը դժգո՞ն էր նրանից: Եվ այն պատմության մեջ, որ գրվեց վերջերս բարձրագույն հրամանով, առված է, թե Կուտուզովը խորամանկ պայատական ստախոս էր, որ վախենում էր Նապոլեոնի անունից և Կրասնոյի ու Բերեզինայի մոտ թույլ տված իր սիամներով ոռւս զորքը զրկեց՝ ֆրանսիացիների վրա լիակատար հաղթանակ տանելու փառքից<sup>2</sup>:

Այսպես է ճակատագիրը ոչ մեծ մարդկանց, ոչ grand-ի ու ուրեմնում ոռւս միտքը, այլ ճակատագիրն այն հազվագյուտ, միշտ միայնակ մարդկանց, որոնք, ըմբռնելով նախախնամության կամքը, իրենց անձնական կամքը ենթարկում են նրան: Ամբոխի ատելությունն ու արհամարհանքը պատճում են այդ մարդկանց՝ բարձրագույն օրենքները կանխատեսելու համար:

Ոռւս պատմագիրների համար (տարօրինակ և սարսափելի է ասել) Նապոլեոնը՝ պատմության այդ շնչինագույն գործիքը,

<sup>1</sup> Մեծ:

<sup>2</sup> Բոգդանովիչ՝ 1812 թ. պատմությունը Կուտուզովի բնութագիրը և դատողություններ Կրասնոյի ճակատամարտերի արդյունքների անդամարտը լինելու մասին:

<sup>3</sup> Մեջ մարդ:

երբեք և ոչ մի տեղ, անգամ աքսորանքում, ցույց շտալով մարդկային արժանապատվությունը, — Նապոլեոնը հիացումի գմայլանքի առարկա է, իսկ Կուտուզովը, այն մարդը, որը 1812 թվին՝ իր գործունեության սկզբից մինչև վերջը, Բորոդինոյից մինչև Վինո, ոչ մի անգամ ոչ մի գործությամբ, ոչ մի խոսքով շղավաճանեց իրեն, հանդիսանում է պատմության մեջ անսովոր օրինակ անձնազոհության և զեպի ապագա նշանակությունը ներկայումս գիտակցելու անսովոր օրինակ, — Կուտուզովը նրանց ներկայանում է ինչ-որ անորոշ ու ողորմելի մի բան և, խոսելով Կուտուզովի ու 12 թվի մասին, նրանք միշտ կարծես մի փոքր ամաշում են:

Իսկ մինչդեռ դժվար է պատկերացնել պատմական մի գեմք, որի գործունեությունն այնպես անփոփոխ կերպով մշտապես ուղղված լինի միևնույն նպատակին: Դժվար է երեակայել մի նպատակ, ավելի արժանավոր և ամբողջ ժողովրդի կամքին ավելի զուգադիպող: Էլ ավելի դժվար է գտնել մի ուրիշ օրինակ պատմության մեջ, ուր նպատակը, որ առաջադրել է իրեն պատմական անձնավորությունը, կատարված լիներ միանգամայն անպես, ինչպես այն նպատակը, որին հասնելուն էր ուղղված Կուտուզովի ողջ գործունեությունը 12 թվին:

Կուտուզովը երբեք չէր խոսում 40 դարերի մասին, որ նայում էն բուրգերից, զոհաբերության մասին, որ ինքն անում է հայրենիքին, այն մասին, թե ի՞նչ է մտադիր կատարել կամ կատարել է. նա ընդհանրապես ոչինչ չէր խոսում իր մասին, ոչ մի դեր չէր խաղում, միշտ թիվում էր ամենապարզ և սովորական մարդ և ասում էր ամենապարզ ու սովորական բաները: Նա նամակներ էր գրում իր աղջիկներին և ու-ու Տաէլ-ին, կարգում էր վեպեր, սիրում էր գեղեցիկ կանանց հասարակությունը, կատակներ էր անում գեներալների, սպաների և զինվորների հետ և երբեք չէր հակածառում այն մարդկանց, որոնք ուզում էին ինչ-որ բան ապացուցել: Երբ կոմս Ռաստոպինը ծառակակ կամուրջի վրա սրարշավ մատեցավ Կուտուզովին անձնական կլտամբանքներով, թե ո՞վ է մեղավոր Սոսկվայի կործանման մեջ, և ասավ. «Հապա ինչպե՞ս զուգ խոստացաք շթողնել Մոսկվան, առանց ճակատամարտ տալու»: Կուտուզովը պատասխանեց. «Ես Մոսկվան չեմ էլ թողնի առանց ճակատամար-

տիս, շնայած այն բանին, որ Մոսկվան արդեն թողնված էր Երր թագավորի կողմից նրա մոտ եկած Արակշեն ասավ, թե Երմոլովին պեսք է նշանակել Քրետանու պետ, Կուտուզովը պատասխանեց. «Այդ ես ինքս էր ասում քիչ առաջ, թեպես մի բոպե առաջ բոլորովին ուրիշ բան էր ասել: Նրա ի՞նչ բանն էր, նրա, որ այն ժամանակ իրեն շրջապատող անհասկացող բազմության մեջ մենակ հասկանում էր անցքի բովանդակ հսկան իմաստը, նրա ի՞նչ բանն էր, թե կոմս Ռաստոպինը իրեն կամ նրան կվերագրեր մայրաքաղաքի աղետը: Նրան էլ ավելի քիչ կարող էր գրադեցնել այն, թե ո՞ւմ կնշանակեն հրետանու պետ:

Ոչ միայն այդ դեպքերում, այլ անընդհատ այդ ժեր մարդը, որ կյանքի փորձով ձեռք էր բերել այն համոզումը, թե մտքերն ու բառերը, որ ծառայում են նրանց իրրին արտահայտություն, մարդկանց շարժիչը չեն, ասում էր միանդամայն անիմաստ բառեր՝ առաջին բառերը, որ ծագում էին գլխում:

Բայց այդ իսկ մարդը, որ այնպես կարևորություն շէր տալիս իր խոսքերին, իր ամբողջ գործունեության ընթացքում ո՞չ մի անգամ շասավ մի բառ, որը համաձայն լիներ այն միակ նպատակին, որին հասնել էր ուզում ամբողջ պատերազմի ժամանակ: Ակներև է, ակամա, ծանր համոզումով, որ իրեն չեն հասկանա, նա շատ անգամ ամենատարեր հանգամանքներում արտահայտել էր իր միտքը: Ակսած Բորոդինոյի ճակատամարտից, որից և սկսվեց նրա անհամաձայնությունը շրջապատողների հետ, միայն նա՝ էր ասում թե Բորոդինոյի նակատամարտը հաղթանակ է, և այդ կրկնում էր թե՝ բերանացի, թե՝ զեկույցներում, մինչև իր մահը: Մենակ նա՝ ասավ, թե Մոսկվայի կորուստը Ռուսաստանի կորուստը չէ: Նա Լորիստոնի հաշտության առաջարկին պատասխանեց, թե նաշտուրյուն չի կարող լինել, որովհետև այդպես է ժողովրդի կամքը. Քրանսացիների նահանջի ժամանակ միայն նա ասավ, թե մեր բոլոր մաներները հարկավոր չեն, որ ամեն ինչ ինքնին կարվի ավելի լավ, քան մենք ցանկանում ենք, որ բշնամուն պեսք է ոսկե կամուշ տալ, որ հարկավոր չեն ո՞չ Տարուտինոյի, ո՞չ Վյազմայի, ո՞չ Կրասնոյի նակա-

տամարտերը, որ մի որևէ բանով պեսք է հասնել սահմանը, որ տասը ֆրանսացու համար ինքը մի ուսւ չի տա:

Եվ մինակ նա, այդ պալատական մարդը, ինչպես նկարագրում են նրան, այդ մարդը, որ սուս է ասում Արակշենին՝ թագավորին գոհացնելու նպատակով, — մենակ նա՝, այդ պաթագավորին մարդը, Վիլնոյում, դրանով արժանանալով թագալու շնորհագրկումին, ասում է, թե հետագա պատերազմը արտասահմանում վեասակար է և անօգուտ:

Բայց միայն բառերը չէին ապացուցի, թե այն ժամանակ նա հասկանում էր անցքի նշանակությունը: Նրա գործողությունները, բոլորն առանց չնշին շեղումի, բոլորն ուղղված էին մինանույն եռակի նպատակին. 1) լարել իր բոլոր ուժերը էին մինանույն եռակի նպատակին. 2) հաղթել նրանց ֆրանսացիների հետ ընդհարվելու համար, 2) հաղթել նրանց 3) արտաքսել Ռուսաստանից, թեթեացնելով, որքան հնարավոր է, ժողովրդի և զորքի աղեաը:

Նա, այն գանդաղկոտ Կուտուզովը, որի նշանաբանն է համբերություն և ժամանակ, որ թշնամի է վճռական գործողությունների, նա տախս է Բորոդինոյի ճակատամարտը, այդ կովի պատրաստություններն օժտելով անօրինակ հանդիսավորությամբ: Նա, այն Կուտուզովը, որ Ալեքսեյիցի ճակատամարտում՝ դրա սկսելուց առաջ ասում է, թե այդ կոիվը տանուլ են տալու, Բորոդինոյում, չնայած գեներալի հավատացնելուն, թե ճակատամարտը տանուլ է տրված, չնայած պատմության մեջ շտեսնված օրինակին, որ ճակատամարտը շահելուց հետո մեկ շտեսնված նահանջի, մենակ նա, բոլորին հակառակ, մինչև զորքի պիտի նահանջի, մենակ նա անդում է, թե Բորոդինոյի ճակատամարտը՝ հաղթություն է: Մենակ նա նահանջի ամբողջ ժամանակամիջոցին պնդում է, որ ճակատամարտեր շտան, որոնք հիմա անօգուտ են, չսկսել նոր պատերազմ և շանցնել Ռուսաստանի սահմանները:

Այժմ անցքի նշանակությունը հասկանալը, եթե միայն մասսաների գործունեությանը չկցնենք նպատակներ, որ կային տասնյակ մարդկանց գլուխներում, հեշտ է, որովհետև անցքի իր հետևանքներով մեր առջեն է:

Բայց ինչպէս այն ժամանակ այդ ժեր մարդը, մենակ՝ բոլորի կարծիքին հակառակ, կարող էր այդպես ճիշտ գուշակիլ

անցքի ժողովրդական իմաստի նշանակությունը, որ իր ամբողջ գործունեության ընթացքում ո՛չ մի անգամ չդավաճանեց նրան:

Կատարվող երևույթների իմաստը թափանցելու այս անսպառ ուժի աղբյուրը ժողովրդական ա՛յն զգացմունքն էր, որ իր բովանդակ մաքրությամբ ու զորությամբ կրում էր նա իր մեջ:

Նրա մեջ այդ զգացումը ճանաչելը միայն ստիպեց ժողովրդին այդպիսի տարօրինակ ուղիներով, աշքից ընկած ծերուուն, թագավորի կամքի հակառակ, ընտրել ժողովրդական պատերազմի ներկայացուցիչ:

Եվ միայն այդ զգացումը դրեց նրան մարդկային այն բարձրության վրա, որտեղից նա՝ զիսավոր հրամանատարը, իր ամբողջ ուժերն ուղղում էր ոչ թե այն բանին, որպեսզի սպանի և կոտորի մարդկանց, այլ այն բանին, որպեսզի փրկի և խղճանքանց:

Պարզ, համեստ և այդ պատճառով ճշմարտապես վեհ այդ կերպարանքը չէր կարող սեղավորվել մարդկանց երեսութառար կառավարող եվրոպական հերոսի այն կեղծ ձեզ մեջ, որ հնարել է պատմությունը:

Հակեյի համար չի կարող լինել մեծ մարդ, որովհետև լակեյն իր ըմբռնումն ունի մեծության մասին:

## VI

Նոյեմբերի 5-ը առաջին օրն էր այսպես անվանված կրասնոյեի ճակատամարտի: Երեկոյան դեմ, երբ արդեն գեներալների շատ վեճերից ու սխալներից հետո, գեներալներ, որ այսուեղ չէին գնացել, ուր հարկավոր էր, աղյուտանտներին հակահրամաններով ուղարկելուց հետո, երբ արդեն պարզված, որ թշնամին ամենուրեք փախչում է և ճակատամարտը չի կարող լինել և չի լինի, Կուտուզովը դուրս եկավ Կրասնոյեից և մեկնեց Դորոյե, ուր փոխադրվել էր այդ օրը զիսավոր կայանը:

Օրը պարզ էր, սառնամանիքային: Կուտուզովն իր ահագին շքախմբով, իրենից գծուն, իր հետեւից փսխացող զեներալ-

ներով, իր գեր, Ճերմակ ձիուն նստած գնում էր Գոբրոյե: Այս ճանապարհին, խարուցների մոտ տաքանալով, խմբել բողջ ճանապարհին, խարուցների մոտ տաքանալով, խմբել էին այսօր գերի վերցված ֆրանսացիների խմբերը (այդ օրը նրանցից վերցվել էր 7 հազար գերի): Դորոյեից ոչ հեռու գերիների պատառոտուն, պատահած բաներով կապված-փաթաթված հսկայական բազմությունը ճանապարհին, ֆրանսական զամանակած թնդանոթների շարքի մոտ կանգնած աղմբակերն արձակած թնդանոթների շարքի մոտ կանգնած աղմբակում էր խոսոցով: Գլխավոր հրամանատարի մոտեցումով խոսոցը լուց, և բոլոր աշբերը դարձան Կուտուզովին, որն իր սպիտակ կարմիր բոլորքով գլխարկով և բամբակած շինհելով, որ սապատի պես էր նստում նրա կորացած ուսերին, դանդաղ շարժվում էր ճանապարհով: Գեներալներից մեկը զեկուցում էր Կուտուզովին, թե ո՞րտեղ են վերցված հրանոթներն ու գերիները:

Կուտուզովը, թվում էր, ինչ-որ բանով մսահոգված և գեներալի խոսքերը չէր լսում: Նա զգոհութամբ կկոցեց աշբերը և ուղադիր ու սեպուն նայեց այն գերիներին, որոնք առանձնապես խղճալի տեսք ունեին: Ֆրանսական զինվորների մեծ մասը ալանդակված էին սպառած թերով ու այտերով: բոլորի աշբերն էլ գրեթե կարմրած էին, ուռած և թարախակալած:

Ֆրանսացիների մի խումբ կանգնած էր ճանապարհին մոտիկ, և երկու զինվոր — զրանցից մեկի դեմքը ծածկված էր վերքերով — ծեղոքերով պոկում էին հում մսի կտոր: Ինչ-որ սարսափելի ու կենդանական մի բան կար այն թուուցիկ հայց-քում, որ նետում էին նրանք անցորդների վրա, և այն շարքում, որ նետում էին նրանք անցորդների մեջ, որով դեմքը վերքոտ զինվոր նայեց Կուտուզովին, անմիջապես էլ շուտ եկավ և շարունակեց իր զորքը:

Կուտուզովը երկար, ուղադիր նայեց այդ երկու զինվորին, դեմքն ավելի ևս կնճուիլով, նա աշբերը կուշ ածավ և զլուխն օրորեց մտախոհ: Մի այլ տեղ նա նկատեց մսի ոուս զինվոր, որը ծիծաղելով և ֆրանսացու ուսին խփելով, ինչ-որ փաղաքանք քով բան էր ասում նրան: Կուտուզովը նորից զլուխն օրորեց նույն արտահայտությամբ:

— Դու ի՞նչ ես ասում, — հարցրեց նա զեներալին, որը շարունակում էր զեկուցել և զիսավոր հրամանատարի ուղարունակում

դրությունը հրավիրել ֆրանսացիներից խլված դրոշների վրա, ուրանիք ցցված էին Պրեոբրաժենսկի գնդի դասավորության ճակատի առաջ:

— Ա, գրոշները, — ասավ Կուտուզովը, երևում էր, դժվարությամբ կարվելով իր մտքերն զբաղեցնող առարկայից:

Նա ցրված շուրջը նայեց: Հազարավոր աշբեր ամեն կողմից, նրա խոսքին սպասելով, նայում էին նրան:

Պրեոբրաժենսկի գնդի առջև նա կանգ առավ, ծանրորեն հոգ քաշեց ու աշբերը փակեց: Եթախմբից մեկը ձեռք թափ տվից, որ գրոշները բռնող զինվորները մոտենան և գրոշներն իրենց ձողերով դնեն զինավոր հրամանատարի շուրջը: Կուտուզովը լոեց մի քանի վայրկյան և, երևում էր, ակամա, ենթարկվելով իր դիրքի անհրաժեշտությանը, գլուխը բարձրացրեց և սկսեց խոսել: Սպաների բազմությունը շրջապատեց նրան: Նա ուշադիր հայացքը սպաների այդ խմբի վրա, ճանաշելով նրանցից մի քանիսին:

— Բոլորից շնորհակալ եմ, — ասավ նա, դիմելով զինվորներին և նորից սպաներին: Նրա շուրջը տիրած լուրջան մեջ որոշակիորեն լսվում էին նրա՝ դանդաղորեն արտասանվող բառերը: — Շնորհակալ եմ բոլորից դժվարին և հավատարիմ ծառայության համար: Հաղթությունը կատարյալ է, և մուսաստանը չի մոռանա ձեզ: Ձեզ փա՛ռք հավիտյան:

Նա լոեց, շուրջը նայելով:

— Կուտուզու կուտառու դրա գլուխը, — ասավ նա զինվորին, որ բռնել էր ֆրանսական արծվադրոշը և պատահաբար իջեցրել այն պրեոբրաժենցիների գրոշի առջև: — Ավելի ցած, ավելի, այդպես: Ուսա՞, տղերը, — կզակի արագ շարժումով դիմելով զինվորներին, ասավ նա:

— Ուսա՞-ուսա՞-ուսա՞: — գոռացին հազարավոր ձայներ:

Մինչ զինվորները գոռում էին՝ Կուտուզովը, թամբի վրա կուտահած, գլուխն իշեցրեց, և նրա աշբը շողաց հեզ, կարծես հեգնական փայլով:

— Այս ինչ, եղբայրներ, — ասավ նա, երբ ձայները լոեցին...

Եվ հանելարձ նրա ձայնն ու դեմքի արտահայտությունը փոխվեցին. խոսել դադարեց զինավոր հրամանատարը, ու

սկսեց հասարակ, ձեր մարդը, ակներե, ցանկանալով ուժմ ինչ-որ շատ կարևոր մի բան հաղորդել ընկերներին:

Սպաների բազմության մեջ և զինվորների շարքերում շարժում կատարվեց, որպեսզի ավելի լավ լսեն այն, ինչ նա ասելու է այժմ:

— Այս ինչ, եղբայրներ: Գիտեմ, դժվար է ձեզ համար, բայց ի՞նչ արած: Համբերեցեք. քիչ մնաց: Հյուրերին ճանապարհ գնենք, այն ժամանակ կհանգստանանք: Զեր ծառայության համար թագավորը ձեզ չի մոռանա: Դժվար է ձեզ համար, բայց դուք էին ձեր տանն եք. իսկ նրանք, — տեսնում եք, ինչ օրին են հասել նրանք, — ասավ նա, գերիներին ցույց տալով: — Վերջին մուրացկաններից ավելի վատ են: Քանի դեռ նրանք ուժեղ էին՝ մենք նրանց չէինք խղճում-խնայում, իսկ հիմա նրանց էլ խղճալ կարելի է: Նրանք նույնպես մարդ են, Այդպիս է, տղերք:

Նա նայեց շուրջը և համառ, հարգալիր տարակուսած, իր վրա սեենած հայացքներում կարդաց համակրանք իր խոսքերին. նրա դեմքը հետզհետե ավելի ու ավելի պայծառանում էր ծերունական հեզ ժափտից, որ աստղածն կնճոռուվում էր նրա շուրջերի ու աշբերի անկյուններում: Նա լոեց և կարծես տարակուսանքով գլուխն իշեցրեց:

— Այս էլ ասենք, ո՞վ էր նրանց կանչել մեզ մոտ: Տեղն է, դ... մ... — Հանկարծ ասավ նա, գլուխը բարձրացնելով:

Եվ, մտրակը թափահարելով, նա արշավակի, առաջին անգամը ամբողջ պատերազմի ընթացքում, հեռացավ ուրախ քրքացող և ուռա գոռացող, շարքերը քանդած զինվորներից:

Կուտուզովի ասած խոսքերը հազիվ թե հասկանալի լինեին զորքերին: Ոչ ոք չէր կարող պատմել ֆելդմարշալի սկրբում հանդիսավոր և վերջը բարեհոգի-ծերունական ճառի բռվանդակությունը. բայց այդ ճառի սրտագին իմաստը ոչ միայն հասկացվեց, բայց այն իսկ, այն իսկ վեհ հաղթանակի զգացումը՝ միացած թշնամու նկատմամբ եղած խղճահարություն և սեփական արդարացիության գիտակցության հիտ, հաղթանակի, որ արտահայտվեց այդ, հենց ծերունական այդ բարեհոգի հայտյանքով, — այդ իսկ զգացումը կար յուրաքանչյուր զինվորի սրտում և արտահայտվեց ուրախ, երկար լըռող գոռացով:

Երբ դրանից հետո գեներալներից մեկի այն հարցին, թե զըլիսավոր հրամանատարը չի՞ հրամայում արդյոք, որ կառքը զա, կուտուղովը, պատասխանելով, անսպասելի հեկեկաց, ըստ երևոյթին, սաստիկ հուզմունքի մեջ գտնվելով։

## VII

Նոյեմբերի 8-ին, Կրասնոյեի ճակատամարտի վերջին օրը, արդևն մթնում էր, երբ զորքերն եկան գիշերելու վայրը։ Ամբողջ օրը հանդարտ էր, սառնամանիք, ու թեթև նոսր ձյուն էր գալիս։ Երեկոյան դեմ սկսեց պարզել։ Զյունափաթիլների արածքից երևում էր մութ մանիշակագույն աստղալից երկինքը, և սառնամանիքն սկսեց սաստիկանալ։

Մուշկետավորների գունդը, որ Տարուտինոյից դուրս եկավ 3000 հոգով, այժմ թվով 900 մարդ, առաջիններից մեկն էկավ գիշերելու համար նշանակված վայրը՝ մեծ ճանապարհի վրա գտնվող գյուղում։ Գնդին դիմավորող բնակարանորդները հայտնեցին, թե բոլոր խրճիթները բռնված են հիվանդ ու մեռած ֆրանսացիներով, հեծելակներով ու շտաբականներով։ Միայն մի խրճիթ կար գնդի հրամանատարի համար։

Գնդի հրամանատարը մոտեցավ իր խրճիթին։ Գունդն անցավ գյուղը և ծայրի խրճիթների մոտ ճանապարհին հրացանները շարեցին խաշմերուկ։

Ինչպես մի վիթխարի, բազմանդամ կենդանի, գոմզն սկսեց իր բունն ու մնունդը պատրաստելու աշխատանքը։ Զինվորների մի մասը ծնկնահար ձյունի միջով գնաց-ցրվեց գյուղի աշակողմը գտնվող կեշու անտառում, ու անտառում անմիջապես լսվեցին կացինների, կարճաթերի թրիկոցներ, կոտրվող ճյուղերի ճարճատյուն և ուրախ ձայներ։ Մյուս մասն աշխատում էր գնդի՝ իրար գլխի կուտակված սայլերի ու ծիերի. կենտրոնի մոտ, համում էին կաթսաներ, պաքսիմատ և կեր էին տալիս ծիերին։ Երրորդ մասը ցրվել էր գյուղում, բնակարաններ էր պատրաստում շտաբականների համար, ջոկում էր ֆրանսացիների մեռած մարմինները, որ ընկած էին խրճիթներում, և տախտակներ, չոր փայտ ու տանիքներից ծղնոտ

էին թոցնում խարույկների համար և ցանկապատեր՝ պաշտպանության համար։

Մի տասնհինգ զինվոր խրճիթների հետև, գյուղի ծայրում, ուրախ աղմուկով ճոճում էին տեղից պոկելու տանիքն սրդեն վերցրած սարայի բարձր ցանկապատը։

— Դե՛, գե՛, միանգամից, ո՛ւժ տվեք, — զոռում էին ծայրը, և գիշերվա մթնում սառած ճոխնչով ճոճում էր ահազին միակտուր հյուսված ձյունոտ ցանկապատը։ Հետզհետե ավելի միակտուր հաճախ էին ճոնչում ներքեմ բհիրները, և ցանկառ ավելի հաճախ էր ճոնչում ներքեմ բհիրները, և ցանկապատը, վերջապես, տապալվեց իրեն ճնշող զինվորների հետ միասին։ Լսվեց բարձր-կոպտորեն ուրախ ճիշ ու բրիջ։

— Երկ-երկու վերցրե՛ք։ Զողը տուր էստեղ. այ էսպես Ո՞ւ ես խցկվում։

— Դե՛, միանգամից... Սպասեցե՛ք հլա, տղերք... Երգելով։

Բոլորը լոեցին, և ոչ բարձր թավշյա-դուրեկան մի ծայն երգեց երրորդ տան վերջում, վերջին հնչունն ավարտելու հետ միանգամից, քսան ձայներ միասին բացականշեցին։ Շիտ ո՛ւ ո՛ւ ու Եղավ։ Միանգամից։ Ո՛ւժ տվեք, տղերք...։ Բայց չնայած միահամուռ ծիգերին, ցանկապատը քիշ շարժվեց տեղից, և տիրող լուսթյան մեջ լսվեց ծանր հաւց։

— Էյ, վեցերորդ վաշտեցիներ։ Գրողի տարածներ։ Օգնեցե՛ք... մենք էլ ձեզ պետք կգանք։

Վեցերորդ վաշտի զինվորներից քսան հոգի, որ գյուղ էին գնում, միացան քաշողներին, և հինգ սաժեն երկարություն ու մի սաժեն լայնություն ունեցող ցանկապատը, ծոելով, հեացող զինվորներին ճնշելով և նրանց ուսերը կտրելով, գյուղի փողոցով շարժվեց առաջ։

— Դե՛, գնա էլի... Շարժվիր, զու էլ... Ինչի կանգնեցիր։ Տե՛ս...

Ուրախ, այլանդակ հայոյանքները չէին դադարում։

— Էդ ի՞նչ եք անում, — հանկարծ լսվեց մի զինվորի հրամայական ձայնը, որ վրա պրծավ ցանկապատը տանողներին։ Պարոններն էստեղ են. ինքը երանալը խրճիթումն է, իսկ դուք, սատանաներ, մեր հայոյողներ։ Ես ձե՛զ, — զոռաց ֆելդե-

բելը և թափով հարկածեց առաջին պատահած զինվորի մէջ՝ քին: — Մի՞թե կամաց չեք կարող:

Զինվորները լոեցին: Խսկ այն զինվորը, որին խփեց ֆելդֆելը, անքանքաղով սկսեց երեսը սրբել, որ նա վիրավորել՝ արլումտել էր, ցանկապատին դիպչելով:

— Տես, սատանան ոնց խփեց: Սաղ երեսս արյունլվա արավ, — ասավ նա երկշուր շշունչով, երբ ֆելդֆելը հեռացավ:

— Թե՛ չես սիրում, — ասավ մի ծիծաղող ձայն. և, ձայները շափավորելով, զինվորները գնացին առաջ:

Գյուղից դուրս գալով, նրանք նորից սկսեցին խոսել նույն բարձր ձայնով, խոսակցությունը համեմելով նույն աննպատակ հայոցանիքներով:

Այն խրճիթում, որի կողքով անցան զինվորները, հավաքվել էր բարձր իշխանությունը, և թեյի շուրջը տեղի էր ունենում մի աշխույժ զրույց անցած օրվա և առաջիկայում ենթադրվող մաներների մասին: Ենթադրվում էր թեանց մի երթ կատարել գեղի ձախ, կտրել փոխարքայի ճանապարհը և բրոնել նրան:

Երբ զինվորները քարշ տալով բերին ցանկապատը, խոհանոցների խարույկներն արդեն բռնկված վառվում էին ամեն կողմ: Փայտերը ճարճատում էին, ձյունը հալվում էր, և զինվորների սկ սավերները՝ բռնած ամբողջ տարածության վրա, տրորած ձյուների վրայով, գնում էին այս ու այն կողմ:

Կացինները, կարճաթրերն աշխատում էին ամեն կողմ: Ամեն բան արգում էր առանց որևէ հրամանի: Փայտ էին կրում՝ գիշերը վառելու պաշար, ցանկապատում էին իշխանավորների հոլիկները, կերակուր էին եփում, ստուգում էին հրացաններն ու հանդերձանքը:

Բերված ցանկապատը ութերորդ վաշտը կիսաշրջանով դրեց հյուսիսակողմը, նեցուկներ տվեց, և խարուկ վառեցին նրա առաջ: Հնչեց վերջալույսի շեփորը, համրանքը կատարեցին, ընթրեցին և տեղավորվեցին խարույկի շուրջը գիշերելու — ո՛րը ոտնաման կարկատելով, ո՛րը ծխամորճ ծխելով, ո՛րը, բոլորովին մերկացած, քթիվ անելով:

## VIII

Թվում էր, թե գոյության այնպիսի գրեթե աներեսակայելի ծանր պայմաններում, որոնց մեջ գտնվում էին այն ժամանակ ուս զինվորները՝ առանց տաք կոշիկների, առանց կիսամուշուուս կանունում մի ծածկ ունենալու իրենց գլխավերեւ, ձյուների մեջ  $18^{\circ}$  սառնամանիքում, անգամ առանց լրիվ քանակությամբ պարենամթերքի, որ միշտ չէր հասնում բանակի հետեւ, — թվում էր, թե զինվորները պիտի ներկայացնեին ամենատիտուր և վհատ մի տեսարան:

Ընդհակառակը, երբեք, նյութական ամենալավ պայմաններում էլ զորքը չի ներկայացրել առավել ուրախ, աշխուժ տեսարան: Այդ առաջանում էր այն բանից, որ յուրաքանչյուր օր զորքից դուրս էր ընկնում այն բոլորը, ինչ սկսում էր որ վհատել կամ թուլանալ: Ամենը, ինչ կար ֆիզիկապես ու բարուապես թույլ, վաղուց արդեն մնացել էր հետեւում. մնացել էր Ֆիայն զորքի սերուցքը՝ հոգով և մարմնով ուժեղ մասը:

Ութերորդ վաշտի մոտ, որը պատճեցվել էր ցանկապատով, հավաքվել էր ամենաշատ ժողովուրդը: Երկու ֆելդֆելել եկի: Նստել էին նրանց մոտ, և նրանց խարույկը բոցավովում էր բոլորից ավելի ուժեղ: Ցանկապատի տակ նստելու իրավունք ունենալու համար նրանք պահանջում էին փայտ բերել:

— Եյ, Մակես, ինչ եղար, ... կորա՞ր, թե՛ գելերը քեզ կերան: Փետք բե՛ր, է՛, — գոռում էր մի կարմրագեմ, շիկակարմիր զինվոր, ծխից աշերը կկցցելով ու թարթելով, բայց կը բակից չհեռանալով: — Գոնե, այ ագուավ, զու գնա փետ բեր, — դիմեց նա մի այլ զինվորի:

Շիկակարմիրը ոչ ենթասպա էր, ոչ էլ եֆրեյտոր, բայց զինվոր էր, ուստի և կարգադրություններ էր անում առողջ զինվոր էր, ուստի և կանչում էին նիհար, փոքրամարմին սրաքիթ զինվորը, որին ագուավ էին կանչում, հնազանդուրեն վեր կացավ և այն է գնում էր հրամանը կատարելու, բայց այդ ժամանակ արդեն խարույկի լույսի մեջ երևաց նուրբ, գեղեցիկ կերպարանքը մի ջահել զինվորի, որ մի բեռ փայտ էր բերում:

— Բեր էստեղ: Այ լավ բա՞ն:

Փայտերը կոտրեցին, դարսեցին կրակի վրա, փշեցին բերան. ներով ու շինեների փեշերով և բոցը թշշաց ու ճարճատեց: Զինվորները, առաջ գալով, ծխամորճերը ծխեցին: Փայտ բերող շահել, գեղեցիկ զինվորը ձեռները կանթեց մեցքին և սկսց սառած ոտներն արագ ու ճարպկորեն թրիթրիացնել գետնին:

— Ախ, մամենъка, холодная роса, да хороша, да в мушкатера...— Կրկնում էր նա երգի հանգերող, կարծես երգի լուրաքանչյուր վանկի վրա զկրտալով:

— Էյ, կոշիկիդ ներբանը կթոշի,— ձայն տվեց շիկակարմիրը, նկատելով, որ պարողի ներբանը կախ է ընկել: — Էղ պարելն էլ ցավ է:

Պարողը կանգ առավ, կախ ընկած կաշին պոկեց ու գցեց կրակի մեջ:

— Էն էլ, ախպերս,— ասավ նա և, նստելով, պարկից հանեց ֆրանսական կապույտ մահուդի մի կտոր ու սկսեց դրանով ոտք փաթաթել: — Ոտներս սառել են,— ավելացրեց նա, ոտք դեպի կրակը մեկնելով:

— Շուտավ նոր կոշիկներ կտան: Ասում են, մինչև վերջը որ կոտորենք, էն ժամանակ բոլորին կոշկացու կաշի են տալու:

— Բայց տես, շան որդի Պետրովը մնաց էլի, — ասալ ֆելդֆերելը:

— Ես նրան վաղուց նկատում էի, — ասավ մի ուրիշը:

— Է, շահել զինվոր էր...

— Երրորդ վաշտում, ասում են, ինը մարդ է պակասել երեկ:

— Բայց, դու ասա՝ երբ ոտներդ սառչեն՝ ո՞ւր ես գնալու:

— Է, գատարկ խոսո՞ւմ ես, — ասավ ֆելդֆերելը:

— Զինի դու էլ նույն ես ուզում, — ասավ զինվորը, կշտամբանքով նայելով նրան, որն ասավ, թե ոտները սառեցրել է:

— Իսկ դու ի՞նչ ես կարծում, — հանկարծ, խարույկի մյուս կողմից վեր կենալով, ծվծվան ու դողացող ձայնով ասավ սըրաքիթ զինվորը, որին ագուավ էին կանչում: — Զաղն էլ նիհարում է, իսկ նիհարը հո կմեռնի: Ես հրես օրինակ: Էլ հալ շի մնացել, — ասավ նա հանկարծ վճռապես, դիմելով ֆելդֆերելին: — Կար-

դազրի՝ հիվանդանոց ուղարկեն ինձ. դողն սպանում է ինձ. թե չեկ է՝ ետ կմնաս...

— Է, հերիք է, հերիք է, — հանգիստ ասավ ֆելդֆերելը: Զինվորը լոեց, և խոսակցությունը շարունակվեց:

— Էս քանի օրը քիչ ֆրանսացիներ շինք վերցրել: Բայց, ճիշտն ասած, մեկի հագին կարգին կոշիկ շկա: — Էնպէս, մենակ անունն է, — սկսեց զինվորներից մեկը մի նոր գրուց:

— Բոլորը կազակներն են հանել: Խրճիթը մաքրել են զնապետի համար, նրանց գուրս տարել: Խղճում ես նայել, տղեր, — ասավ պարողը: — Թալանել են նրանց. կենդանի մեկն իրենց լեզվով բլբլացնում էր ինչ-որ:

— Բայց մաքուր մարդիկ են, տղեր, — ասավ առաջինը: — Սրպտակ են, այ ինչպես կեշի ծառը, սիպտակ. քաջ մարդիկ է: կան, ասենք ազնիվներ էլ:

— Բա դու ի՞նչ ես կարծում: Նրանք բոլոր դասերից էի մարդ են հավաքել:

— Բայց ոչինչ շգիտեն մեր լեզվով, — տարակուսանքի ժափտով ասավ պարողը: — Ես նրան ասում եմ. «Ի՞նչ հպատակ ես», իսկ նա բլբլացնում էր իրենք: Զարմանալի ժողովուրդ է:

— Այ ի՞նչն է զարմանալի, ախպերներս, — շարունակեց նա, որը զարմացել էր ֆրանսացիների սպիտակության վրա, — Մոժայսկի մոտ եղած գեղացիները պատմում էին, թե կովի տեղը նրանց սպանվածներին հավաքելիս, ասում է, մի ամիս համարյա նրանց մեռելները ընկած-պառկած էին, ասում է, ինչպես թուղթ, սպիտակ, մաքուր, ոչ մի հոտ չէր գալիս:

— Էդ ցրտից է, ի՞նչ, — հարցրեց մեկը:

— Ի՞նչ խելքն ես: Ցոգ էր ախր: Եթե ցրտից լիներ, մերոնք էլ չին նեխի: Թե չէ, ասում է, մոտենում ես մերոնց, ամբողջ, ասում է, փտել են, որդերի մեջ կորել: Էսպէս, ասում է, թիթ-բերան կապում ենք թաշկինակով ու, երեսներս թեքած, քաջ տալի. Հալ շկա: Իսկ նրանց դիակներն, ասում է, ինչպես թուղթ, սպիտակ են ու ոչ մի հոտ չի գալիս:

Բոլորը լուս էին:

— Երեկ ուտելիքից է, — ասավ ֆելդֆերելը, — աղայական ուտելիք են խժոել:

Ոչ ոք շառարկեց:

— Էղ գեղացին Մոժայսկի մոտի, ուր ճակատամարտ է եղել, ասում էր, նրանց տասը գեղից հավաքել են, քան օր կրել են մեռածներին, բայց էլի շեն վերջացրել: Էղ զայերն ինչ, ասում է...

— Էս ճակատամարտը իսկական է եղել, — ասավ հին զինվորը: — Էս մեկը հիշելու բան է. թե չէ բոլորը, դարնից հետո... միայն տանջանք է եղել ժողովրդի համար:

— Էն էլ ասենք, քեռի երեկ չէ մեկել օրը մենք վրա հասանք դրանց: Էլ մոտ շթողին: Հրացաննին իսկույն գցեցին ու շոքեցին: Պարզո՞ն, ասում է: Էսպես մի օրինակ բերենք: Ասում էին՝ իրեն Պոլիոնին Պլատովը երկու անգամ բռնել է: Խոսք չի հասկանում: Հրես, էն է հա, բռնելու է ձեռով, փոխվում թոշուն է գառնում ու թռչում գնում: Ու սպանել էլ չի կարելի, հրաման չի...

- Ի՞նչ փշողն ես եղել, տեսնում եմ, Կիսելլով։
- Ի՞նչ փշել, իսկական ճշմարտություն եմ ասում։

— Եթե ինձ մնար, ես նրան, բռնելով, կթաղեի հողում։ Աւ կցարդեի բարդու ծողով, նրա համար, որ էսքան մարդ է փը-շացրել։

— Մի կայսան էլ անելու ենք, էլ չենք գնալու, — Հորահ-  
ջելով ասավ Հին զինվորը:

*կոսակցությունը լսեց, զինվորներն ակսեցին պառկելու պատրաստություն առեսնելու*

— Տես աստղերը, զարմանալի է, կարծես խոսում են: Ոնց  
որ կնանիք քաթան փռած լինեն, — ասավ զինվորը, հիանալով  
Հարդագոյի ճանապարհի վրա:

— Դա, տղերք, առատ տարվան նշան է:

— Փետք էլի՛ հարկավոր կրյնի՛:

— Մեջքը կտաքացնես, բայց փորդ սառել է: Այ զարմանալի բան:

— 0', տեր աստված:

— Ինչ ես բոթում, տո. կրակը Հո մենակ քեզ համար շի՞՛  
Տես... մոռվել է:

Տիրող լոռության մեջ լսվեց քնածներից մի քանիսի խը-  
պրմփոցը. մնացածները շուտումուռ էին գալիս ու տաքանում,  
**252**

— Տես, բոքում են Հինգերորդ վաշտուս, — ասավ սր  
սինվոր: — Եատ էլ ժողովուրդ կա:

Սի զինվոր վեր կացավ ու գնաց դեպի Հինգերորդ վաշտը:  
Ա. Էնք են ծիծառում, — ասավ նա, վերադառնալով: —

— Հա՞յ, Գնանք տեսնենք...

Մի քանի զինվոր գնացին դեպի հինգերորդ վաշտը

IX

Հինգերորդ վաշտը տեղափորկիլ էր հենց անտառի մոտ։ Նսկայական խարուցկը բոցարձակ վառվում էր ճյուղերի մեջ, ուսամուրելով ժառերի՝ եղյամից ծանրացած ճղները։

Գիշերվա կեսին հինգերորդ վաշտի զինվորները անտառից քայլերի ձայն լսեցին և ոտի տակ կոտրվող ճղափայտերի ճրթճրթոց:

— Տղերք, արջ, — ասավ մի զինվոր:

Բոլորը գլուխները բարձրացրին, ականջ դրին, և անտառից դուրս գալով, խարուկի պայծառ լույսի մեջ, երևացին մարդկացին երկու՝ իրարից բռնած, տարօրինակ հագնված կերպարանքներ:

Դրանք անտառում թաքնված երկու ֆրանսացիներ էին: Խոպոտ ձայնով՝ զինվորներին անհասկանալի լեզվով խոսելով, նրանք մոտեցան խարույկին: Մեկը հասակով բարձր էր, սպայական գլխարկով և թվում էր բոլորովին թուլացած: Խարույկին մոտենալով՝ նա ուզեց նստել, բայց ընկավ գետին: Մյուսը, որ փոքր էր պնդակազմ, այտերը թաշկինակով կապած, ավելի ուժեղ էր: Նա բարձրացրեց իր ընկերոջը և, իր բերանը ցույց տալով, ինչոր բան էր ասում: Զինվորները ըրչապատեցին ֆրանսացիներին, հիվանդի տակ շինել փոեցին և երկուսի համար եւ կաշա և օղի բերին:

Թուլացած քրանսական սպան Ռամբալն էր. թաշկինակ կապածը՝ նրա սպասյակ Մորելը:

Երբ Մորելը օղի խմեց և կերավ վերջացրեց փոքրիկ կաթսայով կաշան, հանկարծ հիվանդագին կերպով ուրախացավ և սկսեց, անդադար, ինչոր բաներ ասել իրեն շամակացող զինվորներին: Ռամբալը հրաժարվեց ուտելիքից և մնաց խարույկի մոտ՝ արմունկին հենած պառկած, անիմաստ կարմիր աշքերով նայելով ոռւս զինվորներին: Երբեմն նա երկարաւ տնեքոց էր արձակում և նորից լրում: Մորելն, ուսերը ցույց տալով, զինվորներին ներշնչում էր, թե դա սպա է և թե նրան պետք է տաքացնել: Խարույկին մոտեցած ոռւս սպան մարդ ուղարկեց գնդապետին Հարցնելու, թե արդյոք նա իր սենյակը չի առնի ֆրանսական սպային տաքացնելու. և երբ վերադառն ու ասին, թե զնդապետը կարգադրեց սպային բերել, Ռամբալին հայտնեցին, որ զնա: Նա վեր կացավ և ուզեց զնալ, բայց երերաց ու կընկներ, եթե կողքին կանգնած զինվորը չընկներ նրան:

— Ի՞նչ է: Չե՞ս զնալու, — հեգնանքով աշքով անելով, ասավ մի զինվոր, զիմելով Ռամբալին:

— Է, հիմա՞ր: Ինչ ես անկապ դուրս տալի: Դեղացի ես, է, իսկական գեղացի, — ամեն կողմից հանդիմաննեցին կատակ անող զինվորին:

Ռամբալին շրջապատեցին, երկուսով առան ձեռների վրա և տարան խրճիթ: Ռամբալը գրկեց զինվորների վիզը և, երբ նրան տարան, նա սկսեց խոսել ողբազին ձայնով.

— Oh mes braves; oh mes bons, mes bons amis! Voilà des hommes! oh mes braves, mes bons amis!<sup>1</sup> — և, երեխալի պես, գլուխը հակեց դրեց զինվորներից մեկի ուսին:

Մինչ այդ Մորելը նստել էր ամենալավ տեղը, զինվորներով շրջապատված:

Մորելը, փոքր ու պինդ մի ֆրանսացի՝ բորբոքված, արցունքոտված աշքերով, որ թաշկինակը կավարի կապել էր զինարկի վրայից, հազել էր կանացի կիսամուշտակ: Նա, ըստ երեւլիթին, խմելուց հետո խումարած, ձեռով կողքին նստած զինվորին գրիած, խոպատ, ընդհատվող ձայնով երգում էր

<sup>1</sup> Ա. իմ բաշեր Օ. բարի, բարեկամներս. Այս մարդիկ: Օ, իմ բատակակամներս:

ֆրանսական մի երգ: Զինվորները, կողքերնին բռնած, նայում էին նրան:

— Հա-պա, հա-պա, սովորեցրու, ինչպե՞ս: Ես շուտ կսովորեմ: Ինչպե՞ս...— ասում էր կատակաբան-երգասաց զինվորը, որին գրկել էր Մորելը:

Vive Henri quatre  
Vive ce roi vaillant!<sup>1</sup>

Երգեց Մորելը, աշքով անելով:

Ce diable a quatre...

— Վիվարիկա. Վիվ սերուվարու, սիդյարլյակա...— Կըրկնեց զինվորը, ձեռը թափ տվեց և իսկապես եղանակը որսաց:

— Տես է, լավ էր: Հա-հա-հա-հա-հա...— ամեն կողմից բարձրացավ կոպիտ, ուրախ բրիգի:

Մորելը, դեմքը կնճելով, նույնպես ծիծակեց:

— Դե, էլի սկսիր, էլի՛, էլի՛:

Qui eût le triple talent,  
De boire, de battre  
Et d'être un vert galant ...<sup>2</sup>

— Էս էլ լավ էր իրար գցած: Դե՛, սկսիր, Զալետան...

— Կյուր...— ճիգով արտասանեց Զալետանը:— Կյուր-յուր...— ծոր տվեց նա, զանասիրությամբ շուրթերը դուրս գցելով, — լետրիպտալա դե բու դե բա և դետրավագալա, — երգեց նա:

— Այ, լավ է: Այ քեզ խրանցուզ. օյ... հա-հա-հա-հա... Հը՛, էլի ուտել ես ուզո՞ւմ:

— Դրան կաշա տուր. սովածն ախր շուտ չի կշտանա:

Նրան նորից կաշա տվին, և Մորելը, ծիծաղելով, սկսեց ուտել երկրորդ աման կաշան: Մորելին նայող բոլոր շահել զինվորների դեմքերին ուրախ ժափիտ կար: Հին, տարիքավոր զինվորները, անկայիլ համարելով զբաղվել այդպիսի դատարկ

<sup>1</sup> Կեցցե Հենրի IV. Կեցցե այս անվեհեր թագավորը և այլն (Փրանսական բան երգ է):

<sup>2</sup> Ով ունեցել է երեք շնորհք.—  
հմել, կովել և սիրող մինել:

բաներով, պառկել էին խարույկի մյուս կողմը, բայց երբեմն, արմունկի վրա հենած բարձրանում էին և ժպտադեմ նայում Մորելին:

— Դրանք էլ մարդ են, — ասավ նրանցից մեկը, շինելի մեջ փաթաթվելով: — Բարձվենակն էլ իր քոքն ունի:

— Ո՞, տեր աստված! Ինչքա՞ն շատ աստղեր կան: Պարզ կա ցուրտ է լինելու...

Ամեն ինչ լոեց: Աստղերը, կարծես իմանալով, որ հիմա իրենց ոչ ոք չի տեսնում, շողում-խաղում էին մութ երկնքում: Մերթ բոնկելով, մերթ հանգչելով, մերթ ցնցվելով, նրանք եռանդով փսխում էին իրար հետ ինչ-որ ուրախ, բայց խոր ճրդավոր մի բանի մասին:

## X

Ֆրանսական գորքերը հավասարաշափ հալվում էին մաթի-մատիկական-կանոնավոր պրոգրեսիայով: Եվ այն անցումը Բերեգինայից, որի մասին այնքան շատ է գրվել, ֆրանսական բանակի ոչնչացման միջանկյալ աստիճաններից մեկն էր միայն և բնավ ոչ վճռական էպիգողը արշավանքի: Եթե Բերեգինայի մասին այդքան շատ գրել են և գրում են, ու ֆրանսացիներ կողմից կատարվել է այն պատճառով, որ Բերեգինայի քանդակած կամուրջի վրա՝ ֆրանսական բանակի կրած աղետները, որ առաջ հավասարաշափ էին, այստեղ հանկարծ խմբվեցին մի մոմենտում և դարձան մի ողբերգական տեսարան, որը և մնաց բոլորի հիշողության մեջ: Իսկ ոռւսները Բերեգինայի մասին ալղքան շատ խոսել ու գրել են այն պատճառով, որ ուազմագաշոյից հետու, Պետերուրում, ծրագիր էր կազմված (Հենց Պֆուլի կողմից) ստրատեգիական թակարդի մեջ բռնել Նապուլինին՝ Բերեգինա գետի վրա: Բոլորը վստահ էին, որ ամեն ինչ իրականում ճիշտ այնպես կլինի, ինչպես զրած է ծրագրի մեջ, ուստի և պնդում էին, թե հենց Բերեգինայի գետանցը կործանեց ֆրանսացիներին: Իսկ էապես Բերեգինան անցնելու հետևանքները ֆրանսացիների համար առավել պակաս կործանարար էին հրանոթներ ու գերիներ կորցնելով, քան Կրասնոյեն, ինչպես այդ ցույց են տալիս թվերը:

Թերեգինայի անցումի միակ նշանակությունն այն է, որ անցումը ակներևորեն և անկասկած ապացուցեց ճանապարհ կտրելու բռնոր ծրագիրների սխալ լինելը և արդարացիությունը կուտուզովի ու ամբողջ զորքերի (մասսայի) պահանջած միակ հնարավոր գործելակերպի — միայն հետեւել թշրջած աստղակացող արագ թափով և նպատակասլաց եռանդով: Նա փախչում էր ինչպես վիրավոր գաղան, և չէր կարելի կանգնել նրա ճանապարհին: Դա ապացուցեց ոչ այնքան անցնելու մազմակերպումը, որքան շարժումը կամուրջների վրա: Եթե կամուրջները ճեղվեցին՝ անզեն զինվորները, ֆրանսական գումակում գտնվող մոսկովյան բնակիչները, կանայք երեխաների հետ՝ բոլորը իներցիայի ուժի ազդեցությամբ անձնատուր չեղան, այլ փախան առաջ՝ դեպի նավակները, դեպի սառած ջուրը:

Այդ ձգտումը բանական էր: Թե փախչողների, թե հետապնդողների դրությունը միատեսակ վատ էր: Մնալով յուրային-ների հետ՝ յուրաքանչյուրն աղետի մեջ հույս ուներ բնկերոյ օգնության վրա, յուրայինների միջև գրաված իր որոշակի դրության վրա: Իսկ ոռւսներին հանձնվելով՝ նա մնում էր նույն աղետավոր վիճակում, բայց կյանքի պահանջները բավարարելու խնդրում կանգնում էր ամենացածր աստիճանի վրա: Ֆրանսացիներին հարկավոր չէր ստույգ տեղեկություններ ունենալ այն մասին, թե կեսը գերիների (որոնց շգիտեին ինչ անեն), չնայած ոռւսների՝ նրանց գրեկելու ամբողջ ցանկության, մեռնում էին ցրտից ու քաղցից, նրանք զգում էին, որ դա այլ կերպ էլ չէր կարող լինել: Ամենակարեկից ոռւս զորապետները և ֆրանսասերները, ոռւսական ծառայության մեջ գտնվող ֆրանսացիները ոչինչ չկարողացան անել գերիների համար: Ֆրանսացիներին կործանում էր աղետը, որի մեջ գտնվում էր ոռւս զորքը: Չէր կարելի քաղցած, հարկավոր զինվորներից խլել հաց ու հագուստ և տալ ոչ վտանգավոր, ոչ ատելի, ոչ մեղավոր, այլ պարզապես անհարկավոր ֆրանսացիներին: Ոմանք և անում էին այդ, բայց այդ բացառություն էր միայն:

Ետևում ստույգ կործանում էր. առջևում հույս կար: Նավի բայրված էին. ուրիշ փրկություն չկար, բացի միասին փախչե-

լուց. և այդ միատեղ փախուստին էին նվիրել ֆրանսացիներն իրենց ամրող ուժերը:

Արքան ավելի առաջ էին փախչում ֆրանսացիները, այնքան ավելի ողորմելի էին դառնում նրանց մնացորդները, մանավանդ թերեգինայից հետո, որի վրա, Պետերբուրգի ծրագրի հետեանբով, դրված էին առանձին հույսեր, ուստի այնքան ավելի սաստիկ էին բորբոքվում կրքերը ուսւ զորապեաների, որոնք մեղաղրում էին միհյանց և մանավանդ Կուտուզովին: Կարծելով, որ թերեգինայն-պետերբուրգան ծրագրի անհարդությունը վերադրվէլու է նրան,— դժուռությունը նրանից, արհամարհանքը դեմքի նաև ծաղրը նրա նկատմամբ արտահայտվում էին ավելի ու ավելի ուժեղ կերպով: Մաղրը և արհամարհանքը, պարզ է ինքնին, արտահայտվում էր հարգալից ձևով, մի ձևով, որ Կուտուզովը լէր կարող հարցնել՝ ինչո՞ւմն են մեղաղրում իրեն և ինչի՞ համար: Նրա հետ լուրջ չէին խոսում, նրան զեկուցներ ատլիս և նրա թույլտվությունը հարցնելիս՝ բնդունում էին տիսուր ծես կատարելու կերպարանք, իսկ նրա հետեից աշքով էին անում և ամեն քայլափոխի աշխատում էին խաբել նրան:

Այդ բոլոր մարդիկ, հենց նրա համար, որ իրենք նրան չէին կարող հասկանալ, ընդունել էին, թե ծերունու հետ խոսեն ավելորդ է. թե նա երբեք չի հասկանա իրենց ծրագրերի խորիմաստությունը. թե նա ասելու է իր ֆրազները (նրանց թվում էր, որ դրանք միհյան ֆրազներ են) ոսկե կամրջի մասին և այս մասին, թե չի կարելի արտասահման գնալ թափառաշրջիկների ամբոխով և նման բաներ: Այդ բոլորն արդեն լսել էին նրանից: Եվ ամենը, ինչ նա ասում էր, օրինակ այն, թե պետք է սպասել պարենի, թե մարդկի կոշիկ շունեն, այս ամենն այնքան պարզ էր. իսկ այն բոլորը, ինչ իրենք էին առաջարկում, այնքան բարդ էր և խելացի, որ նրանց համար պարզ էր, թե նա տիմար էր և ծեր, իսկ իրենք իշխանություն շունեցող հանճարեղ զորավարներ են:

Մանավանդ փայլուն ծովակալ և Պետերբուրգի հերոս Վիտոգնշտեյնի բանակների միացումից հետո այդ արամագրությունը և շտաբային բամբասանքները հասան իրենց բարձրագույն շափերին: Կուտուզովը ահենամ էր այդ միացումը:

լով, ուսերը թռթվում էր միհյան: Բերեգինայից հետո նա միան մի անգամ զայրացավ և թենիգսենին, որ գեկուցյ էր ուղարկէլ թագավորին, գրեց հետեյալ նամակը.

«Չեր հիվանդաղին նոպաների պատճառով հաճեցեք, ձերդ բարձր գերազանցություն, սույնը ստանալուն պես, մեկնել կալուզա, ուր և սպասեցեք հետագա հրամանի ու նշանակումի նորին կայսերական մեծության կողմից:»

Թենիգսենին ճամփելուց անմիջապես հետո բանակ եկավ մեծ իշխան Կոնսանանախին Պավլովիշը, որն սկսել էր պատերազմը և բանակից հեռացվել էր Կուտուզովի կողմից: Այժմ մեծ իշխանը, բանակ գալով, Կուտուզովին հայտնեց, թե թագավոր կայսրը դժուռ է մեր զորքերի թույլ հաջողություններից ու դանդաղ շարժումից: Ինքը թագավոր կայսրը մտադիր էր այս օրերս գալ բանակ:

Մեր մարդը, որ նույնքան փորձված էր պալատական գործերում, ինչպես և ուզմական, այն Կուտուզովը, որ նույն տարիքա օդոսատունին դիխավոր հրամանատար էր ընտրվել թագավորի կամքի հակառակ, նա՛, որ բանակից հեռացրեց թագաժառանգին և մեծ իշխանին, նա՛, որ իր իշխանությամբ, թագավորի կամքի հակառակ, հրահանգեց թողնել Մոսկվան, այդ Կուտուզովին այժմ անմիջապես հասկացավ, որ իր ժամանակը վերջացել է, որ իր գերը կատարված է, որ այդ կարծեցաւ իշխանությունն արդեն ինքն ալլես շունի: Եվ այդ նա հասկացավ ոչ միհյան պալատական վերաբերմունքներից: Սի կողմից՝ նա տէսնում էր, որ ուզմական գործը, այն, որի մեջ նա կատարում էր իր գերը, ավարտված է, և զգում էր, որ իր կրումն իրագործված է: Մյուս կողմից՝ նա միննուն ժամանակ սկսել էր ֆիզիկական հոգնածություն զգալ իր ծեր մարմնում և ֆիզիկական հանգստի անհրաժեշտություն:

Նոյեմբերի 29-ին Կուտուզովը մտավ Վիլնո — իր լավ Վիլնոն, ինչպես ինքն էր ասում: Իր ծառայության ընթացքում Կուտուզովը երկու անգամ նահանգապետ էր եղել Վիլնոյում: Հարուստ, անվնաս մնացած Վիլնոյում, բացի կյանքի հարմարություններից, որոնցից այնքան վաղուց արդեն զուրկ էր եղել, Կուտուզովը գտավ հին բարեկամներին և հիշողություններ: Եվ նա, հանկարծ երես դարձնելով բոլոր ուզմական ու

սետական հոգսերից, խորասուզվեց անդորր, սովորական կրանքի մեջ այն շափով, որշափով նրան հանգիստ էին տալիս իր շուրջը եռացող կրթերը, կարծիս ամենը, ինչ կատարվեց այժմ և կատարվելու էր պատմական աշխարհում, բնավ իրեն չեր վերաբերում:

Զիշագովը՝ մեկը ամենամոլի կտրողներից ու տապալողներից. Զիշագովը, որն սկզբում ուզում էր դիվերսիա կատարել Հունաստան, ապա Վարչավա, բայց ոչ մի կերպ չէր ցանկանում գնալ այնտեղ, ուր հրամայված էր իրեն. Զիշագովը, որ հայտնի էր թագավորի հետ ունեցած համարձակ խոսակցութամբ. Զիշագովը, որը Կուտուզովին համարում էր իր կողմից բարերարված, որովհեաւ, երբ նա 11 թվին ուղարկվեց Թուրքիա-ի հետ հաշտություն կնքելու, անկախ կուտուզովից, նա, համոզվելով, որ հաշտությունը կնքված է արդեն, ընդունեց թագավորի առաջ, որ հաշտությունը կնքելու արժանիքը պահանում է Կուտուզովին. այդ իսկ Զիշագովը առաջինը դիմավորեց Կուտուզովին Վիճոյում, այն դոյակի առաջ, ուր պետք է իշխաններ Կուտուզովը: Զիշագովը նավատօրմիղային վիճունդիրով, փոքրիկ սուսերով, գլխարկը թևատակը դրած, Կուտուզովին մատուցեց շարքի զեկույցը և քաղաքի բանալիները: Երիտասարդության՝ դեպ խելքը կորցրած ծերունին ունեցած այն արհամարհական-հարգական վերաբերմունքն էր արտահայտվում Զիշագովի ամբողջ վարվեցողության մեջ, Զիշագովի, որը գիտեր արդեն Կուտուզովի վրա բարդող մեղադրանքները:

Խոսակցելով Զիշագովի հետ, Կուտուզովն ի միջի այլոց նրան սասավ, թե Բորիսովաւմ նրանից ետ խլված ամանեղենով լի կառքերն անվնաս են և կվերադաշտեն իրեն:

— C'est pour me dire que je n'ai pas sur quoi manger... Je puis au contraire vous fournir de tout dans le cas même où vous voudriez donner des dîners<sup>1</sup>, — բռնկելով, սասավ Զիշագովը, յուրաքանչյուր իր խոսքով կամենալով ապացուցել

<sup>1</sup> Դուք ուզում եք ասել, որ ես ուտելիքի աման չունեմ: Ընդհակառակը, կարող եմ ձեզ սպասավորի ամեն ինչով, անդամ եթե յուք շանկանայիք ճաշեր տալ:

իր արդարացիությունը և այդ պատճառով ննթադրելով, թե Կուտուզովն էլ մտահոգված է դրանով:

Կուտուզովը ժամանականությունում մտահոգված էր նուրբ, թափանցող ժամանականեց. «Ce n'est que pour vous dire ce que je vous dis<sup>1</sup>».

Վիլնոյում Կուտուզովը, հակառակ թագավորի կամքի, կանգնեցրեց զորքերի մեծ մասը: Կուտուզովը, ինչպես ասում էին նրա մոտիկները, շատ ընկել էր և ֆրիկապես թուլացել Վիլնոյում եղած միջոցին: Նա գժկամությամբ էր զբաղվում բանակին վերաբերող գործերով, ամեն ինչ թողել էր իր գեներալներին և, թագավորին սպասելով, անձնատուր էր եղել ցրված կյանքի:

Դեկտեմբերի 7-ին Պետերբուրգից գուրս գալով իր շքախմբով — կոմս Տոլստոյի, իշխան Վոլկոնսկու, Արակչևսկի և ուրիշների հետ — թագավորը գեկտեմբերի 11-ին եկավ Վիլնո և ճանապարհային սահմանով ուղղակի մոտեցավ դղյակին: Դղյակի մոտ, շնայած սաստիկ սառնամանիքին, կանգնած էին հարյուր զեներալներ ու շտաբային սպաներ՝ լրիվ հանդիսական համազգեստներով և Սեմյոնովյան գնդի պատվակոր պահախումբը:

Սուրհանդակը, որ թագավորից առաջ քրտնած եռածի կոսովով, թագավորի առցեկից, սրարշավ մոտեցավ դղյակին, ձայն տվեց. «Դալիս էս: Կոնովնիցինը նետվեց նախասենյակ՝ հայտնելու Կուտուզովին, որն սպասում էր բարապանի փոքրիկ սենյակում:

Մի րոպե անց ծերունու զեր, խոշոր կերպարանքը՝ լրիվ հանդիսական համազգեստով, բռնոր նշաններով, որ ծածկում էին նրա կուրծքը, և շարփով պատած փորով, ճոճկելով, դուրս եկավ մուտքի դուռը: Կուտուզովը շլյապան դրեց ճակատանց (ՈՕ Փրոնտ), ճեռնոցները ձեռն առավ և կողքանց, դժվարությամբ ոտք ցած՝ աստիճաններին դնելով՝ իշավ և ձեռն առավ թագավորին տալու համար պատրաստած զեկույցը:

Վազգող, փսխոց, դարձյալ մի սրբնթաց եռածի, և բռնոր հայացքները սկեսվեցին սրարշավ մոտեցող սահմանին, որի

<sup>1</sup> Ես ուզում եմ ասել այն, ինչ ասում եմ, ոչ ավելին:

մեջ երևում էին արդեն թագավորի և Վոլկոնսկու կերպարանքները:

Այս ամենը 50-ամյա սովորության համաձայն ֆիզիկապես հուզող ներգործություն ունեցան ծեր գեներալի վրա. նա հոգնած ու շատապ շոշափեց իրեն, գլխարկն ուղղեց և մեկն, այն բոպեին, երբ թագավորը սահնակից դուրս գալով՝ աշբերը բարձրացրեց դեպի նա, սրուապնդվելով ու ձգվելով, գեկուցը լովեց և սկսեց խոսել իր շափած, շողոքորթող ձայնով:

Թագավորն արագ մի հայացք գցեց Կուտուզովի վրա՝ ոտից գլուխ, մի ակնթարթ հոնքերը կիտեց, բայց իսկույն էլ, իրեն հաղթահարելով, մոտեցավ և, ձեռները տարածելով, գրկեց ծնրունի գեներալին: Նորից, հին սովորական տապավորությամբ և իր հոգեհարազատ մաքի վերաբերմունքով, այդ գրկախառնությունը, ինչան և սովորաբար, ազդեց Կուտուզովի վրա. նա հեկեկաց:

Թագավորը ողջունեց սպաներին, Սեմյոնովյան պահակախմբին և, մի անգամ էլ ծերունու ձեռը սեղմելով, զնաց նրա հետ դղյակ:

Ֆելդմարշալի հետ մենակ մնալով՝ թագավորը հայտնեց նրան իր անբավականությունը՝ հետապնդման գանդաղության համար, Կրասնոյեում և Բերեզինիայի վրա եղած սխալների համար և հաղորդեց իր դիտավորությունները՝ ապագա արշավանքի մասին՝ դեպ արտասահման: Կուտուզովը ոչ առարկություններ արավ, ոչ դիտողություններ: Այն իսկ հնագանդ ու անիմաստ արտահայտությունը, որով յոթ տարի առաջ լսում էր նա թագավորի հրամանները Առւասերլիցի դաշտում, այժմ նորից բռնել էր նրա դեմքը:

Երբ Կուտուզովը դուրս եկավ առանձնասենյակից և իր ծանր, սկզբ քայլվածքով, գլուխը կախ, անցավ դահլիճով, ինչոր մեկի հայնը կանգնեցրեց նրան:

— Զերդ պայծառափայլություն, — ասավ մեկը:

Կուտուզովը գլուխը բարձրացրեց և երկար նայեց կոմս Տոլստոյի աշքերին, որն ինչ-որ մի փոքրիկ իր արծաթե սկաւտեղի վրա պահած, կանգնել էր նրա առջև: Կուտուզովը, կարծեա, չէր հասկանաւմ, թե իրենից ի՞նչ են աւղում:

Հանկարծ նա կարծես թե հիշեց. հազիվ նկատելի ժամանակաշրջանում նրա փափլիկ դեմքին, և նա, ցած, հարզալից գլուխ խռովահելով, վերցրեց սկուտեղում դրված իրը: Դա Գեորգի 1-ին աստիճանի շքանշանն էր:

## X

Հետեւյալ օրը ֆելդմարշալի մոտ ճաշ եղավ և պարահանդես. թե մեկը, թե մյուսը թագավորը պատվեց իր ներկայությամբ: Կուտուզովին շնորհված է 1-ին աստիճանի Գեորգի. Թագավորը ցույց տվեց նրան բարձրագույն պատիվները. բայց թագավորի անբավականությունը ֆելդմարշալի դեմ հայտնի էր յուրաքանչյուրին: Պատշաճավորություն էր պահանջում լինել թագավորն առաջինն ինքն էր տալիս զրա օրինակը. բայց բոլորը գիտեին, որ ծերունին մեղավոր է և բոլորովին անպետք երբ պարահանդեսին Կուտուզովը, հին եկատերինյան սովորությամբ, թագավորի պարահանդես մտնելու միջոցին հրամայեց արկանել առ ոտո նրա վերցված դրոշները, թագավորը տհաճությամբ դեմքը կնճռեց և ասավ խոսքեր, որոնց մեջ մի քանիսը լսեցին «Ճեր խեղատակ»:

Թագավորի անբավականությունը Կուտուզովի դեմ սաստիացակ Վիլոյում մանավանդ այն պատճառով, որ Կուտուզովը, ակներեսաբար, չէր ուզում կամ չէր կարող հասկանալ առաջիկա արշավանքի նշանակությունը:

Երբ հետեւյալ օրը առավոտ թագավորը իր մոտ հավաքված սպաներին առավ. «Դուք փրկեցիք ոչ միայն Ռուսաստանը, դուք փրկեցիք Եվրոպան», — բոլորն այն ժամանակ արդեն հասկացան, որ պատերազմը չի ավարտված:

Միայն Կուտուզովը չէր ուզում հասկանալ այդ և պարզունակում էր իր կարծիքը, թե նոր պատերազմը չի կարող լավաւանել գրությունը և ավելացնել Ռուսաստանի փառքը, այլ կարող է միայն վատթարացնել նրա վիճակը և նվազեցնել փառքի այն բարձր աստիճանը, որի վրա, նրա կարծիքով, կանգնած էր այժմ Ռուսաստանը: Նա աշխատում էր պատցուցել թագավորին նոր զորքեր հավաքելու անհնարին լինելը. խոսում էր

բնակիության ծանր կացության մասին, անհաջողությունների հնառավորության մասին և այլն:

Այսպիսի տրամադրությամբ ֆելդմարշալը, բնական է, հանդիսանում էր խոշնդուռ և արգելակ առաջիկա պատերազմի համար:

Երունու հետ ընդհարվելուց խուսափելու համար ինքնին ելք գտնվեց, որը կայանում էր նրանում, որպեսզի, ինչպես Առևտերիցում և ինչպես պատերազմի սկզբում՝ Բարկլայի օրով, գլխավոր հրամանատարի ոտի տակից, նրան շանհանգրստացնելով, նրան այդ մասին շհայտնելով, հանել իշխանությունը փոխանցել իրեն թագավորին:

Այդ նպատակով շտաբը կամաց-կամաց վերակազմվեց, և Կուտուզովի շտաբի ամբողջ էական ուժը ոչնչացվեց ու փոխանցվեց թագավորին: Տուլը, Կոնովնիցինը, Երմոլովը ստացան ուրիշ պաշտոններ: Թուրովը բարձրածայն խոսում էին, թե Փելդմարշալը շատ է թուլացել և առողջությունը բայցայ-ված է:

Նա առողջությամբ թույլ պիտի լիներ նրա համար, որպեսզի իր տեղը տար նրան, ով փոխարինում էր իրեն: Եվ իսկապես, նրա առողջությունը թույլ էր:

Խչպես բնականորեն ու պարզ, և աստիճանաբար Կուտուզովը Թուրքիայից եկավ Պետերբուրգի արքունական պալատը արմարհազոր հավաքելու և նորից գնաց բանակ, հենց այն ժամանակ, երբ նա անհրաժեշտ էր, ճիշտ այդպես էլ բնականորեն, աստիճանաբար ու պարզ այժմ, երբ Կուտուզովի կերպ վերացած էր, նրա տեղը բռնելու եկավ նոր, պահանջման գործիչ:

1812 թվի պատերազմը, բացի ուստի սրտին թանկ ժողովրդական նշանակությունից, պետք է ունենար ուրիշ ։ Եվրոպական նշանակություն:

Ժողովուրդների՝ արևմուտքից դեպ արևելք շարժվելուն պետք է հետևեր ժողովուրդների՝ արևելքից դեպ արևմուտք շարժումը, և այդ նոր պատերազմի համար հարկավոր էր նոր գործիչ, որը պետք է ունենար այլ, քան Կուտուզովը, հատկություններ, հայացքներ, դրդված այլ մղումներից:

Ալեքսանդր առաջինը ժողովուրդների՝ արևելքից դեպ արևմուտք շարժվելու համար և ժողովուրդների սահմանները վերականգնելու համար նույնպես անհրաժեշտ էր, ինչպես անհրաժեշտ էր Կուտուզովը Ռուսաստանի փրկության ու փառքի համար:

Կուտուզովը չէր հասկանում այն, ինչ նշանակում էր Եվրոպա, հավասարականություն, նապոլեոն: Նա այդ չէր կարող հասկանալ: Ուուս ժողովրդի ներկայացուցիչը նրանից հետո, երբ թշնամին ոչնչացված էր, Ռուսաստանն ազատված և իր փառքի բարձր աստիճանին հասցված, ուուս մարդը կամ ուուս այլևս անելիք չուներ: Ժողովրդական պատերազմի ներկայացուցչին ոշինչ չէր մնում բացի մահից: Եվ նա մեռավ:

## XII

Գիեռը, ինչպես այդ մեծ մասամբ պատահում է, գերության մեջ ապրած ֆիզիկական զրկանքների ու լարումների բովանդակ ծանրությունն զգաց միայն այն ժամանակ, երբ այդ լարվածությունն ու զրկանքները վերջացան: Գերությունից ազատվելուց հետո նա եկավ Օրյոլ և, գալու երրորդ օրը, այն ժամանակ, երբ պատրաստվում էր գնալ Կիև, Ծիվանդացավ ու երեք ամիս պառկեց Օրյոլում: Բժիշկների ասելով՝ նա հիվանդ էր մաքամատենդով: Չնայած քայլերը բուժում էին նրան, արյուն տառեւ և գեգեր էին տալիս, նա այնուամենամիշ լավացավ:

Ամենը, ինչ պատահել էր Պիեռին ապատվելու ժամանակից սկսած՝ մինչև հիվանդությունը, գրեթե ոչ մի տպավորություն չէր թողել նրա վրա: Նա հիշում էր միայն գործ, մոայլ, մերթ անձրևային, մերթ ձյունու եղանակ, ներքին ֆիզիկական թափիծ: ցավ ոտներում, կողում: Հիշում էր մարդկանց դժբախտությունների, տառապանքների ընդհանուր տպավորությունը. Հիշում էր իրեն անհանգստացնող, իրեն հարցուփորձող սպանների, գեներալների հետաքրքրությունը. իր ջանքերը կառք և ձիեր գտնելու, և, գլխավորը, հիշում էր մտածելու և զգալու իր անընդունակությունն այն ժամանակ: Իր ազատվելու օրը նա տեսավ Պետյա Ռուսովի դիակը: Նույն օրը նա

**Իմացավ**, որ իշխան Անդրեյը Բորոդինոյի ճակատամարտից հետո մի ամիս ողջ է եղել և միայն վերջերս է մեռել Յարոսլավ լում՝ Ռոստովին ա:անը: Նույն օրը Դեմիքսովը, որ հաղորդեց այդ նորությումը Պիեռին, խոսակցության մեջ հիշեց էլենի մահվան մասին, ենթարդելով, թե դա վաղուց արդեն հայտնի է Պիեռին: Այդ ամենը Պիեռին այն ժամանակ տարօրինակ թվաց միայն նա զգում էր, որ չէր կարող հասկանալ բոլոր այդ լուրերի նշանակությունը: Նա այն ժամանակ շտապում էր միայն որքան կարելի է շուրջ հեռանալ այդ վայրերից, որ մարդիկ սպասում էին իրար. Հեռանալ մի որևէ խաղաղ ապաւարան և այսուեղ սթափվել, հանգստանալ ու կշռադատել այն ամեն օտարութին ու նորը, ինչ նա իմացավ այդ ժամանակաընթացքում: Բայց հենց որ Օրյոլ եկավ՝ հիվանդացավ: Հիվանդությունից աշը բանալով՝ Պիեռն իր շուրջը տեսավ իր երկու սպասավորներին, որ եկել էին Մոսկվայից, — Տերենտիին ու Վասիլյին, և ափագ իշխանադստեր, որը, ապրելով ելցում, Պիեռի կարգածքում և իմանալով նրա ազատվելու և հիվանդության մասին, եկել էր նրա մոտ՝ նրան խնամելու:

Իր ապաքինման ժամանակ միայն Պիեռը կամաց-կամաց մոռացավ վերջին ամիսներն իր համար սովորական դարձած ապավորությունները և ընտելանում էր այն բանին, որ ոչ ոք վազն իրեն որևէ տեղ չի քշի, որ իր տաք անկողինը ոչ ոք մի խլի և որ ինքը հավանորեն կունենա թե ճաշ, թե թեյ, թե ընթրիք: Բայց երագում նա գեղ երկար իրեն տեսնում էր գերության նույն պայմաններում: Այդպես էլ Պիեռը կամաց-կամաց հասկանում էր այն նորությունները, ինչ իմացել էր գերությունից ազատվելուց հետո. — Իշխան Անդրեյի մահը, կնոջ մահը, ֆրանսացիների ոչնչացումը:

Ազատության ուրախագին զգացումը, — այն լիակատար, անկատելի, մարդուն ներհատուկ ազատության, որի գիտակցությունը նա առաջին անգամ ապրեց առաջին դադարին՝ Մոսկվայից գուրս գալիս, — լցրել էր Պիեռի սիրտը նրա ապաքինության օրերին: Նա զարմանում էր, որ այդ ներքին ազատությունը, որ անկախ է այն արտաքին հանգամանքներից, այժմ կարծես շափից ավելի, փարթամորեն շրջապատվում էր և արտաքին ազատությամբ: Նա մենակ էր օտար բաղաքում,

առանց ծանոթների: Ոչ ոք ոչինչ չէր պահանջում նրանից, նրան որևէ տեղ չէին ուղարկում: Ամենը, ինչ ցանկանում էր, ուներ. առաջ նրան մշտապես տանջող մտքերը կնոջ մասին՝ այլևս չկային, որովհետև արդեն կինն էլ չկար:

— Ա՛խ, որքան լավ է: Որքա՞ն հիանալի, — ասում էր նա իրեն, երբ մոտեցնում էին նրան մաքուր ծածկված սեղանը՝ բուրավիտ մասշրուվ կամ երբ գիշերը պառկում էր փափուկ, մաքուր անկողնում, երբ հիշում էր, որ կինն ու ֆրանսացիք չկան այլեւս: — Ախ, ի՞նչ լավ է, ի՞նչ հիանալի:

Եվ հին սովորությամբ նա հարց էր տալիս իրեն. «Է, հետո ի՞նչ. ի՞նչ պիտի անեմ ես»: Եվ անմիջապես պատասխանում էր իրեն. «Ոչինչ: Պիտի ապրեմ: Ախ, ինչ հիանալի՞ է»:

Այն իսկ բանը, որով նա տանջվում էր առաջ, որը փնտրում էր շարունակ՝ կյանքի նպատակը, այժմ գոյություն չուներ նրա ամար: Կյանքի այդ փնտրվող նպատակը այժմ պատահաբար չէր, որ գոյություն չուներ նրա համար միայն ներկա րոպեին, բայց նա զգում էր, որ դա չկա և չի կարող լինել: Եվ նպատակի այդ իսկ բացակայությունն էր նրան տալիս այն լրիվ, խնդագին գիտակցությունը ազատության, որն այդ ժամանակ կազմում էր նրա երջանկությունը:

Նա չէր կարող նպատակ ունենալ, որովհետև այժմ հավատ ուներ, — ոչ թե հավատ որևէ կարգի կամ խոսքի, կամ մտքի նկատմամբ, այլ հավատ առ կենդանի, միշտ զգացվող աստվածքը: Առաջ նա աստծուն որոնում էր իրեն առաջադրած նրապատակներում: Նպատակի այդ որոնումը որոնումն էր միայն աստծու: Եվ հանկարծ նա իր գերության մեջ իմացավ՝ ոչ թե բառերով, ոչ թե դատողություններով, այլ անմիջական զգացմունքով իմացավ այն, ինչ վազուց արդեն դայակն ասում էր նրան. թե աստված՝ ահավասիկ սա է, այստեղ է, ամենուրեք: Նա գերության մեջ իմացավ, որ աստված Կարառակի մեջ ավելի մեծ է, անսահման ու անհասանելի, քան մուտքուների ճանաշած տիեզերական Արխիտեկտոնի մեջ: Նա ապրում էր զգացումն այն մարդու, որ որոնածը գտել է իր ոտների տակ, այն ժամանակ, երբ լաբում էր տեսազնությունը, նայելով իրենից հեռու և նա իր ամրող կյանքում, շրջապատի մարդկանց գրեթապերեց, նայեամ էր ինչ-որ հեռու տեղ, մինչդեռ հարկա-

վոր էր ոչ թե տեսողությունը լարել, այլ միայն նայել իր առջեց:

Առաջ նա շէր կարողանում մեծը, անհասանելին ու անսահ. մանելին տեսնել ո՛չ մի բանում: Նա զգում էր միայն, որ դա պատք է լինի մի տեղ, ու որոնում էր նրան: Ամեն մի մոտ, հասկանալիք բանում նա տեսնում էր միայն սահմանափակը, մանրը, կենցաղայինը, անիմաստը: Նա զինվում էր մտավոր զիտակով և նայում հեռուն, այնտեղ, ուր այդ մանրը, կենցաղայինը, թաքնվելով մշուշապատ հեռվում, նրան թվում էր մեծ ու անսահման միայն նրա համար, որ պարզ չէր երևում: Այդպէս էր նրան ներկայանում եվրոպական կյանքը, քաղաքականությունը, մասնությունը, փիլիսոփայությունը, մարդասիրությունը: Բայց այն ժամանակ էլ, այն րոպեներին, որ նա համարում էր իր թուլությունը, նրա միտքը թափանցում էր և այդ հեռուն, ու այնտեղ էլ նա տեսնում էր նույն մանրունքը, կենցաղայինը, առօրյան, անիմաստը: Խսկ այժմ նա սովորեց ամեն բանում տեսնել մեծը, մշտնչենականը և անսահմանելին, ուստի և բնական է, որպեսզի նրան տեսներ, վայելիք նրան հայեցությամբ, նա նետեց դիտակը, որով մինչ այժմ նայում էր մարդկանց գլուխների վրայից, և ուրախորեն հայց իր շուրջը մշտնչենապես փոխվող, մշտնչենապես մեծ, անհասանելի ու անսահմանելի կյանքը: Եվ որքան ավելի մոտ էր նայում, նա այնքան ավելի հանգիստ էր ու երշանիկ: Առաջ նրա մտավոր բոլոր կառուցյալքներն ավերող սարսափելիք հարցը՝ ինչո՞ւ, այժմ գոյություն շուներ նրա համար: Հիմա այդ հարցին՝ ինչո՞ւ, նրա հոգում միշտ պատրաստ էր մի պարզ պատասխան: Նրա համար, որ կա ասոված, այն ասովածը, առանց որի կամքի՝ մազ չի ընկնում մարդու գլխից:

### XIII

Պիեռ գրեթե շէր փոխվել իր արտաքին ձեռքով: Արտաքուստ նա ճիշտ նույն էր, ինչ որ առաջ նույնպես, ինչպես և առաջ, նա ցրված էր և թվում էր զբաղված ոչ այն բանով, ինչ աշքերի առաջ էր, այլ ինչ-որ իր, առանձին բանով: Նրա առաջ-

վա և այժմյան կացության տարբերությունը կայանում էր նրանում, որ առաջ, երբ նա մոռանում էր այն, ինչ առջևն էր, այն, ի՞նչ ասում էին, նա ճակատը տառապալից կնճուած, կարծես փորձում էր ու շէր կարողանում տեսնել ինչ-որ մի բան, իրենից հեռու կանգնած: Հիմա նա նույնպես մոռանում էր այն, ինչ ասում էին իրեն, և այն, ինչ առջևն էր: բայց այժմ, հազիվ նկատելի, կարծես հեղանական, ժպիտով ուշադիր նայում էր այն իսկ բանը, ինչ առջևն էր, ուշադիր լսում էր այն, ինչ ասում էին իրեն, թեև, ակներեւ, տեսնում ու լսում էր ինչ-որ բոլորովին այլ բան: Առաջ նա թվում էր թեև բարի մարդ, բայց գժբախտ: Ե այդ պատճառով մարդիկ ակամա հեռանում էին նրանից: Այժմ կյանքի ուրախության ժպիտը շարունակ խաղում էր նրա բերանի շուրջը, և նրա աշքերում փայլում էր կարեկցություն դեպի մարդիկ և մի հարց: արդյոք նրանք նույնպես գո՞հ են, ինչպես և ինքը: Եվ մարդկանց համար հաճելի էր նրա ներկայությամբ:

Առաջ նա շատ խոսում էր, տաքանում էր, երբ խոսում էր, ու սակավ էր լսում: այժմ նա հազվագեց էր տարվում խոսակցությամբ և կարողանում էր լսել այնպես, որ մարդիկ սիրով էին արտահայտում նրան իրենց ամենանվիրական գաղտնիքները:

Իշխանադուստրը, որ երբեք չէր սիրել Պիեռին և դեպ նա առանձին թշնամական զգացմունք էր տածում այն օրից, երբ ծեր կոմսի մահից հետո նա իրեն պարտավորված էր զգում Պիեռին, սրտնեղությամբ ու զարմանքով, կարճատև մնալով Օրյոլում, ուր նա եկել էր դիտավորությամբ ապացուցելու Պիեռին, որ, չնայած նրա ապերախտությանը, ինքը պարտքն է համարում նրան խնամել, իշխանադուստրը շուտով զգաց, որ ինքը սիրում է նրան: Պիեռը ոչ մի բանով չէր շողոքորթում իշխանադուստր բարեհաճությունը: Նա միայն հետաքրքրությամբ դիտում էր նրան: Առաջ իշխանադուստրն զգում էր, որ նրա հայցքում՝ իրեն նայելիս՝ անտարբերություն կար և հեգնանք, և իշխանադուստրը, ինչպես և ուրիշ մարդկանց առջև, կծկվում էր նրա առջեւ ու ցուցադրում միայն իր կյանքի մարտական կողմը: այժմ, ընդհակառակը, իշխանապատրն զգում էր, որ նա կարծես փորփրում էր գտնելու իր՝ իշխանա-

դստեր կյանքի ամեն ամտերմական կողմերը. և իշխանադուստը տըրն սկզբում անվատահությամբ, իսկ հետո երախտագիտությամբ ցուց էր տալիս իր բնավորության թաքցրած լավ կողմերը:

Ամենախորամանկ մարդը շէր կարող ավելի հմտորեն ձեռք բերել իշխանադստեր վստահությունը, հարուցանելով նրա չափելության լավագույն ժամանակների հիշողությունները և համակրանք ցուց տալով նրանց հանդեպ: Մինչդեռ Պիեռի ամբողջ խորամանկությունը կայանում էր միայն նրանում, որ նա փնտրում էր իր բավականությունը, շարացած, չոր և յուրովի հպարտ իշխանադստեր մեջ հարուցանելով մարդկային զգացմունքներ:

— Այո, նա շատ, շատ բարի մարդ է, երբ գտնվում է ոչ թե վատ մարդկանց ազդեցության տակ, այլ այնպիսի մարդկանց, ինչպես ես,— ասում էր իշխանադուստը ինքն իրեն:

Պիեռի մեջ տեղի ունեցած փոփոխությունը յուրովի նըկատեցին և նրա ծառաները — Տերենտին ու Վասիլան: Նրանք գտնում էին, որ նա շատ է հասարակ դարձել: Տերենտին համախ, արագի հագուստները հանելով, նրա կոշիկներն ու զգեստները ձևուին, բարի գիշեր մաղթելով, զանդաղում էր հեռանալ, սուսանով, թե աղան խոսակցություն լի՞ սկսի արդյոք: Եվ մեծ մասամբ Պիեռը կանգնեցնում էր Տերենտին, ասելով, թե ինքը խոսել է ուզում:

— Դե, ասա տեսնեմ... գուք ինչպես ձեզ համար ուտեսնք ճարեցիք, — հարցնում էր նա:

Եվ Տերենտին ակտում էր պատմել Մոսկայի ավերման մասին, հանգուցյալ կոմսի մասին և երկար կանգնած, հագուստը ձեռին, պատմելով, իսկ երբեմն Պիեռի պատմությունները լսելով, հաճելի գիտակցությամբ, որ աղան մոտ է իրեն, քաշվում էր նախասենյակը:

Բժիշկը, որ բուժում էր Պիեռին և յուրաքանչյուր օր այցելում նրան, նայած այն բանին, որ, բժիշկների պարս ականությամբ, իր պարտքն էր համարում ընդունել մի մարդու տեսք, որի յուրաքանչյուր րոպեն թանկ է տառապող մարդկության համար, ժամերով նստում էր Պիեռի մոտ, պատմում իր սիրած

պատմությունները և գիտողությունները առհասարակ հիվանդների և մանավանդ դամաների բնավորության մասին:

— Այս ձեզ պես մարդու հետ խոսելը հաճելի է. այն չէ, ինչ մեզ մոտ գավառում,— ասում էր նա:

Օրյուլում ապրում էին մի քանի գերի ֆրանսացի սպաներ, և բժիշկը բերեց նրանցից մեկին, մի զահել իտալացի սպացի:

Այդ սպան սկսեց զնալ-զալ Պիեռի մոտ, և իշխանադուստը ծիծաղում էր այն քնքուշ զգացմունքների վրա, որ արտահայտում էր իտալացին դեպի Պիեռը:

Իտալացին, ըստ երկույթին, իրեն երցանիկ էր զգում միայն այն ժամանակ, երբ կարող էր զալ Պիեռի մոտ և խոսել ու պատմել նրան իր անցյալի մասին, իր ընտանեկան կյանքի մասին, իր սիրո մասին ու իր զայրությը թափել ֆրանսացիների վրա և մանավանդ նապոլեոնի վրա:

— Եթե բոլոր ոռւսները գեթ փոքր շափով նման են ձեզ,— ասում էր նա Պիեռին,— c'est un sacrilège que de faire la gueule à un peuple comme le vôtre<sup>1</sup>. գուք, որ այնքան տուժել եք ֆրանսացիներից, գուք անգամ ոխ շունեք նրանց հանդեպ:

Եվ իտալացու բուռն սիրուն Պիեռն այժմ արժանացել էր միայն նրանով, որ ինքը նրա մեջ զարթեցրել էր հոգու լավագույն հատկությունները ու հրճվում էր դրանցով:

Օրյուլում գտնվելու վերջին օրերը Պիեռի մոտ եկավ նրա հին ծանոթ մասոնը, կոմս Վիլլարսկին, այն իսկ մարդը, որ 1807 թվին նրան մտցրեց միաբանության մեջ: Վիլլարսկին ամուսնացած էր մի հարուստ ոռւս կնոջ հետ, որը խոշոր կալվածքներ ուներ Օրյուի նահանգում, և քաղաքում ժամանակավոր պաշտոն ուներ պարենավորման բաժնում:

Իմանալով, որ Բեզուխովը Օրյուլումն է, Վիլլարսկին, թեև երբեք թեթևակի էլ ծանոթ չէր նրան, եկավ նրա մոտ բարեկամության ու մոտիկության այն հայտարարություններով, որ անում են սովորաբար միմյանց մարդիկ, անապատւմ հանդիպելով: Վիլլարսկին ձանձրանում էր Օրյուլում և երջա-

<sup>1</sup> Այդ սրբապղծություն է՝ կռվել այնպիսի ժողովրդի հետ, ինչպես գուք եք:

նիկ էր, հանդիպելով մի մարդու, որ իր շրջանից էր և միւնութ, ինչպես ինքն էր կարծում, շահերն ուներ:

Բայց, ի զարմանս իր, Վիլլարսկին նկատեց շուտով, որ Պիեռը շատ էր ետ մնացել խմական կյանքից և ընկել էր, ինչպես նա ինքը բնորոշեց Պիեռին, ապատիայի և էգորիզմի մեջ:

— Vous vous encroûtez, mon cher<sup>1</sup>, — ասում էր նա Պիեռին:

Զնայած դրան, Վիլլարսկուն ավելի հաճելի էր լինել Պիեռի հետ, քան առաջ, և նա ամեն օր լինում էր նրա մոտ: Իսկ Պիեռը, նայելով Վիլլարսկուն և լսելով նրան այժմ, տարօրինակ և անհավատալի էր մտածել, որ ինքը մոտ ժամանակներս այդպիսին է եղել:

Վիլլարսկին ամուսնացած, ընտանիքավոր մարդ էր, զբաղված թե կնոց կալվածքի գործերով, թե ծառայությամբ, թե ընտանիքով: Նա զտնում էր, որ բոլոր այդ զբաղումներն խոչընդոտ են կյանքում և որ դրանք բոլորն արհամարհելի են, որովհետեւ նրանք նստառակ ունեն անձնապես իր և ընտանիքի բարիքը: Ռազմական, վարչական, քաղաքական, մասոնական նկատառումները շարունակ կլանում էին նրա ուշադրությունը: Եվ Պիեռը, շաշխատելով փոխել նրա հայացքը, դատապարտելով նրան, իր, այժմ մշտապես հանդարտ, ուրախ հեգնաքով հրճվում էր այդ տարօրինակ, իրեն այնքան ծանոթ երեւույթի վրա:

Իր հարաբերությունների մեջ՝ Վիլլարսկու հետ, իշխանագութեր հետ, բժշկի հետ, բոլոր մարդկանց հետ, որոնց նա հանդիպում էր այժմ, Պիեռը մի նոր գիծ ուներ, որ արժանաշնում էր նրան բոլոր մարդկանց բարեհաճությանը. դա ընդունումն էր այն հնարավորության, թե յուրաքանչյուր մարդ իրավունք ունի մտածել, զգալ և իրերին նայել յուրովի. ընդունել, թե հնարավոր լէ խոսքերով տարհամոգել մարդկանց յուրաքանչյուր մարդու այդ օրինական առանձնահատկությունը, որ առաջ հուզում և զղայնացնում էր Պիեռին, այժմ կազմում էր հիմքը նրա՝ մարդկանց նկատմամբ ունեցած կարեկցության և հետաքրքրության: Մարդկանց հայացքների տարբերու-

թյունը, երբեմն միանգամայն հակասությունը իրենց կյանքի ու միմյանց հետ՝ ուրախացնում էր Պիեռին և առաջացնում էր նրանում հեգնական ու հեզ մի ժպիտ:

Պրակտիկ գործերում Պիեռն այժմ անսպասելի զգաց, որ ինքն ունի ծանրության կենտրոն, ինչ առաջ չկար: Առաջ յուրաքանչյուր դրամական խնդիր, մանավանդ դրամական խնդրանքներ, որոնց նա որպես շատ հարուստ մարդ ենթարկվում էր շատ հաճախ, գնում էին նրան անել հուզումների ու տարակուսանքների մեջ: Տա՞ր, թե չտալ, — հարցնում էր նա իրեն: — Ես ունեմ, իսկ նրան հարկավոր է: Բաց մի ուրիշին ավելի է հարկավոր: Ո՞ւմ է ավելի հարկավոր: Բայց գուցե երկուսն էլ խարեբաններ են: Ու բոլոր այդ ենթադրություններից նա առաջ որևէ ելք չէր գտնում ու տալիս էր բոլորին, քանի տալու բան կար: Ճիշտ նույնպիսի տարակուսանքի մեջ էր գտնվում նա առաջ իր կարողությանը վերաբերող ամեն մի հարցում, երբ մեկն ասում էր, թե պետք է վարվել այսպես, իսկ մյուսը՝ այլ կերպ:

Այժմ, ի զարմանս իր, նա գտավ, որ բոլոր այդ խնդիրներում չկային այլևս կասկածներ ու տարակույներ: Նրա մեջ այժմ երեաց դատավոր, որ ինչ-որ իրեն իսկ անհայտ-անձանոթ օրենքների համաձայն վճռում էր, թե ի՞նչ պետք է և ի՞նչ շպետք է անել:

Նա առաջվա պես անտարբեր էր դեպի դրամական գործերը. բայց այժմ նա անկասկած գիտեր, թե ի՞նչ պետք է անել և ի՞նչ չպետք է անել: Այդ նոր դատավորի թելադրանքի առաջին գործադրությունը եղավ նրա համար խնդրանքը գերի ֆրանսացի գնդապետի, որն եկավ նրա մոտ, շատ երկար պատմեց իր քաջագործությունների մասին և վերջում գրեթե պահանջ գրեց, որ Պիեռը 4000 ֆրանկ տա իրեն՝ կնոցն ու երեխաններին ուղարկելու համար: Պիեռն առանց փոքր իսկ դժվարության ու լարումի մերժեց նրան, հետագայում զարմանալով, թե որքան պարզ ու հեշտ էր այն, ինչ առաջ թվում էր անլուծելիորեն դժվար: Դրա հետ միասին հենց այլտեղ, գնդապետին մերժելով, նա վճռեց, թե անհրաժեշտ է խորամանկություն գործադրել նրա համար, որպեսզի, Օրյուլից մեկնելիս, ստիպի իտալացի սպային փող վերցնել, որի կարիքը նա, ըստ երկութիւն,

<sup>1</sup> Դուք ընկնում եք, սիրելիս:

զգում էր: Թիեսի համար պրակտիկ գործերի նկատմամբ հաստատուն հայացքի նոր ապացույցն եղավ կնոջ պարտքերի խնդիրը և Մոսկվայի տներն ու ամառանոցները նորոգելու կամ չնորոգելու հարցը վճռելու:

Նրա մոտ՝ Օրյոլ եկավ գլխավոր կառավարի շը, և Պիեռ  
նրա հետ կազմեց իր փոխված եկամուտների ընդհանուր հա-  
շիվը։ Մոսկվայի հրդեհը Պիեռին նստել էր, գլխավոր կառա-  
վարչի հաշվով, մոտ երկու միլիոն։

Գլխավոր կառավարիցը, ի միջիթարություն այդ կորուստ-ների, Պիեռին մի հաշիվ ներկայացրեց այն մասին, թե չնայած այդ կորուստներին, նրա եկամուտները ոչ միայն շեն պակասի, այլ կավելանան, եթե նա հրաժարվի վճարել այն պարտքերը, որ մնացել են կոմսուհուց հետո, մի բան, որին ինքը վեկարող պարտավոր լինել, և եթե նա չնորոգի Մոսկվայի իր աները և մերձմոսկովյան ամառանոցները, որոնք տարեկան նստում էին 80 հազար և ոչ մի եկամուտ՝ էին պեսում:

— Այս, այս, այդ ճիշտ է, — ասավ Պիեռը, ուրախ ժպտալով: — Այս, այս, ինձ ոչինչ հարկավոր չէ դրանցից: Ավերումից ես ավելի շատ եմ հարստացել:

Բայց հունվարին Սավելիլը եկավ Մոսկվայից, պատմեց Մոսկվայի դրության մասին, այն նախահաշվի, որ կազմել էր ճարտարապետը տունը և մերձմոսկովյան ամառանոցը նորոգելու համար, խոսելով այդ մասին, որպես վճռված գործի մասին։ Այդ իսկ միջոցին Պիեռը նամակներ ստացավ իշխան Վասիլիից և ուրիշ ծանոթներից՝ Պետերբուրգից։ Նամակներում խոսվում էր կնոջ պարտքերի մասին։ Եվ Պիեռը վճռեց, որ կառավարչի իրեն այնքան դուր եկած ծրագիրը ճիշտ չէ և որ ինքը պետք է գնա Պետերբուրգ՝ կնոջ գործերը վերջացնի և հաստատվի Մոսկվայում։ Թե ինչ էր այդ պետք, նա չգիտեր, բայց գիտեր անտարակույս, որ դա պետք է։ Նրա եկամուտներն այդ որոշման հետևանքով նվազում էին երեք քառորդով։ Բայց դա պետք էր։ Նա այդ գգում էր։

Վիլլարսկին գնում էր Սոսկվա, և նրանք պայմանավորվեցին գնալ միասին:

Պիեռն իր ապաքինության ամբողջ ժամանակաշն թացքում՝  
Օրյուլում ապրում էր ուրախության, աղատության, կյանքի  
շ.4

զգացում. բայց երբ նա իր ճանապարհորդության ժամանակ իրեն զգաց ազատ աշխարհում, տեսավ հարյուրավոր նոր գեմքեր, այդ զգացումն է՝ լ ավելի ուժեղացավ: Նա ճանապարհորդության ամբողջ միջոցին ապրում էր արծակուրդի մեջ գրանը դպրոցականի ուրախություն: Բոլոր մարդիկ՝ կառապանը, վերակացուն, գյուղացիները ճանապարհին կամ գյուղում, բոլորը նրա համար ունեին նոր իմաստ: Վիլլարսկուն ներկայությունն ու դիտողությունները, որը շարունակ գանգատվում էր Ռուսաստանի աղքատության, Եվրոպայից ետևալու, տգիտության վրա, բարձրացնում էին միայն Պիեռի ուրախությունը: Այնտեղ, ուր Վիլլարսկին տեսնում էր մեռնելություն, Պիեռը տեսնում էր կենսականության անսովոր հզոր ուժ, այն ուժը, որն այդ ծյուների մեջ, այդ տարածության վրա, պահպանում էր այդ ամբողջ, յուրահատուկ և եղակի ժողովրդի կյանքը: Նա Վիլլարսկուն չէր հականառում և, կարծես նրա հետ համաձայնելով (որովհետեւ կեղծ համաձայնությունը ամենակարծ միջոցն էր զանց առնել դատողությունները, որոնցից ոչինչ չէր կարող ստացվել), ուրախ ժպտում էր, նրան լաելով:

XIV

Նույնպես, ինչպես դժվար է բացատրել, թե ինչի՞ համար, ո՞ւր են շտապում մրցյանները իրենց քանդված-ցրված թումբնից. ումանք հեռանում են թմրից, քաշ տալով ազրի կտորիկներ, ձվեր ու մեռած մարմիններ, մյուսները գնում են ետ՝ դեպի թումբը. ինչի՞ համար են նրանք ընդհարվում, վազում հասնում իրար, կովում, նույնպես դժվար կլիներ բացատրել այն պատճառները, որ ոռուս մարդկանց ստիպեցին ֆրանսացիների հեռանալուց հետո խմբվել այն տեղը, որ առաջ կոչվում էր Մոսկվա: Բայց նույնպես, ինչպես, նայելով քանդված թմրի շուրջը ցրված մրցյաններին, չնայած թմրի լրիվ ոչնչացումին, երևում է, ըստ վիստացող միջատների կպչումների առանձին, անհամար լինելու, որ ամեն ինչ կործանված է, բացի անկործանելի, աննյութ մի ինչ-որ բանից, որ կազմում է թումբը:

բնի բովանդակ ուժը, — այնպես էլ Մոսկվան հոկտեմբեր ամսին, չնայած այն բանին, որ կար ոչ իշխանություն, ոչ եկեղեցիներ, ոչ սրբություն, ոչ հարստություններ, ոչ տներ, էր նույն Մոսկվան, ինչպիսին էր օգոստոսին։ Ամեն ինչ քանդված էր, բացի մի ինչոր աննյութ, բայց հզոր ու անկործանելի բանից։

Թշնամուց մաքրելուց հետո ամեն կողմից Մոսկվա ձգտող մարդկանց մղումները շատ բազմազան էին, անձնական և առաջին շրջանում մեծ մասամբ, — վայրագ, կենդանական։ Մի մոււմ միայն ընդհանուր էր բոլորի համար — դա ձգտումն էր այնտեղ, ուն պայմանագիրը, որ առաջ կոչվում էր Մոսկվա, այդտեղ իրենց գործունեությունը կիրարկելու։

Մի շաբաթ հետո Մոսկվայում արդեն 15 հազար բնակիչ կար, երկու շաբաթ հետո 25 հազար և այլն։ Հետզհետե ավելանալով ու ավելանալով, այդ քանակը 1813-ի աշնանը հասավ մի թվի, որ գերազանցում էր 12 թվի բնակչությունը։

Առաջին ուսւ մարդիկը, որ մտան Մոսկվա, Վինցենգինքերոդեի շոկատի կազակներն էին, հարևան շեների գյուղացիները և Մոսկվայից փախած ու նրա շրջակայքում թաքնված բնակիչները, Ավերված Մոսկվան մտած ուսւները, տեսնելով քաղաքը կողոպտված, նույնպես սկսեցին կողոպտել։ Նրանք շարունակեցին այն, ինչ անում էին ֆրանսացիք, Գյուղացիների սայւերը Մոսկվա էին գալիս նրա համար, որ գյուղերը կրեն ամենը, ինչ ընկած էր Մոսկվայի ավերված տներում ու փողոցներում։ Կազակներն իրենց կայաններն էին տանում, ինչ կարողանում էին. տների տերերը հավաքում էին այն բոլորը, ինչ գտնում էին ուրիշ տներում, և տանում էին իրենց այն պատրվակով, թե դա իրենց սեփականությունն է եղել։

Բայց առաջին կողոպտիչների հետեւ եկան ուրիշները, երրորդները, և կողոպուտն օրեցօր, կողոպտիչների ավելանալու համեմատ, դառնում էր ավելի ու ավելի դժվարին և ընդունում առավել որոշակի ձևեր։

Ֆրանսացիները Մոսկվան գտան թեև դատարկ, բայց օրգանապես կանոնավոր ապրող քաղաքի բոլոր ձևերով, տարրեր գործունեությամբ՝ առեստի, արհեստների, պերճանքի, պետական կառավարման, կրոնի տարրեր. գործունեությամբ։

Այդ ձևերն անկենդան էին, բայց տակավին գոյություն ունեին։ Կային խանություններ, մագազիններ, ալրանոցներ, շուկաներ, — մեծ մասամբ ապրանքներով. կային գործարաններ, արհեստանոցներ, կային պալատներ, հարուստ տներ՝ լիքը պերճանքի առարկաներով. կային հիվանդանոցներ, բանտեր, ատենատներ, եկեղեցիներ, տաճարներ։ Որքան երկար էին մնում ֆրանսացիք, այնքան ավելի ուշնանում էին քաղաքացին կյանքի այս ձևերը, և ի վերջո ամեն ինչ միաձուլվեց գարձավ կողոպուտի մի անբաժանելի, անկենդան ասպարեզ։

Ֆրանսացիների կողոպուտը որքան ավելի էր շարունակվում, այնքան ավելի շատ էր ավերում քայլայում Մոսկվայի հարստությունները և կողոպտիչների ուժերը։ Ռուսների կողոպուտը, որով սկսվեց մայրաքաղաքի գրավումը ուսւների կողմից, որքան երկար էր շարունակվում, որքան շատ մարդ էր մասնակցում դրան, այնքան ավելի շուտ էր վերականգնում նա Մոսկվայի հարստությունը և քաղաքի կանոնավոր կյանքը։

Կողոպտիչներից բացի, ամենատարրեր տեսակի մարդիկ, մղված ո՞րը հետաքրքրությունից, ո՞րը ծառայության պարտականությամբ, ո՞րը հաշվով, — տնատերեր, հոգևորականություն, բարձրագույն և ստորին շինուալիկներ, առեարականներ, գյուղացիներ, — ամեն կողմից, ինչպես արյունը դեպի սիրտը, հոսում էր դեպի Մոսկվա։

Մի շաբաթ հետո արդեն գյուղացիներին, որ դատարկ սայւերով եկել էին իրեր տանելու, իշխանությունը կանգնեցրեց և հարկադրեց, որ մեռած մարմինները կրեն քաղաքից։ Ուրիշ գյուղացիներ, լսելով ընկերների անհաջողության մասին, գալիս էին քաղաք՝ հետները րերելով հաց, վարսակ, խոտ, ու միմյանց գներն իշեցնում էին առաջական գներից ավելի ցած։ Հյուսների արտեները, բարձր վաստակի հույսով, յուրաքանչյուր օր մտնում էին Մոսկվա, և ամեն կողմ շինվում էին նոր և նորոգվում հին, այրված տները։ Վաճառականները հոլիկներում առետուր էին սկսել։ Ճաշարաններ, իշեաններ էին սարքվել վառված տներում։ Հոգևորականությունը վերսկսեց ժամերգությունը բազմաթիվ շայրված եկեղեցիներում։ Նըմիրատունները բերում էին կողոպտիված եկեղեցական սպասքներ։ Զինվորներն իրենց մահուդով ծածկված սեղանները և

**Թղթերով** լի պահարանները հարմարեցնում էին փոքրիկ սենյակներում: Բարձրագույն իշխանությունը և ոստիկանությունը կարգադրում էին ֆրանսացիներից հետո մնացած բարիքի բաշխումը: Այն տների տերերը, որոնց մեջ շատ էր թողնված առ տներից բերված իրեր, գանգատվում էին, թե անարդարացի կերպով բոլոր իրերը կրում են ֆրանսովիտի պալատը, մյուսները պնդում էին, թե ֆրանսացիները տարրեր աներից իրերը կրել են մի տեղ, ուստի անարդար է տնաատիրոջը տալ այն իրերը, որ գտնվել են նրա մոտ: Հայրոյում էին ոստիկանությանը. կաշառում էին նրան. տասնապատիկ հաշիվներ էին գրում այլիս արքունական իրերի համար. պահանջում էին նպաստ: Կը մս Ռաստուկչինը գրում էր իր թոռոցիկ-կոչերը:

## ХV

Հունվարի վերջում Պիեռն եկավ Մոսկվա և տեղավորվեց իր տան անվնաս մնացած թևակրում: Նա այցելեց կոմս Ռաստոպչինին, Մոսկվա վերադարձած մի քանի ժանոթների, և պատրաստվում էր Յ-րդ օրը մեկնել Պետերբուրգ: Բոլորը հաղթանակ էին տոնում. ամեն ինչ եռուն կյանք էր ապրում ավերված ու կենդանացող մայրաքաղաքում: Բոլորն ուրախ էին Պիեռի համար. բոլորը ցանկանում էին տեսնել նրան և բոլորը հարցուիրծ էին անում նրան, թե ինչ է տեսել: Պիեռն իրեն առանձնապես բարեկամաբար տրամադրված էր զգում դեպի բոլոր մարդիկ, որոնց հանդիպում էր. բայց այժմ նա իրեն ակամա զկույց ու զգաստ էր պահում բոլոր մարդկանց հետ, այնպես, որպեսզի որևէ բանով իրեն չկապի: Նա բոլոր հարցումներին, որ անում էին իրեն՝ կարևոր թե չնշն — կամ թե հարցնում էին՝ որտե՞ղ է ապրելու. տո՞մ է շինելու արդյոք. ե՞րբ է մեկնում Պետերբուրգ և հանձն լի՝ առնի արգուք հետք մի փոքրիկ արկղ տանել: — Նա պատասխանում էր. այս, զուցե, և կարծում եմ և այլն:

Ոստովների մասին նա լսեց, որ նրանք կոտրումայտան են, և նատաշան շատ թիշ էր միտն ընկնում: Եվ եթե միտն կը քննին, միայն որպես վաղուց անցածի հաճելի հիշողություն:

Նա իրեն ոչ միայն ազատ էր զգում առօրյա պայմաններից, այլև այդ զգացումից, որն, ինչպես նրան թվում էր, դիտավորյալ կերպով էր ձևացնում, թե ունի:

Մոսկվա գալու երրորդ օրը նա իմացավ Դրուեցկոյներից, որ իշխանադուստր Մարիան Մոսկվայումն է: Իշխան Անդրեյի մահը, տանջանքները և վերջին օրերը հաճախ էին զբաղեցնում Պիեռին, և այժմ, նոր կենդանությամբ պատկերացան նրան: Ճաշի միջոցին իմանալով, որ իշխանադուստր Մարիան Մոսկվայումն է և ապրում է Վզդվիժենկայի վրա գոնզող իր շարված տանը, նա նույն երեկո գնաց իշխանապատեր մոտ:

Իշխանադուստր Մարիայի մոտ գնալիս՝ ճանապարհին Պիեռը շարունակ մտածում էր իշխան Անդրեյի մասին, նրա հետ ունեցած բարեկամության, նրա հետ ունեցած տարբեր հանդիպումների և մանավանդ վերջին հանդիպման մասին, որ տեղի ունեցավ Բորոդինոյում:

«Մի՛թե նա մեռել է այն շարացած տրամադրությամբ, որ ուներ այն ժամանակ: Մի՛թե մահից առաջ նրան լի պարզվել կյանքի բացատրությունը», — մտածում էր Պիեռը: Նա հիշեց Կարատակին, նրա մահը, և ակամա սկսեց համեմատել արդեմու մտադիանց, որ այնքան տարբեր էին և միաժամանակ այնքան նման այն սիրով, որ ինքը տածում էր դեպի նրանց, և նրանով, որ երկուսն էլ ապրում էին և երկուսն էլ մեռան:

Ամենալուրջ տրամադրությամբ Պիեռը մոտեցավ ծեր իշխանի տանը: Այդ տունն անվնաս էր մնացել: Կային այնտեղ ավերման հետքեր, բայց տան ընույթը նույնն էր: Պիեռին դիմավորող խիստ զեմքով ծերունի սպասավորը կարծես ցանկանում էր հյուրին զգացնել տալ, թե իշխանի բացակայությունը չի խախտում տան կարգը, ասավ, թե իշխանադուստրը բարեհաճել է անցնել իր սենյակները և ընդունում է կիրակի օրերը:

— Հայտնիր. գուցե՝ ընդունում է, — ասավ Պիեռը:

— Լուս եմ, — պատասխանեց սպասավորը, — Համեցեք պատկերասրահը:

Մի քանի րոպե անց Պիեռի մոտ եկան սպասավորն ու Դեսալը: Դեսալն իշխանադուստր անունից հայտնեց. Պիեռին, որ իշխանադուստրը շատ ուրախ է տեսնել նրան և խնդրում

է, եթե նա կների իշխանադստերն անքաղաքավարության համար, բարձրանալ վեր՝ նրա սենյակները:

Ցածր գողքիկ սենյակում, որը լուսավորված էր մի մոմով, նստած էր իշխանադուստրը և էլի մեկը նրա հետ, սև հագուստով: Պիեռը հիշեց, որ իշխանադստեր մոտ միշտ ընկերուհիներ են լինում, բայց թե ովքեր էին այդ ընկերուհիները, Պիեռը զիտեր է լին հիշում: Այս ընկերուհիներից մեկն էս,— մտածեց նա, նայելով սևազգեստ կնոջը:

Իշխանադուստրն արագ վեր կացավ նրան դիմավորելու և ձեռը մեկնեց:

— Այո,— ասավ իշխանադուստրը, նայելով Պիեռի գողք գեմքին, նրանից հետո, երբ նա համբուրեց իր ձեռը, — ա՛յ ինչպես ենք մենք հանդիպում իրար: Նա վերջին ժամանակ ներս էլ հաճախ էր խոսում ձեր մասին, — ասավ նա, աշբերը Պիեռից դարձնելով ընկերուհուն մի ամոթիսածությամբ, որը վայրկենապես զարմացրեց Պիեռին:

— Ես այնքան ուրախացա, իմանալով ձեր գրկելու մասին: Դա միակ ուրախալի լուրն էր, որ մենք ստացանք վաղոցի վեր:

Նորից իշխանադուստրն ավելի եւ անհանգիստ նայեց. իր ընկերուհուն և ուզեց ինչ-որ ասել. բայց Պիեռն ընդհատեց նրան:

— Կարող եք երեակայել, որ ես ոչինչ շգիտեի նրա մասին,— ասավ նա: — Ես նրան համարում էի սպանված: Բարդը, ինչ իմացա, իմացա ուրիշներից, կողմանից մարդկանցից: Դիտեմ միայն, որ նա ընկել էր Ռուսական մատուցության մեջ մակատագիր:

Պիեռը խոսում էր արագ, աշխատավարեն նայեց մի անգամ ընկերուհու գեմքին. տեսավ նրա՝ իր վրա հառած ուշադիր-սիրալիր, հետաքրքիր հայացքը և, ինչպես այդ հաճախ է լինում խոսակցության մեջ, Պիեռը շգիտես ինչո՞ւ զգաց, որ այդ սեփազգեստ ընկերուհին դուրեկան, բարի, հրաշալի էսկ է, որը չի խանգարի իր սրտակից զրույցն իշխանադուստր Մարիայի հետ:

Բայց երբ Պիեռն իր վերջին խօսքերն ասավ Ռուսական մասին շփոթությունն իշխանադուստր Մարիայի գեմքին ար-

տահայտվեց ավելի սաստիկ: Իշխանադուստրն աշքերը նորից Պիեռի գեմքից արագորեն գցեց սեազգեստ կնոջ երեսը և ասավ. — Մի՞թե չեք ճանաշում:

Պիեռը մի անգամ էլ նայեց ընկերուհու նուրբը, սև աշքերով և տարօրինակ բերանով գեմքին: Ինչ-որ հարազատ, վաղուց մոռացված և ավելի քան դուրեկան մի բան էր նայում իրւն այդ ուշադիր աշբերից:

«Բայց ոչ, այդ չի կարող լինել,— մտածեց նա: — Այս խիստ, նիշար և գունատ, ծերացած գեմքը: Սա չի կարող նա՝ լինել: Սա միայն հիշողությունն է նրաց: Բայց այդ ժամանակ իշխանադուստր Մարիան ասավ. «Նատաշան»: Եվ ուշադիր աշքերով գեմքը դժվարությամբ, ճիգով, ինչպես բացվում է ժանգոտած դուրը, ժպտաց, և այդ բացված դոնից հանկարծ բուրեց ու Պիեռին ողողեց վաղուց մոռացված այն երջանկությունը, որի մասին, մանավանդ այժմ, նա չէր մտածում: Բուրեց, համակեց նրան ու կլանեց ամրողովին: Երբ նա ժպտաց, այլևս կասկած չէր կարող լինել. դա նատաշան էր, և Պիեռը սիրում էր նրան:

Առաջին խոկ բոպեկին Պիեռն ակամա թե՛ նրան, թե՛ իշխանադուստր Մարիային և, գլխավորը, ինքն իրեն ասավ իրւն իսկ անհայտ գաղտնիքը: Նա կարմրեց ուրախորեն և տառապագին-ցավագնորեն: Նա ուզեց թաքցնել իր հուզումը: Բայց որքան ավելի էր ուզում թաքցնել այն, այնքան ավելի պարզ էր, — ամենաորշակի խոսքերից ավելի պարզ: — Նա իրեն և նատաշային, և իշխանադուստր Մարիային ասավ, որ ինքը սիրում է նրան:

«Ու, սա այնպես, անսպասելիությունից էս,— մտածեց Պիեռը: Բայց հենց որ ուզեց սկսած զրույցը շարունակել իշխանադուստր Մարիայի հետ, նա նորից նայեց նատաշային, և էլ ավելի սաստիկ մի կարմրություն ծածկեց նրա գեմքը և ուրախության ու երկյուղի էլ ավելի ուժգին մի հուզում համակեց նրա սիրությունը: Նա բառերը շփոթեց, խճճվեց ու կանգ առավ խոսքի կիսին:

Պիեռը նատաշային շնկատեց, որովհետև բնավ չէր սպասում, թե նրան կտեսնի այստեղ, բայց նա շճանաշեց նատաշային այն պատճառով, որ իր տեսնելուց հետո նրա մեջ կա-

Մարդկած փոփոխությունը հսկայական էր: Նատաշան նիհարել էր և գունատվել: Բայց ա'յդ չէր նրան անճանաչելի դարձնողը. նրան չէր կարելի ճանաչել առաջին բոպեին, երբ նա մտավ, այն պատճառով, որ այդ գեմքին, որի աշքերում առաջ փայլում էր միշտ կենսուրախության թաքուն ժակիտը, այժմ, երբ Պիեռը ներս մտավ և առաջին անգամ նայեց նրան, ժակիտ սովոր անգամ շկար. աշքերն էին միայն՝ ուշադիր, բարի և աւրագին-հարցական:

Պիեռի շփոթությունը շանդրադարձավ նատաշայի վրա՝ շփոթությամբ, այլ միայն բավականությամբ, որ հազիվ նրա կատելի լուսավորեց նատաշայի ամբողջ գեմքը:

## XVI

— Նա եկել է ինձ մոտ հյուր, — ասավ իշխանադուստր Մարիան: — Կոմսն ու կոմսուհին կզան օրերս: Կոմսուհին սարսափելի դրության մեջ է: Բայց նատաշան ինքը պետք է տեսներ բժիշկին: Նրան զոռով ուղարկեցին ինձ հետ:

— Բայց կա՝ արդյոք մի ընտանիք, որ վիշտ չունենա, — ասավ Պիեռը, դիմելով նատաշային: — Գիտե՞ք ինչ եղավ այն իսկ օրը, երբ մեզ ազատեցին: Ես տեսա նրան: Ի՞նչ հիանալի տղա էր:

Նատաշան նայեց Պիեռին, և նրա խոսքերին ի պահասխան նրա աշքերը միայն ավելի բացվեցին ու փայլեցին:

— Ի՞նչ կարելի է ասել կամ մտածել միխթարելու համար, — ասավ Պիեռը: — Ոչինչ: Ինչո՞ւ պետք է մնոներ մի այդպես շքնաղ, կյանքով լեցուն տղա:

— Այո, մեր օրերում դժվար կլիներ ապրել առանց հավատի... — ասավ իշխանադուստր Մարիան:

— Այո, այո: Այ դա զուա ճշմարտություն է, — հապել պընդատեց Պիեռը:

— Ինչո՞ւ, — հարցրեց նատաշան, ուշադիր նայելով Պիեռի աշքերին:

— Ինչպե՞ս թե ինչու, — ասավ իշխանադուստր Մարիան: — Այն միտքը միայն, թե ի՞նչ է սպասում այնտեղ...

Նատաշան, մինչև վերջը շլսելով իշխանադուստր Մարիան, նորից հարցականորեն նայեց Պիեռին:

— Նրա համար, — շարունակեց Պիեռը, — որ միայն ա յն մարդը, որը հավատում է, թե կա մեզ կառավարող աստված, կարող է տանել այնպիսի կորուստ, ինչպես նրանք և... ձերը, — ասավ Պիեռը:

Նատաշան բերանը բացեց արդեն, կամենալով ինչոր բան ասել, բայց հանկարծ կանգ առավ: Պիեռն շտապեց երեսը շրոշել նրանից և դիմեց իշխանադուստր Մարիային, հարցնելով իր բարեկամի վերջին օրերի մասին:

Պիեռի շփոթությունն այժմ գրեթե լքացել էր. բայց դրա հետ միասին նա զգում էր, որ լքացել է ամբողջ իր առաջիկան ազատությունը: Նա զգում էր, որ իր լուրաքանչուուր խոսքի, գործողության վրա կա դատավոր, դատաստան, որը նրա համար բոլոր մարդկանց դատաստանց ավելի թանկ է աշխարհում: Նա խոսում էր հիմա և իր խոսքերի հետ միասին կշագատում այն տպավորությունը, որ թողնելու էին իր խոսքերը նատաշայի վրա: Նա դիտմամբ չէր ասում ա'յն, ինչ կարող էր նատաշային դուր գալ. բայց ինչ էլ ասում էր՝ նա նատաշայի տեսակետից էր դատում իրեն:

Իշխանադուստր Մարիան դժկամությամբ, ինչպես այդ միշտ լինում է, սկսեց պատմել այն կացությունը, որի մեջ գտել էր իշխան Անդրեյին: Բայց Պիեռի հարցումները, նրա եռանդուն անհանգիստ հայացքը, նրա հուզումից զողացող գեմքը կամաց-կամաց ստիպեցին իշխանադստեր մտնել մանրամասնությունների մեջ, որոնք վախենում էր նա նորոգել իր երևակայության մեջ:

— Այո, այո, այդպես, այդպես... — ասում էր Պիեռը, ամբողջ մարմնով իշխանադուստր Մարիայի վրա կոացած և ագահությամբ լսելով նրա պատմությունը: — Այո, այո, այդպես նա հանգստացա՞վ. մեղմացա՞վ: Նա այնպես հոգու ամրող կարողությամբ մի բան էր փնտրում. լինել կատարելապես լավ, որ նա մահից չէր կարող վախենալ: Նրա այն պակասությամները, որ կային նրա մեջ — եթե դրանք կային — երենից չին բխում: Ուրեմն նա մեղմացա՞վ, — ասում էր Պիեռը: — Ի՞նչ երշանկություն, որ նա տեսնվեց ձեզ հետ, — ասավ նա

Նատաշային, հանկարծ դառնալով գեպի նա ու նայելով նրան արցունքով լի աշբերով:

Նատաշայի գեմքը ցնցվեց: Նա հոնքերը կիտեց և մի վայր կյան աշբերը խոնարհեց: Մի րոպե նա տատանվեց. խոսել թե շխոսել:

— Այո, դա երջանկություն էր, — ասավ նա հանդարտ կրծքային ձայնով. — ինձ համար անշուշտ երջանկություն էր, նատաշան լոեց: — Եվ նա... նա... նա ասավ, որ ինքն այդ ցանկանում էր այն րոպեին, երբ ես եկա նրա մոտ...

Նատաշայի ձայնը կտրվեց: Նա շառագունեց, ձեռները սեղմեց ծիների վրա և հանկարծ, երևում է, չանք գործ զնելով իր վրա, գլուխը բարձրացրեց և սկսեց արագորեն խոսել.

— Մենք ոչինչ չգիտեինք, երբ մեկնեցինք Սոսկվայից, ես չէի համարձակվում հարցնել նրա մասին: Եվ հանկարծ Սոնյան ինձ ասավ, թե նա մեզ հետ է: Ես ոչինչ չէի մտածում, չէի կարողանում պատկերացնել, թե ի՞նչ կացության մեջ է. ինձ հարկավոր էր միայն նրան տեսնել, լինել նրա հետ, — ասում էր նատաշան, դողալով ու շնչահատվելով:

Եվ, թույլ շտալով ընդհատել իրեն, նա պատմեց այն, ինչ երբէք ոչ ոքի չէր պատմել. այն բոլորը, ինչ նա ապրել էր իրենց ճանապարհորդության և Յարոսլավի կյանքի երեք շաբաթվա մեջ:

Պիեռը լսում էր նրան բերանաբաց, չհեռացնելով նրանից իր արցունքակալած աշբերը: Նատաշային լսելով՝ նա չէր մըտածում ոչ իշխան Անդրեյի մասին, ոչ մահվան մասին, ոչ էլ այն մասին, ի՞նչ նա էր պատմում: Նա լսում էր նատաշային և միայն խղճում նրան այն տառապանքի համար, որ ապրում էր այժմ, պատմելով:

Իշխանադուստրը, արցունքները զապելու ցանկությունից կնճռած գեմքով, նստել էր նատաշայի կողքին ու լսում էր առաջին անգամ եղբոր վերջին օրերի սիրո պատմությունը:

Այդ տառապալից և ուրախ պատմությունն, ըստ երկութին, անհրաժեշտ էր նատաշայի համար:

Նա խոսում էր, ամենաանշան մանրամասնությունները խառնելով ամենամտերմական գաղտնիքների հետ, և, թվում

էր, երբեք չէր կարող վերջացնել: Նա մի քանի անգամ կրկնեց նույնը:

Պոան հետևից լսեց Պիեռի ձայնը, որ հարցնում էր, թե նիկոլուշկան կարո՞ղ է մտնել հրաժեշտ տալ:

— Ահա և բոլորը, բոլորը... — ասավ նատաշան:

Նա արագ վեր կացավ այն ժամանակ, երբ ներս էր մտնում նիկոլուշկան, ու գրեթե վագեց գեպի դուռը, գլուխը դիպցրեց վարագույրով ծածկված դուանը, և զգիտես ցավի, թե վշտի հեծանքով դուրս վագեց սենյակից:

Պիեռը նայում էր այն դռանը, որով դուրս եկավ նատաշան, ու չէր հասկանում, թե ինչո՞ւ ինքը հանկարծ մենակ մնաց ամրող աշխարհում:

Իշխանադուստրը Մարիան հանեց նրան ցրվածությունից, հրավիրելով նրա ուշադրությունը եղբոր որդու վրա, որ մտել էր սենյակի:

Նիկոլուշկայի գեմքը, որ շատ նման էր հորը, սրտի փափկության այդ վայրկյանին, որի մեջ գտնվում էր Պիեռն այժմ, այնպես ազդեց նրա վրա, որ Պիեռը նիկոլուշկային համբուրելով, հապճեպ վեր կացավ և, թաշկինակը հանելով, գնաց գեպի լուսամուտը: Նա ուզեց հրաժեշտ տալ իշխանադուստրը Մարիային, բայց իշխանադուստրը պահեց նրան:

— Ոչ, ես ու նատաշան երբեմն մինչև ժամը երեքը շենք քնում: ինդրեմ, նստեցեք: Ես կկարգադրեմ ընթրիք տան, Գնացեք ներքեն, մենք հիմա կգանք:

Նախքան Պիեռը դուրս կգար՝ իշխանադուստրն ասավ նըրան:

— Այս առաջին անգամն էր, որ նա այսպես խոսեց նրա մասին:

## XVII

Պիեռին առաջնորդեցին լուսավորված ընդարձակ սեղանատունը. մի քանի րոպեից լսվեցին քայլեր, և իշխանադուստրն ու նատաշան մտան սենյակ: Նատաշան հանգիստ էր, թեև խիստ, անժպիտ արտահայտությունը նորից բռնել էր նրա

դեմքը: Ի՞ի անաղուստը Մարիան, Նատաշան ու Պիեռը միաս տեսակ ապրում էին անհարմարության այն զգացումը, որը Շեանում է սովորաբար լուրջ և սրտագին վերջացած զրուցին: Շարունակել նախկին խոսակցությունը անկարելի է, խոսել չելին բաների մասին — անհարմար է, իսկ լուելը անախորժ, որուի հետեւ ուզում ես խոսել, իսկ այդ լուությամբ կարծես կեղծում ես: Նրանք անխոս մոտեցան սեղանին: Սպասավորները ետք բաշխեցին և մոտեցրին աթոռները: Պիեռը սառն անձեռն ցիկ բանալով և, որոշելով լուությունը խգել, նայեց Նատաշային ու իշխանադրուստը Մարիամին: Ենկուսն էլ, ակնհայտորեն, մինոււն ժամանակ որոշել էին անել նույնը, երկուսի աշերում էլ փայլում էր կյանքի գոհությունը և այն բանի ընդունումը, թե բացի վշտից, և ան և ուրախություններ:

— Դուք օդի խմո՞ւմ եք, կոմս, — ասավ իշխանադրուստը Մարիան, և այդ բառերը հանկարծ ցրեցին տարան անցյալի ստվերները:

— Պատմեցեք մի ձեր մասին, — ասավ իշխանադրուստը Մարիան, — ձեր մասին այնպիսի անհավատալի հրաշքներ են պատմում:

— Այո, — իր, այժմ սովորական դարձած, հեղ հեգնաքի ժամանակում պատասխանեց Պիեռը: — Հենց ինձ պատմում են այնպիսի հրաշքներ, որ ես երազումս էլ շեմ տեսել: Մարիա Սրբամովնան ինձ հրավիրեց իր մոտ և բոլորը պատմեց ինձ, թե ի՞նչ է պատահել ինձ կամ ինչ պիտի պատահեր: Ստեպան Ստեպանիշը նույնպես սովորեցրեց ինձ, թե ինչպես պիտի ես պատմեմ: Սոհասարակ նկատեցի, որ հետաքրքրական մարդ մինելը շատ հանգիստ բան է (ես հիմա հետաքրքրական մարդ եմ). ինձ կանչում են և ինձ պատմում:

Նատաշան ժգտաց և ուզեց ինչ-որ բան ասել:

— Մեզ պատմել են, — ընդհատեց նրան իշխանադրուստը Մարիան, — որ դուք Մոսկվայում երկու միլիոնի կորուստ եք ունեցել: Ճի՞շտ է:

— Բայց ես երեք անգամ ավելի հարստացել եմ, — ասավ Պիեռը:

Պիեռը, շնայած այն բանին, որ կնոջ պարտքերը և կառուցումների անհրաժեշտությունը փոխել էին նրա գործերը, շա-

րունակեց պատմել, որ ինքը դարձել է երեք անգամ ավելի հարուստ:

— Ինչ որ ես շահել եմ անկասկած, — ասավ նա, — զա ազատությունն է... — սկսեց նա լուրջ, բայց միտքը փոխեց այդպես շարունակել, նկատելով, որ դա շափազանց եսասիրական նյութ է խոսակցության:

— Իսկ դուք նորոգում կատարո՞ւմ եք:

— Այո, Սավելիշը հրամայում է:

— Ասացեք, դուք դեռ զգիտե՞իք կոմսուհու մահը, երբ մնացիք Մոսկվայում, — ասավ իշխանադրուստը Մարիան և անմիջապես էլ շառագունեց, նկատելով, որ այդ հարցումն անելով նրա այն խոսքերից հետո, թե նա ազատ է, ինքը նրա խոսքերին վերագրում է այնպիսի նշանակություն, որը նրանք, թերևս, չունեին:

— Ոչ, — պատասխանեց Պիեռը, ակներև, անհարմար լը-ցտնելով այն մեխությունը, որ տվեց իշխանադրուստը իր ազատության հիշեցումին: — Ես այդ իմացա Օրյոլում, և երեսկայել շեք կարող, ինչպես այդ շանթահարեց ինձ: ՄԵՇ օրինակելի ամուսիններ չենք, — ասավ նա արագ, նայելով նատաշային և նկատելով նրա դեմքին հետաքրքրություն, թե ինչպես է ինքն արտահայտվում իր կնոջ մասին: — Բայց այդ մահն ինձ սաստիկ շանթահարեց: Երկու մարդ կովում են, — երկուսն էլ միշտ մեղավոր են: Եվ սեփական մեղքը հանկարծ ծանրանում է սարսափելի հանդեպ այն մարդու, որն այլևս չկա: Եվ հետո, այդպիսի մահ... առանց բարեկամների, առանց միխթարանքի: Ես շատ, շատ ցավում եմ նրա համար, — վերշացրեց նա և բավականությամբ նատաշայի դեմքին ուրախ հավանություն նկատեց:

— Այո, հիմա դուք նորից ամուրի եք և փեսացու, — ասավ իշխանադրուստը Մարիան:

Պիեռը հանկարծ կաս-կարմրեց և երկար աշխատում էր նատաշային շնայել: Երբ վճռեց նայել՝ նատաշայի դեմքը սառն էր, իսկատ և անգամ արհամարհական, ինչպես թվաց Պիեռին:

— Բայց դուք իրո՞ք տեսել և խոսել եք նապոլեոնի հետ, ինչպես մեզ պատմեցին, — ասավ իշխանադրուստը Մարիան:

Պիեռը ծիծաղեց:

— Ոչ մի անգամ, երբեք! Միշտ բոլորին թվում է, թե գերության մեջ լինել՝ նշանակում է հյուր լինել նապոլեոնի մոտ: Ես ոչ միայն շեմ տեսել նրան, այլև շեմ լսել նրա մասին: Ես շատ ավելի փառ հասարակության մեջ էի:

Ընթրիքը վերջանում էր, և Պիեռը, որ սկզբում հրաժարվում էր պատմել իր գերության մասին, կամաց-կամաց տարկեց այդ պատմությամբ:

— Բայց ճիշտ է, չէ՞ս, որ դուք մնացել էիք, որպեսզի սպանիք նապոլեոնին,— հարցրեց նատաշան, թեթևակի ժպտալով:— Ես այն ժամանակ գլխի ընկա, երբ մենք հանդիպեցինք Սուխարեկի աշտարակի մոտ. Հիշո՞ւմ եք:

Պիեռը խոստովանեց, որ այդ ճիշտ է, և այդ հարցումից կամաց-կամաց, իշխանադուստր Մարիայի և մահավանդ նատաշայի հարցումներով ղեկավարվելով, մտավ իր արկածների մանրամասն պատմության մեջ:

Սկզբում նա պատմում էր այն հեգնական, հեզ հայացքով, որ ուներ ինքն այժմ մարդկանց նկատմամբ և մանավանդ իր իսկ նկատմամբ. Բայց հետո, երբ նա հասավ իր տեսած սարսափների ու տառապանքների պատմելուն, նա, ինքն էլ այդ չնկատելով, հափշտակվեց և սկսեց խոսել մի մարդու զուսպ հոգումով. որ հիշողությամբ վերապրում է ծանր տպավորություններ:

Իշխանադուստր Մարիան հեզ ժպիտով նայում էր մերթ Պիեռին, մերթ նատաշային: Նա ամբողջ այդ պատմածի մեջ տեսնում էր միայն Պիեռին և նրա բարությունը: Նատաշան, թեին կոճնած, պատմության հետ միասին շարունակ փոխվող դեմքի արտահայտությամբ, մի վայրկյան իսկ շկտրվելով, հետևում էր Պիեռին, ըստ երեսութին, նրա հետ միասին ապրելով այն, ինչ նա պատմում էր: Ոչ միայն նատաշայի նայվածքը, այլ բացականչություններն ու կարճ հարցումները, որ անում էր նա, ցույց էին տալիս Պիեռին, թե այն բանից, ինչ պատմում էր ինքը, նատաշան հենց այն էր հասկանում, ինչ ինքը ցանկանում էր հաղորդել: Երեսում էր, որ նատաշան հասկանում էր ոչ միայն այն, ինչ նա պատմում էր, այլև այն, ինչ նա կուգեր, բայց չէր կարողանում արտահայտել բառերով:

Իր՝ երեխայի և կնոջ (որոնց պաշտպանելու համար նա բոնը-վեց) էպիգոնի մասին Պիեռը պատմեց այսպես. «Դա մի սարսափելի տեսարան էր, երեխաները թողնված, ոմանք կրակի մեջ... իմ ներկայությամբ դուրս հանեցին մի երեխա... կանայք, որոնցից թողնում էին իրերը, պոկում էին ականջօղերը», Պիեռը կարմրեց և կմկմաց:

— Այստեղ վրա հասավ հեծյալ պահակախումբը և նրանց բոլորին, ովքեր չին կողոպտում, բուրու տղամարդկանց տարան: Եվ ինձ:

— Դուք, երիի բոլորը չեք պատմում. դուք, երկի, մասնիք, ասավ նատաշան ու լոեց, — լավ բան եք արել:

Պիեռը շարունակեց պատմել. երբ պատմում էր մահապատճի մասին՝ ուզեց զանց առնել սարսափելի մանրամասնությունները. բայց նատաշան պահանչեց, որ նա բաց շթողի ոչ մի բան:

Պիեռն սկսեց պատմել Կարատակի մասին (նա արդեն վեր էր կացել սեղանից ու գնում-գալիս էր, նատաշան հետեւում էր նրան աշքերով) և կանգ առավ:

— Ոչ, դուք չեք կարող հասկանալ, թե ես ի նշ սովորեցի այդ անգրագետ մարդուց, այդ հիմարուկից:

— Այս, ոչ, իսպատեցելք, — ասավ նատաշան:— Իսկ ո՞ւր է նա:— Նրան սպանեցին, համարյա իմ ներկայությամբ:

Եվ Պիեռն սկսեց պատմել իրենց նահանջի վերջին օրերը, Կարատակի հիմանդրությունը (նրա ձայնը դողում էր շարունակ) և նրա մահը:

Պիեռն իր արկածները պատմեց այնպես, ինչպես գեռ երբեք չէր հիշել զրանք: Նա այժմ կարծես նոր նշանակություն էր տեսնում այն բոլորի մեջ, ինչ ապրել էր: Այժմ, երբ այդ ամենը պատմում էր նատաշային, նա ապրում էր այն հազվագեպ վայելքը, որ տալիս են կանայք, տղամարդուն ունկնդրելով, — ոչ թե խելացի կանայք, որոնք, ունկնդրելով, աշխատում են կամ հիշել, ինչ ասում են իրենց, նրա համար, որ հարստացնեն իրենց միտքը և, առիթն եկած ժամանակ, վերապատմեն նույնը կամ պատմածը հարմարեցնել իրենցին և շուտափույթ հաղորդել փոքրիկ մտավոր տնտեսության մեջ մշակած իրենու խելացի խոսքերը, այն վաւելքը, որ տալիս են իսկական:

կանալք, որոնք օժտված ընդունակությամբ ընտրել և ներծծել են իրենց մեջ այն ամեն լավագույնը, ինչ միայն կա տղամարդկանց արտահայտությունների մեջ; Նատաշան, ինքն էլ այդ շիմանալով, ամբողջովին ուշագրություն էր. նա բաց չեր թողնում Պիեռի ու մի խոսքը, ոչ ճայնի գողը, ոչ նայմածքը, ոչ գեմքի մկանի ցնցումը, ոչ շարժումը: Նա արագ որսում էր նրա դեռ շարտահայտված խոսքերը և ուղղակի տանում իր բացված սիրտը, գուշակելով Պիեռի հոգեկան բովանդակ աշխատանքի գաղտնի իմաստը:

Իշխանագուստը Մարիան հասկանում էր պատմությունը, համակրում էր նրան, բայց նա այժմ տեսնում էր այլ բան, որ կլանել էր նրա ամբողջ ուշագրությունը. նա տեսնում էր սիրո և երջանկության հնարավորությունը նատաշայի և Պիեռի միջև: Եվ այդ միտքը առաջին անգամ նրա գլխում ծագելով՝ նրա սիրությունը ուրախությամբ:

Ժամը երեքն էր գիշերվա: Սպասավորները տիրամած, մոռյլ գեմքերով, գալիս էին մոմերը փոխելու, բայց ոչ ոք չէր նկատում նրանց:

Պիեռն ավարտեց իր պատմությունը: Նատաշան փայլուն ու կենդանացած աշքերով շարունակում էր համառորեն և ուղաղիր նայել Պիեռին, կարծես ցանկանալով ըմբռնել և այն մնացյալը, որ նա թերեւս, չէր արտահայտել: Պիեռն ամոթիւած ու երջանիկ շփոթության մեջ երեքմանակի նայում էր նրան և խորհում, թե ի՞նչ ասի հրմա, որ խոսակցությունը փոխադրի ուրիշ նյութի վրա: Իշխանագուստը Մարիան լուս էր: Ոչ ոք չէր մտածում, թե ժամը երեքն է, և թե ժամանակն է քնելու:

— Ասում են՝ դժբախտություններ, տառապանքներ,— ասավ Պիեռը: — Այո, եթե հրմա, այս բոպեին ինձ ասեին, ուզո՞ւմ ես մնալ այն, ինչ էիր մինչև գերաւթյունը, թե սկզբից վրապել այդ բոլորը: Ի սեր աստծո, նորից էլի գերություն և ձիու միս: Մենք կարծում ենք, թե, որ դաւրս ընկանք սովորական ճանապարհից, ամեն ինչ կորավ. այնինչ այդտեղ միայն սալում է նորը, լավը: Քանի կա կյանք, կա և երջանկություն: Առջեռում շատ, շատ բան կա: Ես այս ձեզ եմ ասում, — ասավ նա, դիմելով նատաշային:

— Այո, այո, — ասավ նա, պատասխանելով բոլորովին

այլ բանի, — ես էլ ուշնչ լէի ցանկանալ, բան միայն վէրապէրել ամեն ինչ սկզբից:

Պիեռն ուղաղիր նայեց նրան:

— Այո, և ավելի ոշինչ, — հաստատեց նատաշան:

— Ճիշտ չէ, ճիշտ չէ, — ճաց Պիեռը, — ես մեղավոր չեմ, որ ապրում եմ և ուզում եմ ապրել. և գուք նույնպես:

Հանկարծ նատաշան գլուխը խոնարհեց ձեռների վրա ու լաց եղավ:

— Ի՞նչ ես անում, նատաշա, — ասավ իշխանագուստը Մարիան:

— Ոշինչ, ոշինչ: — նա արցոնեքների միջից ժպտաց Պիեռին: — Մնաք բարե, քնելու ժամանակն է:

Պիեռը վեր կացավ և հրաժեշտ տվեց:

Իշխանագուստը Մարիան ու նատաշան, ինչպես միշտ, հանդիպում էին ննջարանում: Նրանք խոսեցին այն մասին, ինչ պատմեց Պիեռը: Իշխանագուստը Մարիան իր կարծիքը շայտնեց Պիեռի մասին: Նատաշան նույնպես շխոսեց նրա մասին:

— Դե, մնաս բարե, Մարի, — ասավ նատաշան: — Գիտես, ես հաճախ վախենում եմ, որ մենք չենք խոսում նրա մասին (իշխան և նդրելի), կարծես վախենում ենք ստորացնել մեր զգացմունքը, և մոռանում ենք:

Իշխանագուստը Մարիան ծանր հոգոց արձակեց և այդ հոգոցով ընդունեց նատաշայի խոսքերի արդարացիությունը: — բայց բառերով շամաձայնեց նրա հետ:

— Մի՞թե կարելի է մռանալ, — ասավ նա:

— Ինձ համար այնպես լավ էր քիչ առաջ պատմել բոլորը. թե ծանր էր, թե ցավալի, թե լավ: Շա'տ լավ, — ասավ նատաշան, — ես հագտացած եմ, որ նա իսկապես սիրում էր նրանք Դրա համար էլ պատմեցի նրան.... Ոշի՞նչ, որ պատմեցի նրան, — հանկարծ, կարմրելով, հարցրեց նատաշան:

— Պիեռի՞ն: Օ, ո՞չ: Ինչ հիանալի մարդ է, — ասավ իշխանագուստը Մարիան:

— Գիտես, Մարի, — հանկարծ ասավ նատաշան, շարաճիք ժպիտով, որ վաղուց իշխանագուստը Մարիան չէր տեսել նրա

դեմքին: — Նա դարձել է մի տեսակ մաքուր, կոկ, Ռարմ, կարծես բաղնիսից ելած. դու հասկանո՞ւմ ես — բարոյապես բաղնիսից: Ճի՞շտ է:

— Այո, — ասավ իշխանադուստր Մարիան: — Նա շատ է շահել:

— Թե կարծ սյուրթուկը, թե խուզած մազերը. ասես, իրոք բաղնիսից... հայրիկը, պատահում էր...

— Ես հասկանում եմ, որ նա (իշխան Անդրեյը) ոչ ոքի այն պես չէր սիրում, ինչպես դրան, — ասավ իշխանադուստր Մարիան:

— Այո, և դա տարբեր է նրանից: Ասում են՝ մտերիմ են լինում տղամարդիկ, երբ բոլորովին տարբեր են լինում: Այդ երկի, ճիշտ է: Ճի՞շտ է, որ սա բոլորովին նրա նման չի, ոչ մի բանով:

— Այո, և սրանշելի մարդ է:

— Դե, մնաս բարով, — պատասխանեց նատաշան:

Եվ նույն շարածճի ժայիշը, ասես ինքն իրեն մոռանալով երկար մնում էր նրա գեմքին:

### XVIII

Պիեռն այդ օրը երկար շարողացավ քնել. նա ետ ու առաջ էր անում սենյակում, մերթ գեմքը խոժոռելով, մտասուզվում էր ինչ-որ դժվարին բանի մեջ, մերթ հանկարծ ուսերը թոթվում էր ու ցնցվում, մերթ ժատում երջանիկ:

Նա մտածում էր իշխան Անդրեյի մասին, նատաշայի մասին, նրանց սիրո մասին. ու մերթ խանդում էր նատաշային՝ անցյալի համար, մերթ հանդիմանում, մերթ ներում իրեն դրա համար: Արդեն ժամը վեցն էր առավոտյան, իսկ նա շաշրունակ գնում զալիս էր սենյակում:

«Ե, ի՞նչ արած, եթե արդեն առանց դրան չի կարելի: Ի՞նչ արած: Նշանակում է, այդպես է պիտք», — ասավ նա երեն և, հապճեպ հանվելով, պառկեց անկողնում, երջանիկ ու հուզված, բայց առանց կասկածների ու անվճռականությունների:

«Պետք է, որքան էլ տարօրինակ է, որքան էլ անհնարին է այդ երջանկությունը, — պետք է անել ամեն բան, որպեսզի մարդ ու կին լինենք նատաշայի հետ», — ասավ նա իրեն:

Պիեռը գեռ մի քանի օր դրանից առաջ նշանակել էր, որ ուրբաթ օրը լինելու է իր՝ Պետերբուրգ մեկնելու օրը: Երբ նա զարթնեց հինգշաբթի, Սավելիշն եկավ նրա կարգադրություններն իմանալու՝ ճանապարհի իրերը դասավորելու, կապկը-պելու մասին:

«Ինչպե՞ս թե Պետերբուրգը: Պետերբուրգը ո՞րն է: Ո՞վ է գնում Պետերբուրգը, — ակամա, թեև ինքն իրեն մեջ, հարցրեց նա: — Այո, ինչ-որ մի բան վաղուց, գեռ առաջ բան այս պատահեց, ես շգիտեմ ինչո՞ւ պատրաստվում էի Պետերբուրգ գնալու, — հիշեց նա: — Ինչո՞ւ չէ. գուցե և գնամ էլ: Ի՞նչ բարի մարդ է սա, ուշագիր, ինչպես ամեն բան հիշում է, — մտածեց նա, նայելով Սավելիշի ծեր գեմքին: — Եվ ի՞նչ էլ գուրեկան ժպիտ ունի», — մատածեց նա:

— Հը, չե՞ս ուզում էլի ազատություն ստանալ, Սավելիշ, — հարցրեց Պիեռը:

— Իմ ինչի՞ն է պետք, ձերդ պայծառափայլություն, ազատությունը: Հանգուցյալ կոմսի օրոք, երկնալին արքայություն նրան, ապրում էինք և ձեր օրով էլ վիրավորանք չենք տեսել:

— Ե, իսկ երեխաներդ:

— Երեխաներն էլ կապրեն, ձերդ սկայծառափայլություն, ալդպիսի պարոնների մոտ կարելի է ապրել:

— Ե, իսկ իմ ժառանգնե՞րը, — ասավ Պիեռը: — Հանկարծ ամուսնահամ... Զէ որ կարող է պատահել, — ավելացրեց նա ակամա ժպտալով:

— Եվ համարձակվում եմ ասել. լավ բան է, ձերդ սկայծառափայլություն:

«Ինչպես նա կարծում է այդ հեշտ է, — մտածեց Պիեռը: — Սա շգիտի, որքան այդ սարսափելի է, որքան վտանգավոր: Զափազանց վաղ կամ շափազանց ուշ... Սարսափելի՞ էս:»

— Ինչ կհաճեք հրամայել: Վա՞զը կհաճեք մեկնել, — հարցրեց Սավելիշը:

— Ոչ. մի քիչ կհետաձգեմ: Այս ժամանակ էլ կասեմ: Դու ներիր ինձ նեղություն պատճառելուս համար, — ասավ Պիեռը

և, նայելով Սավելիշի ժպիտին, մտածեց. «Ինչ տարօրինակ է, սակայն, որ սա չփոխի, թե չկառ ոչ մի Պիտերբուրգ և որ ամենից առաջ պետք է լուծվի այն: Ասենք, նա երեկ գիտի, բայց միայն ձևացնում է: Խոսե՞մ հետք: Ի՞նչ է կարծում, — մտածեց Պիեռ: — Ոչ, հետո, մի ուրիշ ժամանակ»:

Նախաճաշելիս Պիեռը հայտնեց իշխանադստեր, թե ինքը երեկ եղել է իշխանադուստր Մարիայի մոտ և այնտեղ տեսել է, կարո՞ղ եք երեկակայել, ո՞ւմ: Նատաշա Ռոստովային:

Իշխանադուստրն այնպէսի երեսով ընդունեց, թե ինքն այդ բանի մեջ չի տեսնում ավելի անսովոր բան, քան որ Պիեռը տեսած լիներ Աննա Սեմյոնովնային:

— Դուք նրան ճանաշո՞ւմ եք, — հարցրեց Պիեռ:

— Ես տեսել եմ իշխանադստեր, — պատասխանեց նա: — Հսել եմ, որ նրան նշանել են երիտասարդ Ռոստովի հետ: Այդ շատ լավ կլիներ Ռոստովների համար: Ասում են՝ նրանք բուրովին աղքատացել են:

— Ոչ, Ռոստովային դուք ճանաշո՞ւմ եք:

— Այն ժամանակ լսել եմ միայն այդ պատմության մասին: Շատ ցավալի է:

«Ոչ, սա կա՞մ չի հասկանում, կա՞մ ձևացնում է, — մտածեց Պիեռը: — Ավելի լավ է շնուսեմ սրա հետո»,

Իշխանադուստրը նույնպես պաշար էր պատրաստել Պիեռին՝ ճանապարհի համար:

«Ինչ բարի են սրանք բոլորը, — մտածեց Պիեռը, — որ սրանք հիմա, երբ հավանորեն արդեն նրանց համար չի կարող այլևս հետաքրքրական լինել, զբաղվում են այս ամենով: Եվ ամենն ի՞նձ համար. այ ի՞նչն է զարմանալին»:

Այդ նույն օրը Պիեռի մոտ եկավ ոստիկանապետը, առաջարկելով լիազոր ուղարկել Գրանովիտի պալատը՝ իրեր ընդունելու, որ հիմա բաժանվում է տերերին:

«Այս սա նույնպես, — մտածեց Պիեռը, նայելով ոստիկանապետի դեմքին, — ի՞նչ հիանալի, գեղեցիկ սպա է և որքա՞ն բարի: Այժմ զբաղվում է այսպիսի մանր բաներով: Եվ դեռ ասում են, թե անազնիվ է և օգտվում է: Ի՞նչ հիմարությունն Ասենք, ինչո՞ւ չօգտվի է: Նա այդպես էլ գաստիարակված է:

Բոլորն էլ այդպես են անում: Բայց ինչ գուրեկան, բարի դեմք է, և Ժպտում է, ինձ նայելիս»:

Պիեռը գնաց իշխանադուստր Մարիայի մոտ ճաշելու:

Փողոցներով՝ այրված տների արանքով անցնելիս՝ նա զարմանում էր այդ ավերակների գեղեցկության վրա: Տների վառարանների ծխնելույները, թափված պատերը, գեղարվեստորեն հիշեցնելով Հունուսն ու Կոլիզեյը, միմյանց ծածկելով, ծգլում էին այրված թաղամասերով: Հանդիպող կառապանները և ուղևորները, գերաններ տաշող հյուսները, առևտրական կանայք ու խանութպանները, — ուրախ, փայլող գեմքերով նայում էին Պիեռին ու ասում կարծես «ԱՅ, հրես նա: Տեսնենք գրանից ինչ գուրս կգա»:

Իշխանադուստր Մարիայի տունը մտնելիս՝ Պիեռին տիրեց մի կասկած, թե իսկապես ինքը երեկ եղել է այստեղ, տեսել է նատաշային ու խոսել նրա հետ: Այդ գուցե ես եմ հնարել: Թերևս, ներս մտնեմ և ոչ ոքի շտեսնեմ: Բայց նա գեռ շեր կարողացել սենյակ մտնել, երբ արդեն իր համակ էության մեջ, վայրկենապես իր ազատությունից զրկվելով, զգաց նրա ներկայությունը: Նա հագել էր նույն սե հագուստները՝ նուրբ ծալքերով և մազերը հարդարել էր նույնպես, ինչպես երեկ, բայց բոլորովին այլ էր: Եթե նա այդպես լիներ երեկ, երբ Պիեռը մտավ սենյակ, մի վայրկյան իսկ չէր կարող շնանաշել նրան:

Նա այնպիսին էր, ինչպես Պիեռը ճանաշել էր նրան գրեթե երեխայությունից և ապա իրու իշխան Անդրեյի հարսնացու: Խնդրու հարցական մի ցոլք էր շողում նրա աշերում: գեմքին կար մի սիրալիր և տարօրինակ-շարաճիք արտահայտությունն է:

Պիեռը ճաշեց ու կնստեր ամբողջ երեկոն, բայց իշխանադուստր Մարիան գնում էր գիշերային ժամերգության, և Պիեռը գնաց նրանց հետ միասին:

Մյուս օրը Պիեռը եկավ վազ, ճաշեց և ամբողջ երեկոն նըստեց: Չնայած այն բանին, որ իշխանադուստր Մարիան և նատաշան, ակներեւ, ուրախ էին հյուրի համար. չնայած այն բանին, որ Պիեռի կյանքի ողջ շահագրգությունը կենարունացած էր այժմ այս տանը, երեկոյան գեմ նրանք շատ խոսեցին, և խոսակցությունն անդադար մի չնշնից բանից անցնում էր մյուսին և հաճախ ընդհատվում էր Պիեռն այդ երեկո նստեց:

այնքան երկար, որ իշխանադուստր Մարիան ու Նառաշան, հայացքներ էին փոխանակում իրար հետ, հավանորեն սպասելով, թե նա շուտ կերթա արդյոք: Պիեռը տեսնում էր այդ և շեր կարողանում գնալ: Նա զգում էր, որ ծանր է, անհարմար, բայց շարունակում էր նստել որովհետեւ չեւ կարսդանում կեր կենալ ու գնալ:

Իշխանադուստր Մարիան, դրա վերջը շտեսնելով, առաջինը ուրքի կանգնեց և, գանգատվելով զիմացավից, սկսեց հրաժեշտ տալ:

— Ուրեմն վազը դուք մեկնո՞ւմ եք Դետերբուրգ, — ասավ նա:

— Ոչ, ես չեմ մեկնում, — գարմանքով և կարծես վիրապովելով, հապճեպ ասավ Պիեռը: — Այս, ոչ, Պիեռերբո՞ւրգ: Վայց մնաս բարե շեմ ասում: Ես կգամ հանձնարարություններ աստանալու, — ասավ նա, կանգնելով իշխանադուստը Մարիայի առջև, կարմրելով և շեռանալով:

Նատաշան ձեռ տվեց նրան և դուրս եկավ: Իշխանադուստր Մարիան, ընդհակառակը, փոխանակ հեռանալու, նստեց բազկաթողին և իր ճառագայթող, խորունկ հայացքով խստորեն և ուշադիր նայեց Պիեռին: Նրա քիչ առաջ արտահայտված հոգնությունը հիմա բոլորովին անցավ: Նա ծանրորեն ու երկար հոգոց քաշեց, կարծես պատրաստվում էր երկարատես զրուցի:

Պիեռի ողջ շփոթությունն ու անձարակությունը, նատաշայի հեռանալով, վայրկենապես լքացան և փոխարինվեցին հոգված աշխույժով: Նա արագորեն բազկաթոռը մոտեցրեց իշխանադուստր Մարիային:

— Այս, ես հենց ուզում էի ասել ձեզ, — ասավ նա, պատասխանելով նրա հայացքին, կարծես խոսքերի էր պատասխանում: — Իշխանադուստր, օգնեցեք ինձ: Ես ի՞նչ անեմ: Կարո՞ղ եմ հուսալ: Իշխանադուստր, բարեկամս, լսեցեք ինձ: Ես բոլորը գիտեմ, ես գիտեմ, որ նրան արժանի շեմ: Գիտեմ, որ չումա անկարելի է խոսել այդ մասին: Բայց ես ուզում եմ նրա եղբայրը լինել: Ոչ, ես այդ չէի ասում, շեմ ուզում, շեմ կարող...

Նա կանգ առավ և երեսն ու աշբերը շփեց ձեռներով:

— Նու, ահավասիկ, — շարունակեց նա, ըստ երկութին, ճեղ գործ էնելով իր վրա, որ կապակցված խոսի: — Զգիտեմ, ո՞ր

ժամանակից եմ սիրում նրան: Բայց ես միայն նրան, մենք նրան եմ սիրել իմ ամբողջ կյանքում և սիրում եմ այնպես, որ կլանքս առանց նրան չեմ կարող պատկերացնել: Խնդրել նրա ձեռն այժմ ես չեմ համարձակվում: Բայց այն միտքը, թե նա, գուցե, կարող է իմը լինել, և ես բաց կթողնեմ այդ հնարավորությունը... հնարավորությունը... սարսափելի է: Ասացեք, կարո՞ղ եմ հուսալ: Ասացեք, ի՞նչ անեմ: Սիրելի իշխանադուստը, — ասավ նա, մի փոքր լոելով և նրա թեր շարժելով, որովհետեւ իշխանադուստը չէր պատասխանում:

— Ես մտածում եմ այն մասին, ինչ ասիք ինձ, — պատասխանեց իշխանադուստր Մարիան: — Ահավասիկ ի՞նչ կասմաւ մեջ են ձեզ: Դուք իրավացի եք, ինչ խոսել հիմա նրա հետ սիրում մասին...

Իշխանադուստրը կանգ առավ: Նա ուզում էր ասել. խոսել նրա հետ հիմա սիրում մասին՝ անկարելի է. բայց կանգ առավ այն պատճառով, որ ինքը նախանցյալ օրը հանկարծորեն փոխված նատաշայից նկատեց, որ նատաշան ող միայն չէր վիրավորվի, եթե Պիեռն արտահայտեր նրան իր սիրը, այլ նա հենց այդ էլ ցանկանում էր:

— Ասել նրան հիմա... չի կարելի, — այնուամենայնիվ, ասավ իշխանադուստր Մարիան:

— Բայց ես ի՞նչ անեմ:

— Այդ հանձնարարեցի ինձ, — ասավ իշխանադուստր Մարիան: — Ես գիտեմ...

Պիեռը նայեց իշխանադուստր Մարիայի աշքերին:

— Դե, գե... — խոսեց Պիեռը:

— Ես գիտեմ, որ նա սիրում է... կսիրի ձեզ, — ուղղեց իշխանադուստր Մարիան:

Հազիվ էր իշխանադուստրն ասել այս խոսքերը, երբ Պիեռը վեր թռավ և վախեցած ղեմքով բանեց իշխանադուստր Մարիան: Հիշելու ձեռքը:

— Ինչո՞ւ եք կարծում: Դուք կարծում եք, որ ես կարո՞ղ եմ հուսալ: Կարծո՞ւմ եք...

— Այս, կարծում եմ, — ժամանակալով ասավ իշխանադուստր Մարիան: — Գրեցեք ծնողներին: Եվ հանձնարարեցի ինձ: Ես

Այժմ Պիեռի սրտում ոչինչ նման բան չէր կատարվում, ինչ կատարվում էր նման հանգամանքներում՝ էլենի հետ նշանվելու ժամանակ:

Կասեմ նրան, երբ կարելի լինի: Ես ցանկանում եմ այդ եկտրոս վկայում է, որ այդ կլինի:

— Ոչ, այդ չի կարող լինել: Որքան երջանիկ եմ: Բայց այդ չի կարող լինել... Որքան երջանիկ եմ: Ո՞չ չի կարող լինել— ասում էր Պիեռը, իշխանադուսար Մարիայի ձեռները համբուրելով:

— Դուք գնացեք Պիեռիքուրդ. այդ ավելի լավ է: Իսկ ես կպեմ ձեզ,— ասավ նա:

— Պիեռիքուրդ. գնա՞լ: Այո, լավ, գնալ: Բայց վաղը կարո՞ղ եմ գալ ձեզ մոտ:

Մյուս օրը Պիեռը եկավ մնաս բարեկի: Նատաշան ավելի քիչ էր աշխատույթ, քան առաջին օրերը. բայց այդ օրը, երբեմն նայելով նրա աշքերին, Պիեռն զգում էր, որ ինքը չքանում է, որ ո՛չ ինքը, ոչ նա շկան այլս, այլ կա միայն երջանկության զգացում: — «Մի՞թե: Ոչ, չի կարող պատահել», — ասում էր նա նատաշայի յուրաքանչյուր հայացքի, շարժումի, խոսքի ժամանակ, որոնք ուրախությամբ էին լցում նրա սիրտը:

Երբ նրան հրաժեշտ տալով, բոնեց նրա նուրբ, նիհարձեռը, Պիեռն ակամա ձեռը փոքր-ինչ երկար պահեց իր ձեռում:

«Մի՞թե այս ձեռը, այս դեմքը, այս աշքերը, կանացի հրապույրի բոլոր այս ինձ օտար գանձը, մի՞թե այս ամենը համիտյան իմն է լինելու, լինելու է սովորական, այնպես, ինչպես և իեքս ինձ համար: Ոչ, այդ անկարելի է...»

— Գնաք բարե, կոժո, — ասավ նատաշան բարձրաձայն: — Ես շատ և շատ պիտի սպասեմ ձեզ, — ավելացրեց նա շշնչալով:

Եվ այդ պարզ խոսքերը, դրանց ուղեկցող հայացքն ու դեմքի արտահայտությունը երկու ամիս շարունակ կազմում էին Պիեռի անսպաս հիշողությունները, բացատրությունների ու երջանիկ երազանքների առարկան: Ճնշ շատ և շատ պիտի սպասեմ ձեզ: Այո, այո, ինչպես ասավ: Այո, ես շատ և շատ պիտի սպասեմ ձեզ: Ախ, որքան երջանիկ եմ ես: Սա ի՞նչ բան է, որքան երջանիկ եմ ես, — ասում էր Պիեռն իրեն:

Նա, ինչպես այն ժամանակ, հիվանդագին ամոթով չէր կրկնում իր ասած խոսքերը, իրեն չէր ասում, ախ, ինչո՞ւ ես այս շամի, և ինչո՞ւ, ինչո՞ւ այն ժամանակ ասի «je vous aime». Այժմ, ընդհակառակը, նատաշայի, իր յուրաքանչյուր խոսքը նա կրկնում էր երեսակայության մեջ՝ դեմքի, ժպիտների ամենայն ժանրամասնությամբ և չէր ցանկանում ոչինչ ոչ պակասեցնել, ոչ ավելացնել. ուզում էր միայն կրկնել: Կասկածներն այն մասին, թե արդյոք լավ էր այն կամ վատ, ինչ սկսեց, այժմ այդ կասկածների սովորն իսկ չկար: Սիայն սարսափելի կասկած էր ծագում երբեմն նրա գիտում: Արդյոք երազում չի տեսել այդ բռնությունը: Զի՞ սիալվում արդյոք իշխանադուսար Սարիան: Արդյո՞ք շափագանց հպարտ ու անձնապաստան չեմ ես: Ես հավատում եմ. բայց հանկարծ, ինչ և պատահելու է, իշխանադուսար Սարիան կասի նրան, իսկ նատաշան կրծպտա և կպատասխանի. Անրքան տարօրինակ է: Նա, երկի, սիալվել է: Մի՞թե նա զգիտի, որ ինքը մարդ է, պարզապես մարդ, իսկ ես... Ես բոլորովին այլ եմ, ավելի բարձր»:

Սիայն այս կասկածն էր հաճախ ծագում Պիեռի սրտում: Նա այժմ որևէ ծրագիր չէր կազմում նույնպես: Առաջիկա երջանկությունը նրան այնքան աներեսակայելի էր թվում, որ բավական էր այդ գլուխ գար, և այնուհետև էլ ոչինչ չէր կարող լինել: Ամեն ինչ վերջանաւում էր:

Աւրախ, անսպասելի խենթությունը, որին Պիեռն իրեն անընգույնակ էր համարում, տիրել էր նրան: Կյանքի բովանդակ իմաստը, ոչ միայն իր համար, այլև ամբողջ աշխարհի համար, թվում էր միայն կայանում է իր սիրո և նատաշայի դեպ ինքնուն ամբողջ հարավորության մեջ: Երբեմն բոլոր մայդիկ նրան թվում էին զրադված են միայն մի բանով՝ նրա ապագա երջանկությամբ: Նրան թվում էր երբեմն, որ նրանք բոլորը

նույնպես ուրախանում են, ինչպես ինքը, ու աշխատում են միայն թաքցնել այդ ուրախությունը, ձևացնելով, թե զրադակած են ուրիշ շահերով։ Ցուրաքանչյուր բառի ու շարժմունքի մեջ տեսնում էր ակնարկ իր երջանկության մասին։ Նա հաճախ գարմացնում էր իրեն հանդիպող մարդկանց իր նկատելի գաղտնի համաձայնություն արտահայտող, երջանիկ նայմածք ներով ու ժպիտներով։ Բայց երբ նա հասկանում էր, որ մարդիկ կարող էին շիմանալ իր երջանկությունը, նա ամբողջ հոգով խնդում էր նրանց և ցանկություն էր զգում որևէ կերպ բացատրել նրանց, թե այն ամենը, ինչով գրադակած են նրանք, միանգամայն դատարկ և չնշին բաներ են, ուշադրության ոլ արժանի։

Երբ նրան առաջարկում էին ծառայել կամ երբ քննում էին որևէ ընդհանուր, պետական գործեր ու պատերազմ, ենթադրելով, թե գեպքի այս կամ այն ելքից է կախված բոլոր մարդկանց երջանկությունը, նա լսում էր հեզ, ցավակցող ժպիտվ և հետք խոսողներին զարմացնում էր իր տարօրինակ դիտողություններով։ Բայց ինչպես այն մարդիկ, որոնք Պիեռին թվում էին կյանքի իսկական իմաստը, այսինքն՝ իր զգացմունքը հասկացողներ, այնպես և այն գժբախտները, որոնք, հավանորեն, չեն հասկանում այդ, — բոլոր այդ մարդիկ այդ ժամանակաշրթացքում նրան ներկայանում էին իր մեջ փայլող զգացմունքի այնպիսի վառ լույսի մեջ, որ նա առանց չնշին մի ճիգի, միանգամից, հանդիպելով որևէց մարդու, նրա մեջ տեսնում էր այն ամենը, ինչ լավ էր ու սիրո արժանի։

Քննելով իր հանգուցյալ կնոջ գործերն ու թղթերը, Պիեռը շեր ապրում որևէ զգացմունք նրա հիշատակի հանդեպ, բացի խողանարությունից, որ կինը շիմացավ այն երջանկությունը, ինչ ինքը գիտեր հիմա։ Իշխան Վասիլին, որ առանձնապես հապարտ էր այժմ ստացած նոր պաշտոնով ու աստղով, Պիեռին ներկայանում էր հիմա խղճալի, բարի ու ողորմելի ծերունի։

Պիեռը հետո հաճախ էր հիշում իր երջանիկ խենթության այդ ժամանակը։ Բոլոր այն կարծիքները, որ նա կազմեց իր մեջ այդ ժամանակամիջոցին՝ մարդկանց և հանգամանքների մասին, նրա համար առմիշտ ճշմարիտ մնացին։ Նա հետագայում ոչ միայն շրաժարպեց մարդկանց և իրերի մասին կազմած

իր այդ հայացքներից, այլ, ընդհակառակը, ներքին կասկածաների ու հակասությունների մեջ նա ապավինում էր այն հայացքը, ինչ ունեցել էր խենթության պահին, և այդ հայացքը մշտ ճշմարիտ էր լինում։

«Թերևս, — մտածում էր նա, — ես էլ այն ժամանակ տարօրինակ ու ծիծաղելի էի թվում. բայց ես այն ժամանակ այնքան խենթ չէի, ինչպես թվում էր։ Ընդհակառակը, ես այն ժամանակ ավելի խելացի էի և ավելի խորաթափանց, բան երբեմ, և հասկանում էի ամենը, ինչ արժե հասկանալ կյանքում, որովհետեւ... ես երջանիկ էի»։

Պիեռի խենթությունը կայանում էր նրանում, որ նա, առաջվա պես, չըր սպասում անձնական պատճառների, որոնք նա կոչում էր մարդկանց արժանիքներ, որպեսզի սիրի նրանց այլ սիրով լեցուն էր նրա սիրտը, և նա առանց պատճառի սիրելով մարդկանց, գտնում էր անելիքայելի պատճառներ, որոնց համար նրանց արժեքը սիրել։

## XX

Առաջին այն երեկոյից, երբ նատաշան, Պիեռի գնալուց հետո, ուշախ-հեղնական ժպիտով ասավ իշխանադուստր Մարիային, թե նա կարծես, ոք կարծես բաղնիսից է գուրս եկել, թե սյուրթուկը, թե խուզված լինելը, այդ բռաքեց ինչ-որ մի թաքնված և նրան իրեն էլ անհայտ, բայց անհաղթահարելի մի բան զարթնեց նատաշայի սրտում։

Ամեն ինչ՝ գեմքը, բայլվածքը, նայվածքը, ձայնը, ամեն ինչ հանկարծ փոփով նրա մեջ։ Իր համար էլ անսպասելի — կյանքի ուժը, երջանկության հույսերը բարձրացել գուրս էին եկել և բավարարություն էին պահանջում։ Առաջին երեկոյից նատաշան, կարծես մոռացավ բոլորը, ինչ պատահել էր իրեն։ Նա այդ պահից ոչ մի անգամ չէր գանգատվում իր կացությունից, ոչ մի խոսք շասավ անցածի մասին և այլև չէր վախենում ապագայի ուրախ ծրագիրներ կազմել։ Նա քիչ էր խոսում Պիեռի մասին, բայց երբ իշխանադուստր Մարիան հիշում էր նրա մասին, վաղուց հանգած փայլը վառվում էր նրա աշխերում, և

շուրջերը սեղմվում էին տարօրինակ ժպիտով։ Նատաշայի մեջ կատարված փոփոխությունն սկզբում զարմացրեց իշխանակությունը, այդ փոփոխությունը վշտագրեց նրան։ «Միթե սա այնքան քիչ էր սիրում եղբորս, որ այսքան շուտ կարողացավ մոռանալ նրան», — մտածում էր իշխանադուստր Մարիան, երբ նա մենակ կշռադատում էր տեղի ունեցած փոփոխությունը։ Բայց երբ նատաշայի հետ էր լինում՝ չէր բարկանում նրա վրա և չէր կշտամբում նրան։ Կյանքի արթնացած ուժը, որ համակել էր նատաշային, ըստ երկույթին, այնքան բուռն էր, նրա համար էլ այնքան անսպասելի, որ իշխանադուստր Մարիան նատաշայի ներկայությամբ զգում էր, որ ինքն իրավունք չուներ կշտամբել նրան անզամ իր սրտում։

Նատաշան այնպես լիովին ու անկեղծորեն էր անձնասուրեղել նոր զգացմունքին, որ չէր էլ փորձում թաքցնել, թե ինքն այժմ վշտահար չէ, այլ ուրախ է և խնդրում։

Երբ, Պիեռի գիշերային բացատրությունից հետո իշխանադուստր Մարիան վերադաշտավ իր սենյակը, նատաշան դիմավորեց նրան շեմքի վրա։

— Նա ասա՞վ։ Այո՞։ Նա ասա՞վ, — կրկնում էր նա։

Եվ ուրախ ու գրա հետ միասին մի խելծ, իր ուրախության համար ներուղություն խնդրող արտահայտություն մնաց նատաշայի դեմքին։

— Ես ուզում էի ականջ դնել դուն մոտ, բայց գիտեի որ դու կասես ինձ։

Որքան էլ հասկանալի, որքան էլ հուզիչ լիներ իշխանադուստր Մարիայի համար այն հայացքը, որով նատաշան նայեց իր վրա, որքան էլ խղճալի էր տեսնել նրա հուզումը, բայց նատաշայի խոսքերն առաջին բոպեին վիրավորեցին իշխանադուստր Մարիային։ Նա հիշեց եղբորը, նրա սերը։

«Բայց ի՞նչ արած. նա այլ կերպ շի կարող», — մտածեց իշխանադուստր Մարիան։

Տիրամած և փոքրինչ խիստ դեմքով նա նատաշային հայտնեց բոլորը, ինչ Պիեռն ասել էր իրեն։ Լսելով, որ Պիեռը մեկնում է Պետերբուրգ, նատաշան զարմացավ։

— Պետերբուրգ, — կրկնեց նա, կարծես չհասկանալով։ Բայց, նայելով իշխանադուստր Մարիայի դեմքի տիրապին արտահայտությանը, նատաշան գուշակեց նրա վշտի պատճառը և հանկարծ լաց եղավ։

— Մարի, — ասավ նա, — սովորեցրու՝ ինչ անեմ. վախենում եմ վատ լինել։ Ի՞նչ ասես, ա'յն էլ կանեմ. սովորեցրու ինձ...

— Դու սիրո՞ւմ ես նրան։

— Այո, — շշնչաց նատաշան։

— Բայց ինչի՞ համար ես լաց լինում։ Ես երջանիկ եմ քո փոխարեն, — ասավ իշխանադուստր Մարիան, այդ խոսքերի համար բոլորովին ներելով արդեն նատաշայի ուրախությունը,

— Դա կլինի ոչ շուտ, երբեքցեւ Մեկ մտածիր, թե ի՞նչ երջանկություն է, երբ ես նրա կինը կլինեմ, իսկ դու կամուսնասաս Nicolas-ի հետ։

— Նատաշա, ես բեզ խնդրել եմ չխոսնել այդ մասին։ Խոսենք քո մասին։

Նրանք լոեցին։

— Միայն թե ինչո՞ւ Պետերբուրգ, — հանկարծ ասավ նատաշան, և ինքն էլ հապճեապ պատասխանեց իրեն։ — Ոչ, ոչ, այդպես էլ պետք է... Այո՞։ Մարի։ Այդպես է հարկա վոր...»

## ՎԵՐՋԱԲԱՆ

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

### I

Անցավ յոթը տարի: Եվրոպայի ալեկոծված պատմական ծովը մտավ իր ափերը: Նա թվում էր հանդարասած. բայց մարդկությունը առաջ մղող խորհրդավոր ուժերը (խորհրդավոր այն պատճառով, որ նրանց շարժումը սահմանող օրենքներն անհայտ են մեզ) շարունակում էին իրենց ներգործությունը:

Չնայած այն բանին, որ պատմական ծովի մակերևույթը թվում էր անշարժ, նույնպես անընդհատ, ինչպես ժամանակի շարժումը, շարժվում էր մարդկությունը: Կազմավորվում, քայլալում էին մարդկային միավորումների տարբեր խմբեր. նախապատրաստվում էին պետություններ կազմելու և քայլու, ժողովուրդներ տեղափոխելու պատճառներ:

Պատմական ծովը, առաջվա պես, ուժգին թափով չէր դիմում մի ափից մյուսը. նա եռում էր իր խորթում: Պատմական անձնավորությունները, առաջվա պես, ալիքներով չէին տարվում մի ափից մյուսը. այժմ նրանք, թվում էր, պտտվում էին միևնույն տեղում: Պատմական անձնավորությունները, որ առաջ գորքերի գլուխ կանգնած մասսաների շարժումն անդրադարձնում էին պատերազմների, արշավանքների, ճակատամարտերի հրամաններով, այժմ այդ շարժումներն անդրադանում էին քաղաքական ու դիվանագիտական նկատառումներով, օրենքներով, տրակտատներով...

Պատմական անձերի այս գործունեությունը պատմագիրք ները անվանում են ուսակցիա:

Նկարագրելով գործունեությունը այդ պատմական անձնակորությունների, որոնք, նրանց կարծիքով, պատճառն են այն բանի, ինչ նրանք ուսակցիա են անվանում, պատմագիրները խստորեն դատապարտում են նրանց: Այն ժամանակվա բոլոր անվանի մարդիկ՝ Սլեքսանդրից ու Նապոլեոնից սկսած մինչև ուստի Ֆլուիդ, Շելլինգ, Ֆիխտե, Շատորբիան և այլք, անցնում են նրանց խիստ դատաստանի առաջով և արդարացվում կամ դատապարտվում են, նայած այն բանին, աշակել են արդյոք նրանք պրագեսին թե ուսակցիային:

Ծուսաստանում, նրանց նկարագրությամբ, այդ ժամանակաշրջանում նույնպես տեղի է ունենում ուսակցիա, և այդ ուսակցիայի գլխավոր նախապատճառը Ալեքսանդր I էր, — այն իսկ Սլեքսանդր I, որը, նրանց իսկ նկարագրությամբ, իր թագավորության լիբերալ ձեռնարկումների և Ծուսաստանի փրկության գլխավոր սկզբնապատճառն էր:

Ներկա ոուս գրականության մեջ, գիտնագիտական սկսած մինչև գիտուն պատմագիրը, չկա մի մարդ, որ իր քարը չնետի Սլեքսանդրի վրա՝ նրա թագավորության այդ շրջանի սխալ քայլերի համար:

«Նա պետք է վարվեր այսպես և այսպես: Այս դեպքում նա լավ վարվեց, այս դեպքում՝ վատ: Նա իրեն հիմնարի սկահեց իր թագավորության սկզբում և 12 թվի պատերամի ժամանակ, բայց նա վատ վարվեց՝ կոնստիտուցիա տալով Լեհաստանին, Սրբազն Գաշնակցություն կազմելով, Արակչեկն իշխանություն տալով, խրախուսելով Շիշկովին ու Ֆլուիդին: Նա վատ արագ, զբաղվելով բանակի ֆրոնտային մասով. Նա վատ վարվեց՝ Սեմյոնովսկի գունդը լուծելով» և այլն:

Պետք է գրել տասը թերթ թվարկելու համար այն բոլոր կշտամբանքները, որ անում են նրան պատմագիրները՝ մարդկության բարիքի այն գիտելիքի հիման վրա, որ ունեն իրենք, ինչ են նշանակում այս կշտամբանքները:

Այն իսկ քայլերը, որոնց համար պատմագիրները հավանություն են տալիս Ալեքսանդր I-ին, այն է՝ թագավորության

վիթիքալ ձեռնարկումները, պայքարը նապոլիոնի հետ, հաստատակամությունը, որ ցույց ավեց նա 12 թվին և 13 թվի արշավանքը, չեն բխում արդյոք միննույն աղբյուրներից, — արյան, դաստիարակության, կյանքի պայմաններից, որոնք Ալեքսանդրի անձնավորությունը դարձրին այն, ինչ եղել է, — որոնցից բխում են և այն քայլերը, որոնց համար պատմագիրները պարսպում են նրան, ինչպես՝ Սրբազն Գաշնակցությունը, Լեհաստանի վերականգնումը, 20-ական թվականների ուսակցիան:

Իսկ ո՞րն է այս կշտամբանքի էությունը:

Այն, որ մի այդպիսի պատմական անձնավորություն, ինչպես Ալեքսանդր I-ն էր, մի անձնավորություն, որ կանգնած էր մարդկային իշխանության հնարավոր բարձրագույն աստիճանի վրա, կարծես կուրացուցիլ լույսի, իր վրա կենտրոնացած, պատմական բոլոր ճառագայթների կիզակետում. Մի անձնավորություն, որ այդպիսով ավելի ենթակա էր աշխարհում ուժեղագույն ազդեցությանը ինտրիգների, խարեւթյունների, զողոքորթությունների, ինքնագայթակեցման, որոնք անբաժան են իշխանությունից. Մի անձնավորություն, որ իր կյանքի յուրաքանչյուր րոպեն պատասխանատվություն էր զգում նվրոպայում կատարվող ամեն բանի համար, և մի անձնավորություն, որ մտացածին չէր, այլ կենդանի, ինչպես և յուրաքանչյուր մարդ, իր անձնական սովորություններով, կրքերով, ձգտումներով դեպի բարին, գեղեցիկը, ճշշմարիտը, — որ այդ անձնավորությունը հիսուն տարի առաջ չէ թե առաքինի չէր (դրա համար պատմագիրները նրան չեն կըշտամբում), այլ այն հայացքները չուներ մարդկության բարիքի նկատմամբ, ինչ ունի հիմա պրոֆեսորը, որ երիտասարդությունից զբաղվել է գիտությամբ, այսինքն՝ գրքույներ ու դասախոսություններ կարգալով և այդ գրքույներն ու դասախոսությունները մի տեսրում արտագրելով:

Բայց եթե անգամ ենթադրենք, որ Ալեքսանդր I-ը, հիսուն տարի սրանից առաջ, սիսակել է իր հայացքում այն բանի նրկատմամբ, ինչ ժողովուրդների բարիքն է, ակամա պեսք է ենթադրել, որ Ալեքսանդրին դատող պատմագիրն էլ, ճիշտ այդպես որոշ ժամանակ անցնելուց անարդարացի կլինի / թ

Հայացքներում այն բանի նկատմամբ, ինչ մարդկության բարիքն է: Այս ենթագրությունն ավելի քան բնական է ու անհրաժեշտ, որ, հետեւը պատմության գարգացմանը, տեսնում ենք, որ յուրաքանչյուր տարվա հետ, յուրաքանչյուր գրագիտում է հայացքը այն բանի նկատմամբ, ինչ մարդկության բարիքն է: այնպես որ այն, ինչ թվում էր բարիք, 10 տարի հետո ներկայացնում է շարիք, և ընդհակառակությունը բավական չէ, մենք պատմության մեջ գտնում ենք միանգամայն հակառակ հայացքներ, թե ի՞նչն է եղել շարիք, ի՞նչ՝ բարիք: ումանք կեհաստանին տված կոնստիտուցիան և Սրբազն Դաշնակցությունը համարում են Ալեքսանդրի արծանիքը, մյուսները դրա համար հանդիմանում են նրան:

Ալեքսանդրի և Նապոլեոնի գործունեության մասին վկարելի ասել, թե այդ գործունեությունը օգտակար է եղել կամ վհասակար, որովհետև մենք չենք կարող ասել, թե ի՞նչի համար է օգտակար և ի՞նչի համար վնասակար: Եթե այդ գործունեությունը որեւէ մեկին դուր չի գալիս, այդ դուր չի գալիս միայն այն բանի հետևանքով, որ այդ գործունեությունը վգուգադիպում նրա սահմանափակ հասկացությանը, թե ի՞նչն է բարիքը: Ինձ բարիք է ներկայանում արդյոք 12 թվին իմ հագտան պահպանումը Մոսկվայում, թե ուստի զրդերի փառքը, թե Պետերբուրգի կամ այլ համալսարանների բարգավաճամը թե կեհասաւանի ագատությունը, թե Խուսաստանի հզորաւթյունը, թե Եվրոպայի հավասարակշռությունը, թե եկրոպական որոշտեսակի լուսավորությունը՝ պրագրեսը, ես պետք է ընդունեմ, որ ամեն մի պատմական անձնավորության գործունեության ունեցել է, բացի այս նպատակներից, դարձյալ ուրիշ, ավելի ընդհանուր և ինձ անմատչելի նպատակներ:

Ընդունենք, թե այսպես անվանված գիտությունը հնարավորության ունի հաշտեցնել բոլոր հակասությանները և պատմական անձերի և անցքերի համար ունի լավի ու փափի իր անփոփոխ շափանիշը:

Ենթադրենք, թե Ալեքսանդրը կարող էր ամեն բան անել այլ կերպ: Ենթադրենք, որ նա կարող էր, — ըստ նրանց համարակի, ովքեր մեղադրում են նրան, նրանց, ովքեր մարդկության շարժման վերջնական նպատակի գիտենալը համարում

են իրենց գործը, — կարգադրել ժողովրդայնության, ազատության, հավասարության և պրոգրեսի այն ծրագրով (ուրիշը, կարծեմ, չկա), որը կտային նրան այժմյան մեղադրողները: Ենթադրենք, թե այդ ծրագիրը հնարավոր լիներ ու կազմված և Ալեքսանդրը գործեր գործ համաձայն: Ո՞ւր կմնար հապագործությունն այն բոլոր մարդկանց, ովքեր հակառակում կին կառավարության այն ժամանակվա ուղղությանը, մի գործունեություն, որը, պատմագիրների կարծիքով, լավ է և օգտակար: Այդ գործունեությունը չէր լինի. կյանք չէր լինի, ոչինչ չէր լինի:

Եթե ենթադրենք, որ մարդկային կյանքը կարող է կառավարվել բանականությամբ, այդ դեպքում կոչնչանա կյանքի հնարավորությունը:

## II

Եթե ենթադրենք, ինչպես այդ անում են պատմագիրները, թե մեծ մարդիկ են մարդկությանը առաջնորդում որոշ նպատակների հասնելու, նպատակներ, որոնք կայանում են ասենք կամ Ռուսաստանի, կամ Ֆրանսիայի մեծության մեջ, կամ Եվրոպայի հավասարակշռության մեջ, կամ ուսուլուցիայի գաղափարները տարածելու մեջ, կամ ընդհանուր պրոգրեսի մեջ, կամ ինչումն էլ լինի, ապա անկարելի է պատմության երևութենքը բացատրել առանց դիպվածի ու հանճարի մասին եղած հասկացողության:

Եթե ներկա դարսւ ակզիրի եկլոպական պատերազմների նպատակը Ռուսաստանի մեծությունն էր, այդ նպատակին կարելի էր հասնել առանց բոլոր նախորդած պատերազմների ու առանց արշավանքի: Եթե նպատակը՝ Ֆրանսիայի մեծությունն էր, այդ նպատակին կարելի էր հասնել թե առանց ուսուլուցիայի, թե առանց կայսրության: Եթե նպատակն էր՝ գաղափարների տարածումը, այդ բանը տպագրությունը կրկատարեր շատ ավելի լավ, բան գինվարները: Եթե նպատակը քաղաքակրթության պրոգրեսն էր, ուստի, ըստ ամենայի հեշտ է ենթադրել, որ մարդկանց և նրանց հարստությունները ոչնչացնելուց բացի, կան քաղաքակրթությունը տարածելու ուրիշ ավելի նպատակահրմար ճանապարհներ:

Իսկ ինչո՞ւ այս պատահեց այսպես, և ոչ ուրիշ կերպ։ Որովհետեւ այդ այդպես պատահեց։

«Թիպվածը զրություն սահղեց, հանճարն օգտվեց դրանից», — ասում է պատմությունը։

Բայց ի՞նչ բան է դիպվածը։ Ի՞նչ բան է հանճարը։

Դիպված և հանճար բառերը չեն նշանակում ոչինչ, իրապես գոյություն ունեցող, ուստի և որոշվել չեն կարող Այդ բառերը նշանակում են միայն երևույթների հասկացության որոշ աստիճան։ Ես լգիտեմ, թե ինչո՞ւ է տեղի ունենում այսինչ երևույթը։ Կարծում եմ, որ չեմ կարող իմանալ, ուստի չեմ ուզում իմանալ և ասում եմ. դիպված է։ Ես տեսնում եմ մի ուժ, որ համամարդկային հատկություններին անհամապատասխան գործ է կատարում. չեմ հասկանում ինչո՞ւ է այդ կատարվում, և ասում եմ՝ հանճար։

Ոչխարների հոտի համար ա՛յն ոշխարը, որը յուրաքանչյուր երեկո խաշնարածի կողմից առանձին մսուր է քշվում կերի և երկու անգամ ավելի է զիրանում մյուսներից, պետք է հանճար թվա։ Եվ այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երեկո այդ իսկ ոշխարն ընկնում է ոչ թե բնգհանուր փարախը, այլ առանձին մի մսուր՝ վարսակ ուտելու, և որ այդ, հենց այդ իսկ ոշխարը, ճարպակալած, մորթվում է մսի համար, պետք է ներկայացնի զարմանալի միացում հանճարեղության մի շարք անսովոր դիպվածների հետ։

Բայց բավական է միայն ոշխարները դադարեն մտածել, թե ամենը, ինչ կատարվում է իրենց հետ, կատարվում է միայն իրենց ոշխարային նպատակներին համնելու համար. բավական է թույլ տալ, որ իրենց հետ կատարվող դեպքերը կարող են ունենալ և իրենց համար էլ անհասկանալի նպատակներ, և նրանք անմիջապես կտեսնեն միասնություն, հետեղականություն այն բանում, ինչ կատարվում է պարարտացվող ոշխարի հետ։ Եթե նրանք լիմանան էլ, թե ի՞նչ նպատակի համար է նա պարարտացվում, առնվազն կիմանան, որ ոշխարի հետ պատահածը պատահել է ոչ պատահաբար, և նրանք այլևս կարիք չեն ունենա ոչ դիպվածի հասկացությանը, ոչ նաև նարի հասկացությանը։

Միայն հրաժարվելով մեզ մոտիկ, հասկանալի նպատակն իմանալուց և բնդունելով, որ վերջնական նպատակն անմատնի է մեզ, մենք կտեսնենք պատմական անձերի նպատակահարսարությունը կատարում։ Մեր առաջ կրացվի պատճառը ընդհանուր մարդկային համակություններին, չամապատասխանող այն գործողությունների, որ կատարում են նրանք, և մեզ պետք չեն լինի դիպված ու հանճար բառերը։

Բավական է միայն ընդունել, որ եկրոպական ժողովուրդների հուզումների նպատակն անհայտ է մեզ, այլ հայտնի են միայն փաստերը, որ կայանում են սպանությունների մեջ՝ պկրում Ֆրանսիայում, ապա Խոալիայում, Աֆրիկայում, Պրուսիայում, Ավստրիայում, Խոպանիայում, Ռուսաստանում, և որ շարժումը արևմուտքից դեպ արևելք և արևելքից դեպ արևմուտք կազմում է դեպքերի էությունն ու նպատակը, և մենք ոչ միայն կարիք չենք ունենա բացարիկություն ու նաևնարենրոյն տեսնել նապոլեոնի ու Ալեքսանդրի բնավառությունների մեջ, այլև անկարելի կլինի այդ անձերը ներկայացնել այլ կերպ, քան նույնպիսի մարդիկ, ինչպես և բոլոր մացյալները. և ոչ միայն կարիք լի լինի պատահականությամբ բացարել այն մանր դեպքերը, որոնք այդ մարդկանց դարձրին այն, ինչ նրանք էին, այլ պարզ կլինի, որ բոլոր այդ մանր դեպքերն անհրաժեշտ էին։

Վերջնական նպատակը հասկանալուց հրաժարվելով՝ մենք պարզ կհասկանանք, որ ճիշտ այնպես, ինչպես ոչ մի բույսի համար չի կարելի հնարել ուրիշ, նրան ավելի համապատասխանող, ծաղիկներ ու սերմեր, քան նրանք, ինչ նա արտադրում է, ճիշտ այդպիս էլ անկարելի է հնարել երկու ուրիշ մարդ՝ իրենց ամբողջ անցյալով, որն այն աստիճան այնպիսի փոքրիկ մանրամասնություններով համապատասխաներ այն գերին, ինչ վիճակված էր նրանց կատարելու։

### III

Ներկա դարի սկզբի եկրոպական դեպքերի հիմնական, էական իմաստը՝ եկրոպական ժողովուրդների մասսաների ուազմական շարժումն է արևմուտքից արևելք և ապա արևելքից

**արևմուտք:** Այդ շարժման առաջին սկզբնապատճառը եղավ արևմուտքից արևելք շարժումը: Որպեսզի արևմուտքի ժողովուրդները կարողանային կատարել ուղմական այն շարժումը մինչև Մոսկվա, որը կատարեցին, անհրաժեշտ էր: 1) որպեսզի նրանք կազմակերպեին այնպիսի մեծության ուղմական խըմ բակցություն, որն ի վիճակի լիներ կրել ընդհարումը արևելքի ուղմական խմբակցության հետ: 2) որպեսզի նրանք հրաժարվեին հաստատված բոլոր ավանդություններից ու սովորություններից և 3) որպեսզի, իրենց ուղմական շարժումը կատարելով, իրենց գլուխ ունենացին մի մարդու, որը, թե՛ իր համար, թե՛ նրանց համար, կարողանար արդարացնել կատարվելիք խաբեությունները, կողոպուաներն ու սպանությունները, որոնք ուղեկցում էին այդ շարժմանը:

Եվ, ֆրանսական ուռուցիչայից սկսած, քայլավում է Հին, ոչ բավականաշափ մեծ խմբակցությունը. ոչնչանում են Հին սովորույթներն ու ավանդությունները. քայլ առ քայլ մշակվում են նոր շափի խմբակցություն, նոր սովորույթներ ու ավանդություններ, և պատրաստվում է այն մարդը, որը պետք է կանգնի ապագա շարժման գլուխ և կրի կատարվելիքի ամբողջ պատասխանատվությունը:

Առանց համոզունքի, առանց սովորույթների, առանց ավանդությանց, առանց անունի, անգամ ոչ ֆրանսացի, այդ մարդը, թվում է, ամենատարօրինակ պատահականություններով առաջ է գնում ամրող Ֆրանսիան հուզող պարտիաների միջով ու, շարելով դրանցից և ոչ մեկին, բարձրացվում է աւելի քննիող գիրքի:

Ընկերակիցների տգիտությունը, հակառակորդների թուրությունն ու ունչությունը, ստեղու անկեղծությունը և փայլուու ինքնավստահ ասհմանափակությունն այդ մարդու՝ նրան առաջ են քաշում-դարձնում բանակի գլուխ: Իտալական բանակի գինվորների փայլուն կազմը, հակառակորդների կովել շցանկանալը, տղայական հանդգնությունն ու ինքնավստահությունը ուղմական հոշակ են վաստակում նրա համար: Անթիվ-անհամար այսպես անվանված գիպվածները ուղեկցում են նրան: ամենուրեք: Ծնորհագրկությունը, որին արժանացնում են նրան ֆրանսացիների կառավարիչները, ծառայում

է նրա օգտին: Նրա փորձերը՝ փոխել իրեն համար կանխորոշված ճանապարհը՝ նրան չի հաջողվում. նրան Ռուսաստանում ծառայության շնորհում, նրան չի հաջողվում պաշտոն գոնենել և Թուրքիայում: Իտալիայում՝ պատերազմների ժամանակ նա մի քանի անգամ գտնվում է անդամնդի եզրին և ամեն անգամ փրկվում է անսպասելի կերպով: Ռուս զորքերը, այն խի զորքերը, որ կարող են կործանել նրա փառքը, զանազան դիվանագիտական նկատառումներով, նվրոպա շնորհում մտնում մինչև այն ժամանակ, քանի գեռ նա այնտեղ է:

Իտալիայից վերադառնալով՝ նա Փարիզի կառավարությունը գտնում է քայրայման այն պրոցեսում, որի մեջ մարդիկ, այդ կառավարության մեջն ընկնողները, անխուսափելիորեն ջնջվում և ոչնչացվում են: Եվ նրա համար այդ վտանգավոր դրությունից ինքնին ելք է հանդիսանում անիմաստ և պատճառ շունեցող արշավանքը դեպ Աֆրիկա: Նորից նույն, այսպես անվանված, դիպվածները ուղեկցում են նրան: Անսարիկ Մալթան անձնատուր է լինում առանց մի կրակոցի. ս մենանգգուց կարգադրությունները պսակվում են հատուցությամբ: Թշնամու նավատորմը, որ հետո ոչ մի նավակ չի թողնելու անցնել, թույլ է տալիս մի ամբողջ բանակ անցնելու: Աֆրիկայում գրեթե անզեն բնակիչների նկատմամբ կասարվում են մի շարք ոճարագործություններ: Եվ այդ շարագործությունները կատարող մարդիկ, մանավանդ նրանց ղեկավարը, հավատացնում են իրենց, թե այդ հիանալի է, թե այդ փառք է, թե այդ նման է Կեսարին և Ալեքսանդր Սակեռոնացուն և որ այդ լավ է:

Փառքի և մեծության այն իդեալը, որը կայանում է նրանում, որ մարդ ոչ միայն ոչինչ վատ համարի իր համար, այլ հապատանա իր ամեն մի ոճարագործությամբ, վերագրելով նըրան անհամականալի գերբնական նշանակություն,— այդ իդեալը, որ պետք է ղեկավարեր այդ մարդուն ու նրա հետ կապված մարդկանց, մշակվում է ազատ պահին՝ Աֆրիկայում: Ամենը, ինչ նա անում է, հաջողվում է նրան: Ժանտախտ չի մոտենում նրան: Գերիների սպանության դաժանությունը ոճիր շնորհարություն նրա համար: Տղայորեն անգուշությունը, առանց պատճառի և անազնիվ մեկնումը Աֆրիկայից, փորձանքի մեջ գտնվող ընկերներից, համարում են նրա արժանիքը, և նորից

թշնամու նավատորմը երկու անդամ թույլ է տալիս նրան անց-նել Ս. ճամանակ, երբ նա կատարած բախտավոր ոճիրներով բոլորովին արբած, իր գերի համար պատրաստ, առանց որևէ նպատակի գալիս է Փարիզ, ուստուրիկական կառավարության (որ մի տարի առաջ կարող էր կործանել նրան) քայլայում հիմա ծայր աստիճանի էր հասել, և նրա ներկայությունը, որպես պարտիայից հենու թարմ մարդու, այժմ միայն կարող էր բարձրացնել նրան:

Նա ոչ մի ծրագիր չունի. նա ամեն բանից վախենում է, բայց պարտիաները բոնում են նրա փեշը և պահանջում նրա մասնակցությունը:

Նա մենակ, Խաւալիայում ու Եգիպտոսում մշակած՝ փոքր ու մեծության իր իդեալով, ինքնապաշամունքի իր իւելագարությամբ, իր ոճրագործությունների հանդկությամբ, իր սուախոսության անկեղծությամբ,— միայն նա կարող է արդարացնել այն, ինչ կատարվելու է:

Նա պետք է այն սպատչոնի համար, որն սպասում է նրան, ուստի և գրեթե անկախ նրա կամքից և շնայծ նրա անվճականության, ծրագրի բացակայության, բոլոր սխալներին, որ անում է, նա ներգրավվում է զավադրության մեջ, որի նպատակն է գրավել իշխանությունը, և զավադրությունը պահպում է հաջողությամբ:

Նրան հրում են ներս՝ կառավարիչների նիստի դահլիճը: Նա, զախեցած, ուզում է փախչել, իրեն խորտակված համարելով. ձևացնում է, թե ուշաթափում է. ասում է անմիտ քանի որոնք պետք է որ նրան կործանեին: Բայց Ֆրանսիայի կառավարողները, առաջ ուշիմ ու հպարտ, այժմ, զգալով, որ իրենց դերը վերջացած է, ավելի են շփոթված, քան նա, ասում են ոչ այն խոսքերը, որ պետք է ասեին նրա համար, որ իշխանությունը պահեն և նրան կործանեն:

Դիպվածը, միլիոնավոր դիպվածներ նրան իշխանություն են տալիս, և բոլոր մարդիկ, կարծես խոսք մեկ արած, ազմկցում են այդ իշխանության հաստատվելուն: Դիպվածները այն ժամանակված ֆրանսիայի վարիչների բնավորությունը դարձում են նրան ենթարկվող. դիպվածները մշակում են նրա իշխանությունը ճանաշող Պավել 1-ի բնավորությունը. դիպ-

վածը նրա դեմ կազմում է դավադրություն, որը ոչ միայն լի վնասում նրան, այլև հաստատում է նրա իշխանությունը: Դիպվածը նրա ձեռքն է ուղարկում էնգիենի հերցոգին և պատաշաբար սահմանում սպանել նրան, դրանով իսկ, ամեն տեսակ միջոցներից ավելի շատ, համոզելով ամբոխին, թե նա իրավունք ունի, որովհետեւ ուժ ունի: Դիպվածն անում է այն, որ նա իր բովանդակ ուժերը լարում է Անգլիա արշավելու, որն, այսուհետեւ, կկործանել նրան, ու երբեք չի իրազործում իր այդ մասրությունը, այլ անակնկալ հարձակվում է Մաքի ու ավստրիացիների վրա, որոնք անձնատուր են լինում առանց կովկի: Դիպվածն ու հանեարենդությունը հաղթություն են տալիս նրան Առուտերլիցի մօտ, և դիպվածորեն բոլոր մարդիկ, ոչ միայն ֆրանսացիները, այլև ամբողջ Եվրոպան, բացառությամբ Անգլիայի, որը չի մասնակցելու կատարվելիք անցքերին, բոլոր մարդիկ, չնայած նրա ոճիրների հանգեց ունեցած սարսափին ու զգվանքին, այժմ ընդունում են նրա իշխանությունը, այն կողումով, որ ինքն է տվել իրեն, և նրա մեծության ու փառքի իդեալը, որը բոլորին թվում է հինգ-որ մի անսակ բարանչելի ու բանական:

Կարծես շափափոր անելով կ նախապատրաստվելով առաջիկա շարժման համար, արևմուտքի ուժերը մի բանի անդամ 1805, 6, 7, 9-ը թվերին ձգտում են դեպի արևելք, ուժեղանալով ու բազմանալով: 1811 թվին Ֆրանսիայում կազմակերպված մարդկանց խմբակցությունը միաձուլվում գառնում է միջին եվրոպական ժողովուրդների հսկայական խմբակցություն: Մարդկանց խմբակցությունն աճելու հետ միասին շարունակած աճում է շարժման գլուխ կանգնած մարդուն արդարացնելու ուժը: Տասնամյա նախապատրաստական ժամանակաշրջանում, որը նախորդում է մեծ շարժմանը, այդ մարդը հանդիպում է եվրոպայի բոլոր թագակիր անձերի հետ: Աշխարհի պահագերձված վեհապետները չեն կարողանում նապուենյան, իմաստ չունեցող, փառքի ու մեծության իշխալին հակազրել ոչ մի խելացի իդեալ: Մեկը մյուսի առաջ նրանք ձգտում են ցուցյ տալ իրենց ոչնչությունը: Պրուսական թագավորը իր կնոշն ուղարկում է շողոքորթելով ողորմություն հայցի մեծ մարդուց: Ավստրիայի թագավորը ողորմածու-

Թյուն է համարում այն, որ այդ մարդը իր մահին է ընդունում կեսարի գսաեր. պապը, ժողովուրդների սրբության պահանջ, իր կրոնով ժառայում է մեծ մարդու բարձրացմանը: Ոչ այնքան նապոլեոնն է նախապատրաստում իրեն իր դերը կատարելու համար, որքան ամբողջ շրջապատն է պատրաստում նրան՝ ընդունել իր վրա բովանդակ պատաժանամավությունն այն բանի, ի՞նչ կատարվում է և ի՞նչ կատարվելու է: Չկամ մի արարք, մի շարագործություն կամ մանր խարեւություն, ո՞ր կատարեր նա և ո՞րն անմիջապես նրան շրջապատողների շուրթերի վրա շդառնար մեծագործություն: Լավագույն տոնը, որ կարող էին հնարել նրա համար գերմանացիք, զա ենայի և Առւերշտետի տոնակատարությունն էր: Ոչ միան նա' է մեծ, այլ մեծ են նրա նախահայրերը, նրա եղբայրները, նրա խորթ որդիները, փեսաները: Ամեն բան կատարվում է նրա համար, որպեսզի զրկեն նրան բանականության վերջին կարողությունից և պատրաստեն նրա սարսափելի դերի համար: Եվ երբ նա պատրաստ է, պատրաստ են և ուժերը:

Արշավանքը զնում է դեպի արևելք, հասնում է վերջնական նպատակին՝ Մոսկվային: Մայրաքաղաքն առնված է. որու զորքն ավելի է ոչնչացված, քան երբեք ոչնչացվել են հակառակորդների զորքերը նախկին պատերազմներում՝ Մոսատերլիցից սկսած մինչև Վազրամը: Բայց հանկարծ, փոխարեն այն դիպվածների ու հաճնարեղության, որ այնպես հետեղողականորեն առաջնորդում էին նրան մինչև այժմ անընդհատ հաջողությունների շարքով դեպի նախանշված նպատակը, հանդես են գալիս անթիվ-անհամար հակառակ դիպվածներ, Բորոդինոյի հրաբուխից մինչև սառնամանիքները և Մոսկվան վասող կայծերը. և հաճնարեղության փոխարեն հանդես են գալիս, իրենց օրինակը շունեցող, հիմարությունն ու ստորոտիթյունը:

Արշավանքը փախչում է, եա դառնում, նորից է փախչում, և բոլոր դիպվածներն արկմուտքից արենիք կատարված նախորդած շարժումին: Արևելքից արկմուտք շարժվելու նույն փորձերը, ինչպես 1805—1807—1809 թվերին, նախորդում են մեծ շար-

ժումին. Հսկայական շափերի հասնող նույն խմբակցումը՝ միջն եկրոպական ժողովուրդների նույն հարումը շարժման, նույն տատանումը ճանապարհի կիսին և նույն արագությունը նպատակին մոտենալու համեմատ:

Փարիզը՝ վերջնական նպատակը, ձեռք է բերված: Նապալիոնյան կառավարությունն ու զորքը ոչնչացված են: Ինքը նապոլեոնն այլևս ոչ մի իմաստ չունի. Նրա բոլոր գործողություններն, ակներե, ողորմելի են և զգվելի. բայց նորից տեղի է ունենում անբացատրելի դիպված. զաշնակիցներն ատում են նապոլեոնին, նրա մեջ տեսնելով իրենց աղետների պատճառը. ու նենգությունների մեջ բռնված, նա պետք է որ նրանց ներկայանար այնպես, ինչպես ներկայացել էր զրանից տասը տարի առաջ և մի տարի հետո՝ օրենքից դուրս ավազակ: Բայց, մի ինչ-որ տարօրինակ պատահականությամբ, այդ ոչ ոք չի տեսնում: Նրա դերը դեռ չի վերչացած: Այն մարդուն, որին տասը տարի առաջ և մի տարի հետո համարում էին օրենքից դուրս ավազակ, ուղարկում են, Ֆրանսիայից երկու օրվա ճանապահն հեռու, մի կղզի, որ տրվում է նրան ի սեփականություն, իր գվարդիայից ու միլիոնների հետ, միլիոններ, որ վճարում են նրան զիտես ինչի՞ համար:

## IV

Ժողովուրդների շարժումն սկսում է տեղավորվել իր ափերում: Մեծ շարժման ալիքները ետ են դառնում, և խաղաղած ծովի երեսին կազմվում են շրջագծեր, որոնցով տարվում են դիվանագետները, երեսակալելով, թե հենց իրենք են առաջ բերում խաղաղացումը:

Բայց խաղաղած ծովը հանկարծ բարձրանում է: Դիվանագետներին թվաւմ է, թե իրենք են, իրենց անհամաձայնություններն են ուժերի այս նոր ճնշման պատճառը. նրանք պատերազմ են սպասում իրենց թագավորների միջև. կացությունը նրանց անլուծելի է թվում: Բայց հորձանքը, որի բարձրացումը նրանք զգում են, գալիս է ոչ թե այնտեղից, որտեղից սպասում են

նրան։ Բարձրանում է նույն հորձանքը շարժման նույն ելակետից՝ Փարիզից։ Կատարվում է արևելքից շարժվելու վերջին ծողփյունը, որը պետք է լուծի անլուծելի թվացող դիվանագիտական դժվարությունները և վերջ դնի այդ ժամանակաշրջանի ռազմական շարժմանը։

Այն մարդը, որ ամայացրեց Ֆրանսիան, մենակ, առանց դավադրության, առանց զինվորների, գալիս է Ֆրանսիա, լուրաքանչյուր պահապան կարող է բռնել նրան։ բայց, տարօրինակ պատահականությամբ, ոչ ոք ոչ միայն չի բռնում նրան, բոլորը խանդավառությամբ են դիմավորում այն մարդուն, որին անհծում էին մի օր առաջ և պիտի անհերին մի ամիս հնոտ։

Այդ մարդը գեռ հարկավոր է վերջին միասնական գործությունն արդարացնելու համար։

Գործողությունը կատարված է։

Վերջին գերը խաղացված է։ Դերասանին հրամայված է հանգի և սուրման ու կարմիր շպարները սրբել-մաքրել։ Իսայիս հարկավոր չի լինելու։

Եվ մի քանի տարի անցնում են այն բանով, որ այդ մարդը, իր կղզում՝ մենակության մեջ, ինքն իր առջև խաղում է մի ողորմէլի կոմեղիա, բանսարկում է ու ստում, արդարացնելով իր արարքները, երբ այդ արդարացումն այլևս պետք չէ, և ցույց է տալիս ամբողջ աշխարհին, թե ի՞նչ բան էր այն, որ մարդիկ ընդունում էին աւճի տեղ, երբ իրեն առաջնարդում էր անտես մի ծնոր։

Կարգադրից, դրաման վերջացնելով և գերասանին մերկացնելով, նրան ցույց տվեց մեզ։

— Տեսեք, թե գուք ինչի՛ եք հավատացել։ Ահա՝ նա։ Հիմա տեսնո՞ւմ եք արդյոք, որ ոչ թե նա, այլ եմ շարժել ձեզ։

Բայց մարդիկ, շարժման թափից կուրացած, երկաշ ժամանակ այդ չեխն հասկանում։

Ավելի մեծ հետևողականություն ու անհրաժեշտություն է ներկայացնում Ալեքսանդր I-ի կյանքը, այն անձնավորության, որը կանգնած էր արևելքից արևմուտք հակաշարժման գլուխ։

Ի՞նչ է հարկավոր այն մարդու համար, որը, մյուսներին ծածկելով, կանգներ այդ՝ արևելքից արևմուտք շարժման գլուխ։

Հարկավոր է արդարության զգացում, մասնակցություն նվազապայի գործերին, բայց հեռու, մանր շահերով շմթագնած զացում։ Հարկավոր է բարոյական բարձունքի գերակշռությունը ընկերակիցների՝ այն ժամանակվա թագավորների նրակատմամբ։ Հարկավոր է հեզ և հմայիլ անձնավորություն։ Հարկավոր էր անձնական վիրավորանք նապոլեոնի հանդեպ, եկալ արդ բոլորը կա Ալեքսանդր I-ի մեջ, այդ ամենը նախապատրաստված է նրա ամբողջ անցյալ կյանքի անթիվ-անհամար այսպես անվանված դիպվածներով։ թե՛ դաստիարակությամբ, թե՛ լիբերալ ձեռնարկումներով, թե՛ շրջապատող խորհրդատուններով, թե՛ Առևտերլիցով, թե՛ Տիլզիտով, թե՛ Էրֆուրտով։

Ժողովրդական պատերազմի օրերին այդ անձնավորությունը լի գործում, որովհետև նա հարկավոր չէ։ Բայց հենց որ շուտով ծագում է ընդհանուր եվրոպական պատերազմի անհրաժեշտությունը, այդ անձնավորությունը տվյալ մոմենտին հանդես է գալիս իր տեղում և, եվրոպական ժողովուրդներին միացնելով, առաջնորդում է նրանց դեպի նպատակը։

Նպատակն իրագործված է։ Վերջին՝ 1815 թվի պատերազմից հետո Ալեքսանդրը գտնվում է մարդկային հնարավոր իշխանության բարձունքի վրա։ Ինչպես է նա գործադրում այդ իշխանությունը։

Ալեքսանդր I — Եվրոպայի խաղաղաբարը, մի մարդ, որ երիտասարդ տարիներից ծգտել է իր ժողովուրդների բարիթիքին, լիբերալ նորամուծությունների առաջին նախաձեռնողն է իր հայրենիքում, այժմ, երբ, թվում է, մեծագույն իշխանություն ունի և հնարավորություն իրականացնել իր ժողովուրդների բարիթը, այն ժամանակ, երբ նապոլեոնն աքսորանքի մեջ մանկամիտ և կեղծ ծրագիրներ է շինում այն մասին, թե ինչպես կերպանկացներ մարդկությունը, եթե իշխանություն ունենար, — Ալեքսանդր I-ը, կատարելով իր կոչումը և զգալով իր վրա աստծու մատոց, հանկարծ ընդունում է այդ կարծեցյալ իշխանության ոչնչությունը, երես է դարձնում նրանից, այն հանձնում է իր կողմից արհամարհվող և արհամարհված մարդկանց ու ասում է միայն։

— «Ու մեզ, ոչ մեզ, այլ անվան քո՝ ւմ»։ Ես նույնպես մարդ եմ, ինչպես և դուք. թողեք ապրեմ, ինչպես մարդ, և մտածեմ հոգու և աստծու մասին։

Ինչպես արեք և եթերի յուրաքանչյուր ատոմը ավարտված գունդ է ինքն իր մեջ և դրա հետ միաժամանակ իր վիթխարիությամբ մարդուն անմատչելի ամբողջության ատոմ, այդպես էլ յուրաքանչյուր անձնավորություն ինքն իր մեջ կռում է իր նպատակները և մինչեն կրում է դրանք նրա համար, որպեսզի ծառայի մարդուն անմատչելի ընդհանուր նրա պատահների։

Մաղկին նստած մեղուն խայթեց երեխային։ Եվ երեխան վախնենում է մեղուներից ու ասում, թե մեղուի նպատակն այն է, որ խայթի մարդկանց թանաստեղծը հրճվում է ծաղկի բաժակին կպած մեղուով և ասում՝ մեղուի նպատակը ծաղկիների հյութը ծծեն է։ Մեղվապահը, նկատելով, որ մեղուն ծաղկեցի է հավաքում և բերում փեթակը, ասում է, թե մեղուի նպատակը մեղը հավաքելն է։ Մի ուրիշ մեղվապահ, մոտից ուսումնասիրելով մեղուի պարսի կյանքը, ասում է, թե մեղուն փոշի է հավաքում շահել մեղուներին կերակրելու և մորք դուրս բերելու, որ նրա նպատակը սերունդը շարունակելն է։ Թուաբանը նկատում է, որ, երկտուն ծաղկի փոշով թոշելով վարսանդի վրա, մեղուն բեղմնավորում է նրան, և բուսաբանը դրա մեջ է տիսնում մեղուի նպատակը։ Մի ուրիշը, դիտելով բույսերի տեղափոխությունը, տեսնում է, որ մեղուն աշակցում է այդ տեղափոխության. այս նոր դիտողն էլ կարող է ասել, թի դրա մեջ է կյանում մեղուի նպատակը։ Բայց մեղուի վերջնական նպատակը չի սպառվում ոչ այս, ոչ մյուս, ոչ երրորդ նպատակով, որոնք ի վիճակի է պարզել մարդկային միտքը։ Որքան վեր է բարձրանում մարդկային միտքը այս նպատակները բացահայտելու գործում, այնքան ավելի ակներն է դառնում նրա համար վերջնական նպատակի անմատչելիությունը։

Սարդուն մատչելի է միայն դիտել մեղուի կյանքի համապատասխանությունը կյանքի մյուս երևոյթների հետ։ Նույնը լինում է պատմական անձերի և ժողովուրդների նպատակ։

## V

Նատաշայի հարսանիքը, Նատաշայի, որ 13 թվին ամուսնացավ Պիեռ Բեզուխովի հետ, վերջին ուրախ դեպքն եղավ Ռուսովների հին ընտանիքում։ Նույն տարում կոմս Խյանդրեսերի մեռավ և, ինչպես միշտ լինում է այդ, նրա մահով կազմալուծվեց նախկին ընտանիքը։

Վերջին տարվա գեպքերը՝ Սոսկվայի հրդեհը և փախուստն այնտեղից, իշխան Անդրեյի մահը և Նատաշայի հուսահատւթյունը, Պետյայի մահը, կոմսուհու վիշտը, — այս ամենը, ինչպես հարված հարվածի հետևից, իշնում էր ծեր կոմսի գըլխին։ Նա, թվում էր, չէր հասկանում և իրեն անկարող էր զգում հասկանալ այդ բոլոր գեպքերի նշանակությունը և, բարոյապես իր ծեր գլուխը կուացրած, կարծես սպասում ու խնդրում էր նոր հարվածներ, որ վերջացնեին իրեն։ Նա թվում էր մերթ վախեցած ու գլխակորույս, մերթ անբնականորեն աշխույժ ու ձեռներեց։

Նատաշայի հարսանիքը միառժամանակ զբաղեցրեց իր արտաքին կողմով։ Նա պատվիրում էր ճաշեր, ընթրիքներ և, ըստ երևույթին, ուզում էր ուրախ երեալ. բայց նրա ուրախությունը վարակող չէր ինչպես առաջ, այլ, ընդհակառակը, կարեցություն էր զարթեցնում նրան ճանաշող ու սիրող մարդկանց մեջ։

Երբ Պիեռը մեկնեց կնոջ հետ՝ նա լոեց և սկսեց զանգատվել ձանձրույթից։ Մի քանի օր հետո նա հիվանդացավ և անկողին մտավ։ Իր հիվանդության առաջին օրերից, չնայած բժիշկների միխթարելուն, նա հասկացավ, որ ինքը վեր չի կենա։ Կոմսուհին, առանց հանվելու, երկու շաբաթ անցրեց բազմոցի մեջ՝ նրա սնարի մոտ նստած։ Ամեն անգամ, երբ նա դեղ էր տալիս ամուսնուն, — կոմսը փղձկալով, անխօս համբուրում էր կնոջ ձեռք։ Վերջին օրը նա, հեկեկալով, ներում ինդրեց կնոշից և բացակա որդուց՝ կալվածքը բայքայելու համար — գլխավոր հանցանքը, որի կատարողն զգում էր ինքն է։ Ճաշակվելով ու վերջին օժումն ընդունելով, նա հանդարտ մեռավ, և հետեւյալ օրը ծանոթների բազմությունը, որ եկել էր վերջին պարտքը հատուցելու հանգուցյալին, լցրել էր Ռուսովների վարձու

բնակարանը: Բոլոր այդ ծանոթները, որ այնքան անգամ ճաշել ու պարել էին նրա տանը, որ այնքան ծիծաղել էին նրա վրա, այժմ բոլորը ներքին կշտամբանքի ու խանդաղատանքի միատեսակ զգացումով, կարծես ում-որ առջև արդարանալով ասում էին. «Այս, ինչ էլ լիներ, այնուամենայնիվ հիանալի մարդ էր: Այդպիսի մարդ հիմա էլ չե՞ս տեսնի: Եվ ո՞վ է որ պակասություններ շունի...»

Հենց այն ժամանակ, երբ կոմսի գործերն այնպես խճճվել էին, որ անկարելի էր պատկերացնել, թե ինչո՞վ կվերցանա այդ ամենը, եթե շարունակվի մի տարի էլ, նա հանկարծ մեռավ:

Նիկոլայն ուսւ գորքերի հետ Փարիզումն էր, երբ լուր եկավ հոր մահվան մասին: Նա անմիջապես հրաժարական տվեց և, շապասելով հրաժարական ստանալուն, արձակուրդ վերցրեց ու եկավ Սոսկվա: Դրամական գործերի դրությունը կոմսի մահից մի ամիս հետո բոլորովին պարզվեց, զարմացնելով ամենքին զանազան մանր պարտքերի հսկայական գումարով, պարտքեր, որոնց գոյությունը ոչ ոք չէր էլ կասկածում: Պարտքերը կրկնակի ավելի էին, քան կալվածքները:

Հարազատներն ու բարեկամները խորհուրդ տվին Նիկոլային հրաժարվել ժառանգությունից: Բայց Նիկոլայը ժառանգությունից հրաժարվելու մեջ կշտամբանքի արտահայտություն էր տեսնում հոր՝ իր համար սրբազն հիշատակի հանդեպ, ուստի և լսել շուգեց հրաժարվելու մասին ու ժառանգությունն ընդունեց՝ պարտքերը վճարելու պարտավորությամբ:

Պարտատերերը, որ այնքան երկար լոել էին, կոմսի կենդանության օրով կապված լինելով այն անորոշ, բայց հզոր ազդեցությամբ, որ ուներ կոմսը նրանց վրա իր անսահման բարությամբ, հանկարծ բոլորը պահանջ ներկայացրին: Հնանդես եկավ, ինչպես այդ միջտ լինում է, մրցակցություն՝ ո՞վ շուտ կստանա, և այն իսկ մարդիկ, որոնք, ինչպես Միտենկան և ուրիշները, անփող մուրհակ-նվերներ ունեին, հանդիսացան այժմ ամենապահանջնորդ պարտատերերը: Նիկոլային ոչ ժամանակ էին տալիս, ոչ հանգիստ. և որոնք, ըստ երևույթին, խզում էին ծերունուն, որ եղել էր իրենց կորուստների (եթե յային

կորուստներ) պատճառը, այժմ անխղճաբար հարձակվեցին իրենց առջև ակներե անմեղ երիտասարդ ժառանգի վրա, որ կամովին հանձն էր առել վճարումը:

Նիկոլայի ենթադրած շրջանառություններից և ոչ մեկը շնաջողվեց. կալվածքն աճուրդով ծախվեց կես գնով, իսկ պարտքերի կեսն այնուամենայնիվ մնում էր վճարված: Նիկոլայը վերցրեց իր փեսա թեզուփովի առաջարկած 30.000-ը՝ վճարելու պարտքերի այն մասը, որոնք նա համարում էր դրամական, իսկական պարտքեր: Եվ որպեսզի մնացած պարտքերի համար բանտ չնստի, որով սպառնում էին նրան պարտատերերը, նա նորից ժառայության մտավ:

Գնալ բանակ, ուր նա առաջին վականսիայի գնդի հրամանատար էր, չէր կարելի այն պատճառով, որ մայրն այժմ որդու փեշը բռնել էր, ինչպես կյանքի վերջին կարթ. ուստի և, չնայած նրան, որ չէր ուզում մնալ Սոսկվայում՝ առաջուց իրեն չճանաշող մարդկանց շրջանում, չնայած դեպի քաղաքացիական ծառայությունն ունեցած զգվանքին, նա Սոսկվայում պաշտոն վերցրեց քաղաքացիական բաժնում և, իր սիրած մունդիրը հանելով, մոր ու Սոնյայի հետ բնակվեց Սիկցովի Վրաժդիկի վրա գտնվող մի փոքրիկ բնակարանում:

Այդ ժամանակ նատաշան ու Պիեռն ապրում էին Պետերուրգում, պարզ գաղափար շունենալով Նիկոլայի վիճակի մասին: Նիկոլայը, փեսայից դրամ փոխառություն անելով, աշխատում էր նրանից թաքցնել: Իր ողբալի կացությունը: Նիկոլայի դրությունն առանձնապես վատ էր այն պատճառով, որ իր 1200 ուութի ոռնիկով նա ոչ միայն պետք է պահեր իրեն, Սոնյային ու մորը, այլև մորը պիտի պահեր այնպես, որպեսզի նա չնկատեր, որ իրենք աղքատ են: Կոմսուհին կյանքի հարավորությունը չէր կարող հասկանալ առանց՝ մանկությունից իր համար սովորական շռայլության պայմանների և շարունակ, չհասկանալով, թե որքան այդ դժվար էր որդու համար, մերթ կառք էր պահանջում, որ իրենք լունեին, որպեսզի ուղարկեն ծանոթություն հետևից, մերթ թանկ ուտելիք իր համար և զինի որդու համար, մերթ դրամ, որ անակնկալ նվեր տա նատաշային, Սոնյային և նույն Նիկոլային:

Սոնյան վարսւմ էր տան տնտեսությունը, խնամուէ-Հետևում էր մորաքրոջը, բարձրածախ կարդում էր նրա համար, տանում էր նրա քմահաճույքներն ու թաքցրած դժկամությունը և օգնում էր Նիկոլային ծեր կոմսուհուց թաքցնել կարիքի այն վիճակը, որի մեջ գտնվում էին:

Նիկոլայն իրեն երախտապարտ էր զգում Սոնյային այն ամենի փոխարեն, ինչ անում էր Սոնյան իր մոր համար, հիանում էր նրա համբերատարության ու անձնվիրության վրա, բայց աշխատում էր հեռու մնալ նրանից:

Նա սրտի խորքում կարծես հանդիմանում էր Սոնյային նրա համար, որ նա շափազանց կատարյալ էր, և նրա համար, որ ոչ մի բանում չէր կարելի կշուամբել նրան: Սոնյայի մեջ կար ամենը, ինչի համար գնահատում են մարդկանց, բայց դա քիչ էր, որ նիկոլային ստիպեր սիրել նրան: Եվ նա զգում էր, թե որքան ավելի է գնահատում, այնքան ավելի քիչ էր սիրում Սոնյային: Նիկոլայը նրան բռնեց նրա նամակի մեջ եղած խոսքով. այն նամակի, որով Սոնյան ազատություն էր տվել նրան, և այժմ իրեն պահում էր Սոնյայի հետ այնպես, կարծես բոլորը, ինչ եղել էր նրանց միջև, արդեն վաղուց ի վեր մոռացված է և ոչ մի դեպքում չի կարող կրկնվել:

Նիկոլայի դրությունը քանի գնում ավելի էր վատթարա-նում: Այն միտքը, թե ոռնեկից կարող է մի բան ետ գցել, երազ մնաց: Նա ոչ միայն ետ չէր զցում, այլև, մոր պահանջները բավարարելով, մանր պարտքերի տակ էր ընկնում: Նա այդ դրությունից դուրս գալու ոչ մի ելք չէր տեսնում: Հարուստ ժառանգուհու հետ ամուսնանալու միտքը, որին առաջարկում էին նրան ազգականուհիները, նրան զգվելի էր թվում: Իր դրությունից մի այլ ելք՝ մոր մահը երբեք չէր ծագում նրա զրի-խում: Նա սշինչ չէր ցանկանում, ոչ մի բանի հույս շուներ և սրտի խորքում մոռայլ ու խստագույն մի հաճույք էր զգում՝ իր վիճակն անտրամունջ կրելու մեջ: Նա աշխատում էր խուսափել նախկին ծանոթներից՝ նրանց կարեկցանքներով ու վիրավորիչ օգնության առաջարկներով հանդերձ: Խուսափում էր ամեն տեսակ խրախճանքներից ու զվարճություններից: անգամ տանը ոչնչով չէր զբաղվում, բացի այն, որ մոր հետ թուղթ էր բաց անում, անխոս գնում գալիք էր սենյակում և ծխում ծխա-

մործ ծխամործի հետևեց: Նա կարծես ջանասիրությամբ իր մեջ պահպանում էր այն մոայլ տրամադրությունը, որի մեջ միայն նա իրեն ի վիճակի էր զգում կրել իր դրությունը:

## VI

Զմուն սկզբին իշխանադուստր Մարիան եկավ Մոսկվատ Քաղաքում պտտող լուրերից նա իմացավ Ռոստովների ղը-րության մասին և այն մասին, թե ինչպես «որդին իրեն զոհա-բերում է մոր համար», — այդպես էին ասում քաղաքում:

Ծես նրանից ուրիշ բան էլ չէի սպասում», — ասում էր իշխանադուստր Մարիան իրեն, զգալով դեպի նա ունեցած իր սիրո ուրախալի վկայությունը: Հիշելով իր բարեկամական և գրեթե ազգակցական վերաբերմունքը դեպի ամրող ընտանիքը, նա իր պարտքը համարեց գնալ նրանց մոտ: Բայց, հիշելով իր վերաբերմունքը դեպի նիկոլայը՝ Վորոնեժում, իշխանադուստրը վախենում էր այդ բանից: Մեծ ճիգ գործ գնելով իր վրա՝ նա սակայն իր քաղաք գալուց մի քանի շաբաթ հետո եկավ Ռոստովների մոտ:

Նիկոլայն առաջինը դիմավորեց նրան, որովհետև կոմսու-հու մոտ կարելի էր գնալ միայն նրա սենյակով: Նրա վրա գցած առաջին իսկ հայացքից նիկոլայի դեմքը, ուրախության ար-տահայտության փոխարեն, մի ուրախություն, ինչ սպասում էր տեսնել իշխանադուստր Մարիան, ընդունեց սառնության, շրության և հպարտության արտահայտություն, ինչ իշխա-նադուստրը չէր տեսել առաջներում: Նիկոլայը հարցրեց նրա առողջությունը, առաջնորդեց մոր մոտ և, մի հինգ րոպե նըս-տելով, դուրս եկավ սենյակից:

Երբ իշխանադուստրը դուրս էր գալիս կոմսուհու սենյակից, նիկոլայը նորից դիմավորեց նրան և առանձին հանդիսավոր ու շոր ձևով ուղեկցեց նրան մինչև նախասենյակ: Նա ոչ մի խոս-քով շպատամիսնեց իշխանադուստր՝ կոմսուհու առողջության մասին արած դիտողությանը: «Ձեր ի՞նչ բանն է: Թողեք ինձ հանգէստ», — ասում էր նրա հայացքը:

— Եվ ի՞նչ է թրեսում: Ի՞նչ է ուզում: Տանել չեմ կարող 927

այդ տիրուհիներին և բոլոր այդ սիրալիրությունները, — ասավ նա բարձրածայն Սոնյայի ներկայությամբ, ըստ երկույթին, անկարող լինելով զապել իր սրտնեղությունը, նրանից հետո, երբ իշխանադստեր կառեթք հեռացավ տնից:

— Ախ, ինչպես կարելի է այդպես խոսել, Nicolas, — ասավ Սոնյան, հազիվ թաքցնելով իր ուրախությունը: — Նա այսպես բարի է, և տառապ-ն այնպես է սիրում նրան:

Նիկոլայը ոչինչ չպատասխանեց և ուզում էր բնավ շխոսել այլևս իշխանադստեր մասին: Բայց նրա այցելության օրից կոմսուհին օրը մի քանի անգամ խոսք էր բանում նրա մասին:

Կոմսուհին գովում էր նրան, պահանջում էր, որ որդին գնա նրա մոտ, ցանկություն էր հայտնում նրան ավելի հաճախ տեսնել, բայց դրա հետ միաժամանակ տրամադրությունը միշտ վատանում էր, երբ խոսում էր իշխանադստեր մասին:

Նիկոլայն աշխատում էր լոել, երբ մայրը խոսում էր նրա մասին, բայց որդու լուռթյունը զդայնացնում էր կոմսուհուն:

— Նա շատ արժանավոր և հիանալի աղջիկ է, — ասում էր նա, — և դու պետք է այցելես նրան: Դու այնուամենայնիվ պետք է մարդ տեսնես, թե չէ ձանձրանում ես, կարծեմ, մեզ հետ:

— Ես բնավ չեմ ցանկանում, մայրիկ:

— Ուզում էիր տեսնել, հիմա է՛լ չեմ ցանկանում: Ես քեզ, սիրելիս, իսկապես չեմ հասկանում: Դու մեկ ձանձրանում ես, մեկ էլ հանկարծ ոչ ոքի չես ուզում տեսնել:

— Բայց ես չեմ ասել, թե ես ձանձրանում եմ,

— Ինչպես չէ, դու ինքու ասիր, թե նրան տեսնել է՛: չես ուզում: Նա շատ արժանավոր աղջիկ է և միշտ քեզ դուք է Ակել իսկ հիմա ինչ-որ պատճառաբանություններ: Ամեն բան թաքցնում են ինձնից:

— Բնավ, մայրիկ:

— Եթե ես քեզ խնդրած լինեի որևէ անհաճ բան անել, թե չէ՝ խնդրում եմ այցելություն տաս նրան: Կարծեմ, քաղաքավարությունն էլ պահանջում է... Ես քեզ խնդրեցի և հիմա այլևս չեմ խառնվում, երբ դու մորիցդ քաղտնիքներ ունես:

— Կերթամ, եթե դուք ուզում եք:

— Ինձ համար միմնույն է, ես քեզ համար եմ ցանկանում:

Նիկոլայը հոգոց քաշեց, բեղերը կրծելով, և թուղթ բաց անելով, աշխատեց մոր ուշադրությունը դարձնել ուրիշ նյութի վրա:

Երկրորդ, երրորդ և չորրորդ օրը կրկնվեց նույնը և նույն խոսակցությունը:

Ռոստովներին այցելելուց հետո և այն անսպասելի սառն ընդունելությունից հետո, որ ցուց տվեց նրան նիկոլայը, իշխանադուստր Մարիան խոստովանեց իրեն, որ ինքն իրավացի էր, որ չէր ցանկանում առաջինը գնալ Ռոստովների մոտ:

«Ես ուրիշ ոչինչ չէի սպասում, — ասում էր նա իրեն, օգնության կոչելով իր հապարտությունը: — Ես որևէ գործ չունեմ նրա հետ, ես ուզում էի միայն պառավին տեսնել, որ միշտ բարի է եղել դեպ ինձ և որին ես շատ բան եմ պարտական»:

Բայց նա չկարողացավ հանգստանալ այս խորհրդածություններով. մի զգացում, որ նման էր զջումի, տանջում էր նրան, երբ հիշում էր իր այցելությունը: Չնայած այն բանին, որ նա հաստատապես որոշել էր այլևս զգնալ Ռոստովների մոտ և մոռանալ այդ ամենը, նա իրեն շարունակ անորոշ դրության մեջ էր զգում: Եվ երբ նա իրեն հարցնում էր, թե ի՞նչ բան էր այն, որ տանջում էր իրեն, նա ստիպված էր խոստովանել, որ դա իր վերաբերմունքն էր դեպի Ռոստովը: Ռոստովի սառը, քաղաքավարի տոնը չէր բխում նրա՝ դեպ ինքն ունեցած գաղաւամբց. (այդ իշխանագուստարը գիտեր), իսկ այդ տոնը բազարկում էր ինչ-որ բան: Այդ ինչ-որ բանը նա պետք է պարզեր. ու մինչ այդ նա զգում էր, որ մի կարող հանգիստ լինել:

Չմեռվա կեսին նա սերտարանում նստած հետեւում էր եղրոր որդու դասերին, երբ եկան հայտնելու Ռոստովի այցելության մասին: Հաստատ որոշելով շմատնել իր գաղտնիքները և ցուց շտալ իր շփոթությունը, նա մ-լե Բուրիենին հրավիրեց և նրա հետ միասին մտավ հյուրասրահ:

Նիկոլայի դեմքին գցած առաջին իսկ հայացքից իշխանադուստրը տեսավ, որ նա եկել է միայն նրա համար, որ քաղաքավարության պարտքը կատարի, ու որոշեց հաստատապես պահանձել այն իսկ տոնը, որով Ռոստովը կդիմի իրեն:

Նրանք սկսեցին խոսել կոմսուհու առողջության մասին,

բնդշանուր ծանոթների մասին, պատերազմի վերջին նորությունների մասին, և երբ անցավ պատշաճավորության պահանջած այն 10 րոպեն, որից հետո հյուրը կարող է վեր կենալ նիկոլայը ոտքի ելավ, հրաժեշտ տալով:

Իշխանադուստր Մարիան ուղարկել է թուրքենի օգնությամբ խոսակցությունը տարավ շատ լավ. բայց ամենավերջին վայրկյանին, այն պահին, երբ նիկոլայը ոտքի կանգնեց, իշխանադուստրն այնպես հոգնեց խոսել այն մասին, ինչի ինքը գլուխ չուներ, և այն միտքը, թե ինչու մենակ իրե՛ն է այսքան քիչ ուրախություն տրված կյանքում, այնպես զբաղեցրեց նրան, որ նա, ցրվածության նոպայի մեջ, ճառագայթող աչքերը առցել հառած, նստել էր անշարժ, չնկատելով որ Ռոստովը ոտքի կանգնեց:

Նիկոլայը նայեց նրան և, ցանկանալով ձևացնել, թե ինքը չնկատում նրա ցրվածությունը, մի քանի խոսք ասավ ուղարկենին և նորից նայեց իշխանադուստրը: Իշխանադուստրը նստած էր առաջվա պես անշարժ, և նրա քննուշ դեմքին տանցանք էր արտահայտվում: Նիկոլայը հանկարծ խղճաց նրան և աղոտ պատկերացավ, թե գուցե ինքն է նրա դեմքին արտահայտվող տիրության պատճառը: Նիկոլայն ուզեց օգնել նրան, մի որեւէ հաճելի բան ասել. բայց չկարողացավ մի բան հնարել, որ ասեր:

— Մնաք բարե, իշխանադուստր, — ասավ նա:

Իշխանադուստրն սթափվեց, շառագունեց և ծանր հոգոց քաշեց:

— Ախ, ներողություն, — ասավ նա, կարծես արթնանալով: — Դուք արդեն գնում եք, կոմս, է, գնաք բարով: Իսկ կոմսուհու բա՞րձը:

— Սպասեցեք, ես հիմա կրերեմ, — ասավ ուղարկենը և գուրս եկավ սենյակից:

Երկուսն էլ լուս էին, երբեմնակի միմյանց նայելով:

— Այո, իշխանադուստր, — ասավ, վերջապես, նիկոլայը, տիրությամբ ժառանգված, — կարծես երեկ լիներ, բայց որքան չուր է հոսել այն օրից, երբ մենք առաջին անգամ տեսնվեցինք թոգուշարովում: Ինչպես մենք բոլորս մեզ դժբախտության

մեջ էինք զգում, իսկ ես շատ բան կտայի այդ օրերը վերադարձնելու համար... բայց չեն վերադառնա:

Իշխանադուստրն իր ճառագայթող հայացքով սկսուուն նայում էր նիկոլայի աչքերին, երբ նա ասում էր այդ: Նա կարծես աշխատում էր հասկանալ նիկոլայի խոսքերի այն գաղտնի իմաստը, որը բացատրեր իրեն՝ նիկոլայի դեպ ինքն ունեցած զգացումը:

— Այո, այո, — ասավ իշխանադուստրը, — բայց դուք անցյալը բնավ շպիտի ափսոսաք, կոմս: Ինչպես ես եմ հասկանում ձեր կյանքը հիմա, դուք հաճուքով պիտի հիշեք այն, որովհետեւ անձնագործությունը, որով դուք ապրում եք հիմա...

— Ես շեմ ընդունում ձեր գովեստները, — ընդհատեց նիկոլայը նրան հապճեպ, — ընդհակառակը, ես շարունակ կշտամբում եմ ինձ, բայց սա բոլորովին անհետաքրքրիր և տիսուր իփոսակցություն է:

Եվ նորից նիկոլայի հայացքն ընդունեց նախկին շոր ու սառն արտահայտությունը: Բայց իշխանադուստրն արդեն նրա մեջ տեսավ նորից նույն մարդուն, որին ճանաչում էր և սիրում, և այժմ խոսում էր միայն այդ մարդու հետ:

— Ես կարծում էի, թե գուք թույլ կտաք ինձ այդ բանն ասել ձեզ, — ասավ իշխանադուստրը: — Մենք այնպես մոտեցանք ձեզ հետ և ձեր ընտանիքի հետ, և ես կարծում էի, որ գուք անտեղի շեք համարի իմ մասնակցությունը. բայց ես սիսալվեցի, — ասավ նա: Հանկարծ իշխանադուստրը ձայնը դողաց: — Զգիտեմ ինչու, — շարունակեց նա, սթափվելով, — առաջ դուք ուրիշ էիք և...

— Կան հազարավոր պատճառներ, թե ինչու (նա առանձնապես շեշտեց ինչո՞ւ բառը): Ծնորհակալ եմ ձեզնից, իշխանադուստր, — ասավ նա կամաց: — Երբեմն ծանր է:

«Ահա թե ինչո՞ւ: Ահա ինչու, — ասում էր ներքին ձայնը իշխանադուստր Մարիայի սրտում: — Ոչ, ես մենակ այս խընդուն, բարի և պարզ հայացքը, մենակ գեղեցիկ արտաքինը չեմ սիրել նրա մեջ. ես գուշակել եմ նրա ազնիվ, հաստատակամ, անձնագուն հոգին, — ասում էր նա ինքնին: — Այո, նա հիմա աղքատ է, իսկ ես հարուստ.... Այո, դրանից է միայն... Այո, թիե այդ վիճներ...» Եթ, հիշելով նրա առաջվա քնքշությունը և

այժմ նայելով նրա բարի ու թախծոտ դեմքին, իշխանադուստրը հանկարծ հասկացավ Նիկոլայի սպառնության ատաճառը,

— իսկ ինչո՞ւ, կոմս, ինչո՞ւ, — հանկարծ գրեթե ճշց  
իշխանադուստրը, ակամա առաջանալով գեղի Նիկոլյալը—  
ինչո՞ւ, ասացեք ինձ: Դուք պարտավոր եք ասել: — Նիկոլյալը  
լուսմ էք: — Ես չգիտեմ, կոմս, ձեր ինշուն, — շարունակեց  
իշխանադուստր Մարիան: — Բայց ինձ համար ծանր է, ինձ...  
Ես այդ խոստովանում եմ ձեզ: Դուք ինշ-որ բանի համար  
ուզում եք ինձ զրկել առաջվան բարեկամությունից: Եվ այդ  
ինձ ցավ է պատճառում: — Արցունքներ կային իշխանադստեր  
աշբերում ու ձայնի մեջ: — Ես այնքան քիչ երջանկություն  
և մտեսել կյանքում, որ ինձ համար ծանր է ամեն մի կորուստ...  
ներեցեք ինձ, զնաք բարով: — Նա հանկարծ լաց եղավ և դուք  
եկավ սենյակից:

— Իշխանադո՛ւստր Կացեք, ի սեր աստծո, — գոչեց Նիկո-  
լայը, աշխատելով կանգնեցնել նրան: — Իշխանաց՝ առա-

Իշխանադուստր Մարիան ետ նայեց։ Մի քանի վայրկյան նրանք անխոս նայում էին միմյանց աշերի, և հեռավորը, անհարինը հանկարծ դարձավ մոտիկ, հնարավոր ու անխուսափելի։

VII

1813 թվի աշնանը Նիկոլայը ամուսնացավ իշխանադռւստր Մարիայի հետ և կնոջ, մոր ու Սոնյայի հետ տեղափոխվեց Լիսիյե Գորի ապրելու:

Զորս տարվա մեջ նա, առանց կնոջ կալվածք ծախսելու, վճարեց մնացած պարտքերը և, ազգականունու մահից հետո մի փոքրիկ ժառանգություն ստանալով, վճարեց նաև Պիեռի պարտքու:

Սի երեք տարի հետո էլ, 1826 թվին, Նիկոլայն այնպես կարգավորեց իր դրամական գործերը, որ մի փոքրիկ կալված դնեց Լիսիյե Դորիի կողքին, և բանակցություններ էր վարում Հայրական Օտրագնոյեն ետ դնելու մասին, որը նրա փայփա-յած երազն էր:

Սկսելով անտեսությունը վարել անհրաժեշտությունից

րդղամած, նա շուտով այնպես կպավ տնտեսության, որ դա նրա համար դարձավ սիրելի ու գրեթե բացառիկ զբաղմունք: Նիկոլայը պարզ տնտեսատեր էր, չեր սիրում նորամուծություններ, մանավանդ անգլիական տեսակի, որոնք այն ժամանակ մոդայի մեջ էին, ծիծաղում էր տնտեսությանը վերաբերող թեորետիկ երկերի վրա, չեր սիրում գործարաններ, թանկարժեք արտադրություններ, թանկարժեք հացարույսերի ցանքսեր և առհասարակ չեր զբաղվում տնտեսության առանձին մի ճյուղով: Նա միշտ իր առջև տեսնում էր միայն մի կալված, այլ ոչ թե նրա առանձին մի մասը: Իսկ կալվածում գլխավոր նյութը ոչ ազոտն էր և ոչ թթվածինը, որ գտնվում էին հողի և օդի մեջ, ոչ էլ առանձնահատուկ գութանն ու պարարտանյութը, այլ գլխավոր այն գործիքը, որի միջոցով գործում են թե ազոտը, թե թթվածինը, թե պարարտանյութը, թե գութանը, այսինքն՝ մշակը, գյուղացին: Երբ Նիկոլայը անտեսությունն իր ձեռն ստավ և սկսեց խորամուխ լինել նրա տարբեր ճյուղերի մեջ, գյուղացին առանձնապես զեպ իրեն զրավեց նրա ուշադրությունը. գյուղացին նրան ներկայանում էր ոչ միայն գործիք, այլև նպատակ ու դատավոր: Նա մկրտում լավ դիտում էր գյուղացուն, աշխատելով հասկանալ, թե ի՞նչ է նրան հարկավոր, թե ի՞նչն է համարում լավ ու վատ, և միայն ձեացնում էր, թե արդադրություններ է անում ու հրամայում, իսկ էապես միայն ովորում էր գյուղացիներից թե նրանց ձևերը, թե խոսելը, թե ատողություններն այն մասին՝ ի՞նչն է լավ և ի՞նչը վատ: Եվ միայն այն ժամանակ, երբ հասկացավ գյուղացու հաշակն ու գտառմները, սովորեց խոսել նրա լեզվով և ըմոնել նրա խոսքի որոշդաշտը իմաստը, երբ իրեն զգաց նրանց հետ հարազարացած, միայն այդ ժամանակ նա սկսեց համարձակորեն առավարել նրանց, այսինքն՝ գյուղացիների նկատմամբ կատարել այն իսկ պաշտոնը, որի գործադրությունը պահանջվում էր նրանց: Եվ Նիկոլայի անտեսությունը տվեց ամենափայլուն որդյունքները:

Կալվածի կառավարումը ձեռն առնելով, Նիկոլայն իսկույն, սուանց սխալքելու, թափանցողության ինչ-որ մի քարթգով, շշանակում էր կառավարիչ, ավագ, ներկայացուցիչներ հենց մին մարդկանց, որոնք կը լսութեին հենց իրենց զյուղացիների

կողմից, եթե նրանք կարուային ընտրել, և նրա այդ մարդկ երեք չէին փոխվում: Նախքան գոմազրի քիմիական հատկությունների հետազոտությունը, նախքան ողերեսի և կրեդիտի մեջ խրվելը (ինչպես նա էր սիրում հեգնաբար ասել), նա իմանում էր գյուղացիների ունեցած տավարի քանակը և ավելացնում էր այդ քանակը բուլօր հնարավոր միջոցներով: Գյուղացիների ընտանիքները նա պահպանում էր ամենամեծ շափերով՝ բազմամարդությամբ, թույլ շտալով բաժանվելու Մուլերէն, անբարոներին ու թույլերին հալածում էր միատեսակ և աշխատում էր արտաքսել հասարակությունից:

Ցանքսերի և խորհնձի ու հացարույսերը հավաքելու ժամանակ նա միանքամայն միատեսակ հետեւում էր իր և գյուղացիների գաշտերին: Եվ հադվագյուտ տնտեսատերերի մոտ էին լինում այգահեն վաղ ու լավ ցանքսեր և հավաքված դաշտեր ու շատ եկամուտ, ինչպես նիկոլայի մոտ:

Տան ծառայողների հետ նա չէր սիրում որևէ գործ ունենալ, նրանց անվանում էր ծրիակերներ և, ինչպես բոլորն էին էր լինում որևէ կարգագրություն անել ճորտ սպասավորի նկատմամբ, մանավանդ երբ պետք էր պատժել, նա անվճականության մեջ էր լինում և խորհրդակցում էր առան բոլոր անդամների հետ. միայն երբ հնարավոր էր լինում գյուղացու փոխարեն զինվոր տալ տան ճորտ ծառային, նա այդ անում էր առանց տատանվելու: Իսկ գյուղացիներին վերաբերող բոլոր կարգադրությունների մեջ նա երեք չնշին իսկ կասկած չէր ունենում: Նա գիտեր, որ իր յաւրաքանչյուր կարգադրությունը հավանություն կսահնա բոլորի կողմից հակառակ մեկի կամ մի քանիսի:

Նա միատեսակ իրեն թույլ չէր տալիս նեղություն տալ կամ պատժել մարդկանց միայն նրա համար, որ ինքն այդպես էր ցանկանում, ինչպես և թեթևացնել ու պարզեատրել մեկին, որովհետև այդ էր իր անձնական ցանկությունը նա չէր կարող ասել, թե ինչումն է կայանում շափանիշն այն բանի, թե ի՞նչ է հարկավոր և ի՞նչ չէ հարկավոր. բայց այդ շափանիշը նրա արտօւմ հաստատուն էր և աներեր:

Նա հաճախ սրեւ անկարգության կամ անհաջողության

գեպքում ասում էր սրտնեղած. «Մեր ոուս ծողովրդի նետ», — և երեակայում էր, թե տանել չի կարող գյուղացուն:

Բայց նա սրտի ամբողջ զորությամբ սիրում էր այդ մեր ռաւս ծողովուրդը և նրա կենցաղը ու այդ պատճառով էր միայն հասկացել ու յուրացրել անտեսության այն միակ ուղին ու ձեզ, որոնք տալիս էին լավ արդյունքներ:

Կոմսուհի Մարիան իանդում էր ամուսնուն նրա այդ սիրո համար և ցավում էր, որ չէր կարող մասնակցել դրան. բայց չէր կարող հասկանալ այն ուրախություններն ու անախորժությունները, որ պատճառում էր մարդուն իր համար հեռու և օտար այդ աշխարհը: Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչու մարդն այնպես առանձնապես աշխույժ ու երջանիկ էր լինում, երբ արշալույսին վեր կենալով և ամբողջ առավոտն անցնեն, ով դաշտում կամ կալում, վերադառնում էր իր պատրաստած թեյին ցանքսից, հնձից կամ հավաքից: Կոմսուհի Մարիան չէր հասկանում, թե ինչո՞վ էր նա այդպես հիանում, որ հրճվանքով պատմում էր հարուստ տնտեսություն ունեցող գյուղացի Մատվեյ Երմիշինի մասին, որն ամբողջ գիշեր ընտանիքով խուրձեր էր կրել, և ոչ մեկը դեռ ոչինչ չէր հավաքել, իսկ նրա գեղերն արդեն կանգնած էին: Կոմսուհի Մարիան չէր հասկանում, թե ինչո՞ւ ամուսինն այնպես ուրախ, լուսամուտից անցնելով դեպի պատշգամբ, ժպտում էր բեղի տակ ու աշբով անում, երբ վարսակի շրացող ծիկերի վրա թափվում էր տաք ու հորդ անձրել, կամ թե ինչու, երբ հնձին կամ բերքահավաքին սպառնալից ամպը տարվում էր քամուց, նա կարմրած, արևառ ու քրտնած, բարձգենակի ու մանանեխի հոտը մազերի մեջ, կալից գալով, ձեռները հրճվանքով շիկելով, ասում էր «է, էլի մի օր, թե իմը, թե գյուղացիներին՝ ամեն ինչ կալում կլինի»:

Կոմսուհին էլ ավելի քիչ էր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ նա՝ ամուսինն իր բարի սրտով, մշտական իր պատրաստակամությամբ՝ կանխել կնոշ ցանկությունները, գրեթե կատաղում էր, երբ ինքը հայտնում էր նրան իրեն դիմող մի որևէ գեղջկուհու կամ գյուղացու խնդրանքները, որ իրենց չաղմատեն աշխատանքներից, ինչո՞ւ նա, բարեսիրտ Nicolas-ը, համառորեն մերժում էր իրեն, բարկացած խնդրելով նրան շիառնը-

Վել իրեն շվերաբերող գործերին։ Կոմսուհի Մարիան զգում էր, որ ամուսինն առանձին մի աշխարհ ունի, կրթություն սիրած, ինչ-որ օրենքներով, որ ինքը չէր հասկանում։

Երբ կոմսուհի Մարիան, երբեմն աշխատելով նրան հասկանալ, խոսում էր երախտիքի մասին, որը կայանում էր նրանում, թե նա լավություն է անում իր հպատակներին, մարդը բարկանում էր և պատասխանում։ «Այդ արդեն բոլորովին. մտքովս էլ չի անցնում։ Հենց նրանց բարիքի համար շեմ անի Այդ բոլորը պոեզիա է և պառավական հերթափներ, այդ բոլորը մերձավորի բարիք է։ Ինձ հարկավոր է, որ մեր երեխաները մուրացիկ շրաննան, ինձ հարկավոր է կազմակերպել մեր կառողությունը, քանի ողջ եմ. ահա և բոլորը։ Իսկ դրա համար պետք է կարգ, պետք է խստություն... Այ ինչ, — ասում էր Նիկոլայը, սեղմելով իր սանդվնիկ բռունքը։ — Եվ արդարություն, պարզ է, — ավելացրեց նա, — որովհետեւ, եթե գյուղացին մերկ է ու քաղցած և մի քնճուտ ձի ունի, ուրեմն նա ոչ իր համար, ոչ ինձ համար չի կարող մի բան անել։ Վերջացնելու։

Եվ, գուցե, այն պատճառով, որ Նիկոլայի մտքովը չէր անցնում, թե ինքը որեւէ բան անում է ուրիշների համար, առաքինության համար, բոլորը, ինչ նա անում էր, լինում էր արգասավոր։ Նրա կարողությունն արագորեն աճում էր։ Հարևան կալվածատիրոջ գյուղացիները գալիս էին նրան խնդրելու, որ իրենց գնի, և երկար նրա մահից հետո ժողովրդի մեջ բարեպաշտ հիշատակ մնաց նրա կառավարչության մասին։ «Իսկական խազեին էր... Առաջ գյուղացունը, հետո իրենց է, ողորմություն էլ չէր տալիս։ Մի խոսքով՝ խազեին էր»։

### VIII

Մի բան, որ երբեմն տանջում էր Նիկոլային իր տնտեսվարության գործում, դա իր դյուրագրգությունն էր՝ միացած իր ձեռներին ազատություն տալու հին հուսարական սովորության հետ։ Առաջին շրջանում նա դրա մեջ դատապարտելի ոչինչ չէր տեսնում, բայց իր ամուսնության երկրորդ տարին նրա հայցքը նման դատաստանի նկատմամբ հանկարծ փոխվեց։

Մի անգամ ամառը Բոգուշարովոյից կանչվեց տանուտերը, որը փոխարինում էր մեռած Դրոնին։ Նա մեղադրվում էր զանազան խարդախությունների և անկանոնությունների մեջ։ Նիկոլայը դուրս եկավ մուտքի դուռը՝ նրա մոտ, և, տանուտերի առաջին խոսքերից, նախասենյակից լսվեցին աղաղակներ ու հարվածներ։ Նախաճաշին տուն վերադառնալով, Նիկոլայը մտեցավ կնոշը, որ նստել էր գլուխը քարգահի վրա ցած կը-ռացրած, և սկսեց պատմել, ըստ սովորության այն բոլորը, ինչ զրադեցրել էր նրան այդ առավոտ, ի միջի այլոց և Բոգուշարովոյի տանուտերի մասին։ Կոմսուհի Մարիան, կարմրելով, գունատվելով ու շուրթերը սեղմելով, շարունակեց նստել նույն կերպ, գլուխը կախ, և ոչինչ չէր պատասխանում ամուսնու խոսքերին։

— Այդպես էլ անամոթ սրիկա, — ասում էր նա, տաքանալով լոկ հիշելուց։ — Է, ասեր թե հարբած է եղել, չի տեսեել... Բայց քեզ ի՞նչ է պատահել, Մարի, — հանկարծ հարցրեց նա։

Կոմսուհի Մարիան գլուխը բարձրացրեց, ուզեց ինչ-որ բան ասել, բայց շուտով նորից խոնարհեց և շուրթերը հավաքեց։

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, բարեկամս...

Ոչ գեղեցիկ կոմսուհի Մարիան միշտ սիրունանում էր, երբ լաց էր լինում։ Նա երբեք չէր լալիս ցավից կամ սրտնեղությունից, այլ միշտ տիրությունից ու խղճահարությունից։ Եվ երբ նա լալիս էր, նրա ճառագայթող աշքերն անդիմադրելի հմայք էին ստանում։

Հենց որ Նիկոլայը նրա ձեռը բռնեց, նա չկարողացավ զըսպել իրեն և լաց եղավ։

— Nicolas, ես տեսա... նա մեղավոր է, բայց դու, դու, ինչու, Nicolas! — և նա ձեռներով ծածկեց երեսը։

Նիկոլայը լոեց, շառագույն կարմրեց և, նրանից հեռանալով, սկսեց անխոս գնալ գալ սենյակում։ Նա հասկացավ, թե ինչի համար է կինը լալիս. բայց հանկարծ նա իր հոգում շկարողացավ համաձայնել նրա հետ, թե այն, ինչի ընտելացել էր մանկությունից, ինչ համարում էր ամենասովորական բան՝ վատ էր։ «Քնքշանքները պառավական հերթափներ են, թե նա իրավացի է», — հարցնում էր նա ինքն իրեն։ Ինքն իր մեջ այս հարցը շլուծելով՝ նա մի անգամ էլ նայեց կնոշ տառապող ու

Թիրող դեմքին և հանկարծ հասկացավ, որ նա իրավացի է, իսկ ինքը վայուց արդեն մեղավոր է ինքնի իր առաջ:

— Մարի, — ասավ նա կամաց, կնոջը մոտենալով, — առ բանն այս չի լինի երբեք: Քեզ խոսք եմ տալիս: Երբեք, — կրկնեց նա բեկրեկ ձայնով, ինչպես մի տղա, որ ներողության է խնդրում:

Արցունքներն ավելի առատորեն թափվեցին կոմսունու աշխերից: Նա բռնեց մարդու ձեռքը և համբուրեց:

— Nicolas, այդ ե՞րբ ես կոտրել կամեն, — խոսակցաւ թյունը փոխելու համար ասավ նա, նայելով ամուսնու ձեռին, որի վրա մի մատանի կար լառկոռնի գլխով:

— Քիչ առաջ, էլի նույնն է: Ախ, Սարի, ինձ մի հիշեցնի այդ մասին: — Նա նորից կարմրեց: — Ազնիվ խոսք եմ տալիս քեզ, որ այդ բանն այս չի լինի: Եվ թող սա ընդմիշտ հիշատակ լինի ինձ, — ասավ նա, կոտրած մատանին ցույց տալով:

Այդ օրվանից, հետ որ տանուտերերի և գործակատարների հետ բացատրվելիս արյունը նրա երեսն էր խփում և ձեռներն սկսում էին սեղմվել բռունցք գառնալու, նիկոլայը կոտրած մատանին պտտում էր մատին և աշխերը խոնարհում իրեն բարկացնող մարդու առաջ: Բայց և այնպես արրվա մեջ մի երկու անգամ նա ինքնամոռացության մեջ էր ընկնում և այն ժամանակ, կնոջ մոտը գալով, խոստովանում էր և նորից խոստում տալիս, որ հիմա արդեն սա վերջին անգամն է:

— Սարի, դու, երկի, արհամարհում ես ինձ, — ասում էր նա կնոջը, — ես արժանի եմ դրան:

— Դու հեռացիր, հեռացիր շուտով, և թե զգում ես, որ անկարող ես քեզ զսպել, — տիրությամբ ասում էր կոմսուհի Սարիան, աշխատելով միտիթարել մարդուն:

Նահանգի ազնվական հասարակության մեջ նիկոլայը Հարգված էր, բայց ոչ սիրված: Ազնվական շահերը նրան չէին բրաղեցնում: Եվ հենց դրա համար ոմանք նրան համարում էին գոռող, ուրիշները՝ հիմար մարդ: Նրա ամբողջ ժամանակը ամառը, սկսած գարնան ցանքսից մինչև բերքահավաքը, անցնում էր տնտեսության քրաղումների մեջ: Աշնանը նա նույն գործարար լրջությամբ, որով զբաղվում էր տնտեսությամբ, անձնատուր էր լինում որսորդության, մի երկու ամսով յետ-

նում գնում էր իր որսով: Զմեռը գնում էր ուրիշ գյուղեր կամ թե զբաղվում ընթերցանությամբ: Նրա ընթերցանության գրքերն առավելապես պատմական էին, որ յուրաքանչյուր տարի դուրս էր գրքում որոշ գումարի: Նա կազմում էր իր համար, ինչպես ասում էր, լուրջ գրադարան և կանոն էր դարձրել կարդալ այն բոլոր գրքերը, որ գնում էր: Նա յուրջ տեսքով նստում էր առանձնասենյակում կարդալու, սկզբում համարելով իր վրա գրած պարտականություն, իսկ հետո դարձավ սովորական զբագում, որ տալիս էր նրան յուրատեսակ բավականություն և մի գիտակցություն, թե ինքն զբաղված է լուրջ գործով: Գործերով աել գնալուց բացի, նա ձմեռը ժամանակի մեծ մասն անցնում էր տանը, ընտանիքի հետ, մտնելով մոր ու երեխաների չնշին հարաբերությունների մեջ: Նա հետզհետե ավելի ու ավելի էր մոտենում կնոջը, յուրաքանչյուր օր հոգեկան նոր գանձեր գտնելով նրա մեջ:

Սոնյան նիկոլայի ամուսնության օրից ապրում էր նրա տանը: Դեռ իր ամուսնությունից առաջ նիկոլայն, իրեն մեղադրելով ու նրան գովելով, իր կնոջը պատմեց բոլորը, ինչ եղել էր իր և Սոնյայի միջև: Նա խնդրեց իշխանագուստը Մարիային՝ սիրալիր ու բարի լինել դեպի իր ազգականուհին: Կոմսուհի Մարիան լիովին զգում էր իր ամուսնու մեղքը, զգում էր և իր մեղքը Սոնյայի հանդեպ. կարծում էր, որ իր կարողությունն ազդեցություն է ունեցել նիկոլայի ընտրության վրա, չէր կարող ոչ մի բանում կշտամբել Սոնյային, ցանկանում էր սիրել նրան. բայց ոչ միայն չէր սիրում, այլ հաճախ իր սրտում գտնում էր շար զգացմունքներ դեպի նա և դրանց հաղթահարել չէր կարողանում:

Մի անգամ իր բարեկամ Նատաշայի հետ նա խոսեց Սոնյայի և դեպ նա ունեցած իր անարդար վերաբերմունքի մասին:

— Գիտես ինչ, — ասավ Նատաշան, — այ դու Ավետարանը շատ ես կարդացել. այնտեղ մի տեղ կա ուղղակի Սոնյայի մասին:

— Ի՞նչ, — գարմացած հարցրեց կոմսուհի Սարիան:

— Ո՛՛ր ունիցի՝ աացցի և որ ոչ ունիցի՝ բարձեց ինմանեա, Ժիշեւմ ես: Նա՝ Սոնյան, շանեցող է. ինչո՞ւ. չգիտեմ. նրա մեջ թերեւ, չկա էպարզմ, — ես չգիտեմ. բայց նրանից կառնի,

և ամենը առնվեց: Ես նրան սարսափելի խղճում եմ երբեմ, ես առաջ սաստիկ ցանկանում էի, որ Nicolaos-ն ամուսնանա նրա հետ, բայց միշտ էլ կարծես նախազգում էի, որ այդ չի լինելու: Սոնյան անպատող ծաղիկ է, գիտես, ինչպես է ելակի վրա: Երբեմն խղճում եմ նրան, բայց երբեմն էլ մտածում եմ, որ նա այդ չի զգում, ինչպես կզգայինք մենք:

Եվ, չնայած այն բանին, որ կոմսուհի Մարիան բացատրում էր նատաշային, թե Ավետարանի այդ խոսքերը պետք է հասկանալ այլ կերպ, — նայելով Սոնյային, նա համաձայնեց նատաշայի տված բացատրությանը: Իսկապես, թվում էր, թե Սոնյան չէր նեղվում իր վիճակից և միանգամայն հաշտվել էր անպատող ծաղիկի իր նշանակության հետ: Նա թանկ էր զնահատում, կարծես, ոչ այնքան մարդկանց, որքան ամբողջ ընտանիքը: Նա, կատվի պես, փարզում կպշում էր ոչ թե մարդկանց, այլ տանը: Նա խնամում էր պառավ կոմսուհուն, փայփայում ու խաղացնում էր երեխաներին, միշտ պատրաստ էր այն մանր ծառայություններն անել, ինչի որ ընդունակ էր. բայց այդ բոլորն ընդունվում էր ակամա մի շափազանց անշան շնորհակալությամբ...

Լիսիյե Գորիի գաստակերտը կառուցվեց կրկին, բայց այլև ոչ այն շափով, ինչպես հանգուցյալ իշխանի օրով էր:

Կառուցումները, որ սկսվել էին կարիքի ժամանակ, ավելի քան հասարակ էին: Հսկայական տունը, հին քարե հիմքի վրա, փայտից էր, սպաղած միայն ներսի կողմից: Մեծ ընդարձակ տունը, շներկած տախտակե հատակով, կահավորված էր ամենահասարակ կոշտ բազմոցներով և բազկաթոռներով, և իրենց կեշիներից ու իրենց հյուսների շինած սեղաններով ու աթոռներով: Տունը շատ ընդարձակ էր. կային սենյակներ սպասավորների համար և հարկարաժիններ՝ եկվորների համար: Ռոստովների ու Բալկոնսկիների հարազատները երբեմն ընտանիքներով հյուր էին գալիս լիսիյե Գորի՝ իրենց 16 ձիերով, տասնյակ սպասավորներով և ապրում էին ամիսներով: Բացի դրանից տարին շրոս անգամ, կալվածատերերի անվանակոչություններին և ծնունդներին մոտ 100 հյուր էր գալիս մեկ-երկու օրով: Տարվա մեջած ժամանակը անխախտորեն

կանոնավոր կյանքն անցնում էր սովորական զրադումներով, թեյերով, նախաճաշերով, ճաշերով, ընթրիքներով՝ բոլորը տանու մթերքներից պատրաստված:

## IX

Զմեռվա Նիկոլայի օրվա նախատոնակն էր, 1820 թվի դեկտեմբերի 5-ը: Այդ տարի նատաշան՝ երեխաների ու ամուսնու հետ՝ աշնան սկզբից հյուր էր եղբոր տանը: Պիեռ Պետերը ուրկդ էր, ուր գնացել էր իր առանձին գործերով, ինչպես ինքն էր ասում, երեք շաբթով, և ուր նա այժմ ապրում էր արդեն յոթերորդ շաբաթը: Յուրաքանչյուր րոպե սպասում էին նրան:

Դեկտեմբերի 5-ին, Բեկուխովների ընտանիքից բացի, Ռոստովների մոտ հյուր էր նաև Նիկոլայի հին բարեկամը՝ պաշտոնաթող գեներալ Վասիլի Ֆեոդորովիչ Դենիսովը:

Ամսի 6-ին, հանդեսի օրը, երբ հավաքվելու էին հյուրերը, Նիկոլայը գիտեր, որ ինքն ստիպվելու է բեշմելը հանել, հագնել սյուրթուկ, սրաքիթ նեղ կոշիկները և գնալ իր կողմից նոր կառուցված եկեղեցին, ապա շնորհավորանքներ ընդունել, ակուստ առաջարկել և խոսել ազնվականության ընտրությունների ու բերքի մասին: Բայց նախատոնակը գեռ իրավունք էր համարում իրեն անցկացնել սովորականի պես: Մինչեւ ճաշ Նիկոլայն ստուգեց Ռյազանի նահանգի գյուղի՝ կնոջ ազգականուհու կալվածի կառավարչի հաշվիները, երկու նամակ գրեց գործերի վերաբերյալ և գնաց անցավ կալը, տավարի ու ծիերի գոմերը: Միշոցներ ծեռք առնելով վաղը տերունական տոնի առթիվ սպասավելիք ընդհանուր հարբեցության դեմ, նա ճաշին տուն եկավ և, շկարողանալով կնոջ հետ երես առ երես խոսել, նստեց 20 մարդու պատրաստություն ունեցող երկար սեղանի մոտ, որի շուրջը հավաքվել էին բոլոր տնեցիք: Սեղան էին նստել մայրը, սրա մոտ ապրող պառավ Բելովան, կինը, երեք երեխան, դաստիարակշուհն, դաստիարակը, ազգականի որդին իր դաստիարակի հետ, Սոնյան, Դենիսովը, նատաշան, սրա երեք երեխան, սրանց դաստիարակշուհն և ծերուկ Միխայլի հիվանդը՝ իշխանի ճարտարապետը, որ հանգստի կոչված, ապրում էր լիսիյե Գորիում:

Կոմսուհի Մարիան նստել էր սեղանի հակառակ ծայրին։ Հենց որ ամուսինն իր տեղը նստեց, այն շարժումից, որով անձեռոցիկը հանելով, արագ տեղափոխեց իր պաշե դրվագ գավաթն ու բաժակը, կոմսուհի Մարիան որոշեց, որ նրա տրամադրությունը վատ է, ինչպես այդ երթեմն պատահում էր, մանավանդ արզանակից առաջ, և երբ նա տնտեսությունից ուղղակի գալիս էր ճաշի։ Կոմսուհի Մարիան շատ լավ էր իմանում նրա այդ տրամադրությունը, և երբ ինքը լավ տրամադրության մեջ էր լինում, հանգիստ սպասում էր, մինչև նա արզանակն ուտեր, և այն ժամանակ արդեն սկսում էր խոսել նրա հետ և ստիպում էր խոստովանել, որ նա առանց պատճառի է եղել վատ տրամադրության մեջ, բայց հիմա նա բոլորովին մոռացել էր իր դիտողականությունը։ Կոմսուհին ցավում էր, որ նա առանց պատճառի է բարկանում իր վրա. ու իրեն ոժքախտ էր զգում։ Կոմսուհի Մարիան հարցրեց նրան, թե ո՞ւր էր նա պատասխանեց։ Կոմսուհին դարձյալ հարցրեց, թե ամեն ինչ կարգին է տնտեսության մեջ։ Մարդը տհաճությամբ կնճռեց դեմքը կնոջ անբնական տոնից և հապեեալ պատասխանեց։

«Ուրեմն ես չի սիսակում, — մտածեց կոմսուհի Մարիան, — և ինչի՞ համար է բարկանում ինձ վրա։ Ամուսնու պատասխանի տոնի մեջ կոմսուհի Մարիան անբարյացակամություն տեսավ դեպի ինքը և ցանկություն՝ խոսակցությունն ընդհատելու։ Կոմսուհին զգաց, որ իր խոսքերն անբնական էին, բայց նա չկարողացավ իրեն զապել, որպեսզի նորից մի քանի հարցեր շտա։

Խոսակցությունը ճաշի վրա, Դենիսովի շնորհիվ, շուտով դարձավ ընդհանուր և աշխույժ, և կոմմենհի Մարիան չըր խոսում ամուսնու հետ։ Երբ սեղանից վեր կացան և եկան ծեր կոմսուհուն շնորհակալություն հայտնելու, կոմսուհի Մարիան իր ծեռը դեմ անելով, համրութեց ամուսնուն և հարցրեց, թե նա ինչի՞ համար է բարկացել իր վրա։

— Դու միշտ տարօրինակ բաներ ես մտածում, մտքովս էլ լի անցել բարկանալ, — ասավ նա։

Բայց միշտ բառը պատասխանեց կոմսուհի Մարիային. այո, բարկանում եմ և շեմ ուզում ասել։

Նիկոլայն իր կնոջ հետ ապրում էր այնպես լավ, որ անգամ

Սոնյան ու պառավ կոմսուհին խանդից անհամաձայնություն էին ցանկանում նրանց, չին կարողանում առիթ գտնել կըշտամբանքի համար. բայց նրանց մեջ էլ լինում էին թշնամության րոպեներ։ Երբեմն, հենց ամենաերջանիկ պահերից հետո, հանկարծ նրանց համակում էր խորթության ու թշնամանքի զգացում. այդ զգացումը երևան էր գալիս ամենից հաճախ կոմսուհի Մարիայի հղության օրերին։ Այժմ նրանք գտնվում էին այդ շրջանում։

— Է, messieurs et mesdames<sup>1</sup>, — ասավ Նիկոլայը բարձրածայն և կարծես ուրախ (կոմսուհի Մարիային թվաց, որ ալդդիտմամբ էր, որպեսզի իրեն վիրավորի)։ — Ես ժամը վեցից ոտի վրա եմ։ Վաղն արդեն պետք է տանջվել, իսկ հիմա գնանք հանգստանալու։

Եվ, կոմսուհի Մարիային էլ ոչինչ չասած, նա գնաց փոքրիկ բազմոցարանն ու պառկեց բազմոցի վրա։

«Այ միշտ այսպես է, — մտածում էր կոմսուհի Մարիան։ Բոլորի հետ խոսում է, միայն ոչ ինձ հետ։ Տեսնում եմ, տեսնում եմ, որ ես նրա համար զգվելի եմ։ Մանավանդ այս վիճակում։ Նա նայեց իր բարձրացած փորին և հայելում իր դեղնագումատ ու նիհարած դեմքին, ուր աշքերն ավելի, բան երբեք, խոշորացած էին։

Եվ ամեն ինչ նրա համար դարձավ տհաճ։ Դենիսովի թե կանչը, թե քրքիչը, թե նատաշայի խոսակցությունը, թե մանավանդ այն հայացքը, որ հապեեալ նրա վրա էր նետում Սոնյան։

Սոնյան միշտ առպջին առիթն էր լինում, որ կոմսուհի Մարիան ընտրում էր իր զգայնության համար։

Նստելով հյուրերի մոտ և ոչինչ շհամկանալով նրանց ասածներից՝ նա կամացով դուրս եկավ և գնաց մանկանց։

Երեխաները աթոռներին նստած գնում էին Մոսկվա և նըրան հրավիրեցին միանալ իրենց։ Նա նստեց, խաղաց նրանց հետ, բայց մարդու և նրա անառիթ բարկության մասին ունեցած միտքը շարունակ տանջում էր նրան։ Նա վեր կացավ ու,

գժվարությամբ ոտնամատերի վրա քայլելով, գնաց փոքրիկ բազմոցարանը:

«Գուցե, նա քնած չէ, ևս կրացատրվեմ նրա հետո, — ասավ նա իրեն: Անդրյուշան, նրա պավագ որդին, նրան ընդօրինակելով, ոտնամատերի վրա գնաց մոր հետեւից: Կոմսուհի Մարիան նրան շնկատեց:

— C hère Marie, il dort, je crois; il est si fatigué! — ասավ (ինչպես կոմսուհի Մարիային թվաց) ամենուրեք իրեն պատահող Սոնյան մեծ բազմոցարանում: — Անդրյուշան հանկարծ չզարթեցնի նրան:

Կոմսուհի Մարիան ետ նայեց, տեսավ հետեւից եկող Անդրյուշային, զգաց, որ Սոնյան իրավացի է, և ճենց դրանից էլ կարմրատակեց և, ըստ երևույթին, դժվարությամբ զսպեց իրեն, որ խիստ խոսք շասի: Բայց ոչինչ շասավ և, որպեսզի Սոնյային լսի, ձեռով նշան արավ, որ Անդրյուշան շաղմի (բայց նա այնուամենային գնաց մոր հետեւից) և ինքը մոտեցավ դռանը: Սոնյան անցավ գնաց մյուս դռնից: Այն սենյակից, ուր քնած էր նիկոլայը, լսվում էր նրա համաշափ, իր ամենանվազ երանգներով կնոջը ծանոթ շնչառությունը: Նա, լրացնելով այդ շնչառությունը, իր առջև տեսավ նրա հարթ, զեղեցիկ ճակատը, բեղերը, ամբողջ դեմքը, որին ինքն այնպէս հաճախ նայում էր երկար, երբ նա քնած էր լինում գիշերվալության մեջ: Նիկոլայը հանկարծ շարժվեց և տնքաց: Եվ նույն վայրկանին Անդրյուշան կանչեց դուան հետեւից: «Պապա, մայրիկն այստեղ կանգնած էս: Կոմսուհի Մարիան վախից գունատվեց և սկսեց նշաններ անել որդուն: Նա լոեց, և մի բողքի շափ տեսց կոմսուհի Մարիայի համար սարսափելի լուսաթյունը: Նա գիտեր, թե ինչպես նիկոլայը չէր սիրում, որ իրեն արթնացնում են: Հանկարծ դուան հետեւից լսվեց տնքոց, շարժում, և նիկոլայի դժգոհ ձայնն ասավ.

— Մի բոպե հանգիստ չեն տա: Մարի, դո՞ւ ես: Դրան ինչո՞ւ ես բերել այստեղ:

— Եկա միայն նայելու, ես շտեսա... ներողություն...

Նիկոլայը հազար ու լոեց: Կոմսուհի Մարիան հեռացավ դռնից և որդուն տարավ մանկանց: Հինգ բոպե անց փոքրիկ սեալյա Յ տարեկան նատաշան, հոր սիրելին, եղբօրից իմանալով, որ հայրիկը քնած է, իսկ մայրիկը բազմոցարանում է, մորից աննկատելի, վազեց հոր մոտ: Սևալյա աղջիկը գուուը ճուշացրեց համարձակ, տափակ ոտների եռանդուն փոքրիկ քայլերով մոտեցավ բազմոցին և, դիտելով հոր դիրքը, որ քնած էր մեջքը նրան արած, բարձրացավ ոտի ծայրերի վրա և համբուրեց հոր՝ գլխի տակ դրած ձեռը: Նիկոլայը շրջվեց խանդղատանքի ժամփը դիմքին:

— Նատաշա', նատաշա', — լսվեց դռնից կոմսուհի Մարիայի վախեցած շշունջը: — Հայրիկն ուզում է քնել:

— Զէ, մայրիկ, նա չի ուզում քնել, — համոզված պատասխանեց փոքրիկ նատաշան: — Նա ծիծաղում է:

Նիկոլայը ոտներն իշեցրեց, վեր կացավ և գրկեց աղջկան:

— Ներս արի, Մաշա, — ասավ նա կնոջը:

Կոմսուհի Մարիան մտավ սենյակ և նստեց ամուսնու կողքին:

— Ես շտեսա էլ, թե ինչպես Անդրյուշան վագել է հետեւյքս, — քաշվելով ասավ նա: — Ես այնպես:

Նիկոլայը, մի ձեռով աղջկանը բռնած, նայեց կնոջը և, նկատելով նրա դեմքի մեղափոր արտահայտությունը, մյուս ձեռով գրկեց նրան և համբուրեց մազերը:

— Կարելի՞ է մայրիկին համբուրել, — հարցրեց նա նատաշային:

Նատաշան ամոթիած ժպտաց:

— Էլի, — հրամայական շարժումով ասավ երեխան, ցուց տալով այն տեղը, ուր համբուրեց նիկոլայը կնոջը:

— Ես զիտեմ, դու ինչ' ես կարծում, որ տրամադրությունս լավ չէ, — ասավ նիկոլայը, պատասխանելով այն հարցին, որը, նա գիտեր, կար կնոջ սրտում:

— Դու չես կարող երևակայել, ինչպես ես դժբախտ եմ լինում, մենակ, երբ դու այդպես ես: Ինձ շարունակ թվում է...

— Մարի, հերիք է, հիմարություն է: Ինչպես չես ամաչում, — ասավ նա զվարթ:

<sup>1</sup> Սիրէլ Մարի, նա քնած է, կարծեմ. այնքան հոգնած է:

— Ինձ թվում է, թե դու չես կարող սիրել ինձ, որ ես այն պես տգեղ եմ... և միշտ... իսկ հիմա... սրանում...

— Ախ, ինչ ծիծաղելին ես: Ոչ թե սիրելի ես, որ լավ ես, այլ լավ ես, որովհետև սիրելի ես: Այդ միայն Malvinas-ին և ուրիշներին սիրում են նրա համար, որ նրանք սիրուն են. իսկ կողան մի՛թե ես սիրում եմ: Ես շեմ սիրում, այլ այնպես, լոգիստիմ ինչպես ասեմ քեզ: Առանց քեզ և երբ այսպես մեր մեջ ինչ-որ կատու է անցնում, ես կարծես կորած եմ և ոչինչ շեմ կարող: Հը, ի՞նչ է, ես իմ մատը սիրո՞ւմ եմ: Չեմ սիրում, բայց փորձիր մատս կարել...

— Ոչ, ես այդպես չեմ. բայց ես հասկանում եմ: Դու ուրեմն չես բարկանո՞ւմ ինձ վրա:

— Սարսափելի բարկանում եմ,— ասավ Նիկոլայը ժպտալով և, ոտի կանգնելով՝ ու մազերը շտկելով, սկսեց գնալ գալ սենյակում:

— Գիտես, Մարի, ինչի մասին էի մտածում,— սկսեց նա այժմ, երբ հաշտությունը կայացել էր, անմիջապես սկսեց բարձրածայն մտածել կնոջ ներկայությամբ:

Նա չէր հարցնում, թե կինը պատրաստ է արդյոք լսել իրեն. նրա համար միւնույն էր: Նրա գլխում միտք էր ծագել, նշանակում է կենոյ զինում պիտի լիներ: Եվ Նիկոլայը պատմեց կնոյն իր մտադրությունը՝ համոզել Պիեռին, որ մինչև գարուն մնա իրենց հետ:

Կոմսուհի Մարիան լսեց նրան, դիտողություններ արավ և իր հերթին սկսեց բարձրածայն մտածել: Նրա մտքերը վերաբերում էին երեխաներին:

— Ինչպես կինն արդեն երևում է այժմյանից,— ասավ նա Փրանսերեն, ցույց տալով փոքրիկ նատաշային: — Դուք մե՞ք, կանանց ս, կշտամբում եք անտրամարանության համար: Ահա վասիկ սա՝ մեր լոգիկան: Ես ասում եմ՝ պապան ուզում է քնի, իսկ նա ասում է ու, նա ծիծաղում է: Եվ սա իրավացի է, — ասավ Կոմսուհի Մարիան, երջանիկ ժպտալով:

— Այս, այս:

Եվ Նիկոլայը, աղջկան վերցնելով իր ուժեղ ձեռի վրա, վեր բարձրացրեց, նստեցրեց ուսին, տուախները բռնեց ու սկսեց

նրա հետ գնալ գալ սենյակում: Հայր ու աղջիկ միատեսակ անիմաստորեն-երջանիկ դեմք ունեին:

— Բայց գիտես, դու կարող ես անիրավացի լինել: Դու սրան շափազանց ես սիրում, — շշուկով Փրանսերեն ասավ կոմսուհի Մարիան:

— Այս, բայց ի՞նչ արած... ես աշխատում եմ ցույց շտալ...

Այդ ժամանակ հաշտում և նախասենյակում լսվեց ճոկկի և քայլերի ձախ, որ նման էր թե մարդ եկավ:

— Ինչ-որ մեկն եկավ:

— Հավատացած եմ, որ Պիեռն է: Կերթամ կիմանամ, — ասավ կոմսուհի Մարիան և դուրս եկավ սենյակից:

Կնոյ բացակայությամբ Նիկոլայը թույլ տվեց իրեն աղյորեանը վազեվազ պտտել սենյակի մեջ: Հեալով, նա արագ գցեց ծիծաղող աղջկան և սեղմեց կրծքին: Իր թոփշքները նրան հիշեցրին պարերը, և նա, նայելով մանկան կլորիկ երջանիկ փոքրիկ դեմքին, մտածում էր, թե ինչպիսին կլինի աղջիկը, երբ ինքը ծերացած սկսի հասարակության մեջ տանել նրան և, ինչպես պատճենում էր հանգուցյալ հայրն աղջկա հետ պարում էր Դանիլո Կուպորը, նրա հետ մազուրկա պարեր:

— Նա՝ է, նա՝, Nicolas, — ասավ մի քանի րոպեից հետո կոմսուհի Մարիան, սենյակ վերադառնալով: — Հիմա կենդանացագ մեր նատաշան: Պետք էր տեսնել նրա խանդավառությունը և թե ինչպես Պիեռն անմիջապես կերավ ուշանալու համար: — Դե, գնանք, շուտ, գնա՞նք: Դե, թողեք իրար, վերջապես, — ասավ նա, ժպտալով նայելով աղջկան, որ կպել էր հորը:

Նիկոլայը դուրս եկավ, աղջկա ձեռից բանած:

Կոմսուհի Մարիան մնաց բազմոցարանում:

— Երբեք, երբեք չէի հավատա, — փափսում էր նա ինքն իրեն, — թե կարելի է այսպես երջանիկ լինել: — Նրա դեմքը փայլեց ժպիտից. բայց միւնույն ժամանակ նա հոգոց քաշեց, և մի մեղմ տիրություն արտահայտվեց նրա խոր հայցքում: Կարծես բացի իր զգացած երջանկությունից, կար մի ուրիշ, այս կյանքում անհասանելի երջանկություն, որի մասին նա կամա հիշեց այս բոպեին:

Նատաշան ամուսնացավ 1813 թվի վաղ գարնանը, և 1820 թվին արդեն նա ուներ երեք աղջկե և մի որդի, որին ցանկացել էր նա և այժմ ինքն էր կերակրում։ Նա լցվել էր ու լախացել, այնպես որ դժվար էր այդ ուժեղ մոր մեջ ճանաչել առաջին բարակ, շարժուն նատաշային։ Նրա դիմագծերը գարձել էին որոշակի և հանգիստ՝ մեղմության ու պայծառության արտահայտություն ունեին։ Նրա դեմքին, ինչպես առաջ, շկար աշխուժության այն մշտավառ կրակը, ինչ կազմում էր նրա հրամայքը։ Այժմ հաճախ երեսում էր նրա դեմքն ու մարմինը, իսկ հոգին բնավ չէր երեսում։ Երեսում էր միայն ուժեղ, սիրուն և բեղմնավոր էգը։ Այժմ շատ հազվագեպ էր նրա մեջ վառվում նախկին կրակը։ Այդ լինում էր միայն այն ժամանակ, երբ, իշպես հիմա, մարդը վերադառնում էր, երբ երեխան առողջանում էր կամ երբ նա կոմսուհի Մարիայի հետ հիշում էր իշխան Անդրեյին (ամուսնու հետ, ենթադրելով, թե նա իրեն խանդում է իշխան Անդրեյի հիշատակի հանդեպ, երբեք չէր խոսում նրա մասին) և, շատ հազվագեպ, երբ որևէ բան պատճառաբար հրապուրում էր նրան երգելու, որ նա բոլորովին թողել էր ամուսնությունից հետո։ Եվ այդ հազվագյուտ բուպեներին, երբ նախկին կրակը բռնկվում էր նրա զարգացած գեղեցիկ մարմնում, նա դառնում էր էլ ավելի հրապուրիչ, քան առաջ։

Ամուսնության օրից նատաշան մարդու հետ ապրում էր Մոսկվայում, Պետերբուրգում և Մոսկվայի մոտի գյուղում ու մոր մոտ, այսինքն՝ Նիկոլայի տանը։ Հասարակության մեջ շահել կոմսուհի Բելովիշվային քիչ էին տեսնում, և նրանք, ովքեր տեսնում էին, դժգո՞ն էին մնում։ Նա ոչ սիրելի էր, ոչ սիրալիր։ Նատաշան ոչ այն է թե սիրում էր առանձնություն (նա շփիտեր՝ սիրում էր թե ոչ, նրան նույնիսկ թվում էր, որ ոչ), բայց նա իր մեջ կրելով, ծնելով ու կերակրելով երեխաներին և յուրաքանչյուր բոպե մասնակցելով ամուսնու կյանքին, չէր կարող այդ պահանջները բավարարել այլ կերպ, քան հասարակությունից հրաժարվելով։ Բոլորը, որ մինչ ամուսնությունը ճանաշում էին նատաշային, զարմանում էին նրա մեջ տեղի ունեցած փոփոխության վրա, ինչպես մի տեսակ

անսովոր բանի վրա։ Միայն պառավ կոմսուհին, մայրական հոտառությամբ ըմբռնելով, որ նատաշայի բոլոր պոռթկումները սկիզբն էին միայն ընտանիք, ամուսին ունենալու պահանջի, — ինչպես նա, ոչ այնքան կատակով, որքան նշմարտապես, ճշում էր Օտրադնոյեում։ Մայրը զարմանում էր նատաշային շհասկացող մարդկանց զարմանքի վրա, և կրկնում էր, թե ինքը միշտ իմանում էր, որ նատաշան օրինակելի կին ու մայր է լինելու։

— Նա միայն ծայրահեղության է հասցնում իր սերը դեպի ամուսինն ու երեխաները, — ասում էր կոմսուհին, — այնպես որ դա մինչև իսկ հիմարություն է։

Նատաշան չէր հետեւում այն ոսկի կանոնին, որ քարոզում են խելոք մարդիկ, մանավանդ ֆրանսացիք, և որը կայանում էր այն բանում, թե աղջիկն ամուսնանալով, շպետք է թուլանա ու ընկնի, շպետք է թողնի իր տաղանդները, պետք է էլ ավելի, քան աղջկությունը, զբաղվի իր արտաքինով, պետք է հըրապուրի ամուսնուն, այնպես, ինչպես հրապուրում էր ոչ ամուսնուն։ Նատաշան, ընդհակառակը, միանգամբ թողեց իր բոլոր հրապուրանքները, որոնցից մեկն անսովոր ուժգին էր՝ երգեցողությունը։ Նա դրա համար էլ թողեց այն, որ այդ ուժեղ հրապուրանք էր։ Նատաշան հոգ չէր տանում ոչ իր շարժումների մասին, ոչ իր խոսքի նրագեղության մասին, ոչ այն մասին, որ ամուսնուն երեսա ամենադուրեկան կեցվածքներով, ոչ իր տուալետի մասին, ոչ էլ այն մասին, որպեսզի չնեղի ամուսնուն իր պահանջկոտությամբ։ Նա ամեն ինչ անում էր այդ կանոններին հակառակ։ Նա զգում էր, որ այն հրապուրանքները, որ բնագըր սովորեցնում էր նրան գործադրել առաջ, այժմ միայն ծիծաղելի կինեկին ամուսնու աշխում, որին նա անձնատուր էր եղել ամբողջովին։ Այսինքն՝ ամրող հոգով, ոչ մի անկյուն փակ շթողնելով նրա համար։ Նա զգում էր, որ իր կապն ամուսնու հետ պահպանվում է ոչ թե այն բանաստեղծական զգացմունքներով, որ ամուսնուն գրավել էին դեպ ինքը, այլ պահպանվում էր ինչ-որ ուրիշ, անորոշ, բայց հաստատուն մի բանով, ինչպես իր սեփական գոգու կապը մարմնի հետ։

Խոպոպներ դնել, ոռրոններ հագնել և ոռմանսներ երգիլ

Նրա համար, որպեսզի ամուսուն գրավի դեպ իրեն, նրան նույնքան տարօրինակ էթ թվում, որքան իրեն զարդարեր նրա համար, որպեսզի ինքն իրենից գոհ մնար: Իսկ իրեն զարդարեր նրա համար, որպեսզի ուրիշներին դուր գար, թերևս, դա հաճելի լիներ նրան,— նա չգիտեր, բայց բոլորովին ժամանակ չկար: Իսկ գլխավոր պատճառը, որ նա չէր զբաղվում ոչ երգեցողությամբ, ոչ տուալետով, ոչ իր խոսքերի կշուղատումով, այն էր, որ նա բոլորովին ժամանակ չուներ դրանցով պաշտելու:

Հայտնի է, որ մարդ ունակություն ունի խորասուզվել ամբողջովին մի առարկայի մեջ, որքան էլ դա աննշան թվանք հայտնի է, որ չկա մի այնպիսի չնշին առարկա, որի վրա ուշադրություն կենտրոնացնելով՝ այն շաճեր-շմեծանար անսահման չափով:

Առարկան, որի մեջ խորասուզվեց միանգամայն նատաշան,— ընտանիքն էր, այսինքն՝ ամուսինը, որին պետք էր պահել այնպես, որպեսզի նա անրաժան պատկաներ իրեն, տանը,— և երեխաները, որոնց պետք էր կրել արգանդում, ծնել, կերակրել և դաստիարակել:

Եվ որքան շատ էր նա խորասուզվում ոչ թե մտքով, այլ ամբողջ հոգով, իր ամբողջ չությամբ իրեն զբաղեցնող առարկայի մեջ, այնքան ավելի այդ առարկան աճում էր, մեծանում նրա ուշադրության ներքո, և այնքան ավելի թույլ ու չնշին էին թվում նրան իր ուժերը, այնպես որ նա դրանք բոլորը կենտրոնացրել էր միևնույն բանի վրա և ախուամենայիլ չէր հասցնում անել այն ամենը, ինչ նրան հարկավոր էր թը-քում:

Կանանց իրավունքների, ամուսինների հարաբերությունների, սրանց ազատության ու իրավունքների մասին եղած խոսքերն ու դատողությունները, թեև դեռ չէին կոչվում, ինչպես այժմ, նարցեր, այն ժամանակ էլ ճիշտ այնպես էին, ինչպես հիմա. բայց այդ հարցերը ոչ միայն չէին հետաքրքրում նատաշային, այլ նա բացարձակապես չէր հասկանում դրանք:

Այդ հարցերն այն ժամանակ էլ, ինչպես հիմա, գոյություն ստեղծվել էին միայն այն մարդկանց համար, որոնք ամուսնության

մեջ տեսնում են մենակ բավականություն, որ ամուսիններն ստանում են միմյանցից, այսինքն՝ մենակ ամուսնության սկզբումը, այլ ոչ թե նրա բովանդակ նշանակությունը, որ կայնում է ընտանիքի մեջ:

Այդ դատողությունները և այժմյան հարցերը, նման այն հարցերին, թե ինչ ձևով որքան կարելի է ավելի բավականություն ստանալ ճաշից, այն ժամանակ, ինչպես և հիմա, գոյություն չունեն մարդկանց համար, որոնց համար ճաշի նպատակը սնունդն է և ամուսնության նպատակը՝ ընտանիքը:

Եթե ճաշի նպատակը՝ մարմնին սնունդ տալն է, ուստի նա, ով միանգամից երկու ճաշ ուտի, թերևս, հասնի մեծ բավականության, բայց նպատակին չի հասնի, որովհետև ստամոքսը յի մարսի երկու ճաշը:

Եթե ամուսնության նպատակը ընտանիքն է, ուստի նա, ով կցանկանա ունենալ շատ կին ու մարդ, թերևս շատ բավականություն ստանա, բայց ոչ մի գեպքում ընտանիք չի ունենա:

Ամրոց խնդիրը, եթե ճաշի նպատակը սնունդն է, իսկ ամուսնության նպատակը՝ ընտանիքը, լուծվում է միայն նրանով, որպեսզի մարդ չուտի նրանից ավելին, ինչ կարող է ստամոքսը մարսել,— և շունենալով ավելի կանայք ու մարդիկ, քան այնքան, որքան պետք է ընտանիքի համար, այսինքն՝ մի կին և մի մարդ: Նատաշային ամուսին էր հարկավոր: Ամուսին տվել էին: Եվ ամուսինը նրան ընտանիք էր տվել: Եվ ուրիշ ավելի լավ ամուսնու հարկավորությունը ոչ միայն չէր տեսնում, այլև, որովհետև նրա հոգեկան բոլոր կարողությունները սկեսված էին այն բանին, որպեսզի ծառայեր այդ ամուսնուն ու ընտանիքին, նա չէր կարող պատկերացնել և ոչ մի շահ էլ չէր տեսնում այդ պատկերացման մեջ, թե ինչ կլիներ, եթե լիներ մի այլ բան:

Նատաշան չէր սիրում հասարակություն առհասարակ, բայց նա ավելի թանկ էր գնահատում հարազատների հասարակությունը՝ կոմսուհի Մարիայի, եղբոր, մոր և Սոնյայի: Նա թանկ էր գնահատում հասարակությունն այն մարդկանց, որոնց մոտ կարսղ էր գնալ մազերը քանդված, խալաթը հագին, կարող էր մեծ բայլերով զուրս գալ մանկանոցից և, ուրախ գեմքով, ցույց տալ երեխայի՝ կանայի փոխարկեն գեղին թիժ ունեցող

լաթը ու մխիթարանքի խոսքեր լսել այն մասին, թե երեխան հիմա շատ ավելի լավ է:

Նատաշան այն աստիճան էր իջել, որ նրա կոստյումները, նրա սանրվածքը, նրա ոչ տեղին ասլած խոսքերը, նրա խանդը — նա խանդում էր Սոնյային, դաստիարակչունուն, ամեն մի սիրուն և ոչ սիրուն կնոջ — իր բոլոր մերձավորների համար կատակների սովորական առարկա էին: Ընդհանուր կարծիքն այն էր, թե Պիեռը գտնվում է կնոջ կրունկի տակ, և իսկապես այդ այդպես էր: Ամուսնության առաջին իսկ օրերից նատաշան դրեց իր պահանջները: Պիեռը շատ զարմացավ կնոջ այդ իր համար բոլորովին նոր հայացքի վրա, որը կայտնում էր նրանում, թե ամուսնու կյանքի յուրաքանչյուր բուպեն պատկանում է իրեն ու ընտանիքին. Պիեռը զարմացավ կնոջ պահանջների վրա, բայց իրեն շոյված զգաց դրանցից ու ենթարկվեց դրանց:

Պիեռի ենթակայությունը կայանում էր նրանում, որ նա չէր համարձակվում ոչ միայն հետևել, այլև չէր համարձակվում ժամանակնեմ խոսել ուրիշ կնոջ հետ, չէր համարձակվում գնալ ակումբները՝ ճաշերի, այնպես, նրա համար, որ ժամանակ անցկացնի, չէր համարձակվում փող ծախսել քամահանույքի համար, չէր համարձակվում երկար ժամանակով մեկնել. բացառություն լինում էին գործերի համար, որոնց մեջ կինը մտցրել էր և ամուսնու՝ գիտություններով զբաղվելը. որոնցից նա ոչինչ չէր հասկանում, բայց որոնց վերագրում էր մեծ կարևորություն: Դրա փոխարեն Պիեռը լիակատար իրավունք ուներ իր տան մեջ տեր ու տնօրեն լինել ոչ միայն ինքն իր նկատմամբ, այլև ամբողջ ընտանիքի: Նատաշան տանն իրեն դրել էր ամուսնու ստրկուռու վիճակում. և ամբողջ տունը ոտի ծայրերի վրա ման գալիս, երբ Պիեռը պարապում էր՝ կարդում կամ գրում իր առանձնարանում: Բավական էր Պիեռը մի որևէ ցանկություն հայտներ, որպեսզի այն, ինչ նա սիրում էր, միշտ կատարվեր: Բավական էր նա ցանկությունն արտահայտեր, որ նատաշան վեր թռչեր ու վազեր կատարելու:

Ամբողջ տունը կառավարվում էր միայն ամուսնու կարծեցյալ կարգադրություններով, այսինքն՝ Պիեռի ցանկություններով, որոնք նատաշան աշխատում էր գուշակել: Նատաշայի

ապրելակերպը, ծանոթությունները, կապերը, զբաղումները, երեխանների գաստիարակությունը — ոչ միայն բոլորն արփում էր Պիեռի արտահայտած կամքի համաձայն, այլ նատաշան ձգտում էր գուշակել այն, ինչ կարող էր բխել Պիեռի խոսակցությունների մեջ արտահայտված մտքերից: Եվ նա ճշշտորեն գուշակում էր այն, ինչի մեջ կայանում էր Պիեռի ցանկությունների էռությունը, և, մի անգամ գուշակելով, նա արգելն հաստատորեն պահպանում էր մի անգամ ընտրած գիծը: Երբ Պիեռն ինքն արգեն ուզում էր դավաճանել իր ցանկությանը, նատաշան պայքարում էր նրա դեմ՝ նրա իսկ զենքով:

Այսպես, առաջին ժույլ երեխայի ծննդից հետո, այն ժանր ժամանակը, որ ընդմիշտ հիշելի է Պիեռին, երբ նրանք ստիպվեցին երեք ստնտու փոխել, և նատաշան հիվանդացավ հուսահատությունից, Պիեռը մի անգամ հայտնեց նրան Ռուսասոյի մտքերը (որոնք Պիեռն ընդունում էր միանգամայն) ստնտուների անբնականության և վնասակարության մասին: Հետեւալ երեխան ունենալով, շնայած մոր, բժիշկների և հենց մարդու ընդդիմության, որ հակառակ էին նրա կերակրելուն, ինչպես այն ժամանակ լլսված ու վնասակար մի բանի, նատաշան պնդեց իրենը և այդ օրվանից երեխաններին կերակրում էր ինքը:

Շատ հաճախ, գրգուված վայրկյաններին, պատահում էր, որ մարդ ու կին վիճում էին, բայց այնուհետև ուշ՝ վեճից հետո Պիեռը, հուրախություն և ի զարմանս իր, կնոջ ոչ միայն խոսքերի մեջ, այլև գործողությունների մեջ գտնում էր իր այն իսկ միտքը, որի գեմ նատաշան վիճում էր: Եվ ոչ միայն նա գտնում էր նույն միտքը, այլ գտնում էր դա մաքրված այն ամենից, ինչ ավելորդ էր եղել Պիեռի արտահայտած մտքերում, մի ավելորդ բան, որ առաջացել էր տարկելուց և վեճից:

Ամուսնության յոթ տարուց հետո Պիեռն զգում էր ուրախ, հաստատ գիտակցությունն այն բանի, որ նա վատ մարդ չէ, և նա այդ զգում էր այն պատճառով, որ նա իրեն տեսնում էր իր կնոջ մեջ անդրագարձած: Նա իր մեջ զգում էր բոլոր լավին ու վատը խառնված և մեկը մյուսին մթազնած: Բայց նրա կնոջ վրա անդրագառում էր միայն այն, ինչ իսկապես լավ էր. ամեն ու բոլորովին լավը մի կողմ էր նետված: Եվ այդ անդրագարձումը կատարվել էր ոչ թե տրամաբանական մտքի ճանապարհով, այլ ուրիշ, խորհրդավոր, անմիջական անդրադառնումով:

Երկու ամիս առաջ Պիեռը, երբ արդին հյուր էր Ռոստով-ների մոտ, նամակ ստացավ իշխան Ֆեոդորից, որը նրան կանչում էր Պետերբուրգ՝ կարևոր խնդիրներ քննելու համար, խնդիրներ, որոնք Պետերբուրգում զբաղեցնում էին անդամներին մի ընկերության, որի գլխավոր հիմնադիրներից մեկը Պիեռն էր:

Այդ նամակը կարդալով, նատաշան, որովհետև նա կարդում էր ամուսնու բոլոր նամակները, չնայած որ ամուսնու բացակայությունը ծանր էր նրա համար, ինքն առաջարկեց նրան մեկնել Պետերբուրգ: Ամուսնու բոլոր մտավոր, վերացական գործերին նա, չհասկանալով, վերագրում էր ահազին կարեռություն.ու մշտապես երկյուղի մեջ էր, թե արգելվ Ալինի ամուսնու այդ գործունեությանը: Պիեռի երկյուղ հայացքին՝ նամակի ընթերցումից հետո՝ նատաշան պատասխանեց խընդրանքով, որպեսզի նա մեկնի, բայց միայն պիտի որոշեր նրա վերադարձի ճիշտ ժամանակը: Եվ արձակուրդ տրվեց շրս քարաթով:

Այն օրից, երբ Պիեռի արձակուրդի ժամկետն անցավ, պանից երկու շաբաթ առաջ, նատաշան գտնվում էր վախի, տըմբության ու հուզմունիքի շարունակվող կացության մեջ:

Դենիսովը, պաշտոնաթող, ներկա դրությունից դժգոհ, գեներալ, որ եկել էր վերջին այս երկու շաբթյամի մեջ, զարմանքով ու տիրությամբ նայում էր նատաշային, ինչպէս երբեմն սիրելի մարդու ոչ նման պատկերին: Վհատ, անձկալի հայացք, ոչ տեղին ասված պատասխաններ և խոսակցություն մանկանցի մասին — այս բոլորն էր, ինչ նա տեսնում ու լսում էր նախկին կախարդուհուց:

Նատաշան բոլոր այդ ժամանակ տիսուր էր և շղագրգիռ, մանավանդ այն ժամանակ, երբ նրան միսիթարելով, մայրը, եղբայրը, Սոնյան կամ կոմաուհի Մարիան, զանում էին ներեւ Պիեռին և նրա ուշանալու համար պատճառներ հնարել:

— Բոլորը հիմարություն է, բոլորը դատարկ բաներ, — ասում էր նատաշան, — բոլորը նրա խոհերն են, որոշ մի բանի շնորհում, և բոլոր այդ հիմար-ախմար ընկերություն-

ները, — ասում էր նատաշան այն իսկ գործերի մասին, որոնց խոշոր կարևորությանը նա հավատում էր հաստատապես:

Եվ նա գնում էր մանկանց՝ կերակրելու իր միակ տղա Պիտյային:

Ոչ ոք չէր կարող նրան ասել այնքան հանգստացուցիչ, քանական բան, որքան այդ երեք ամսական փոքրիկ էակը, երբ նա ընկած էր մոր կրծքին, և նա գգում էր երեխայի թերանի շարժումն ու քիչ ֆսացը: Այդ էակն ասում էր. «Դու բարկանում ես, դու խանդում ես, դու կուզեիր վրեժինդիր լինել նրան, դու վախենում ես, իսկ ես ահա նա: Իսկ ես ահա նա...»: Եվ պատասխանելու բան չկար: Դա ավելին էր, բան ճշմարտությունը:

Նատաշան անհանգստության այդ երկու շաբաթն այնքան համախի էր դիմում ներեխային՝ հանգստանալու համար, այնքան էր զբաղվում նրանով, որ գերակերակրեց նրան, և երեխան Գիլանդացավ: Նա սարսափում էր նրա հիվանդությունից, որաց դրա հետո՝ միաժամանակ նրան հնեց այդ էր հարկադրությանը՝ նա հեղտությամբ էր տանում ամուսում մասին ունեցած անհանգստությունը:

Նատաշան կերակրում էր երեխային, երբ շբամուտքի մոտ աղմից Պիեռի կառքը, և դայակը, իմանալով ինչով կարող էր ուրախացնել տիրուհուն, անձայն, բայց արագ, փայլող դեմքվ մտավ ներս:

— Եկա՞վ, — հապճեպ շշուկով հարցրեց նատաշան, վախենալով շարժվել, որ շարթնացնի քնած երեխային:

— Եկան, տիրուժիս, — շշնչաց դայակը:

Կրյունը տվեց նատաշայի երեսը, և ոտներն ակամա շարժում արին, բայց վեր թոշել ու վազել չէր կարելի: Կղմիսան նորից ավելիները բաց պարավ, նայեց: Ճուռ այստեղ ես», — կարծես ասավ նա և նորից շուրթերը շպացրեց ծուլորեն:

Կամացուկ կուրճքը երեխայի թերանից հանելով, նատաշան գրորեց նրան, հանձնեց դայակին ու հապճեպ գալութեանց դեպի գորուր: Բայց դան մոտ նա կանգ առավ, իրաքեն խայթ զգալով, որ, ուրախությունից, շափազանց շուրթով երեխային, և ետ նայեց: Դայակը, արմունկները բարձ-

րացրած, երեխային դնում էր փոքրիկ մահճակալի ճաղերից ներս:

— Դուք գնացեք, գնացեք, տիրուհիս, հանգիստ եղեք, գնացեք,— ժպտալով, շշնչաց դայակը, իր և տիրուհու միջն հաստատված մտերմությամբ:

Եվ նատաշան թեթև քայլերով վազեց նախասենյակ,

Դենիսովը ծխամորճը բերանին, առանձնասենյակից դահճ դուրս գալով, այսուղ առաջին անգամ ճանաչեց նատաշային: Պայծառ, շողուն, խնդուն առատ լույս էր թափվում նատաշայի փոխակերպված դեմքից:

— Եկա՞վ, — վազելիս նրան ասավ նատաշան, և Դենիսովն զգաց, որ ինքը ցնծության մեջ է, որ Պիեռն եկել է, որին նա շատ քիչ էր սիրում:

Վազեվազ նախասենյակ մտնելով՝ նատաշան տեսավ մուշտակի մեջ մի բարձր կերպարանք, որն արձակում էր շարֆը:

«Նա՞ է, նա՞։ Ճիշտ է: Ահա նա: — խոսում էր նատաշան ինքն իրեն և, հարձակվելով նրա վրա, գրկեց, սեղմեց իրեն, գլուխը նրա կրծքին դեմ արած, և ապա, նրան հեռացնելով, նայեց Պիեռի եղյամակալած, կարմրած ու երջանիկ դեմքին: — Այո, սա նա է երջանիկ ու գոռ...»

Եվ հանկարծ նա հիշեց սպասումի այն բոլոր տանջանքները, որ ինքն ապրել էր վերջին երկու շաբաթը. նատաշայի դեմքին փայլող ուրախությունը շբացավ. նա հոնքերը կիտեց, և շար խոսքերի ու կշտամբանքների հեղեղ թափեց Պիեռի վրա:

— Այո, քեզ համար լավ է, դու շատ ուրախ ես, դու զվարացել ես... իսկ իմ դրությունը: Գոնք երեխաներին խղճայիր: Ես կերակրում եմ, կաթս փշացել է... Պետյան մահամերձ էր: Իսկ դու քեզ շատ ուրախ ես զգում: Այո, ուրախ ես զգում...

Պիեռը գիտեր, որ ինքը մեղավոր է, որովհետեւ մվելի շուտ էր կարող գալ. գիտեր, որ նատաշայի այդ բոնկումն անգանելու է. նա գիտեր, գլխավորը, որ ինքն ուրախ է և զվարթ: Նա կուզեր ժպտալ, բայց չէր էլ համարձակվում մտածել այդ մասին: Նրա դեմքը ողորմելի, վախեցած տեսք ստացավ և նա կուզացվ:

— Զկարողացա, աստված վկա: Բայց Պետյան ինչպես է:

— Հիմա ոչինչ, գնանք: Ինչպես չես ամաշում: Երանի մի տեսները, թե ինչ դրության մեջ էի առանց քեզ, ինչպես էի տանցվում...

— Դու առողջ ես:

— Գնանք, գնանք, — ասում էր նատաշան, նրա ձեռը բաց շիթողներով: Եվ նրանք անցան իրենց սենյակները:

Երբ նիկոլայը կնոջ հետ եկավ Պիեռին փնտրելու, նա մանկանցումն էր: Իր ահազին աշ ափի վրա բոնել էր արթնացած ծծեր որդուն և գայակություն էր անում: Նրա լայն, բաց, անառամ բերանով դեմքին ուրախ մի ժպտակ կար: Փոթորիկը վաղուց արդեն պայթել էր և պայծառ, խնդագին արեք փայլում էր նատաշայի դեմքին, որ խանդաղատանքով նայում էր մարդուն և որդուն:

— Եվ ամեն բանի մասին մի լավ խոսեցի՞ք իշխան Ֆեռորի հետ, — ասում էր նատաշան:

— Այո, շատ լավ:

— Տեսնում ես, պահում է (գլուխը, նկատի ուներ նատաշան): — Բայց իմանաս, թե դա ինչպես վախեցրեց ինձ: Իսկ իշխանագույները տեսածը. ճիշտ է, որ նա սիրահարվել է այդ...

— Այո, կարող ես երևակայել...

Այդ միջոցին ներս մտավ նիկոլայը կոմսուհի Մարիայի հետ: Պիեռը, երեխան ձեռներից բաց շիթողներով, կունալով համբուլիկ նրանց հետ և պատասխանում էր նրանց հարցուփորձերին: Բայց, ակներե, չնայած շատ հետաքրքրական բաներին, որ պետք էր ասել-խոսել, թասակով, գլուխն օրորող երեխան կլանել էր Պիեռի ամբողջ ուշադրությունը:

— Ինչ դուրեկան է, — ասավ կոմսուհի Մարիան, նայելով երեխային ու խաղալով նրա հետ: — Այ, ես այդ շեմ հասկանում, Nicolas, — դիմեց նա ամուսնուն, — ինչպես դու չես հասկանում այս սքանչելի արարածների հրապուցքը:

— Չեմ հասկանում, չեմ կարող, — ասավ նիկոլայը, սառը հայացքով նայելով երեխային: — Մսի կտոր է: Գնանք, Պիեռ:

— Բայց նա այնպես քնքուշ հայր է, — ասավ կոմսուհի Մարիան, արդարացներով իր ամուսնուն, — բայց միայն, երբ երեխան արդեն մի տարեկան է կամ այնպես...

— Զէ, Պիեռը դրանց շատ լավ դայակություն է անում,

ասավ նատաշան.— Նա ասում է, թե իր ձեռք շինված է չեղ երեխայի հետույքի համապատասխան։ Տեսկը։

— է, միայն ոչ դրա համար, — հանկարծ ծիծաղելով, ասավ Պիեռը, բոնելով երեխային ու հանձնելով դայակին։

## XII

Ինչպես յուրաքանչյուր իսկական ընտանիքում, լիսոգորակյան տանը միասին ապրում էին մի քանի միանգամայն տարբեր աշխարհներ, որոնք, ամեն մեկը պահելով իր առանձնահատկությունը և զիշումներ անելով միմյանց, միաձուլվում դառնում էին մի հարմոնիկ ամրողություն։ Տանը կատարված յուրաքանչյուր դեպք, լիներ միատեսակ ուրախ թե տխուր, — դա կարևոր էր բոլոր աշխարհների համար, բայց յուրաքանչյուր աշխարհ ուներ միանգամայն իր, ուրիշներից անկախ, որնէ դեպքով ուրախանալու կամ տիրելու պատճառները։

Այդպես, Պիեռի գալուստը ուրախալի, կարևոր դեպք էր, և այդպես էլ նա անդրադարձավ բոլորի վրա։

Սպասավորները — ամենաճիշտ դատավորներն են տերերի, որովհետև նրանք դատում են ոչ թե ըստ խոսակցությունների ու արտահայտված զգացմունքների, այլ ըստ գործերի ու ապրելակերպի, — ուրախ էին Պիեռի գալուն, որովհետև նրա ներկայությամբ, նրանք գիտեին, կոմսը կդադարեր ամեն օր գնալ տնտեսությունը դիտելու և տանն ավելի ուրախ կլինեն ու ավելի բարի, և այն պատճառով էլ, որ տոնին բոլորը հարուստ նվերներ կստանային։

Երեխաներն ու դատիարակներն ուրախ էին թեզւկամվի գալուն, որովհետև ոչ ոք այնպես չէր գրավում նրանց ընդհանուր կյանքի մեջ, ինչպես Պիեռը։ Միայն նա՛ էր կարողանում դաշնամուրի վրա նվագել այն էքսենզը (նրա միակ պիեսը), որով կարելի էր պարել, ինչպես նա էր ասում, ամեն տեսակ պարեր, և նա հավանորեն նվերներ է բերել բոլորի համար։

Նիկոլենկան, որ հիմա 15 տարեկան, նիհար, խուճում շեկ մազերով ու գեղեցիկ աշքերով, հիգանդոտ, խելացի տղա էր, ուրախ էր նրա համար, որ քեզի Պիեռը, ինչպես նա էր անվանում նրան, իր հիացմունքի ու բաւոն սիրո առարկան էր։ Ոչ ոք

Նիկոլենկային առանձին սեր չէր ներշնչել դեպի Պիեռը, և նա միայն երբեմն էր տեսնում նրան։ Նրա գաստիարակչութիւն՝ կոմսութիւն Մարիան իր ամբողջ ուժերը գործադրում էր, որ ստիպի նիկոլենկային սիրել իր ամուսնուն նույնպես, ինչպես ինքն էր նրան սիրում։ և նիկոլենկան սիրում էր քեռուն, բայց սիրում էր արհամարհանքի հազիկ նկատելի երանգով։ Խակ Պիեռին նա պաշտում էր։ Նիկոլենկան չէր ցանկանում ոչ հուսար լինել, ոչ Դեռգիի ասպետ, ինչպես քեռի նիկոլայը։ Նա կամենում էր լինել գիտնական, խելացի ու բարի, ինչպես Պիեռը։ Պիեռի ներկայությամբ նրա դեմքին միշտ ուրախ փայլ էր լինում, և նա կարմրում ու շնչատվում էր, երբ Պիեռը գառնում էր նրան։ Պիեռի ասածներից նա բաց չէր թողնում և ոչ մի բառ, և ապա Դեսալի հետ, և ինքը մենակ հիշում էր ու կշռադատում Պիեռի յուրաքանչյուր բառի նշանակությունը։ Պիեռի անցած կյանքը, նրա դժբախտությունները մինչև 12 թիվը (որոնց մասին նա լսած բառերից կազմել էր իր համար աղոտ, բանաստեղծական պատկերացում), նրա արկածները Մոսկվայում, գերությունը, Պլատոն Կարատաեր (որի մասին նա լսել էր Պիեռից), նշանակությունը և անտաշան (որին նույնպես առանձնահատուկ սիրով էր սիրում տղան) և, գլխավորը, նրա բարեկամությունն իր հոր հետ, որին նիկոլենկան չէր հիշում, — այս ամենը Պիեռին դարձնում էին նրա համար հերոս ու սուրբ։

Հոր և նատաշայի մասին եղած կցկոտը գրուցներից, այն հուզումից, որով Պիեռը խոսում էր հանգուցյալի մասին, այն զգույշ, ակնածու քնքանքից, որով նատաշան խոսում էր էլի նրա մասին, նիկոլենկան, որ հենց նոր սկսել էր հասկանալ ինչ րան է սերը, մի ըմբռնում կազմեց իր համար, թե իր հայրը սիրել է նատաշային և, մեռնելիս, նրան կտակել է իր բարեկամին։ Խսկ այդ հայրը, որին չէր հիշում նիկոլենկան, նրան նիկայանում էր իբրև աստվածություն, որին չէր կարելի պատկերացնել և որի մասին նա այլ կերպ չէր մտածում, քան մարդ սրտով և տիրության ու հրացումի արցունքներով։ Եվ փոքրիկ տղան երցանիկ էր Պիեռի գալով։

Հյուրերն ուրախ էին Պիեռի գալուն, որպես մի մարդու, որ միշտ կենդանացնում ու համախմբում էր ամեն տեսակ հասրակություն։

Մեծահասակ տնեցիները, շխոսելով այլես կնոջ մասին, ուրախ էին բարեկամի համար, որի ներկայությամբ մարդ իրեն ավելի թեթև էր զգում և հանգիստ:

Պառավներն ուրախ էին և նվերների համար, որ նա բերելու էր, և, գիտավորը, նրա համար, որ նատաշան կենդանանալու էր նորից:

Պիեռն զգում էր ընտանիքի սարբեր աշխարհների իր նկատմամբ եղած այդ տարբեր հայացքները և շտապում էր յուրաքանչյուրին տալ ակնկալածը:

Պիեռը, ամենացրված, մոռացկոտ մարդը, հիմա, կնոջ կազմած ցուցակով, գնել էր ամենը, շմոռանալով ոչ մոր ու եղբոր հանձնարարությունները, ոչ թելովայի զգեստացու նվերները, ոչ ազգական-երեխանների խաղալիքները: Նրան իր ամուսնության առաջին օրերին տարօրինակ թվաց կնոջ այդ պահանջը — կատարել և շմոռանալ այն բոլորը, ինչ հանձն է իր առաջին մեկնումին բոլորը մոռացել էր: Բայց հետագայում նա ընտելացավ այդ բանին: Խմանելով, որ նատաշան իր համար ոշինչ էր հանձնարարում, իսկ ուրիշների համար հանձնարարում էր միայն այն ժամանակ, եթե նա ինքն էր առաջարկում, Պիեռն այժմ իր համար անսպասելի մանկական բավականություն էր գտնում ամբողջ տան համար նվերներ գնելու մէջ և երբեք ոչ մեկին չէր մոռանում: Եթե նա արժանանում էր նատաշայի կշտամբանքին, այդ միայն նրա համար, որ գնում էր ավելորդ և շափազանց շատ բան: Եթե բոլոր պակասություններին, մեծամասնության կարծիքով, կամ հատկություններին, Պիեռի կարծիքով՝ փնթիռությանը, թափթիվածությանը, նատաշան միացրել էր նաև ժլատությունը:

Այն օրից, երբ Պիեռն սկսեց ապրել մեծ տնով, ընտանիքով, որ պահանջում էր մեծ ծախսեր, նա, ի զարմանս իր, նշատեց, որ ինքը երկու անգամ ավելի քիչ էր ծախսում, քան առաջ, և որ իր, վերջին ժամանակներս քայլայված, մանավանդ առաջին կնոջ պարտքերից, գործերն սկսեցին կարգի ընկնել:

Ապրելն ավելի էժան էր այն պատճառով, որ կյանքը կապակցված էր. այն իսկ թանկագին շքեղությունը, որը կայանում էր այն տեսակ կյանքի մեջ, որ ամեն բուզ կարելի էր

փոխել, Պիեռն արդեն շուներ, և չէր էլ ցանկանում ունենալ այլեւ: Նա զգում էր, որ իր ապրելակերպն այժմ որոշված է մի անգամ ընդմիշտ՝ ցմահ, որ այն փոխելն իր ուժից վեր է, և այդ պատճառով ապրելաձեն էժան էր:

Պիեռն ուրախ, ժպտուն գեմքով ջոկչկում էր իր գնումները:

— Ինչպես է, լավ է, — ասում էր նա, բանալով, խանութպանի պես, հագուստացու մի կտոր:

Նատաշան, մեծ աղջկանը ծնկներին բռնած և փայլուն աշքերն արագորեն դարձնելով ամուսնուց այն բանին, ինչ ցուցյ էր տալիս նա, նստել էր մարդու դիմաց:

— Այդ թելովայի համար է: Հիանալի է: — Նատաշան շոշափեց լավորակությունն իմանալու: — Սրա արշինը մի ոռւթլի է, չէ:

Պիեռը հայտնեց գինը:

— Թանկ է, — ասավ նատաշան: — Բայց երեխաները և տատառը շատ կուրախանան: Միայն թե սա իզուր ես գնել ինձ համար, — ավելացրեց նա, չկարողանալով ժպիտը զսպել, հիանալով ոսկե մարգարտպարդ սանրի վրա, որոնք այդ ժամանակ միայն մողա էին դարձել:

— Ինձ Ադելը շփոթեց գնիր, հա գնիր, — ասավ Պիեռը:

— Իսկ ես ե՞րբ եմ գնելու: — Նատաշան սանրը խրեց հյուսքի մեջ: — Մաշենկան մեծանա՝ պարահանդես, հյուր գընալիս կզնի. գուցե այն ժամանակ նորից գործածեն: Դե, գնանք:

Եվ, նվերները հավաքելով, նրանք գնացին նախ մանկանց, ապա կոմմունու մոտ:

Կոմսուհին բատ սովորության թելովայի հետ նստած էր դրան-պատույանսի շուրջը, երբ Պիեռն ու նատաշան կապոցները թևատակերին մտան հյուրասրահ:

Կոմսուհին 60-ն անց էր արդեն: Նրա մազերն ամբողջ ճերմակ էին և նա շամշիկ էր գնում, որը նրա ողջ գեմքը շրջապատում էր փոթ-փոթ երիզով: Նրա գեմքը կնճռապատ էր, վերին շուրթը ներս ընկած, իսկ աշքերն աղոտ էին:

Մեկը մյուսին այնքան արագ իրար հաջորդող որդու և ամուսնու մահերից հետո՝ նա հանկարծ իրեն զգաց այս աշխարհում մոռացված մի էակ, որ շունի ոչ մի նպատակ և իմաստ: Նա ուսում էր, խմում, քնում, արթուն մնում, բայց չէր ապ-

բում: Կյանքը նրան ոչ մի տպավորություն չէր տալիս: Նա կյանքից ոշինչ չէր ուզում, բացի հանգստությունից, և այդ հանգստությունը նա կարող էր գտնել միայն մահվան մեջ: Բայց բանի դեռ մահը չէր եկել, նա պետք է ապրեր, այսինքն՝ գործադրեր կյանքի իր բոլոր ուժերը: Նրա մեջ ծայր աստիճանի նկատելի էր այն, ինչ նկատելի է շատ փոքր երեխաների և շատ տարիքավոր մարդկանց մեջ: Նրա կյանքում որևէ ոչ մի արտաքին նպատակ չէր երևում, այլ ակնհայտ էր միայն իր տարբեր հակումներն ու ունակությունները վարժեցնելու պահանջը: Նա պետք է ուտեր, քներ, մտածեր, խոսեր, լաց լիներ, աշխատեր, բարկանար և այլն՝ միայն նրա համար, որ ստամոքս ուներ, ուղեղ ուներ, ուներ մկաններ, նյարդեր և լյարդ: Այդ բոլորը նա անում էր արտաքին ոչ մի բանից շդրված, ոչ այնպես, ինչպես անում են այդ ամբողջ կյանքով լեցուն մարդիկ, երբ իրենց ձգտած նպատակի հետև չի երեսում իրենց ուժերը գործադրելու այլ նպատակ: Նա խոսում էր միայն նրա համար, որովհետև ֆիզիկապես պետք է աշխատեին թոքերը, լեզուն: Նա լաց էր լինում, երեխայի պես, նրա համար, որովհետև նա պետք է խնչեր և այլն: Այն, ի՞նչ կյանքով լեցուն մարդկանց համար ներկայանում է նպատակ, նրա համար, ակընհայտ առիթ էր:

Այսպես առավոտները, մանավանդ եթե նախօրեին որևէ յուղոտ բան էր լինում կերած, նա բարկանալու պահանջ էր զգում, և այդ ժամանակ նա ընտրում էր մոտիկ առիթը — թելովայի խլությունը:

Նա սենյակի մի ծայրից սկսում էր որևէ բան ասել կամացուկ:

— Հիմա, կարծես, ավելի տաք է, սիրելիս, — ասում էր նա ՀՀովով:

Եվ երբ թելովան պատասխանում էր, «Ինչպես չէ, եկան», նա քրթմնջում էր բարկացած:

— Աստված իմ, որքան խուլ է և հիմար:

Մյուս առիթը քթախոտն էր, որը նրան մերթ չոր էր թվում, մերթ խոնավ, մերթ վատ փոշիացրած: Այս ջղայնություններից հետո մաղձը տարածվում էր դեմքին, և նրա սպասուհին երբ ստույգ նշաններից գիտեին, թե երբ է նորից խլանալու

թելովան, և քթախոտը երբ է խոնավանալու, և երբ է կոմսուհու դեմքը դեղնելու: Այնպես, ինչպես պետք է գործեր մաղձը նրա համար, այդպես էլ երբեմն պետք է նա աշխատեր մնացյալ ընդունակություններով — մտածեր, և դրա համար առիթ էր լինում պասյանսը: Երբ հարկ էր լինում լաց լինել, այդ ժամանակ լացի առարկա լինում էր հանգուցյալ կոմսը: Երբ հարկավոր էր լինում անհանգստանալ՝ առիթը լինում էր նիկոլայն ու նրա առողջությունը, երբ հարկավոր էր լինում կծու խոսքեր ասել՝ այդ ժամանակ առիթը լինում էր կոմսուհի Մարիան: Երբ հարկավոր էր լինում ձայնի օրգանին վարժություն տալ — այդ մեծ մասամբ լինում էր ժամը 7-ին, մարսողական հանգստից հետո՝ մութ սենյակում, — այն ժամանակ առիթը լինում էին միկնույն գեպքերի պատմությունները՝ միշտ միենույն ունկընդիրներին:

Պառավի այս վիճակը հասկանում էին բոլոր տնեցիները, թեպետև ոչ ոք երբեք չէր խոսում այդ մասին, և բոլորը գործադրում էին ամեն հնարավոր չանքերը՝ նրա այդ պահանջները բավարարելու: Միայն ախուր կիսաժպիտի հազվագյուտ հայցը բում (որ փոխանակում էին միմյանց միջև նիկոլայը, Պիեռը, Նատաշան ու կոմսուհի Մարիան) էր արտահայտվում նրա վիճակի այդ փոխադարձ հասկացությունը:

Բայց այդ հայացքները, բացի դրանից, ասում էին և ուրիշ բան. դրանք խոսում էին այն մասին, որ նա արդեն իր բանն արել է կյանքում: այն մասին, որ նա ամրողջովին այն չէ, ինչ երեսում է նրա մեջ. այն մասին, որ մենք բոլորս էլ լինելու ենք այդ վիճակում, և որ հաճելի է հնագանդել նրան, մարդ պետք է զսպի իրեն այդ երբեմն թանկագին, երբեմն նույնպես, ինչպես մենք, կյանքով լեցուն, այժմ թշվառ էակի համար: Լեմենտո տօրի, ասում էին այդ հայացքները:

Միայն բոլորովին վատ և հիմար մարդիկ, մեկ էլ փոքր երեխաները, ամբողջ տնեցիների մեջ, չէին հասկանում այդ և խուսափում էին պառավ կոմսուհուց:

Իրք Պիեռը կնոջ հետ եկավ հյուրասրահ, կոմսուհին գտնվում էր գրան-պասյանսի մտավոր աշխատանքով իրեն զրադեց-նելու պահանջի կացության մեջ և այդ պատճառով, չնայած այն բանին, որ նա, ըստ սովորության ասավ խոսքեր, որ միշտ ասում էր Պիեռի կամ որդու վերադարձին. «Ժամանակ էր, ժամանակ էր, սիրելիս. աշխաներս ջուր կտրեց: է, փառք աստ-ծու»: Երբ նվերները նրան էին հանձնում, ասավ ուրիշ սովորա-կան խոսքեր. «Թանկ չի նվերդ, բարեկամս: Ծնորհակալ եմ, որ նվիրում ես, պառավիս...»— երկում էր, որ Պիեռի գալուստը հաճելի չէր այդ րոպեին այն պատճառով, որ իրեն կտրում էր շվերջացած գրան-պասյանսից: Նա վերջացրեց պասյանսը և այն ժամանակ միայն սկսեց նայել նվերները: Նվերները հետե-յալներն էին. գեղեցիկ շինած մի պատյան խաղաթղթերի հա-մար, Սեվորի պայծառ կապույտ մի գավաթ՝ խուզք վրան և հովզուհիներ նկարած, և ոսկե քթախոտատուփ՝ կոմսի պատ-կերով, որ Պիեռը պատվիրել էր Պետերբուրգում մանրանկա-րիին: (Կոմսուհին վաղուց էր ցանկանում այդ): Նա այժմ չէր ցանկանում լաց լինել, և այդ պատճառով անտարբեր էր նայում պատկերին և զբաղվում էր ավելի պատյանով:

— Ծնորհակալ եմ, բարեկամս. մխիթարեցիր ինձ,— ասավ նա, ինչպես միշտ էր ասում: — Բայց ամենից լավն այն է, որ ինք քեզ բերել ես: Թե չէ այդ ոչ մի բանի նման չի. գոնե կր-նոցդ նախատեիր: Սա ի՞նչ բան է: Կարծես խելագար լիներ առանց քեզ: Ոչինչ չի տեսնում, չի հիշում, — ասում էր նա սո-վորական խոսքերը: — Տես, Աննա Տիմոֆեենա, — ավելաց-րեց նա, — որդիս ինչ պատյան է բերել մեզ:

Բելովան գովեց նվերները և հիացավ իր կտորով:

Թեև Պիեռը, նատաշան, նիկոլայը, կոմսուհի Մարիան ու Դնիսովը շատ այնպիսի բաներ պիտի ասեին-խոսեին, որ վասնեցին կոմսուհու ներկայությամբ, ոչ թե այն պատճառով, որ նրանից որևէ բան էին թաքցնում, այլ այն պատճառով, որ նա այնպես էր ետ մնացել շատ բանից, որ, սկսելով որևէ բանի ժամանել նրա մոտ, պետք էր պատասխանել նրա անտեղի հարցումներին, և նորից կրկնել մի բանի անգամ արդեն նրան

կրկնածք. պատմել, որ սա մեռել է, նա ամուսնացել, ինչ որ նա չէր կարող նորից հիշել. բայց նրանք ըստ սովորության նստել էին հյուրասրահում թեյի, ինքնաեսի շուրջը, և Պիեռը պա-տասխանում էր կոմսուհու հարցումներին (որ կոմսուհուն իրեն իսկ պետք չէին և ոչ ոքի չէին հետաքրքրում), թե իշխան Վասի-լին ծերացել է, և թե կոմսուհի Մարիա Ալեքսեևնան պատվիրեց բարեկանել և հիշել և այլն...

Այսպիսի՝ ոչ ոքին հետաքրքրող, բայց անհրաժեշտ զը-րուց էր կատարվում թեյի ամբողջ ժամանակ: Թեյի կլոր սեղանի շուրջը, ինքնաեսի մոտ, որի կողքին նստած էր Սոնյան, հավաքվել էին ընտանիքի բոլոր հասակավոր անդամները: Երեխանները, գաստիարակներն ու գաստիարակշուհները թեյել էին արդեն, և նրանց ձայները լսվում էին հարկան բազմոցա-րանից: Թեյի շուրջը բոլորը նստել էին իրենց սովորական տե-շերում: Նիկոլայը նստեց վառարանի մոտ փոքրիկ սեղանի առաջ, ուր և թեյ էին տալիս նրան: Պառավ, բոլորովովն պառա-ված գեմքով, որից ավելի որոշ էին դուրս ընկնում խոշոր սկ աշբերը, բարակ Միլկան, առաջին Միլկայի աղջիկը, պառ-կած էր նրա կողքին, բագկաթոսի վրա: Դենիսովը կիսով շափ ճերմակած գանգուր մագերով, բեղերով ու այսամորուսնե-րով, կոճակներն արձակած գեներալական սերթուկը հագին, նստել էր կոմսուհի Մարիայի կողքին: Պիեռը նստել էր կնոջ և պառավ կոմսուհու մնջտեղը: Նա պատմում էր այն, ինչ, նա գիտեր, կարող էր հետաքրքրել պառավին և հասկանալի լինել նրան: Նա խոսում էր հասարակական արտաքին անցքերի մա-սին և այն մարդկանց մասին, որոնք մի ժամանակ կաղմել էին պառավ կոմսուհու հասակակիցների շրջանը, որոնք մի ժամա-նակ իրական, կենդանի առանձին շրջան էին, բայց որոնք հիմա մեծ մասամբ ցրված էին աշխարհում, ու այնպես, ինչպես կոմսուհին, ապրում էին իրենց կյանքի վերջին օրերը, հավաքե-լով մնացած հասկերը այն բանի, ինչ իրենք ցանել էին կյան-քում: Բայց հենց գրանք, այդ հասակակիցները պառավ կոմսու-հուն թվում էին բացառիկ լուրջ ու իսկական աշխարհ: Պիեռի աշխառությունից նատաշան նկատում էր, որ նրա ճամփոր-դությունը եղել է հետաքրքրական, որ նա շատ բան էր ուզում պատմել, բայց կոմսուհու ներկայությամբ չէր համարձակվում:

Դենիսովին ընտանիքի անդամ Ալինելով, ուստի և շասկանալով  
Դիենի գգուցությունը, բացի աչք, որպես դժգոհ, շատ էր հւ-  
ռաքիրուում թիւն էր արջում Պետերրուրդում, և շարունակ  
գնուում կառարված դեպքը, մերթ Արակշենի մասին, մերթ  
Բիբլիական ընկերության մասին; Պիեռը երբեմն հափշտակվում  
էր և սկսում պատճել, բայց Նիկոլայն ու Նատաշան ամեն ան-  
գամ դարձնում էին նրան իշխան իվանի և լուսուհի Մարիա  
Անտոնինացի առողջության պատմությանը:

— Ե, ի՞նչ, այդ ամբողջ խելավաղությունը, թե Գուսնեկի,  
թե Տատարդենսկայի, — Հարցրեց Պիեռիսովը, — մի՛թե դեղի շա-  
զունակվում է:

— Ինչպի՞սէ շարունակվում, — բացականչեց Պիեռը: — Ավե-  
լի ուժեղ, քան երբնէ: Բիբլիական ընկերությունը՝ գա է հիմա  
ամբողջ կառավարությունը:

— Այդ ինչպի՞սէ թե, ոոո cher ami,<sup>1</sup> — Հարցրեց Վումսու-  
հին, իր թէյը խմելով և, հավանորեն, ցանկանալով առիթ գրա-  
նել նրա համար, որ ուտելուց հետո բարկանա: — Այդ դու ինչ-  
պես ես ասում թե՝ կառավարություն, ես այդ չեմ հասկանում:

— Այ, գիտեք, տատառ, — միշամտեց Նիկոլայը, իմանա-  
լով, թե այդ ինչպես պետք է թարգմանել մոր լիզվով, — այդ  
իշխան Գոլիցինն է մի ընկերություն կազմել. նա մեծ ազգեցու-  
թյուն, ուժ ունի, ասում են:

— Արակշեն ու Գոլիցինը, — անզգույշ ասավ Պիեռը, —  
այդ է այժմ ամբողջ կառավարությունը: Եվ ինչպիսի՞ կառա-  
վարություն: Ամեն բանում դավադրություններ են տեսնում,  
ամեն բանից վախենում են:

— Հետո, իսկ իշխան Ալեքսանդր Նիկոլակին ի՞նչ մեղա-  
վոր է: Նա շատ հարգելի մարդ է: Ես այն ժամանակ հանդիպել  
եմ նրան Մարիա Անտոնովնայի մոտ, — նեղացած ասավ կոմ-  
սուպին և, էլ ավելի նեղացած նրանից, որ բոլորը լուցին, շա-  
րունակեց: — Հիմա սկսել են բոլորին էլ քննադատել: Ավետա-  
րանական ընկերություն է, սրա մեջ ինչ վատ բան կա, — և նա

վեր կացավ (բոլորը նույնպես վեր կացան) ու խստադեմ գնաց  
բազմոցարան՝ իր սեղանի մոտ:

Տիրած տիրուր լուսթյան մեջ հարկան սենյակից լսվեցին  
մանկական ծիծաղ ու ձայներ: Ըստ երևութին երեխաների մեջ  
ինչոր ուրախ հուզում էր տեղի ունենում:

— Պատրաստ է, պատրաստ, — լսվեց փոքրիկ Նատաշայի  
բոլորից ուրախ ծղրտոցը:

Պիեռը հայացքներ փոխանակեց կոմսուհի Մարիայի ու  
Նիկոլայի հետ (Նատաշային նա միշտ տեսնում էր) և երջանկո-  
րեն ժպտաց:

— Այ քեզ հրաշալի երաժշտություն, — ասավ նա:

— Այդ Աննա Սակարովնան է գուլպան վերջացրել, — ասավ  
կոմսուհի Մարիան:

— Օ, գնամ տեսնեմ, — տեղից վեր թոշելով, ասավ Պիեռը: —  
Գիտես, — ասավ նա, դուն մոտ կանգ առնելով, — ես ինչո՞ւ եմ  
առանձնապես սիրում այդ երաժշտությունը — առաջինը դը-  
րանք ինձ իմաց են տալիս, որ ամեն ինչ լավ է: Քիչ առաջ զալիս  
եմ. որքան մոտենում եմ տանը, այնքան ավելի երկյուղներ  
եմ ապրում: Հենց նախասենյակ մտա, լսեցի՝ Անդրյուշան ձենը  
զցել է. դե, նշանակում է, ամեն բան լավ է...

— Ծանոթ է, ծանոթ ինձ այդ զգացումը, — հաստատեց  
Նիկոլայը: — Ես գալ չեմ կարող. չէ որ այդ գուլպաները՝ սյուր-  
պիրիկ է անելու ինձ:

Պիեռը անցավ երեխաների մոտ, և քրքիչն ու կանչերն էլ  
ավելի սաստկացան:

— Դե, Աննա Սակարովնա, — լսվեց Պիեռի ձայնը, — այ  
այստեղ մնացտեղը և կարգով. մեկ, երկու. երբ կասեմ երեք, որւ  
կանգնիր այստեղ: Քեզ համար է: Դե, մեկ, երկու... — ասավ  
Պիեռի ձայնը. լուսթյուն տիրեց: — Երե՛ք:

Եվ երեխաների հիացագին ծվծվոցը բարձրացավ սենյա-  
կում: — «Երկո՛ւ, երկո՛ւ», — բացականշեցին երեխաները:

Այդ երկու գուլպաներ էին, որոնք իրեն միայն հայտնի  
գաղտնիքով Աննա Սակարովնան միանգամից գործել էր ճա-  
ղերով և որոնք նա միշտ հանդիսավորապես երեխաների ներ-  
կայությամբ մեկը հանում էր մյուսից, երբ գուլպան ավարտ-  
ված էր լինում:

<sup>1</sup> Միքելի բարեկամ:

Դրանից անմիջապես հետո երեխաներն եկան հրաժեշտ տալու: Երեխաները համբուրզեցին բոլորի հետ, դաստիարակներն ու դաստիարակչութիները գլուխ տվին ու դուրս եկան: Մնում էր միայն Դեսալն իր սանի հետ: Դաստիարակը շշուկով հրավիրում էր իր սանին՝ գնալ ցած:

— Non, m<sup>me</sup> Dessales, je demanderai à ma tante de rester<sup>1</sup>, — պատասխանեց նույնպես շշուկով Նիկոլենկա թուկոնսկին:

— Ma tante, j'udi թույլ տվեք մնալ, — ասավ Նիկոլենկան, մոտենալով Հորաքրոցը:

Նրա դեմքն արտահայտում էր աղերսանք, հուզում և հիացում: Կոմսուհի Մարիան նայեց նրան և դիմեց Պիեռին:

— Երբ դուք այստեղ եք, նա ձեզնից կտրվել չի կարող, — ասավ նա:

— Je vous le ramènerai tout à l'heure, m<sup>me</sup> Dessales bonsoir<sup>2</sup>, — ասավ Պիեռը, ձեռք մեկնելով շվեյցարացուն և, ժպտալով դարձագ Նիկոլենկային. — Մենք բոլորովին շենք տեսնվել ձեզ հետ: Մարի, ինչպես էլ հետզհետեն նյանվում է, — ավելացրեց նա, դիմելով կոմսուհի Մարիային:

— Հո՞րս, — ասավ տղան, շառագույն կարմրելով և վարից վեր Պիեռին նայելով իւանդավառ, փայլուն աշքերով:

Պիեռը գլխով արավ նրան և շարունակեց երեխաների ընդանությունը: Կոմսուհի Մարիան ձեռագործ էր անում հենքի վրա. Նատաշան, աշք հետացնելով, նայում էր ամուսնուն: Նիկոլայն ու Դենիսովը վեր էին կենում, ծխամորճ էին ուզում, ծխում, թեյ էին առնում Սոնյայից, որ վհատ ու համառորեն նստել էր ինքնաենի հետեւ, ու հարցուփործ էր անում Պիեռին: Գանգրահեր, հիվանդոտ տղան՝ փայլուն աշքերով, բոլորից աննկատելի նստել էր անկյունում, և միայն, գանգրահեր գլուխը բարակ վզի վրա պտտելով (որ դուրս էր

գալիս ծալովի ոձիքից), նայում էր այն կողմը, ուր Պիեռն էր. նա երբեմն ցնցվում էր և ինչ-որ շշնչում ինքնին, ըստ երկույթին, ինչ-որ նոր և ուժեղ գգացմունք ապրելով:

Զրուցը զանում էր բարձր կառավարչության այն ժամանակակից բամբասանքի շուրջը, որի մեջ մարդկանց մեծամասնությունը սովորաբար տեսնում է Ներքին քաղաքականության ամենակարևոր հետաքրքրությունը: Դենիսովը, կառավարությունից գգգոհ ծառայության մեջ ունեցած իր անհաջողությունների համար, ուրախությամբ էր լսում այն բոլոր հիմարությունները, որոնք, նրա կարծիքով, արվում էին Պիեռը բուրգում, և ծանր ու խիստ արտահայտություններով իր նըկատողություններին էր անում Պիեռի խոսքերի առթիվ:

— Աղաջ պետք էր գեղ՝մանացի լինել, հիմա պետք է պաղել Տատարի ինովոյի և ու-ու Կղ՝յուղնեղ՝ի հետ, կաղ՝դալ-էկաղ՝ըստհառուցեն և եղբայրներին: Օ՛հ, նող՝ից բաց թողնեին մեղ՝ բաց Բոնապաղ՝տին: Նա դղ՝անց խելքի կրեղ՝եղ՝: Դե, ինչի՞նման է Սեմյոնովյան գունդը տալ զինվոր՝ Շվաղ՝ցին, — ճշում էր նա:

Նիկոլայը, թեկ ցանկություն շուներ ամեն բան համարել վատ, ինչպես Դենիսովը, նույնպես շատ արժանավոր և կարեոր գործ էր համարում խոսել ու դատել կառավարության մասին և գտնում էր, թե այն, որ Անն նշանակվել է այսինչի մինիսար, իսկ Բ-ն այսինչ տեղի նահանգապետ, և որ թագավորն այս է ասել, իսկ մինիստրն այն, — որ ամենը՝ շատ նշանակալից գործեր են: Եվ նա կարեոր էր համարում հետաքրքիւ դրանով ու հարձուփորձում էր Պիեռին: Այդ երկու խոսակիցների գրուցը, բացի հարցուփորձից, բարձր կառավարական շրջանների բամբասանքի սովորական բնույթից դուրս չէր գալիս:

Բայց նատաշան, որ գիտեր իր ամուսնու բոլոր ձեւերն ու մտքերը, նկատեց, որ Պիեռը վազուց էր կամենում, բայց չէր կարողանում խոսակցությունը տանել ուրիշ ճանապարհով և արտահայտել իր սրտի խորհուրդը՝ այն իսկ խորհուրդը, որի համար և մեկնել էր Պիեռը բուրդակցելու իր նոր բարեկամ իշխան Ֆեոդորի հետ, և նատաշան օգնեց նրան հարցնելով, թե ինչպես եղավ նրա գործը իշխան Ֆեոդորի հետ:

— Այդ ինչի՞ն մասին է, — հարցրեց Նիկոլայը:

<sup>1</sup> Ու, պ. Դեսալ, ես հորաքրոջ կինդեմ մնալու:  
<sup>2</sup> Ես նրան հիմա կրեմ. պ. Դեսալ. գնաք բարեւ:

— Էլի միենույն բանի մասին, — ասավ Պիեռը, շուրջը նա, յիւղը՝ Բոլորը տեսնում են, որ գործերն այնպես վատ են գնում, որ այդ այդպես թողնել չփ կարելի, և որ բոլոր ազնիվ մարդկանց պարտականությունն է ընդդիմանալ՝ ուժերը ներածին շափով:

— Իսկ ազնիվ մարդիկ ի՞նչ կարող են անել, — թեթևակի հոնքերը կիտելով ասավ Նիկոլայը, — ի՞նչ կարելի է անել:

— Այ ինչ:

— Գնանք առանձնասենյակ, — ասավ Նիկոլայը:

Նատաշան, վաղուց արգեն գլխի ընկնելով, որ կգան իրեն կանչելու՝ երեխային կերակրելու համար, լսեց դայակի կանչը և գնաց մանկանց: Կոմսուհի Մարիան գնաց նրա հետ: Տղամարդիկ անցան առանձնասենյակ, և Նիկոլենկա Բոլկոնսկին, քեռուց աննկատելի, եկավ նույն տեղը և նստեց ստվերում, լուսամուտի կողմը, գրասեղանի մոտ:

— Է, ի՞նչ կաղող ես անել դու, — ասավ Դենիսովը:

Շարունակ ֆանտազիաներ, — ասավ Նիկոլայը:

— Այ ինչ, — ասավ Պիեռը, շնուտելով և մերթ երթևեկելով սենյակում, մերթ կանգ առնելով՝ ձեռներն արագ շարժում էր ու սկսվոցով խոսում: Այ ինչ, Դրությունը Պետերբուրգում այ ինչպիսին է: Թագավորը ոչ մի բանի չփ խառնվում: Նա սմբողջովին անձնատուր՝ եղել այդ միստիքիզմին (Պիեռն այժմ ոչ ոքի չէր ներում միստիքիզմը): Նա հանգստությունն է փնտրում միայն, և հանգստությունն նրան կարող են տալ միայն այն անհավատ ու անօրեն մարդիկ, որ գործում ու խեղդում են հախուռն թափով, առանց լավն ու վատը հարցնելու, Սագնիցին, Արակէնը: *Tutti quanti...!* Դու համաձայն ես, որ միայն հանգստություն, ուստի որքան դաժան լիներ կառավարիչ, այնքան ավելի շուտ կհասնեիր նպատակիդ, — դարձավ նա Նիկոլային:

— Է, ինչի՞ համար ես այդ ասում, — ասավ Նիկոլայը:

— Դե, և ամեն բան կործանվում է: Դատարաններում գործություն, բանակում միայն մահակ, քայլամարդություն, բանի

<sup>1</sup> Եկ նմանները:

թեակեցում, — տանջում են ժողովրդին. լուսավորությունը իւեղ-գում են: Ինչ ջահել է, ազնիվ — խորտակում են: Բոլորը տեսնում են, որ այդ չփ կարող այդպես շարունակվել: Ամեն ինչ ջափազանց լարված է և անպայման պայթելու է, — խոտում էր Պիեռը (ինչպես այն օրից, ինչ գոյություն ունի կառավարություն, որնէ կառավարության գործը մոտից տեսնելով միշտ խոսում են մարդիկ): — Ես մի բան ասի նրանց Պետերբուրգում:

— Ում, — հարցրեց Դենիսովը:

— Դե, զուք գիտեք ո՞ւմ, — ասավ Պիեռը, նշանակալից նայելով հոնքերի տակից: — Իշխան Ֆեոդորի և նրանց բոլորին: Լուսավորությունն ու բարեգործությունը մրցակցեն — այդ բոլորը լավ է, իհարկե: Նպատակը Հիանալի է և վերջացավ, բայց ներկա հանգամանքներում ուրիշ բան է հարկավոր:

Այդ ժամանակ Նիկոլայը նկատեց Նիկոլենկա Բալկոնսկու ներկայությունը: Նրա գեմքը մոռյլվեց, և նա մոտեցավ նըրան:

— Դու ինչո՞ւ ես այստեղ:

— Ինչո՞ւ: Թող գրան, — ասավ Պիեռը, բռնելով Նիկոլայի ձեռը, և շարունակեց: — այդ քիչ է, ասում եմ ես նրանց, հիմա ուրիշ բան է հարկավոր: Երբ գուք կանգնել ու սպասում եք, թե ուր է ահա կապայթի այդ ճգված լարը. Երբ բոլորն սպասում են անխուսափելի հեղաշրջման, պետք է որքան կարելի է ավելի սերտ ու ավելի շատ ժողովուրդ ձեռք ձեռքի տան, որպեսզի դեմ զնեն ընդհանուր աղետին: Բոլորը, ինչ ջահել է, ուժեղ՝ ձգվում-քաշվում է այնտեղ ու այլասերվում: Սեկին գայթակում են կանայք, մյուսին պատիքները, երրորդին սնափառությունը, դրամը, և նրանք անցնում են այն բանակը: Անկախ, ազատ մարդիկ, ինչպես գուք ու ես ենք, բոլորովին շեն մնում: Ես ասում եմ՝ լայնացրեք ընկերության շրջանակները. Մոտ մ'օգնե՛, թող մենակ առաքինությունը ւլինի, այլ անկախությունն ու գործունեությունը:

Նիկոլայը, փոքրիկ Նիկոլենկային թողնելով, բարեկացած քաշեց բազկաթոռը, նստեց և, Պիեռին լսելով, դժգոհ հազում էր և հնտղհետեւ ավելի ու ավելի մոռյլվում:

<sup>1</sup> Նշանաբանը:

— Բայց ի՞նչ նպատակով գործունեություն, — բացական, չեղ նա: — Եվ ի՞նչ դիրք եք բռնելու դուք կառավարության հանդեպ:

— Այ ինչ դիրք: Օգնականների դիրք: Ընկերությունը կարող է լինել ոչ գաղտնի, եթե կառավարությունը թույլատրի: Սյու ընկերությունը ոչ միայն թշնամի չէ կառավարության, այլ դա իսկական պահպանողականների ընկերություն է: Զենումեն ների ընկերություն՝ բարիս լիակատար նշանակությամբ: Մենք միայն նրա համար ենք, որ Պուզացովը շգա մորթելու իմ և քո երեխաներին, և որպեսզի Արակշեն ինձ շուղարկի զինվորների համար Հիմնած գյուղերը բնակվելու, — մենք հենց դրա համար ենք ձեռք-ձեռքի տալիս, ընդհանուր բարիքի և ընդհանուր անվտանգության մի նպատակով:

— Այո, բայց գաղտնի ընկերություն, հետեաբար, թշնամական և վնասակար, որը կարող է միայն շարիք ծնել:

— Ինչո՞ւ: Մի՞թե տուղենդրունդը, որ փրկեց Ելիուսան (այն ժամանակ չէին համարձակվում մտածել-կարծել, որ Ռուսաստանը փրկեց Եվրոպան), որևէ վնասակար բան արագ: Տուղենդրունդը՝ զա առաքինության միություն է: Դա սեր է, փոխադարձ օգնություն. զա այն է, ինչ Հիսուսը բարողեցի խաչի վր...»

Նատաշան, որ գրուցի կիսին սենյակ մտավ, խնդադեմ նայում էր ամուսնուն: Նա չէր ուրախանում նրա ասածների վրա: Այդ նույնիսկ չէր հետաքրքրում նրան, որովհետև նրան թվում էր, թե այդ ամենը շափազանց պարզ է, և որ ինքն այդ ամենը վաղուց գիտեր (այդ նրան թվում էր այն պատճառով, որ նա գիտեր ամենը, ինչից բխում էր այդ՝ Պիեռի ամրող զոգին). Բայց նա ուրախանում էր, նայելով ամուսնու աշխուժացած, իսանդավառ կերպարանքին:

Էլ ավելի ուրախ խանդավառ հայացքով էր նայում Պիեռին բոլորի կողմից մոռացված փոքրիկ տղան, որի բարակ վիզը դուրս էր գալիս ծալովի օծիքից: Պիեռի ամեն մի բարը վառում էր նրա սիրտը, և նա մատների նյարդային շարժումով կոտըրատում էր, ինքն էլ այդ չնկատելով, քեռու սեղանի վրա ձեռն ընկած զմուռներն ու զրիչները:

— Բոլորովին այն չէ, ինչ դու կարծում ես. այ ի՞նչ է եղել

երմանական տուղենդրունդը և այն, ինչ ես եմ առաջարկում: — Է, եղբայլ՝, այդ եղ՝ շիկավող՝ նեղ՝ համար՝ է տուգենդը րունդ, իսկ ես այդ շեմ հասկանում, և աղ՝ տասանել էլ շեմ կաղ՝ ող, — լսվեց Դենիսովի բարձր, վճռական ձայնը: — Ամեն բան զգվելի է և նողկալի, համաձայն եմ. բայց տուգենդրունդ շեմ հասկանում. իսկ եթե դուդ՝ շի գալիս՝ ուղ՝ եմն բունտ. այ այդպես: Je suis votre homme!

Պիեռը ժպտաց, նատաշան ծիծաղեց, բայց Նիկոլայը հոնքերն ավելի վրա բերեց և սկսեց Պիեռին ապացուցել, թե ոչ մի հեղաշրջում չի նախատեսվում, և թե ամբողջ վտանգը, որի մասին խոսում է նա, գտնվում է միայն իր երեսակայության մեջ: Պիեռն ապացուցում էր հակառակը, և, որովհետև նրա մրտավոր ընդունակություններն ավելի ուժեղ էին ու ճկուն, Նիկոլայն իրեն զգաց փակուղու մեջ դրված: Այդ ավելի ես զայրացրեց նրան, որովհետև նա իր հոգում ոչ թե դատողությամբ, այլ ինչ-որ ավելի ուժեղ բանով, քան զատողությունը, գիտեր իր կարծիքի անկասկածելի արդարացիությունը:

— Ես այ ինչ կասեմ քեզ, — ասավ նա, վեր կենալով ու նյարդային շարժումով ծխամորճն անկյունը դնելով և, վերջապես, նետելով մի կողմ: — Ապացուցել շեմ կարող ես քեզ: Դու ասում ես, թե մեզանում ամեն բան զգվելի է, և թե հեղաշրջում է լինելու. Ես այդ շեմ տեսնում: Բայց դու ասում ես, թե երդումը՝ պայմանական բան է, և դրա վրա ես պիտի ասեմ քեզ. որ դու իմ լավագույն բարեկամն ես, դու այդ գիտես. Բայց երբ դուք գաղտնի ընկերություն կազմեք, սկսէք լնդդիմանալ կառավարությանը, ինչ տեսակ էլ նա լինի, ես գիտեմ, որ իմ պարտքն է հնագանգել նրան: Եվ եթե հիմա Արակշենը կարգադրի ինձ հեծվաշտով գալ ձեզ վրա և կոտորել — մի վայրկյան իսկ շեմ մտածի և կզամ: Հետո ինչ ուզում ես կարծիք:

Այս խոսքերից հետո տիրեց անհարմար լոռւթյուն: Առաջին ը խոսեց նատաշան, պաշտպանելով ամուսնուն, հարձակելով եղբոր վրա: Նրա պաշտպանությունը թույլ էր և անհամարձակ, բայց նա հասավ նպատակին: Խոսակցությունը նորից վերըս-

1 Պատրաստ եմ ձեզ ժառայելու:

Կըսվեց և այլնս ոչ թե այն անհաճությամական եղանակով, որով ասվեցին Նիկոլայի վերջին խոսքերը:

Երբ բոլորը վեր կացան ընթրիքի գնալու, Նիկոլենկա թողոնսկին գունատ, փայլուն, ճառագայթող աշքերով մոտեցավ Պիեռին:

— Պիեռ քեզի... դուք... չէ... Եթե հայրիկը ողջ լիներ... նա համաձայն կլիներ ձեզ հետ, — հարցրեց նա:

Պիեռը հանկարծ ըմբռնեց, թե զգացմունքների ու մտքերի ինչպիսի առանձնահատուկ, անկախ, բարդ և ուժեղ աշխատանք պիտի կատարվեր տղայի մեջ զրուցի ընթացքում և, հիշելով բոլոր իր ասածները, նա վշտացավ, որ Նիկոլենկան լսել էր այդ: Սակայն պետք էր նրան պատասխանել:

— Ես կարծում եմ, այո, — ասավ նա ակամա և դուրս եկավ առանձնասենյակից:

Տղան գլուխն իշեցրեց և այդտեղ առաջին անգամ կարծես նկատեց, թե ինքն ինչ էր արել սեղանի վրա: Նա կաս-կարմիր կտրեց և մոտեցավ Նիկոլային:

— Քեզի, ներիր ինձ. այս ես եմ արել, պատահարար, — ասավ նա, ցույց տալով կոտրտած զմուռներն ու գրիշները: Նիկոլայը բարկացած ցնցվեց:

— Լավ, լավ, — ասավ նա, սեղանի տակը նետելով զմուռի կտրորանքները և գրիշները:

Եվ, ըստ երևույթին, գժվարությամբ զսպելով իր մեջ բարձրացող զայրուցիթը, նա երեսը շրջեց նրանից:

— Բոլորովին հարկ էլ չկար, որ դու այստեղ լինեիր, — ասավ նա:

## XV

Ընթրիքին խոսակցությունն ալևս քաղաքականության ու ընկերությունների մասին չէր, այլ, ընդհակառակը, սկսվեց Նիկոլայի համար ամենահաճելի զրուցը — 12 թվի հիշողությունների մասին, որն սկսեց Դենիսովը, և որի մեջ Պիեռն առանձնապես հաճելի էր ու զվարճալի: Եվ հարազատները ցովեցին ամենաբարեկամական տրամադրություններով:

Երբ ընթրիքից հետո Նիկոլայը, առանձնասենյակում հանգեցվով և երկար սպասող կառավարվելու կարգադրություններ անելով, խալաթը հազին եկավ ննջարան, կնոջը տեսավ գեռ գրասեղանի մոտ նստած. նա ինչ-որ բան էր գրում:

— Ի՞նչ ես գրում, Մարի, — հարցրեց Նիկոլայը:

Կոմուհի Մարիան կարմրեց: Նա վախենում էր, թե իր գրածը հասկանալի չմինի ամուսնուն և հավանություն չգտնի նրա կողմից:

Նա կուգեր նրանից թաքցնել իր գրածը, բայց դրա հետ միաժամանակ ուրախ էր, որ մարդը տեսավ իրեն գրելիս, և որ պետք է նրան ասել:

— Սա օրագիր է, Nicolas, — ասավ նա, ամուսնուն տալով կապույտ տետրը, որը գրուված էր հաստատուն խոշոր ձեռագրով:

— Օրագիր, — հեզնանքի երանգով ասավ Նիկոլայը և տետրը ձեռն առավ:

Ֆրանսերեն գրված էր.

«4-ը գեկտեմբերի Այսօր Անդրյուշան (ավագ որդին), զարթնելով, չէր ուզում հավաքել, և ու-լլե Louise մարդ ուղարկեց իմ հետեւից: Նա քմահաճության և համառության մեջ էր: Ես փորձեցի սպառնալ, բայց նա միայն ավելի և շարացավ: Այդ ժամանակ ես թողի նրան և դայակի հետ սկսեցի հազցնել մյուս երեխաներին, իսկ նրան ասի, թե իրեն չեմ սիրում: Նա երկար լոեց, կարծես զարմանալով, ապա միայն շապիկանց վեր թուավ եկավ ինձ մոտ և այնպես լաց եղավ, որ երկար շկարողացած հանգստացնել նրան: Երևում էր, որ նա ամենից ավելի տանշվում էր նրանից, որ վշտացրել է ինձ. Հետո, երբ երեկոյան են նրան առմաս տվի, նա նորից ողբագին լաց եղավ ինձ համրութելով: Քնքշությամբ նրան շատ բան կարելի է հասկացնելու:

— Ի՞նչ բան է տոմսը, — հարցրեց Նիկոլայը:

— Սկսել եմ երեկոները մեծերին տոմսակներ տալ, թե ինչպես են իրենց պահել:

Նիկոլայը մտիկ արավ իրեն նայող ճառագայթող աշքերին և շարումակեց թերթել ու կարդալ: Օրագրում գրի էր առնը-վում մանուկների կյանքից այն բոլորը, ինչ մորը թվում էր աշքի ընկնող, արտահայտում էր երեխայի բնավորությունը

կամ ընդհանուր մտքեր էին առաջացնում գաստիարակության եղանակների մասին: Դրանք մեծ մասամբ ամենաանշան մանրունքներն էին. բայց դրանք այդպիսին չէին թվում ոչ մորը, ոչ հորը, երբ նա այժմ առաջին անգամ կարդում էր այդ մանկական օրագիրը:

Դեկտեմբերի 5-ին գրված էր:

«Միայն շարություն արավ սեղանի շուրջը: Հայրիկը կարգադրեց նրան կարկանդակ շտալ: Չափին. բայց նա այնպես խեղճացած ու ագահությամբ էր նայում ուրիշներին, երբ նրանք ուտում էին: Ես կարծում եմ, քաղցր բաներ շտալով պատժելը զարգացնում է միայն ագահությունը: Ասել Nicolas-ին»:

Նիկոլայը տեսրը թողեց և նայեց կնոջը: Ճառագայթող աշբերը հարցականորեն (հավանում էր նա թե չէր հավանում օրագիրը) նայում էին իրեն: Կասկած չէր կարող լինել նիկոլայի ոչ միայն հավանելուն, այլ կնոջ հանդեպ ունեցած հիացմունքին:

Թերևս, այդ չպետք է արվեր այդպես պեղանտորեն, թերևս, բնավ պետք չէր, մտածում էր նիկոլայը, բայց այդ անդադրում, մշտական, հոգեկան լարումը, որի նպատակն էր միայն երեխաների բարոյական շահը՝ հիացնում էր նրան: Եթե նիկոլայը կարողանար գիտակցել իր զգացողությունը, նա կը տեսներ, որ դեպի կինն ունեցած իր հաստատուն, քննուշ ու հաւարտ սիրո գլխավոր հիմքը եղել է միշտ զարմանքի այն զգացումը, որ ուներ նա կնոջ սրտագինության հանդեպ, այն, նիկոլայի համար գրեթե անմատչելի, վսեմ բարոյական աշխարհի հանդեպ, որի մեջ մշտապես ապրում էր կինը:

Նիկոլայը հպատանում էր նրանով, որ կինն այդպես խելացի է և լավ, գիտակցելով իր ոչնչությունը նրա հանդեպ՝ հոգեոր աշխարհում, և այդպիսով ավելի էր ուրախանում այն բանի համար, որ նա իր հոգով ոչ միայն պատկանում էր իրեն, այլև կազմում էր իր իսկ մասը:

— Շատ և շատ հավանում եմ, բարեկամս, — ասավ նա լուրջ աեսքով: Եվ, մի փոքր լուելով, ավելացրեց. — Իսկ ես քիչ առաջ շատ վատ վարպեցի: Դու առանձնասենյակում չէիր: Մենք վիճեցինք Պիեռի հետ, ու ես տաքացաւ եվ անկարելի էր

լուաքանալ: Դա մի այնպիսի երեխա է: Զգիտեմ ինչ կլիներ նրա վիճակը, եթե նատաշան նրա սանձերը չպահեր: Կարո՞ղ ես երեսակայել ինչո՞ւ է գնացել Պետերբուրգ... Նրանք այնտեղ կազմակերպել են...

— Այո, գիտեմ, — ասավ կոմսուհի Մարիան: — Նատաշան պատմեց ինձ:

— Ե, ուրեմն գիտես, — տաքանալով հենց միայն վեճի հիղողությունից, շարունակեց նիկոլայը: — Նա ինձ ուզում է հավատացնել, թե յուրաքանչյուր ազնիվ մարդու պարտականությունն է գնալ կառավարության դեմ, որովհետեւ երդումն ու պարտքը... Ցավում եմ, որ դու այնտեղ չէիր: Բոլորը հարձակվեցին ինձ վրա, թե Դենիսովը, թե Նատաշան... Նատաշան շատ ծիծաղելի է: Զէ որ նա մարդուն կրունկի տակ է պահում, բայց երբ բանը զատողության է հասնում — նա իր սեփական խոսքերը շունի — խոսում է մարդու բառերով, — ավելացրեց նիկոլայը, ենթարկվելով այն անդիմադրելի ձգտումին, որը ստիպում է կարծիք հայտնել-խոսել ամենաթանկագին ու մոտ մարդկանց մասին:

Նիկոլայը մոռանում էր, որ բառ առ բառ նույնը, ինչ ինքն ասում էր նատաշայի մասին, կարելի էր ասել իր կնոջ վերաբերմունքի մասին:

— Այո, ես այդ նկատել եմ, — ասավ կոմսուհի Մարիան:

— Երբ ես նրան ասի, թե պարտքն ու երդումը վեր են ամեն բանից, նա սկսեց ապացուցել աստված գիտե թե ինչ: Ափսոս, դու շկայիր, դու ի՞նչ կասեիր:

— Հստ իս, դու միանգամայն իրավացի ես: Ես այդպես էլ ասի նատաշային: Պիեռն ասում է, որ բոլորը տանջվում են, տառապում, այլասերվում, և որ մեր պարտքն է՝ օգնել մերձավորներին: Պարզ է, նա իրավացի է, — ասում էր կոմսուհի Մարիան, — բայց նա մոռանում է, որ մենք ուղիղ ավելի մոտ պարտականություններ ունենք, որ աստված ինքն է մատնանշել, և որ մենք կարող ենք ուխսի ենթարկել մեզ, բայց ոչ երեխաներին:

— Ահա, ահավասիկ, այդ իսկ բանը ասի ես նրան, — վրա բերեց նիկոլայը, որին իսկապես, թվում էր թե այդ իսկ բանն ասել է ինքը: — Իսկ նրանք իրենցը. թե սեր դեպի մերձավորը

և բրիստոնեռւթյուն։ Եվ այդ բոլորը Նիկոլենկայի ներկայությամբ, որը մտել էր առանձնասենյակ և կոտրտել ամեն ինչ։

— Ախ, գիտես արդյոք, Nicolas, Նիկոլենկան այնպես հաճախ է ինձ տանջում, — ասավ կոմուէհի Մարիան։ — Դա մի այնպիսի անսովոր տղա է։ Եվ ես վախենում եմ, որ նրան մոռանում եմ իմոնց պատճառով։ Մենք բոլորս երեխաներ ունենք, բոլորս հարազատներ։ Իսկ նա ոչ ոք չունի։ Նա մշտապես մննակ է ինքն իր մտքերի հետ։

— Է, կարծում եմ, արդեն քեզ նրա համար շպետք է կը տամբել։ Ամենը, ինչ կարող է անել ամենաքնքուշ մայրն իր որդու համար, գու արել ես և անում ես նրա համար։ Եվ ես, պարզ է, ուրախ եմ դրա համար։ Նա հիանալի, հիանալի արդա է։ Քիչ առաջ մի տեսակ խենթի պես լսում էր Պիեռին։ Եվ կարող ես երեխային։ Մենք դուրս ենք գալիս ընթրիթի, նայեմ տեսնեմ զա ամեն բան չարդ ու փշուր է արել սեղանի վրա, և իսկույն էլ ասավ։ Երբեք չեմ տեսել, որ նա անճիշտ բան ասի։ Հիանալի, հիանալի տղա է, — կրկնեց Նիկոլայը, որին սրտանց դուր չէր գալիս Նիկոլենկան, բայց որին նա միշտ ուզում էր հիանալի համարել։

— Բայց և այնպես ես այն չեմ, ինչ որ մայրը, — ասավ կոմուէհի Մարիան, — ես զգում եմ, որ այն չէ, և այդ տանջում է ինձ։ Սէանչիլի տղա է։ Բայց ես սարսափելի վախենում եմ նրա համար։ Հասարակությունն օգտակար կլինի նրա համար։

— Ինչ կա որ, երկար չի մնա այստեղ, այս ամառ նրան կտանեմ Պետերբուրգ, — ասավ Նիկոլայը։ — Այո, Պիեռը միշտ եղել է և մնացել է երազող, — շարունակեց նա, վերագանալով առանձնասենյակի խոսակցության, որն, ըստ երեսութին, հուզել էր նրան։ — Է, իմ ինչ գործն են այդ ամենը՝ որ Արակչելը վատ է և այն, իմ ինչ գործն էր այդ, երբ ես ամուսնանում էի և այնքան պարտք ունեի, որ ինձ բանտ էին զնում, և մայրս, որ այդ չէր կարողանում տեսնել ու հասկանալ։ Իսկ հետո — գու, երեխաները, գործերը։ Մի՛թե ես իմ բավականության համար եմ առավոտից մինչև երեկո զբաղվում գործերով և լինում գրասենյակում։ Ոչ, ես գիտեմ, որ պարտավոր եմ աշխատել, որ հանգստաց-

եմ մորս, հատուցեմ քեզ և երեխաներին լթողնեմ ահապիսի մուրացիկ, ինչպիսին ես էի։

Կոմուէհի Մարիան ուզում էր նրան ասել, որ մենակ հացով չէ կուշտ լինում մարդ, որ նա շատ կարևորություն է տալիս այդ գործերին։ Բայց նա գիտեր, որ այդ ասել հարկավոր չէ և անօգուտ է։ Նա միայն բռնեց ամուսնու ձեռը և համբուրեց։ Նիկոլայը կնոշ այդ վարմունքն ընդունեց ի հավանություն և ի հաստատումն իր մտքերի և, միասնական անխոս խորհելով, բարձրածայն շարունակեց իր մտքերը։

— Գիտես, Մարի, — ասավ նա, — այսօր իլյա Միտրոֆանիչը (դա գործերի վարիչն էր) եկել է Տամբովի շրջանի գյուղից և պատմում է, որ անտառին արգեն 80 հազար են տալիս։

Եվ Նիկոլայն աշխատյած դեմքով սկսեց պատմել, որ հնարավոր է շատ կարծ ժամանակում ետ գնել Օտրաղնոյեն։ — Էլի մի տարօտարի կյանք, և ես երեխաներիս կթողնեմ... հիանալի դրության մեջ։

Կոմուէհի Մարիան լսում էր ամուսնուն և հասկանում էր նրա բոլոր ասածները։ Նա գիտեր, որ երբ մարդն այդպիս մաածում էր բարձրածայն, նա երբեմն հարցնում էր իրեն, թե ինքն ի՞նչ ասավ, և բարկանում էր, երբ նկատում էր, որ կինը մտածում է ուրիշ բանի մասին։ Բայց կոմուէհի Մարիան մէծ ճիգ էր գործ գնում դրա համար, որովհետև նրան բնավ չըր հետաքրքրում այն, ինչ ասում էր մարդը։ Նա նայում էր ամուսնուն և չէ թե մտածում էր ուրիշ բանի մասին, այլ զգում էր ուրիշ բան։ Նա զգում էր խոնարհ, քնքուշ սեր դեպի այդ մարդը, որը երբեք չի հասկանա այն բոլորը, ինչ ինքն էր հասկանում, և կարծես դրանից էլ ավելի ուժգին, բուռն քնքության երանգով էր սիրում նրան։ Բացի այդ զգացմունքից, որ կիանում էր նրան ամբողջապես և խանգարում էր նրան թափանց կլամուսնու ծրագիրների մանրամասնությանց մեջ, կոմուէհի Մարիայի գլխում առկայութեամ էին մտքեր, որ ընդհանուր ոչինչ շումեին ամուսնու ասածների հետ։ Նա մտածում էր եզրորդ մասին (մարդու պատմածը, թե Նիկոլենկան հուզվել է Պիեռի զրուցիքի միջոցին՝ սաստիկ զարմացրել էր նրան), և նրան պատկերանում էին նրա քնքուշ, զգայուն քնավորու-

թյան տարբեր գծերը. և նա, մտածելով եղբոր որդու մասին, մտածում էր և իր երեխաների մասին: Նա եղբոր որդուն ու իր երեխաներին չէր համեմատում, բայց համեմատում էր դեպի նրանց ունեցած իր զգացմունքը և տիրությամբ գտնում էր, որ դեպի նիկոլենկան ունեցած իր զգացմունքի մեջ պակասում էր ինչ-որ բան:

Երբեմն նրա մտքով անցնում էր, թե այդ տարբերությունն առաջանում է հասակից բայց նա զգում էր, որ մեղավոր է եղբոր որդու առաջ, և ներքուստ խոստանում էր ուղղվել և անել անկարելին, այսինքն՝ այս կյանքում սիրել թե՛ իր ամուսուն, թե՛ երեխաներին, թե՛ նիկոլենկային և թե բոլոր մերձավորներին այնպես, ինչպես Քրիստոսն էր սիրում մարդկությունը: Կոմսուհի Մարիամի Հոգին միշտ ձգտում էր դեպի անսահմանը, հավիտենականն ու կատարյալը և այդ պատճառով երեկք էր կարող հանգիստ լինել: Նրա դեմքին երկաց ժարմնից ճնշվող հոգու ծածուկ բարձր տանշանքի խիստ արտահայտությունը: Նիկոլայը նայեց նրան. «Աստված իմ ինչ կինի մեր վիճակը, եթե սա մեռնի, ինչպես այդ թվում է ինձ, երբ նա այդպիսի դնմք ունի», — մտածեց նիկոլայը և, սրբաւտակերի առաջ կանգնելով, սկսեց կարդալ երեկոյան աղոթքը:

## XVI

Նատաշան, ամուսնու հետ մենակ մնալով, նույնպես խոսեց այնպես, ինչպես միայն կինն է խոսում մարդու հետ, այսինքն՝ անսովոր պայծառությամբ ու արագությամբ իմանաւով ու հաղորդելով միմյանց մաքեր մի ճանապարհով, որ հակառակ է տրամաբանության բոլոր կանոններին, առանց դատողությունների, եղբակացությունների ու հետևությունների միջնորդության, այլ բոլորովին առանձնահատուկ եղանակով: Նատաշան այն աստիճան էր ընտելացել ամուսնու հետ խոսել այդ եղանակով, որ երբ որևէ բան վատ էր լինում նրա և ամուսնու մէջն, դրա ստույգ նշանը նատաշայի համար լինում էր Պիեռի մոռքերի տրամաբանական ընթացքը: Երբ Պիեռն սկսում

էր ապացուցել, խոսել կշռադատելով ու հանգիստ, և երբ նատաշան, նրա օրինակով տարվելով, սկսում էր անել նույնը, նա գիտեր, որ դա անպայման բանը հասցնելու է կովի:

Այն վայրկյանից, երբ նրանք մենակ մնացին, և նատաշան լայն բացած երջանիկ աշբերով, հանգարտ մոտեցավ նըրան և հանկարծ, արագորեն նրա գլուխը բռնելով, սեղմեց իր կրծքին և ասավ. «Ալժմ դու ամբողջովին ի՞մն ես, ի՞մք: Է՛ չես հեռանա» — այդ վայրկյանից սկսվեց այդ գրույցը, հակառակ տրամաբանության բոլոր կանոններին, հակառակ հենց այն պատճառով, որ միեննույն ժամանակ խոսվում էր բոլորովին տարբեր առարկաների մասին: Շատ բաների այդ միաժամանակ քննարկումը ոչ միայն չէր խանգարում հասկացության պարզությանը, այլ, ընդհակառակը, ստույգ նշան էր, որ նրանք լիովին հասկանում են իրար:

Ինչպես երազի մեջ ամեն ինչ լինում է անծիշտ, անմիտ ու հակասական, բացի երազը զեկավարող զգացումից, այդպիս էլ այս, դատողության բոլոր օրենքներին հակառակ, հաղորդակցման մեջ հետեւղական ու պարզ էին ոչ թե խոսքերը, այլ միայն գրանց զեկավարող զգացումը:

Նատաշան Պիեռին պատմում էր եղբոր կյանքի ու կենցազի մասին, այն մասին, ինչպես է ինքը առանց ամուսնու տանցվել, և ոչ թե ապրել, և այն մասին, թե ինչպես է ինքն էլ ավելի սիրել Մարիին, ու այն մասին, թե ինչպես Մարին բոլոր կողմերով ավելի լավ է իրենից: Այդ ասելով, նատաշան անկեծծորեն խոստովանում էր, որ ինքը տեսնում է Մարիի գերազանցությունը, բայց միեննույն ժամանակ նա, այդ ասելով, Պիեռից պահանջում էր, որպեսզի նա այնուամենայնիվ իրեն գերազան համարի Մարիից և ուրիշ բոլոր կանանցից և հրմանորից, մանավանդ այն բանից հետո, երբ նա Պիեռը բուրգում շատ կանայք էր տեսել, այդ բանը կրկներ իրեն:

Պիեռը նատաշային պատասխանելով, պատմեց, թե որքան իր համար Պիեռը բուրգում անտանելի էր լինել երեկութեանում և ճաշել տիկինների հետ:

— Ես բոլորովին մոռացել եմ կանանց հետ խոսելը, — ասավ նա, — պարզապես ձանձրալի է: Մանավանդ ես այնքան զբաղված էի:

Նատաշան սկեռուն նայեց նրան ու շարունակեց.

— Մարին, դա մի այնպիսի սքանչելի հակ է, — ասավ նա: — Ինչպես լավ է հասկանում երեխաններին: Կարծես նրանց հոգիներն է սրբազնությունը միայն: Երեկ, օրինակ, Միտենկան սկսեց քմահաճություններ անել...

— Բայց ինչպես նա նման է Շորը, — ընդհատեց Պիեռը: Նատաշան հասկացավ, թե ինչո՞ւ Պիեռն արագ Միտենկայի ու Նիկոլենկայի նմանության այդ գիտողությունը. Նրան տհաճ էր աներժագի հետ ունեցած վեճի հիշողությունը և ուզեց իմանալ նատաշայի կարծիքն այդ մասին:

— Նիկոլային ունի այդ թուրությունը, որ եթե մի բան ընդունված չէ բոլորի կողմից, նա ու մի դեպքում չի համաձայնի: Իսկ ես հասկանում եմ, որ հենց բարձր ես գնահատում այն, որպեսզի օսոր սուրբությունը՝ — ասավ Նատաշան, կը ընկելով Պիեռի մի անգամ ասած փոստքերը:

— Ոչ, գլխավորն այն է, որ Նիկոլայի համար, — ասավ Պիեռը, — մտքերն ու դատողությունները — զվարճություն են, զրեթե ժամանց: Ահավասիկ նա գրադարան է՝ կազմում և որոշել է՝ նոր գիրք չգնել, մինչև գնած գիրքը չփարդա — թե՝ Միտոնդին, թե՝ Ռուսոն, թե՝ Մոնտեսքյոն, — ժպատակ ավելացրեց Պիեռը: — Դու գիտես չէ, ինչպես եմ ես... — սկսեց նա իր խոսքերը մեղմել, բայց Նատաշան ընդհատեց նրան, զգացնել տալով, որ այդ հարկավոր չէ:

— Դու ուրեմն ասում ես, որ Մաքերը նրա համար զվարճալիք նն...

— Այո, իսկ ինձ համար բոլոր մնացյալն է զվարճությունը ևս Պիեռը բոլոր ժամանակ բոլորին կարծես նրազում էի տեսնում: Երբ միտքն զբաղեցնում է ինձ, մնացյալ բոլորը — զվարճություն է:

— Ախ, որքան ափսոսում եմ, որ չտեսա, թե դու ինչպես զարևեցիր երեխաններին, — ասավ Նատաշան: — Ո՞րն ավել շատ ուրախացավ: Լիզա՞ն, ճի՞շտ է:

— Այո, — ասավ Պիեռը և շարունակեց այն, ինչ զբաղեց-

նում էր իրեն: — Նիկոլայն ասում է՝ մենք շպիտք է մոռածենք, Բայց ես շեմ կարող: Զիսոսկմ էլ այն մասին, որ Պիեռը բուրգ կազմում էր այդ (ես քեզ կարող եմ ասել), որ առանց ինձ այդ ամենը կազմալուծվում էր, յուրաքանչյուրը ձգում էր իր կողմը: Բայց ինձ հաշողվեց բոլորին միացնել, և հետո իմ միտքն այնքան պարզ է ու հստակ: Չէ՞ որ ես շեմ ասում, թե մենք պետք է ընդդիմանանք սրան կամ նրան: Մենք կարող ենք սիրալիլ: Իսկ ես ասում եմ. թող ձեռք-ձեռքի տան նրանք, ովքեր սիրում են բարին, և թող լինի մի դրոշակ՝ գործուն առաքինությունը: Իշխան Սերգեյը հիանալի մարդ է և խելացի:

Նատաշան չէր կասկածի, թե Պիեռի միտքը խոշոր միս ք է, բայց մի բան շփոթում էր նրան: Այդ այն էր, որ Պիեռն իր ամուսինն էր: «Մի՞թե հասարակության համար այսպիսի կարեոր ու հարկավոր մարդը միննույն ժամանակ իմ ամուսինն է: Այս ինչո՞ւ է այսպես պատահել»: Նա ուզում էր իր կասկածը հայտնել ամուսնուն: «Ովքեր են այն մարդիկ, որ կարող էին որոշել, իսկապես արդյոք նա այնպես խելացի է բոլորից», — հարցնում էր նա իրեն և երեկայության մեջ թվարկում էր այն մարդկանց, որոնք շատ հարգված էին Պիեռի կողմից: Բոլոր մարդկանց մեջ, դատելով նրա պատմածներից, նա ու ոքի այնպես չէր հարգում, ինչպես Պլատոն Կարասկանին:

— Գիտես, ես ինչի՝ մասին եմ մտածում: — ասավ Նատաշան, — Պլատոն Կարասկանի մասին: Նա ինչպե՞ս կվերաբերվեր: Հիմա հավանություն կտա՞ր քեզ:

Պիեռը բնավ զբարյացավ այդ հարցի վրա: Նա հասկացավ կնոջ մաքերի ընթացքը:

— Պլատոն Կարասկանի՝ — ասավ նա և մտածմունքի մեջ ընկավ, ըստ երեսույթին, անկեղծորեն աշխատելով պատկերացնելիրեն Կարասկանի դատողությունը այդ առարկայի մասին: — Նա չէր համարականա, բայց ասենք, թերեւս, և այո:

— Ես շատ եմ սիրում քեզ, — ասավ հանկարծ Նատաշան: — Շատ:

— Ոչ, հավանություն չէր տա, — ասավ Պիեռը, մտածելով: — Ինչը նա կհավաներ՝ մեր ընտանեկան կյանքը: Նա այն-

<sup>1</sup> Կարիքի ստեղծել:

պես էր ցանկանում ամեն բանում տեսնել բարետեսություն, երջանկություն, հանգստություն, և ես հպարտությամբ նրան ցույց կտայի մեզ: Այ դու ասում ես անշատում, թայց դու չես հավատա, թե ի՞նչ առանձին զգացում ունեմ դեպի քեզ անշատումից հետո...

— Ահա դարձյալ...— սկսեց նատաշան:

— Ոչ, այն չէ: Ես երբեք չեմ դադարում քեզ սիրելուց: Եվ ավելին սիրել չեմ կարելի: Իսկ այս առանձին բան է.... Այո, — նա շվերցրեց, որովհետև նրանց հանդիպած հայացքները լրացրին մնացյալը:

— Ի՞նչ հիմարություններ, — հանկարծ ասավ նատաշան, — մեղրամիս, և որ իսկական երջանկությունը առաջին շրջանումն է լինում: Ընդհակառակը, հիմա ամենալավն է: Եթե միայն դու շմեկնեիր: Հիշում ես, ինչպես էինք կովում: Եվ ես միշտ մեղավոր էի լինում: Միշտ ես: Եվ ի՞նչի մասին էինք կովում, չեմ հիշում անգամ:

— Միշտ միենույն բանի մասին, — ասավ Պիեռը ժպտալով, — խան...

— Մի ասի, տանել չեմ կարող, — գոչեց նատաշան: Եվ ասոք. շար մի փայլ առկայժեց նրա աշքերում: — Դու տեսար նրան, — ավելացրեց նա, լոելով:

— Ոչ. բայց տեսնեի էլ, չէի ճանաշի:

— Ախ, գիտե՞ս: Եթե դու առանձնասենյակում խոսում էիր, ես նայեցի քեզ, — սկսեց նատաշան, ըստ երևույթին, աշխատելով վանել վերահաս ամպը: — Է, ինչպես ջրի երկու կաթիլ դու նման ես նրան, տղային: — Նատաշան այդպիս կոշում էր որդուն: — Ախ, ժամանակ է նրա մոտ գնալու... Եկավ.... թայց ափսոսում եմ գնալ հեռանալ:

Նրանք լոեցին մի բանի վայրկյան: Ապա հանկարծ միենույն ժամանակ շուրջ եկան դեպի իրար և սկսեցին խոսել ինչոր: Պիեռն սկսեց ինքնագոհությամբ ու ոգուրզած, նատաշան՝ հանդարտ, երջանիկ ժափտով: Դեմ առ դեմ զալով՝ նրանք երկուսն էլ կանգ առան, միմյանց ճանապարհ տալով:

— Զէ, դու ի՞նչ. ասա՛, ասա՛:

— Ոչ, դու ասա. ես այնպես, հիմարություններ, — ասավ նատաշան:

Պիեռն ասավ այն, ինչ սկսել էր: Այդ շարունակությունն էր նրա Պիեռերուրգում ունեցած իր հաջողության մասին արած ինքնագոհ դատողությունների: Այդ բովեին նրան թվում էր, թե ինքը կոշված է նոր ուղղություն տալու ամբողջ ոռւս հասրակությանը և ամբողջ աշխարհին:

— Ես ուզում էի ասել միայն, որ բոլոր մտքերը, որոնք հսկայական հետեւանքներ են ունենում՝ միշտ պարզ են: Իմ ամբողջ միտքն այն է, թե եթե արատավոր մարդիկ կապված են իրար հետ և ուժ են կազմում, ուստի ազնիվ մարդիկ պետք է միայն անեն միենույնը: Որքան պարզ է:

— Այո:

— Իսկ դու ի՞նչ էիր ուզում ասել:

— Ես այնպես, հիմարություններ:

— Ոչ, բայց և այնպես:

— Է, ոչինչ, դատարկ բաններ, — ասավ նատաշան, էլ ավելի պայծառանալով ժպիտից: — Ես ուզում էի միայն Պիեռյայի մասին ասել: Քիչ առաջ դայակը մոտենում է նրան ձեռից առնելու, նա ծիծաղեց, աշքերը փակեց ու կպավ ինձ: Երկի, մտածեց, թե թաքնվել է: Սարսափելի լավ էր: Այ նա ձայն է տալիս, ճշում: Դե, մնա՛ս բարեւ: — Եվ նատաշան գնաց սենյակից:

Այդ նույն պահին ներքեսում, նիկոլենկա Բոլկոնսկու հարկաբաժնում, նրա ննջարանում, ինչպես միշտ, ճրագ էր վառվում (տղան վախենում էր մութից, և նրան չէին կարողանում այդ սովորությունը մոռացնել տալ): Դեսալը քնած էր բարձր՝ իր շորս բարձերի վրա, և նրա հոռմեական քիթն արձակում էր խոմքոցի համաշափ հնչյուններ: Նիկոլենկան, հենց նոր զարթնած, սառը քրտինքի մեջ, լայն բացած աշքերով, նստել էր իր անկողնու վրա և նայում էր առջեր: Նրան արթնացրեց սարսափելի երազը: Նա երազում տեսավ իրեն ու Պիեռին՝ սաղավարտներով. այնպիսի սաղավարտներով, որոնք նկարված են Պլուտարքոսի Հրատարակության մեջ: Նա ու քեռի Պիեռը գնում էին ահագին զորքի առջևից: Այդ զորքը կազմված էր

սպիտակ շեղ գծերից, որ լցրել էին օդը նման այն ռարգուստախներին, որոնք թաշում են աշնանը և որոնց Գևալն անվանում էր le fil de la Vierge<sup>1</sup>. Առջեւում փառքն էր, նույնպիսի փառք, ինչպես այդ թելերն էին, բայց միայն փոքր-ինչ ալիքի խիստ նրանք — նա և Պիեռը — թեք և ուրախ տարգում և հետզհետե ավելի ու ավելի մոտենում էին նպատակին: Հանկարծ նրանց շարժող թելերն ակսցին թուլանալ, ինձնվել, դժվարացվ: Եթե քեզի Նիկոլայ Իլյիչը կանգնեց նրանց առջեւ աճարկու խիստ դիրքով:

— Այս գո՞ւք եք արել, — ասավ նա, ցույց տալով կոտըրտված զմուռներն ու գրիչները: — Ես սիրում եմ ձեզ, բայց Սրակչին ինձ կարգադրեց, և ես առաջինը կսպանեմ նրան, ով առաջ շարժվի: — Նիկոլենկան ես նայեց Պիեռին. բայց Պիեռն այլևս չկար: Պիեռը հայրն էր՝ իշխան Անդրեյը, և հայրը շուներ կերպարանք ու ձեւ, բայց նա կար, և, նրան տեսնելով, Նիկոլենկան սիրութություն զգաց. նա իրեն զգաց անզոր, անոսկը և հեղուկ: Հայրը փայտայում ու խղճում էր նրան: Բայց քեզի Նիկոլայ Իլյիչը հետզհետե ավելի ու ավելի էր գալիս իրենց վրա: Սարսափը համակեց Նիկոլենկային, և նա արթնացավ:

«Հայրս էր, — մտածեց նա: — Հայրս (չնայած տանը երկու նման պատկերներ կային, Նիկոլենկան երբեք իշխան Անդրեյին չէր երեակայում մարդկային կերպարանքով), հայրս հետսէր և փայտայեց ինձ: Նա հավանություն տվեց ինձ, հավանություն տվեց քեզի Պիեռին: — Ինչ էլ նա ասի՞ ես կկատարեմ այդ: Մուցի Սցեոլան վառել է իր ձեռք: Բայց ինչո՞ւ իմ կյանքում էլ չի լինի նույնը: Գիտեմ, նրանք ուզում են, որ ես սովորեմ: Եվ ես կսովորեմ: Բայց երբեկցի ես կդադարեմ սովորել, և այն ժամանակ կանեմ: Ես միայն մէ բան եմ խնդրում աստծուց. որ ինձ հետ լինի այն, ինչ եղել է Պլուտարքոսի մարդկանց հետ, և ես կանեմ նույնը: Ես կանեմ ավելի լավ: Բոլորը կիմանան, բոլորը կսիրեն, բոլորը կհիանան ինձնով»: Ու հանկարծ Նիկոլենկան հեկեկանք զգաց, որ բոհել էր կուրծքը, և լաց եղավ:

— Etes-vous indisposé?<sup>1</sup> — Լովեց Պեսալի ձայնը:

— Non<sup>2</sup>, — պատառիսանեց Նիկոլենկան և գլուխը գրեց բարձին:

«Ես բարի է և լավի, սիրում եմ նրան, — մտածում էր նա Պեսալի մասին: — Եսկ քեզի Պիեռը: Օ՛, ինչ սքանչելի մարդ է: Եսկ հայրս: Հայրս: Հայրս Այս, իւնեմ այն, որից անզամ նա զո՞ւ մնա...»:

<sup>1</sup> Աստվածամոր թելեր.

<sup>2</sup> Ոչ:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### I

Պատմության առարկան ժողովուրդների և մարդկության կյանքն է: Անմիջականորեն որսալ և խոսքով ընդգրկել նկարագրել ոչ միայն մարդկության, այլև մի ժողովրդի կյանքը՝ թվում է անհնարին:

Բոլոր հին պատմաբանները գործադրել են միևնույն եղանակը՝ նկարագրել և որսալ՝ ժողովրդի անորոշական թվացող կյանքը: Նրանք նկարագրել են ժողովուրդը կառավարող եղակի մարդկանց գործունեությունը. և այդ նրանց համար արտահայտել է ամբողջ ժողովրդի գործունեությունը:

Այն հարցերին, թե ինչպես են այդ եղակի մարդկի ժողովուրդներին ստիպել գործել իրենց կամքով, և ինչով է կառավարվել այդ մարդկանց կամքն ինքը, հները պատասխանել են. առաջին հարցին — ընդունելով աստվածության կամքը, որը ժողովուրդներին ենթարկում է մի ընտրյալ մարդու կամքի, իսկ երկրորդ հարցին — ընդունելով նույն այդ աստվածությունը, որն ընտրյալի այդ կամքն ուղղում էր դեպի կանխորոշած նպատակը:

Հների համար այդ հարցերը լուծվում էին նրանով, որ նրանք հավատում էին, թե աստվածությունն անմիջական մասակցություն ունի մարդկային գործերի մեջ:

Նոր պատմությունն իր թեորիայով ժխտեց այդ երկու դրույթն էլ:

Թվում էր, թե ժխտելով հների հավատալիքը՝ մարդկանց աստվածությանը ենթակա լինելու մասին և որոշ նպատակի վերաբերմամբ, նպատակ, դեպի որը առաջնորդվում են ժողովուրդները, — նոր պատմությունը պետք է որ ուսումնասիրեր ոչ թե իշխանության արտահայտությունները, այլ այն պատճառները, որ առաջացնում են այդ իշխանությունը: Բայց նոր պատմությունն այդ շարավ: Տեսականում ժխտելով հների հայացքները, նա գործնականում հետևում է նրանց:

Աստվածային իշխանությամբ օժտված և անմիջականորեւ աստվածության կամքով զեկավարվող մարդկանց փոխարեն՝ նոր պատմությունը դրեց կա'մ անսովոր, ոչ մարդկային ունակություններով օժտված հերոսներ, կա'մ պարզապես ամենատարեր հատկությունների տեր մարդկի, սկսած միապետներից և լրագրողներից, որոնց զեկավարում են մասսաները: Փոխարենը առաջվա ժողովուրդների՝ աստվածությանը հաճելի նպատակների, հրեական, հունական, հոռմեական ժողովուրդների, որոնք հներին պատկերանում էին մարդկության շարժման նպատակներ, — նոր պատմությունը դրեց իր նպատակները — ֆրանսական, գերմանական, անգլիական ժողովուրդների բարիքները և, իր ամենաբարձր վերացականությամբ, ողջ մարդկության քաղաքակրթության բարիքի նպատակները, մարդկություն, որի տակ սովորաբար հասկացվում են այն ժողովուրդները, որ գրավում են մեծ մայր ցամաքի հյուսիսարևմտյան փոքրիկ անկյունը:

Նոր պատմությունը ժխտեց հների հավատալիքները, դրանց տեղը չփնելով նոր հայացքներ, և կացության լոգիկան հարկադրեց թագավորների աստվածային իշխանությունը և հների փառումը երկութաբար ժխտող պատմագիրներին ուրիշ ճանապարհով հանգել նույն այդ բանին. ընդունել այն, որ 1) ժողովուրդները զեկավարվում են եղակի մարդկանց կողմից և 2) որ գոյություն ունի մի որոշ նպատակ, դեպի որը շարժվում են ժողովուրդներն ու մարդկությունը:

Նորագույն պատմագիրների — Հիբրոնից սկսած մինչև Բոկելլ — բոլոր երկերի (չնայած նրանց կարծեցյալ տարածայնության և նրանց հայացքների կարծեցյալ նորությանը) հիմքուժ դրված են այս երկու անխուսափելի դրույթները:

Նախ, պատմագիրը նկարագրում է, իր կարծիքով, մարդկութեանը զեկավարած առաձին անհատների գործունեությունը, մեկն այդպիսիների համարում է միայն միապետներին, գորավարներին, մինիստրներին. մյուսը, բացի միապետներից են փառներին, գիտնականներին, վերանորոգիչներին, փիլիսոփաներին, բանաստեղծներին: Երկրորդ՝ այն նպատակը, ոեպի առաջնորդվում է մարդկությունը, հայտնի է պատմագրին. մեկի համար այդ նպատակը հոռմեական, սպանական, քրանսական պետությունների մեծությունն է, մյուսի համար դա ազատությունն է, հավասարությունը, աշխարհի մի գորբիկ անկյունի (որը կոչվում է նվլրոպա) որոշ տեսակի քառակրթությունը:

1789 թվին Փարիզում հուկում է սկսվում, որն աճում է, ծավալվում և արտահայտվում է ժողովուրդների շարժումով արևմուտքից ոեպ արևելք: Այդ շարժումը մի քանի անգամ ուղղվում է ոեպ արևելք, ընդհարվում է արևելքից արևմուտք եկող հակաշարժման հետ. 12 թվին այդ շարժումը հասնում է իր ծայր աստիճանին՝ Մոսկվային և, զարմանալի համաշխատությամբ, կատարվում է հակաշարժում արևելքից, ճիշտ այնպես էլ, ինչպես առաջին շարժմանը, տանելով իր հետեւց միջին եվրոպական ժողովուրդներին: Հակառակ շարժումը հասնում է շարժման ելակետին արևմուտքում — մինչև Փարիզ — և հանդարտում է:

Այդ 20-ամյա ժամանակաշրջանում հսկայական քանակությամբ դաշտեր մնում են անվար, տները հրդեհված, առեսուրը փոխում է իր ուղղությունը, միլիոնավոր մարդիկ աղքատանում են, հարստանում, գաղթում, և միլիոնավոր քրիստոնյամարդիկ, որ գավանում են մերձավորին սիրելու օրենքը, սպանում են միջանց:

— Ի՞նչ է նշանակում այս ամենը. ինչ՝ առաջացավ այս ենք հարկադրեց այս մարդկանց տներ հրդեհել և սպանել իրենց նմաններին: Որո՞նք են այս դեպքերի պատճառները: Ի՞նչ ուժ հարկադրեց մարդկանց՝ վարվել այս կերպ: Ահավասիկ այն ակամա, պարզամիտ ու ամենաօրինական հարցերը, որ առաջադրում է մարդկությունն իրեն, հանդիպելով շարժման անցած շրջանի հուշարձաններին և ավանդություններին:

Այս հարցերը բուժելու համար մարդկության առողջ միւրքը պիմում է պատմագիտության, որի նպատակն է ժողովուրդների և մարդկության ինքնաճանաշումը:

Եթե որ պատմությունը պահած լիներ հների հայացքները, նա պիտի ասեր. ասավածությունը, ի պարզն կամ ի պատիճ իր ժողովրդի, նապուենին տվել է իշխանություն և զեկավարել է նրա կամքը՝ իր աստվածային նպատակներին հասնելու համար: Եվ պատասխանը կլիներ լիակատար ու պարզ: Կարենի էր հավատալ կամ շհավատալ նապուենի ասավածացին նշանակությանը. նրան հավատացողի համար այդ ժամանակի ամբողջ պատմության մեջ ամեն ինչ կլիներ համկանալի և չեղ կարող լինել ոչ մի հակասություն:

Բայց նոր պատմությանը չի կարող պատասխանել այս կերպ: Գիտությունը չի ընդունում հների հայացքները, թե ասավածությունն անմիջական մասնակցություն ունի մարդկային գործերի մեջ, ուստի և պարուավոր է տալ այլ պատասխաններ:

Նոր պատմությունը, այդ հարցերին պատասխանելով, ասում է. Պուտք ուզում եք իմանալ, թե ի՞նչ է նշանակում այս շարժումը, ինչից առաջացավ այն, և ինչ ուժ էր, որ առաջացրեց այդ անցքերը: Լսեցիր:

«Լուդովիկոս XIV շատ հպարտ և ինքնավստահ մարդ էր. նա ուներ այսինչ սիրուհիները և այսինչ մինիստրները, և նա վատ էր կառավարում Ֆրանսիան: Լուդովիկոսի ժառանգները նույնպես թույլ մարդիկ էին և նույնպես վատ էին կառավարում Ֆրանսիան: Նրանք էլ ունեին այսինչ սիրելիները և այսինչ սիրուհիները: Լսու որում մի քանի մարդիկ այդ ժամանակ գրում էին գրքույներ: 18-րդ դարի վերջում Փարիզում հավաքվեցին մի երկու տասնյակ մարդիկ, որոնք սկսեցին խոսել այն մասին, թե բոլոր մարդիկ հավասար են և ազատ: Եվ դրանից Ֆրանսիայում մարդիկ սկսեցին մորթել ու խեղդել միմյանց: Այդ մարդիկ սպանեցին թագավորին և էլի շատերին: Այդ նույն ժամանակ Ֆրանսիայում կար մի հանճարեղ մարդ՝ նապուենը: Նա ամեն տեղ բոլորին հաղթում էր, այսինքն սպանում էր շատ մարդիկ, որովհետև շատ հանճարեղ էր: Եվ նա գնաց չգիտես ինչից համար աֆրիկացիներին սպանելու, և ամպես լավ էր սպանում նրանց և այնպիս խորամանկն էր

ու խելացի, որ Ֆրանսիա գալով, բոլորին հրամայեց հնագանդել իրեն: Եվ բոլորը հնագանդեցին նրան: Կայսր դառնալով՝ նա նորից գնաց սպանելու ժողովրդին իտալիայում, Ավստրիայում և Պրուսիայում: Այստեղ էլ շատ մարդ սպանեց: Իսկ Ռուսաստանում կար Ալեքսանդր կայսր, որը վճռեց կարզը վերականգնել Եվրոպայում, ուստի և կովեց նապոլեոնի դեմք Բայց թվին հանկարծ բարեկամացավ նրա հետ, իսկ 11 թվին նորից կովեց, և նորից սկսեցին շատ ժողովուրդ սպանել: Եվ Նապոլեոնը 600 հազար մարդ բերեց Ռուսաստան ու նվաճեց Մոսկվան. իսկ հետո հանկարծ փախավ Մոսկվայից, և այն ժամանակ Ալեքսանդր կայսրը, Շտեխնի և յոյւսների խորհուրդների օգնությամբ, Եվրոպան միացրեց՝ հարձակվելու Եվրոպայի հանգիստը խանգարողի դեմ: Նապոլեոնի բոլոր դաշնակիցները հանկարծ դարձան իր թշնամիները. և այդ զինականուժը գնաց նոր ուժեր հավաքած նապոլեոնի դեմ: Դաշնակիցները հաղթեցին նապոլեոնին. մտան Փարիզ. Նապոլեոնին ստիպեցին հրաժարվել զահից և աքսորեցին նրան Էլբա կղզին, շրկելով նրան կայսեր աստիճանից ու ցույց տալով նրան ամեն տեսակ հարգանք, չնայած որ հինգ տարի դրանից առաջ և մի տարի հետո բոլորը նրան համարում էին օրենքից դուրս ավագակ: Ու թագավորել սկսեց Լյուդովիկոս XVLIII, որի վրա մինչ հսկ Նապոլեոնը, արցունք թափելով իր հին զվարդիայի առաջ, զահից հրաժարվեց և գնաց աքսոր: Ապա հմուտ պետական մարդիկ ու դիվանագետներ (մանավանդ թալեյրանը, որ հարդել էր մյուսից շուտ նստել հայտնի աթոռին և այդպիսով մեծացնել Ֆրանսիայի սահմանները) խոսեցին Վեննայում և այդ զրույցներով ժողովուրդներին երջանկացնում էին կամ ապերգանկացնում: Հանկարծ դիվանագետներն ու միապետները քիլ մնաց գժուվեին, նրանք արդեն պատրաստ էին նորից հրամայել իրենց գորքերին սպանել միմյանց. բայց այդ ժամանակ Նապոլեոնը մի գումարտակով գալիս է Ֆրանսիա, և Ֆրանսացիները, որ ատում էին նրան, բոլորն անմիջապես հպատակվեցին նրան: Բայց զաշնակից միապետները բարեկացան դրա համար և գնացին նորից Ֆրանսացիների դեմ պատերազմելու եվ հանճարեղ նապոլեոնին հաղթեցին ու տարան Հեղիների

կղզին, հանկարծ բնդունելով նրան ավագակ: Եվ աքսորական այնտեղ, անջատված իր սրտի սիրելիներից և իր սիրած Ֆրանսիայից, մեռնում էր ժայռի վրա դանդաղ մահով և իր մեծ գործերը ավանդեց հետնորդներին: Իսկ Եվրոպայում տեղի ունեցավ ուսակցիա, և բոլոր թագավորներն սկսեցին նորից նեղացնել իրենց ժողովուրդներին:

Իզուր կմտածեիք, թե սա ծաղր է, պատմական նկարագրությունների կարիկատուրա: Ընդհակառակը, սա ամենամեծ արտահայտությունն է այն հակասական և հարցերին ըլպատասխանող պատասխանների, որ տալիս է ամբողջ պատմությունը, սկսած մեծուարներ կազմողներից և առանձին պետությունների պատմություններից մինչև ընդհանուր պատմությունները: Այն ժամանակվա կուլտուրայի նոր տեսակի պատմությունները:

Այս պատասխանների տարօրինակությունն ու կոմիզմը բխում են այն բանից, որ նոր պատմությունը խուլ մարդու նման պատասխանում է այնպիսի հարցումների, որ ոչ չի անում:

Եթե պատմության նպատակը մարդկության և ժողովուրդների շարժման նկարագրությունն է, ապա առաջին հարցը, առանց որի պատասխանի բոլոր մնացյալն անհականալի է, հետեւյալն է. ի՞նչ ուժ է շարժում ժողովուրդներին: Այդ հարցի առթիվ նոր պատմությունը հոգածությամբ պատմում է կա'մ այն, թե Նապոլեոնը շատ հպարտ էր, կամ դարձյալ այն, թե այսինչ գրողները գրել են այսինչ գրքերը:

Այս ամենը շատ կարելի է, և մարդկությունը պատրաստ է համաձայնել դրան. բայց նա ա'յդ մասին չէ որ հարցնում է, Այս ամենը կարող էր հետաքրքրական լինել, եթե մենք ընդունեինք աստվածային իշխանությունը, որը հիմնված է ինքն իր վրա և միշտ միատեսակ է, իբրև մի ուժ, որ իր ժողովուրդները կառավարում է Նապոլեոնների, Լյուդովիկոսների և գրողների միջոցով. բայց մենք այդ իշխանությունը չենք ընդունում, ուստի և նախքան խոսելը Նապոլեոնների, Լյուդովիկոսների և գրողների մասին, պետք է ցույց տալ այդ անձերի և ժողովուրդների շարժման միջև եղած էական կապը:

Եթե աստվածային իշխանության փոխարեն կա մի այլ ու, ապա պետք է բացատրել, թե ո՞րն է այդ ուժը, որովհետև հենց այդ իսկ ուժի մեջ է գտնվում պատմության բովանդակ շահեկանությունը:

Պատմությունը կարծես ենթադրում է, որ այդ ուժն ինքնին պարզ է և բոլորին հայտնի: Բայց, չնայած այդ նոր ուժը հայտնի ընդունելու ամբողջ ցանկության, նա, ո՞վ պատմական շատ երկեր կարդա, ակամա կկամածի, թե այդ նոր ուժը, որ այնպէս տարրեր են հասկանում իրենք պատմագիրները, միանգամայն հայտնի լինի բոլորին:

## II

Ի՞նչ ուժ է, որ շարժում է ժողովուրդներին:

Մասնավոր կենսագիր պատմաբանները և առանձին ժողովուրդների պատմաբանները այդ ուժը հասկանում են որպես իշխանություն, որ հատուկ է հերոսներին ու վեհապետներին: Նրանց նկարագրությունների համաձայն՝ անցքերը կատարվում են բացառապես նապօլեոնների, Ալեքսանդրների և առհասարակ այն անձերի կամքով, որոնց նկարագրում է մասնավոր պատմագիրը: Այն պատասխաննեղը, որ տաղիս են այդ տեսակ պատմագիրները անցքերը շարժող ուժի մասին եղած հարցին, բավարար են, բայց միայն այնքան ժամանակ, քանի գոյություն ունի մի պատմագիր յուրաքանչյուր անցքի համար: Բայց հենց որ տարրեր ազգությունների ու հայացքների պատմագիրներն սկսում են նկարագրել միևնույն անցքը, ուստի մտքած պատասխաններն էլ իսկույն կորցնում են իրենց բովանդակ իմաստը, որովհետև այդ ուժը նրանցից յուրաքանչյուրը հասկանում է ոչ միայն տարրեր, այլ հաճախ բռնորովին հակառակը: Մի պատմագիր պնդում է, թե այդ գեպը կատարվել է նապօլեոնի իշխանությամբ: Մյուսը պնդում է, թե զակատարվել է Ալեքսանդրի իշխանությամբ: Կրորոր թե՛ ինչ-որ մի երրորդ անձնավորության իշխանությամբ: Բացի դրանց՝ այդ կարգի պատմագիրները միմյանց հակասում են անուամ և բացատրություններում՝ ա՛յն ուժի, որի վրա հիմնված

է այդ միևնույն անձնավորության իշխանությունը: Միւրորոնապարախուց, ասում է, թե նապօլեոնի իշխանությունը հիմնված էր նրա առաջնության ու հանճարեղության վեց Lanfrey<sup>1</sup>-ը, հանրապետականը, ասում է, թե այդ իշխանությունը հիմնված էր նրա իրադախության և ժողովրդին խաբելու վրա: Այնպես որ այս կարգի պատմագիրները, վեհադարձուն ոչնչացնելով միմյանց դրույթները, դրանով իսկ ոչնչացնում են անցքեր առաջացնող ուժի հասկացողությունը, և ոչ մի պատասխան չեն տալիս պատմության էական հարցին:

Ընդհանուր պատմաբանները, որ գործ ունեն բոլոր ժողովուրդների հետ, կարծես թե ընդունում են մասնավոր պատմագիրների հայացքի անարդարացքի լինելը՝ անցք առաջանող ուժի նկատմամբ: Նրանք այդ ուժը չեն ընդունում իրեն մի իշխանություն, որը հատուկ է հերոսներին և վեհապետներին, այլ ընդունաւմ են այն որպես հետեւանք բազմատեսակ ուղղությամբ գործող շատ ուժերի: Նկարագրելով պատերազմը կամ ժողովրդի նվաճումը, ընդհանուր պատմագիրը անցքի պատճառը որոնւմ է ոչ թե մի անձնավորության իշխանության մեջ, այլ անցքի հետ կապված բազմաթիվ անձնավորությունների միմյանց վրա ունեցած փոխագոյնեցության մեջ:

Ըստ այս հայացքի պատմական անձնավորության իշխանությունը, հանդիսանալով բազմաթիվ ուժերի արդյունք, թվում էր թե չի կարող արդեն դիտվել որպես ինքնին անցք առաջացնող մի ուժ: Մինչդեռ ընդհանուր պատմագիրները, շատ դեպքերում իշխանության մասին եղած հասկացողությունը գոռծադրում են կրկին որպես ուժ, որ ինքն իր մեջ անցքեր է առաջացնում և նրանց վերաբերվում է որպես պատճառը: Նրանց շարադրանքով պատմական անձնավորությունը մերթ արդյունքն է իր ժամանակի և, նրա իշխանությունն արդյունք է միայն առարեր ուժերի: մերթ նրա իշխանությունն անցք առաջացնող մի ուժ է: Հերպինուար, Ծլոսսերն, օրինակ, և ուրիշներ մերթ ապացուցում են, թե նապօլեոնն արդյունք է սևլյուցիայի, 1784 թ. գաղափարների և այլն, մերթ ուղղակի ասում են, որ 12 թվի արշավանքը և մյուս նրանց գուր չեկող

<sup>1</sup> Լանֆրե.

և նցքերը արդյունք են միայն Նապոլեոնի կամքի սխալ ուղղության, և որ 1784 թվի գաղափարներն իսկ կանգ առան իրենց զարգացման մեջ՝ Նապոլեոնի կամայականության հետևանքովէ Առողջուցիայի գաղափարները, ընդհանուր տրամադրությունն առաջացրին Նապոլեոնի իշխանությունը: Իսկ Նապոլեոնի իշխանությունը՝ ձնշեց ուղղուցիայի գաղափարները և ընդհանուր տրամադրությունը:

Այս օտարութի հակասությունը պատահական չէ: Դա ոչ  
միայն պատահում է ամեն քայլափոխի, այլև այսպիսի հետևո-  
ղական հակասությունների շարքից են բաղկացած ընդհանուր  
պատմագիրների բոլոր նկարագրությունները: Այս հակասու-  
թյունն առաջանում է նրանից, որ, ոտք դնելով վերլուծության  
հողի վրա, ընդհանուր պատմագիրները կանգ են առնում կես  
ձանապարհին:

Նրա համար, որպեսզի գտնենք բաղադրիչ ուժերը, հավասար բաղադրականին կամ համազորին, անհրաժեշտ է, որպեսզի բաղադրիչների գումարը հավասարվի բաղադրականին: Հենց այս պայմանն է, որ երբեք չի պահպանվել ընդհանուր պատմաբանների կողմից, ուստի և համազորի ուժը բացատրելու համար, նրանք անհրաժեշտորեն պետք է ընդունեն, բացի պակասավոր բաղադրիչներից, նաև այն անբացատրելի ուժը, որ գործում է ըստ բաղադրականի:

Սամնավոր պատմագիրը, նկարագրում է արդյոք 13 թվի արշավանքը թե Բուրբոնների վերականգնումը, ուղղակի ասում է, թե այդ անցքերը կատարվեցին Ալեքսանդրի կամքով. Բայց ընդհանուր պատմաբան Հերվինուսը, հերթելով մասնավոր պատմագրի այդ հայացքը, ձգտում է ապացուցել, թե 13 թվի արշավանքը և Բուրբոնների վերականգնումը, բացի Ալեքսանդրի կամքից, իբրև պատճառներ ունեին Շտեյնի, Մետերնիխի ու-ու Staël-ի, Թալեյրանի, Ֆրիստեի, Շատորբիանի և ուրիշ-ների գործունեությունը. Պատմագիրն, ակներևաբար, Ալեք-սանդրի իշխանությունը տարրալուծել է բաղադրականների՝ Թալեյրանի, Շատորբիանի և այլն. այս բաղադրականների գումարը, այսինքն՝ Շատորբիանի, Թալեյրանի, ու-ու Staël-ի և ուրիշների ներգործությունը միմյանց վրա, ակներևորեն, չի հավասարվում ամբողջ համազորին, այսինքն՝ այն երևույթին,

որ միկոնավոր Փրանսացիներ ենթարկվեցին Բուրբոններին Այն բանից, որ Շատորիխանը, ու-ու Staël-ը և ուրիշները միմյանց այսինչ խոսքերն են ասել, միայն բնում է նրանց՝ միմյանց հանդեպ ունեցած վերաբերմունքը, բայց ոչ միշտներ նվաճելը: Ուստի և, որպեսզի բացատրվի, թե ինչպես նրանց այդ վերաբերմունքից բխեց միլիոններ նվաճելը, այսինքն՝ բաղադրականներից, հավասար մի Ա-ի, բխեց համապորը, հավասար հազար Ա-ի, պատմագիրը անհրաժեշտորեն պարտավոր է նորից թույլ տալ նույն ուժը իշխանութեան, որը նա հերքում է, ընդունելով նրան այն ուժերի հետևանք, այսինքն նա պարտավոր է թույլ տալ մի անբացատրելի ուժ, որ գործում է ըստ բաղադրականի: Հենց այդ էլ անում են նորհանուր պատմաբանները: Ու դրա հետևանքով ոչ միայն ակասում են մասնավոր պատմագիրներին, առ և եռենք եռենք:

Գյուղական բնակիչները, որոնք, նայած անձրև են ուզում արդյոք թե պայծառ եղանակ, պարզ հասկացողություն չունենալով անձրևի պատճառների մասին, ասում են, քամին ցրեց ամպերը. քամին քշեց-բերեց ամպերը: Ճիշտ այդպես են ընդհանուր պատմաբանները. երբեմն, երբ նրանք ցանկանում են այդ, երբ այդ հարմարում է իրենց տեսության, ասում են, թե իշխանությունը հետևանք է անցերի. իսկ երբեմն, երբ պետք է ապացուցել մի այլ բան, նրանք ասում են, թե իշխանությունն առաջացնում է անցեր:

Երրորդ պատմագիրները, որ կոչվում են կուլտուրայի պատմագիրներ, գնալով ընդհանուր պատմագիրների բացած ճանապարհով, որ երթեմն գրողներին և տիկիններին ընդունում են անցքեր առաջացնող ուժեր, դարձյալ բոլորովին այլ կերպ են հասկանում այդ ուժը: Նրանք այդ ուժը տեսնում են, այսպես կոչված, կուլտուրայի մեջ, մտամոր գործունեության մեջ:

Կուլտուրայի պատմագիրները միանգամայն հետևողական են իրենց նախահայրերի՝ ընդհանուր պատմագիրների նկատմամբ, որովհետև եթե պատմական անցքերը կարելի է բացարկել նրանով, թե որոշ մարդիկ այսպես ու այսպես են զերաբերվել միյանց, ապա ինչո՞ւ դրանք շրացատրել նրանով, թե այսինչ մարդիկ գրել են այսինչ գրքույկները։ Այս պատմագիրները բոլոր հսկայական թվով հատկանիշներից, որ ուղեկ-

ցում են ամեն մի կենդանի երևույթի, ընտրում են մտավոր գործունեության հատկանիշը և ասում, թե այս հատկանիշն ի պատճառը: Բայց, չնայած նրանց բոլոր ջանքերին՝ ապացուցել, թե անցքի պատճառն եղել է մտավոր գործունեության մեջ, մեծ զիջողությամբ միայն կարելի է համաձայնել այլ բանին, թե մտավոր գործունեության ու ժողովուրդների շարժման միջև կա ինչ-որ ընդհանուր բան, բայց արդեն ոչ մի դեպում չի կարելի թույլ տալ, որ մտավոր գործունեությունը դեկավարեր մարդկանց գործունեությունը. որովհետեւ այնպիսի երեսություններ, ինչպես ֆրանսական ունկայուցիայի գաժանագույն սպանությունները, որ բխում են մարդու հավասարության քարոզից, և շարագույն պատերազմներն ու մահապատիճները, որ բխում են սիրո քարոզից, չեն հաստատում այդ ենթադրությունը:

Բայց, թույլ տալով անգամ, որ արդարացի են բոլոր այդ հնարամուրեն հյուսված դատողությունները, որանցով լեցուն են այդ պատմությունները. թույլ տալով, որ ժողովուրդները կառավարվում են ինչ-որ անորոշելի ուժով, որ կոչվում է զաղափար,— պատմության էական խնդիրը այնուամենայնիվ կա'մ մնում է անպատասխան, կա'մ միապետների նախկին իշխանությանը և ընդհանուր պատմագիրների ներմուծած խորհրդատունների ու այլ անձանց ազդեցությանը միանում է նաև զաղափարի նոր ուժը, որի կապը մասսաների հետ բացատրություն է պահանջում: Հնարավոր է հասկանալ, որ նապոլեոնն իշխանություն ուներ, և այդ է պատճառը, որ կատարվեց անցքը. որոշ զիջողությամբ կարելի է դարձյալ հասկանալ, որ նապոլեոնը այլ ազդեցությունների հետ միասին եղավ անցքի պատճառը. բայց ինչ կերպ «Contrat Social» գիրքը արագ այն, որ ֆրանսացիներն սկսեցին խեղդել միմյանց,— չի կարող հասկացվել առանց բացատրելու այդ նոր ուժի պատճառային կապը անցքի հետ:

Անշուշտ, կապ գոյություն ունի բոլոր միաժամանակ ապրողների միջև, ուստի և հնարավորություն կա գտնել որոշ կապ մարդկանց մտավոր գործունեության և նրանց պատմական շարժման միջև ճիշտ այնպիս, ինչպես այդ կապը կարել մարդկության շարժման և առևտրի, արհեստների,

այգեգործության միջև և ինչի միջև ուզում եք: Բայց ինչո՞ւ է մարդկանց մտավոր գործունեությունը կուլտուրայի պատմագիրներին ներկայանում պատմական ամբողջ շարժման պատճառ կամ արտահայտություն,— այդ դժվար է հասկանալ: Պատմաբաններին մի այդպիսի եղրակացության կարող էին բերել միայն հետեւյալ նկատառումները. 1) որ պատմությունը գրում են գիտնականները, ուստի և նրանց համար բնական և հաճելի է կարծել, որ իրենց դասի գործունեությունը հիմքն է ամբողջ մարդկության շարժման, ճիշտ այնպիս, ինչպես այդ բնական և հաճելի է կարծել վաճառականներին, երկրագործներին, զինվորներին (այդ չի արտահայտվում միայն այն պատճառով, որ վաճառականներն ու զինվորները պատմություն չեն գրում), և 2) որ հոգևոր գործունեությունը, լուսավորությունը, քաջաքարթությունը, կուլտուրան, գաղափարը — և յս ամենը անպարզ, անորոշ հասկացողություններ են, որոնց գրոշի տակ շատ հարմար է գործածել բառեր, որ ունեն առավել և թիւ պարզ նշանակություն և այդ պատճառով հեշտությամբ են դրվում ամեն մի թերիայի տակ:

Բայց շնուսելով այս տեսակ պատմությունների (թերևս դրանք որևէ մեկի կամ ինչ-որ բանի համար և պետք են) ներքին արժանիքի մասին, կուլտուրայի պատմությունները, գեղի որոնք հետազնետ ավելի ու ավելի են սկսում հանդել բոլոր, որ նրանք ընդհանուր պատմությունները, նշանակալից են նրանով, որ նրանք մանրամասնորեն ու լրջորեն քննելով տարբեր կրոնական, փիլիսոփայական, քաղաքական ուսմունքները որպես անցքերի պատճառներ, ամեն անգամ, երբ նրանք առիթ ևն ունենում նկարագրել իրական պատմական մի անցք, ինչպես օրինակ, 12 թվի արշավանքը, ակամա նկարագրում են որպես իշխանության արդյունք, ուղղակի ասելով, թե այդ արշավանքը նապոլեոնի կամքի արդյունք էր: Այսպես խոսելով՝ կուլտուրայի պատմագիրներն ակամա հակասում են իրենք իրենց կամ ապացուցում են, որ այն նոր ուժը, որ հնարել են նրանք, չի արտահայտում պատմական անցքերը, այլ որ պատճությունը հասկանալու միակ միջոցն այն իշխանությունն է, որը նրանք կարծես թե չեն ընդունում:

**Շոգեքարշը գնում է:** Հարց է ծագում՝ ինչի՞ց է, որ նա շարժվում է: Գյուղացին ասում է. այդ սատանան է շարժում նրան: Մյուսն ասում է, թե շոգեքարշն այն պատճառով է գնում, որ նրա մեջ անիվներ են շարժվում: Երրորդը պնդում է, թե շարժման պատճառը ծիսի մեջ է, որ տարվում է քամուց:

**Գյուղացին անհերքելի է:** Որպեսզի նրան հերքես, պետք է որ որևէ մեկը ապացուցի նրան, թե սատանա շկա, կամ որպեսզի մի ուրիշ գյուղացի բացատրի, որ ոչ թե սատանան, այլ գերմանացին է շարժում շոգեկառքը: Միայն այդ ժամանակ հակասություններից նրանք կտեսնեն, որ երկուսն էլ իրավացի չեն: Բայց նա, ով ասում է, թե պատճառն անիվների շարժումն է, հերքում է ինքն իրեն, որովհետեւ եթե նա ոտք է դնում վերլուծության հողի վրա, նա պետք է գնա ավելի ու ավելի առաջ, նա պետք է բացատրի անիվների շարժման պատճառը: Եվ մինչև որ նա չհամեսնա շոգեքարշի շարժման վերջին պլանով, շոգեկաթսայի խտացած շոգին, նա իրավունք շահետք է ունենա կանգ առնել պատճառները որոնելու գործում: Իսկ նա, ով շոգեքարշի շարժումը բացատրում էր ետ տարվող ծխով, նկատելով, որ անիվների մասին եղած բացատրությունը չի պարզում պատճառը, վերցրել է առաջին պատահած հատկանիշը, և, իր կողմից, հրամցրել որպես պատճառ:

**Միակ հասկացությունը,** որ կարող է բացատրել շոգեքարշի շարժումը, ուժի հասկացությունն է, որը հավասար է տեսանելի շարժման:

**Միակ հասկացությունը,** որի միջոցով կարելի է բացատրել ժողովուրդների շարժումը՝ ուժի հասկացությունն է, ուժ, որը հավասար է ժողովուրդների բովանդակ շարժման:

**Մինչդեռ այս հասկացողության տակ տարբեր պատմագիրների կողմից հասկացվում են բոլորովին տարբեր և տեսանելի շարժմանն ամեններն ոչ նավասար ուժերը: Ումանք նրա մեջ տեսնում են մի ուժ, որն անմիջականորեն հերոսներին է հատուկ, ինչպես գյուղացին սատանա է տեսնում շոգեքարշի մեջ. ուրիշները՝ տեսնում են մի ուժ, որ առաջանում է այլ**

**որոշ ուժերից,** ինչպես անիվների շարժումը. Երրորդները՝ մտավոր ազգեցություն, ինչպես քամուց տարվող ծուխը:

Մինչ այն ժամանակի, քանի դեռ գրվում են պատմություններ առանձին անձերի — լինեն նրանք կեսարներ, Ալեքսանդրը կամ Լութերներ ու Վոլտերներ, — այլ ոչ պատմությունը բոլորի, առանց մի բացառության, բոլոր մարդկանց, որ մասնակցություն են ունեցել անցքի մեջ, ոչ մի հնարավորություն չկա նկարագրել մարդկության շարժումը առանց այն ուժի հասկացության, որը հարկադրում է մարդկանց իրենց գործունեությունն ուղղել դեպի մի նպատակ: Եվ պատմաբաններին միակ հայտնի այդ տեսակի հասկացությունը իշխանությունն է:

Այս հասկացությունը միակ բանալին է, որի միջոցով կարելի է տիրել պատմության նյութին՝ նրա այժմյան շարադրանքով, և նա, ով կկոտրեր այդ բանալին, ինչպես այդ արագ թոկլը, շիմանալով ուրիշ եղանակ պատմական նյութի հետ վարկելու, իրեն կզրկեր միայն նրա հետ վարկելու վերջին հնարավորությունից: Իշխանության մասին եղած հասկացության անխուսափելիությունը՝ պատմական երկույթները բացատրելու համար ամենից լավ ապացուցում են իրենք, ընդհանուր պատմաբանները և կուլտուրայի պատմագիրները, որ երկութաբար հրաժարվում են իշխանության մասին եղած այդ հասկացությունից և անխուսափելիորեն ամեն քայլափոխի գործադրում այն:

Պատմագիտությունը մինչ այժմ, մարդկության խնդիրների նկատմամբ, նման է շրջանառու փողերի՝ թղթադրամների և հնչուն ստակի: Կենսագրական և մասնավոր ժողովրդական պատմությունները նման են թղթադրամների: Նրանք կարող են ձեռքից ձեռք անցնել և շրջանառություն կատարել, բավարարելով իրենց նշանակությունը առանց որևէ մեկին վնասելու, և անգամ օգուտ բերելով, այնքան ժամանակ, մինչև որ հարց շագի, թե ինչով են նրանք ապահովված: Բավական է միայն մոռանալ այն հարցը, թե ինչպես է հերոսների կամքը անցքեր առաջացնում, թիեռների պատմությունները կլինեն հետաքրքրական, ուսանելի և, բացի դրանից, կունենան բանաստեղծական երանգ: Բայց ճիշտ այնպես, ինչպես թղթա-

դրամի իրական արժեքի կասկածը ծագում է կամ այն բանից, թե որովհետև դրանց շինելը հեշտ է, ապա կակսեն դրանցից շատ շինել, կամ այն բանից, թե կուգենան նրանց համար ուսկի վերցնել, — ճիշտ այդպես էլ կասկած է ծագում այդ կարգի պատմության իրական նշանակության մասին, կամ այն բանից, որ դրանք շափազանց շատ են, կամ այն բանից, որ որևէ մեկը պարզամտությամբ կհարցնի՝ իսկ ի՞նչ ուժով է, որ կատարեց այդ նապուենը, այսինքն՝ կուգենա գնայտն թղթագրամը փոխել իրական հասկացության զուտ ոսկու հետ:

Իսկ ընդհանուր պատմաբանները և կուլտուրայի պատմագիրները նման են այն մարդկանց, որոնք, ընդունելով թղթագրամների անհարմարությունը, վճռեին թղթագրամի փոխարեն հնչուն ստակ շինել մի մետաղից, որ ոսկու պնդությունը չունի: Եվ իսկապես որ կատացվեր ննջուն ստակ, բայց միայն ենշուն: Թղթագրամը դեռ կարող էր խարել շիմացողներին, իսկ հնչուն, բայց անարժեք ստակը չի կարող խարել ոչ ոքի Այնպես էլ, ինչպես ոսկին այն ժամանակ է միայն ոսկի, որ նա կարող է գործածիկ ոչ միայն փոխանակության համար, այն գործի համար, այնպես էլ ընդհանուր պատմաբանները միայն այն ժամանակ կիրան ոսկի, երբ նրանք ի վիճակի կիրան պատասխանելու պատմության էական հարցին. ի՞նչ է իշխանությունը: Ընդհանուր պատմաբաններն այս հարցին պատասխանում են հակասաբար, իսկ կուլտուրայի պատմագիրները բոլորովին մի կողմ են հրում այն, պատասխան էլով ինչ-որ բոլորովին այլ բանի: Եվ ինչպես ոսկու նըմանող ժետունները կարող են գործածիկ միայն այն մարդկանց շրջանում, որոնք համաձայնել են ընդունել դրանք ոսկու տեղ, և այն մարդկանց շրջանում, որոնք չգիտեն ոսկու հատկությունները, այդպես և ընդհանուր պատմաբանները ու կուլտուրայի պատմագիրները, շպատասխանելով մարդկության էական, հարցերին, իրենց ինչ-որ նպատակների համար երրև գնայտն ստակ են ծառայում համալսարաններին և ընթերցողների ամբոխին՝ լուրջ գրքեր սիրողներին, ինչպես նըմանը անվանում են այդ:

## IV

Հրաժարվելով հների այն հայացքից, թե աստվածությունը ժողովրդի կամքը ենթարկում է մի ընտրյալի և այդ ընտրյալի կամքը աստվածության, պատմությունը չի կարող մի քայլ անել առանց հակասության, լընտրելով երկուսից մեկը. կամ վերադառնալ նախկին այն հավատալիքին, թե աստվածությունը անմիջական մասնակցություն ունի մարդկացին գործիքն. կամ որոշակի բացատրել նշանակությունն այն ուժի, որը պատմական անցքեր է առաջացնում և որը կոչվում է իշխանություն:

Վերադառնալ առաջինին անկարելի է, հավատալիքը կործանված է, ուստի և անհրաժեշտ է բացատրել իշխանության նշանակությունը:

Նապուենը հրամայեց զորք հավաքել և գնալ պատերազմ: Այս պատկերացումն այն աստիճան սովորական է մեզ համար, այն աստիճան մենք ընտելացել ենք այդ հայացքին, որ այն հարցը, թե ինչո՞ւ 600 հազար մարդ պատերազմ են գնում, երբ նապուենն այսինչ խոսքերն է ասում, մեզ անմիմաս է թվում: Նա իշխանություն է ունեցել, ուստի և կատարվել է այն, ինչ նա հրամայել է:

Այս պատասխանը միանգամայն բավարար է, եթե մենք հավատում ենք, որ իշխանությունը նրան տրված է եղել ասուծուց: Բայց քանի որ մենք այդ շենք ընդունում, անհրաժեշտ է որոշել, թե ի՞նչ բան է մի մարդու արդ իշխանությունը մլոււների վրա:

Այդ իշխանությունը չի կարող լինել այն անմիջական իշխանությունը ուժեղ էակի ֆիզիկական գերակշռության՝ թույլի նկատմամբ — գերակշռություն, որ հիմնված է ֆիզիկական ուժ գործադրելու սպառնալիքի վրա, — ինչպես Հերկուլեսի իշխանությունը. դա չի կարող հիմնված լինել բարոյական ուժի գերակշռության վրա, ինչպես այդ պարզամբ առընթեր կարծում են որոշ պատմագիրներ, ասելով թե՝ պատմական գործիչները հերոսներ են, այսինքն՝ մարդիկ, որ օժտված են հոգու և մարմնի առանձնահատուկ ուժով, որը կոչվում է հանճարեղություն: Այդ իշխանությունը չի կարող հիմքում

բարոյական ուժի գերակշռության վրա, որովհետև, շխոսելով հերոս մարդկանց մասին, ինչպես նապոլեոններն են, որոնց բարոյական արժանիքների մասին կարծիքները շատ են տարբերվում, պատմությունը մեզ ցուց է տալիս, որ ոչ կյուղովին կոս ԽI-ները, ոչ Մետենիխները, որոնք կառավարել են միլիոնավոր մարդկանց, չեն ունեցել հոգեկան ուժի ոչ մի առանձին հատկություն, այլ, ընդհակառակը, մեծ մասամբ բարոյապես ավելի թույլ են եղել յուրաքանչյուրից այդ միջինունակությանը, որոնց նրանք կառավարել են:

Եթե իշխանության աղբյուրը իշխանության տեր անձի ոչ ֆիզիկական և ոչ էլ բարոյական հատկությանց մեջ է, ապա ակներեւ է, որ այդ իշխանության աղբյուրը պետք է գտնվի անձնավորությունից դուրս, դեպ մասսաներն ունեցած հարաբերությունների մեջ, այն մասսաները, որոնց մեջ է գտնվում իշխանության տեր անձնավորությունը:

Ճիշտ այդպես էլ հասկանում է իշխանությունը իրավակիտությունը, պատմության հենց այն դրամամանրիշ գանձարկը, որը խոստանում է իշխանության պատմական հասկացությունը մանրել զուտ ոսկով:

Իշխանությունը մասսաների կամքերի միակցությունն է, որը արտահայտված կամ լուելայն համաձայնությամբ փոխանցված է մասսաների կողմից ընտրված կառավարիչներին:

Իրավունքի գիտության բնագավառում, գիտություն, որ կազմված է այն դատողություններից, թե ինչպես պետք էր կազմակերպել պետությունն ու իշխանությունը, եթե կարելի լիներ այդ ամենը կազմակերպել, այդ բոլորը շատ պարզ է. բայց գործադրության մեջ (պատմության նկատմամբ) իշխանության այդ սահմանումը պարզաբանումներ է պահանջում:

Իրավունքի գիտությունը պետությունն ու իշխանությունը գիտում է, ինչպես հները կրակն էին գիտում, որպես ինչ-որ մի բացարձակ գոյություն ունեցող բան: Իսկ պատմության համար պետությունն ու իշխանությունը միայն երեսությներ են, ճիշտ այնպես, ինչպես մեր ժամանակի ֆիզիկայի համար կրակը տարերք չէ, այլ երեսություն:

Պատմության և իրավունքի գիտության հայացքների հենց այմական տարբերությունից է առաջանում այն, որ իրա-

վունքի գիտությունը կարող է մանրամասնորեն պատմել, թե ինչպես, իր կարծիքով, պետք էր կազմել իշխանությունը, և և ինչ բան է իշխանությունը, որ անշարժորեն գոյություն ունի ժամանակից դուրս. բայց պատմական հարցերին՝ ժամանակի մեջ ձևափոխված իշխանության նշանակության մասին՝ նա ոչինչ չի կարող պատասխանել:

Եթե իշխանությունը կառավարչին փոխանցված կամքերի միակցություն է, ապա Պուգաչովը արդյո՞ք մասսաների կամքի ներկայացուցիչն է: Եթե ոչ, ապա ինչո՞ւ է ներկայացուցիչը նապոլեոն I-ը: Ինչո՞ւ նապոլեոն III-ը, եթե նրան բոնեցին թուրնում, ոճրագործ էր, իսկ հետո ոճրագործ եղան նրանք, որոնց բոնեց նա:

Պալատական ուլուցուցիաների ժամանակ, որոնց մասսակցում են երեխն երկու-երեք մարդ, արդյո՞ք մասսաների կամքը նույնպես փոխանցվում է նոր անձնավորության: Սիզազային հարաբերությունների ժամանակ փոխանցվո՞ւմ է արդյոք ժողովրդի մասսաների կամքը իրեն նվաճողին: 1808 թվին Հռենոսյան Դաշնակցության կամքը փոխանցե՞ց արդյոք նապոլեոնին: Ուսւ ժողովրդի մասսաների կամքը փոխանցվե՞ց արդյոք նապոլեոնին 1809 թվի միջոցին, եթե զորքերը ֆրանսացիների հետ դաշնակցած գնացին կովկու Ալսուրիայի գեմ:

Այս հարցերին կարելի է պատասխանել երեք կերպ.

Կամ 1) ընդունել, որ մասսաների կամքը միշտ անպայմանորեն տրվում է այն կառավարչին կամ այն կառավարիշներին, որոնց իրենք ընտրել են, և որ այդ պատճառով ամեն մի նոր իշխանության ծագում, ամեն մի պայմանագրը ընդդեմ մի անգամ տրված իշխանության՝ պետք է գիտվի միայն որպես իշխական իշխանության խախտում:

Կամ 2) ընդունել, որ մասսաների կամքը փոխանցվում է կառավարիշներին պայմանագրար՝ որոց և հայտնի պայմաններով, և ցուց տալ, որ իշխանության բոլոր ճնշումները, ընդհարումները և անգամ ոչնացումն առաջանում են նրանից, որ կառավարիշները չեն պահպանում այն պայմանները, որոնցով իշխանությունը հանձնված է նրանց:

Կամ 3) ընդունել, որ մասսաների կամքը փոխանցվում է կառավարիներին պայմանաբար, բայց անհաջող, անորոշ պայմաններով, և որ շատ իշխանությունների ծագումը, նրանց պայքարն ու անկումը տեղի են ունեում միայն կառավարիների՝ այն անհայտ պայմանները առել կամ պակաս կատարելուց, պայմաններ, որոնցով մասսաների կամքերը ումանցից փոխանցվում են ուղղիչներին:

Այսպես երեք կերպ և բացատրում են պատմաբանները մասսաների վերաբերմունքը դեպի կառավարողները:

Պատմաբաններից ումանք, չհասկանալով, պարզամտու-

թյամբ, իշխանության նշանակության հարցը, հենց այն մասնավոր և կենսագրական պատմագիրները, որոնց մասին խոսվեց վերև, կարծես ընդունում են այն, որ մասսաների կամքի միակցությունը փոխանցվում է պատմական անձերին անպայմանորեն, ուստի և նկարագրելով որևէ մի իշխանություն, այդ պատմագիրները ենթադրում են, որ այդ իսկ իշխանությունը միակ բացարձակն է ու իսկականը, իսկ ամեն մի այլ թյունը միակ բացարձակն է, որ իսկական իշխանության, ոչ թյուն:

Նրանց թեորիան, որ պիտանի է պատմության նախնական և խաղաղ շրջանների համար, գործադրության մեջ՝ ժողովուրդության կայսքի բարդ և բուռն շրջաններում, որոնց միջոցին միաժամանակ ծագում ու պայքարում են միայնաց միջև տարրեր իշխանություններ, այն անհարմարությունն ունի, որ պատմագիրների միակությունը կապացուցի, թե կոնվենտը, դիրեկտորիան Բոնապարտը իշխանության խախտումն էին միայն. իսկ ուստուրիկականն ու բոնապարտիստը կապացուցեն. մենքը, թե կոնվենտը, իսկ մյուսը, թե կայսրությունն էր իսկական իշխանությունը, իսկ մնացյալ ամենն իշխանության խախտումն է եղել: Ակներն է, որ այսպիսով, փոխադարձաբար իրարհերելով, այս պատմագիրների իշխանության բացատրությունները կարող են պիտի գույ ամենամատաղ հասակի երեխաներին:

Հնդունելով պատմության նկատմամբ եղած այս հայացքի սխալ լինելը, ուրիշ կարգի պատմագիրներ ասում են, թե իշ-

խանությունը հիմնված է մասսաների կամքերի միակցությունը պայմանաբար կառավարողներին հանձնելու վրա, և որ պատմական անձնավորությունները իշխանություն ունեն միայն պայմանով՝ կատարել այն ծրագիրը, որը լոելյայն համաձայնությամբ հրահանգել է նրանց ժողովրդի կամքը: Բայց թե ինչո՞ւմն է կայանում այս ծրագիրը, այդ պատմաբանները մեզ չեն ասում, կամ եթե ասում են, ապա շարունակ հասում են միմյանց:

Յուրաքանչյուր պատմագրի, նայած թե ըստ նրա հայացքի ի՞նչն է կազմում ժողովրդի շարժման նպատակը, այդ ծրագիրը նրան պատկերանում է ֆրանսիայի կամ այլ պիտության մեծության, հարստության, ազատության, քաղաքացիների լուսավորության մեջ: Բայց, արդեն շխսելով պատմագիրների հակասության մասին, թե ինչպիսի ծրագիր է այդ, թույլ տալով անգամ, որ գոյություն ունի բոլորի համար մի ընդհանուր ծրագիր, — պատմական փաստերը գրեթե միշտ հակասում չեն այդ թեորիային: Եթե այն պայմանները, որոնցով իշխանության փոխանցումը կայանում է ժողովրդի հարստության, ազատության, լուսավորության մեջ, ապա ինչո՞ւ վկայովիկոս ԽIV-ները և Յոհան ՎII ները հանգիստ ապրում են մինչև իրենց թագավորության վերը, իսկ լուսովիկոս XI-ները և Կառլոս I-ները մահապատճի ևն ենթարկվում ժողովրդի կողմից: Այս հարցին այդ պատմաբանները պատասխանում են նրանով, թե լուսովիկոս XIV-ի ծրագրին հակառակ գործունեությունն անդի աշարժել է լուսովիկոս XVI-ի վրա: Բայց ինչո՞ւ նա չի անդրադարձել լուսովիկոս XIV և XV-ի վրա, ինչո՞ւ դա հենց պիտք է անդրադարձել լուսովիկոս XVI-ի վրա: Եվ ո՞րն է այդ անդրադարձման ժամկետը: — Այս հարցերին պատասխան չկա և չի կարող լինել: Այս հայեցակետով քիչ է բացատրվում նաև այն բանի պատճառը, թե կամքերի միակցությունը մի քանի դար շի փոխանցվում իրենց կառավարողներից ու նրանք ժառանգներից, իսկ հետո հանկարծ, 50 տարվա ընթացքում: Փոխանցվում է կոնվենտին, դիրեկտորիային, նապոլեոնին, Ալեքսանդրին, լուսովիկոս XVIII-ին, նորից նապոլեոնին, Կառլոս X-ին, լուսովիկի-Ֆրիդրիխին, ուսապուրիկան կառավարությանը, նոպոլեոն III-ին, Կամքերի այս արա-

գորեն կատարվող փոխանցումները՝ մի անձից մյուսին (մասվանդ միշազգային հարաբերությունների, նվաճումների և գաշինքների միջոցին) բացատրելիս՝ այդ պատմագիրները ակամա պետք է ընդունեն, որ այդ երեսութների մի մասն արդեն կանոնավոր փոխանցումներ չեն կամքերի, այլ պատահականություններ են, կախված դիվանագետի կամ միապետի, կամ պարտիայի ղեկավարի մերթ խորամանկությունից, մերթ սրբալներից կամ նենգությունից, կամ թուլությունից: Այսպես որ պատմության երևութների մեծ մասը — երկպառակությունները, ունկալուցիաները, նվաճումները — այդ պատմագիրները պատկերացնում են արդեն ոչ թե ազատ կամքերի փոխանցման արդյունք, այլ մի կամ մի քանի մարդկանց սխալ ուղղություն ստացած կամքի արդյունք, այսինքն՝ նորից իշխանության խախտումներ: Ուստի և պատմական անցքերն ել այդ կարգի պատմագիրների կողմից ներկայացվում են շեղումներ թեորիայից:

Այս պատմագիրները, նման այն բուսաբանին, որը, նկատելով, որ մի քանի բույսեր սերմերից դուրս են գալիս երկրթակ տերենվ, պնդեր այն բանի վրա, թե ամենը, ինչ աճում է, աճում է երկու տերեկի բաժանված: և որ արմավենին ու սունկը, և անգամ կաղնին, ճյուղավորվելով իր լրիվ հասակի մեջ և այլև նման շինելով երկու տերեսավորներին, նահանջում են թեորիայից:

Երրորդ պատմագիրներն ընդունում են, որ մասսաների կամքը պատմական անձերին է փոխանցվում պայմանաբար, բայց թե այդ պայմանները մեզ անհայտ են: Նրանք ասում են, թե պատմական անձերն իշխանություն ունեն միայն այն պատճառով, որ նրանք կատարում են իրենց փոխանցված մասսաների կամքը:

Բայց այդ դեպքում, եթե այն ուժը, որ շարժում է ժողովուրդները, ոչ թե պատմական անձերի մեջ է, այլ ժողովուրդների իրենց մեջ է, ապա էլ ինչո՞ւմն է այդ պատմական անձերի նշանակությունը:

Պատմական անձերը, ասում են այդ պատմագիրները, իրենցմով արտահայտում են մասսաների կամքը. պատմական

անձերի գործունեությունը ներկայացնում է մասսաների գործունեությունը:

Բայց այդ դեպքում հարց է ծագում. պատմական անձերի արդյո՞ք ամբողջ գործունեությունն է հանդիսանում մասսաների կամքի արտահայտություն, թե՝ միայն նրա մի որոշ կողմը: Եթե պատմական անձերի ամբողջ գործունեությունը հանդիսանում է մասսաների կամքի արտահայտություն, ինչպես այդ կարծում են ոմանք, ապա նապուենների, Եկատերինաների կենսագիրները, պալատական կյանքի բամբասանքի բոլոր մանրամասնություններով, հանդիսանում են ժողովուրդների կյանքի արտահայտություն, մի բան, որ ակնհայտ անմտություն է. իսկ եթե պատմական անձի գործունեության միայն մի կողմն է հանդիսանում ժողովուրդների կյանքի արտահայտություն, ինչպես և այդ կարծում են ուրիշ կարծեցյալ փիլիսոփա-պատմագիրները, ապա նրա համար, որպեսզի որոշնք, թե պատմական անձնավորության գործունեության ո՞ր կողմն է արտահայտում ժողովորդի կյանքը, պետք է իմանալ նախ, թե ինչումն է կայանում ժողովորդի կյանքը:

Հանդիպելով այս դժվարության, այս կարգի պատմագիրները հնարում են ամենից անպարզ, անշղագիտելի և ընդհանուր վերացականություն, որի տակ կարելի է առնել դեպքերի մեծ թիվ, և ասում են, թե այդ վերացականության մեջ է կայանում մարդկության շարժման նպատակը: Ամենասովորական, գրեթե բոլոր պատմագիրների կողմից ընդունվող ընդհանուր վերացականություններն են՝ ազատությունը, հավասարությունը, լուսավորությունը, առաջադիմությունը, քաղաքակրթությունը, կուլտուրան: Մարդկության շարժման նպատակը զնելով որևէ վերացականություն, պատմագիրներն ուսումնասիրում են այն մարդկանց, որոնք ամենամեծ թվով հիշատակներ են թողել իրենցից հետո, — թագավորներին, մինիստրներին, զորավարներին, հեղինակողներին, բարենորոգիչներին, պապերին, լրագրողներին, այն շափով, թե որքան բոլոր այդ անձերը, նրանց կարծիքով, աշակցել կամ գեմ են գնացել որոշ վերացականության: Բայց որովհետև ոչ մի բանով ապացուցված չէ, թե մարդկության նպատակը եղել է ազատությունը, հավասարությունը, լուսավորությունը ու քաղաքակրթությունը, կ

Արովհետև մասսաների կապը մարդկության կառավարողների ու լուսավորիչների հետ հիմնված է միայն կամայական ենթագրության վրա, թե մասսաների կամքերի միակցությունը միշտ փոխանցվում է այն անձերին, որոնք նկատելի են մեզ, ապա և գործունեությունը միլիոնավոր մարդկանց, որոնք գաղթում են, տներ վառում, երկրագործությունը թողնում, ոչնչացնում միմյանց, երբեք չի արտահայտվում այն տասնյակ մարդկանց գործունեության նկարագրությամբ, որոնք տներ չեն վառում, երկրագործությամբ չեն գրաղվում, իրենց նըմաններին չեն սպանում:

Պատմությունը յուրաքանչյուր քայլափոխին այդ է առացուցում: Արևմուտքի ժողովուրդների հուզումն անցյալ դարի վերջում է նրանց ձգտումը գեպ արևելք արդյո՞ք բացատրվում է Լյուդովիկոսներ XIV-ի, XV-ի և XVI-ի, նրանց սիրուհիների, մինչստրների գործունեությամբ, նապոլեոնի, Ռուսակի, Դիդեռուի, Բոմարշեի և այլոց կյանքով:

Ուսւ ժողովրդի շարժումը գեպ արևելք, Կազան ու Սֆերի արտահայտվո՞ւմ է արդյոք Յոհան IV-ի հիմանդրագին բնափության մանրամասնություններով և Կուրքսկու հետ ունեցած նրա գրագրությամբ:

Ժողովուրդների շարժումը խաշակրաց արշավանքների ժամանակ բացատրվո՞ւմ է արդյոք Գոտֆրիդների և Լյուդովիկոսների ու նրանց տիկնանց կյանքով ու գործունեությամբ: Մէջ համար անհասկանալի է մնացել ժողովուրդների շարժումը արևմուտքից արևելք, առանց որևէ նպատակի, առանց առաջնորդության, թափառաշրջիկների բազմությամբ, Պետրոս Անապատականի հետ: Եվ էլ ավելի անհասկանալի է մնացել այդ շարժման դադարումն այն ժամանակի, երբ պատմական գործիչների կողմից պարզ դրված էր արշավանքների բանական, սուրբ նպատակը՝ երուսաղեմի ազատագրումը: Պատերը, թագավորներն ու ասպետները ժողովրդին դրդում էին սուրբ հողն աղատելու, բայց ժողովուրդը չէր գնում, որովհետև այն անհայտ պատճառը, որ առաջ դրդում էր նրան շարժվելու, այլևս գոյություն չուներ: Գոտֆրիդների և միննեզենքերների պատմությունը, հայտնապես չի կարող իր մեջ պարփակել ժողովուրդների կյանքը: Եվ Գոտֆրիդների ու միննեզենքերի-

410

ների պատմությունը մնաց Գոտֆրիդների ու միննեզենքերի ների պատմություն, իսկ ժողովուրդների կյանքի և նրանց մղումների պատմությունը մնաց անհայտ:

Ավելի ևս քիչ կրացատրի մեզ ժողովուրդների կյանքը գրողների և բարենորդքիչների պատմությունը:

Կուլտուրայի պատմությունը կրացատրի մեզ գրողի կամ բարենորդքի մղումները, կյանքի պայմանները և մտքերը: Մենք իմանում ենք, որ Լյութերը դուրաբորք բնավորություն ուներ և ասում էր այս տեսակ ճառեր: Գիտենք, որ Ռուսաստանի կամկածությունը էր և գրել է այսինչ գրքույները, բայց մենք չենք իմանում, թե ինչո՞ւ ուժորմացիայից հետո ժողովուրդները կոտորում էին իրար, և ինչո՞ւ ֆրանսական ուսուցչությայի ժամանակ մահապատճի էին ենթարկում միմյանց:

Եթե այս երկու պատմությունները միացնենք, ինչպես և այդ անում են նորագույն պատմագիրները, ապա դա կլինի միապետների և գրողների պատմություններ, և ոչ թե ժողովուրդների կյանքի պատմություն:

## V

Ժողովուրդների կյանքը չի պարփակվում մի քանի մարդկանց կյանքի մեջ, որովհետև այդ մի քանի մարդկանց և ժողովուրդների միշտ եղած կապը գեռ չի գտնված: Այն թեորիան, թե այդ կապը հիմնված է կամքերի միակցությունը պատմական անձերին փոխանցելու վրա, մի հիպոթեզ է, որ չի հաստատվում պատմության փորձով:

Մասսաների կամքերի միակցությունը պատմական անձերին փոխանցելու թեորիան, թերևս, շատ բան է բացատրում իրավունքի գիտության բնագավառում և, թերևս, անհրաժեշտ է իր նպատակների համար. բայց պատմության նկատմամբ գործադրելիս, չենց որ հանդես են գալիս ուսուցչիաները, նվաճումները, երկպառակությունները, չենց որ սկսում է պատմությունը, — այդ թեորիան ոչինչ չի բացատրում:

Այդ թեորիան անհերքելի է թվում հենց այն պատճառով, որ ժողովուրդների կամքերի փոխանցման ակտը չի կարող ստուգվել, որովհետև այդ ակտը երբեք գոյություն չի ունեցել:

411

Ինչ անցք էլ կատարվի, ով էլ կանգնի անցքի գլուխ, թեռ-  
րիան միշտ կարող է ասել, թե այսինչ անձը անցքի գլուխ կանգ-  
նեց այն պատճառով, որ կամքերի միակցությունը փոխանցվեց  
նշան։

Պատմական հարցերին տրվող այդ թեորիայի պատաս-  
խանները նման են այն մարդու պատասխաններին, որը նա-  
յելով շարժվող հոտին և ուշադրության շառնելով ոչ դաշտի  
տարբեր տեղերում եղած արոտատեղերի տարբեր որակը,  
ոչ հովվի քշելը, հոտի ունեցած այս կամ այն ուղղության պատ-  
ճառների մասին դատեր ըստ այն բանի, թե ի՞նչ կենդանի է  
գնում հոտի առջևից։

«Հոտն այս ուղղությամբ գնում է այն պատճառով, որ առ-  
շեից գնացող կենդանին առաջնորդում է նրան, և բոլոր մնաց-  
յալ կենդանիների կամքերի միակցությունը փոխանցված է  
հոտի այդ կառավարողին։» Այսպես է պատասխանում այն  
պատմագիրների առաջին շարքը, որոնք ընդունում են իշխա-  
նության անպայման փոխանցումը։

«Եթե հոտին առաջնորդող կենդանիները փոխվում են, ապա՝  
դա տեղի է ունենում այն պատճառով, որ բոլոր կենդանիների  
կամքերի միակցությունը փոխանցվում է մի կառավարողից  
մյուսին, նայած այն բանին, թե արդյոք այդ կենդանին առաջ-  
նորդում է այն ուղղությամբ, որն ընտրել է ամբողջ հոտը։» Այսպես են պատասխանում այն պատմաբանները, որոնք ըն-  
դունում են, թե մասսաների կամքերի միակցությունը փոխանց-  
վում է կառավարողներին այն պայմաններով, որոնք նրանք  
համարում են անհայտ։ (Այս եղանակավ դիտելու պարա-  
գային շատ հաճախ պատահում է, որ դիտողը, հարմարվելով  
իր ընտրած ուղղությանը, առաջնորդներ համարում է նրանց,  
որոնք մասսաների ուղղությունը փոխվելու պատճառով ար-  
դեն առաջավորներ չեն, այլ կողքայիններ, իսկ երբեմն հե-  
տիններ)։

Եթե անդադար փոխվում են գլուխ կանգնած կենդանինե-  
րը և անդադար փոխվում են ամբողջ հոտի ուղղությունները,  
ապա դա առաջանում է նրանց, որ մեզ հայտնի ուղղությանը  
հասելու համար կենդանիներն իրենց կամքը փոխանցում են  
այն կենդանիներին, որոնք նկատելի են մեզ։ և որպեսզի մենք

ուսումնասիրենք հոտի շարժումը, պետք է դիտենք բոլոր մեզ  
նկատելի այն կենդանիներին, որ գնում են հոտի բոլոր կող-  
մերից։ Այսպես են ասում երրորդ կարգի պատմաբանները,  
որոնք բոլոր պատմական անձերին — միապետներից մինչև  
լրագրողները — ընդունում են իրենց ժամանակի արտահայ-  
տություններ։

Մասսաների կամքը պատմական անձերին փոխանցվելու  
թեորիան միայն շրջասուլթյուն է՝ հարցի բառերը միայն ուրիշ  
խոսքերով արտահայտած։

Ո՞րն է պատմական անցքերի պատճառը։— Իշխանու-  
թյունը։ Ի՞նչ է իշխանությունը։— Իշխանությունը կամքերի  
միակցություն է՝ փոխանցված մի անձի։ Ի՞նչ պայմաններում  
են մասսաների կամքերը փոխանցվում մի անձի։— Այն պայ-  
մաններում, երբ մի անձնավորություն արտահայտում է բո-  
լոր մարդկանց կամքը։ Այսինքն՝ իշխանությունը իշխանու-  
թյուն է։ Այսինքն՝ իշխանությունը մի բառ է, որի նշանակու-  
թյունը հասկանալի չէ մեզ։

Եթե մարդկային գիտելիքի բնագավառը սահմանափակվեր  
միայն վերացական մտածողությամբ, ուստի, քննադատու-  
թյան ենթարկելով իշխանության այն բացատրությունը, որ  
տալիս է զիտությունը, մարդկությունը կգար այն եզրակա-  
ցության, թե իշխանությունը միայն բառ է և իրականության  
մեջ գոյություն չունի։ Բայց երևույթը ճանաչելու համար,  
բացի վերացական մտածողությունից մարդն ունի փորձի գոր-  
ծիքը, փորձ, որով ստուգում է մտածողության արդյունքները։  
Եվ փորձն ասում է, որ իշխանությունը բառ չէ, այլ իրապես  
գոյություն ունեցող երևույթ։

Չիսելով այն մասին, թե առանց իշխանության հասկա-  
ցության չի կարող լինել մարդկանց միացած գործունեության  
նկարագրություն, իշխանության գոյությունն ապացուցլում է  
ինչպես պատմությամբ, այնպես էլ ժամանակակից անցքերի  
դիտողությամբ։

Միշտ, երբ կատարվում է անցքը, հանդես է գալիս մի մարդ  
կամ մարդիկ, որոնց կամքով անցքը պատկերանում է կատար-  
ված։ Նապուեն III-ը հրահանգում է, և քրանսացիները գնում

**Են Մեքսիկա:** Պրուսսկան թագավորը և Բիւմարկը հրահանգում են, և զորքերը գնում են թոհեմիուս նապոլեոն Լ-ը հրամայում է, և զորքերը գնում են Ռուսաստան: Ալեքսանդր Լ-ը հրամաբաւ է, և ֆրանսացիները ենթարկվում են թուրքաներին: Փորձը մեզ ցույց է տալիս, թե ի՞նչ անցք էլ կատարվել է, նա միշտ կապված է մի կամ մի քանի մարդկանց կամքի հետ, մարդիկ, որոնք հրամայել են նրան:

Պատմագիրները, աստվածության մասնակցությունը՝ մարդկության գործերում ընդունելու հին սովորությամբ, ուղարկում են անցքի պատճառը տեսնել իշխանությամբ օժտված անձի կամքի արտահայտության մեջ. բայց այդ եղանակացությունը չի հաստատվում ոչ դատողությամբ, ոչ փորձով:

Մի կողմից, դատողությունը ցույց է տալիս, թե մարդու կամքի արտահայտությունը — նրա խոսքերը — մասն են միայն նրա ընդհանուր գործունելության, արտահայտված անցքի մեջ, ինչպես օրինակ, պատերազմի կամ ոռոլուցիսի մեջ. ուստի և առանց ընդունելու անհասկանալի, գերբնական ուժը — հրաշքը — չի կարելի թույլ տալ, որ բառերը կարողանային միլիոնների շարժման անմիջական պատճառը լինել. Մյուս կողմից, եթե անգամ թույլ տանք, որ բառերը կարող են անցքի պատճառ լինել, ապա պատմությունը ցույց է տալիս, որ պատմական անձերի կամքի արտահայտությունը մեծ մասով ոչ մի ագգեցություն չի ունենում, այսինքն՝ նրանց հղուածանները հաճախ ոչ միայն շեն կատարվում, այլ որ երբեմն տեղի են ունենում անգամ միանգամայն հակառակն այն բանի, ինչ նրանք հրամայել են:

Թույլ շտալով աստվածության մասնակցությունը մարդկության գործերում, մենք չենք կարող իշխանությունն անցքի պատճառ ընդունել:

Իշխանությունը, փորձի տեսակետից, է՛ միայն այն կախումը, որ գոյություն ունի անձի կամքի արտահայտության և այդ կամքն ուրիշ մարդկանց կողմից կատարելու միջև:

Որպեսզի մեզ բացատրենք այդ կախման պայմանները՝ մենք պետք է ամենից առաջ վերականգնենք կամքի արտահայտություն հասկացողությունը, վերագրելով այդ մարդուն, այլ ոչ աստվածության:

Եթե աստվածությունը հրաման է տալիս, արտահայտում է իր կամքը, ինչպես այդ ցույց է տալիս մեզ հների պատմությունը, ապա այդ կամքի արտահայտությունը կախված չէ ժամանակից և ոչնչով չի առաջացած, որովհետև աստվածությունը ոչնչով չի կապված անցքի հետ: Բայց, խոսելով հրամանների՝ մարդկանց կամքի արտահայտության մեսին, մարդիկ, որ գործում են ժամանակի մեջ և կապված են միմյանց հետ, մենք, որպեսզի բացատրենք մեզ հրամանների կապը անցքերի հետ, պետք է վերականգնենք. 1) ամբողջ կատարվածի պայմանները. ինչպես անցքերի, այնպես էլ հրամանող անձի շարժման անընդհատությունը ժամանակի մեջ, և 2) պարմանները այն անհրաժեշտ կապի, որի մեջ գտնվում է հրամայող անձը հանդեպ այն մարդկանց, որոնք կատարում են նրա հրամանը:

## VI

Միայն աստվածության կամքի արտահայտությունը, որ կախված չէ ժամանակից, կարող է վերաբերվել մի ամբողջ շարք անցքերի, որոնք պիտի կատարվեն մի բանի տարի կամ մի բանի դար հետո, և միայն ոչ մի բանով չառաջացված աստվածությունը, միայն իր կամքով, կարող է որոշել մարդկության շարժման ուղղությունը. իսկ մարդը գործում է ժամանակի մեջ և ինքը մասնակից է անցքին:

Վերականգնելով առաջին զանց առնված պայմանը — ժամանակի պայմանը — մենք կտեսնենք, որ ոչ մի հրաման չի կարող կատարվել առանց այն բանի, եթե շիներ նախորդող հրամանը, որը հնարավոր է զարձնում վերջինիս կատարումը:

Երբեք ոչ մի հրաման ի հայտ չի գալիս ինքնակամորեն և չի պարունակում իր մեջ մի ամբողջ շարք անցքեր. բայց յուրաքանչյուր հրաման բխում է մի ուրիշից և երբեք չի վերաբերում մի ամբողջ շարք անցքերի, այլ միշտ անցքի միայն մի մոմենտին:

Երբ մենք ասում ենք, օրինակ, որ նապոլեոնը գորքերին հրամայեց գնալ պատերազմ, մենք միացնում ենք ի մի միաժամանակ արտահայտված հրամանը մի շարք իրար հետեւղ հր-

րամանների, որ կախված են մեկը մյուսից: Նապոլեոնը չէր կարող հրամայել արշավել Ծուսաստանի վրա և երբեք չի հրամայել: Նա այսօր կարգադրեց այսինչ թղթերը գրել Վիեննա, Բեռլին և Պետերբուրգ. վաղը՝ այսինչ դեկրետներն ու հրամանները բանակին, նավատորմիղին և Համբարակության և այլն, և այլն,— միլիոն հրամաններ, որոնցից կազմվեցին մի շարք հրամաններ, համապատասխանող մի շարք անցքերի, որոնք ֆրանսական զորքը բերին Ռուսաստան:

Եթե Նապոլեոնն իր ամբողջ թագավորության ընթացքում հրամաններ է տալիս Անգլիա արշավելու մասին, իր ձեռնարկություններից ոչ մեկի վրա լվատնելով այնքան ջանք ու ժամանակ և, չնայած դրան, իր ամբողջ թագավորության ժամանակ ոչ մի անգամ փորձ չի անում իրազործել իր մրտադրությունը, այլ արշավում է Ծուսաստան, որի հետ, բազմիցս արտահայտվող հուզումի համաձայն, ձեռնուու է համարում զաշինքի մեջ լինել, ապա այդ առաջանում է նրանից, որ առաջին հրամանները շեն համապատասխանում, իսկ երկրորդները համապատասխանում էին մի շարք անցքերի:

Որպեսզի հրամանը հաստատապես կատարվի, պետք է որ մարդ տա այնպիսի հրաման, որը կարող է կատարվել: Իսկ իմանալ այն, թե ի՞նչը կարող է և ի՞նչը չի կարող կատարվել անկարելի է ոչ միայն Նապոլեոնյան դեպ Ծուսաստան կատարած արշավանքի համար, որին միլիոններ են մասնակցում, այլև բոլորովին ամենապարզ մի անցքի համար, որովհետև մեկը կամ մյուսը կատարելու համար միշտ միլիոնավոր խոշնդոտներ կարող են հանդիպել: Ամեն մի կատարված հրաման միշտ հանդիսանում է հսկայական քանակությամբ շկատարկածներից մեկը: Բոլոր անկարելի հրամանները շեն կապվում անցքի հետ և շեն կատարվում: Միայն նրանք, որոնք հնարավոր են, կապվում են հաջորդող հրամանների շարքի հետ, շարքեր, որ համապատասխանում են մի շարք անցքերի, և կատարված են լինում:

Եթե սիալ պատկերացումն այն մասին, թե անցքին նախորդող հրամանն է անցքի պատճառը, առաջանում է այն բանից, որ երբ դեպքը կատարվել է, և անցքի հետ կապված այն հաշարավոր հրամաններից մի քանիսը կատարվեցին, ուստի մենք

մոռանում ենք այն հրամանների մասին, որոնք չեն եղել կատարված, որովհետև չեն կարող կատարվել: Բայց դրանից, մեր մոլորության գլխավոր աղբյուրը այդ իմաստով՝ առաջանում է այն բանից, որ պատմական շարադրության մեջ ամբողջ մի շարք անթիվ, բազմազան, մանրագույն անցքեր, ինչպես օրինակ, այն ամենը, ինչ ֆրանսական զորքերը բերեցին Ռուսաստան, ընդհանրացվում դարձվում է մի անցք ըստ այն հետեւանքի, որն առաջացրեց անցքերի այդ շարքը. և, այդ ընդհանրացման համեմատ, ընդհանրացվում է և հրամանների ամբողջ շարքը որպես կամքի մի արտահայտություն:

Մենք ասում ենք. Նապոլեոնը ցանկացավ և արշավանք կատարեց դեպի Ծուսաստան: Իսկ իրականում մենք երբեք Նապոլեոնի ամբողջ գործունեության մեջ չենք գտնի այդ կամքի նման ոչ մի արտահայտություն, այլ կտեսնենք հրամանների շարքեր, կամ նրա կամքի արտահայտություններ, որոնք ուղղված են ամենատարբեր և անորոշ կերպով: Նապոլեոնյան շկատարված հրամանների անթիվ շարքից կազմվեց կատարված հրամանների մի շարք 12 թվի արշավանքի համար ո՛չ այն պատճառով, որ այդ հրամանները որևէ բանով տարբերվում էին մյուս շկատարված հրամաններից, այլ այն պատճառով, որ այդ հրամանների մի շարքը զուգադիպել է մի շարք այնպիսի անցքերի, որոնք ֆրանսական զորքը բերին Ծուսաստան, ճիշտ այնպես էլ, ինչպես տրաֆարետում կնկարվի այս կամ այն կերպարանքը ոչ թե այն պատճառով, թե ո՛ր կողմը և ինչպես քսել նրա վրա ներկերը, այլ այն պատճառով, որ տրաֆարետում կտրած կերպարանքի բոլոր կողմերի վրա ներկ է քսված:

Այնպես որ, քննելով ժամանակի մեջ հրամանների առընչությունն անցքերի հետ, մենք կգտնենք, որ հրամանը ոչ մի դեպքում չի կարող անցքի պատճառ լինել, այլ որ սրա և մյուսի միջև գոյություն ունի հայտնի որոշակի կախում:

Որպեսզի հասկանանք, թե ինչումն է կայանում այդ կախումը, անհրաժեշտ է վերականգնել մի այլ բաց թողած պայման ամեն մի հրամանի, որն ելնում է ոչ թե ասովածությունից, այլ մարդուց, և կայանում է նրանում, որ հրամայող մարդն ինքը մասնակցում է անցքին,

Հրամայողի այս իսկ վերաբերումը դնափի նրանք, որոնց նա հրամայում է, հենց ա'յն է, ինչ կոչվում է ժշխանության՝ Այդ վերաբերումը կայանում է հետեւյալում:

Ընդհանուր գործունեության համար մարդիկ միշտ կազմում են որոշ միավորումներ, որոնց մեջ, չնայած միասին գործելու համար առաջարկած նպատակի տարրերությանը, գործին մասնակցող մարդկանց հարաբերությունը միշտ լինում է միատեսակ:

Կազմավորվելով և դառնալով այսպիսի միավորումներ, մարդիկ միշտ իրենց դնում են այնպիսի հարաբերության մեջ, որ մարդկանց ամենամեծ քանակը ընդունում է ուղղակի ամենամեծ մասնակցությունը՝ մարդկանց ամենափոքր քանակն ընդունում է ամենափոքր ուղղակի մասնակցություն այն միակից գործողության մեջ, որի համար նրանք կազմավորվում են:

Թողոր այն միավորումներից, որոնց մեջ կազմավորվում միանում են մարդիկ միասնական գործողություններ կատարելու համար, ամենացայտում ու որոշակիներից մեկն է գորքը:

Ամեն մի զորք կազմվում է ըստ ուազմական կոչումի ստորին անդամներից՝ շարքայիններից, որոնք միշտ էլ ամենամեծ թիվն են կազմում. ըստ ուազմական կոչումի հետեւյալ ավելի բարձր աստիճաններից — կապրալներից, ենթասպաններից, որոնց թիվը թիւ է առաջինից. էլ ավելի բարձրաստիճաններից, որոնց թիվն ավելի ես թիւ է և այլն մինչև ուազմական բարձրագույն իշխանությունը, որը կենտրոնացվում է մի անձնավորության մեջ:

Զինվորական կազմությունը կարելի է միանգամայն ճիշտ արտահայտել կոնուսի ֆիգուրայով, որի մեջ հիմքը ամենամեծ տրամագծով կազմելու են շարքայինները. ավելի վերը, ավելի փոքր հիմքը՝ բանակի բարձրագույն աստիճանավորները և այլն մինչև կոնուսի գագաթը, որի կետը կազմելու է գորավարը:

Զինվորները, որոնք ամենամեծ թիվն են, կազմում են կոնուսի ստորին կետերը և նրա հիմքը: Զինվորն ինքը անմիջականորեն զարկում է, կտրում, այրում, կողոպտում և միշտ այդ գործողությունների համար հրաման է ստանում վերադաս անձերից. իսկ ինքը երբեք չի հրամայում: Ենթասպան (ենթա-

սպաների թիվն արդեն ավելի քիչ է) բուն գործողություն ավելի հազվագեց է կատարում, բայց պարբեն հրամայում է: Սպան էլ ավելի հազվագեց է բուն գործողություն կատարում և էլ ավելի հաճախ է հրամայում, Գեներալն արդեն միայն հրամայում է գորքերին զնալ, մատնանշելով նպատակը և գրեթե երբեք զենք չի գործածում: Զորագարն արդեն երբեք չի կարող ուղղակի մասնակցություն սԱնենալ բուն գործողության մեջ և անում է միայն ընդհանուր կարգադրություններ մասսաների շարժման մասին: Մարդկանց միջև նույն հարաբերությունը նշվել է մարդկանց՝ ընդհանուր գործունեության համար կազմած ամեն մի միավորման մեջ՝ երկրագործության, առեւտրի և ամեն տեսակ կառավարչության մեջ:

Եյսպես ուրեմն՝ արհեստականորեն լրացանելով կոնուսի և բանակի բոլոր իրար միաձուլվող կետերն ու աստիճանները, կամ որեէ մի կառավարչության կամ ընդհանուր գործի կոչումներն ու գիրքերը, ստորինից մինչև բարձրագույնը, նշվում է մի օրենք, որի համաձայն մարդիկ միասնական գործողություն կատարելու համար իրար հետ կազմվում են այնպիսի հարաբերության մեջ, որ որքան մարդիկ ավելի քիչ այն ուղղակի մասնակցությունը, որ ունենում են մարդիկ բուն գործողության մեջ, այնքան նրանք ավելի շատ են հրամայում և այդպիսով էլ նրանց թիվն ավելի թիւ է լինում. այսպիսով, ներբին շերտերից են կազմում. և որ որքան ավելի թիւ է այն ուղղակի մասնակցությունը, որ ունենում են մարդիկ բուն գործողության մեջ, այնքան նրանք ավելի շատ են հրամայում և այդպիսով էլ նրանց թիվն ավելի թիւ է լինում. այսպիսով, ներբին շերտերից են կազմում մեկը՝ վերջին մարդը, որ նվազագույն ուղղակի մասնակցությունն է ունենում անցքի մեջ և ամենից ավելի է իր գործունեությունն ուղղում հրամաններ տալու վրա:

Հրամայող անձերի այս իսկ վերաբերմունքն է դեպի նրանք, որոնց հրամայում են, կազմում իշխանություն կոչվող հասկացության էությունը:

Վերականգնելով ժամանակի այն պայմանները, որոնց մեջ կատարվում են բոլոր անցքերը, մենք գտանք, որ հրամանը կատարվում է միայն այն ժամանակ, երբ նա վերաբերում է անցքերի համապատասխանող շարքին: Խակ վերականգնելով հրամայողների և կատարողների միջև եղած կապի անհրա-

**ԺԵՂՄ ԱՎԱՐՄԱՆԸ, ՄԵՆՔ ԳՈՏԱՆՔ, ՈՐ ԻՐԵՆԾ ԲՈՒՆ ԽԱԿ ԱՊԱՆՃՆԱՇՀԱՏԿՈՒԹՅԱՄԲ, ՀՐԱՄԱՅՈՂՆԵՐԸ ՆՎԱՋՎԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԿԳՈՒԹՅՈՒՆՆԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ ԲՈՒՆ ԱՆԳՔԻ ՄԵԶ, և ՈՐ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՐԱՋԱՊԱՎԵՍ Ուղղված է ՀՐԱՄԱՅԵԼՈՒ ՎՐԱ:**

## VII

Երբ մի որեւէ անցք է կատարվում, մարդիկ անցքի մասին արտահայտում են իրենց կարծիքները, ցանկությունները, և որպէս անցքը բխում է շատ մարդկանց միակից գործողությունից, ապա արտահայտված կարծիքներից կամ ցանկություններից մեկն անպայման կատարվում է, թեև մոտավորապես: Երբ արտահայտված կարծիքներից մեկը կատարված է, այդ կարծիքը կապվում է անցքի հետ, որպես նրան նախորդող հրաման:

Մարդիկ գերան են քաշում: Ցուրաքանչյուրն իր կարծիքն է հայտնում, թե ինչպես և ուր տանել: Մարդիկ դուրս են քաշում գերանը և տեսնում եք, որ այդ արվեց այնպես, ինչպես ասել էր նրանցից մեկը: Նա հրամայել էր: Ահավասիկ հրամայումը և իշխանությունը իր նախնական վիճակում:

Նա, ով շատ էր աշխատել ձեռներով, կարող էր քիչ կշռադատել այն, ինչ արել է, և հասկանալ այն, թե ի՞նչ կարող է ստացվել ընդհանուր գործունեությունից, և հրամայել: Նա, ով ավելի շատ հրամայել է, իր գործունեության հետեւանքով, խոսքերով, ակներևորեն կարող էր ավելի քիչ գործել ձեռներով:

Մարդկանց մեծ համախմբման դեպքում, մարդկանց, որոնք իրենց գործունեությունն ուղղում են մի նպատակի, էլ ավելի որոշակի բաժանվում է մարդկանց մի կարգ, որոնք այնքան քիչ են այնուամենայիվ ուղղակի մասնակցություն ունենում ընդհանուր գործունեության, որքան ավելի նրանց գործունեությունն ուղղված է հրամայելու:

Մարդ, երբ մենակ է գործում, ինքն իր մեջ միշտ ունենում է որոշ շարք կշռադատումներ, որոնք, ինչպես նրան թվում է, զեկավարել են իր անցյալ գործունեությունը, ծառայում են նրան իրեք արդարացումն իր ներկա գործունեության և զեկավարում են նրան իր ապագա քայլերի մասին ունեցած ենթադրությունների մեջ:

Ճիշտ նույնն են անում մարդկանց համախմբումները, թողնելով, որ գործողությանը շմասնակցողները մտածեն ու գրտնեն կուհումներ, արդարացումներ և ենթադրություններ իրենց միակից գործունեության վերաբերյալ:

Մեզ հայտնի կամ անհայտ պատճառներով ֆրանսացիներն սկսում են խեղդել ու մորթել միմյանց: Եվ անցքին համապատասխան՝ դրան ուղեկցում է արդարացումն մարդկանց արտահայտված կամքերի մեջ, թե դա անհրաժեշտ է Ֆրանսիայի բարիքի համար, ազատության համար, հավասարության համար: Մարդիկ դադարում են մորթել միմյանց, և այդ անցքին ուղեկցում է միասնական իշխանության, եվրոպային դիմադրություն ցուց տալու անհրաժեշտության արդարացումը և այլն: Մարդիկ գնում են արևմուտքից արեւելք, սպանելով իրենց նմաններին, և անցքին ուղեկցում են բառեր Ֆրանսիայի փառքի, Անգլիայի ստորության մասին և այլն: Պատմությունը մեզ ցուց է տալիս, որ անցքերի այդ արդարացումները չունեն ոչ մի ընդհանուր իմաստ, հակասում են իրենք իրենց, ինչպես մարդու սպանությունը — նրա իրավունքները ճանաշելու հետեւանքով, և Ռուսաստանի միլիոնների սպանությունը — Անգլիային նվաստացնելու համար: Բայց այս արդարացումները արդիական իմաստով ունեն անհրաժեշտ նշանակություն:

Այս արդարացումները վերցնում են բարոյական պատասխանատվությունը անցք կատարող մարդկանցից: Ժամանակավոր այս նպատակները նման են՝ ճանապարհը մաքրելու համար՝ գնացքի առջեկց ուելսերով գնացող խոզանակների. Նրանք մաքրում են մարդկանց բարոյական պատասխանատվության ճանապարհը: Առանց այդ արդարացումների չէր կարող բացատրվել մի ամենապարզ հարց, որ ներկայանում է յուրաքանչյուր անցք քննելիս. ինչպես են միլիոնավոր մարդիկ կատարում միասնական ոճագործություններ, պատերազմներ, սպանություններ և այլն:

Ներկա, Եվրոպայի պետական ու հասարակական կյանքի բարդացած ձևերում հնարավո՞ր է արդյոք մտածել ու գտնել մի որեւէ անցք, որը հրահանգված, մատնանշված, հրամայված լիներ թագավորների, մինիսորների, պառլամենտների, լը-

րագիրների կողմից։ Կա՞ արդյոք մի որևէ միացած գործունեություն, որն իր արդարացումը զգաներ պիտական միասնության մեջ, աղքության մեջ, Եվրոպայի Հավասարակշռության մեջ, քաղաքակրթության մեջ։ Այնպէս որ յուրաքանչյուր կատարվող անցք անխուսափելիորեն զուգադիպում է մի որևէ արտահայտված ցանկության և, իր արդարացումն ստանալով, հանդիսանում է մի կամ մի քանի մարդկանց կամքի արգունք։

Ուր Էլ ուղղվի շարժվող նավը, նրա առջե միշտ կերևս իր կտրած ավիքների ջրագիծը։ Նավի վրա գունվող մարդկանց համար ջրագծի այդ շարժումը կլինի միակ նկատելի շարժումը։

Միայն մոտիկէց, վայրկան առ վայրկան հետեւլով ջրագծի այդ շարժմանը և այդ շարժումը համեմատելով նավի շարժման հետ, մենք կհամոզվենք, որ ջրագծի շարժման յուրաքանչյուր մոմենտը որոշվում է նավի շարժումով և որ մեզ մոլորության մեջ է գցել այն, որ մենք ինքներս էլ անհկատելի ենք շարժվում։

Նույնը մենք տեսնում ենք, հետեւլով, վայրկան առ վայրկան, պատմական անձերի շարժմանը (այսինքն՝ վերականգնելով ամբողջ կատարվածի անհրաժեշտ պայմանը՝ շարժման անընդհատության պայմանը ժամանակի մեջ) և աշքաթող շահելով պատմական անձերի կամը մասսաների հետ։

Ինչ էլ կատարվի, միշտ կթվո թե դա նախատեսված է և հրամայված։ Ուր Էլ ուղղվեր նավը, ջրագիծը, շղեկավարելով, շուժեղացնելով նավի շարժումը, եռում է նրա առջևում և հեռվից մեղ թվական է ոչ միայն կամայաբար շարժվող, այլև նավի շարժումը զեկավարող։

Քննելով պատմական անձերի կամքի միայն այն արտահայտությունները, որոնք անցքերին վերաբերվել են որպես հրամաններ, պատմագիրները կարծել են, թե անցքերը կախված են հրամաններից։ Իսկ մենք քննելով բուն անցքերը և պատմական անձերի՝ մասսաների հետ ունեցած կապը, գտանք, որ պատմական անձերը և նրանց հրամանները գտնվում են կախման մեջ՝ անցքից։ Այս կըրակացության անկասկածելի ապացույց է ծառայում այն, թե որքան էլ հրամաններ լինեն, անցքը չի կատարվի, եթե դրա համար չկան այլ պատճառներ։

Իսկ հայց հենց որ կատարվի անցքը — ինչ էլ որ լինի այն — ապա տարբեր անձերի բոլոր՝ անընդհատ արտահայտված կամքերի թիվում կգանձին այնպիսինները, որոնք ըստ իմաստի և ըստ ժամանակի կվերաբերվեն անցքին որպես հրամաններ։

Գալով այս եզրակացության, մենք կարող ենք ուզդակի և դրականապես պատասխանել պատմության այն երկու էական հարցերին։

1) Ի՞նչ է իշխանությունը։

2) Ի՞նչ ուժ է առաջացնում ժողովուրդների շարժումը։

1) Իշխանությունը մի որոշ անձի վերաբերմունքն է դեպի ուրիշ անձեր, որի մեջ այդ անձն այնքան ավելի քիչ է մասնակցում գործողության, որքան այդ անձն ավելի է արտահայտում կատարվող միատեղ գործողության կարծիքները, ենթադրություններն ու արգարացումները։

2) Ժողովուրդների շարժումը կատարում են ոչ իշխանությունը, ոչ մտավոր գործունեությունը, անգամ ոչ մեկի ու մյուսի միացումը, ինչպես այդ կարծում էին պատմագիրները, այլ գործունեությունը բոլոր այն մարդկանց, որ մասնակցում են անցքին և միանում են միշտ այնպես, որ նրանք, ովքեր ամենից ավելի ուղղակի մասնակցություն ունեն անցքի մեջ, իրենց վրա վերցնում են նվազագույն պատասխանատվություն, և ընդհակառակը։

Բարոյական կողմից անցքի պատճառ հանդիսանում է իշխանությունը։ Փիզիկական կողմից՝ նրանք, ովքեր ենթարկվում են իշխանության։ Բայց որովհետև բարոյական գործունեությունը աներևակայելի է առանց Փիզիկականի, ուստի անցքի պատճառը գունվում է ոչ սրա մեջ, ոչ նրա, այլ երկուսի միացման մեջ։

Կամ, ուրիշ խոսքով, մեր քննած երկույթի նկատմամբ, պատճառի հասկացողությունը անկիրառելի է։

Վերջին վերլուծության մեջ մենք մոտենում ենք հավիտենականության ոլորտին, այն ծայր սահմանին, գետի որը մտածողության ամեն մի բնագավառում գալիս է մարդկային միտքը, եթե չի խաղում իր առարկայի հետ։ Էլեկտրականությունն առաջ է բերում տաքություն, տաքությունն առաջ է բերում էլեկտրա-

կանություն։ Ատոմները ձգվում-քաշվում են, ատոմները չետ են մղվում։

Խոսելով տաքության ու էլեկտրականության փոխազդեցության մասին և ատոմների մասին՝ մենք շենք կարող ասել, թե ինչո՞ւ է այդ կատարվում, և ասում ենք, թե այդ այդպես է, որովհետև այլ կերպ անկարելի է, որովհետև այդպես պետք է լինի, որ դա օրենք է։ Նույն այդ բանը վերաբերում է և պատմական երկույթներին։ Ինչո՞ւ է տեղի ունենում պատերազմ կամ հեղափոխություն։ Մենք շգիտենք. մենք գիտենք միայն, որ այս կամ այն գործողությունը կատարելու համար մարդիկ համախմբվում են որոշ միավորման մեջ, որին նրանք բոլորը մասնակցում են և մենք ասում ենք, թե այդ այդպես է, որովհետև այլ կերպ անհնարին է, թե դա օրենք է։

### VIII

Եթե պատմությունը գործ ունենար արտաքին երկույթների հետ, այս պարզ ու ակնհայտ օրենքի որոշումները բավական կլինեին, և մենք կվերջացնեինք մեր դատողությունը։ Բայց պատմության օրենքը վերաբերում է մարդուն, նյութի մասնիկը մեզ չի կարող ասել, թե նա ինքը ձգվելու և ետ մղվելու պահանջ բնավ չի զգում, և որ դա ճիշտ չէ. իսկ մարդը, որ պատմության առարկան է, ուղղակի ասում է. ես ազատ եմ և այդ պատճառով օրենքների ենթակա չեմ։

Պատմության ամեն մի քայլափոխին զգացվում է մարդու պատ կամքի՝ թեև շարտահայտված խնդրի ներկայությունը։

Թոլոր այն պատմագիրները, որոնք լրջորեն են մտածել, ակամա հանգել են այս հարցին։ Պատմության բոլոր հակառակունները, անպարզությունները, այն սխալ ճանապարհը, որով գնում է այդ գիտությունը, հիմնված են միայն այդ խնդրի շլուծված լինելու վրա։

Եթե յուրաքանչյուր մարդու կամք պատ լիներ, այսինքն՝ յուրաքանչյուրը կարողանար վարվել այնպես, ինչպես ինքն է ցանկանում, ապա ամբողջ պատմությունը անկապ պատահականությունների մի շարք է։

Եթե միլիոններից անկամ մի մարդ ժամանակի հազարամյա շրջանում հնարավորություն ունենար ազատ վարվելու, այսինքն՝ այնպես, ինչպես ինքը ցանկանար, ապա ակներե է, որ այդ մարդու միայն մի ազատ քայլը, օրենքներին հակառակ, ոչնշացնում է որևէ օրենքների գոյության հնարավորությունը ամբողջ մարդկության համար։

Իսկ եթե կա մարդկանց գործողությունները կառավարող գեթ մի օրենք, ապա ազատ կամք չի կարող լինել, որովհետև մարդկանց կամքը պիտի ենթարկվի այդ օրենքին։

Այս հակասության մեջ է կայանում կամքի ազատության խնդիրը, որ հնագույն ժամանակներից քրաղեցրել է մարդկության լավագույն ներկայացուցիչների մտքերը և հնագույն ժամանակներից դրված է իր ամբողջ հսկայական նշանակությամբ։

Խնդիրն այն է, որ նայած մարդուն, որպես դիտողության առարկայի, ինչ տեսակետից էլ ուզում է լինի, — աստվածարանական, պատմական, էթիկական, փիլիսոփայական, — մենք գտնում ենք անհրաժեշտության ընդհանուր մի օրենք, որին նա ենթակա է այնպես, ինչպես և զոյություն ունեցող ամեն բան։ Իսկ նայելով նրան ներքուստ իրեն մի բանի, ինչ մենք գիտակցում ենք, մենք մեզ զգում ենք ազատ։

Այս գիտակցությունը բանականությունից միանգամայն առանձին և անկախ աղբյուր է ինքնաճանաշության։ Բանականության միջոցով մարդ գիտում է ինքն իրեն. բայց ինքն իրեն ճանաշում է միայն գիտակցության միջոցով։

Առանց իրեն գիտակցելու անհնարին է թե որևէ գիտողություն, թե բանականության գործադրություն։

Հասկանալու, գիտելու, եղրակացնելու համար՝ մարդ պետք է նախ գիտակցի իրեն իրեն ապրող։ Սարդն իրեն իրեն ապրող գիտե՛ ոչ այլ կերպ, քան ցանկացող, այսինքն՝ գիտակցում է իր կամքը։ Իսկ իր կամքը, որ կազմում է նրա գոյության էռւթյունը, մարդ գիտակցում է և չի կարող գիտակցել այլ կերպ, քան ազատորեն։

Եթե, իրեն գիտողության ենթարկելով, մարդ տեսնում է, որ իր կամքը ճիշտ ուղղվում է ըստ այդ միևնույն օրենքի (դիտում է արդյոք նա սնունդ ընդունելու անհրաժեշտությունը, թե

ու է եղի գործունեությունը, կամ թե որևէ բան). նա ի՞ կարող հասկանալ այդ միշտ միատեսակ ուղղությունն իր կամքի այլ կերպ, քան որպես այդ կամքի սահմանափակում, Այն, ինչ ազատ չէր, չի կարող և սահմանափակվել: Մարդու կամքը նըրան սահմանափակ է թվում հենց այն պատճառով, որ նա գիտակցում է այն ոչ այլ կերպ, քան իրբ ազատ:

Դուք ասում եք. ես ազատ չեմ: Իսկ ես բարձրացրի ու իջեցրի ձեռու: Ամեն ոք հասկանում է, որ այս անտրամարանական պատասխանն անհերքելի ապացուց է ազատության:

Այս պատասխանը արտահայտություն է այն գիտակցության, որը ենթակա չէ բանականության:

Եթե որ ազատության գիտակցությունը լիներ բանականությունից առանձին և անկախ ազրուր ինքնաճանաշության, նա կենթարկվեր կշուղատության և փորձի. բայց իրականում այդպիսի ենթակայություն երբեք չի լինում և անկարելի է:

Փորձերի ու կշուղատումների մի շարք ցուց է տալիս յուշաքանչյուր մարդու, որ նա որպես դիտողության առարկա ենթակա է որոշ օրենքների, և որ մարդ ենթարկվում է նրանց և երբեք չի պայքարում իր մի անգամ ճանաշած ձգողականության կամ անթափանցելիության օրենքի դեմ: Բայց փորձերի ու կշուղատումների նույն այդ շարքը ցուց է տալիս նրան, որ լիակատար ազատությունը, որը նա գիտակցում է իր մեջ՝ անկարելի է, որ նրա ամեն մի գործողությունը կախված է նրա կազմակերպումից, նրա բնավորությունից և նրա վրա ազդող մոտիվներից: Բայց մարդը երբեք չի ենթարկվում այդ փորձերի և կշուղատումների հետևություններին:

Փորձից և կշուղատումներից իմանալով, որ քարն ընկնում է ցած, մարդը, անկախած, հավատում է դրան և բոլոր դեպքում սպասում է իր իմացած օրենքի կատարմանը:

Բայց, իմանալով նույնպես անկախած, որ իր կամքը ենթակա է օրենքների, նա չի հավատում և չի կարողանում հավատալ դրան:

Որքան և փորձն ու կշուղատումը ցուց են տվել մարդուն, թե նույն պայմաններում, նույն բնավորությամբ նա կանի նույնը, ինչ և առաջ, նա, հազարերորդ անգամը՝ նույն պայմաններում, նույն բնավորությամբ ձեռնարկելով մի գործություն ունենալու մասին:

Պության, որ միշտ վերջանում է միատեսակ, անշուշտ, իրեն զգում է նույնքան վստահ այն բանին, որ կարող է ձեռնարկել, ինչպես կամենա, ինչպես և մինչև փորձը: Ամեն մի մարդ, վայրենի թե մտածող, որքան էլ կշուղատումն ու փորձը անդիմադրելիորեն ապացուցեին նրան այն, թե անկարելի է պատկերացնել երկու վարմունք միանույն պայմաններում, զգում է, որ առանց այդ անմիտ պատկերացման (որը կազմում է ազատության էությունը) նա չի կարող կյանքը պատկերացնել իրեն: Նա զգում է, թե որքան էլ այդ անկարելի լինի, դա կա, որովհետեւ առանց ազատության այդ պատկերացման՝ նա ոչ միայն կյանքը չէր հասկանա, այլև ոչ մի վայրկյան չէր կարող ապրել:

Նա ապրել չէր կարող այն պասճառով, որ մարդկանց բրւար ձգտումները, բոլոր մղումները դեպի կյանքը՝ միայն ազատություն ավելացնելու ձգտումներ են: Հարստություն — աշխատություն, փառք — անհարություն, իշխանություն — ենթակայություն, ուժ — թուլություն, առողջություն — հիմնդություն, կրթություն — ազիտություն, աշխատանք — պարապություն, կշտություն — քաղց, առաքինություն — արատ՝ սրանք ազատության միայն մեծ ու փոքր աստիճաններն են:

Պատկերացնել, որ ազատություն չունի մարդ՝ չի կարելի այլ կերպ, քան իրբ կյանքից զրկվածի:

Եթե ազատության հասկացությունը բանականության համար ներկայանում է անհմատ հակասություն, ինչպես ժամանակի միննույն մոմենտին երկու վարմունք կատարելու հնարավորությունը կամ առանց պատճառի գործողությունը, ապա սա ապացուցում է միայն այն, որ գիտակցությունը ենթակա չէ բանականության:

Ազատության այս իսկ անհոգդողը, անհերքելի, փորձի և կշուղատության ոչ ենթակա գիտակցությունը, որ ընդունում են բոլոր մտածողները և զգում բոլոր մարդիկ առանց բացառության, գիտակցություն, առանց որի անկարելի է որևէ պատկերացում մարդու մասին, այդ իսկ գիտակցությունն էլ կազմում է հարցի մյուս կողմը:

Մարդը ամենակարող, ամենապես աստծու

**ստեղծագործությունն է:** Իսկ ի՞նչ բան է մեղքը, որի մասին եղած հասկացողությունը բխում է մարզու պատության գիտակցությունից; Ահա ասովածաբանության խնդիրը:

Մարդկանց գործողությունները ենթակա են ընդհանուր, անփոփոխ օրենքների, որ արտահայտվում են վիճակագրությամբ; Իսկ ինչում է կայանում մարդու պատասխանատվությունը հանդեպ հասարակության, մի պատասխանատվություն, որի մասին եղած հասկացությունը բխում է պատության գիտակցությունից; Ահա իրավունքի խնդիրը:

Մարդու վարմունքները բխում են նրա բնածին բնավորությունից և նրա վրա ազգող մոտիվներից; Ի՞նչ բան է խիզը և վարմունքների բարի ու շար լինելու գիտակցությունը, վարմունքներ, որ բխում են ազատության գիտակցությունից; Ահա էթիկայի խնդիրը:

Մարդու, մարդկության ընդհանուր կյանքի կապակցությամբ, ներկայանում է այդ կյանքը սահմանող օրենքներին ենթակա; Բայց նույն այդ մարդը, անկախ այդ կապից, պատկեների և մարդկության անցյալ կյանքը՝ որպես արդյո՞ւնք մարդկանց ազատ թե անազատ գործունեության; Ահա պատմության խնդիրը:

Միայն մեր՝ գիտելիքների ժողովրդականացման ինքնակտահամանակում, շնորհիվ տգիտության հզորագույն զենքի՝ տպագրության տարածման, կամքի ազատության խնդիրը հջեցված է մի այնպիսի մակարդակի, ուր խնդիրն ինքը չի կարող լինել: Մեր ժամանակ այսպես անվանված առաջավոր թյունը, խնդիր մի կողմով զբաղվող բնախույզների աշխատություններն ընդունում է բովանդակ խնդիր լուծման տեղ:

Հոգի և ազատություն չկա, որովհետև մարդու կյանքն արտահայտվում է մկանային շարժումներով, իսկ մկանային շարժումները պայմանավորվում են նյարդային գործունեությամբ, հոգի և ազատություն չկա, որովհետև մենք ժամանակի մի անհայտ շրջանում առաջ ենք եկել կապիկից, — ասում, գրում և տպագրում են նրանք, բնավ իսկ չկասկածելով այն մասին, թե սրանից հազարամյակներ առաջ բոլոր կրոնների, բոլոր

մտածողների կողմից ոչ միայն ընդունված, այլև երբեք էլ չի ժխաված անհրաժեշտության այն իսկ օրենքը, որն այնպիսի ջանասիրությամբ ձգտում են նրանք ապացուցել այժմ ֆիզիոլոգիայով և համեմատական կենդանաբանությամբ: Նրանք շեն տեսնում այն բանը, որ բնական գիտությունների դերն այդ խնդրում ա'ն է միայն, որ գենք ծառայի նրան մի կողմը լուսաբանելու համար: Որովհետև այն, թե, գիտողության տեսակետուից, բանականությունն ու կամքը միայն ուղեղի արտադրանքներն են (σέοι ἔτιον), և այն, թե մարդը, ընդհանուր օրենքին հետևելով, կարող էր առաջանալ, աճել ստորին կենդանիներից ժամանակի անհայտ մի շրջանում, պարզում է միայն նոր կողմից հազարամյակներ սրանից առաջ բոլոր կրոնների և փիլիսոփայական թեորիաների կողմից ընդունված այն ճշմարտությունը, թե բանականության տեսակետից, մարդը ենթակա է անհրաժեշտության օրենքներին, բայց մազաշափ անզամ առաջ չի տանում հարցի լուծումը, որ ունի մի այլ, հակառակ կողմ, հիմնված ազատության գիտակցության վրա:

Եթե մարդիկ առաջ են եկել կապիկներից ժամանակի անհայտ մի շրջանում, ապա զա նույնքան հասկանալի է, ինչպես և ալն, թե մարդիկ առաջ են եկել մի բուր հողից ժամանակի հայտնի մի շրջանում (առաջին գեպում X ժամանակն է, երկրորդում՝ ծագումը). և այն հարցը, թե մարդու ազատության գիտակցությունն ինչպես է միանում անհրաժեշտության օրենքի հետ, ուրին ենթակա է մարդը, չի կարող լուծվել համեմատական ֆիզիոլոգիայով ու կենդանաբանությամբ, որովհետև գորտի, ճագարի և կապիկի մեջ մենք կարող ենք դիմել միայն մկանանարդային գործունեություն, իսկ մարդու մեջ՝ թե՛ մկանանարդային գործունեություն, թե՛ գիտակցություն:

Բնախույզները և նրանց երկրպագուները, որոնք մտածում են լուծել այդ խնդիրը, նման են սվաղիչների, որոնց հանձնել են սվաղել եկեղեցու պատի մի կողմը, և որոնք, օգտվելով աշխատանքների զիսավոր կարգադրողի բացակայությունից, եռանդի ոգևորության մեջ, սվաղով ծեփեին թե՛ լուսամուտները, թե՛ սրբապատկերները, թե՛ լաստակները, թե՛ տակապին շամրացած պատերը և ուրախանային, թե ինչպես, իրենց սվաղշային տեսակետից, ամեն ինչ ստացվում է հարթ-հավասար:

Ազատության ու անհրաժեշտության մասին եղած խնդրի լուծումը պատմության համար՝ հանդեպ գիտության մյուս ճյուղերի, որոնց մեջ լուծվել է այդ խնդիրը, ունի այն առավելությունը, որ պատմության համար այդ խնդիրը վերաբերում է ոչ թե մարդու կամքի բուն էությանը, այլ անցյալում և որոշ պայմաններում այդ կամքի ունեցած արտահայտության մասին եղած պատկերացմանը...

Այս հարցի լուծման վերաբերյալ պատմությունը մյուս գիտությունների նկատմամբ կանգնում է այն դրության մեջ, ինչ փորձնական գիտությունը մտահայեցողական գիտությունների հանդեպ:

Պատմությունն իրեն առարկա ունի ոչ թե մարդու բուն կամքը, այլ մեր պատկերացումը այդ կամքի մասին:

Եվ այդ պատճառով պատմության համար գոյություն չունի, ինչպես աստվածաբանության, էթիկայի ու փիլիսոփայության համար, անլուծելի գաղտնիք՝ երկու հակասության՝ ազատության ու անհրաժեշտության միացման մասին։ Պատմությունը քննում է մարդու կյանքի մասին եղած պատկերացումը, մարդու, որի մեջ այդ երկու հակասության միացումը արդեն կատարվել է։

Իրական կյանքում յուրաքանչյուր պատմական անցք, մարդու յուրաքանչյուր գործողություն հասկացվում է ըստ ամենայնի պարզ ու որոշ, առանց աննշան հակասություն զգալու, չնայած այն բանին, որ յուրաքանչյուր անցք պատկերանում է մի մասով ազատ, մի մասով անհրաժեշտ։

Լուծելու համար այն հարցը, թե ինչպես են միանում ազատությունն ու անհրաժեշտությունը, և ի՞նչն է կազմում այդ երկու հասկացության էությունը, պատմության փիլիսոփայությունը կարող է և պետք է ընթանա հակառակ այն ճանապարհի, որով ընթացել են մյուս գիտությունները։ Փոխանակ նրա, որպեսզի ինքն իր մեջ սահմանի ազատության և անհրաժեշտության հասկացությունը, կազմած սահմանումների ենթակելով կյանքի երևույթները, — պատմությունը իրեն ենթակա հսկայական քանակությամբ երևույթներից, որ միշտ

ներկայանում են ազատությունից ու անհրաժեշտությունից կախված, պետք է եզրակացնի ազատության ու անհրաժեշտության հասկացությունների սահմանումը։

Ծատ մարդկանց, թե մի մարդու զործունեության մասին ինչ տեսակ պատկերացում էլ քննենք, մենք այն հասկանում ենք ոչ այլ կերպ, քան արդյունք մասամբ մարդու ազատության, մասամբ անհրաժեշտության օրենքի։

Խոսում ենք արդյոք ժողովուրդների գաղթի և բարբարուների արշավանքի մասին, թե նապուհոն III-ի կարգադրությունների մասին, կամ թե մի մարդու սրանից ժամ առաջ կատարած վարժունքի մասին, որը կայանում է նրանում, որ այդ մարդը գրոսանքի մի բանից ուղղություններից ընարել է մեկը, — մենք չենք տեսնում աննշան իսկ հակասություն։ Այդ մարդկանց քայլերը զեկավարս ազատության ու անհրաժշտության շափէ պարզուեն սահմանված է մեզ համար։

Ծատ հաճախ մեծ կամ փոքր ազատության պատկերացումը տարբեր է, նայած այն տեսակետի տարբերության, որով մենք քննում ենք երկուցյթը. բայց, միշտ էլ միատեսակ, մարդու յուրաքանչյուր գործողությունը մեզ ներկայանում է ոչ այլ կերպ, քան իրեն ազատության ու անհրաժեշտության որոշ միացումն։ Յուրաքանչյուր քննվող գործողության մեջ մենք տեսնում ենք ազատության որոշ բաժին և անհրաժեշտության որոշ բաժին։ Եվ միշտ, որքան մի օրից կազմելի շատ ենք տեսնում ազատություն, այնքան ավելի քիչ է անհրաժեշտությունը, այնքան ավելի քիչ է ազատությունը։

Ազատության հարաբերությունը անհրաժեշտության նկատմամբ նվազում և ավելանում է, նայած այն տեսակետից, որով քննվում է վարժունքը. բայց այդ հարաբերությունը միշտ մընում է հակառակ հարաբերական։

Խեղդվող մարդը, բռնելով մյուսին ու խեղդելով նրան, կամ երեխան կերակրելուց հյուծված՝ քաղցած մայրը, որ ուտելիք է գողանում, կամ կարգապահության վարժված մարդը, որ հյամանք շարքի մեջ անպաշտպան մարդ է սպանում, ավելի ւրացակ մեղագործներ են ներկայանում (այսինքն՝ ավելի քիչ ազատ և ավելի շատ ենթակա անհրաժեշտության օրենքին)։

նրա՞ն, ով զիտի արև պայմանները, որոնց մեջ գտնվել են ալդ մարդիկ, և ավելի ազատ նրա՞ն, ով լզիափ, որ այն մարդը ինքն է խեղդվել, որ մայրը բաղցած է եղել, զինվորը շարքի մեջ և այլն: Ճիշտ այդպես էլ այն մարդը, որ 20 տարի առաջ սպանություն է կատարել և դրանից հետո հանգիստ ու անվնաս ապօռում է հասարակության մեջ, թվում է, ներկայանում է ավելի քիչ մեղավոր, նրա վարմունքը ավելի ենթակա անհրաժեշտ 20 տարին անցնելուց հետո, և ավելի ազատ նրան, ով նույն այդ վարմունքը քննել է կատարումից մի օր հետո: Եվ ճիշտ այդպես էլ խելազար, հարրած կամ սաստիկ գրգռված մարդու յուրաքանչյուր վարմունք նվազ ազատ և ավելի անհրաժեշտ է թվում նրան, ով զիտի վարմունք կատարողի հոգեկան վիճակը, և ավելի ազատ ու նվազ անհրաժեշտ նրան, ով այդ չգիտի թյան հասկացությունը և դրա համապատասխան նվազում կամ այն տեսակետով, որով քննվում է վարմունքը: Այնպես որ, որքան մեծ է պատկերանում անհրաժեշտությունը, այնքան նվազ է պատկերանում ազատությունը:

Կրոնը, մարդկային առողջ միտքը, իրավունքի գիտությունը և պատմությունն ինքը միատեսակ են հասկանում այդ հարաբերությունը անհրաժեշտության և ազատության միջև:

Առանց բացառության բոլոր դեպքերը, որոնց մեջ ավելանում կամ նվազում է մեր պատկերացումը ազատության մասին և անհրաժեշտության մասին, ունեն միայն երեք հիմք:

1) Վարմունք կատարած մարդու վերաբերմունքը դեպի արտաքին աշխարհը,

2) դեպի ժամանակը և

3) դեպի վարմունք առաջացրած պատճառները:

1) Առաջին հիմքն է մարդու՝ մեզ տեսանելի ավելի մեծ կամ ավելի նվազ վերաբերմունքը դեպ արտաքին աշխարհը, ավելի կամ պակաս պարզ հասկացությունը այն որոշ տեղի մասին, որ գրավում է յուրաքանչյուր մարդ իր հետ միաժամանակ գոյություն ունեցող ամեն ինչի վերաբերմամբ: Սա է այն հիմքը, որի հետեւ քով ակներկ է, որ խեղդվող մարդն ավելի քիչ է ազատ և

ավելի է ենթակա անհրաժեշտության, քան ցամաքում կանգնած մարդը. այն հիմքը, որի հետեւանքով խտաբնակ վայրում մյուս մարդկանց հետ սերտ կապով ապրող մարդու գործողությունները, որը կապված է ընտանիքով, ժառայությամբ, ձեռնարկություններով, ներկայանում են անկասկած պակաս ազատ և անհրաժեշտության ավելի ենթակա, քան մենակ և առանձնակյաց մարդու գործողությունները:

Եթե մենք քննում ենք միայն մարդուն մենակ, առանց նրա՝ այն վերաբերմունքի, ինչ շրջապատում է իրեն, ապա նրա յուրաքանչյուր գործողությունը մեզ ներկայանում է իրեւ ազատ: Բայց եթե մենք տեսնում ենք գեթ որևէ վերաբերմունք դեպ այն, ինչ շրջապատում է նրան, եթե մենք տեսնում ենք նրա կապը որևէ բանի հետ. մարդու, որը նրա հետ խոսում է, գրի, որը նա կարդում է, աշխատանքի, որով զբաղված է, անգամ օդի, որը նրան շրջապատում է, անգամ լույսի, որ ընկնում է նրան շրջապատող իրերի վրա, — մենք տեսնում ենք, որ այդ պայմաններից յուրաքանչյուրը ազդեցություն ունի նրա վրա և դեկավարում է նրա գործունեության գեթ մի կողմը: Եվ այնշափ, որշափ մենք տեսնում ենք այդ ազդեցությունները, այնքան նվազում է մեր պատկերացումը նրա ազատության մասին և պատկերացում է պատկերացումը այն անհրաժեշտության մասին, որին նա ենթակա է:

2) Երկրորդ հիմքն է՝ մարդու տեսանելի մեծ կամ փոքր ժամանակային վերաբերմունքը դեպի աշխարհը. ավել կամ պակաս պարզ հասկացությունը այն տեղի մասին, որ մարդու գործողությունը գրավում է ժամանակի մեջ: Սա այն հիմքն է, որի հետեւանքով առաջին մարդու անկումը, մարդու, որի հետեւանքն եղավ մարդկային ցեղի ժագումը, ներկայանում է հայտնապես ավելի պակաս ազատ, քան մեր ժամանակի մարդու ամուսնությունը: Սա այն հիմքն է, որի հետեւանքով սրանից դարեր առաջ ապրած մարդկանց և ժամանակի մեջ ինձ հետ կապված կամնքն ու գործունեությունը շեն կարող ինձ պատկերանալ այնքան ազատ, որքան մեր ժամանակի կյանքը, որի հետեւանքներն ինձ անհայտ են տակապին:

Եթե կամ փոքր ազատության ու անհրաժեշտության պատկերացման աստիճանականությունը այս կողմից կախված է

վարմունքը կատարելուց մինչև նրա մասին դատողություն ունենալը եղած ավել կամ պակաս ժամանակամիջոցից:  
Եթե ես քննում եմ իմ վարմունքը, որ կատարել եմ մի բոպե առաջ, մոտավորապես նույնպիսի պայմաններում, ինչպիսի պայմաններում գտնվում եմ հիմա, իմ վարմունքն ինձ ներկայանում է անկասկած ազատ: Բայց եթե ես քննում եմ մի ամիս առաջ կատարած իմ վարմունքը, ապա, ուրիշ պայմաններում գտնվելով, ես ակամա ընդունում եմ, որ եթե այդ վարմունքը չկատարվեր,— շատ օգտակար, հաճելի և անգամ անհրաժեշտ (այդ վարմունքից բխող) բաներ տեղի չէին ունենաւ: Եթե ևս հիշողություններով փոխադրվեմ զեպի էլ ավելի հեռավոր, 10 և ավելի տարիներ առաջ կատարված վարմունքը, ապա իմ վարմունքի հետևանքներն ինձ կպատկերանան էլ ավելի ակներեւ: և ես դժվար կպատկերացնեմ, թե ինչ կլիներ, եթե իմ վարմունքը լիներ: Որքան ավելի ետ գնամ ես իմ հիշողություններով կամ, որ նույն է, առաջ գնամ դատողություններով, այնքան վարմունքիս ազատության դատողությունը դառնալու է ավելի կասկածելի:

Մարդկությանը ընդհանուր գործերին մասնակցած ազատ կամքի ճիշտ նույնպիսի համոզկերության պրոգրեսիա մենք գտնում ենք նաև պատմության մեջ: Կատարված ժամանակակից անցքը մեզ պատկերանում է բոլոր հայտնի մարդկանց անկասկած արդյունքը: Բայց ավելի հեռավոր անցքի մեջ մենք տեսնում ենք արդեն նրա անխուսափելի հետևանքները, առանց որոնց մենք ուշնչ չենք կարող պատկերացնել: Եվ որքան շատ ենք մենք ետ տարվում անցքի քննության մեջ, այնքան նրանք ավելի կամայական են պատկերանում մեզ:

Ավստրո-պրուսական պատերազմը մեզ ներկայանում է անկասկածելի հետևանք խորամանկ թիսմարկի գործունեության և այլն:

Նապոլեոնյան պատերազմները թեև արդեն կասկածելու բեն, բայց տակավին մեզ ներկայանում են հերոսների կամքի արդյունք: Բայց խաչակրաց արշավանքներում մենք արդեն տեսնում ենք մի անցք, որը որոշակիորեն գրավում է իր տեղը, և առանց որի անկարելի է նվրոպայի նոր պատմությունը, թե պետ ճիշտ նույնպես խաչակրաց արշավանքների տարեգիր:

Ների համար այդ անդրը ներկայանում էր միայն մի քանի անձերի կամքի արդյունք: Ժողովուրդների գաղթի մեջ մեր ժամանակում արդեն ոչ ոքի մտքով չի անցնում, թե Աթիլայի կամայականությունից էր կախված նորոգել նվրոպական աշխարհը: Որքան մենք պատմության մեջ շատ ենք ետ տանում դիտողության առարկան, այնքան ավելի կասկածելի է դառնում անցք կատարող մարդկանց ազատությունը, և անհրաժեշտության օրենքն այնքան ավելի ակներեւ:

3) Երրորդ հիմքն է՝ մեզ համար ավելի մեծ կամ նվազ մատշելությունը պատճառների այն անվերջ կապի, որը կազմում է բանականության անխուսափելի պահանջը, որի մեջ յուրաքանչյուր հասկացվող երեսությունը, ուստի և մարդու յուրաքանչյուր գործողությունը, պիտք է ունենաւ իր որոշակի տեղը, որպես հետևանք նախորդների համար և որպես պատճառ հետնորդների համար:

Սա այն հիմքն է, որի հետևանքով մեր և ուրիշ մարդկանց գործողությունները մեզ ներկայանում են, մի կողմից, այնքան ավելի ազատ և ավելի պակաս ենթակա անհրաժեշտության: Քան դիտողություններից հանգած ֆիզիոլոգիական, հոգեբանական թե պատմական մեզ ավելի հայտնի օրենքները, որոնց ենթակա է մարդը, և քանի ավելի ստույզ է տեսնակած մեր կողմից գործողության ֆիզիոլոգիական, հոգեբանական կամ պատմական պասմանը. Մյուս կողմից՝ որքան ավելի պարզ է ինքը դիտվող գործողությունը, և որքան ավելի բարդ չէ բնավորությամբ ու խելքով այն մարդը, որի գործողությունը մենք քննում ենք:

Երբ մենք բոլորովին շենք հասկանում վարմունքի պատճառը՝ ասենք շարագործության դեպքում, առաքինության կամ անգամ բարուն ու շարին անտարբեր լինելու վարմունքի, մենք այդպիսի վարմունքի մեջ ընդունում ենք պատճության ամենամեծ բաժինը: Զարագործության դեպքում — մենք ամենից ավելի այդպիսի վարմունքի համար պահանջում ենք պատիժ, առաքինության դեպքում — ամենից ավելի գնահատում ենք այդպիսի վարմունքը: Անտարբերության դեպքում — ընդունում ենք առավելագույն անհատականություն, օրիդինալություն, ազատություն: Բայց եթե բազմաթիվ պատճառ-

ներից գեթ մեկը հայտնի է մոլորդ արդեն ընդունում ենք անհրաժեշտության որոշ բաժին, ավելի քիչ ենք պահանջում հաստուցում ոճրագործության համար, ավելի քիչ ենք ընդունում արժանիքներ առաքինի վարմութում, ավելի քիչ ազատություն օրիգինալ թվացող վարմութում։ Այն, որ ոճրագործը դաստիարակվել է շարագործների միջավայրում, արդեն մեղմում է նրա հանցանքը։ Հոր, մոր անձնազոհությունը — անձնագոհություն պարզեատրվելու հնարավորությամբ ավելի հասկանալի է, քան առանց պատճառի անձնազոհությունը, ավելի քիչ համակրանքի արժանի, ավելի քիչ ազատ։ Աղանդի, պարտիայի հիմնադիրը, գյուտառարը ավելի քիչ է զարմացնում մեզ, երբ իմանում ենք, ինչ-եթե մենք ունենք փորձերի մի մեծ շարք, եթե մեր դիտողությունը մշտապես ուղղված է մարդկանց գործողությունների մեջ, — պատճառների և հետեանքների միջև, — հարաբերականը մեզ նարկայանում են այնքան ավելի անհրաժեշտ և այն քան ավելի քիչ ազատ, որքան ավելի ճիշտ ենք շաղկապում ները պարզ են և մենք դիտելու համար ունեցել ենք մեծ քակերացումը նրանց անհրաժեշտության մասին կիրար ավելի լրիվ։ Անազնիվ հոր որդու անազնիվ վարմութքը. հայտնի շրջան ընկած կնոջ վատ վարքը. հարբեցողի կրկնի հարբեցությամբ տարկելը և այլն, — վարմութքներ են, որոնք ավելի ևս հասկանալի է մեզ։ Իսկ եթե մարդն ինքն ևս, որի գործողունացած աստիճանի վրա, — ինչպես երեխան, խելագարը, ները և բնավորության ու մտքի ոչ բարդությունը, արդեն տեսնում ենք այնքան մեծ բաժին անհրաժեշտություն և այնքան ազատություն, որ, որքան ավելի հայտնի է մեզ այն պատճառը, որը պետք է գործողություն առաջացնի, մենք կարող ենք գուշակել վարմութքը։

436

Միայն այս երեք հեմբերի վրա են կառուցվում բոլոր օրեւոգրությունների մեջ գոյություն ունեցող ոճիրների անմեղսագիտակությունը և հանցանքը մեղմող հանգամանքները։ Սեղսագիտակությունը ներկայանում է ավելի մեծ կամ ավելի փոքր, նայած մենք ավելի մեծ թե ավելի փոքր շափով գիտենք այն պայմանները, որի մեջ գտնվել է քննվող վարմունքի տեր մարդը, նայած ավելի մեծ թե ավելի փոքր ժամանակամիջոց է անդել հանցանքը կատարելուց մինչև այդ հանցանքի մասին դատողություն տալը և նայած վարմունքի պատճառները ավելի մեծ կամ ավելի փոքր շափով հասկանալուն։

## X

Այսպես ուրեմն, ազատության ու անհրաժեշտության մեր պատկերացումը հետզետե փոքրանում և մեծանում է, նայած արտաքին աշխարհի հետ ունեցած մեծ կամ փոքր կապին, նայած ժամանակի մեծ կամ փոքր հեռավորության և մեծ կամ փոքր կախումին այն պատճառներից, որոնց մեջ մենք քննում ենք մարդու կյանքի երկույթները։

Այնպես որ, եթե մենք քննում ենք մարդու այնպիսի մի կացություն, որի մեջ կապն արտաքին աշխարհի հետ առավել հալունի է, դատողության ժամանակաշրջանը՝ վարմունքը կատարելու ժամանակից առավելապես հեռու, և վարմունքի պատճառներն առավելապես մատչելի, ապա մենք ստանում ենք առավելագույն անհրաժեշտության և նվազագույն ազատության պատկերացում։ Խսկ եթե մենք մարդուն դիտում ենք արտաքին պայմաններից նվազագույն կախման մեջ, եթե նրա գործողությունը կատարվել է ներկայիս շատ մոտ մոմենտին, և նրա գործողության պատճառները մեզ անմատչելի են, ապա մենք կստանանք նվազագույն անհրաժեշտության և առավելագույն ազատության պատկերացումը։

Բայց ոչ այս, ոչ այն դեպքում, ինչպես էլ մենք փոխեինք մեր տեսակետը, ինչպես էլ մեզ պարզեինք այն կապը, որով մարդն առնչվում է արտաքին աշխարհի հետ, և ինչքան էլ նա մատչելի թվար մեզ։ Որքան էլ երկարեինք կամ կարձակինք ժամանակամիջոցը. որքան էլ հասկանալի կամ անհասկանալի չեն մեզ համար պատճառները, — մենք երբեք չենք կարող

**պատկերացնել ոչ լիակատար ազատություն, ոչ լիակատար անհրաժեշտություն:**

1) Որքան էլ մենք մարդուն պատկերացնեինք արտաքին աշխարհի ազգեցությունից բացառված, մենք երբեք հասկացություն չենք ստանա ազատության մասին՝ տարածության մեջ։ Մարդու յուրաքանչյուր գործողություն անխուսափելիուրեն պայմանավորված է թե նրանով, ի՞նչ շրջապատում է նրան, թե մարդու հենց մարմնով։ Ես ձեռու բարձրացնում եմ իմ գործողությունն ինձ թվում է ազատ։ բայց, ինքս ինձ հարցնելով, թե կարո՞ղ եմ արդյոք բոլոր ուղղություններով ձեռք բարձրացնել, ես տեսնում եմ, որ ձեռք բարձրացրի այն ուղղությամբ, որ ուղղությամբ այդ գործողության համար ավելի քիչ խոշնդոտներ կային, որոնք գտնվում էին ինչպես ինձ շրջապատող մարմինների մեջ, այնպես և իմ մարմնի կազմության մեջ։ Եթե բոլոր հնարավոր ուղղություններից ևս ընտրեցի մեկը, ապա այդ ընտրեցի այն պատճառով, որ այդ ուղղությամբ քիչ խոշնդոտներ կային։ Իմ գործողությունն ազատ լինելու համար անհրաժեշտ է, որպեսզի նա չհանդիպի որևէ խոշնդոտի։ Մարդուն ազատ պատկերացնելու համար՝ մենք պետք է պատկերացնենք նրան տարածությունից դուրս, ինչ որ, հայտնապես, անկարելի է։

2) Որքան էլ մենք դատելու ժամանակը մոտեցնենք վարժությունը ժամանակին՝ մենք երբեք չենք ստանա ազատության հասկացությունը ժամանակի մեջ։ Որովհետեւ, եթե ես քննում եմ մի վայրկյան առաջ կատարված վարմունքը, ես այնուամենայնիվ պարտավոր եմ ընդունել վարմունքի ոչ ազատությունը, որովհետեւ վարմունքը կաշկանդված է ժամանակի այն մոմենտով, որի մեջ կատարվել է նա։ Ես կարո՞ղ եմ արդյոք ձեռու բարձրացնել։ Ես բարձրացնում եմ այն։ բայց հարցնում եմ ինձ։ Կարո՞ղ եմ արդյոք շրարձրացնել ձեռու ժամանակի այն արդեն անցած վայրկյանին։ Դրանում համոզվելու համար՝ ես հետեւալ վայրկյանին ձեռու շեմ բարձրացնում։ Բայց ես ձեռու շրարձրացրի ոչ այն առաջին վայրկյանին, երբ ես ինձ հարց տվի ազատության մասին։ Անցավ ժամանակը, որը բռնելու պահեն իմ իշխանությունից դուրս է, և այն ձեռը, որ ես բարձրացրի այն ժամանակ, և այն օդը, որի մեջ ես այնժամ արի այն շարժումը, արդեն այն օդը չէ, որ հիմա շրջապատում է

ինձ, և այն ձեռը չէ, որով ես հիմա շարժում չեմ անում։ Այն վայրկյանը, որի մեջ կատարվեց առաջին շարժումը, անզառնալի է, և այն վայրկյանին ես կարող էի միայն մի շարժում անել և ինչ շարժում էլ անեի, այդ շարժումը կարող էր լինել միայն մեկը։ Այն, որ ես հետեւալ վայրկյանին ձեռու շրարձրացրի, չի ապացուցում այն բանը, թե ես կարող էի շրարձրացնել այն։ Եվ որովհետեւ իմ շարժումը կարող էր լինել միայն մեկը ժամանակի մի վայրկյանում, ապա նա չէր կարող լինել մի այլը։ Որպեսզի այն ազատ պատկերացնենք, պետք է պատկերացնել ներկայումս, անցյալի ու ապագայի սահմանագծում, այսինքն՝ ժամանակից գուրս, ինչ որ անկարելի է։

Եվ 3) Որքան էլ մեծանար պատճառն ըմբռնելու դժվարությունը, մենք երբեք չենք ստանա լիակատար ազատության պատկերացում, այսինքն պատճառի բացակայություն։ Որքան էլ մեզ համար անըմբռնելի լիներ կամքի արտահայտության պատճառը որևէ սեփական թե օտար վարմունքի մեջ, մտքի առաջին պահանջն է ենթադրությունը և պատճառի որոնումը, պատճառ, առանց որի անկարելի է ոչ մի երկույթ։ Ես ձեռու բարձրացնում եմ այն նպատակով, որպեսզի վարմունք կատարեմ, վարմունք, որն անկախ է ամեն տեսակ պատճառից, բայց այն, որ ես ուզում եմ կատարել պատճառ շունեցող վարմունքի պատճառն է։

Բայց անզամ եթե, պատկերացնելի նք մի մարդ, ամեն ազգեցությունից միանգամայն բացառված, քննեինք միայն ներկայի ակնթարթային և ոչ մի պատճառից շառաչացած վարմունքը, մենք թույլ կտայինք անհրաժեշտության անսահման փոքր մնացորդ՝ զրոյի հավասար, մենք այն ժամանակ էլ շենքի մարդու լիակատար ազատության հասկացությունը, որովհետեւ արտաքին աշխարհի ազգեցություններն իր վրա լընդունող, ժամանակից դուրս գտնվող և պատճառուներից կախում շունեցող էակն արդեն մարդ չէ։

Ճիշտ այդպես էլ մենք երբեք չենք կարող պատկերացնել մարդու գործունեությունն առանց ազատության ժամանակության և ենթակա միայն անհրաժեշտության օրենքին։

1) Որքան էլ ավելանար մեր գիտելիքը այն տարածական պայմանների, որոնց մեջ գտնվում է մարդը, այդ գիտելիքը երբեք չի կարող լրիվ լինել, որովհետեւ այդ պայմանների թիվը

անուահմանորեն մեծ է նույնպես, ինչպես անսահման է տարածությունը: Ուստի և, քանի որ մարդու վրա եղած ազգեցությունների ոչ բոլոր պայմաններն են որոշված, ապա և չկա լրիվ անհրաժեշտություն, այլ կա ազատության որոշ բաժին:

2) Որքան էլ մենք երկարենք ժամանակաշրջանը մեր կողմանակը, քիզ քննարկվող երկույթից մինչև դատողություն տալու ժամանակը, այդ ժամանակաշրջանը վերջ կունենա, բայց ժամանակն անվերջ է, ուստի և այդ կողմից էլ երբեք չի կարող լինել լրիվ անհրաժեշտություն:

3) Որքան էլ մատչելի լիներ որևէ վարժունքի պատճառների շղթան, մենք երբեք չենք իմանալու ամբողջ շղթան, որովհետև նա անվերջ է, և դարձյալ չենք ստանալ լրիվ անհրաժեշտություն:

Բայց, բացի դրանից, եթե անգամ, թույլ տալով, որ նվազագույն ազատության մնացորդը հավասար է զրոյի, մենք կը նույնենք որևէ գեպքում — ինչպես, օրինակ, մեռնող մարդու մեջ, սաղմի մեջ, ապուշի մեջ — ազատության լիակատար բացակայություն, մենք այդպիսով կոչնշանենք հենց մարդու, մասին եղած հասկացությունը, որը մենք քննում ենք, որովհետև եթե հենց որ ազատություն չկա, չկա և մարդը: Ուստի և մարդու՝ միայն անհրաժեշտության օրենքին ենթակա գործողության պատկերացումը առանց ազատության չնշն մնացորդի նույնպես անկարելի է, ինչպես և մարդու միանգամայն պատկերացումը:

Ուրեմն, նրա համար, որպեսզի պատկերացնենք մարդու գործողությունը, եթակա միայն անհրաժեշտության օրենքին՝ առանց ազատության, մենք պետք է ենթադրենք անսահմանուն մեծ ժամանակամիջոցի, տարածական պայմանների անսահման քանակի և պատճառների անսահման շարքի գիտություն:

Նրա համար, որպեսզի պատկերացնենք մեզ մարդուն բոլորին ազատ, անհրաժեշտության օրենքին ոչ ենթակա, մենք պետք է նրան պատկերացնենք մենակ՝ տարածությունից դուրս, ժամանակից դուրս և պատճառների կախումից դուրս:

Առաջին գեպքում, եթե հնարավոր լիներ անհրաժեշտությունն առանց ազատության, մենք կհանգենք անհրաժեշ-

տության օրենքների սահմանումին նույն անհրաժեշտությունը, այսինքն՝ միայն ևելին առանց բովանդակության:

Երկրորդ գեպքում, եթե հնարավոր լիներ ազատությունն առանց անհրաժեշտության, մենք կհանգենք անպայման ազատության՝ տարածությունից, ժամանակից ու պատճառներից դուրս, մի ազատության, որը հենց այն պատճառը, որ կլիներ անպայման և ոչնչով չէր սահմանափակվի, կլիներ ոչինչ, կամ միայն բովանդակություն առանց ձեռ:

Մենք կհանգենք առհասարակ այն երկու հիմքերին, որոնցից կազմվում է մարդու բովանդակ աշխարհայցքը — կյանքի անըմբունելի էությանը և այդ էությունը սահմանող օրենքներին:

Բանականությունն ասում է. 1) Տարածությունը բոլոր ձեռքով, որոնք տալիս է նրան նրա տեսանելիությունը — նյութը, — անսահման է և այլ կերպ չի կարելի երևակայել; 2) Ժամանակն անվերջ շարժում է առանց մի վայրկյան դպրաբի, և այն չի կարելի երևակայել այլ կերպ; 3) Պատճառների և հետեւանքների կապը չունի սկիզբ և չի կարող ունենալ վերջ:

Գիտակցությունն ասում է. 1) ես մենակ եմ, և ամենքնչնչ գոյություն ունի, միայն ես եմ. Հետևաբար, ես պարփակում եմ տարածությունը. 2) ես սուրացող ժամանակը շափում եմ ներկայի անշարժ վայրկյաններով, ներկայի, որի մեջ միայն ես ինձ գիտակցում եմ ապրող. Հետևաբար՝ ես ժամանակից դուրս եմ և 3) ես պատճառից դուրս եմ, որովհետև ես ինձ գգում եմ իմ կյանքի ամեն մի երեսլի պատճառը:

Բանականությունն արտահայտում է անհրաժեշտության օրենքները: Գիտակցությունն արտահայտում է ազատության էությունը:

Ազատությունը, որը չի սահմանափակված ոչ մի բանով, կյանքի էությունն է մարդու գիտակցության մեջ: Անհրաժեշտությունն առանց բովանդակության մարդու բանականությունն է իր երեք ձեռքով:

Ազատությունն այն է, ինչ քննվում է: Անհրաժեշտությունն այն է, ինչ քննում է: Ազատությունը բովանդակությունն է: Անհրաժեշտությունը՝ ձեւ:

Միայն ճանահման երկու աղբյուրները զատելու գեպքում, աղբյուրներ, որ միմյանց վերաբերում են, ինչպես ձեր բովանդակության, ստացվում են առանձին փոխադարձաբար բացա-

ող և անըմբանելի հասկացություններ ազատության մասին և անհրաժեշտության մասին:

Միայն նրանց միացման դեպքում պարզ պատկերացում է ստացվում մարդու կյանքի մասին:

Իրենց միացման մեջ — ինչպես ձեզ բովանդակության հետ — փոխադարձաբար սահմանվող այս երկու հասկացությունից դուրս անկարելի է կյանքի որևէ պատկերացումը:

Ամենը, ինչ մենք գիտենք մարդկանց կյանքի մասին՝ է՛ միայն ազատության վերաբերումը դեպ անհրաժեշտությունը, այսինքն՝ գիտակցության վերաբերումը դեպի անհրաժեշտությունը, թյան օրենքները:

Ամենը, ինչ մենք գիտենք բնության արտաքին աշխարհի մասին, է՛ միայն բնության ուժերի որոշ վերաբերումը դեպ գիտականության օրենքները:

Բնության, կյանքի ուժերը մեզնից դուրս են գտնվում և չեն գիտակցվում մեր կողմից, ու մենք այդ ուժերն անվանում ենք ձգողականություն, իներցիա, էլեկտրականություն, կենդանական ուժ և այլն. բայց մարդու կյանքի ուժը մենք գիտակցում ենք, և մենք այն անվանում ենք ազատություն:

Բայց ճիշտ այնպես, ինչպես ամեն մարդու կողմից զգացվող ինքնին անըմբոնելի ձգողականության ուժը միայն այնքան է մեզ հասկանալի, որքան մենք գիտենք անհրաժեշտության օրենքները, անհրաժեշտության, որին նա ենթակա է (առաջին գիտելիքից, թե բոլոր մարմինները ծանր են, մինչև նյուտոնի օրենքը), ճիշտ այդպես էլ անըմբոնելի է ինքնին ազատության ուժը, որ գիտակցում է ամեն ոք, միայն այնքան է մեզ հասկանալի, որքան մենք գիտենք անհրաժեշտության օրենքները, որոնց նա ենթակա է (սկսած այն բանից, որ ամեն մարդ մեռում է, և մինչև տնտեսական ու պատմական ամենաբարդ օրենքների իմացումը):

Ամեն մի գիտություն կյանքի էության ենթարկումն է բանականության օրենքներին:

Մարդու ազատությունը ամեն մի այլ ուժից տարբերվում է նրանով, որ այդ ուժը մարդը գիտակցում է. բայց բանականության համար նա ոչ մի բանով չի տարբերվում ամեն մի այլ ուժից: Ձգողականության, էլեկտրականության կամ քիմիական

մերձակցության ուժը հենց նրանով են տարրերվում մեկը մյուսից, որ այդ ուժերը տարբեր կերպով սահմանված են բանականությամբ:

Ճիշտ այդպես էլ մարդու ազատության ուժը բանականության համար տարբերվում է բնության այլ ուժերից միայն ասահմանումով, որ տալիս է նրան այդ բանականությունը: Իսկ ազատությունն առանց անհրաժեշտության, այսինքն՝ առանց նրան սահմանող բանականության օրենքների, ոչ մի բանով չի տարբերվում ձգողականությունից, կամ չերմությունից, կամ բուսականության ուժից, — դա բանականության համար կյանքի միայն ակնթարթային, անսահմանելի զգացումն է:

Եվ ինչպես ուժի անսահմանելի էությունը, ուժի, որ շարժում է երկրային մարմինները, տաքության, էլեկտրականության կամ քիմիական մերձակցության ուժի, կամ կենսական ուժի անսահմանելի էությունը կազմում են բովանդակությունը աստղաբաշխության, ֆիզիկայի, քիմիայի, բուսաբանության, կենդանաբանության և այլն, ճիշտ այդպես էլ ազատության ուժի էությունը կազմում է պատմության բովանդակությունը: Բայց ճիշտ այնպես էլ, ինչպես ամեն մի գիտության առարկան կյանքի այդ անհայտ էության հայտաբերումն է, իսկ այդ էությունն ինքը կարող է լինել միայն մետաֆիզիկայի առարկա, — ճիշտ այդպես էլ մարդկանց ազատության ուժի հայտաբերումը տարածության, ժամանակի մեջ և պատճառներից կախված՝ կազմում է պատմության առարկան, իսկ ինքը ազատությունը մետաֆիզիկայի առարկա է:

Փորձառական գիտությունների մեջ այն, ինչ մեզ հայտնի է, մենք անվանում ենք անհրաժեշտության օրենքներ. այն, ինչ անհայտ է մեզ, մենք անվանում ենք կենսական ուժ: Կենսական ուժը միայն արտահայտությունն է այն բանի անհայտ մընացորդի, ինչ մենք գիտենք կյանքի էության մասին:

Ճիշտ այդպես էլ պատմության մեջ այն, ինչ մեզ հայտնի է, մենք անհրաժեշտության օրենքներ ենք անվանում. այն, ինչ անհայտ է, — ազատություն: Ազատությունը պատմության համար արտահայտությունն է միայն այն բանի անհայտ մընացորդի, ինչ մենք գիտենք մարդու կյանքի օրենքների մասին:

Պատմությունը մարդկային ազատության արտահայտումները քննում է կապակցված արտաքին աշխարհի հետ, ժամանակի մեջ և պատճառներից կախված լինելու մեջ, այսինքն՝ այդ ազատությունը սահմանում է բանականության օրենքով։ ուստի և պատմությունն այն շափով է գիտություն, որշափով այդ ազատությունը սահմանված է այդ օրենքներով։

Պատմության համար մարդկանց ազատության ընդունումը որպես մի ուժի, որը կարող է ազդել պատճական անցքերի վրա, այսինքն՝ օրենքներին ոչ ենթակա, նույնն է, ինչ որ ազատ ուժի ընդունումը։

Այդ ընդունումը ոչնչացնում է օրենքների գոյության հրարավորությունը, այսինքն՝ որեկցե գիտության հնարավորությունը; Եթե գոյություն ունի գեթ մի ազատ շարժվող մարմին, ապա այլևս գոյություն չունեն կեպերի և նյուտոնի օրենքները, և այլևս գոյություն չունի որեէ պատկերացում երկնային մարմինների շարժման մասին; Եթե գոյություն ունի մարդու մի ազատ վարմունք, ապա գոյություն չունի ոչ մի պատճական օրենք և ոչ մի պատկերացում պատճական անցքերի մասին։

Պատմության համար գոյություն ունեն մարդկային կամքերի շարժման գծեր, որոնց մի ծայրը թաքնվում է անհայտության մեջ, իսկ որոնց մյուս ծայրին շարժվում է՝ տարածության մեջ, ժամանակի մեջ, պատճառներից կախված լինելու մեջ՝ մարդկանց ազատության գիտակցությունը ներկայումս։

Որքան ավելի է ընդլայնվում մեր աշքերի առջև այդ շարժորենքները; Այդ օրենքները որսալը և սահմանելը կազմում է պատմության խնդիրը։

Այն տեսակետից, որով գիտությունը նայում է հիմա իր առարկային. այն ճանապարհով, որով նա գնում է, երևությունների պատճառները որոնելով մարդկանց ազատ կամքի մեջ, օրենքների արտահայտությունը գիտության համար անկարելի է. որովհետև, որքան էլ մենք սահմանափակիրնք մարդկանց ազատությունը, հենց որ մենք այն ընդունենք օրենքներին ոչ ենթակա ուժի տեղ, օրենքի գոյությունն անկարելի է։

Միայն այդ աղատությունը սահմանափակելով մինչեւ ահամանություն, այսինքն քննիլով այն որպես անսահմանորեն փոքր մեծություն, մենք կհամոզվենք պատճառների միանգամայն անմատչելիությանը, և այն ժամանակ, պատճառները որոնելու փոխարեն, պատմությունն իրեն խնդիր կըդնի օրենքներ որոնելը։

Այդ օրենքների որոնումը վաղուց արդեն սկսված է, և մտածողության այն նոր եղանակները, որ պետք է յուրացնի պատմությունը, մշակվում են միաժամանակ ինքնառշացման հետ, դեպի որը, երկույթների պատճառները, շարունակ մանրատելով գնում է հին պատմությունը։

Այդ ճանապարհով են գնացել մարդկային բոլոր գիտությունները։ Հասնելով անսահմանորեն փոքրին, մաթեմատիկան, գիտություններից ճշգրտագույնը, թողնում է մանրատման պրոցեսը և ձեռնարկում է անհայտ անսահմանորեն-մանրերի գումարման նոր պրոցեսին։ Նահանջելով պատճառի մասին եղած հասկացությունից, մաթեմատիկան որոնում է օրենք, այսինքն՝ հասկություններ, որ ընդհանուր են բոլոր անհայտ անսահմանորեն-մանր տարրերի համար։

Թեև այլ ձևով, բայց մտածողության նույն ճանապարհով են գնացել և մյուս գիտությունները։ Երբ նշուտոնք արտահայտեց ձգողականության օրենքը, նա շասավ, թե արել կամ հողը ձգելու-քաշելու համկություն ունեն. նա ասավ, թե ամեն մի մարմին, խոշորագույնից մինչև փոքրագույնը, հատկություն ունի մի տեսակ մեկը մյուսին ձգելու, այսինքն՝ մարմինների շարժման պատճառի մասին եղած խնդիրը թողնելով մի կողմ, նա արտահայտեց մի հատկություն, որ ընդհանուր է բոլոր մարմինների համար՝ անսահմանորեն-մեծերից մինչև անսահմանորեն-փոքրերը։ Նույն անում են բնական գիտությունները։ Թողնելով պատճառի մասին եղած խնդիրը, նրանք որոնում են օրենքներ։ Նույն ճանապարհին է կանգնած և պատմությունը։ Եվ եթե պատմությունը առարկա ունի ժողովուրդների և մարդկության շարժումների ուսումնասիրությունը, այլ ոչ թե մարդկանց կյանքի էպիզոդների նկարագրությունը, ապա նա պարտավոր է, վանելով պատճառների հասկացությունը, որոնել օրենքներ, որոնք ընդհանուր են

բոլոր հավասար և անքակտելիորեն իրար հետ կապված՝ ազա-  
տության անսահմանորեն-մանր տարրերի համար:

## XII

Այն օրից, երբ գտնվել ու ապացուցվել է Կոպերնիկոսի  
օրենքը, միայն ընդունում այն բանի, որ շարժվում է ոչ թե  
արկը, այլ երկրագունդը, ոչնչացրեց հների ամրող տիեզե-  
րագործությունը: Կարելի էր, օրենքը հերքելով, պահպանել  
մարմինների շարժման մասին եղած հին հայացքը, բայց, հեր-  
քի այն, թվում է, չէր կարելի շարունակել պտղոմեոսյան  
աշխարհների ուսումնասիրությունը: Բայց Կոպերնիկոսի օրեն-  
քի գյուտից հետո էլ պտղոմեոսյան աշխարհները դեռ երկար  
շարունակվում էին ուսումնասիրվել:

Այն օրից, երբ առաջին մարդն ասավ և ապացուցեց, որ ծր-  
նունդների և հանցագործությունների բանակը ենթարկվում է  
մաթեմատիկական օրենքների, և որ աշխարհագրական և քա-  
ղաքատնտեսական հայտնի պայմանները որոշում են այս կամ  
այն վարչաձեռ, որ բնակչության հայտնի վերաբերմունքները  
դեպի հողը՝ ժողովուրդների շարժումներ են առաջ բերում, —  
այն օրից ոչնչացել են իրենց էությամբ այն հիմքերը, որոնց  
վրա կառուցվում էր պատմությունը:

Կարելի էր, նոր օրենքները հերքելով, պահպանել նախկին  
հայացքը պատմության նկատմամբ՝ բայց, դրանց լհերքելով,  
թվում է, չէր կարելի շարունակել ուսումնասիրել պատմական  
անդքերը որպես մարդկանց ազատ կամքի արդյունք: Որով-  
հետև հթե հաստատվել է այսինչ վարչաձեռ կամ կատարվել է  
ժողովրդի այսինչ շարժումը, շնորհիվ այսինչ աշխարհագրա-  
կան, ազգագրական կամ տնտեսական պայմանների, ապա  
այն մարդկանց կամքը, որոնք ներկայանում են մեզ նոր  
վարչաձեռ հաստատողներ կամ ժողովրդի շարժումը հարուցող-  
ներ, արդեն չի կարող քննել որպես պատճառ:

Իսկ մինչդեռ առաջվա պատմությունը շարունակվում է  
ուսումնասիրվել վիճակագրության, աշխարհագրության, քա-  
ղաքատնտեսության, համեմատական լեզվաբանության և երկ-

բարանության օրենքների հետ հավասար, որոնք ուղղակի  
հակասում են նրա գրույթներին:

Ֆիզիկական փիլիսոփայության մեջ երկար ու համառ  
պայքար տեղի ունեցավ հին ու նոր հայացքների միջև: Ասու-  
վածաբանությունը պահապան էր կանգնել հին հայացքին և  
նորին մեղադրում էր հայտնությունը խորտակելու համար: Բայց  
երբ ճշմարտությունը հաղթանակեց, աստվածաբանու-  
թյունը նույնպես հաստատ կառուցվեց նոր հողի վրա:

Նույնպիսի երկար ու համառ պայքար է տեղի ունենում եր-  
կայումս պատմության նկատմամբ եղած հին ու նոր հայացք-  
ների միջև, և ճիշտ նույնպես աստվածաբանությունը պահա-  
պան է կանգնում հին հայացքին և նորին մեղադրում է հայտ-  
նությունը խորտակելու մեջ:

Ինչպես այս, այնպես էլ մյուս դեպքում պայքարը երկու  
կողմից կրքեր է հարուցում և ճշմարտությունը խլացնում: Մի  
կողմից հանդես է գալիս երկյուղի ու կարելցության պայքար  
ամրող, զարերով կառուցված, շենքի համար: Մյուս կողմից՝  
ավերելու կրքի պայքար:

Այն մարդկանց, որոնք պայքարում էին ֆիզիկական փի-  
լիսոփայության ծագած ճշմարտության դեմ, թվում էր, թե  
բավական է իրենք ընդունեն այդ ճշմարտությունը, — կիոր-  
տակվի հավատն առ աստված, առ աշխարհի երկնից հաս-  
տառության ստեղծագործությունը, առ Հեսու Նավի հրաշքը:  
Կոպերնիկոսի և Նյուտոնի պաշտպաններին, Վոլտերին, օրի-  
նակ, թվում էր, թե աստղաբաշխության օրենքները խորտա-  
կում են կրոնը, և նա, որպես զենք կրոնի դեմ, գործ է ածում  
ձգողականության օրենքը:

Ճիշտ այդպես էլ այժմ թվում է, բավական է միայն ընդու-  
նել անհրաժեշտության օրենքը, և կիորտակվեն հասկացու-  
թյունը հոգու մասին, բարու և շարի մասին և բոլոր՝ այդ հաս-  
կացության վրա հիմնված-կառուցված պետական ու եկեղե-  
ցական հաստատությունները:


Ճիշտ այդպես էլ հիմա, ինչպես Վոլտերն իր ժամանակ,  
անհրաժեշտության օրենքի շահանաված պաշտպանները ան-  
հրաժեշտության այդ օրենքը գործ են ածում որպես զենք կր-  
որոնի դեմ, այն ժամանակ, երբ ճիշտ նույնպես, ինչպես և կո-  
պերնիկոսի օրենքն աստղաբաշխության մեջ, — անհրաժեշ-

տության օրենքը պատմության մեջ ոչ միայն չի ոչնչացնում, այլ անգամ ամրապնդում է այն հողը, որի վրա կառուցվում են պերական ու եկեղեցական հաստատությունները:

Ինչպես աստղաբաշխության խնդրում այն ժամանակ, այնպես էլ հիմա պատմության խնդրում, հայացքների ամբողջ տարբերությունը հիմնված է բացարձակ միավորն ընդունելու կամ լընդունելու վրա, այն միավորը, որը և տեսանելի երևույթների շափանիշ է ծառայում։ Աստղաբաշխության մեջ՝ դա՛ երկրագնդի անշարժությունն էր, պատմության մեջ՝ անհատի անկախությունը՝ ազատությունը։

Ինչպես աստղաբաշխության համար երկրագնդի շարժվելու ընդունելու դժվարությունը կայանում էր այն բանում, որպեսզի հրաժարվեն երկրագնդի անշարժության անմիջական զգացումից և մոլորակների շարժման նույն այդ զգացումից, այնպես էլ պատմության համար անհատի՝ տարածության, ժամանակի և պատճառականության օրենքներին ենթակա լինելն ընդունելու դժվարությունը կայանում է նրանում, որպեսզի հրաժարվեն երկրագնդի անշարժության անմիջական զգացումից։ Բայց ինչպես աստղաբաշխության մեջ նոր հայացքն ասում էր. «Ճիշտ է, մենք չենք զգում երկրագնդի շարժումը, բայց ենթադրելով նրա անշարժությունը, մենք հանգում ենք անմտության. իսկ ենթադրելով շարժում, որը մենք չենք զգում, մենք հանգում ենք օրենքների», — այդպես էլ պատմության մեջ նոր հայացքն ասում է. «Ճիշտ է, մենք չենք զգում մեր կախումը, բայց, ենթադրելով մեր ազատությունը, մենք հանգում ենք անմտության. իսկ ենթադրելով մեր կախումն արտաքին աշխարհից, ժամանակից ու պատճառներից, հանգում ենք օրենքների»։

Առաջին գեպքում պետք էր հրաժարվել տարածության մեջ գոյություն չունեցող անշարժության գիտակցությունից և ընդունել մեր կողմից շզգացվող շարժումը. ներկա դեպքում ճիշտ այդպես էլ անհրաժեշտ է հրաժարվել գոյություն չունեցող ազատությունից և ընդունել մեր կողմից շզգացվող կախումը։



## Առաջին մաս

### IX և X

Էջ 45—53 Պիեռի գերության պատմության համար Տոլստոյն օդույել է իսկապես կատարված զեպքից, որ պատմել է իր մասին Վ. Ա. Պերովսկին: Հիշողությունների մեջ նա գատմում է, թե ինչպես է գերի բռնվել Մակվարում, ինչպես է դատապարտվել գնդակահարության, ապա ներմիւ և, ֆրանացիների նահանջի ժամանակ մի մեծ խմբի հետ տարսել զեպի Նորլենսկի: Ծանապարհին նրանք շատ բան են տեսել՝ և՛ ցուրտ, և՛ քաղց, և՛ հիվանդ ու ետ մնացող գերիների գնդակահարում: Պերովսկին ազատվել է միայն 1814 թվին, Օուենի մոտ, փախչելով ոչ այնքան հեռու գտնվող կազմների բանակը:

### XII

Էջ 63 Ֆրուլա և Լավրա: Այս սրբերը համարվել են անասունների հավանակոր և այդ պատճառով ավելի են հարգվել ժողովրդի՝ ողմից:

## Երկրորդ մաս

### IX

Էջ 112 Զի կարելի առանց պարզաբանության թողնել այս էլում եղած երկու փաստ: Ցակովլեց, որին նապոլեոնը նամակով ուղարկում է Ա Ֆրանսիորի մոտ, ոչ թե պարզապես պկողոպտված ու ցնցոտիազգեստ կապտանչ էր, այլ Մոսկվայի խոշոր ազնվականներից մեկն էր: Ցակովլեց Գերցենի հայրն էր նա, ինչպես և Պերովսկին, չչոր կարողացել ժամանակն դուրս գալ Մոսկվայից, բայց սրան այլ բախտ վիճակից նրան ներկայացրին մարզալ Մարտիբյին, որը (ինչպես Գերցենն է գրում իր «Ենոք և Ճամանք գրքում») հիշում է, որ Ցակովլեցին տեսել է Փարիզում և հայտնում է նրա մասին նապոլեոնին: Նապոլեոնը երկար զրուցում է նրա հետ և նամակ է տալիս՝ Անգլիանդին հանձնելու: Ցակովլեց Պետերբուրգում մոտ մի ամիս մնում է արգելափակված: Գերցենն ասում է, որ իր հայրը եղել է Մոսկվայի զրավման առաջին ականատեսու, որ եկել է Պետերբուրգ:

Երկրորդ պարզաբանումը վերաբերում է Տուտուլմինին, որի անօրինության տակ էր մնացել Գաստիարակչական տունը: Տուտուլմինը ցանկության հայտնեց՝ տեղեկացնել կայսրուհուն, որ նրա հովանավորության տակ եղած հաստատությունը լի կործանվել, և նապոլեոնը նրա զեկուցագիրն ուղարկեց Պետերբուրգ:

### XVII

Էջ 148 Մադամ դե Ստալ, — հայտնի ֆրանսացի կին զրոդ. գրել է մի քանի վեպ «Կորիննա» և ուրիշները և «Գերմանիայի մասին» ու «Արտուրանքի տասը

տասին՝ դրեբը. Նապուեռի թշնամին էր. իր հերթին նապուեռն էլ համառօքեն հաւածում էր նրան 1812թ. սա եղավ Պետերբուրգում, ուր լավ նույնիկայ մէերսաներ 1-ի կողմից: Կուտուզովին գլխավոր հրամանատար նշանակելու առթիվ նա առաջիններից մեկն էր, որ չերժորեն շնորհավորեց նրան և հայթութ.ուն գ ւակեց:

## XVIII

Էջ 151 «Պարզամիտ զինովոր Սուտոնի վերջին կարծիքը»: Այս ֆրազը Տոլստոյի մոտ զետեղված է մի այնպիսի տեղ, որ կարող է սիմալ մեկնության առիթ տալ, այդ չգինվորը խորհրդի անդամներից մեկն էր՝ զեներալ Մուտոնը՝ կոմս տիտղոսով, որին նապուեռն հարցրեց ամենից վերջը: Նա կորական և ուղղակի ասավ, որ պետք է հսկույն եթե, առանց տատանիւթյուն և ամենակարճ ճանապարհով հեռանալ այս երկուից, ուր առանց այն էլ յատերկար մնացին: Նապուեռնը լուսւմ է և խորհուրդն արձակում:

## XIX

Էջ 154 «Ճեկույցի փոխարեն նրանք ծրարի մեջ ուղարկեցին ճերմակ թղթի մի թերթ»: Այս մասին խոսում է Միխայիլ Դանիլևսկին, այդ բանը պատկերացնելով իրեւ առաջապահի պետերի (Միխայլովիչի և Երմոլովի) ուղարկություններուն Երմոլովն իր հիշողությունների մեջ լուսւմ է այդ ծրարի մասին, բայց հանդիմանում է Կուտուզովին, որ նա առաջապահին լոգիստ զինաւոր ուժերով: Խնդք Կուտուզովը թագավորին տված զեկույցի մեջ թեթևակի դանակատվում էր, որ այդ օրերին հազարեակ էր տեղեկություններ ստանում առաջապահից:

## Երրորդ մաս

### II

Էջ 159 Գլուխիլասիներ: Այսպես էին կոշկում նապուեռնի դեմ պայքարող իսպանական պատահկանները:

## IV

Էջ 166 Կազակ, եսաուլ, Լովայսիկ երրորդը: Այս ամենը վերցված է իրականությունից, Դավիդովի առաջին իսկ հաջողություններից հետո Կուտուզովը նրա պարտիզանական խմբերն ուժեղացրեց կազակային երկու զնդով: Լովայսիկին դա Դոնի շրջանում հայտնի իրվայսկիների ազգանունն է:

Էջ 170 «Փրանսացի բժրկանա տղան»: Նրա մասին մանրամասություններ կան և զետեղայի գույխներում: Տոլստոյն այդ գույթը է Դ. Դավիդովի նույն «Օրագրում»: Դավիդովը պատմում է, որ զերիների թվում նրա ևն ընկալ «գվարդիայի Բմբահաւար Վկինտիք Թողեն» տասնհինգ տարեկան մի տղա, որ Կորիւել էր հայրենի տնից և, ինչպես վաղածաղիկ, փոխադրվել, լրերեք հազար վերստ՝ ուսւական սառնամանիքը, ուսւա սրի առաջ: Սույն հե-

տաքրրական պատանուն տեսնելով՝ միրտս լիքիթ արյունով»: Դավիդովը նրան իր մոտ պահում է մինչև պատերազմի վերջը, մինչև արտասահմանյան արշավանիքը, հետք տանում է Փարիզ և առողջ, ուրախ, մեծացած հանձնում է ծերունի հորը: Տոլստոյն, իհարկե, թողել է տղայի հետագա պատմությունը, բայց ընդգծել է այն համակրանքը, որ հարուցել էր նա, նկարագրելով Պետյայի հետաքրքրությունը և Դենիսովի հոգածությունը (VIII գլուխ սկիզբ):

## V

Էջ 172 Տիխոն Շշերատիին նկարագրելիս Տոլստոյը հիմք է ու սեղեւ նույն Դավիդովի «Օրագիրը», ուր նա հիշում է գուղացիի բաջ Ֆեոդորի մասին, որը կնոջն ու երեխաններին թողած, թաքնվել է անտառներում: Ինչ է Դավիդովի մոտ մինչև թշնամուն Մմոլենսկի նահանդից բլեւը և այդ ժամանակ միայն վերագրածել է իր տունը:

## VII

Էջ 184 Դոլսիովը հասկացնում է, թե գերիներին զնդակահարում է, Դենիսովը վրդովկում է դրանից: Դ. Դավիդովի «Օրագրում» կարդում ենք Եիշտ նույնպիսի խոսակցություն Դավիդովի և Ֆիգների միջև:

## IX

Էջ 185—186 Դոլսիովը կնում է ֆրանսական լագեր:— 1812թի մեծամարդակ ձեռնարկումների մասին, որոնց մեծ մասը վերագրվում է Ֆիգներին: Այդ մասին գրում է և Գ. Դավիդովը իր «Օրագրում», թե ինչպես Ֆիգները ֆրանսական սպայի մունդիր հագած գուում է մշնամու բանակը և դիտում տեղադրությունը: Եվ այդ կրնկում է մի քանի անգամ Ռայոնցիցին հայտնում է, թե ինչպես Ֆիգները Սեւալիկին հետ՝ իրենց խմբով խում են ֆրանսական մի մեծ տրանսպորտ՝ իրերով և ուսւա գերիներ:

## XIII

Էջ 201—204 Պլատոն Կարատաեկի պատմությունը վաճառականի մասին, ինչպես հայտնի է, բացի այս սեղմ շարադրանիքը, մոտավորապես նույն ժամանակ Տոլստոյը Մշակել է ապելի ընդարձակ ձեռվ որը կոշվում է ուսսաված տեսնում է արդարն ու մեղազորը, բայց դատաստանն ուշ է անումը:

## XIX

Էջ 219 Ժողի դե Մեստեր — Կրոնական բաղադրական գրող: Հայրենական պատերազմի ժամանակ 15 տարի ապրեց Պետերբուրգում, համարվելով Սարդինայի թագավորի դիսպան: Նա ընդունված էր արքունիքում և զգակալ ազգեցություն ուներ, պայքարելով լիբերալիզմի դեմ և խրամաւելով սեսական:

## Զորորդ մաս

V

Էջ 239 ժեղութունից երեք չեր խօսում 40 դաւերի մասին: Ակնարկը վերաբերում է նապուեռի ճառին, որ եզրատական արշավանքին ասավ նա զարգերին՝ բուրգերի մուտքերն եղած կովից առաջ՝ «Ձինվորներ, քառասուն զարեր նայում են մեղ այս բուրգերի կատարներ»:

Էջ 240 «Թշնամուն ալևոյ է սովի կամուրց տալ», այսինքն՝ որ ան կարելի է ավելի թեթևացնել նրա հեռացումը Խուսաստանից:

XI

Էջ 265 ժեղության պատերազմի ենթայցուցին այլևս ոչինչ չէր մնում, բայց մեռնելիք նվազ մեռափուր մեռավ մի քանի ամիս անց Սիլելիայի թաւնցւառ քաղաքում, և ապա բարգեց Խուսաստան:

XVIII

Էջ 294 Գրանդիտի պալատը — շանք Կրեմլում, որն անվնաս պահանջած է մինչև մեր օրերը:

Էջ 295 Հանձնուն ու Կոլիզեյը, Դրանք հիշում են այն պատճառով, որ Հանձնուի ափերը հարուստ են միջնադարյան ասպետների դղյակների ավերակներով, իսկ Կոլիզեյի վիթխարի շենքը Հոռոմում ներկայացնում է հին հռոմեական հսկայական ամֆիթատրոնի փլատակներ:

Վերջաբան

Առաջին մաս

I

Էջ 308 Ֆ. Շատորբիան (1762—1848), հայտնի ֆրանսացի գրող և քաղաքական գործիչ: Որպես ոռմանտիկ գրող՝ յայն հոչակ ստացավ քրիստոնեակաթյան Հանձնարք («Աթալան և ալենե» վիպակների հետ) և Ենահասակներ կամ բրյուտության հաղթանակը գրքերով: Նա իր երկերով ուսակցիոն դիրքերից պայքարում էր XVIII դարի անհավատարմության դեմ՝ հսնուն քրիստոնեակաթյան:

Էջ 308 Ժողովուրդիների սրբազն դաշինքը կնքվեց նապուեռին գահընելելությունից հետո Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև այն հիմնական նպատակով, որ աշակեն միջյան՝ իրենց հսկատակներին գահին և քրիստոնեակաթյան հավատարիմ մնալու ոգով դաստիարակելու և դրանով ամրապնդել խաղաղությունը Խողովորդների միջև: Այս պայմանագրի կրոնական նշանակությունն աննկատելի էր, իսկ քաղաքական պրակտիկան շուտով որոշվեց յրակես ազատության ամեն մի փորձի ուղղակի ճնշում:

V

Էջ 323—327 Նիկոլայ Ռուսովի գործողությունների և Կրանքի մեջ, ձեռ կոմսի մահից հետո, շատ բան նման է նրան, ինչ գիտենք մենք և Տոլսոտը

Հոր Յասին իր անկանի որդու Հիշողություններ նիկոլայ իլյիչ Տչւատովը նույնպես հոր մահից հետո մենց մեծ պարտքերով և քայլաված կարողությամբ: Որպեսզի կարողան պահել լայն կյանքի ապոռաւություն, նա հրաժարվեց զինվորական ժառանգության մեջ: Այդ ժառանգությունը միշտցին տեղի ունեցավ նրա ամուսնությունը անհայր մնացած իշխանագուստը Մարիամի զինվորականից և կերատինից զնականի պաշտոն ստացավ Մոսկվայի զինվորական որդերի կրթության վարչության մեջ: Այդ ժառանգությունը միշտցին տեղի ունեցավ նրա ամուսնությունը անհայր մնացած իշխանագուստը Մարիամի զինվորականից և կերատինից զնականի պաշտոն Մոսկվայի զինվորական ավագացավ: Ավելացնենք, որ Սոնյայի ամրողը դրամիունը Խոստովաների օնտանիքում և նրա ու Նիկոլայի միջև եղած զգացմունքը՝ մինչև այն, որ Սոնյան հրաժարվեց իր սիրուց, որ լինանգարի Նիկոլայի՝ ամրող ընտանիքի համար ձեռնտուությանը, — այս մենք հաստատել է Տոլուտյն ինքը (Հյուզություններում, որ գրի է առել Պ Բիլյուկովը) Տ Ա. Իրգալսկայայի վերաբերմամբ: Բազմաթիվ այսպիսի մոտիկ գուգաղիպատյություններից, նույնպես և այն փաստից, որ «Պատերազմ և խաղաղությունը» գրքի է գեռ Տ Ա. Երգուսկայի կենդանության օրով, պարզում է Տաւստուի, որպես գրողի, հիմնական հատկություններից մեկը:

XIV

Էջ 369 Մադամ Կրյունեներ: Աս լիքանդական բարոնուհի էր: Միստիկ գուշակող, հեղինակ մի քանի երկերի (դրանց թվում են Վալերիան Գետի): գործում էր Բագենում 1815 թ արտասահմանում ժանոթացավ Ալեքսանդր Կաստեր հետ և որու տպավորություն թողեց նրա վրա: 1817 թ. նա դրաց նուսատանում, ապա Պետերբուրգում, բայց այլևս սպահությունը լունջը:

Երկրորդ մաս

II

Էջ 395 Պ. Լանֆրե (1828—1877), ֆրանսացի պատմաբան, ծրագրեց գրել «Նապոլեոնի պատմությունը» ի հակակի թիեռի բոնապարտիստական հասգնել միայն մինչև 1811 թիվը:

Էջ 396 1784 թ. գաղափարները, այսինքն ֆրանսական ուկույուցիալի գաղափարները: Պետք է ասել «1789 թ գաղափարները»:

V

Էջ 414 Մըլչանի զեպի Մեխիկա, 1862 թ. նապուեն Ալ-ը հաճախ Յգաւելով նմանվել մեծ հորեղբորը, ուզեց ի գուգակիու Եղիպատական պատերազմի իր ազգեցությանը ենթարկել Մեքսիկան: Փրանսական զորքերը, Մեքսիկայի գահին նստե, ներկա Մաքսիմիլիանին, ստիպեցին ամոթով հեռանալ երկրից, և թագավորը գնդականարկեց ուսպուրիկականների կողմեց:

Էջ 414 «Պրուսական քաղաքունք» ու Բիսմարկը երանեանցունիքունքը վերաբերում է 1866 թ. պրուսական պատերազմին, որը վերացավ Ավստրիայի պատությամբ:

Ա ՆԻԿՈԼԱԻԲ ՏՈՂՄՈՒ  
ԽԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՊՈՒԹՑՈՒՆ

Բատոր IV

Խմբագիր՝ Ե. Ս. Ջ ա ր ե հ յ ա ն  
Սուպերշապիկը՝ Ռ. Ս. Ջ ու լ հ ա կ յ ա ն ի  
Նկարիչ և գեղ խմբագիր՝ Ան. Վ. Գ ա ս ո ւ ա ր յ ա ն  
Տեխ խմբագիր՝ Կ. Գ. Ս ա ր դ ա ն ա ն  
Վարստուգող սրբագրից՝ Մ. Ա. Մ կ ր տ լ յ ա ն

Լев Николаевич Толстой

ВОЙНА И МИР

(Роман)

Том IV

(На армянском языке)

Издательство «Айастан», ул. Теряна, 91

Ереван—1976

Հանձնված է արտադրության 13/XI/1975 թ.: Ստորագրված է տպագու-  
թամբ 30/VII 1976 թ. Թուղթ չ 1 84×108<sup>1/32</sup> տպագ 14,25 Ժ մ =  
23,94 պայմ մամ., հրատ 19,9 մամ. Կատվեր 2526. Տպաքանակ 5000:0,  
դիմք՝ 81 կ.

ՀՀ այսուտան հրատարակություն Երևան-9, Տերյան 91,  
ՀԽՍՀ Մինիստրների Սովետի հրատարակությունների, պոլիգրաֆիայի և  
գրքի առելորդ գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անդան  
պոլիգրաֆիկումինատ:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета  
Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной  
торговли, Ереван 9, Теряна, 91.